

www.syuniacyerkir.am

Սյունյաց Երկիր

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ.
ՀՈՐԵԹՇԱԲԹԻ
№ 4 (494)



*Մորուս Հասարթյանին...
շնորհակալություն ի խորոց սրտի:*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Հայագիտության համար ի վերուստ կոչվածը

I ISSN 1829-3468



19002



9 771829 346006

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ՝
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

📍 ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան,
Շահումյան 20/32, 3301:

☎ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

✉ syuniacyerkir@mail.ru
🌐 www.syuniacyerkir.am

📄 Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 24.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000:

Ստորագրված է տպագրության 19.02.2019թ.:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նշանավոր սյունեցին, ականավոր պատմաբանն ու բանասերը



**ՍԱՄՎԵԼ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Շարունակում ենք ներկայացնել Սյունյաց աշխարհի այն զավակներին, ովքեր սուրբ եւ բազմերանելի մարդու՝ Մաշտոցի՝ Սյունիք գալուց եւ տերունական մեր երկրամասը կրկին լուսավորելուց հետո դարեր ի վեր վառ պահեցին այդ լույսը: Մեսրոպի ու նրա ընտրյալ աշակերտներ Բենիամինի ու Անանիայի հիմնադրած առաջին դպրոցները Սյունիքում այնքան զորավոր գտնվեցին, որ նրանց ճառագայթները, անգամ պատմության դժնդակ ժամանակներում, սփռվեցին ամբողջ Հայաստանով մեկ եւ յուրօրինակ կանթեղ եղան հայոց մեջ:

Խոսքը, նախեւառաջ, այդ դպրոցների մեծահամբավ ուսուցիչների եւ նույնքան համբավավոր աշակերտների մասին է, ապա եւ Սյունյաց (Շաղատի) վարդապետարանի ու Գլաձորի, Տաթևի համալսարանների անզուգական քերթողների մասին, ովքեր հայոց միտքը մի նոր աստիճանի բարձրացրին:

Խոսքը դրանց հաջորդած ժամանակների գրիչների ու ծաղկողների մասին է եւ, իհարկե, Սյունյաց մեծ անապատի լուսավորիչների մասին:

Խոսքը, ի վերջո, գրողների ու բանաստեղծների, երաժիշտների ու գիտնականների, պատմաբանների ու բանասերների, նշանավոր զորավարների ու պետական գործիչների մի ամբողջ բույլի մասին է, որի արժանավոր ներկայացուցիչներին տեսնում ենք նաեւ 20-րդ դարում:

Ամենայն իմաստնությամբ ու կատարյալ գիտությամբ լի այդ երեւելիների շարքում է գիտության բարձունքներին հասած, իմացության լույսով պայծառացած մի անհատականություն, ում անուն-ազգանունն է Մորուս Հասրաթյան՝ հմտացած պատմագիտության, հնագիտության, մանկավարժության, բանասիրության եւ հատկապես սայաթնովագիտության մեջ:

«Սյունյաց երկիր» թերթի սույն համարը Մորուս Հասրաթյանին հիշելու, նրա գիտական ժառանգությանը նորովի հաղորդվելու ու նրա պայծառ հիշատակի առջեւ խոնարհվելու եւս մեկ քայլ է:

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ



Մորուս Հասրաթյան. Կենսագրական տեղեկություններ



Անվանի պատմաբան-բանասեր, գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մորուս (Մարգար) Ստեփանի Հասրաթյանը (1902-1979) ծնվել է Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում, ուր պրոլետարական միջավայրում զինվորագրվում է հեղափոխությանը՝ 1918-1921թթ. մասնակցում է Բաքվի կոմունայի, Զյուսիսային Կովկասի, ապա հայրենի Ձանգեզուրի քաղաքացիական կռիվներին: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Հասրաթյանը լծվում է հայրենիքի վերածնության գործին:

Տակավին 1920-ական թվականների սկզբներին՝ Երեւանի պետական համալսարանում ուսանելու տարիներին, նա միաժամանակ կոմերիտական, կուսակցական եւ դասախոսական աշխատանք էր կատարում Երեւանում եւ հանրապետության մի շարք շրջաններում:

1931-1932թթ. ասպիրանտական ուսումնառությունն անց է կացնում Լենինգրադում՝ Նիկողայոս Մառի եւ Զովսեփ Օրբելու ղեկավարությամբ:

Վերադառնալով Երեւան՝ 1933թ. Մ.Հասրաթյանն աշխատում է որպես պատմության եւ նյութական կուլտուրայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, 1934-36թթ. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, Հեղափոխության թանգարանի, ապա Մատենադարանի, իսկ 1964-1975թթ. Պատմության պետական թանգարանի դիրեկտոր:

Մ.Հասրաթյանը շուրջ 50 տարի մանկավարժական ակտիվ գործունեություն ծավալեց Երեւանի բանֆակում, կուսդպրոցում, պետական համալսարանում, Խ.Արքվյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Նա դասախոսի իր հմայիչ ու պատկերավոր խոսքով, երիտասարդության հետ կապվելու բնատուր ձիրքով կրթել ու դաստիարակել է հազարավոր սաներ, որոնցից շատերը նշանավոր գիտնականներ եւ մանկավարժներ են, կուսակցական ու պետական աչքի ընկնող գործիչներ:

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

« 3

Մ. Չասրաթյանն իր գիտակցական կյանքի 50 տարիները միաժամանակ նվիրել է գիտական աշխատանքի: Լայն ու բազմակողմանի են եղել նրա գիտական հետաքրքրությունները: Բազմաշնորհ ունակությունները հնարավորություն են տվել նրան ընդգրկելու հայագիտության գրեթե բոլոր հիմնական մարզերը՝ հայ ժողովրդի հին, միջնադարյան և նոր շրջանի պատմությունը, հնագիտությունը, բանասիրությունը, ծարտարապետությունը և մշակույթի այլ բնագավառներ: Գիտական իր նախասիրած հարցերը Չասրաթյանը քննարկել է պատմական լայն հետևախորքի վրա ամբողջ խորությամբ ու կուռ տրամաբանությամբ:



Գեղանկար՝ ըստ Մարտիրոս Սարյանի




Մարտիրոս Սարյանի հետ

մաբանությամբ: Նա հայագիտության ավագ սերնդի իր ուսուցիչների՝ Ն.Մառի, Զ.Օրբելու, Զ.Մանանդյանի, Մ.Աբեղյանի, Զ.Աճառյանի և մյուսների արժանավոր աշակերտն էր, երիտասարդ սերնդի հետ նրանց կապող կամուրջը,

հայագիտության այդ մեծերի գիտական ավանդները կրտսերներին փոխանցողը: Մնայուն է Մ.Չասրաթյանի վաստակը սայաթնովագիտության մեջ: Նա հայ ընթերցողին ներկայացրեց մեծ բանաստեղծություններ:

Մորուս Չասրաթյան. Կենսագրական տեղեկություններ



Չամն Սահյանի հետ

ՆՅԱՆՔԻ ՈՒՐՈՒՄ



Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն I-ի հետ

տեղծի վրացերեն ու ադրբեջաներեն խաղերը: Եվ այդ խնդիրը իրականացրեց այնպիսի մակարդակով, այնքան հարազատ Սայաթ-Նովայի լեզվին ու ոճին, որ ինչպես նշել է Պարոյր Սեալը, «վրացերենից ու ադրբեջաներենից կատարած թարգմանությունները նույնիսկ բազմափորձ ընթերցողի մեջ այն պատրանքն են ստեղծում, թե դրանք թարգմանություններ չեն, այլ նորահայտ խաղեր»:

// Անվանի գիտնականը միաժամանակ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների նոր վերլուծություններով ու մեկնաբանություններով, գիտաքննական պրպտումներով ու հայտնաբերումներով վերականգնեց կամ ձշգրտեց բանաստեղծական-տեքստաբանական շատ միավորներ:

Մ.Յարաթյանը Հայաստանում հեղափոխական շարժումների եւ կոմունիստական կուսակցության պատմության առաջին հետազոտողներից էր: 1930-ական թվականներին նա Մ.Բակուրյան ստորագրությամբ տպագրում է «Փաստաթղթեր Մայիսյան ապստամբության վերաբերյալ», «Դաշնակցությունը եւ ֆրանսիական հրամանատարությունը», «Հայաստանի Մայիսյան ապստամբությունը եւ հակահեղափոխությունը» ուսումնասիրությունները: Կազմում ու հրատարակում է Սուրեն Սպանդարյանի հոդվածների, փաստաթղթերի եւ նամակների ժողովածուն:

Մ.Յարաթյանը հայ ժողովրդի պատմության առաջին



Ֆրանսահայ նկարիչ Գառզրուի հետ՝ Հայաստանի պատմության թանգարանում



Պատմության
պետական
թանգարան


Գիտության եւ կրթության օջախները, որտեղ աշխատել է Մորուս Չասրաթյանը



Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարան




Խ.Արսլյանի անվան մանկավարժական համալսարան



ՀՀ գիտությունների ազգային
ակադեմիա



Հայկազյան քոլեջ (Բեյրութ)



Երեւանի պետական համալսարան

ԷՍ՝ ԶՊԾՂԻՉՄ

Նշանավոր սյունեցին, ականավոր պատմաբանն ու բանասերը
(Սամվել Ալեքսանյան) 2

ԻՄՉԱԾՔ ԻՏՈՒՄ

Մորուս Զասրաթյան. կենսագրական տեղեկություններ..... 3
Գիտության եւ կրթության օջախները, որտեղ աշխատել է Մորուս Զասրաթյանը 6
Աշակերտել է հայագիտության մեծերին 10
Մատենագիտություն 11

ՕԾՉԷՂԻՏՔԷ ԷՆԷՍՕԾ

Մորուս Զասրաթյանին... շնորհակալություն (Պարույր Սեւակ)..... 14
Շնորհանդես ԳԱԱ պատմության ինստիտուտում..... 17
Հեռացող ժամանակներ, մնացող անուններ (Դավիթ Գասպարյան)..... 19
Հայ մտավորականության ազնվական ներկայացուցիչը (Բագրատ Ուլուբաբյան) 21
Մորուս Զասրաթյան մանկավարժը եւ արդի մանկավարժության
խնդիրները (Աելիտա Դուլխանյան)..... 28
Պաշտելի դասախոսը եւ առաջնակարգ գիտնականը
(Աելիտա Դուլխանյան) 31
Ուսանողների պաշտելի հնագետն ու սայաթնովագետը
(Աելիտա Դուլխանյան) 35
Մորուս Զասրաթյան (Ռուբեն Զարյան) 36
Երբ խոսում էր Մորուս Զասրաթյանը (Գեորգ Ղարիբջանյան) 39
Մեծ սայաթնովագետ (Հենրիկ Բախչինյան) 41
Հայագիտության երախտավորը (Վարդան Պարսամյան) 43
Հայագիտության երախտավորը (Վլադիմիր Բարխուդարյան) 44

ԵՉՄՉԻՏՄՈՒՄ ԶՊԷՂԻՏՈՒՄ

Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց,
խմբագրեց եւ ծանոթագրեց Մորուս Զասրաթյանը (կազմողի կողմից)..... 46
Սայաթ-Նովա. կենսագրական ակնարկ (Մորուս Զասրաթյան) 52
Պարույր Սեւակի «Սայաթ-Նովա» դոկտորական դիսերտացիայի մասին
(Մորուս Զասրաթյան)..... 71
Վրացերեն խաղեր, որոնք թարգմանել է Մորուս Զասրաթյանը 81
Թուրքերեն խաղեր, որոնք թարգմանել է Մորուս Զասրաթյանը 82
Մասամբ գրականացված չորս հայերեն խաղ (Մորուս Զասրաթյան) 83

ՕՉԾՂԻՉԾՉՈՒՄ ԶՊԷՂԻՏՈՒՄ

Ուրվագիծ հայկական ճարտարապետության (Մորուս Զասրաթյան)..... 85

ԹՄՉՊԷՂԻՏՈՒՄ

Ծիծեռնավանք (Մորուս Զասրաթյան) 98

ԹՉՄՈՒՄ ԹՂՈՒՄ ԹՂԻՄ

Մ. Զասրաթյանի հուշերը Եղիշե Զարենցի մասին 108

ԷՆՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Սյունիքի բնակավայրերի պատմությունից (Մորուս Հասարթյան)..... 119

ՄՈՒՆԵՄԵՆՏԱԿԱՆ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը (Մորուս Հասարթյան) 142

Որտեղ է թաղված Վարդան Մամիկոնյանը (Մորուս Հասարթյան)..... 152

ՍՈՒՆԵՄԵՆՏԱԿԱՆ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Համո Սահյանի «Ոտանավոր-նամակը» Մորուս Հասարթյանին 160

Սերո Խանզադյանի նամակը Մորուս Հասարթյանին 162

Վախթանգ Անանյանի նամակը Մորուս Հասարթյանին 163

ՄՈՒՆԵՄԵՆՏԱԿԱՆ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Վաղատին (Ժորա Խուրշուդյան)..... 164

Ախլաթյան (Մորուս Հասարթյան)..... 166

ՄՈՒՆԵՄԵՆՏԱԿԱՆ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Մորուս Հասարթյանի շիրմարձանը Երեւանի Սովետաշէնի գերեզմանատանը..... 174

Խոսք՝ ասված Մորուս Հասարթյանի մահվան առիթով
(Արամայիս Մնացականյան) 174

ՄՈՒՆԵՄԵՆՏԱԿԱՆ ԵՎ ԳՆԱԿՆԵՐ

Մորուս Հասարթյանը՝ որդու հուշերում (Վահրամ Օրբելյան)..... 176

Բակուր Հասարթյան 180

Մորուս Հասարթյանի կինը՝ Սիրանույշ Հասարթյան 180

Մորուս Հասարթյանի թոռը՝ Արեգ Հասարթյան 181

Մուրադ Հասարթյանի կյանքի եւ գործունեության հիմնական տարեթվերը..... 182

Մարդը եւ մարդկայինը՝ քաղաքում (ակնարկ Գրիգոր Հասարթյանի մասին,
Աննա Տեր-Գուվանյան)..... 184

Գրիգոր Հասարթյան (համարի ֆոտոալբոմը)..... 186-187

Երեւանի տոնի իրական հիմնադիրը. վերաբացահայտում (Շաքե Ղազարյան) 188

Հայրենանվեր հայորդի (դրվագներում՝ Մորուս Հասարթյանի շառավիղներից՝
Գրիգոր Հասարթյանի թոռ Միքայել Մինասյանն է) 191

Մորուս Հասարթյան (համարի ֆոտոալբոմը) 192

Հնավայրեր, որտեղ պեղումներ է կատարել..... 193

Հայրենի եզերք 194-195

Ես իմ անուշ Հայաստանի (Եղիշե Զարենց)..... 196

ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

Մորուս Հասարթայան Կենսագրական տեղեկություններ



Արզենտի-
նահայ բանաս-
տեղծուհի
Ալիսիա
Կիրակոսյանի
հետ

« 5 ձեռնարկի ստեղծողներից ու հեղինակներից է: Նա հայ պատմագրության մեջ առաջիններից մեկը ցույց տվեց, որ ֆեոդալական հարաբերությունների դեգրադացիայի ժամանակաշրջանում՝ ուշ միջնադարում, հայ ժողովրդի պատմության առանցքը, նրա բնորոշ գիծը եղել են ազատագրական շարժումներն ու ոգորումները:

Նա ուսումնասիրեց Հայաստանի հնագույն հուշարձաններից մեկը՝ Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկան, բացահայտեց նրա դերն ու նշանակությունը հայ ճարտարապետության մեջ: Դրան հետեւեցին Ավանի տաճարի, Սիսիանի շրջանի մի շարք հուշարձանների ու հնագիտական վայրերի ուսումնասիրությունները: Հայ ճարտարապետության պատմության ասպարեզում նրա երկարամյա աշխատանքների հանրագումարը եղավ Վ.Հարությունյանի հեղինակակցությամբ 1975թ. Բեյրութում լույս տեսած «Հայկական հուշարձանները նախապատմական շրջանից մինչեւ 17-րդ դ.» մեծադիր հատորը՝ հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն:

Մ.Հասարթայանը մեկն էր այն քչերից, որ իր հարուստ գիտելիքներն ի սպաս դրեց նաեւ սփյուռքահայությանը: Բեյրութի Հայկազյան կոլեջի հրավերով նա 1965-1966թթ. գործուղվեց Լիբանան, դասախոսություններ կարդաց կրթական ու մշակութային հաստատություններում, սատար եղավ հայագիտական



Ակադեմիկոս
Սուրեն
Երեմյանի
հետ

բարձր կուրսերի կազմակերպմանն ու երիտասարդ հայագետների պատրաստմանը, հայրենիքի եւ սփյուռքի գիտամշակութային կապերի ամրապնդմանը: Նա մայր հայրենիքի գիտական նվիրակի դեր կատարեց այնտեղ:

«Քայլող հանրագիտարան» ճանաչում ունեցող Մ.Հասարթայանին հաճախ կոչում էին նաեւ «Բանավոր գիտնական», նկատի ունենալով հիմնականում հրապարակային ելույթներով իր բազմակողմանի գիտելիքները գիտական հասարակությանը ներկայացնելու նրա նախասիրությունը: Սակայն բազմամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում Մ.Հասարթայանը գրել է բազմաթիվ պատմաբանասիրական աշխատանքներ, որոնց միայն մի մասն է հրատարակվել, իսկ մեծ մասը մնացել է անտիպ՝ նրա անձնական արխիվում:

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ
1985թ.**

ԱՇԽԱՏԱԿԱՆ ԵՎ ՎՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՇՆԵՐԻՆ




ԼԵՈ (Առաքել Բաբախանյան) (1860-1932թթ.)

Պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության եւ արվեստի ինստիտուտի իսկական անդամ: " "



Զրաչյա Աճառյան (1876-1953թթ.)

Լեզվաբան, բանասեր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, Չեխոսլովակիայի արեւելագիտական ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ, հայագիտության մի շարք ձյուղերի հիմնադիր: " "



Յովսէփ Օրբելի (1887-1961թթ.)

Արեւելագետ, հնագետ, հասարակական գործիչ եւ գիտության կազմակերպիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս եւ առաջին արեգիդենտ: " "



Զակոբ Մանանդյան (1873-1952թթ.)

Պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: " "



Մանուկ Աբեղյան (1865-1944թթ.)

Բանագետ, լեզվաբան, գրականագետ, բառարանագետ, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: " "



Արսեն Տերտերյան (1882-1953թթ.)

Գրականագետ-ըննադատ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: " "



Նիկողայոս Մառ (1864-1934թթ.)

Արեւելագետ, հայագետ, լեզվաբան, ակադեմիկոս, Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնի պրիվատ-դոցենտ, Նոյն համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Եւրոթական կուլտուրայի պատմության ակադեմիայի հիմնադիր տնօրեն, Արեւելքի ժողովուրդների ազգագրության ու ազգային մշակույթի ուսումնասիրման ինստիտուտի առաջին տնօրեն, Լենինգրադի հանրային գրադարանի տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ փոխարեգիդենտ, ԽՍՀՄ ԳԱ հաբեթաբանության ինստիտուտի հիմնադիր: " "

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<p>1928</p>	<p>1920թ. մայիսմեկյան ցույցերը Հայաստանում (պատմական թռուցիկ ակնարկ, հատված անտիպ աշխատությունից): «Խորհրդային Հայաստան», 1928, 10 մայիսի:</p>	<p>1951</p>	<p>Ереван, 1948, с. 48-49.</p>
<p>1931</p>	<p>Պրոլետարական հեղափոխության արխիվից: Փաստաթղթեր Մայիսյան ապստամբության վերաբերյալ: «Նոր ուղի», 1931, գիրք երկրորդ, էջ 127-134 (ստորագրված է Մ.Բակուրյան): Դաշնակցությունը երիտանական հրամանատարությունը: «Նոր ուղի», 1931, գիրք երրորդ, էջ 104-115, գիրք հինգերորդ, էջ 142-152 (ստորագրված է Մ.Բակուրյան): Դաշնակցությունը եւ ֆրանսիական հրամանատարությունը: «Նոր ուղի», 1931, գիրք չորրորդ, էջ 84-97 (ստորագրված է Մ.Բակուրյան):</p>	<p>Հայ ժողովրդի պատմություն: Առաջին մաս, խմբագրությամբ Բ.Ն.Առաքելյանի եւ Ա.Ռ. Յովհաննիսյանի (Բ.Ն.Առաքելյանի, Ս.Տ.Երեմյանի, Ա.Ռ. Յովհաննիսյանի, Գ.Գ. Միքայելյանի եւ Բ.Բ. Պիոտրովսկու հեղինակակցությամբ): Հայպետհրատ, Երեւան, 1951, 345 էջ: История армянского народа. Часть первая. Под редакцией Б.Н.Аракеляна и А.Р.Иоаннисяна (совместно с Б.Н. Аракеляном, С.Т. Еремяном, А.Р. Ионнисяном, Г.Г. Микаеляном, Б.Б. Пиотровским). Айпетрат, Ереван, 1951, 291 стр..</p>	<p>Նախնադարյան-համայնական եւ ստրկատիրական հասարակությունների պատմության մի քանի հարցերը Ի.Վ.Ստալինի երկերի լրցւի տակ: - Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտ, «Գիտական աշխատությունների ժողովածու», 1951, N3, էջ 57-96:</p>
<p>1932</p>	<p>Հայաստանի Մայիսյան ապստամբությունը եւ հակահեղափոխությունը: «Նոր ուղի», 1932, գիրք երկրորդ, էջ 194-223:</p>	<p>1952</p>	<p>Լոր գյուղի դամբարանը (1950թ. Սիսիանի հնագիտական էքսպեդիցիայի արդյունքներից): «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հաս. գիտ.», 1952, N 1, էջ 99-105:</p>
<p>1935</p>	<p>Ծրագրի նախագիծ. 1. Հայաստանի պատմության հնագույն շրջանից մինչեւ XVIII դարի վերջը, 2. Անդրկովկասի եւ Հայաստանի պատմություն (XVIII-XX դարեր), Հայպետհրատ, Երեւան, 1933: Կազմեցին Մ.Հասրաթյան, Հ.Հարությունյան:</p>	<p>1955</p>	<p>Армения в конце XV в. начале XVII в. В кн.: Очерки истории СССР. Период феодализма. Конец XV в. – начало XVII в. Изд-во АН СССР, М., 1955, с. 847-859. Саят-Нова, Большая Советская Энциклопедия, Второе издание, т. 38, М., 1955, с. 171.</p>
<p>1936</p>	<p>Սուրեն Սպանդարյանը երիտասարդ սերնդի դաստիարակության մասին: «Խորհրդային մանկավարժ», 1936, N 5-6, էջ 37-42 (ստորագրված է Մ.Բ.):</p>	<p>1956</p>	<p>Հայ ժողովրդի պատմություն: Առաջին մաս: Ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար: խմբագրությամբ Մ.Ս.Հասրաթյանի, Բ.Ն.Առաքելյանի, Ս.Տ.Երեմյանի (Ս.Տ. Երեմյանի, Բ.Ն.Առաքելյանի, Գ.Գ.Միքայելյանի, Ա.Ռ.Յովհաննիսյանի, Բ.Բ.Պիոտրովսկու հեղինակակցությամբ): Հայպետտոմանկիրատ, Երեւան, 1956, 424 էջ: История армянского народа. Часть первая. Под редакцией М.С. Асратяна, Б.Н. Аракеляна, С.Т.Еремяна (совместно с Б.Н. Аракеляном, С.Т. Еремяном, А.Р. Ионнисяном, Г.Г.Микаеляном, Б.Б.Пиотровским), Армучпедгиз, Ереван, 1956, 291 стр..</p>
<p>1939</p>	<p>Ս.Սպանդարյան (Տիմոֆեյ): Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր: Պետհրատ, Երեւան, 1939, 447 էջ:</p>	<p>1957</p>	<p>Вагифин намэ'лум шеирлэри -, «Эдэби Эрмэнистан», Мэчмуэ, Ереван, 1957, с. 253-271. Սայթ-Նովա: Հայերեն, վրացերեն</p>
<p>1943</p>	<p>Սայթ-Նովայի հայերեն մի քանի խաղերի մասին: «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, հաս. գիտ.», 1943, N 3, էջ 23-44:</p>	<p>1944</p>	<p>Вагифин намэ'лум шеирлэри -, «Эдэби Эрмэнистан», Мэчмуэ, Ереван, 1957, с. 253-271.</p>
<p>1944</p>	<p>(Գրախոսություն): Սայթ-Նովայի տաղերը: - Ներածական հոդվածով, լեզվի ուսումնասիրությամբ, բառարանով եւ այլ հոդվածներով, - աշխատասիրեց պրոֆ. Ռ.Աբրահամյան, տպարան «Սողեռն», Թեհրան, 1943: «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հաս. գիտ», 1944, N 6-7, էջ 147-175:</p>	<p>1945</p>	<p>» 12</p>
<p>1945</p>	<p>Սայթ-Նովա: Խաղերի ժողովածու: Երեւան, 1945, 215 էջ: Бэйук халг шаири. «Коммунист», Баку, 1945, 8 сентября.</p>	<p>1948</p>	<p>Жизнь и творчество Саят-Новы в новом освещении. АН Арм ССР и АН Груз. ССР, Совместная научная сессия отделений общественных наук в Тбилиси и Ереване 22-30. V. 1948г., Тезисы докладов, Тбилиси-</p>

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


<p>« 11</p> <p>1959</p>	<p>Եւ ադրբեջաներեն խաղերի ժողովածու: Հայպետհրատ, Երեւան, 1959, 317 էջ</p>	<p>1948</p>	<p>сегодня», 1969, N 6-7, p. 2-17. Լույնը՝ անգլերեն՝ «Erebuni-Yerevan is 2750 Years Old», «Armenian today», 1969, N6-7, p.2-17.</p>
<p>1960</p>	<p>Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի 25 տարին: «Սովետական մանկավարժ», 1960, N1, էջ 9-16:</p>	<p>1970</p>	<p>Հայ ճարտարապետական գոհարներ: «Հայրենիքի ձայն», 1970, 1, 8, 15, 22 հուլիսի:</p>
<p>1962</p>	<p>Հաղթանակած անմահություն (Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ), «Բանվոր», Լենինական, 1962, մայիսի 26, N123:</p>	<p>1971</p>	<p>Մի քանի տող Սյունիքի մասին: «Որոտան», 1971, 23, 26 հունվարի, 2, 4, 25 փետրվարի:</p>
<p>1963</p>	<p>Սայաթ-Նովա: Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու: Երեւան, Հայպետհրատ, 1963, 347 էջ: Սայաթ-Նովա: Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ: «Գիտական աշխատությունների ժողովածու», Երեւան, 1963, էջ 5-51: Սայաթ-Նովայի դավթարը: «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1963, N10, էջ 3-32, N11, էջ 3-22: Սայաթ-Նովա (ծննդյան 250-ամյակի առթիվ): «Սովետական Հայաստան», 1963, N 10, էջ 1-6: Загафгазизја халглларынын бэзук шаири «Эдэби Эрмэнистан», Мазмуэ, Бешинчи китаб, Ереван, 1963, с. 294-309. Пешхэбэр. «Сайат Нова, шьер», Ереван, 1963. Денгбеже шмаэте. Рйа тэээ, 1963, N 42, 47, 53.</p>	<p>1972</p>	<p>Հայաստանի պատմության պետական թանգարանը (հիմնադրման 50-ամյակի առթիվ): «Սովետական Հայաստան», 1972., N12, էջ 32-34: Ուսանողական պարբերաթերթ «Պատանեկան խօսնակ»-ի խմբագրություն: «Պատանեկան խօսնակ», Բեյրութ, 1972., N1, էջ 5-7: Մանգաղաթե (ծիծառ, մաքալովկ): «Պիոներ», 1972., N9, էջ 17-18 (ստորագրված է Մ.Ս.Մանուկյան): Հայ մարքսիստական պատմագրության հսկան (Ա.Գ.Հովհաննիսյանի հիշատակին): «Երեկոյան Երեւան», 1972, 4 հուլիսի:</p>
<p>1964</p>	<p>«Թորամանյանի թղթանդամները» (Թ.Թորամանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), «Երեկոյան Երեւան», 27 մարտի, 1964:</p>	<p>1975</p>	<p>Հայաստանի հուշարձաններ, Բեյրութ, 1975, էջ 264 (հեղինակակից Վ.Հարությունյան): Տեքստը զուգահեռ հայերեն, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով: Հայաստանի հուշարձաններ, «Սփիւռք», Բեյրութ, 1975, հունիսի 22., N 22:</p>
<p>1966</p>	<p>Երկու խոսք (Ա.Յ.Մուրադյան, «Էջեր Հայաստանի կոմերիտիության անցյալից», Երեւան, 1966, էջ 3-5):</p>	<p>1977</p>	<p>Օրինվի ծնունդը (անխառն իրական պատկեր): «Սովետական գրականություն», 1977, N10, էջ 91-98 (ստորագրված է Մարգար Մ.Մանուկյան):</p>
<p>1967</p>	<p>Որտեղ է թաղված Վարդան Մամիկոնյանը: «Հայրենիքի ձայն», 1967, 16, 23 օգոստոսի: Լույնը՝ «Ջանասեր», Բեյրութ, 1968, N 4, էջ 90-92:</p>	<p>1978</p>	<p>Պատմաբանի վաստակը (Ս.Երեմյանի 70-ամյակը): «Հայրենիքի ձայն», 1978, 31 մայիսի, (Վ.Պարսամյանի հեղինակակցությամբ): Ատոիկ-Յատիկ: «Սփիւռք», Բեյրութ, 1978, 19 փետրվարի (ստորագրված է Մարգար Մանուկյան):</p>
<p>1968</p>	<p>Էրեբունի-Երեւան: «Հայրենիքի ձայն», 1968, 6, 13, 27 նոյեմբերի, 4 դեկտեմբերի: Լույնը՝ «Յառաջ», Բեյրութ, 1968, N 4-6: Սյունիքի տեղանունները: «Որոտան», 1968, 8, 13, 18 հունիսի: Միշտ խստաբարո, ազնիվ ու շիտակ (Հակոբ Մանանդյանի ծննդյան 95-րդ տարեդարձի առթիվ): «Երեկոյան Երեւան», 1968, 23 նոյեմբերի:</p>	<p>1979</p>	<p>Մոխիրս կը տանէք: «Սփիւռք», Բեյրութ, 1978, 19 մարտի (ստորագրված է Մարգար Մանուկյան): Պատմական Իրանը եւ Հայաստանը: «Հայկազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 1979, հատոր Է, էջ 9-33: Պրոֆ. Ա.Գ.Աբրահամյանի հողվածի առիթով (Սայաթ-Նովայի «Այբբիմըն») խաղի ծածկագրության վերծանությունը: «Պատմաբանասիրական հանդես», 1979, N 3, էջ 212-213:</p>
<p>1969</p>	<p>Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը: «Լրաբեր հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ», Երեւան, 1969, N12, էջ 81-90: Эребуни- Еревану 2750 лет: «Армения</p>		

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1980	<p>Ծիծեռնավանք: «Պատմաբանասիրական հանդես», 1980, N 2, էջ 39-58: Քար՝ հայանշան, հայագիր: «Պիոներ», 1980, N 11, էջ 26-27:</p>
1990	<p>Цицернаванк, Москва, 1990, 15 ст.. Tsitsernavank, Moscow, 1990, 17 p..</p>
1994	<p>Թաթուլի բազուկը «Պատանեկական արձագանք», Բեյրութ, 1994, N9, էջ 212-215:</p>
1995	<p>Երեք հարկանի հայի ընտանիք, «Պատանեկական արձագանք», Բեյրութ, 1995, N4-5, էջ 80-82: Ուզողը, «Ջանասեր», Բեյրութ, 1995, N1, էջ 111-113: Պատմական Իրանը եւ Հայաստանը, «Ջանասեր», Բեյրութ, 1995, N2, էջ 48-53, N3, էջ 86-89: Հողվածների ժողովածու, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի երախտավորներ, N1, Երեւան, 1995, 150 էջ: Պատմական Իրանը եւ Հայաստանը, «Գարուն», Երեւան, 1980, N11, էջ 74-82:</p>
1998	<p>Եղիշե Չարենց, «Ջանասեր», Բեյրութ, 1998, N1, էջ 23-25, N2-3, էջ 72-74, N5-6, էջ 153-155: Յակոբ Մանանդեան, «Ջանասեր», Բեյրութ, 1998, N10-11, էջ 294-297, Թորոս Թորամանեան, «Ջանասեր», Բեյրութ, 1998, N12, էջ 335-338:</p>
2000	<p>Իրանն ու Հայաստանը (պարսկերեն), «Ապագա», հայիրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես, Թեհրան, 2000, N 1-2 (16-17), էջ 6-17:</p>
2005	<p>Թորոս Թորամանյան, «Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին», Երեւան, 2005, էջ 325-330:</p>
2007	<p>Յուշաբեկորներ եւ արձակ էջեր, Բեյրութ, 2007, 160 էջ:</p>



ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ



ՊԱՐՈՒՅՐ
ՍԵՎԱԿ

Մորուս Հասրաթյանին... շնորհակալություն ի խորոց սրտի

Արեւմուտքի բազմալեզու եւ բազմահարուստ գրականությանը ծանոթ չէ այնպիսի երեւույթ, որպիսին Սայաթ-Նովան է: Միայն Արեւելքի շռայլ բնության քմայքը կարող էր Հալեպից եկած պանդուխտ Կարապետի եւ հավլաբարցի Սառայի հարկի տակ, կիսաճորտ ընտանիքում, ծնել մի սովորական մանուկ, որ պիտի շատ բաներով դառնար արտասովոր եւ այդպիսին մնար դարերի մեջ:

Ե

վ իրոք, պատանի Արուֆինն օժտված էր այնպիսի ունակություններով, որոնք նշանավոր կարող էին դարձնել առնվազն վեց երջանիկ մարդու-մեկին՝ կախարդ երգիչ, մյուսին՝ ականավոր նվագարար, երրորդին՝ մեծաքանքար երգաստեղծ-կոմպոզիտոր, իսկ մնացած երեքին՝ այնպիսի սքանչելի բանաստեղծ, որոնցից յուրաքանչյուրը պիտի հպարտություն պատճառեր այն ժողովրդին, որի լեզվով բանաստեղծելիս պիտի լիներ: Եվ ահա շնորհների այսպիսի մի բազմազանություն Արեւելքի շքեղ բնությունը պարգեւել



Մեր հին,
բայց եւ միշտ
սիրելի, մեր
ամենօրյա,
բայց եւ տո-
նական, մեր
ծանոթ, բայց
եւ անզուգա-
կան Սա-
յաթ-Նովան
Հասրաթյանի
շնորհիվ բոլո-
րովին նորա-
ցել է:

էր մեկ սրտի, կապել մեկ անվան, որը պատանության տարիներին հնչում էր «Արուֆին», իսկ հետո եւ առհավետ՝ «Սայաթ-Նովա»-իբրեւ խորհրդանիշ այն բացառիկ երեւույթի, երբ միեւնույն անձը երեք ժողովրդի պատմության մեջ է մտնում, որպես մեծ երգիչ, որպես նվագարար, որպես կոմպոզիտոր եւ որպես հանձարեղ բանաստեղծ:

Այսպես պատահեց նաեւ Սայաթ-Նովային. բովանդակ Անդրկովկասի հանրահայտնի երգիչ-բանաստեղծը մոտավորապես կես դար պիտի հաշտվեր իր անվան ու հիշատակի փոշեպատմանը, մինչեւ որ վերածնվեր՝ ավելի քան 100 տարի սրանից առաջ, 1852թ.:

Ժամանակի անիրավությունից մեծին ազատելու համար նույնպես մեծ պետք է լինել: Այդպիսին էր Գեորգ Ախվերդյանը՝ Սայաթ-Նովայի վերածննդի «կնքահայրը»: Իր ժամանակին նա նշանավոր էր իբրեւ բժիշկ, այնինչ բախտն ուրիշ վիճակ էր պահել նրան. Սայաթ-Նովայի խաղերի անդրանիկ ժողովածուի լույս ընծայմամբ եւ այնուհետեւ Ախվերդյանը պսակվեց հայագետ-բանասերի, աղբյուրագետի, աշխարհաբարի մեծ գիտակի ու ջատա-

գովի համբավով: Ավելին. նա, որ կյանքում ոչ մի ոտանավոր չի տպել, անկասկած նաեւ բանաստեղծ էր, նուրբ, տաղանդավոր եւ հմուտ բանաստեղծ, քանի որ միայն բանաստեղծ-գիտնականը կարող էր ի կատար ածել մի այնպիսի դժվարագույն խնդիր, որպիսին Սայաթ-Նովայի երգերի հրատարակումն էր:

Եվ հիրավի, մոտավորապես մեկ 100-ամյակ շարունակվեց գործել սայաթնովագիտությունը, գործեց չորսհինգ լեզվով, քիչ բացեր չլրացրեց, սակավ էջեր չսրբագրեց, սակայն Գ.Ախվերդյանի գործը, ընդհանուր առմամբ, մնաց անգերազանց: Այսպես՝ Սայաթ-Նովան, ավելի ճիշտ՝ նրա հայերեն խաղերը, Գ.Ախվերդյանից հետո հրատարակվեց եւս 10 անգամ, մինչեւ որ 1945թ. գրախանութների ցուցափեղկերը պայծառացան Սայաթ-Նովայի նոր ժողովածուով: Անփորձ ընթերցողին թերեւս դա մի հերթական վերահրատարակություն թվար: Բայց դա մի սոսկական վերահրատարակություն չէր, այլ մի իսկական երետայթ սայաթնովագիտության մեջ, մի երետայթ, որի նախատիպը Գ.Ախվերդյանն էր տվել եւ որը նույնպիսի մի սխրանք էր:

Ժողովածուն սկսվում էր «Կազմողի կողմից» հակիրճ առաջաբանով, որտեղ կազմողը՝ Մ.Յասրաթյանը, անձնուրացության հասնող համեստությամբ չոր ու ցամաք շարադրում էր իր բանասիրական բազմամյա աշխատանքի արգասիքը:

Եկան գրախոսականներ, սովորական գրախոսականներ, այնինչ գրախոսման առարկան արտասովոր էր: Օրերս ցուցափեղկերում նորից երեւաց Սայաթ-Նովան՝ կրկին Մ.Յասրաթյանի աշխատասիրությամբ: Վերստին, հավանաբար, կգրվեն գրախոսություններ: Սովորական գրախոսություններ, ինչպես այս մեկը: Բայց ժամանակն է, որ սովորական գրախոսություններից ծայր առնի այն լուրջ, գիտական եւ ջերմ խոսակցությունը, որ պարտավոր է արժանին մատուցել Մ.Յասրաթյանի բազմամյա աշխատանքին: Մեր հին, բայց եւ միշտ սիրելի, մեր ծանօթյա, բայց եւ տոնական, մեր ծանոթ, բայց եւ անզուգական Սայաթ-Նովան Յասրաթյանի շնորհիվ բոլորովին նորացել է: Նորացել է, բայց ոչնչով չի դարձել անձանաչելի: Եվ հենց այստեղ է Մ.Յասրաթյանի մեծ վաստակն ու անվերապահ



Գետրոգ Ախվերդյան, Սայաթ-Նովայի երգերի հայտնաբերողը, հրատարակիչն ու առաջին մեկնաբանը

հաջողությունը:

Սայաթ-Նովայի բազմանիստ տաղանդը սայաթնովագետից պարզապես պահանջում է նույնպես բազմաշնորհություն: Բազմակողմանիորեն օժտված այդպիսի մարդ է Մ.Յասրաթյանը: Իր գործն ի կատար ածելու համար աշակերտել է հենց իրեն՝ Սայաթ-Նովային. նրա օրինակով Մ.Յասրաթյանը տիրապետել է Սայաթ-Նովայի հայերենին՝ Թիֆլիսի բարբառին, վրացերենին, ադրբեջաներենին, ըստ որում ոչ այն չափով, որչափով կարող է գոհանալ գիտնականը: Այդ չափով նա ուսումնասիրել է, օրինակ, պարսկերենն ու արաբերենը: Եվ այն, ինչ պակասում էր Գ.Ախվերդյանին, բնությունը չի զլացել Մ.Յասրաթյանին. նա ոչ միայն խառնվածքով է բանաստեղծ, այլեւ իրականում, եւ այդ օժտվածությանն է պարտական հայ ընթերցողին իր այն երջանկության համար, որ նրան տարբերում է վրաց ու ադրբեջանցի ընթերցողից. մինչ նրանք ստիպված են գոհանալ միայն իրենց Սայաթ-Նովայից (չհաշված հատ ու կենտ, հաջող ու անհաջող թարգմանությունները) հայ ընթերցողն մեկընդմիջտ իր տունն ու սիրտն է ընդունել նաեւ նրանց Սայաթ-Նովային՝ վրաց եւ ադրբեջանական մեծ բանաստեղծին:

Եվ իսկապես. վրացերենից ու ադրբեջաներենից կատարած թարգմանությունները նույնիսկ բազմափորձ ընթերցողի մեջ այն պատրանքն են ստեղծում, թե դրանք թարգմանություններ չեն, այլ նորահայտ խաղեր: Անկասկած այս հարցում որոշիչ նշանակություն ունի Մ.Յասրա-

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 15 թյանի բանաստեղծելու շնորհքը, ինչպես եւ նրա մեծ հմտությունն արեւելյան պոեզիայի տաղաչափությանը, կանոններին ու գաղտնիքներին: Բայց դժվար թէ Մ.Յասրաթյանը հասներ նմանօրինակ հաջողության, եթէ պարզաձ չլինէր եւ մի «գաղտնիք»՝ իր թարգմանությունները կատարած չլինէր Թիֆլիսի բարբառով:

Սակայն Մ.Յասրաթյանը միայն բանաստեղծ-թարգմանիչ չէ, նա նաեւ հմուտ արեւելագետ-բանասեր է: Այդ է վկայում ինչպէս «Ծանոթագրություններ» բաժինը, այնպէս էլ «Բառարանը»:

Կլինեն ու կան, անշուշտ, վիճելի մեկնաբանություններ եւ ընթերցումներ, - այդ մասին թող խոսեն ավելի գիտակ մարդիկ: Բայց որ սայաթնովայագիտությունը Մ.Յասրաթյանի ջանքերով բարձրացել է մի նոր աստիճանի, բայց որ Սայաթ-Նովայի շատ ու շատ էջեր վերծանված են առաջին անգամ, բազմաթիվ տողեր՝ վերջնականապէս, - դրանում երկու կարծիք չի կարող լինել:

Ո՞վ չգիտի Սայաթ-Նովայի հոյակապ տողերը.

*Ամեն մարթ չի՛ կանա խըմի՛ իմ
ջուրըն ուրիշ ջրեն է.*

*Ամեն մարթ չի՛ կանա կարթա՛ իմ
գիրըն ուրիշ գրեն է...*

Մ.Յասրաթյանը, հիրավի, այն գիտնական-բանաստեղծն է, որ կարողացել է կարգալ Սայաթ-Նովայի շատ ու շատ «գրեր»: Նրա շնորհիվ Սայաթ-Նովայի «ջուրն» էլ համարյա թէ եռապատկվել է՝ մեզ ծանոթ ակունքին խառնվելով այն երկու աղբյուրը, որ բխել են Սայաթ-Նովայի հոգուց, բայց հագուրդ տվել մեր հարեանների պապակին:

Այսքանը բավական էր, որպէսզի հայ ընթերցողն ու սայաթնովայասերը Մ.Յասրաթյանին ասեն իրենց շնորհակալությունն ի խորոց սրտե, եւ, խնայելով նրա համեստությունը, չավելացնել բառեր, որոնց արժանի է նա:

Այսքանը բավական էր, որպէսզի հայ ընթերցողն ու սայաթնովայասերը Մ.Յասրաթյանին ասեն իրենց շնորհակալությունն ի խորոց սրտե, եւ խնայելով նրա համեստությունը, չավելացնել բառեր, որոնց արժանի է նա:

Իր գործն ի կատար ածելու համար աշակերտել է հենց իրեն՝ Սայաթ-Նովային. նրա օրինակով Մ.Յասրաթյանը տիրապետել է Սայաթ-Նովայի հայերենին՝ Թիֆլիսի բարբառին, վրացերենին, ադրբեջաներենին, ըստ որում ոչ այն չափով, որ չափով կարող է գոհանալ գիտնականը:

Բայց Մ.Յասրաթյանի խոսքը դեռ չի ավարտված: Մենք դեռ սպասում ենք նրա նոր թարգմանություններին, Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված մենագրությանը, ինչպէս նաեւ մեծ բանաստեղծի խաղերի ակադեմիական հրատարակությանը:

Ամեն մի թարգմանիչ-բանաստեղծ այստեղ, թերեւս, իր գործն ավարտված համարէր: Սակայն Մ.Յասրաթյանը մի նոր հարց էլ է հարուցում. դեռեւս 1945թ. նա գտնում էր, որ Սայաթ-Նովան կշահի, եթէ հրատարակվի մասամբ գրականացված հայերենով եւ հիմա, իբրեւ նմուշ, ժողովածուի հավելվածում ընթերցողների ուշադրությանն է հանձնում մասամբ գրականացված չորս հայերեն խաղ: Շատերին կարող է այս պահանջն ու փորձն անհարկի նորություն թվալ, մինչդեռ, ըստ իս, դա միանգամայն հասունացած խնդիր է: Կասկածից վեր է, որ ընթերցողը լայն հասարակայնությունը մասամբ է միայն հաղթահարում Սայաթ-Նովայի բառարանը: Եվ բոլորին չի տրված ամեն ռուպէ բառարան նայելու նվազագույն ճիգը, որ անհարիր է էսթետիկական հաճույք ստանալու հոգեբանությանը: Սայաթ-Նովայի անմահական ջուրը խմողների քանակը շատացնելու համար ոչ միայն կարելի է, այլեւ անհրաժեշտ է մասամբ գրականացնել նրա լեզուն: Բանաստեղծի անկրկնելի արվեստի համն ու հոտը, դարաշրջանի կոլորիտը չեն տուժի դրանից, քանի որ ինչքան էլ Սայաթ-Նովայի լեզուն հայացվի ու գրականացվի, այնուամենայնիվ այդ լեզուն իր գերակշռությամբ կմնա սայաթ-նովայական:

Համաձայնելով Մ.Յասրաթյանի խելամիտ ու օգտակար առաջարկին՝ հարկավոր է նկատել, որ այդ առաջարկությունն իրագործելիս պիտի ելնել «մի խելքը լավ է, երկուսն՝ առավել» իմաստությունից: Որքան էլ բազմաշնորհ է Մ.Յասրաթյանը, այսուհանդերձ Սայաթ-Նովային մասամբ գրականացնելու հարցը պիտի լուծել հատուկ հանձնաժողովի օգնությամբ: Հակառակ դեպքում դժգոհություններն ու վեճերն անխուսափելի են: Այդ է ապացուցում նաեւ այն չորս խաղը, որ զետեղված է հավելվածում:

Նորացած Սայաթ-Նովան լքելով գրախանութները՝ մտնում է տներ, գահակալում սրտերում: Միշտ թարմ է նա ու միշտ նոր: Եվ եթէ մեկ անգամ եւս նորացնելու հարց է ծագում, ապա լոկ այն պատճառով, որպէսզի նա ավելի դյուրին մտնի նորանոր տներ, ավելի հարմար գահակալի նորանոր սրտերում: “

Յ.Գ. Հոդվածի վերնագիրն ընտրել է խմբագրությունը, մինչդեռ Պարույր Սեւակն այսպէս էր վերնագրել՝ «Նորացած Սայաթ-Նովան»

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Շնորհանդես ԳԱԱ պատմության ինստիտուտում



Աշոտ Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն



2017թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Մորուս Հասարայանի ծննդյան 115-ամյակին եւ նրան նվիրված «Նշանավոր սյունեցին, ականավոր պատմաբանն ու բանասերը» ժողովածուի շնորհանդեսը:

Բացման խոսքում պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը կարեւորեց ականավոր պատմաբանի ներդրումը պատմագիտության զարգացման գործում:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ, ք.գ.դ. Աելիտա Դոլովսանյանը եւ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Պավել Ավետիսյանը: Նրանք խոսեցին հայրենանվեր պատմաբանի անգնահատելի վաստակի մասին՝ սերունդներին կրթելու գործում:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Մորուս Հասարայանի որդին՝ Մուրադ Հասարայանը եւ ներկաներին ներկայացրեց պատմաբանի կենսագրությունից հետաքրքիր ու հու-

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 17 զիչ դրվագներ:


Հասարայանը եղել է Հայաստանի ԳԱԱ առաջին նախագահ Յոզեփ Օրբելու ասպիրանտը, 1963-ին ընտրվել Հայաստանի ազգային ակադեմիայի թղթակից անդամ եւ ստացել Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչումը: 1937-ին եղել է Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, հետո՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄԻ գիտության գծով պրոռեկտոր, 1964-1975 թթ.՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, իսկ 1965-1966 թթ.՝ գրեթե երկու տարի, տարբեր առարկաներ է դասավանդել Բեյրութի Հայկազյան քոլեջում:

«Հայ ժողովրդի պատմության» դպրոցական առաջին դասագրքի հեղինակներից է: Նրա գրչին են պատկանում Հայաստանի պատմության, հնագիտության, ճարտարապետության ու



բանասիրության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ: Մասնակցել է պատմագիտական կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը: Հայերեն է թարգմանել Սայաթ-Նովայի ոչ հայերեն խաղերը, կազմել, խմբագրել եւ ծանոթագրություններով հրատարակել Սայաթ-Նովայի ստեղծագործությունների ժողովածուն (1963):

Հ. Գ. Ժողովածուն, որի շնորհանդեսը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, կազմված է «Այնույնաց երկիր» թերթի 2016թ. հունիսի 30-ի N20 (396)-ի նյութերի հիման վրա: Թերթի լուսանկարը՝ էջ 17-ում:



ՄԱՄԵԴ ՎՈՒՐՂՈՒՆ
(1906-1956թթ.)

Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ, դրամատուրգ, հասարակական գործիչ, Ադրբեջանի վաստակավոր գործիչ, Ադրբեջանի ԳԱ ակադեմիկոս, Ադրբեջանի նոր բանաստեղծական դպրոցի հիմնադիր

...Գլուխ եմ խոնարհում հայ ազգի առաջ՝ նրա համար, որ ծեր Կովկասին Սայաթ-Նովա է պարգեւել, բայց նաեւ նրա համար, որ տվել է Սայաթ-Նովայի այնպիսի մեկնաբան, ինչպիսին Մորուս Հասարայանն է:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Յեռացող ժամանակներ, մնացող անուններ

Մորուա Յասրաթյանն անցել է կյանքի մի ճանապարհ, որ շատ կողմերով բնորոշում է մեր ժողովրդի 20-րդ դարի պատմական ճակատագիրը:



ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պատանի էր ու նորահաս երիտասարդ, որ տարվեց Յուզեմբուրգի հեղափոխության կարմիր կոչերով և ծառայեց բուլշևիկյան գաղափարախոսությանը: Գրեց ու տպագրեց, խոսեց ու դասախոսեց, ավանդեց ու դասավանդեց: Յեռացողի առաջին փուլերում բոլորն են հավատում կոչերին ու խոստումներին և... լավագույն դեպքում՝ խաբվում, վատագույնը հետապնդումն է, կալանքը, գնդակահարությունը, աքսորը կամ հայրենագրվումը:

Իմաստության տարիքում էր, որ անցավ Չարենցի կողքով, ապրեց նրա գրական ժամանակի մեջ, վիճեց ու հաշտվեց հետը և միայն վերջում ճանաչեց ու գնահատեց աշխարհի այդ շատ մեծ մարդուն ու բանաստեղծին, որովհետև հասկացավ՝ Չարենցին չի կարելի հարմարեցնել իրեն, Չարենցին պետք է ընդունել այնպես, ինչպես ինքը կա: Այդպես Չարենցը մնաց նրա մեջ, հետագայում դարձավ հուշ ու հիշատակ և որպես հուշագրություն տպագրվեց իմ կազմած ու խմբագրած «Չարենցի հետ: Յուզեմ» («Նաիրի», 1997) գրքում:

Այստեղ է Չարենցի ահեղ ահազանգը՝ ահաբեկությամբ վերջ տալ Բերիային: Նույնն էր մտածում նաև Բակունցը, որովհետև Անդրերկրկումի առաջին քարտուղար դառնալուց հետո այդ հայատյաց «գործիչը» դարձել էր չարիք: Յայտնի էր նաև նա, ով պիտի իրականացներ ահաբեկությունը. այդ հերոսն խոտորջուրցի Արտաշես Գեորգյանն էր, ով համախոհների հետ Թիֆլիսում 1922-ին ահաբեկել էր Ջեմալ փաշա կոչված մարդասպանին: Եվ ահա թե Չարենցի անունից ինչ է արձանագրում Մորուա Յասրաթյանը. «Եթե այդ կատաղած շուն Բերիային հնար լինի վերացնել, դրությունը բավականին կփոխվի: Եվ այդ պետք է անեն նրա ատած ու հալածած հայերը: Ավոյին (Ավետիք Իսահակյան) ասացի այդ մասին... Ինչ պատասխանի, որ լավ լինի, ասաց. «Եղի՛ջ, այդ միտքը վանի՛ր գլխից, ընդհակառակ»

կը, պետք է դրանց զովքն անենք, մանավանդ որ գրականությունն արդեն անցել է օդայի» (նշված գիրքը, էջ 111):

Իսկ Չարենցը, Բակունցը և Արտաշես Գեորգյանն իրենց կյանքի գնով անգամ համառեցին, և այսօր նրանք են ժամանակի իսկական հերոսները: Իսկ վախով ու զգուշությամբ փաթեթավորված մորթապաշտությունը տարբեր անուններ ունի՝ հայտնի Վերգոյից մինչև Քաջ Նազար և հետո:

Ի վերջո, Ստալինի մահից շատ չանցած, Բերիային հասավ այն կրակոցը, որ կանխատեսել էր Չարենցը, իսկ «օդա» գրողները խորապես զղջացին իրենց անիմաստության համար, որովհետև «ջերմեռանդ ջարդարարների» (Չարենց), զովքն էին արել, նրանց, ովքեր հետագայում իրենք հռչակվեցին ժողովրդի թշնամի:

Այստեղ է Չարենցի հերթական խորհուրդը՝ նաև Մորուա Յասրաթյանին՝ հայոց պատմությունը գրել այնպես, «որ չդառնա գյաղայի և որբի պատմություն»: Այսինքն՝ ժողովրդի արժանապատվությունը չհարմարեցնել զուտ դասակարգային պահանջներին՝ որպես հալածվածների դաշինք ու պարտություն:

Նաև այստեղ է հուշագրի շրջափայլ պատասխանատվությունը, ով դեռևս 1950-ականների կեսերից մտահոգվել է Չարենցի մասունքները գտնելու և թաղելու հարցով: Այսօր ես՝ վեց տասնամյակ անց, նրա խոսքը հնչում է տեղին ու պահանջկոտ. «Ամոթ է, որ մենք չունենք Չարենցի գերեզմանը: Դեռևս կենդանի են այն մարդիկ, որոնք նրան բուժել են բանտում, թաղել են 1937-ի նոյեմբերին...» (նշված գիրք, էջ 117):

Այս թերացման համար ապագա սերունդները մեզ չեն ների, - 1985-ից սկսած ասացի ու կրկնեցի ես և փորձեցի իրականացնել այդ ծրագիրը, իմացած տեղերում Չարենցի աճյուն էի որոնում, բայց դեմ առա Չարենցի ժառանգների դիմադրությանը. «Մեզ Չարենցի գերեզման պետք չէ»: Որոնման գործը մնաց անավարտ:

Մորուա Յասրաթյանն այս ամենի հանդեպ շատ զգոն էր, որովհետև ինքն էլ անցել էր 1936-1937 թվականների տաք հալածանքների բովով, բայց այն երանելիներից էր, որ փրկվեց գնդակահարությունից ու աքսորից:

Սա սերունդի ճակատագիր **» 20**

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 19 էր, ինչի մասին հենց Չարենցին նվիրված հուշագրության մեջ ունի շատ տեղին արձագանքներ ու վկայություններ:

Մորուս Չարաթյանն անցել է պատմագիտության եւ հասարակագիտության երկար մի ճանապարհ եւ թողել հաստատուն հենակետեր: Դրանք եղել են հայոց պատմության առանձին դրվագներ՝ ուսումնասիրությունների, ծրագրերի ու ձեռնարկների տեսքով: Թեեւ տասնամյակներ շարունակ պարտադիր էր, որ ամեն ինչ դիտվեր «ընկեր Ստալինի երկերի լույսի տակ», բայց այդ տարիների կուտակումները հետագայում արդեն վերածվեցին լուրջ հարցադրումների՝ ընդգրկվելով հայագիտության տարբեր բնագավառներ, այդ թվում՝ նյութական ժառանգությունը եւ հատկապես՝ հուշարձանները:

Այդ ճանապարհին նա ձշտեց իր հիմնական նախասիրությունը եւ աստիճանաբար խորացավ սայաթնովագիտության մեջ: Ոգետրողը նորից Չարենցն էր, որ իր «Տաղարան»-ով մեկ ուրիշ սեր էր արթնացրել մեծ աշուղի կյանքի ու ստեղծագործության հանդեպ: Եվ ահա՝ «Տաղերի ժողովածու» (1945), «Չայերեն, վրացերեն, եւ աղբբեջաներեն խաղերի ժողովածու» (1959): *Չետո վերջինի երկրորդ վերանայված հրատարակությունը 1963-ին՝ Սայաթ - Նովայի ծննդյան 250-ամյակի կապակցությամբ:*

Մորուս Չարաթյանը կազմել, խմբագրել եւ ծանոթագրել ու հաջորդական հրատարակություններով խմբագրել է այս ժողովածուն:

Սայաթ - Նովայի ինչպես կենսագրության, այնպես եւ ստեղծագործության հանգույցները բարդ են, դրանց վերծանման վրա սերունդների ջանք է թափվել՝ սկսած Գետրոզ Ախվերդյանից մինչեւ Յովհաննես Թումանյան, Գետրոզ Բաշինջաղյան, Գետրոզ Ասատուր, Եղիշե Չարենց, Նիկոլ Աղբալյան, Լեւոն Մելիք-սեթ-Բեկ, Գարեգին Լեւոնյան, Մորուս Չարաթյան, Պարույր Սեակ եւ ժամանակակից հետազոտողներ: Մեծ է նաեւ ռուս եւ վրաց սայաթնովագետների վաստակը՝ Յա. Պոլոնսկի, Վ. Բրյուսով, Ի. Գրիշաշվիլի, Գ. Լեոնիձե:

Հանձարների հետ գործ ունենալը միշտ էլ դժվար է, ինչն էլ այդ դժվարության հաղթահարման ճանապարհը դարձնում է գիտություն, այս դեպքում՝ սայաթնովագիտություն, որտեղ իր ներ-

դրումն ունի նաեւ Մորուս Չարաթյանը: Կան պարզաբանման, ճշգրտման պահանջ ունեցող դրույթներ, բայց ամբողջությամբ նրա բանասիրական վաստակը քայլ է՝ դեպի Սայաթ-Նովայի ժառանգության համախմբում, վերծանում, մեկնաբանում եւ տարածում:

Չարաթյանի գործունեության կարեւոր կողմերից մեկը Սայաթ-Նովայի վրացերեն ու թուրքերեն խաղերի թարգմանությունն է հայերեն հենց մեծ աշուղի բարբառով: Միեւնույն լեզվով՝ այս դեպքում հայերեն, ի մի բերվելով միայն իր ստեղծագործական սահմանների մեջ ամբողջական, որոշակի ու ընկալելի կդառնա հանձարը, ինչը եւ արել է հետազոտողը:

Ժամանակի երգի լեզուն թուրքերենն էր: Թուրքերեն էին երգում բոլորը: Աշուղական անուններն ընտրում էին թուրքերեն, նաեւ պարսկերեն, արաբերեն, գրում ու երգում էին թուրքերեն, եւ այսօր թուրքերեն գրած ու երգած տասնյակ հայ աշուղների հետքերը կորած են, լավագույն դեպքում գտնվում են Բաքվի Նիզամու անվան գրականության եւ արվեստի թանգարանում, որ մեզ համար վերստին կորած լինելու համարժեք է, մինչդեռ ազգային մշակույթի մի կարեւոր շերտ կարող էին կազմել՝ թեկուզ անգամ օտարագիր լինելով: Փրկությունը մեկն է՝ այլազգի մի հայագետի միջոցով՝ ով պետք է ներկայանա որպես արեւելյան աշուղական արվեստի մասնագետ, այդ ամենն ուսումնասիրել, պատճենահանել ու հասցնել Չայաստան:

Այս տեսակետից Սայաթ-Նովան սխրալի դեմք է, որ լեզուների թիֆլիսյան խառնախոսության մեջ պահպանեց հայերենը, ինչն էլ հետո դեպի իրեն ձգեց եւ թարգմանաբար բերեց թուրքերեն ու վրացերեն խաղեր: Նրանով է, որ Թիֆլիսի բարբառը գրականություն մտավ՝ որպես նոր աշխարհաբարի առաջին կիրառություն:

Ահա հայոց լեզվի՝ տվյալ դեպքում Թիֆլիսի բարբառի այս ձգողականության տիրույթում է նաեւ Մորուս Չարաթյանի թարգմանական գործի գնահատությունը:

Սայաթ - Նովային ճանաչելի, հասկանալի եւ ընդունելի դարձնելու գործում՝ որպես թարգմանիչ - փոխադրող վերստին առաջինը Յովհաննես Թումանյանն էր: Թիֆլիսի բարբառը նա փորձեց վերածել գրական լեզվի հետեյալ վեց խաղերում՝ «Ամեն սագի մեջըն գոված... », «Արի ինձ անգամ կալ... », «Մե խոսկ ունիմ իլթիմազով... », «Դուն են գլխեն իմաստուն իս... », «Ինձ ու իմ սիրեկան յարին... », «Էշխն վառ կրակ է... »: Լինելով թիֆլիսցի եւ ապրելով նույն լեզվական միջավայրում, ինչ Սայաթ - Նովան, Թումանյանը գիտեր ինչ է անում: Թումանյանը Թումանյան էր, որ նախածեռնեց եւ հուշելու պես ուղղորդեց հաջորդներին:

«Ահա այդ հաջորդներից մեկն էլ Մորուս Չարաթյանն էր, ով ոչ միայն վրացերենից ու թուրքերենից թարգմանեց Սայաթ - Նովա, այլեւ հայերենից հայերեն փոխադրեց նրա խաղերը, այսինքն՝ Թիֆլիսի բարբառը վերածեց գրական հայերենի: Սա արտաքուստ Սայաթ-Նովայի խոսքի համոռոտը կորցնելու վտանգ ունի, որ զգացել է նաեւ Չարաթյանը, բայց ունի նաեւ օգտակար գործողության գործակից:

Չայտնի է, որ Սայաթ-Նովայի հայերենը հագեցած է թուրքերեն, պարսկերեն, արաբերեն թանձր փոխառություններով, որոնց իմաստը հասկանալու համար անգամ մասնագետը պետք է բառարաններ նայի եւ դեռ որոշ բան էլ անորոշ մնա: Ահա այդպիսի փոխադրության դեպքում ամբողջությամբ պահպանվում է Սայաթ-Նովայի խոսքի համակարգը՝ կառուցվածք, չափ, հանգավորում, կրկնաբանություններ, դարձարներ եւ հատվածներ, հնչյունական երաժշտականություն եւ այլն, բայց անհասկանալի օտար բառերի փոխարեն օգտագործվում է իմաստով համազոր, ձեռով, հատկապես չափով, եւ հնչյունների դասավորությամբ հնարավորինս մոտ բառաբան: Սա վտանգավոր, բայց ոչ անհաղթահարելի գործ է, որի նախօրինակը տվել է Մ. Չարաթյանը եւ որը ողջունել է Պ. Սեակը, (տես «Նորացած Սայաթ-Նովան» գրախոսությունը, Երկերի ժողովածու, հ. 5, 1974, «Չայաստան», էջ 40-45):

Այսպիսի փոխադրությունների օգտակար գործողության գործակիցը նշանակալի է հատկապես ուսումնական նպատակներով, նաեւ լայն ընթերցողին Սայաթ-Նովայի խոսքը մատչելի - ընկալելի դարձնելու համար:

Չարագիտությունը շատ մեծ բնագավառ է: Շատերն են իրենց կոչված համարում ծառայության, բայց քչերն են ընտրվում շատերից:

Մորուս Չարաթյանի անունն այդ քչերի մեջ է:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Հայ մտավորականության ազնվական ներկայացուցիչը



ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

«Ներսի թուրքեր» էր կոչում մեր պաշտոնյաներից մինչև ստորին օղակները շարված այն ստահակներին, որոնք հոտոտելով՝ ազգայնական տրամադրություններ էին որոնում ամենուրեք, ապա կռվում դրանց դեմ գաղտնի ու աշխարհա, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ:

Երբ ասում ենք հայ մտավորականություն, առաջին հերթին մեր առաջ բարձրանում են նրա խոշոր, ակնառու ներկայացուցիչները, ինչպես որ Հայկական բարձրավանդակ ասելիս, նախևառաջ, պատկերացնում ենք նրա տարբեր մասերում հավերժորեն կանգնած վեմամասեր գազաթները:

Մեր մտավորականության ակնառու, ազնվագույն եւ ազնվական ներկայացուցիչներից մեկն էր Մորուս (Մարգար) Ստեփանի Հասարայանը, որ, իրոք, մարմնավորում էր այդ մտավորականության, հատկապես նրա գիտական-գրական թեմի լավագույն գծերը՝ մեր ազգային հին ու նոր արժեքների հիմնավոր, բազմակողմանի իմացություն, նվիրվածություն իր գործին, գիտական-ստեղծագործական ազնիվ սկզբունքներ եւ դրանց ազնվորեն հետեւելու, որ կնշանակի՝ ազգին բոլորանվեր ծառայելու կամք ու վճռականություն:

Մորուս Ստեփանի Հասարայանը՝ ծնված 1902թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում, ապրել է մի կյանք, որ շատ է բնորոշ իր ժամանակի, իր սերնդի հայ մտավորականի համար. դեռ պատանի՝ իրեն նետել էր հեղափոխության հորձանուտը, 1918-21թթ. մասնակցել քաղաքացիական կռիվներին Հյուսիսային Կովկասում, Բաքվում, Չանգեզուրում, ապա լծվել Հայաստան աշխարհի կառուցման գործին՝ 20-ական թվականների սկզբից իսկ, համալսարանում ուսանելու տարիներից, դասախոսական եռանդուն աշխատանք կատարել ինչպես Երեւանում, այնպես էլ հանրապետության շրջաններում:

1931-32թթ. ասպիրանտ էր Լենինգրադում: Նիկ.Մառի ու Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ հմտանում էր հայագիտության, մանավանդ հնագիտության բնագավառում: 1933-ին Երեւան վերադառնալով՝ նշանակվեց Հայաստանի պատմության եւ նյութական մշակույթի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: Հետագա տարիներին եղավ հեղափոխության թանգարանի տնօրեն, Մատենադարանի տնօրեն... Իսկ 1964-

75թթ. գլխավորեց հանրապետության ամենահեղինակավոր հաստատություններից մեկի՝ Հայաստանի պատմության թանգարանի գործունեությունը: Գիտական ղեկավար աշխատանքի այս ամբողջ ընթացքում Հասարայանը միշտ էլ զբաղված է եղել նաեւ մանկավարժական-դասախոսական աշխատանքով. հայ ժողովրդի պատմություն է դասավանդել Երեւանի բանֆակում, կուսակցական դպրոցում, հայոց պատմություն եւ հայկական հնագիտություն՝ պետական համալսարանում, մանկավարժական ինստիտուտում:

Գիտական հաստատությունների ղեկավարման գործն ու մանկավարժական-դասախոսական աշխատանքը չեն խանգարել, որ Հասարայանը միաժամանակ եւ ջանադրաբար զբաղվի հայագիտությամբ, որի համար ծնված էր եւ կոչված ի վերուստ: Վաղ շրջանի առաջին հրապարակումները, հնագիտական պրպտումներն ու դրանց հիման վրա կատարած եզրահանգումները վկայում էին, որ ասպարեզ է իջել մի բազմախոստում գիտնական-հետազոտող, հայագիտության մեջ իր ծանրակշիռ խոսքն ասելու եւ ինքնատիպ ասելու ձիրքով օժտված մարդ: Սակայն... Ես խոսքիս սկզբից զուր տեղը չասացի, թե նա ապրել է իր ժամանակի մտավորականի համար բնորոշ մի կյանք: Հայ մտավորականի, մանավանդ հասարակական-քաղաքական կյանքի մեջ իր գործուն դերն ունեցող, ազնիվ սկզբունքներ դավանող մարդու կյանք: Այդ պատճառով էլ 30-ական թվականների հեղձուցիչ մթնոլորտում նրան վիճակվեցին եւ վերինների անվստահությունը, եւ բանտարկություն, եւ հալածանքներ, եւ գիտական աշխատանքով զբաղվելու մի ծանր, հոգեցունց անհնարինություն:

Այս վիճակը տարբեր մարդիկ տարբեր տեսակ են անցկացրել: Դրա համար էլ եղել է եւ բանտ ու քցոր, եւ անպտուղ անցկացրած տարիներ, եւ ծառայություններ չարին, անսուրբ գործարքներ:

Պատմական գիտության եւ հնագիտության, այսինքն՝ լայնահուն հայագիտության սպասավորը մնալու, նրան ազնվորեն ծառայելու գործն անհնար տեսնելով՝ Հասարայանն իրեն նվիրեց միանգամայն անմեղ ու անվտանգ երեւացող մի բնագավառի՝ հայոց բանասիրությանը: Սկզբում իր համար, համարյա թաքուն, >>> 22

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ



« 21 չար աչքից հեռու: Ձեռնարկեց Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգության ուսումնասիրությանը: Կարդաց նրա տաղերը, բաց արեց գաղտնիքներ, որոնց վրա նախկինում ուշադրություն դարձրած չեն եղել: Հայ ընթերցողի համար հայացրեց թուրքերեն ու վրացերեն խաղերը եւ այնպես հայացրեց, որ կարդացողը մտածում էր, թե դրանք մեծ գուսանի ձեռքի տակից հենց այդպես էլ դուրս են եկել: Պարոյր Սեակը շատ էր իրավացի, երբ ասում էր՝ այդ «թարգմանությունները նույնիսկ բազմափորձ ընթերցողի մեջ այն պատրանքն են ստեղծում, թե դրանք թարգմանություններ չեն, այլ նորահայտ խաղեր»:

Ուշադրություն դարձրեք. կատարվածը տասնամյակներ հետո այսպես պիտի գնահատեր Պարոյր Սեակը՝ արդեն առաջնակարգ բանաստեղծ եւ Սայաթ-Նովայի ամենահմուտ ու ամենաբժախնդիր ուսումնասիրողը:

Ճիշտն ասաց, փոքր չէ Մորուս Հասրաթյանի վաստակը հայագիտության, հայկական հնագիտության, հատկապես մեր ճարտարապետական ժառանգության, նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրության բնագավառներում: Նա հայ ժողովրդի պատմության հայերեն ու ռուսերեն դասագրքի հեղինակներից մեկն է: Մեր

Բնավորության լավագույն գծերի, բարոյական վսեմ նորմերի, հավաքական առաքինության մի զարմանահրաշ կերտվածք էր Մորուս Հասրաթյանը՝ բարի, հոգատար, անկեղծության եւ պարզասրտության մեջ կատարյալ, գուցե ավելի ճիշտ՝ նախնական-մանկական մակարդակի:



ճարտարապետության պատմության հմուտ մասնագետ Վարագդատ Հարությունյանի հետ միասին մի գեղեցիկ գիրք է կազմել Հայաստանի հուշարձանների մասին: Հրապարակել է բազմաթիվ գիտական խորաթափանց հոդվածներ, որոնցից յուրաքանչյուրը մեր պատմության, մշակույթի, հնագիտության որեւէ հարցն է պարզել, դարձրել լուծված եւ հանրամատչելի...

Սակայն ով ծանոթ է նրա կարողություններին, ով գիտե, թե նա ի՞նչ կարող էր անել եւ ի՞նչ է արել-թողել, անամոք ցավով պիտի արձանագրի, որ այդ անհուն ու անսպառ հնարավորությունների տեր մարդուց մենք այսօր ունենք պայծառ տաղանդի եւ խորթափանց մտքի շորշոփները միայն: Եվ այս պայմաններում սայաթնովագիտության ասպարեզում նրա կատարածը մխիթարական մի երեւոյթ է, այնքան նշանակալից, այնքան պատկառելի, որ մարդ չի կարող անմիջապես էլ չմտածել, թե մեկ ուրիշը, գոնե մեր ճանաչածներից, հնարավորություն չպիտի ունենար կատարելու: Չէ՞ որ տասնյակ ու տասնյակ տաղերի նրա թարգմանություններն իսկապես համազոր են հանձարեղ հեղինակի հայերեն բնագրերին, իսկ այս կնշանակի՝ նա հայերեն Սայաթ-Նովան եռապատկել է, մերը դարձրել:

Եվ, այսուհանդերձ, սայաթնովագիտության բնագավառում Հասրաթյանի ներդրումը գնահատելիս մոտեցումը պետք է լինի ոչ թե սովորական ծավալային, երբ ասում են՝ կատարվել է տիտանական, ահռելի աշխատանք, տարիների-տասնամյակների ծանրակշիռ արդյունք հանդիսացող այսքան-այսքան պատկառելի գործ: Չնայած այստեղ էլ առկա է եղել տեսական, տքնաջան աշխատանքը: Նրա կատարածի կա-

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

րետրն ու առաջին գնահատելին աստվածատուր ծիրքերի դրսեւորումն է, նյութի, տվյալ դեպքում՝ բանաստեղծական գոհարների, նրանց տողի, բառի, դրանցով ասվածի, բայց մանավանդ չասվածի ու անպայման անհասկանալի խորքերը թափանցելու կարողությունը: Իսկ սրանից առաջ եւ սրանից ավելի՝ վրացերեն ու թուրքերեն տաղերը հայացնելու այն արտակարգ հաջողությունը, որը համարձակորեն կարելի է համարել բացառիկ երեսույթ մեր ամբողջ թարգմանական գրականության մեջ: Եվ մենք այժմ, մոռացած, որ այսքանը կատարվել է հարկադիր աշխատանքով, ազնիվ հայագիտությանը ծառայելու անհնարինության պատճառով, փանջ տանք մեծ երախտավորին, նորից նոր գլուխ խոնարհենք նրա վաստակի առաջ՝ հիշելով եւ երբեք չմոռանալով, որ Սայաթ-Նովան մեր ազգային անմահության սյուններից է, լինելու է միշտ, քանի կա ու լինելու է մեր ազգը, եւ ամեն անգամ նրա անվան հետ զնգալու է նաեւ Մորուս Չասրաթյանի անունը:

Կա մի բնագավառ էլ, որտեղ Մորուս Չասրաթյանի գիտական ծառայությունը դարձյալ մեծ է, ուղենիշ-ուղեցույց լինելու չափ նշանակալից: Դա հայոց պատմության հնագույն շրջանի, մեր մշակույթի ազգային ակունքների ուսումնասիրության եւ գնահատության բնագավառն է: Այստեղ նրա հողվածների, գրավոր եւ բանավոր բազմաթիվ ելույթների ողնաշարն էր կազմում այն տեսակետը, որ հայ ժողովրդի ամբողջ կենսագրությունը՝ ծննդից մինչեւ այսօր, անցել է Հայկական բարձրավանդակում, ուրեմն՝ ոչ միայն մերժելի, այլեւ զառանցական է հային դրսից Հայաստան բերելով (կարելու է, թե որ ժամանակից այս աշխարհի տնկեցը կամ տանտերը համարելու) վարկածը: Այն տեսակետը, թե պատմական աղբյուրներով հաստատվող զարգացման շղթան՝ Արմինա-Հայասա-Նաիրի-Բիսինա-Ուրարտու կամ Արարատ, ապա եւ Արմենիա-Հայաստան օղակներով, դա հայ ժողովրդի կենսագրության, նրա պատմական զարգացման շրջաններն են, նրա դժվար ու բարդ պատմության այն փուլերը, որոնցից որն էլ ուրանաս, կկատարես սրբապղծություն, արդար գիտությունը խառնշողորդ մի հանցագործություն:

Իսկ շուրջը, այն ժամանակ, պաշտոնական պատմագիտությունն էր տի-

Վաղուց մեզ հետ չէ այլեւս Մորուս Չասրաթյանը (վախճանվել է 1979թ.), որ Արցախ-Ղարաբաղի սիրահարն էր, պաշտպանը, նրա դերի ու ճակատագրի խորին խորհուրդի գիտակը:

րական, որի դագանակի առաջ խունկ ծխողները հային հավատացրել էին, թե նրա նախնիները եկվոր ու գաղթական են եղել այս հողի վրա, եկել, այստեղ շարունակել են անհետ ցնդած ինչ-որ հայասացիների եւ բիսինացիների, նաիրացիների եւ ուրարտացիների կյանքը, մշակույթային գործը:

«Այն ժամանակ» էլ, ասում եմ, կարծես պաշտոնականը կամ պաշտոնական կենցաղը ընդունողները հրաժարվել են իրենց այդ հակագիտական-հակապատմական-հակատրամաբանական տեսակետից: Ոչ միայն չեն հրաժարվել այն ժամանակ դագանակի ուժով մարդկանց գլուխները մտցրած հիմարություններից, այլեւ այստեղ ստեղծել են իրենց ՕՍՕՆ-ը, որի միջոցով հալածում, քարկոծում, ջարդում են բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն ճշմարիտ ու մերժողական խոսք ասել այդ հիմարությունների մասին:

Փորձիր այսօր ասել Ուրարտու-Արարատը Հայաստան է եղել, հայ-արմենների երկիր, ՕՍՕՆ-ը վրա կտա բոլոր կողմերից, քեզ այնպես կվարկաբեկի, որ շունն էլ, հացը պակաս մեր օրերում, պատահ չվերցնի քո ձեռքից:

«Այն ժամանակ» նրանք մի նպատակ ունեին՝ ցույց տալ, որ հայ ժողովուրդը եկվոր է: Որտեղից է եկել, իրենք էլ չգիտեին կամ դեռ չէին որոշել հարմար տեղը եւ այս ու այն կողմ էին ընկնում: Կարելու էր այն է, որ եկվորության հետ միահամուռ համաձայն էին եւ ձեռացնում էլ էին, որ, այսպես կոչված, ուրարտ կամ ուրարտացի ժողովուրդը ոչ մի կապ չի ունեցել հայ կամ արմեն կոչված ազգագրական միավորի հետ: Իսկ Արամ նահապետը, որ գիտությանը հայտնի բոլոր եղանակներով գալիս դառնում է հայ, հայ ժողովրդի հնագույն պետական կյանքի ամենահզոր սյուններից մեկը՝ կանգնած Արարատ-Ուրարտու երկրի ու նրա պետության ակունքում: Արամը հատկապես ոչ մի կապ չունի հայ ժողովրդի հետ, որովհետեւ, նախ, սեպագրերում նա Արամե կամ Արամու է եւ ապա գոյություն է ունեցել հայերի Հայաստան թափանցելուց 3-4 հարյուրամյակ առաջ.

այս էր ուրարտագետներից շատերի պնդումը:

Եվ այս անհեթեթության վրա զայրացած Չասրաթյանը պահանջում էր հասարակ մի բան՝ հետեւել մարդկային չխաթարված տրամաբանությանը: Ահա նրա խոսքը. «Արգիշտին չէր կարող լսած չլինել իր պապերից, որ իրենց կողմից Բիսինա (Վիսնա-Վան) կոչված պետականության հիմքը իրենից ուղիղ հարյուր տարի առաջ, դրել էլ արմենների առաջնորդ Արամը: Թող զարմանալի չթվա, ոչ թե իմ այս հայտարարությունը, այլ այն, թե ինչպես են ուրարտագետները, ամեն տրամաբանություն քարին քսելով, հայկական ցեղի մեծ նահապետ Արամին «կնքում» ոչ հայ: Ապա հաջորդ տողերով հայտնում է, որ այդ Նաիրին, Ուրուատրին կամ Ուրարտուն լոկ աստվական հորջորջումներ են, եւ հայ էին ոչ միայն այստեղ ապրող ու ապրելիք մարդիկ, այլեւ նրանց վրա իշխանություն հաստատած հարստության ներկայացուցիչները: «Ուստի վերապահություն չի պահանջում ընդունելու համար, - գրել է Չասրաթյանը, - որ Էրեբունի-Երեւանի առաջին բնակիչները 2750 տարի անընդմեջ եղել են հայեր... Այսինքն՝ ժամանակի ընթացքում բնավ չի փոխվել Երեւան քաղաքի էթնիկ կազմը, որ եզակի երեսույթ է հատկապես Առաջավոր Ասիայում»:

Հրապարակած հողվածներից կարող եմ այսպիսի օրինակներ շատ բերել, ցույց տալ, թե ինչպես այն ժամանակ Մորուս Չասրաթյանն ասում եւ պաշտպանում էր մեծ ճշմարտությունը: Իսկ հակառակորդները նրա եւ նույն կարծիքի տեր ուրիշ արդարախոսների դեմ, «ամեն տրամաբանություն քարին քսելով» (միայն զանգեզուրցի կանի այսքան դիպուկ եւ քարակուռ դիտողություն), այո, «ամեն տրամաբանություն քարին քսելով», թերթերն ու հանդեսները լցրել էին իրենց մեղադրական վճիռներով, զրպարտչական համախոսականներով: Պատահում էր, ձեռացնում էին, թե խնայում են անվանի գիտնականին, մեկ-մեկ այդ զրպարտագրերում թունոտ սլաքներն ուղղում էին Մարտիրոս Գավուքյանի,

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 23 Ասատուր Մնացականյանի եւ ուրիշների դեմ, չէին տալիս Չարաթայանի անունը: Այսպիսի դեպքերում նա ավելի էր վրդովվում, ավերից դուրս էր գալիս, եւ բավական էր ասելի՝ «Մորուս Ստեփանիչ, Ձեզ խնայել են», անմիջապես դառն ժպտում էր ու ասում. «հարամզադաներ են, վրաս չեն հաչում, բայց, միեւնույն է, կծում են»:

Այսքանը մեզ բոլորիս տեսած ու ճանաչած Մորուս Չարաթայանի մասին: Բոլորին, հայության, հատկապես հայ մտավորականության:

Սակայն մեծերն ունեն մի շատ կարեւոր առանձնահատկություն. իրենց հետ շփումներ ունեցած, իրենց ճանաչող անհատների վրա թողնում են իրարից տարբեր այնպիսի տպավորություններ, որոնք հաճախ, թեկուզ եւ իրարից միանգամայն տարբեր, լրացնում են միմյանց, ամբողջացնում կերպարը, այն դարձնում հասարակական մեծ նշանակություն ունեցող երեւոյթ:

Ես այն երջանիկ մարդկանցից եմ, որոնք բախտ են ունեցել վայելելու Մորուս Չարաթայանի բարեկամությունը, համարձակվեմ ասել՝ նույնիսկ բարեհաճ մտերմությունը: Եվ այսօր սրտագին պարտականությունս եմ համարում մի քանի խոսք էլ ասել այն Չարաթայանի մասին, որին ինքս եմ տեսել ու ճանաչել, համարել այն ժամանակների մեր ազգային հարստություններից մեկը:

Առաջին անգամ տեսել եմ 1945 թվականի սեպտեմբերին:

Անդրկովկասը նշում էր իր մեծագույն բանաստեղծ Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը, եւ այդ առթիվ Բաքվում կազմակերպված հանդիսավոր նիստի զեկուցողը Երեւանից եկած Մորուս Չարաթայանն էր:

Ասեմ, որ Մորուս Չարաթայանի անուն-ազգանունն այն ժամանակ երեւի թե ոչինչ չէին ասում դահլիճ լցված հասարակությանը: Անուն-ազգանունը: Իսկ արտաքինով, մանավանդ հագուստ-կապուստով, շատ էր զիջում Երեւոյի ղեկավար Սամեղ Կուրդունի գլխավորությամբ նախագահության շարքերն զբաղեցրած մեծատուններին: Սկսեց խոսել... եւ ձայնն էլ այն չէր: Առհասարակ նրա ձայնի մեջ կար ջղային մի երանգ, որն ասած-խոսածի խորքին անձանթ մարդու վրա կարող էր թողնել ո՛չ այն տպավորությունը: Բայց խոսքն առաջ գնաց: Նա մեծ գուսանի տաղերի էությունն անցավ, հայերեն տաղերի խոսքերը հայերեն արտասանեց, թուրքերենինը՝ թուրքերեն, վրացերենինը՝ վրացերեն, վերլուծեց, ասես լող տվեց սայաթնովյան սիրո, մարդասիրության, փիլիսոփայության անհստակ ծովում,



Երբ հավանում էր մի բան, ջանում էր, որ ուրիշներն էլ ընդունեն, հավանեն: Իսկ եթե սիրում էր, եւ այդ սիրելին մարդ էր, գիտնական, հասարակական դեմք, անհատակա-նություն, դառնում էր նրա պաշտելին:

եւ դահլիճն այնպես էլեկտրականացավ, այնպես գերվեց, որ կարելի էր կարծել, թե մթնոլորտը լիքն է սայաթնովյան երգով, երգն էլ հնչում է աշխարհի ամենագրավիչ, պարզապես կախարդական ձայնով:

Երեւոյի ավարտին Սամեղ Կուրդունը եզրափակիչ խոսք ասաց եւ այս խոսքի վերջում էլ թե՛ գլուխ եմ խոնարհում հայ ազգի առաջ՝ նրա համար, որ ծեր Կովկասին Սայաթ-Նովա է պարգեւել, բայց նաեւ նրա համար, որ տվել է Սայաթ-Նովայի այնպիսի մեկնաբան, ինչպիսին Մորուս Չարաթայանն է: Այս խոսքի վրա դահլիճը որոտում է ծափերից: Իսկ ես, երեւի թե կյանքիս ամենաերջանիկ պահերից մեկում, Երեւանի երես չտեսած պատանի, փարել էի կրկնակ երջանիկ մի պատրանքի... մտածում էի, թե Երեւանի բոլոր մտավորականներն էլ այդպես իմաստուն են, այդպես պերճախոս ու հմուտ զրուցաբան: Ինչ իմանայի, թե այդ Երեւոյի հերոսը Երեւանում էլ անմրցակից է իբրեւ պատմող, ճարտարախոս, զրուցակից, երբ ունկնդիր ունի. մեկ անհատ լինի այդ ունկնդիրը թե լեփ-լեցուն դահլիճ:

Երեւան եմ ասում՝ նկատի ունենալով հետագայում իմ տեսածը, որից մեկ էլ կարող եմ հիշել Կարո Մելիք-Օհանջանյանին, որի հետ սերտ առնչություն եմ ունեցել 1968-69թթ., եւ դա էլ ինձ բերել է այն համոզման, որ 1930-40, նույնիսկ 50-60-ականների հայկական մտավոր իրականությունն ունեցել է մի մեծ ողբերգություն. միջավայրից վեր կանգնած, ճարտարախոս, իմաստուն անհատները, դեմ առնելով ուզածը գրել-տպագրելու անհաղթահարելի արգելքների, իրենց դատապարտել են բանավոր խոսքի, գոհացել միայն ունկնդիրների լսարանով եւ ապագան, ազգի հաջորդ սերունդները զրկել իրենց անսպառ կարողությունների արգասիքները վայելելու, նրանցով հարստանալու հնարավորությունից:

Ես այս զգացումը միշտ էլ ունեցել եմ Մորուս Ստեփանիչի հետ ունեցած ամեն մի հանդիպումից հետո:

Այսօրվա պես հիշում եմ պատմության ինստիտուտի դիրեկցիայի թե գիտխորհրդի նիստերից մեկը: Քննության էր դրված 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի սկզբի հայկական ազատագրական շարժումների հարցը: Մեծ ու վճռական քննություն չէր: Ուղղակի պետք է որոշվեր, թե այն ո՞նց է մեկնաբանվելու նոր օրերի լույսի տակ: Եվ խոսք ասաց Մորուս Չարաթայանը: Ասաց ի՞ր խոսքը՝ մանրամասների այնպիսի քաջատեղյակությամբ, որ կարելի էր կարծել, թե տարիներ պատրաստվել է, ծանոթացել այն ժամանակ յոթ փակի տակ պահվող մեծաքանակ աղբյուրներին, իսկ ամենակարեւորը՝ նրա խոսքի մեջ այնպես հառնեցին մեր ազատագրական շարժման հերոսական դրվագները, նրանց հերոսներն ու նահատակները, որ ինստիտուտի տնօրենը՝ սովորաբար պաշտոնական նիստերում երկարող խոսքի հա-

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

կառակորդ, զմայլված լում էր, թողեց, որ Մորուս Ստեփանիչը պարպի իրեն՝ ունկնդիրներին թողնելով շճմած-շվարած՝ գիտական-հրապարակախոսական, չգիտեմ էլ ինչական, այդ հանպատրաստի հրավառությունից: Եվ երբ նիստից հետո տնօրենին ասացի՝ ինչո՞ւ ինստիտուտում խոսքը զրանցող սարք չի պահվում, ասաց՝ «Առաջին անգամ ցավում եմ, որ չունենք, թե չէ, այսօր այդ ինչ հրաշք պիտի գրա առնեինք»:

Մի անգամ, կարծեմ 1972թ. էր, ինձ կանչեց մեր ակադեմիայի այն ժամանակվա հասարակական բաժանմունքի ղեկավար, արժանափառ Ծատուր Աղայանը եւ, ծանոթացնելով իր կողքը նստած ռուս մի երիտասարդի հետ, հանձնարարեց, որ տանեմ, ցույց տամ մեր քաղաքի թանգարաններն ու պատկերասրահը: Ծատուր Պավլովիչի հետ մենք հին բարեկամներ էինք, այդ պատճառով էլ ռուս մարդու համար հույժ կարեւոր հանձնարարություն եւ տվեց:

- Մի տեղ էլ կմտնեք, կենացներ կխմեք:

Ռուսն Անատոլի Նովոսելցեյն էր, այն ժամանակ պատմագիտական աշխարհում ոչ հայտնի դեմք, հետագայում՝ նշանավոր գիտնական, Անդրկովկասի միջնադարյան պատմության լավ մասնագետ, այսօր էլ Ռուսաստանի ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն:

Գործը պիտի սկսեինք «Էրեբունի» թանգարանից, որի տնօրենն իմ հայրենակիցն էր: Սա միայն մի քանի բոպե ուղեկցեց մեզ, հետո ներողություն խնդրելով անհետացավ, եւ երբ մենք գործն ավարտած ուզում էինք հեռանալ, մեզ ուղեկցեց մի սենյակ, որտեղ կերուխումի շքեղ սեղան էր բացված: Դե, այն ժամանակ դեռ անկախություն չկար, դրա համար էլ ուրիշ ամեն ինչ կար, եւ առատությունից տեղի էր ունենում ձախճացում:

«Էրեբունի» տնօրենը «Նաիրիով» լի բաժակ բարձրացրեց եւ առաջարկեց մեր Արգիշտի թագավորի կենացը, որ Էրեբունի է կառուցել՝ դնելով Երեւան քաղաքի հիմքը:

- Մենք այդպես ենք. մի ոտքով Արգիշտիի կողքին...

Նովոսելցեյն Արգիշտիի, նրա նախնիների եւ հաջորդների հարցն այդ մի բաժակով փակեց, ապա ականջիս ասաց.

- Արի Ծատուր Պավլովիչի հանձնարարության երկրորդ մասը չկատարե՞նք, - ապա իմ հարցական հայացքին էլ յուրովի պատասխանեց, - թույլություն ունեմ «էդ անտերի» նկատմամբ:

- Բա «էդ անտերը» որտեղից գիտեք: Թե.

- Առաջին կինս հայ է եղել: Եվ եկանք պատմության թանգարան: Այստեղ մեր պատմության հին ու միջնադարյան նմուշները թռուցիկ դիտելուց հետո, մտանք տնօրեն Մորուս Չասարայանի առանձնասենյակը, ուր կարծես նա մեզ վաղուց էր սպասում:

Կա մի բնագավառ էլ, որտեղ Մորուս Չասարայանի գիտական ծառայությունը դարձյալ մեծ է, ուղենիշ-ուղեցույց լինելու չափ նշանակալից: Դա հայոց պատմության հնագույն շրջանի, մեր մշակույթի ազգային ակունքների ու սումնասիրության եւ գնահատության բնագավառն է:

Նովոսելցեյը ներկայացրեց իր գործողման ծրագիրը. 15-ական օրերով պիտի ծանոթանա Անդրկովկասի երեք հանրապետությունների պատմությանն ու պատմագիտական աշխատանքներին: Բաքվում արդեն եղել է:

- Իսկ Բաքվում 15 օր ուսումնասիրելու պատմություն ո՞նց եք գտել, - կատակով հարցրեց Մորուս Ստեփանիչը:

Եվ Նովոսելցեյը հաջող արձագանքեց նրան.

- Զիա Բունիաթովն էր օգնում. նախ անհիշելի ժամանակներից թուրքերով էր բնակեցրել Անդրկովկասն ու հարակից շրջանները, ապա նրա հարազատ ժառանգ աղվան ժողովրդի պատմությունն էր ներկայացնում ըստ աղվան հեղինակ Մուսա Կադանկաթովի...

Ադրբեջանական այս զավեշտի վրա խաչ քաշելով՝ անցանք Անդրկովկասի հին պատմության, իսկական պատմության հարցերին, եւ այստեղ Մորուս Ստեփանիչը, որ արդեն մտել էր իր դերը, իմաստուն զրուցողի, պատմողի եւ ունկնդիրների իր ետեփից քաշած տանողի դերը, զրույցի սանձերն իր ձեռքն առավ, դարձավ երկուսիս մտքերի, հույզերի, պատմագիտական մտորումների կառավարը: Խոսեցնում էր մեր պատմության հին-հին հիշատակները, բացում առեղծվածներ, որոնք միշտ էլ կապված են նրանց հետ... Երբ Նովոսելցեյը հասկացրեց, որ իրեն շատ է հետաքրքրում Ադրբեջանի թուրքերի իսկական նախնիների հարցը, Մորուս Չասարայանը նկարելու պես ցույց տվեց օղու թուրքերի մեծ քոչը Միջին Ասիայից դեպի Բյուզանդիայի արեւելյան մասը՝ տեղի ունեցած 15-րդ դարի առաջին կեսում: «Այդ մեծ քոչի հետեւանքն են թուրքմենները Կասպիական արեւելյան ափին, այսօրվա ադրբեջանցիները՝ Անդրկովկասում եւ օսմանյան թուրքերը՝ Արեւմտահայաստանի նահանգներից մինչեւ Կոստանդնուպոլիս սփռված», - թուրքերի նոր պատմության իր էքսկուրսն այսպես ավարտեց Մորուս Ստեփանիչը:

Ուրիշ հարցեր էլ շոշափվեցին շուրջ չորս ժամ տեսած այդ զրույցում՝ հայոց պատմության նոր ու նորագույն շրջանին վերաբերող խնդիրներ, հայ-թուրքական, հայ-ռուսական փոխհարաբերությունների այնպիսի հանգույցներ, որոնք այն ժամանակ անլուծելի կնճիռներ էին թվում, եւ այսօր էլ ո՞չ լուծված են, ո՞չ գոնե բավարար չափով պարզված:

Ես զմայլված լում էի, ոնց որ առաջին անգամ ընկած լինեի խոսքի, մտքի, իմաստության այդ կախարդական ոլորտը: Եվ ուրախու-



ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 25 թյամբ տեսնում ու զգում էի, որ իմ վիճակում է նաեւ Անատոլի Նովոսելցեւը: Իսկ առավել հետաքրքիրը՝ հասկանում էի, որ մեր ռուս նոր բարեկամն անընդհատ նոր հարցեր է տալիս՝ դիտավորյալ ձգելով զրոյցը, ավելի ճիշտ՝ Մորուս Ստեփանիչի մեծ ու կախարդական մենախոսությունը:

Այդ երեկո, բաժանվելիս, Նովոսելցեւը յուրովի գնահատեց իր ունկնդրության նյութը: Ասաց.

- Անդրկովկաս եմ եկել 45 օրով: Եկել եմ՝ հուսալով, թե այստեղից շատ ու շատ ուսանելի բան պիտի տանեմ: Եվ հիմա արդեն մտածում եմ, որ եթե ուրիշ ոչինչ էլ չտանեմ, ծերուկի այս զրոյցն ինձ լիուլի բավական է:

Բնավորության լավագույն գծերի, բարոյական վեճն նորմերի, հավաքական առաքինության մի զարմանահրաշ կերտվածք էր Մորուս Յասարթյանը՝ բարի, հոգատար, անկեղծության եւ պարզասրտության մեջ կատարյալ, գուցե ավելի ճիշտ՝ նախնական-մանկական մակարդակի: Զանի անգամ եմ տեսել մարդկանց օգնելիս՝ ինչով կարող էր, նույնիսկ իրեն զրկելով: Մի անգամ թանգարանի աշխատողներից մեկն իմ ներկայությամբ գանգատվեց իր ընտանիքի վիճակից, հարցրեց՝ «Յնարավոր չէ՞ աշխատավարձս բարձրացնել»: Ասաց՝ «Դա ինձնից կախված չէ», եւ թեւը քաշելով տարավ մյուս սենյակ... Երբ դուրս եկան, աշխատակիցն ամոթխած մուլ տվեց ու հեռացավ՝ իր հետ տանելով Մորուս Ստեփանիչի՝ Ակադեմիայի թղթակից-անդամության ամսավճարը, որ նա քիչ առաջ էր ստացել:

Երբ հավանում էր մի բան, ջանում էր, որ ուրիշներն էլ ընդունեն, հավանեն: Իսկ եթե սիրում էր, եւ այդ սիրելին մարդ էր, գիտնական, հասարակական դեմք, անհատականություն, դառնում էր նրա պաշտելին: Քանի անգամ եմ լսել, որ նորագույն մեր պատմաշրջանի մտավոր կյանքում երեք մեծություն էր ձանաչում՝ Մաղաքիա Օրմանյան, Լեո, Դավիթ Անանուն:

Երբ առաջին անգամ լսեցի (կարծեմ 1963-ին էր), Անանունն ինձ համար գրեթե անծանոթ անուն էր: Դե, որտեղ կարող էի ծանոթանալ. նա ամենավտանգավոր հեղինակներից մեկն էր 20-ական թվականներից, իսկ 30-ականներին էլ ասպարեզում տիրու-

թյուն անող շառլատանները կնքել էին սոցիալ-ֆաշիստ եւ անունը տվողին քշել էին տալիս տաժանակրության:

Ասացի.
- Մորուս Ստեփանիչ, Դավիթ Անանունից միայն մի հողված եմ կարդացել՝ «Ղարաբաղ» վերնագրով, իսկապես շատ խոր ու անթերի գործ է:

Ասաց.
- Գիտես, որ այդ խորը ու անթերի գործը սկզբնապես հասցեագրված է եղել Յայաստանի ղեկավարությանը: Զեռագիր վիճակում ներկայացրել է, որպեսզի սահմանային հարցեր լուծելիս նկատի առնեն, փաստերը կոխեն հակառակորդի աչքը... Մի խոսքով՝ ձակատամարտի մտնեն, բայց Ղարաբաղը չզիջեն... Իսկ նրանք այդ հանձարեղ գրությունը մի կողմ են նետել ու գնացել միակողմանի զիջումների:

Լեոյից մի նամակ էր ձեռքս ընկել: Ուղղված էր շուշեցի գրող Միրզա Տեր-Սարգսյանին: Լեոն կարդացած է եղել նրա հույժ կարեւոր ժամանակագրությունը Շուշվա եւ առհասարակ Ղարաբաղի 1917-23թթ. իրողությունների մասին եւ համոզված, որ տպագրել անհնար է, բայց պետք է պահել ապագա բարի ժամանակների համար, նամակի վերջում խորհուրդ էր տալիս ժամանակագրությունն արտագրել մի քանի օրինակով, պահ տալ տարբեր տեղերում, որպեսզի այն հասնի ապագա սերունդներին:

Նամակի ձեռագիրը շատ էր խրթին: Տարա Մորուս Ստեփանիչին, իրար լրացնելով մի կերպ կարդացինք: Զրուցեցինք նրա շուրջ, դարձանք ուրիշ հարցերի, եւ երբ թվում էր, թե մոռացել է նամակը, առաջարկեց, որ գնանք իրենց տուն:

Գնացինք, եւ այնտեղ նա գրասեղանի ինչ-որ զգրոցի խորքից մի փոքրիկ ծրար հանեց, մեկնեց ինձ: Ծրարում լրկ մեքենագրական մի թուղթ էր, մեկ երեսի բանաստեղծություն, վերնագիրը՝ «Յայի սիրտը»: Ասաց՝ գրել է իր 60-ամյակի օրը, 1962-ի սեպտեմբերի 10-ին (այդպես էլ գրված է տակը),

Ահա այդ բանաստեղծությունը.

*Ջարմանում եմ քո վրա,
Միրտ իմ, սիրտ իմ շվարած.
Անտարեսայան բեռ տարար
Քո վանդակում ծվարած.
Բարախեցի կրկնակի՝
Կծկումներով բյուրավոր,
Միշտ նետվեցիր կրակի,
Հազար տեղից վիրավոր,*

*Ճմրվեցիր գոր-գիշեր
Գորդյան հարցով Նայիրյան,
Պարտավորված՝ միշտ հիշել
Մեւ լճերը հայ արյան,
Հեծկլտանքը հայուհու,
Մասիս վիշտը հայկական,
Թփրտոցը, մինչ մահու,
Շամփուր քաշված հայ
մանկան...
Ջարմանում եմ քո վրա,
Միրտ իմ, սիրտ իմ
տառապած,
Ո՛վ տվեց քեզ այդքան ուժ,
Ո՛վ տվեց քեզ այդքան հուր,
Հին պսակը թառամած
Այս նենգ. արնոտ աշխարհում,
Լուռ քարտեզը հնացած,
Թե՛ն անուրջը հին հույսի,
Պատմությունը՝ խունացած
Ցուրտ հողմերից Հյուսիսի...
Ջարմանում եմ քո վրա,
Միրտ իմ, սիրտ իմ արնաքամ,
Միթե վերքդ հնօրյա
Չի փակվելու մի անգամ:*

Երեսան 10.9-62թ.

«Պատմությունը՝ խունացած ցուրտ հողմերից Հյուսիսի», ապա եւ՝ «Միրտ իմ, սիրտ իմ արնաքամ, Միթե վերքդ հնօրյա / Չի փակվելու մի անգամ»:

Առաջինը՝ մեր անագորույն ձակատագրի բնութագիրը, երկրորդը՝ անզոր բողոք այդ ձակատագրի դեմ:

Առաջինի մասին նա շատ էր խոսում. աշխարհաքաղաքական այս միջավայրը հայությանն ստիպում է կամ աշխարհի երեսից վերանալ իբրեւ ազգագրական ընդհանրություն, վարչական միավոր, կամ լինել Հյուսիսի հետ, պահպանել այդ ընդհանրությունն ու միավորը՝ իհարկե միշտ ենթակա «Ցուրտ հողմերին Հյուսիսի»:

Եվ այսքանը գիտակցելով, անխուսափելիությունն ու այլ տարբերակի անհնարինությունը գիտակցելով՝ հարց էր տալիս՝ «Միթե վերքդ հնօրյա / Չի փակվելու մի անգամ»: Ոչ թե տեսչում էր թողափել այդ անխուսափելիությունը, փարել անհնարին տարբերակին, այլ պարզապես, մարդկայնորեն բողոքում էր ձակատագրի դեմ, անիծում էր այն...

1973 թ. գարնանը եւ դկտորական դիսերտացիա պիտի պաշտպանեի Խաչենի իշխանության մասին: Իբրեւ մեր ինստիտուտի գիտ-խորհրդի անդամ՝ ներկա էր եղել նախ-

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց Եկեղեցի



նական խոսք ու զրույցին եւ ասաց. «Առաջին ընդդիմախոսը ես եմ լինելու»:

Շատ էր ոգետրվել դիսերտացիայի առանցքային խնդրով: Մեր պատմագիտության մեջ ընդունված էր այն տեսակետը, թե հայկական պետականության վերջին բեկորները հոգս են ցնդել թաթար-մոնղոլական տիրապետության հաստատումով: Իսկ ես ապացուցում էի, որ Արցախյան Առանշահիկ իշխանությունը մեր լեռնաստանում գոյություն է ունեցել այդ ենթադրյալ վերացումից հետո եւս, անընդմեջ, մինչեւ մելիքությունների գոյացումը 15-16-րդ դարերում: Իսկ մելիքություններն էլ, որ այդ իշխանության մանրատումն էին ու ժառանգորդները, իբրեւ պետական իշխանության յուրահատուկ ձեւ, պահպանվեցին մինչեւ 19-րդ դարի սկիզբը, ռուսական տիրապետության հաստատումը:

Մորուս Ստեփանիչի առողջությունն այդ ժամանակ շատ էր խաթարված. սիրտն իրեն զգացնել էր տալիս ամեն վայրկյան: Նստեց շուրջ 50 էջանոց ելույթ գրեց, չնայած հայտնի էր, որ խոսելիս գրածը մի կողմ է դնելու եւ առաջ է տանելու իր բանավոր անմրցակից ատենախոսությունը: Պաշտպանության օրն առողջական վիճակն ավելի վատ էր: Ասում էին՝ գիշերը սրտի նոպա է ունեցել: Բեյրութից եկած մի սրտաբան անբաժան հետետում էր եւ գիտխորհրդի նիստն սկսվելուց առաջ կտրական առաջարկեց, որ հրաժարվի ելույթից,

մանավանդ, որ այն գրած պատրաստ էր, եւ կարող էին կարդալ ուրիշները:

- Չէ, խոսողը եմ պիտի լինեմ, - հայտարարեց Մորուս Ստեփանիչը: - Էլ ո՞ր օրվա համար ենք ապրել այսքան ժամանակ:

Բժիշկն իրարով անցավ, խեղճացած աղերսեց.

- Պարոն Չասրաթյան, խղճացեք ձեզի, միթե ինքնական պիտի գնաք նահատակության:

Նա այս զգուշացումն էլ արհամարհեց՝ կատակի տալով:

- Բարեկամս, - ասաց, - մեր ամբողջ կյանքը եղել է ինքնական նահատակություն: Եվ այն էլ անիմաստ, աննպատակ: Իսկ այսօր Ղարաբաղի պաշտպանությունն է, հասկանո՞ւմ ես: Կնահատակվեմ: Էհ, թող նահատակվեմ: Գոնե նախօրոք գիտեմ՝ ինչի՞ համար:

Գիտեր, որ համալսարանը բացասական կարծիք է տվել դիսերտացիայի վերաբերյալ: Ասում էին՝ նույնիսկ առաջարկություն էլ է եղել, որ դիսերտացիան կարծիքի ուղարկվի Ադրբեջան: Այս առթիվ էլ ասաց իր խոսքը՝ գայրալից, անզիջում:

Մի կարետոր գործ սկսելուց, իսկ Արցախ-Ղարաբաղի հարցին անդրադառնալուց առաջ, մենք պետք է լուծած լինենք մեր ներսի թուրքերի հարցը:

«Ներսի թուրքեր» էր կոչում մեր պաշտոնյաներից մինչեւ ստորին օղակները շարված այն ստահակներին, որոնք հո-

տոտելով՝ ազգայնական տրամադրություններ էին որոնում ամենուրեք, ապա կռվում դրանց դեմ գաղտնի ու աշկարա, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ:

Շուրջ քսան տարի է անցել այն օրվանից: Զսան տարի, որի վերջին հինգը՝ Արցախ-Ղարաբաղի համար մղվող իրական ու վճռական պայքարի տարիներ:

Վաղուց մեզ հետ չէ այլեւս Մորուս Չասրաթյանը (վախճանվել է 1979թ.), որ Արցախ-Ղարաբաղի սիրահարն էր, պաշտպանը, նրա դերի ու ծակատագրի խորին խորհուրդի գիտակը: Առաջին անգամ ես նրանից եմ լսել իր հայրենի Սյունիքի հերոս Նժդեհի մարգարեական խոսքը մեր լեռնաստանի մասին. «Չայաստանն ինչ ցուցանակի ներքո էլ գտնվի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի»:

Ասում էր այս խոսքը, ապա լրացնում. «Այդ երկրոսի հետ միասին նա կլինի հարուստ, հզոր, անխոցելի»:

Այս խոսքերից հետո նրա հայացքը օժված էր լինում բարության, երազի, իմաստության շողերով, որոնց միջից շուրթերը մրմնջում էին. «Երանի՛ նրանց, որ տեսնելու են այդ իրական հրաշքը: Անպայման տեսնելու են»:

«Ավանզարդ»,

26 նոյեմբերի, 1992թ., N93 (11007)

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Մորուս Զասրաթյան մանկավարժը եւ արդի մանկավարժության խնդիրները



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ

Մանկավարժությունը գիտության վաղնջական բնագավառներից է, եւ Զայաստանը, որպէս հնագույն քաղաքակրթության կրողներից մեկը, հսկայական ավանդ ունի այդ բնագավառում:

Յայոց գրի քրիստոնեական շրջանի երկու նախաձեռնողները՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը, եղել են իրենց շրջանի նշանավորագույն ուսուցիչները, որոնց աշակերտները հինգերորդ դարը հայ ժողովրդի գիտական եւ մշակութային կյանքում դարձրին ոսկեդար պատվավոր անվանն արժանանալու:

Միջնադարում ուսուցիչ նշանակում էր բազմակողմանի զարգացած մարդ, ով իր գիտական ու բարոյական հատկանիշներով բարձրանում էր հանրությունից:

Հին Հունաստանում էլ նշանավորագույն գիտնականները նաեւ ուսուցիչներ էին: Չնոռանանք՝ ուսուցիչ էր Պլատոնը, որը հիմնեց իր ակադեմիան, ուսուցիչ էր նաեւ Արիստոտելը, որի նշանավորագույն աշակերտը դարձավ Ալեքսանդր Մակեդոնացին:

Արդեն 95 տարի է՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավար-

ժական համալսարանը ամենատարբեր գիտաճյուղերի գծով ուսուցիչներ է պատրաստում եւ վերապատրաստում ոչ միայն Հայաստանի, այլեւ աշխարհի բոլոր այն երկրների հայկական կենտրոնների համար, որոնք ունեն հայկական դպրոցներ:


Հայկական պետական մանկավարժական համալսարանը եղել եւ մնում է Հայաստանի մայր մանկավարժական բուհը: Այս հաստատությունն ունեցել է երեւելի ու եզակի մանկավարժներ: Պարզունակություն կլիներ կարծել, թե նրանք դասավանդել են մանկավարժություն առարկան: Նրանց մեծագույն մասը այլ գիտաճյուղերի մասնագետներ էին:

Այս մեծանուն մանկավարժներից էր Մորուս Զասրաթյանը՝ հնագետը, արվեստագետը, պատմաբանը, բանասերը, մանկավարժը: Նա մանկավարժ էր աստվածատուր կոչումով: Ոչ նախկին շրջանավարտները, որոնք եղել են նրա ուսանողները ինձնից առաջ, ոչ ինձ հետ սովորողները եւ ոչ էլ ինձնից հետո եկածները, չեն կարողանում առանց խանդաղատանքի հիշել այդ լուսավոր մարդուն:


Մորուս Զասրաթյանն ուներ մի հմայք, որը միայն իրենն էր, բնատուր էր, եզակի: Դրան նպաստել էր, որ հիանալի դպրոց էր անցել Լենինգրադում: Նրա գիտական ղեկավարն էր եղել աշխարհահռչակ գիտնական Յոզեֆ Օրբելին: Միաժամանակ շփվել էր մեծ հայագետ, Բագրատունիների մայրաքաղաքի մեծագույն հետազոտող Նիկոլայոս Մամի հետ: Բնականաբար բազմիցս այցելել էր նախկին Խորհրդային Միության ամենահարուստ հավաքածու ունեցող թանգարանը՝ Էրմիտաժը, տեսել Իսակիեյան տաճարը, Լենինգրադի այլ տեսարժան վայրերը, եղել Պետերբուրգում: Մորուս Զասրաթյանն ուներ մանկավարժի համար պարտադիր թիվ մեկ հատկանիշը: Այն է՝ շարունակ ավելացնել գիտելիքների պաշարը, կանգ չառնել ձեռք բերածի վրա եւ դրանք ջանադիր ու սիրով փոխանցել ուսանողներին:

Մեր օրերի մանկավարժությունը հրամայական ձեռով պահանջում է լի-

Մորուս Զասրաթյանը պաշտելի դասախոս էր: Մի՞թե կա դասախոսի կամ ուսուցչի համար ավելի երանավետ վիճակ, երբ լսարանը կլանված լսում է իրեն՝ չզգալով ժամանակը:



Հովհաննես
Թումանյան



Ակսել
Բակունց

նել աշակերտակենտրոն եւ ուսանողակենտրոն:

Այս մանկավարժական մեթոդը Մորուա Յասրաթյանը կիրառում էր տասնամյակներ: Օրինակ, երբ խոսում էր Վերածննդի իտալական արվեստի մասին, նախ ցանկանում էր իմանալ, թե ուսանողներն ինչ գիտեին այդ շրջանի նկարիչների, քանդակագործների, գիտնականների, նաեւ գրողների մասին: Եվ եթե կային որոշ տեղեկություններ ունեցող ուսանողներ, ստուգում էր նրանց իմացության մակարդակը, ուղղում նրանց սխալները, ապա անցնում իր փաստահարուստ եւ հմայիչ դասախոսությանը:

Այսօրվա մանկավարժության համար պարտադիր պահանջ է ուսուցչի բազմագիտակությունը: Որպես բանասեր՝ Մորուա Յասրաթյանը հետազոտել էր Սայաթ-Նովայի ողջ ստեղծագործությունը եւ նրա անցած ուղին: Սակայն նա քաջահմուտ ձեռով գիտեր ողջ միջնադարյան գրականությունը՝ սկսած հինգերորդ դարից մինչեւ XVIII դարը: Բոլորովին էլ պատահական չէր, որ նա 1937 թվականին եղել է Մատենադարանի տնօրեն: Նա հմուտ էր նաեւ ձեռագրերը վերծանելու գործում: Ընդհանրապես նրան իր գիտական-հետազոտական աշխատանքում մեծապես օգնել էին գրաբարի իմացությունը, վիճաբերը

Նա ժամանակակիցն է եղել Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի եւ նրանց մասին պատմում էր եզակի հուշեր...



կարդալու կարողությունը, թուրքերեն, վրացերեն լեզուների իմացությունը եւ ռուսերենին քաջ տիրապետելը:

Մորուա Յասրաթյանը պաշտելի դասախոս էր: Միթե կա դասախոսի կամ ուսուցչի համար ավելի երանավետ վիճակ, երբ լսարանը կլանված լիւր է իրեն՝ չզգալով ժամանակը:

Մանկավարժից պահանջվում է ունենալ հստակ մտածողություն, նյութը մատուցել մատչելի, խոսել կենդանի շեշտերով, ունենալ ձայնի ներգործող

հմտություն: Այս բոլոր հատկանիշներն ուներ Մորուա Յասրաթյանը:

Ժան-ժակ Ռուսոն եվրոպական լուսավորչական շարժման պայծառ դեմքերից է՝ հանձար բոլոր առաջադեմ մարդկանց համար: Նա ոչ միայն փիլիսոփա էր, արվեստագետ, այլև մանկավարժ տեսաբան: Նրա «Էմիլ կամ դաստիարակության մասին» («Emile ou de l'education») տրակտատը հավերժորեն ուղեկցելու է մարդկությանը: Դրա համար էլ նրա մասին ասվել է. «Իսկապես նա գրել է խոսքեր, որոնք զարգացրին աշխարհներ»: Այսօրինակ ձեռակերպումը կարող ենք փոխել, ասելով, որ Մորուա Յասրաթյանն այնպիսի դասախոս էր, ում խոսքերը զարգացրին բազմաթիվ ուսանողական սերունդներ:

Մանկավարժից պահանջվում է հավասարաչափ վերաբերմունք բոլոր աշակերտների եւ ուսանողների նկատմամբ: Դասախոսի եւ ուսանողի փոխհարաբերության առաջնահերթ ցուցիչը գիտելիքի օբյեկտիվ գնահատականն է: Պետք է տարբերակել երկու իրողություն: Առաջինը, երբ դասախոսը, ելնելով առարկայի յուրացման օբյեկտիվ չափանիշերից, գնահատում է ուսանողին չորս չափորոշիչով եւ հինգ գնահատականների համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»: Մորուա Յասրաթյա- ➤ 30

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

«29 նը չուներ «անբավարար» գնահատական: Նախ՝ բոլոր ուսանողները, իրոք, կանված լում էին նրա ասելիքը, որն ինտերակտիվ ձեռնարկով ամրացվում էր հենց դասախոսության ժամանակ, հետո էլ սիրով ներկայացված դասախոսությունն այնքան էր կլանում ուսանողին, որ նա հենց լսարանում ինչ-որ չափով յուրացնում էր առարկան:

Մորուս Չասրայանը կարողանում էր ներշնչել ուսանողներին, որ նրանք կարող են ունենալ ուսուցչի համար անհրաժեշտ գիտելիքներ, սակայն նրանցից պահանջվում է ողջ կյանքում անցնել ինքնակրթության ոչ հեշտ, սակայն պարտադիր ու աշխատատար ճանապարհը: Նա իր գիտելիքներով հաստատում էր այդ ճշմարտությունը:

Տեղին եմ համարում այստեղ վկայակոչել տաղանդաշատ գրող Ռազմիկ Դավոյանի՝ Մորուս Չասրայանի դասախոսին, մանկավարժին տրված այն գնահատականը, որ վերջերս կարդացի «Մանկավարժական համալսարան» թերթի հոբելյանական համարում. «Ակադեմիկոս Մորուս Չասրայանը գագաթ էր մի քանի մասնագիտությունների գծով՝ բնագիտություն, պատմություն, բանասիրություն»:

Բնագիտություն ասելով Ռազմիկ Դավոյանը ի նկատի ունի այն փաստը, որ Մորուս Չասրայանը՝ որպես առաջնակարգ հնագետ, հրաշալի գիտեր ներկա եւ պատմական Չայաստանի, եւ Կիլիկյան Չայաստանի աշխարհագրությունն ու բնաշխարհը:

Պատահական չէր, որ շուրջ 11 տարի (1964-1975թթ.) Չայաստանի Ազգային պատմության թանգարանի տնօրենն էր: Մեծ մանկավարժը ոչ միայն հնագետ էր, այլևս հմուտ բանագետ եւ ազգագրագետ:

Նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի Թումանյանի գաղափարական դպրոցի հետետորդն էր, դա նշանակում է՝ Չայաստանը պետք է ունենա կրթված սերունդ:

Մորուս Չասրայանը փիլիսոփա մանկավարժ էր, նրան ծանոթ էին հին աշխարհի մեծ մտածողներ Պլատոնի եւ Արիստոտելի գիտելիքներ ձեռք բերելու թեորենները, ըստ որոնց «իմանալն ու իմացողը նույնական են»:

Այն ուսանողները, որոնք պատմաբանական ֆակուլտետի պատմական ճյուղն էին ընտրել, բախտ են ունեցել Մորուս Չասրայանի հետ մասնակցել հնագիտական պեղում-

ների: Նրանք պատմում էին, թե որքան մեծ էր գիտնականի հնագիտական հոտառությունը. գիտնականը կռահում էր, թե դարերի կուտակած որ հողաշերտի տակ կարող են լինել հնագիտական նյութեր եւ մշտապես նրա կռահումները հաստատվում էին:

Այս մեծ մանկավարժը զգում էր, թե որ ուսանողներն են գիտական ուղղվածություն ունեցողները եւ նրանց իրեն հատուկ ձեռքով խրախուսում էր: Պատմում էին, թե որքան հոգատար էր հետազայում անվանի ձեռագրագետ Արտաշես Մաթեոսյանի նկատմամբ, ով նյութական ծանր պայմաններում էր, եւ Չասրայանը հասավ նրան, որ վերջինիս գերազանցիկ կինը ստանա ամենաբարձր կրթաթոշակը, եւ այդ ձեռով ապահովվի նրանց կեցությունը: Նման դեպքերը նրա դասախոսական գործընթացում եզակի չէին: Նա դասախոսի անանձնական այն տեսակն էր, որը մշտապես հարկ է որ ուղեկցի մանկավարժությանը:

1937 թվականին Մորուս Չասրայանը ստալինյան բռնության հետեանքով ընկել էր բանտ: Նա խիզախորեն տարել էր ամենադաժան տանջանքները եւ կիսամեռ վիճակում մի քանի տարի անց ազատվել բանտից: Նա չէր խոսում երբեք այդ մասին, սակայն ուսանողներին բացատրում էր, թե մորթապաշտ ու մատնիչ լինելը որքան կործանարար կարող է լինել բոլորովին անմեղ մարդկանց համար: Նա դասախոս էր, որը բարձր էր կենցաղային հասարակ հարաբերություններից, հատկապես նախանձի արատավոր երեւոյթից: Ինչպես Եղիշեն կասեր, նա միամտությամբ հաղթել էր խորամանկությանը, գիտության եւ հայրենիքի նկատմամբ ունեցած սիրով լվացել նախանձի կապտագույն ներկվածքը, կտրել ազահույթյան արմատները եւ չորացրել նրանց ոստերի մահաբեր պտուղները:

Նա միշտ բացատրում էր, թե մարդկային միտքը ամենակարեւորն է, եւ նրա գործառնությունն անհրաժեշտ է ճիշտ օգտագործել, որովհետեւ գիտելիքների այն մեծ պաշարը, որ ուղեղը կարող է պահպանել, ֆենոմենալ է (բացառիկ):

Մորուս Չասրայանը, ով հիանալի էր տիրապետում մայրենիին, հաճախ օգտագործում էր միջազգային տերմիններ, իհարկե, զուգահեռաբար օգտագործելով դրանց հայերեն հոմանիշները:

Նա շատ էր սիրում Չայաստանի պատմական հուշարձանները եւ դրանց մասին խոսում էր մի առանձին նվիրումով: Հիանալի գիտեր, թե ներկայիս Չայաստանի, Լեռնային Ղարաբաղի, պատմական Գողթն գավառի տարածքում ինչ պատմական հուշարձաններ կան: Նրա կարծիքով՝ եթե հնագետը պեղումների ժամանակ որեւէ արժեքավոր իր գտնի, իսկույն պետք է հանձնի պետական մարմիններին, որովհետեւ այդ գտածոները, որոնք պահպանել է հողը, ազգային արժեքներ են: Ահա հայրենիքի հանդեպ ունեցած ամեն ուսանողի պարտքը այն էր, որ ազգային ճիշտ գիտակցությունը փոխանցվելու էր սերնդեսերունդ, եւ ազգը դրանով դառնալու էր անպարտ ու հավերժական:

Ազգայինն ու համամարդկայինը այդ մանկավարժի մոտ հանդես էին գալիս միաձուլված:

Բազմազբաղ լինելով հանդերձ՝ Մորուս Չասրայանը ջանում էր մասնակցել ուսանողական միջոցառումներին ու իր ելույթներով հարստացնում էր դրանք: *Նա ժամանակակիցն էր եղել Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի եւ նրանց մասին պատմում էր եզակի ու թանկ հուշեր: Նրանց համարում էր*

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Պաշտելի դասախոսը եւ առաջնակարգ գիտնականը

Նվիրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասարթյանին

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ

հանձարներ:

Հովհաննես Շիրազի հետ հանդիպման ժամանակ բանաստեղծին ասաց, որ Աստված նրան տվել է, քչերին արտոնված, շատ մեծ շնորհ եւ վերջինս պարտավոր է այդ շնորհը վերադարձնել Աստծուն՝ իր ազգի համար նորանոր հրաշալի բանաստեղծական քերթվածներ կերտելով:

Մորուս Հասարթյանը 1965-66 թթ.՝ որպես դասախոս աշխատել էր Բեյրութի Հայկազյան քոլեջում: Նա սփյուռքի մտավորականության հետ մշտական ջերմ կապերի մեջ էր: Բեյրութում նրա աշխատած տարիները համընկել էին այդ քաղաքի ոսկեդարի հետ: Նա սիրով խոսում էր, թե որքան ապահով ու բարեկեցիկ կյանքով են ապրում հայերը «Արեւելքի Փարիզ» կոչված այդ քաղաքում եւ որքան սեր ունեն նրանք Հայաստանի հանդեպ:

«Գիրք պիտոյիցի», «Կրթութիւն է ամենայն ինչ» սահմանումը Մորուս Հասարթյանը պատվաստում էր իր ուսանողների մտածողությանը:

Հայտնի է, որ հայ դասական գրող, հասարակական գործիչ եւ մանկավարժ Լեւոն Շանթը, ով բարձրագույն կրթություն էր ստացել Լայպցիգի, Մյունխենի, Ենայի համալսարաններում եւ ծանոթ էր Գերմանիայի առաջադեմ մանկավարժությանը, հայ դպրոցի առաջ դնում էր այնպիսի պահանջներ, որոնք այսօր էլ արդիական են:

Գրիգոր Շահինյանը Լեւոն Շանթի երկերի ակադեմիական հիմնադրոք հատորի առաջաբանում Շանթի մանկավարժական հայացքների մասին գրում էր, թե Շանթը կամենում էր, որ նոր հայ մտավորականը լինի բարձր իդեալներով տոգորված անձ, որը նվիրումով աշխատի մարդկության եւ նրա ստեղծած քաղաքակրթության առաջընթացի համար: Նա ցանկանում էր նաեւ, որ հայ մտավորականը լինի հայ ազգի դատին նվիրված եւ իր սեփական հավաքականության վրա աշխատող: Չէր ընդունում կաղապարված քարոզներ եւ ջանում էր՝ աշակերտներն ունենան սեփական մտքեր ու դատողություններ:

Այս պահանջները ուսանողներին ներարկում էր նաեւ լուսամիտ մանկավարժ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս Հասարթյանը, ում կերպարն ու մտքերը մշտապես ուղեկցել եւ ուղեկցում են նրա սաներին: ❄

Մորուս Հասարթյանի անունը, որպես ազգային արժեքի, լսել եմ ծնողներիցս: Նախքան այդ անսահման հմայիչ մարդու ուսանող դառնալը նրա մասին ունեցած նախնական գիտելիքներս լիովին հաստատվեցին, երբ սեպտեմբերի մեկին Խ.Աբովյանի անվան ՀՊՄԻ-ի պատմա-լեզվագրական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին նա եկավ ողջունելու եւ հատ-հատ մեզ հետ ծանոթանալու: Հետո մեզ դասախոսեց երկու առարկա՝ «Հին աշխարհի պատմություն» եւ «Համաշխարհային արվեստի պատմություն»: Այս առարկաները ներկայացնում էր բազմագիտակությամբ ու հետաքրքրաշարժ մանրամասներով չմոռանալով առարկաների համապատասխան թեմաները կապել հայ ժողովրդի պատմության հետ: Երբ լսում էի նրան, ինձ թվում էր, թե նա սովորել էր Պլատոնի ակադեմիայում կամ Մովսես Խորենացու հետ ուսանել էր Ալեքսանդրիայում, շրջել Եդեսիայում, Հռոմում, Աթենքում, Բյուզանդիոնում, տեսել Վերածննդի մեծերին՝ Լեոնարդո դա Վինչին, Ռաֆայելին, Տինտորետոյին, տեսել Ֆլորենցիայում գտնվող Միքելանջելոյի կերտած Դավթի արձանը:

Նա այնքան տեսանելի էր պատմում Անիի ճարտարապետության մասին, որ մենք տեսնում էինք Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաքի հզոր պարիսպները, կաթողիկե տաճարի հրաշք

կառույցը, Տիգրան Հոնեցի եկեղեցին, Ախուրյան գետի վրա կառուցված երկհարկ կամուրջը: Նա պատմում էր, թե ինչպես Գյումրիում կա Անիի կաթողիկե եկեղեցու կրկնակը, որի ճարտարապետը վաղ լուսաբացին ոտքով գնացել է Անի, ուսումնասիրել մայր տաճարի ճարտարապետական գաղտնիքները, վերադարձել Գյումրի ու կրկնօրինակել դրանք:

Մորուս Հասարթյանը մեզ բացատրում էր, որ բուն իրականում չի կարող լիովին տալ այն գիտելիքները, որոնք պետք են եւ մասնագետին, եւ մարդուն: Մարդը պետք է սովորի ողջ կյանքում ու անընդհատ, բուրբ միայն սկիզբն է, իսկ ավարտը չկա, այն ձգվում է մարդու ողջ կյանքի ընթացքում: Մորուս Հասարթյանը խրախուսում էր ուսումնատենչ ուսանողներին, իսկ թերացողներին «անբավարար» չէր նշանակում. նախատում էր եւ զիջումով նշանակում «բավարար»: Տարիներ անց, երբ ես էլ դասախոս էի, հարցրեցի, թե ինչու «անբավարար» չէր դնում, նա բացատրեց, թե չի ուզում որեւէ մեկին զրկել թոշակից՝ նյութական նեցուկից: Գիտեր, որ որոշ ուսանողներ շատ համեստ կեցություն են ապահովում հենց այդ թոշակով: Նա տուժել էր, այն էլ մեծապես, ստալինյան բռնության տարիներին՝ տեսնելով եւ բանտ, եւ հոգեկան ու մարմնական կտտանքներ. այդ տարիներին անգամ լուր էր տարածվել, թե մեռել է բանտում: Չէր սիրում խոսել այդ մասին եւ լավատես էր, շատ էր ընկճվում, որ հայերն ըստ արժանավույն չեն գնահատված համաշխարհային պատմության մեջ կատարած իրենց դերով: Նրա մեծագույն վիշտը նաեւ 1915 թվականի հայոց ❄❄ 32

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 31 եղեռնի սոսկալի փաստն էր, եւ Յայաստանի պատմության թանգարանում, որի երկար տարիների տնօրենն էր, կազմակերպում էր հայոց ցեղասպանությանը, գեներալ Անդրանիկին նվիրված վավերագրական ֆիլմերի փակ ցուցադրումներ, որին ես էլ էի մասնակցում, որպես հայ հին գրականությանը զբաղվող ասպիրանտ:

Մորուս Յասարայանն ազնվականի կեցվածք ուներ, կարեւորն այն էր, որ նա այն քչերից էր, որոնք ազգային լայն գործունեություն ծավալելով, բնավ չունեին գործի ու խոսքի հակասություն: Նա իր ասպիրանտական ուսումնառությունն անցկացրել էր Լենինգրադում եւ աշակերտել էր երկու նշանավոր արեւելագետների ու հայագետների՝ Նիկողայոս Մառ եւ Յովսեփ Օրբելի: Հիրավի նա այդ երկու տիտանների գործի շարունակողն էր եւ արժանավոր աշակերտը:

Մորուս Յասարայանը վաստակաշատ հնագետ է: Նրա հնագիտական հետազոտությունների արդյունքների մի մասն ամփոփված է հետմահու հրատարակված «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» հատորում (1): Նրանում ամփոփված են Սիսիանի, Գորիսի, Օշականի, Աղավնատան, Ծիծեռնավանքի հնագիտական պեղումների արդյունքները՝ գտածոների նկարներով եւ հետազայի վիճագիր արձանագրություններով: Այդ գրքում կա երկու ծավալուն հոդված, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմության կարեւորագույն խնդիրներին ու ստացել են իրենց գիտական լուծումները: Հայրենասիրության խնդիրներում Մորուս Յասարայանը ձգարիտ հետետորդն էր պատմահայր Մովսես Խորենացու: Նրան իր գիտական եզրահանգումներում առաջ մղողը փաստն էր, առողջ հայրենասիրությունը, մեր ազգի իրավական շահերը պաշտպանելու ազնիվ մղումը:

Մ.Յասարայանի «Էրեբունի-Երեւան» հոդվածը դրա առիվատյանն է: Այն գրվել է Յայաստանի մայրաքաղաք Երեւանի հիմնադրման 2750-ամյակի առիթով: Այս առիթը հնարավորություն է ստեղծել հնագետին սեփական տեսակետները շարադրել հայ ժողովրդի հնագույն արմատների մասին, այսինքն՝ ասել այն, ինչը հինգերորդ դարում գրել էր Մովսես Խորենացին: Կարծում եմ՝ այս հարցն

արդեն վերջնական լուծում է ստացել ամերիկյան «The New York Times» թերթում հրատարակված այն հոդվածում, որում նորագույն գենետիկական հետազոտություններն ապացուցել են, թե հինգերորդ դարի խոշորագույն պատմիչ Մովսես Խորենացու ասածները հայ ժողովրդի ծագման մասին ձգարիտ են: Հայերը դեռեւս մ.թ.ա. 3000-2000 տարի առաջ ապրել են Մեծ Հայքի տարածքում, «որ ապացուցում է Մովսես Խորենացու ձգարտությունը, որն իր միջնադարյան երկում հայ ժողովրդի ծագումը դնում է մ.թ.ա. 2492 թվականին»: Այս նույն միտքը վերոհիշյալ հոդվածում սեփական ձեռագրումներով եւ փաստերով ապացուցում է նաեւ Մորուս Յասարայանը: Նրան ցավ ու զայրույթ է պատճառում այն գիտնականների պնդումը, թե Ուրարտուն կապ չունի Յայաստանի հետ: Բազմաթիվ փաստերով ամրապնդելով իր ասելիքը՝ Մորուս Յասարայանն իրավացիորեն եզրահանգում է. «Ուստի, վերապահություն չի պահանջվում ընդունելու համար, որ Էրեբունի-Երեւանի առաջին ու մշտական բնակիչները 2750 տարի անընդմեջ եղել են հայերը: Այս էլ Երեւանի մյուս տարբերությունն է շեն մնացած հին քաղաքների մի մասից (ինչպես Աթենք, Ջոնն եւ այլ քաղաքներ), որ շուրջ երեք հազարամյակ միեւնույն լեզվով են խոսել նրա բնակիչները: Այսինքն՝ ժամանակի ընթացքում բնավ չի փոխվել Երեւան քաղաքի էթնիկ կազմը, որը եզակի երեւույթ է հատկապես Առաջավոր Ասիայում» (2):

Ինչպես Ն.Մառը եւ Յովսեփ Օրբելին, Յասարայանն էլ առաջնայինը համարում էր փաստից բխած եզրահանգումը եւ ոչ թե, ինչպես ինքն էր ասում, «ոռնացող տգիտությունը»: Տեղին է մեջբերել գիտնականի մեկ այլ նկատումը. «Արեւելագետների, ուրարտագետների մեծագույն մասը այս հարցում մի տեսակ կարկամում է եւ դժվարությամբ խոսում երկրի իսկական տերերի մասին: Հայկական լեռնաշխարհի վրա ցեղեր են գալիս-գնում, կռվում, նվաճում, իշխանություններ ստեղծում, ապա հալվում, ձուլվում, կորչում, բայց միշտ սրանց անուններն են հոլովվում. կիմերներ-սկյութներ եւ այլն: Չկան միայն տերերը, միայն՝ հայ-արմենները, որոնք հանկարծ, Ուրարտուից հետո, բռնեցին գրեթե ողջ Հայկական լեռնաշխարհը: Այս մեկն էլ ասվում է անորոշ եւ առանց

նախապատրաստման, առանց հիմքի՝ որպես անժխտելի փաստի արդյունք» (3):

Հայերի վաղնջական ծագումը ժխտող լեզվաբան-հայագետներին ու պատմաբան-արեւելագետներին Մ. Յասարայանն իրավացիորեն անվանում է «քաղաքական հաշվապահներ»՝ միաժամանակ նշելով որոշ օբյեկտիվ գիտնականների անուններ՝ Յո.Մարկվարտ, Բ.Յյուրշմանն եւ այլք: Գիտնականն այնքան բախտորոշ է համարել Երեւան-Էրեբունու դերը հայ ժողովրդի կյանքում, որ նշում է, թե այն կարծես վահան է եղել՝ ապահովելով, որ գրեթե նույն տարածքում բարձրանան Յայաստանի մյուս մայրաքաղաքները՝ Արմավիրը, Արտաշատը (որին հռոմեացիները «երկրորդ Կարթագեն» կոչեցին), Վաղարշապատը, Դվինը եւ վերջապես Արեւելի չքնաղ զարդը՝ Անին (4):

Վարդան Մամիկոնյանի ու Վասակ Սյունեցու պատմական դերի մասին գնահատականներ են տրվել սկսած հինգերորդ դարից: Մամիկոնյան տան երկու պատմիչները՝ Եղիշեն եւ Ղազար Փարպեցին, Վասակ Սյունեցուն համարել են դավաճան՝ անտեսելով Կորյուն վարդապետի հետեւյալ գնահատականը. «Այն ժամանակ աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանձարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզության գործին: Նա ինչպես որդին հորը՝ հնազանդություն ցույց տալով եւ Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչեւ վերջը գործադրում էր նրա հրամայածները» (5):

Եղիշեն չի թաքցնում, որ ինքը Վասակին ամենասուե գույներով է ներկայացրել, որպեսզի հետագա դարերում հայ ժողովրդի մեջ կանխի ազգին դավաճանելու ամոթալի ու ստոր երեւույթը: Սակայն նույն Եղիշեն չի մոռանում նշել, թե Վասակն ունեցել է ազգային ինքնուրույն թագավորությունը վերականգնելու նպատակը:

XIX դարի վերջին եւ XX-ի սկզբին որոշ պատմաբաններ վերանայեցին Վասակին տրված V դարի պատմիչների գնահատականները, որոնք ավանդույթի ուժով հասել էին մինչեւ XX դար, ու Վասակը դարձել էր դավաճանի հոմանիշը: Դրանցից մեկն էր Նիկողայոս Աղոնցը, որը 1904-ին Պետերբուր-



Անիի Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցի

գում հրատարակեց «Մարգպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» (6) ուշագրավ հետազոտությունը: Ն.Ադոնցն առավել հավաստի է համարում Ղազար Փարպեցու պատմածները, որը լրացուցիչ փաստեր է հաղորդում Վասակ Սյունեցու ու Վարդան Մամիկոնյանի մասին, որոնք Եղիշեն միտումնավոր անտեսել է: Դրանցից մեկը Վասակի երկու որդիներին Պարսկաստանում պատանդ պահելն է. «Սակայն Պարսից Յազկերտ արքան Վրաց Աշուշա բղեշխին, Սյունյաց իշխան Վասակի երկու զավակներին՝ Բաբիկին ու Արտներսեհին, չարձակեց Յայոց մյուս նախարարների հետ. առաջիկա գործերի անորոշությունը նկատի առնելով՝ նա կասկածով զգուշանում էր»: (7) Այս փաստը վարպետորեն է օգտագործել Դերենիկ Դեմիրձյանը՝ ներկայացնելով Վասակի ատելությունը պարսիկների նկատմամբ: Դեմիրձյանի կարծիքով հայերն Ավարայրում հաղթել են՝ պահպանելով իրենց հավատը, զոհված նախարարների համար ստանալով ռազմատուգանք:

Այս բոլոր կարծիքներին ծանոթ էր Մ.Յասարայանը: Նա Վարդան Մամիկոնյանին համարում է սուրբ նահա-

Նա այնքան տեսանելի էր պատմում Անիի ճարտարապետության մասին, որ մենք տեսնում էինք Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաքի հզոր պարիսպները, կաթողիկե տաճարի հրաշք կառույցը, Տիգրան Յոնեցի եկեղեցին, Ախուրյան գետի վրա կառուցված երկհարկ կամուրջը:

տակ, մեծ հայրենասեր, հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ հավերժորեն ապրող ազգային խորհրդանիշ: Պարզապես կամենում է ներկայացնել այն դրդապատճառները, որոնք Վասակ Սյունեցուն հեռացրին Վարդան Մամիկոնյանից. «Անտարակոյս, մարդու ամենամեծ հանցանքը, անմոռանալի է անների ռձիրը հայրենիքին եւ ժողովրդին դավաճանելն է կամ նեղ օրերին լքելը: Այդ է պատճառը, որ թեպետե անժամանակ, թեպետե ոչ հաղթանակի հույսով, երբ ժողովրդի եւ ավագանու թեկուզ մի մասը դուրս եկավ արշավող թշնամու դեմ, Վարդան Մամիկոնյան սպարապետը նրանց չթողեց անգուլիս եւ իր հերոսական մահով սրբացվեց ժողովրդի սրտում, հավերժ մնաց դարերի հիշողության մեջ, պատ-

մության մեջ: Մինչդեռ Վասակ Սյունին որքան էլ հեռատես պետական-քաղաքական գործիչ եւ մտածող, խռովելով եւ թիկունքում մնալով, վաստակեց ուխտանենգի ու դավաճանի անունը, եւ իր հայրենիքում իսկ ցարդ Վասակ բառը հոմանիշ է դավաճան, մատնիչ բառերին: Սակայն սա հարցի ոչ միայն արտաքին, այլեւ հոգեբանական կողմն է եւ ոչ քաղաքական-պատմական օբյեկտիվ գնահատականն ու պատասխանը» (8): Վարդան Մամիկոնյանը, ըստ պատմաբանի, հայ ժողովրդին տվել է արժանապատիվ ապրելու կարեւորագույն դասն ու պատգամը:

Մ.Յասարայանի հուշագրության մեջ բացառիկ արժեք ունեն XX դարի հայ գրականության երկու մեծերի՝ Եղիշե Չարենցի ու Ակսել

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 33 Բակունցի մասին գրածները: Երկուսին էլ ճանաչել է մոտիկից ու նրանց մասին գրում է եւ սիրով, եւ ցավով՝ վերջիններիս երիտասարդ տարիքում նահատակվելու պատճառով: Այդ հուշերն, անշուշտ, մեծապես նպաստելու են վերոհիշյալ երկու մեծությունների ստեղծագործությունն ու նրանց ապրած դժվար ժամանակը ճիշտ հասկանալու համար:

Մորուս Զասրաթյանը մեծ ծառայություն է մատուցել սայաթնովագիտությանը: 1997 թվականին անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաուսթը իրատարակել է «Սայաթ-Նովա» ծավալուն մենագրությունը: Գիրքն անգլերեն է եւ աշխարհին ծանոթացնում է, թե XVIII դարում ինչ հանձարեղ բանաստեղծ են ունեցել հայերը, որի մարդասիրական քնարերգությունն աշխարհի մարդկանց խաղաղասիրության դասեր է տալիս: Չարլզ Դաուսթը համաշխարհային պոեզիայի տեսադաշտով է գնահատում Սայաթ-Նովայի խաղերը՝ գուցե հենց տանելով դեպի անտիկ աշխարհը, միջնադարը եւ նոր ժամանակները: Եւ բանաստեղծությունների բնագրերը՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն, քաղում է Մորուս Զասրաթյանի 1963-ին Երեսանում հրատարակած գրքից (9): Բացի այդ, գրքի շարադրանքում անգլիացի գիտնականը մոտ 70 անգամ անդրադարձ ունի Մ.Զասրաթյանի՝ Սայաթ-Նովային տված գնահատականներին: Եւ անվերապահորեն գնահատում է Մորուս Զասրաթյանի մեծ ծառայությունը Սայաթ-Նովայի խաղերի բնագրերը վարպետորեն վրացերենից ու ադրբեջաներենից թիֆլիսահայ բարբառի վերածելու համար: Զասրաթյանը դրանք չափածոյով այնպես է հայերենի վերածել, որ թվում է, թե հենց այդ լեզվով էլ դրանք ստեղծվել են (10): Եւ նշում է նաեւ, թե Մ.Զասրաթյանը ծանոթ է եղել Սայաթ-Նովայի ժառանգներին ու նկարվել է նրանց հետ (11):

Չարլզ Դաուսթն իր գիրքը գրել է Սայաթ-Նովայի մահվան 200-րդ տարեդարձի առիթով եւ գրում է. «Աշխարհը չի մոռացել Սայաթ-Նովային, եւ նրա մահվանից 200 տարի անց գալիս են նոր ժամանակներ: Եվ վստահորեն կարելի է ասել, որ նրա անունը դեռ երկար կմնա» (12):

Մորուս Զասրաթյանը Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ երկար է զբաղվել եւ իր կատարածով նշանավորում է սայաթնովագիտության նոր ժամանակահատված, որն ունեցավ բանիմաց հետետորդներ: Եւ Սայաթ-Նովայի խաղերի ամբողջական ժողովածուին կցել է խիստ անհրաժեշտ բացատրական բառարան: Իր գրքում զետեղել է նաեւ «Մասամբ գրականացված չորս հայերեն խաղ»:

Գիտնականի թարգմանությունների վարպետությունը բացատրվում է նաեւ այն իրողությամբ, որ նա գրել է բանաստեղծություններ, սակայն դրանք չի տպագրել, որովհետեւ իր անձի նկատմամբ եղել է խստապահանջ: Բերենք 2 թարգմանական նմուշ. առաջինը «Զամանչայից» եւ երկրորդը՝ սիրո խաղից.

*Շատ տխուր սիրտ կխնդացնես,
կկտրես հիվանդի դողն,
Երբ քաղցր ձայնդ վեր հանես,
կբացվի հետո խաղողն.
Խաղիսից միայն էսքանն ուզի՝
ասեն «ապրի քու ածողն».
Քանի որչ է Սայաթ-Նովեն,
շատ բան կտեսնես, քամանչա (13):*

*Թեկուզ հազար դարդ ունենամ, եւ
սրտումս մի չեմ ասի,
Իմ տեր-տիրակալը դուն ես, էլ ուրիշի
Շան չեմ ասի,
Սայաթ-Նովեն ասաց, զայնում, ես էն մա
հին ման չեմ ասի,
Էնքան քի դուն վրես լաս, մագդ շաղ
տալով, աչքի լույս (14):*

Մորուս Զասրաթյանն իրավացիորեն առանձնացրել է Սայաթ-Նովայի այն խաղերը, որոնք հայերենով, վրացերենով ու կովկասյան թուրքերենով ասված, ունեն բացառիկ գեղարվեստական արժեք: Եւ մատնացուցիչ է անում գրական այն արմատները՝ հայ եւ օտար, որոնց հիման վրա բարձրացել է Սայաթ-Նովայի հանձարեղ բանաստեղծությունը:

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Մարի Բրոսսեն, որը ֆրանսերեն է թարգմանել տասներեք հայ պատմիչների գործեր, մեծ երախտագիտությամբ է հիշում իր մեծ ուսուցչին՝ ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենին՝ նրա հիշատակին նվիրված հոդվածին բնաբան դնելով. «Երջանիկ է այն մարդը, որը կյանքում հանդիպում է լուսամիտ ուսուցչի»: Այս բանաձեռն անվերապահ կարող են ասել նաեւ բոլոր նրանք, ովքեր եղել են Մորուս Զասրաթյանի երջանիկ աշակերտները:

ՆՅԱՅՆՆԵՐ

1. Մորուս Զասրաթյան, «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», Երեսան, 1985:
2. Նույն տեղում, էջ 15:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 24:
5. Կորյուն, Վարդ Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով եւ ծանոթագրություններով՝ Մ.Աբեղյանի, Երեսան, 1962, էջ 109:
6. Տեն Ն.Ադոնց, Երկեր, Ա, Երեսան, 2006, էջ 180-188:
7. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Բ.Ուլուբաբյանի, Երեսան, 1982, էջ 129:
8. Մ.Զասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, էջ 72:
9. Տեն Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, խմբագրեց եւ ծանոթագրեց Մորուս Զասրաթյանը, Երեսան, 1963:
10. Sayat-Nova, An 18-th-century troubadour, A biographical and literary study by Charles Dowsett, Lovanii, 1997, p.XV:
11. Նույն տեղում, էջ 35:
12. Նույն տեղում, էջ 75:
13. Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն..., էջ 274:
14. Նույն տեղում, էջ 275:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Ուսանողների պաշտելի հնագետն ու սայաթնովագետը

Նվիրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանի ծննդյան 110-ամյակին

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒՒՄԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ

Ի մ սիրելի դասախոսներից մեկն է եղել Մորուս Հասրաթյանը, ում մասին լսել եմ դեռ երեխա ժամանակ պապիցս ու ծնողներիցս, ովքեր նրա մասին խոսում էին ջերմությամբ ու պատկառանքով՝ որպես մի արտասովոր մարդու: Հետո ընդունվեցի Խ.Աբովյանի անվան ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետը, դարձա նրա ուսանողը, հիացա նրա ազնվական կեցվածքով և միայն իրեն բնորոշ ինքնատիպությամբ ու առինքնելու կարողությամբ: Մորուս Հասրաթյանը մեր կուրսում կարդացել է երկու առարկա՝ հին աշխարհի պատմություն և համաշխարհային արվեստի պատմություն: Նրա դասերից ոչ ոք չէր բացակայում, թեպետ երբեք ներկա-բացակա չէր անում. նրա դասախոսություններին ուսանողները սպասում էին, որովհետև դասախոսի խոսքն ուներ կախարհանքի ուժ: Նա այնպես էր խոսում փարավոնների, Տրոյական պատերազմի, Համուրաբիի օրենքների, Հոմերոսի ու հունական դիցաբանության մասին, որ թվում էր, թե դու այդ ամենը տեսնում ես քո աչքով, նույն ձևով տեսանելի էին դառնում անտիկ աշխարհի առասպելական գորահրամանատարները՝ Հուլիոս Կեսարն ու Կարթագենի տիրակալ Հաննիբալը: Երբեք «երկու» գնահատական չէր նշանակում քննական թերթիկում: Մի քանի տարի անց, երբ ասպիրանտ էի, խնդրեցի բացատրել, թե ինչու անբավարար չի դնում որե՛լ ուսանողի: Բացատրեց, որ ուսանողը թոշակով է ապրում, եւ իրեն

երբեք թույլ չի տվել զրկել ուսանողին նյութական միջոցից:

Մորուս Հասրաթյանը ուսանողության աչքին արդարության, բազմագիտակության, ազնվության ու հայրենասիրության չափանիշ էր, նա ուսուցիչ էր, ում հավատում էին անվերապահորեն: Հարուստ կենսագրություն ուներ: Սովորել էր Լենինգրադում, եղել Հայաստանի ԳԱԱ առաջին նախագահ Հովսեփ Օրբելու ասպիրանտը, շփվել էր Նիկողայոս Մառի հետ, իր մեջ կրում էր նրանց պատգամները. պատահական չէ, որ 1963-ին ընտրվեց Հայաստանի ազգային ակադեմիայի թղթակից անդամ և ստացավ Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչումը: Վարել է շատ կարետոր պաշտոններ, 1937-ին եղել է Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, հետո՝ Խ.Աբովյանի անվան ՀԳՄԻ գիտության գծով պրոռեկտոր, 1964-1975թթ.՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, իսկ 1965-1966թթ.՝ գրեթե երկու տարի, տարբեր առարկաներ է դասավանդել Բելյուսի Հայկազյան քոլեջում:

Մորուս Հասրաթյանը խստապահանջ էր իր իսկ անձի նկատմամբ: Համոզված էր, որ գիտնականը պետք է նորություն բերի իր բնագավառում, ուստի չէր ընդունում բոլոր նրանց, ովքեր կրկնում էին ուրիշների գրածները: Առաջնակարգ սայաթնովագետ էր, եւ այս փաստն ընդունված է միջազգային հայագիտության մեջ, որի լավագույն առիավատյան Չառլզ Դաուսթի «Սայաթ-Նովա» ստվարածավալ գրքում անգլիացի սայաթնովագետի բազում գնահատականներն են՝ տրված Մ.Հասրաթյանի կատարածին:

Մորուս Հասրաթյանն իր մտապաշարում կրում էր հայ էթնոսի անցած պատմական ուղին՝ քարե դարաշրջանից մինչև իր օրերը: Նա Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակի» հնագետն էր, որի միտքը սլանում էր դեպի անցած դարերի արժեքները:

Ուսանողների մեջ ջանում էր պատվաստել առողջ հայրենասիրություն. նրա կարծիքով հայրենիքի ամեն մի հուշարձան հայը պետք է պաշտպանի աչքի լույսի պես և միշտ մտածի ազգային արժանապատվության մասին: Նրա խոսքն ու գործը ներդաշնակ էին: Այդպես էր ապրում, եւ իր օրինակը վարակիչ էր: Չէր սիրում տգետ ու շփացած մարդկանց: Նրա համար մեծագույն ցավ էր 1915-ի հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված չլինելը:

Մորուս Հասրաթյանը խորհրդային տարիների մտավորական էր ու գործիչ, սակայն երբեք տուրք չի տվել իր ժամանակի գաղափարական պահանջներին, իր գրվածքներում, ելույթներում հավատարիմ է մնացել միայն ազգային շահերին, գիտության շահերին: Որպես «ազգայնական» մի քանի տարի բռնադատվել է և տառապել բանտում ու ազատվել գրեթե հրաշքով՝ 1940-ին: Բացի Սայաթ-Նովայի խաղերը ներկայացնող գրքերից, որոնք հմտորեն կազմել, խմբագրել ու ծանոթագրել է, հետագայի հետազոտողների համար թողել է երկու կարետոր գրքեր՝ «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» (Եր., 1985), «Հողվածների ժողովածու» (Եր., 1995):

Համաշխարհային արվեստի պատմություն դասավանդելիս Մ.Հասրաթյանը ուշադրություն էր դարձնում իտալական Վերածննդին, ծանոթացնում Իսպանիայի ու Լիդեռլանդների նկարչական դպրոցներին: Խոսում էր նաեւ հայ եկեղեցաշինության, հատկապես Անիի Մայր տաճարի մասին, հիշեցնում, որ նրա կրկնօրինակը կա Գյումրիում:

Շատ երկար կարելի է գրել այդ լուսավոր մարդու և մեծ հայրենասերի մասին, ով խստորեն զգուշացնում էր. «Անտարակույս, մարդու ամենամեծ հանցանքը, անմոռանալի և աններելի ոճիրը հայրենիքին և ժողովրդին դավաճանելն է կամ նեղ օրերին լքելը» («Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», էջ 72):

«Գրական թերթ», 29 (3130)
14 սեպտեմբերի 2012թ.

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Մորուս Հասարակության



ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ուսանողներիս լուր հասավ, որ նոր դասախոս ունենք. առարկան՝ հայ ժողովրդի պատմության նոր եւ նորագույն շրջան: Նախորդող ժամանակների դասընթացը կարդացել էր Հակոբ Զորյանը: Բոլորիս վրա տարօրինակ տպավորություն թողեց դասախոսի անունը՝ Մորուս: Դասացուցակում այդպես էլ գրված էր՝ Մորուս: Այն ժամանակ նրան ոչ ոք ազգանունով չէր կոչում: Ամենքի համար Մորուս էր, ուսանողներից ոչ մեկը նման անվան չէր հանդիպել: Ենթադրեցինք՝ երեւի վաղ է մորուք թողել, ընկերները սկզբում կատակով, հետո լուրջ՝ այդպես են կոչել ու մնացել է վրան մի անուն, որ եւ անուն էր, եւ ազգանուն: Ըստ դասացուցակի՝ նրա դասախոսությունը նշանակված էր երկուշաբթի օրերը: Սպասում էինք մեր նոր դասատուին եւ կարծում էինք լսարան կմտնի երկար

մորուքով մի մարդ:

Եկավ: Ոչ մորուք, ոչ բեղ: Ավելի երիտասարդ, քան կարծում էինք ու սպասում: Ո՞վ էր ասել կամ ինչից էինք ենթադրում, ինքս էլ չեմ կարող ասել, թե մեր նոր դասախոսը տարեց մարդ է լինելու: Երեւի պատճառը անունն էր:

Մորուսը լսարան մտավ դեմքի խիստ արտահայտությամբ: Չմոտեցավ ամբիոնին, նստեց սեղանի մոտ եւ հետը բերած դասամատյանը բացեց, նայեց այնտեղ միմյանց հետեւից շարված ազգանուններին, ապա գլուխը բարձրացրեց, եւ նրա շրջող հայացքը հերթով կանգ առավ ամեն մեկիս վրա: Ու ժպտաց: Ժպտաց այնպես, որ ոչ մեկը չկասկածեց, որ մեր դիմաց նստած էր մի լավ մարդ: Դեմքը նորից լրջացավ: Եվ հանկարծ անսպասելի մի հարց,

- Ո՞վ է ձեր միջի ամենատարեցը:

Տեղից բարձրացավ Մինաս Հյուսյանը եւ ասաց, թե մեզանից վեց-յոթ տարով մեծ է:

Դասախոսը հետաքրքրվեց՝ այնուամենայնիվ, քանի տարեկան է:

- 1903 թվականի ծնունդ եմ:

- Մի տարով մեծ եմ:

Հետեւեց պատասխանը:

Մի պահ լռություն իջավ լսարանի վրա:

- Մեր միջեւ եղած տարիքային տարբերությունը մեծ չէ, - ասաց նա, - բայց շատ են տարբեր մեր վիճակները: Դուք ուսանող եք, ես դասախոս: Ես չեմ մոռանա դա, հուսով եմ՝ դուք նույնպես:

Եվ չմոռացանք: Ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ հետո, երբ կյանք մտանք: Պաշտոնական պահվածք չունեի Մորուսը, ոչ էլ, ուրիշ դասախոսների նման, խիստ ու

պահանջկոտ էր, բայց միշտ մի տարածություն կար նրա եւ մեր միջեւ: Նույնը եւ հետո, երբ ուսանողական նստարանը թողեցինք, գործի անցանք, տարիք առանք, ու եկավ այն ժամանակը, երբ հինգ վեց տարվա տարբերությունը արգելք չէ, որ դասախոսը եւ ուսանողը ընկերներ լինեն:

Չանգն ազդարարեց դասախոսության ավարտը: Մորուսը գնաց, իսկ մենք շարունակեցինք լուռ նստած մնալ, ասես ինքը դեռես ներկա էր եւ խոսքն էլ շարունակում էր:

Բոլորս հմայված էինք:

Մորուսի դասախոսությունները, ինչպես հետո հասկացա, երբ ես էլ դասախոս դարձա, նպատակ ունեին ոչ այնքան գիտելիք հաղորդել, որքան հաղորդակից դարձնել ուսանողին պատմության ոգուն, պատմության ընթացքի պաթոսին, այն փիլիսոփայությանը, որ ժողովրդի կյանքի ու գոյատեւման հիմաստն էր:

Նա զգուշացնում էր, թե փաստերը պետք է իմանալ, հիմնական, գլխավոր տվյալները, բայց դրանցով կարիք չկա ծանրաբեռնել ուղեղը: Ուսանողին հարկավոր է սովորեցնել մտածել, տրամաբանել: Պետք է մշակել եւ ընդլայնել նրա մտահորիզոնը:

Մորուսի դասախոսությունները լսելիս մենք ընդհանրացնելու ճաշակն առանք: Չեմ կարող ասել որքան հաջող, բայց ռեֆերատներ կարդալիս աշխատում էինք չխեղդվել փաստերի առատության մեջ, ձգտելով նրանց հանրագումարող եզրակացության:

Մեր մտքերը երբեմն բավական միամիտ էին ստացվում, բայց մեր դասախոսը չէր հուսահատվում, երեւի հասկանում էր դրա անխուսափելիությունը, համոզված, որ վաղը կամ մյուս օրը մակարդակը կփոխվի անպայման: Նրա խիստ դեմքին մի ժպիտ էր խաղում, որից հասկանում էինք, որ գոհ է, եւ ավելի էինք ոգեւորվում:

Միշտ կրկնում էր՝ բարձրագույն կրթությունը ի տարբերություն միջնակարգի, ուղղություն է տալիս մտքին: Համոզված էր, որ առարկայով հետաքրքրված ուսանողը կգտնի գրականություն, կկարդա, եւ հաջողությամբ քննություն հանձնելը հոգս չի լինի նրա համար: Մեր ուսուցչի մտահոգությունն այլ էր՝ ազդել ուսանողի վրա, որ մշակվի փաստերը սեփական մտքին ենթարկելու ձիրքը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Ես լավ հիշում եմ, - կարծում եմ ոչ միայն ես, - թե ինչպես էր Մորուսը կետ առ կետ բացատրում մեզ «Որոգայթ փառացը», Շահամիրյանի հայացքները: Եվ լավն էլ այն էր, որ նա այդ երեւոյթը չէր դիտում կղզիացած, ոչ էլ միայն որպես հայոց պատմության մի դրվագ, նա կատարում էր լայն շեղումներ դեպի եվրոպական ազատագրական գաղափարների ընդարձակ ասպարեզը: Մինչեւ հիմա էլ միտս է մնացել նրա այն միտքը, թե «Որոգայթ փառացը» կարող է պատիվ բերել լուսավորված շատ ժողովուրդների: Եվ դա մեզ ներշնչում էր հպարտության զգացում:

Համալսարանում երկու գնահատական գոյություն ունեւ՝ բավարար եւ անբավարար: Մորուսի դասախոսած տարին, նոր կարգադրության համաձայն, ուսանողներն ստանալու էին աստիճանավորված գնահատականներ:

Քննության օրը Մորուսը գրուցեց մեզ հետ ավելի կյանքից, քան իր առարկայից, հետո հայտարարեց, թե ինքը մտադիր չէ քննել մեզ: Ասաց, թե ինքը յուրաքանչյուրիցս տպավորություն ունի, ու եթե ուսանողները չեն պնդում, որ անպայման քննության ենթարկվեն, ինքը կհայտնի ում ինչ թվանշան է դնում:

Ուսանողին էլ ինչ է պետք: Ինչ գնահատական էլ դնե՞ր՝ գոհ էինք մնալու, մանավանդ որ ազատվելու էինք քննություն հանձնելու հոգեմաշ ապրումներից:

Նա դասամատյանը դրեց իր առջեւ, նայեց մի պահ միմյանց հաջորդող ազգանուններին եւ ապա հայտարարեց, որ ոչ ոքի թույլ գնահատական չի դնում: Երկու ուսանողի միջակ դրեց, մեծ մասին լավ, իսկ գերազանց՝ միայն մեկին: Եվ հարցրեց՝ համաձայն ենք: Համաձայնեցինք, անշուշտ: Բայց ուսանողուհիներից մեկն իր զարմանքը հայտնեց գերազանցի կապակցությամբ, ասելով, թե բարձր գնահատականի արժանացած ուսանողը հաճախ է բացակայել դասերից եւ այլն, եւ այլն:

Մորուսը հանգիստ լսեց եւ հետո ասաց, թե ինքը գերազանց է դնում մի ուսանողի, որի պատրաստությունը դասընկերներից այնքան է տարբեր, որ եթե անհրաժեշտ լինի իրեն բացակայել, նա կկարողանա շարունակել դասախոսությունը իր կանգ առած տեղից:

Այլեւս ոչ ոք ոչինչ չասաց:

Տարիներ անցան: Փողոցում, գրողների տան հավաքույթներում մեկ-մեկ հանդիպում էի դասախոսիս, որ անպայման կհետաքրքրվեր, թե ինչպես են գործերս եւ ոգետրելու նպատակով խրախուսական մի երկու խոսք կասեր:

Բավական ընդմիջումից հետո, Մորուսն աշխատանքի անցավ գրականության եւ լեզվի ինստիտուտում: Միեւնույն սենյակում էինք նստում: Եվ իմ ուսուցիչը ինձ համար մի նոր առումով բացվեց: Համոզվեցի, որ Մորուսը բազմակողմանի պատրաստություն ունի: Խոսքը ոչ թե այն մասին է, որ պատմությունից բացի գրականություն գիտեր, արվեստի պատմություն: Խոսքն այն մասին է, որ ինչի մասին էլ խոսեր, դաշտային մի ծաղկի, ազգագրական մի սովորության, բնախոսական մի հարցի, կխոսեր հանգամանալից, մանրամասն, օրինակներ բերելով:

Ինստիտուտում նա զբաղված էր Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ուսումնասիրությամբ:

Սայաթ-Նովայի խաղերում եղած շատ բառեր եւ արտահայտություններ մինչեւ հիմա էլ համարվում են մութ եւ անհասկանալի: Մորուսը բացատրում էր, ճշտում: Եվ այն, ինչ անում էր նա, ինստիտուտի բոլոր աշխատակիցների համար նոր էր ու հետաքրքիր: Չկար մարդ, որ չզգետրեր նրան: Ու նա էլ իսկապես ոգետրվում էր, թափով աշխատում: Երբեմն-երբեմն հաղորդակից էր դարձնում մեզ իր նոր հայտնություններին: Ըստ երեւոյթին պատմելով՝ միաժամանակ ստուգում էր, թե որքան ճիշտ է գտած բացատրությունը:

Եվ ահա, օրերից մի օր, - իսկ դա 1942-ի վերջերին էր, - հայտնվեց այն միտքը, թե ինչու այդ բոլորի ամփոփումը չդնել պաշտպանության գիտական աստիճան ստանալու համար:

Մորուսը դիմադրեց: Բայց բարոյական ճնշումը մեծ էր, ու հնարավոր եղավ կոտրել նրա համառությունը, նույնիսկ ստանալ համաձայնությունը:

Խորեն Սարգսյանը, որ այն ժամանակ ինստիտուտի դիրեկտորն էր, մտավ մեր երկուսի աշխատասենյակը: Մի քանիսն էլ եկան: Ինստիտուտի ղեկավարությանը զբաղեցնում էր այն հարցը, թե ովքեր էին լինելու պաշտոնական ընդդիմախոսները: Չէին կամենում մի այսպիսի հարց լուծել առանց Մորուսի համաձայնության:

- Ես ի՞նչ կարող եմ ասել...

Մորուսը հարցական նայեց մեզ: Ես գիտեի, որ Օրբելին լավ է վերաբերվում Մորուսին, գնահատում է նրան:

- Իսկ ինչ կլինի, եթե խնդրենք Իոսիֆ Աբգարովիչին: Կհամաձայնի:

Այս էր ամենքի դեմքին:

- Կհամաձայնի:

Որոշակի եղավ Խորեն Սարգսյանի պատասխանը:

- Իսկ մյուսը:

Մորուսը նայեց ինձ:

- Մյուսն էլ Ռուբենը:

Անսպասելի առաջարկ էր դա եւ ներկաների, եւ ինձ համար: Մի կողմից Օրբելի, մյուս կողմից՝ ես: Եվ հետո, Սայաթ-Նովայով հետաքրքրվել էի, բայց չէի զբաղվել, մասնագետ չէի: Մի-երկու անուն տվի, որ, ըստ իս, ավելի հարմար էին: Մորուսը չհամաձայնեց: Եվ այդպես որոշվեց, որ երկրորդ ընդդիմախոսը ես եմ լինելու:

Ինձ համար մեծ պատիվ էր ընդդիմախոս լինել մի բանասերի, որ իմ ուսուցիչն էր եղել: Թեեւ ճիշտը կլիներ հակառակը, բայց կյանքը հաճախ է խախտում սահմանված օրինաչափությունները: Վերջապես, ուսուցչիս կամքն էր դա ու ես պետք է ենթարկվեի:

Մի-երկու օր էլ չէր անցել՝ Խորեն Սերգեյիչից իմացանք, որ Օրբելին համաձայնել է ընդդիմախոս լինել:

Ինձ ասացին, թե Օրբելին խնդրել է անցնել իր մոտ:

Հարցրեց՝ ծանոթացել եմ Մորուսի դիսերտացիային:

Հայտնեցի, որ կարդացել եմ, խոսք էլ գրել:

- Լավ է:

Լուռ մնաց:

Եվ հետո ասաց, թե իրեն թվում է, որ Մորուսն արժանի է դոկտորության: Ճիշտ չի՞ լինի, եթե ընդդիմախոսները գիտխորհրդի առջեւ հարց բարձրացնեն միանգամից դոկտորի աստիճան շնորհելու նրան: Հետո ավելացրեց, որ ինքը լավ է ճանաչում Մորուսին: Եթե նա հիմա թեկնածու դառնա, հայտնի չէ, թե մեկ էլ կշարժվի տեղից, թե ոչ: Եվ այսպես: Երկու ընդդիմախոս համաձայնության եկան, որ իրենց խոսքում Մորուսին դոկտորություն շնորհելու առաջարկն անեն:

Ես չգիտեի, իսկ Օրբելին, ըստ երեւոյթին, մոռացել էր, որ թեկնածություն պաշտպանող հայցվորին դոկտորության աստիճան հնարավոր է տալ, եթե պաշտոնական

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 37 ընդդիմախոսներն իրենց մտադրության մասին նախապես հայտնում են Գիտխորհրդի նախագահին և սա էլ, համաձայն լինելու դեպքում, առաջադրում է երրորդ ընդդիմախոսին: Դա չէր արված:

Օրբելին խոսեց բանավոր, երկար և չափազանց հետաքրքիր: Պաշտպանության նյութը՝ Սայաթ-Նովայի, առիթ դարձնելով, հիշեց Արեւելքի մեծ բանաստեղծներին, անսպասելի զուգորդություններ արեց, բարձր գնահատական տվեց Մորուսի դիսերտացիային: Շատ ափսոս, որ նրա ելույթը գրի չառնվեց:

Ընդդիմախոսների առաջարկը կորցրեց իր գործնական նշանակությունը և հնչեց միայն իբրև վերաբերմունք, աշխատության արժեքի ընդգծում, թեև գիտական խորհուրդը և ընդհանրապես ներկաները, դիսերտանտին գիտական ավելի բարձր աստիճան շնորհելու առաջարկը ծափահարությամբ ընդունեցին:

Մորուսի կյանքի ամենաբեղմնավոր տարիներն էին. ոգետրված շարունակում էր իր հետազոտությունը, և հետզհետե նրա կատարած գործն ընդլայնվում էր:

Մի օր հայտնեց մի հանդուգն միտք՝ վերծանել Սայաթ-Նովայի ադրբեջանական խաղերը: Հանդուգն եմ ասում, որովհետև մինչև այդ ոչ ոքի մտքով չէր անցել, թե կարելի է հաղթահարել մի այդպիսի դժվարին գործ:

Մորուսը հանդես բերեց երեւելի հետետղականություն, և հասավ հաջողության: Նա կարողում էր իր թարգմանած Սայաթ-Նովան, և մեր առջե կանգնում էր նոր բանաստեղծ, որ մեր ծանոթն է, որին գիտեք, բայց մի այլ հոգեկան կազմով: Մորուսը վերադառնում էր իր արածին, ուղղում, շտկում, գտնում Սայաթ-Նովայի ոգուն ու ոճին ավելի հարմար ձեակերպումներ և իր արածը դարձնում որքան հնարավոր է կատարյալ:

Միառժամանակ անց, Մորուսը հայտնեց, որ, ըստ իր ծրագրի, հիմա էլ հայերեն է թարգմանելու Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը: Ու առաջին իսկ թարգմանություններից երեւաց, որ այստեղ Սայաթ-Նովան՝ սիրո և փիլիսոփա երգիչ լինելուց բացի, վայելքի պաշտամունք ունի:

Հնարավոր է, որ Մորուսի հետազոտությունն անթերի չէ, խոցելի կողմեր ունի, քննադատելի կետեր: Հնարավոր է:

Բայց որ Մորուսի անվան հետ կապվեց ամբողջական Սայաթ-Նովայի պատկերացումը՝ անկասկած է, և դա այն պատմական ծառայությունն է, որ երեւի, եթե արված չլիներ, պիտի ծանաչվեր մի մարդու ուժերից վեր:

Կար ժամանակ, որ ես մտադրվել էի զբաղվել Սայաթ-Նովայով: Նույնիսկ պայմանավորվեցի հրատարակչության հետ: Բայց հետո հասկացա, որ այդ նյութն ուսումնասիրելու համար բանաստեղծի հանդեպ ունեցած սերը, նաեւ զգացողությունը բավարար չեն՝ հասնելու մի այնպիսի աստիճանի, որ արվածի վրա մի բան ավելանա:

Չմարեց իմ մեջ, սակայն, Սայաթ-Նովային նորից ասպարեզ բերելու ցանկությունը: Ու Մորուսի կատարած գործը, որ թեև չհրատարակված, արդեն բավական լայն ժողովրդականություն ուներ, նորից բորբոքեց իմ մեջ Սայաթ-Նովայի մի նոր հրատարակություն ընթերցողին տալու գաղափարը:

Մի օր հայտնեցի իմ ծրագիրը Մորուսին և ստացա համաձայնությունը: Այնուհետև խոսեցի Հայպետհրատի ղեկավարության հետ և հավանություն առա: Եվ դա եղավ մի շքեղ հրատարակություն, որը տարիներ անց, շտկումների և լրացումների ենթարկելով, երկու վերահրատարակություն ունեցավ:

Մորուս Հասարայանի անունը իբրև հեղինակի՝ չափազանց սակավ կարելի է հանդիպել ինչպես գրքերի վրա, այնպես էլ հոդվածների տակ:

Դժվարությամբ էր համաձայնում գրել, բայց եթե խոստացավ, թե այսինչ հարցի շուրջ կգրի՝ ամիսներ կանցնեն և հայտնի չէ՝ խոսքի տերը կլինի, թե ոչ: Ծույլ էր: Չէր սիրում գրել: Ավելի հակված էր դեպի ելույթները: Ծույլ լինելուց բացի, կարծում եմ, կա մի այլ խանգարող կողմ եւս. խզում կարողության և պահանջի միջև: Չկա այնպիսի մարդ, որի պահանջի մակարդակին լինի և կարողությունը, բայց կան մարդիկ, որոնց մեջ հիվանդագին չափերի է հասնում պահանջի և կարողության հակասությունը: Դրանցից էր Մորուսը: Ես չեմ հիշում, որ նա մի բան գրեր ու գոհ մնար:

Հիշողությանս մեջ մնացել է հետեւյալ դեպքը:

Մորուսի պաշտպանության վայրը, օրը, ժամը հայտարարված էր: Դրա նախորդ օրը նա իր դիսերտացիան այրել

էր ուզում: Այն ժամանակ ինստիտուտի սենյակներում թիթեղյա վառարաններ էին դրված, և նա մի օրինակը նետեց վառարան, պատրաստվում էր մյուսներն էլ կրակին հանձնել, ու եթե չլիներ ընկերները, հատկապես Արամ Ղանալանյանը, երեւի հնարավոր չէր լինի նրա հանկարծահաս որոշման առաջն առնել:

Սրված անբավականությունը սեփական գրչի տակից դուրս եկած շարադրանքի նկատմամբ, ծայրահեղ պահանջկոտությունն այն ամենի նկատմամբ, որ ուներ նա ընդհանրապես, տպագրված խոսքի նկատմամբ հատկապես՝ խանգարում էին նրան: Եվ Մորուսը, ինչպես իր հոբելյանի օրն էին ասում, դարձավ բանավոր գիտնական: Փայլուն հռետոր լինելով, հաճախ էր ելույթներ ունենում: Որտեղ հայագիտության վերաբերող հարց էր քննվում, լինի պատմական, թե գրական, լեզվաբանության վերաբերող, թե արվեստին, այնտեղ էր նաեւ Մորուսը, և անապայման կասեր իր խոսքը: Հաճախ ամբիոնից նա շաղ էր տալիս այնպիսի մտքեր և դիտողություններ, որոնք գրչի տակ ծավալվելու դեպքում հետազոտական արժեքներ կլինեին:

Դեռես ուսանողական տարիներից եմ նկատել, հիմա էլ տպավորությունս նույնն է, որ ամբիոնից Մորուսի միտքը անսպասելի ու անկրկնելի թռիչքներ էր գործում: Ամբիոնի մոտ նրա դեմքը խստանում էր, հայացքը դառնում ներհուն, ձայնը հնչում էր հաստատ և թվում էր, թե քեզ մեկը կոչ է անում ու դու էլ, ենթարկվելով նրա վարակող խոսքին, պատրաստ ես հետեւել նրան: Արտիստիկ փայլ ուներ նրա խոսքը, և հաճախ եւ նրա ունկնդիրները զգացել այն անուրախ վիճակը, որի մեջ ընկել են նրան հաջորդող հռետորները:

Ուսուցչիս մի ընդունակություն էլ եմ կամենում առանձնացնել, մանավանդ որ այդ ձիրքը ամենքին չի տրվում:

Ասում են, թե անբավարարվածությունը, որի մասին խոսք եղավ, մարդու մեջ մաղձ է կուտակում: Մորուսի օրինակը հերքում է դա: Մտաբերեմ մի դեպք: Յոթ կամ ութ տարի առաջ ծաշկերույթ էր տրվում սփյուռքից եկած նշանավոր գործիչների պատվին: Մասնակցում էր մեր մտավորականներից մի մեծ խումբ: Մորուսն ընտրվեց սեղանապետ և փալեց իր առաջարկած կենացներով:

Սփյուռքահայ մի գործիչ առաջար-

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Երբ խոսում էր Մորուս Յասրաթյանը



ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Կեց մեր գիտնականներից մեկի կենացը: Դա Մորուսի նախկին ուսանողներից էր: Մի երկուսն արձագանքեցին, սրտագին բարեմաղթություններ արին: Մորուսը կարող էր չխոսել, որովհետեւ բավական բան ասվել էր արդեն: Բայց նա մի խոսք ասաց, որ տպավորվել է ու երբեք չի մոռացվի:

- Երանի այն ուսուցչին, որն իրեն գերազանցող աշակերտներ է ունենում:

Ու տվեց այն գիտնականի անունը, որի կենացն էր առաջարկված:

Եվ շարունակեց՝

- Երբ աշակերտը ուսուցչին գեազանցում է, իսկ դա այդպես է եւ այդ խոստովանությունն անում եմ ես, նրա նախկին ուսուցիչը, նշանակում է կյանքը մի կետի վրա չի մնում, շարժվում է առաջ:

Կողքիս նստած մեկը չարախնդաց.

- Խոսք է, ասում է, որ ասես գրի, հո չի գրի:

Ես լավ չզգացի ինձ:

Հավաքույթից անցել էր մի շաբաթ, ու ես այն գիտնականի տանն էի, որի կենացի վրա Մորուսն արեց գերազանցված ուսուցչի խոստովանությունը: Գնացել էի մոտը մի երկու գիրք խնդրելու: Նա առաջարկեց մոտենալ պահարանին եւ գտնել հարկավոր գրքերը: Մոտեցա գրապահարանին ու, տեսնելով Մորուսի՝ 1963-ին հրատարակած Սայաթ-Նովան, ինքս էլ չգիտեմ ինչու, հանեցի գիրքը ու աքցովս ընկավ ուսուցչի մակագրությունը իր աշակերտներին... «Այն հաճելի խոստովանությամբ, որ աշակերտը գերազանցում է ուսուցչին»:

Հիշեցի ճաշկերույթը: Ես հպարտ էի ուսուցչիս համար, որի դրվատանքը լավ տրամադրության պահին ասված գեղեցիկ խոսք չէր, այլ հիմնավորված վերաբերմունք, մանավանդ, միտս եկան մեր ուսանողական տարիները, եւ հիշեցի, որ այդ գիտնականը Մորուսի առարկայից գերազանց ստացած միակ ուսանողն էր մեր կուրսում:

«Հուշապատում», գիրք երրորդ, «Սովետական գրող» հրատ., Երեւան 1988

Բազմակողմանի գիտելիքներ ուներ, քայլող հանրագիտարան էր Մորուս Յասրաթյանը՝ հայ ժողովրդի պատմության ու բանասիրության, մշակույթի հիմնահարցերի քաջատեղյակ հետազոտողն ու ջատագովը: Հմուտ էր եւ բանավոր, եւ գրավոր խոսքում: Նրա դասախոսությունները, ելույթները ԽՍՀՄ-ի անվան մանկավարժական ինստիտուտում, Երեւանի պետական համալսարանում, Գիտությունների ակադեմիայում եւ այլուր լսվում էին չթուլացող հետաքրքրությամբ: «Մորուսը ելույթ է ունենալու», - ասում էին հայագիտությամբ զբաղվողները եւ շտապում լսելու նրա հեղինակավոր խոսքը, որը համոզում, գրավում, վեժեր էր առաջացնում, մղում հետագա ուսումնասիրություններին:

Պատերազմն ավարտվել էր: Երեւանի պետական համալսարանի ասպիրանտ էի, ասացին, որ Մորուսը Գիտությունների ակադեմիայի դահլիճում դասախոսություն է կարդալու: Գնացի: Սովորաբար տեղ էր գրավում դահլիճի միջնամասում: Բարեւեցի եւ նստեցի նրանից քիչ հեռու: Հրույցի ժամանակ հետաքրքրվեցի հայ ժո-

ղովրդի նորագույն պատմության հարցերով եւ որովհետեւ նոր էի կարդացել «Մ. Բակուրյան» ստորագրությամբ մի շարք հոդվածներ, ուզեցի իմանալ՝ ով է Բակուրյանը: Կողքիս ընկերը ժպտաց եւ ցույց տալով Յասրաթյանին, ասաց՝ Մորուսն է: Այդ օրվանից հաճախակի էի հանդիպում: Սիրում էր երիտասարդներին, հաճույքով զրուցում նրանց հետ, օգնում գիտության մեջ, կյանքում: 1971թ. մարտին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հերթական ընտրությունների օրերին, շատերը դիմեցին այդ ժամանակ արդեն Ակադեմիայի թղթակից անդամ Յասրաթյանին՝ նրա թեկնածությունն առաջադրելու, ակադեմիկոս ընտրվելու համար: Վճռականորեն առարկեց, առանց ձեռնարկի «չեմ ու չումի»: Այդ ժամանակ Մորուսը 70-ին մոտ էր: Մինչդեռ կային ավելի երիտասարդ ուժեր: Նա առաջադրեց իր թեկնածուին եւ մինչեւ վերջ պաշտպանեց նրան:

Շատերն էին սիրում, հարգում Մորուսին, բայց ուներ նաեւ հակառակորդներ, որոնց զրպարտություններով նա կալանավորվել, 1938-40թթ. բանտարկվել էր Երեւանի բանտում: Ծանր կալանքի տարիներին, հաղթահարելով շատ դժվարություններ, կարողացավ խորացնել գիտելիքները, ծրագրեց նոր աշխատություններ գրել, համոզված, որ զրպարտվել է եւ կազատվի կալանքից: Հորեղբայրս՝ իրավաբան Արամայիս Ղարիբջանյանը, որն ապրում էր Մորուսի հարեանությամբ եւ նույնպես բանտարկվել էր, ինձ խորհուրդ էր տալիս լեզվաբանության հարցերում հետեւել Հրաչյա Աճառյանին, իսկ պատմության հարցերում՝ Մորուսին:

Մորուս Յասրաթյանը ծնվել է 1902թ. սեպտեմբերի 10-ին Միսիանի շրջանի Ախլաթյան գյուղում, որտեղ եւ ստացել է նախնական կրթությունը: Միջնակարգ դպրոցն ավարտել է Բաքվում, 1918-20թթ. մասնակցել Բաքվի կոմունային, Հյուսիսային Կովկասի, Ջանգեզուրի ազատագրման կռիվներին: Ավարտելով Երեւանի >> 40

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 39 պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, Հասարայանը 1931-32թթ. Լենինգրադում ուսանել է Նիկողայոս Մառի եւ Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ որպես ասպիրանտ: 1933թ. վերադառնալով Երեան՝ Հասարայանն աշխատում է որպես Հայաստանի պատմության եւ նյութական կուլտուրայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, ապա՝ Մատենադարանի դիրեկտոր: 1947-54թթ. Հասարայանը եղել է Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, զբաղվել հնագիտական հետազոտություններով եւ պեղումներով, ուսումնասիրել է Հայաստանի հնագույն հուշարձանների՝ Ծիծեռնակավանքի եռանիվ բազիլիկան, բացահայտել նրա դերն ու նշանակությունը հայ ճարտարապետության մեջ: Լա միաժամանակ Արմֆանի գրականության ինստիտուտում, եղել է ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի քարտուղար: Շուրջ կես դար Հասարայանը մանկավարժական գործունեություն է ծավալել Երեանի բանֆակում, պետական համալսարանում, հայկական մանկավարժական ինստիտուտում: 1964-75թթ. Հասարայանը Հայաստանի պատմության թանգարանի դիրեկտորն էր:

1965-66թթ. սփյուռքահայ առաջավոր կազմակերպությունների հրավերով Հասարայանը դասախոսում է Բեյրութի Հայկազյան կոլեջում: Մանկավարժական աշխատանքը նա զուգորդում էր գիտական գործունեության հետ: Հասարայանի գրչին են պատկանում հայագիտական բազմաթիվ արժեքավոր աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի հին, միջնադարյան եւ նոր շրջանի պատմությանը, հնագիտությանը, բանասիրությանը, ճարտարապետությանը եւ մշակույթի այլ հիմնահարցերին: Հասարայանի ակտիվ մասնակցությամբ է ստեղծվել «Հայ ժողովրդի պատմություն» ձեռնարկը, գրվել միջնադարյան եւ 18-րդ դարի հայ ազգային ազատագրական շարժումների պատմության մեծ մասը:

Հասարայանը խորապես բացահայտել է հայկական գաղութների մեծ դերը հայերի ազատագրական պայքարում, Ղարաբաղի եւ Սյունիքի ժողովրդի հերոսական ջանքերը հայկական իշխանության վերաստեղծման գործում, որը պետք է ազատագրական Հայաստանի

կորիզը դառնար: Ցույց տալով Հովսեփ Էմինի դերը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման մեջ՝ Հասարայանը նշել է, որ «Լա ուխտեց իր ողջ կյանքը նվիրել ստրկացված հայրենիքի ազատագրության գործին»: Հասարայանը հայ պատմագիտության մեջ առաջիններից մեկը ցույց տվեց, որ հայ ժողովրդի պատմության առանցքը, նրա բնորոշ գիծը եղել են ազատագրական շարժումները:

Հայ ճարտարապետության պատմության ասպարեզում Հասարայանի երկարամյա աշխատանքների հանրագումարը եղավ պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանի հեղինակությամբ 1975թ. Բեյրութում հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզվով լույս տեսած «Հայաստանի հուշարձանները» ծավալուն գիրքը, որը ջերմ ընդունելություն գտավ սփյուռքահայերի շրջանում եւ Հայաստանում:

Մեծ են Հասարայանի ծառայությունները սայաթնովագիտության զարգացման բնագավառում: Երա «Սայաթ-Նովա. հայերեն մի քանի խաղերի մասին», «Սայաթ-Նովա. խաղերի ժողովածու», «Սայաթ-Նովա. հայերեն, վրացերեն եւ ադրբեջաներեն խաղերի ժողովածու», «Սայաթ-Նովա», «Սայաթ-Նովայի դավթարը» եւ այլ աշխատություններ եւ հրատարակումներ աչքի են ընկնում հայ հանճարեղ բանաստեղծի եւ աշուղի սեռողծագործությունների վերլուծություններով եւ մեկնաբանություններով, տեքստաբանական ճշտումներով:

Լինելով հայագիտության ավագ սերնդի հանրահայտ ներկայացուցիչներ Ն.Մառի, Զ.Օրբելու, Զ.Աճառյանի, Զ.Մանանդյանի, Մ.Աբեղյանի, Թ.Թորոմանյանի, Ա.Հովհաննիսյանի, Կ.Մելիք-Օհանջանյանի, Թ.Ավդաբեկյանի, Ե.Շահագիզի, Ա.Քալանթարի արժանավոր աշակերտը եւ հետնորդը՝ Հասարայանը բարձր է գնահատել նրանց վաստակը հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, ճարտարապետության զարգացման բնագավառում:

Որպես Հայաստանի պատմության պետական թանգարանի երկարամյա դիրեկտոր՝ Հասարայանը խոշոր դեր կատարեց աշխատանքները գիտական հիմքերի վրա դնելու, թանգարանը հայագիտական նոր նյութերով հարստացնելու գործում: Հիշում են Հասարայանի մեծ եռանդը ազգային ազատագրման

շարժման հերոսների, հայ ֆիդայիների գնահատման ուղղությամբ: Այն ժամանակ, երբ զրպարտվում էին Անդրանիկն ու մյուսները, Հասարայանը հանդես եկավ ժողովրդի անձնուրաց գավակների պաշտպանությամբ, իր հեղինակավոր կարծիքը գրեց ժողովրդական հերոս Անդրանիկի մասին, միջնորդեց նրան նվիրված եւ այն ժամանակ փականքի տակ դրած աշխատությունները հրատարակելու: «Հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման գինված պայքարի ամենապայծառ, ամենասիրված եւ ժողովրդականություն վայելող դեմքը Անդրանիկն էր», - գրում էր Հասարայանը եւ փաստերով հիմնավորում իր համոզմունքը:

Ճայսօր Հասարայանի պատմաբանասիրական աշխատությունների միայն մի մասն է հրատարակված, նրանցից մի քանիսը ամփոփված են հեղինակի «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» ժողովածուի մեջ, որը հրատարակել է Հայաստանի գիտությունների ակադեմիան՝ 1985 թվականին՝ Հասարայանի մահվանից (1979թ.) հետո: Ժողովածուում զգալի տեղ է հատկացված գիտնականի Զանգեզուրում կատարած հնագիտական պեղումների արդյունքներին: Բարձր գնահատելով հայկական շինարվեստը, Հասարայանը գրում է, որ այն «իր պարզ ու տրամաբանական լրջությամբ, իր անխնայ բովանդակությամբ ու ձեւերի բազմակողմանի ներդաշնակությամբ հիացրել ու հիացնում է դիտողին՝ ստեղծելով հոգեկան խաղաղ վիճակ, ազնիվ զգացումների եւ զեղեցիկ մտորումների տրամադրություն»: Ուշագրավ է ժողովածուում զետեղված «Պատմաբանի մտորումներից» ծավալուն հոդվածը, որում հեղինակը փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչ ավանդ է ունեցել հայ ժողովուրդը մշակույթի ասպարեզում իր գոյության 20-25 դդ եւ մասնավոր վերջին 16 դարերի ընթացքում. հայ հայրենասերի բարձր արժանապատվությամբ, հեռու ամեն տեսակ ազգային սնապարծությունից, Հասարայանը ցույց է տալիս, որ այդ ավանդը մեծ է, անժխտելի, սակայն անչափ խոշոր են եղել նաեւ կորուստները, որոնք կրկնապատկվել են նաեւ նրանով, որ հայ մարդը երկար դարեր հարկադրված ծառայել է օտար իշխողին, ստեղծագործել իշխողի համար: Գիտնականը դատապարտել է արտագաղթը,

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Մեծ սայաթնովագետը



ՐՆՆՐԻԿ ԲԱՆՉԻՆՅԱՆ

Բանասիրության դոկտոր

1852 թվականին Մոսկվայում լույս տեսավ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի առաջին ժողովածուն: Այն կազմել էր եւ իր ներհուն քննություններով օժտել արժանահիշատակ Գեորգ Ախվերդյանը, որը եւ հանդիսացավ սայաթնովագիտության հիմնադիրը: Նրանից հետո այդ ասպարեզում իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան Նիկոլ Աղբալյանը, Յովհաննես Թումանյանը, Գեորգ Ասատուրը, Գարեգին Լեւոնյանը...

Յաջորդ խոշոր սայաթնովագետի պատիվը վիճակված էր Մորուս Յասրաթյանին: Նրա շնորհիվ 1940-ական թվականներին սկիզբ առավ սայաթնովագիտության մի նոր վերելք: Դա պայմանավորված էր այդ ուսումնասիրողի պատմա-բանասիրական հմտությամբ, հայ եւ արեւելյան բանաստեղծության, այլեւ թիֆլիսահայ բարբառի, վրացերենի ու թուրքերենի քաջիմացությամբ: Այսինքն՝ այն, ինչ անհրաժեշտ էր եռալեզու աշուղ-բանաստեղծի կյանքի ու գործի համակողմանի ուսումնասիրության համար:

Արդեն 1942 թվականին Մ.Յասրաթյանը հանդես է եկել Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգությունը քննող ու մեկնաբանող ատենախոսությամբ, այդ եւ հաջորդ տարիներին գիտական մամուլում

տպագրել սայաթնովագիտական արժեքավոր հոդվածներ...

Դեռեւս 1910-ական թվականներից պարբերաբար առաջ էր քաշվել Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգության զգալի մասը կազմող թուրքերեն խաղերի հրատարակության եւ հայերեն թարգմանության հարցը: Սակայն երկար տարիներ այդ հարցը մնացել էր չուժված: Անհրաժեշտ էր Մ. Յասրաթյանի նման մեկը, որն ի գորու կլիներ կատարել այդ չափազանց դժվարին գործը: Պետք էր վերծանել Սայաթ-Նովայի երգերի հայատառ եւ վրացատառ ինքնագիր ժողովածուն՝ Դավթարը, որն ընդգրկում է երգչի հայերեն եւ թուրքերեն խաղերը: Դավթարի հիման վրա հայերեն երգերն արդեն հրատարակել էր Գ.Ախվերդյանը՝ հետագա ուսումնասիրողին թողնելով թուրքերեն խաղերի վերծանությունը, ինչը եւ հմտորեն կատարեց Մ.Յասրաթյանը: Արդեն 1941 թվականին նա «Սովետական գրականություն» ամսագրում տպագրեց թուրքերեն խաղերի մի քանի գեղարվեստական թարգմանություններ՝ արեւելահայերենով: Յետագայում նա ոսկերչի նման հղկեց իր թարգմանությունները՝ նախընտրելով թիֆլիսահայ բարբառը: Արդյունքում ստացվեցին Սայաթ-Նովայի հանձարին վայել թարգմանություններ, որոնք արժանի եղան դրվելու երգչի անզուգական հայերեն խաղերի կողքին: Ահա, որպես ասվածի ապացույց, մի տուն թուրքերեն խաղերից մեկի հասրաթյանական թարգմանությունից.

- Էշխի ծովի միջեն հանած լալ ու գոհար է բիրջու.*
- Միպտակ, կանանչ, խաս ու դումաշ, գար դալամբար է բիրջու.*
- Օշով ռանգըն չի հասկանա՝ ուրիշ թահար է բիրջու.*
- Աչկ ունեցող չըտեսնողին ահ ու դահար է բիրջու.*
- Հիլ ու միխակ ու զանցափիլ, սաքր ու դարար է բիրջու:*

Անհրաժեշտ է նշել, որ Սայաթ-Նովայի թուրքերեն խաղերը, ավելի, քան հայերեն եւ վրացերեն երգերը, գրված են աշուղական բարդ երգատեսակներով, թե՛ջնիս-բառախաղերով, գաղտնագրերով, պարսկերե-

երբ հայ ժողովուրդը հարկադրված հեռանալով իր երկրից կամ բռնությամբ վտարվելով իր հազարամյա բնաշխարհից, «օտար հորիզոններում հազիվ մի քանի սերունդ պահպանել է իր ազգային մշակույթի մեծագույն մասը»: Ուշագրավ է գիտնականի ընդհանրացումը հայ ժողովրդի հազարամյակների պատմության էության մասին: «Ավելի քանի 300 հազար քառ. կմ հայաբնակ տարածություն ունեցող Յայաստան երկիրը, - գրում է նա, - չհաշված մերձակա ընդարձակ գավառների մշտական ստվար հայ բնակչության այն գոյությունը, ունեցավ այն դժվարությունը, որ իր վերջին երեք հազարամյա պատմության ավելի քան երկու-երրորդը ապրել է կորցնելով, սպառվելով եւ առաջին հերթին քանակով մաշված հասել նոր դարերին: Սակայն հենց դարի սկզբից հայ ժողովուրդը միայն 1915-21թթ. կորցրեց իր բնակչության կեսից ավելին, զրկվեց իր հազարամյա հայրենի հողի (չհաշված Կիլիկիան) նվազագույնը 11-ից 10 բաժնից»: Գրեթե այդ քանակով էլ դարերով մաշված իր մշակույթի մեծագույն կորուստն ունեցավ, նույն այս դարում ամենը տալով հրին ու մոլորքին»: Չնայած այս բոլորին, հայրենասեր գիտնականը հպարտությամբ հայտարարում է. «Յայ ժողովուրդը կանգնում է աշխարհի առաջավոր ժողովուրդների շարքում եւ իր սեփական անձնագրով մտնում աշխարհի երգչախմբի մեջ, իր սեփական հասակով երեսում իրեն հատկացված վերելակի աստիճանին, գեթ ընդհանուր մշակույթի կլոր սեղանի շուրջ»:

Ծանր, հակասական, բայց իր ժողովրդին միշտ հարազատ վաստակով լի գիտնական-մանկավարժի ու հասարակական գործչի ուղի անցավ ականավոր պատմաբան, բանասեր, Յայաստանի Յանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս Յասրաթյանը: Յիշենք եւ խոնարհվենք նրա հիշատակի առջեւ:

«Յայաստան»,
21 հոկտեմբերի 1992թ.

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

« 41 նախառն տողերով: Մ.Յասարայանին հաջողվել է իր թարգմանությունները կատարելիս հաղթահարել նաև այդ դժվարությունները:

Լույսպիսի հմտությամբ Մ.Յասարայանը թիֆլիսահայ բարբառով թարգմանել է նաև Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը՝ հավաքելով տարբեր աղբյուրներից եւ խորապես քննելով դրանք: Երանից առաջ կատարվել էին վրացերեն խաղերի որոշ թարգմանություններ: Սակայն այն արդյունքը, որին հասավ նա, աննախադեպ էր: Այս անգամ էլ, որպես ասվածի ապացույց, բերենք ընդամենը մեկ տուն վրացերեն մի սիրերգի նրա թարգմանությունից, որն իր արժեքով լիովին համագոր է սայաթնովյան հայերեն սիրային խաղերին.

*Հենց իմացար սոված էի՝
լի սեղանի համա՛ էկա,
Քիզիդ խոսիլ էի ուզում՝
մողըտ դամի համա էկա.
Ասի՛ քիզիդ լուսազրնիմ,
ուրախ ժամի համա էկա .
Մոռացիլ իմ... լավ միտըս չէ,
թե ինչ բանի համա էկա:*

Գ.Ախվերդյանից հետո Մ. Յասարայանը, բնականաբար, առաջին հերթին ըստ ամենայնի քննել է Սայաթ-Նովայի բանաստեղծական ժառանգության լավագույն մասը կազմող հայերեն խաղերը եւ կազմել նոր՝ ձգարտված բնագրեր: Ինչպես թուրքերեն խաղերը վերծանելիս ու թարգմանելիս, այնպես էլ հայերեն խաղերի բնագրերը կազմելիս նա ուսումնասիրել է ոչ միայն Դավթարը, այլև տարբեր աղբյուրներ, հատկապես երգչի որդու՝ Օհանի կազմած վրացատառ ժողովածուն, որ ընդգրկում է թե՛ հայերեն եւ թե՛ թուրքերեն ու վրացերեն մի շարք խաղեր:

1945 թվականին, երբ նշվել է Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը, լույս աշխարհ եկավ Սայաթ-Նովայի խաղերի Մ.Յասարայանի աշխատասիրած ժողովածուն: Այստեղ հայերեն խաղերի նրա կազմած բնագրերի հետ մեկտեղ

ընդգրկված են 57 թուրքերեն եւ 25 վրացերեն երգերի իր կատարած թարգմանությունները՝ ծանոթագրություններով եւ բառարանով: Սա Սայաթ-Նովայի եռալեզու ստեղծագործության առաջին ժողովածուն է: Այն էական ճշտումներով ու համալրումներով, ընդարձակ ծանոթագրությունով վերահրատարակվեց 1959 թվականին: Սա սայաթնովագետն ինքը համարել է «հայերեն երկերի առաջին լրիվ ժողովածուն»: Այստեղ վրացերեն բաժինը հարստացված է յոթ նոր թարգմանություններով, ինչի շնորհիվ «համարյա ավարտվում է վրացերեն բաժնի թարգմանությունը»: Թուրքերեն բաժնում թարգմանությունների թիվը հասցված է 71-ի: «Եվ այս ամենով, - գրում է Մ.Յասարայանը, - արդեն ստացվում է Սայաթ-Նովայի ու նրա թողած ժառանգության ավելի որոշակի պատկերը»:

Մ.Յասարայանը «աննման Սայաթ-Նովային կրկնակի մատչելի» դարձնելու համար մասամբ գրականացրել է որոշ հայերեն խաղեր եւ դրանցից չորսը հանձնել «ընթերցող հասարակության դատաստանին»: Այս անգամ ես բերենք մեկ տուն.

*Ամեն սագի մեջն գոված, դու մեկ չես,
տանն ես, քամանչա.
Չնչին մարդը քեզ չի տեսնի,
դու նրա պանն ես, քամանչա.
Ջանք արա, էլ լավ օրերի ետեից
հասնես, քամանչա.
Քեզ ինձնից ո՞վ կարա խլի,
աշուղի մասն ես, քամանչա:*

Մ.Յասարայանը, սակայն, այնքան էլ ոգետրված չի եղել սայաթնովյան խաղերի գրականացմամբ, գտնելով, որ «Սայաթ-Նովան ավելի լավ է ու գեղեցիկ իր տարագի մեջ»...

1963 թվականին միջազգային մակարդակով նշվել է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Այս առթիվ երրորդ անգամ լույս տեսավ Մ.Յասարայանի կազմած ժողովածուն՝ առավել հարուստ գիտական ապարատով եւ երգչի կյանքն ու գործը հմտորեն քննող

ծավալուն ներածականով: Այստեղ թուրքերեն բաժինը համալրված է մեկ տասնյակից ավելի նոր թարգմանություններով: Թե՛ իր ընդգրկմամբ եւ թե՛ բնագրագիտական-բանասիրական արժանիքներով Մ.Յասարայանի այդ վերջին ժողովածուն լավագույնն է մինչ այդ լույս տեսած սայաթնովյան երգերի հրատարակությունների համեմատ:

Ասենք, որ հատկապես հոբելյանական խանդավառությունից ծնված բազում հողվածների տարափի տակ սայաթնովագիտությունը որոշ չափով կորցրեց իր նախնին գիտական լրջությունը, ինչը կատարվեց, Մ.Յասարայանի խոսքերով ասած, «անիրագեկ մարդկանց կողմից, որոնք գրչի մեկ շարժումով փորձում են գյուտեր անել»: Այդ «գյուտերը», ցավոք առավել մեծ թափ են ստացել մեր օրերում...

// Ինքը՝ Մ.Յասարայանը, այդ ժամանակ հանդես եկավ նաև որոշ արժեքավոր գիտական աշխատանքներով, որոնց մեջ առանձնանում է հատկապես «Սայաթ-Նովայի Դավթարը» բնագրագիտական ուսումնասիրությունը:

1965-1966 թվականներին, լինելով Բեյրութի Չայկազյան քոլեջի դասախոս, Մ.Յասարայանը հանդես է եկել նաև Սայաթ-Նովային նվիրված բանախոսություններով ու հողվածներով: Հիշարժան է Բեյրութի «Էջեր գրականութեան եւ արուեստի» հանդեսում լույս տեսած նրա «Սայաթնովասիրութեան գաղտնիքը» ծավալուն հողվածը...

Դեռեւս 1959 թվականին Մ.Յասարայանի կազմած ժողովածուի երկրորդ հրատարակության վերաբերյալ Պարույր Սեւակը՝ մեր մյուս խոշոր սայաթնովագետը, գրել է մի գրախոսություն, որտեղ բարձր գնահատելով Մ.Յասարայանի գործը՝ ասել է. «Մեր հին, բայց եւ միշտ սիրելի, մեր ամենօրյա, բայց եւ տոնական, մեր ծանոթ, բայց եւ անզուգական Սայաթ-Նովան Մ.Յասարայանի շնորհիվ բոլորովին նորացել է: Նորացել է, բայց ոչնչով չի դարձել անձանաչելի: Եվ հենց այստեղ է Մ.Յասարայանի մեծ վաստակն ու անվերապահ հաջողությունը»:

Ավելի լավ հնարավոր չէ ասել...

Անհրաժեշտ էր Մ. Յասարայանի նման մեկը, որն ի գորու կլիներ կատարել այդ չափազանց դժվարին գործը: Պետք էր վերծանել Սայաթ-Նովայի երգերի հայատառ եւ վրացատառ ինքնագիր ժողովածուն՝ Դավթարը, որն ընդգրկում է երգչի հայերեն եւ թուրքերեն խաղերը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Հայագիտության Երախտավորը

Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ.Հասրաթյանի 80-ամյակի առթիվ



ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Այս օրերին մենք կարող էինք իր իսկ ներկայությամբ ըստ արժանվույն նշել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Մորուս Ստեփանի Հասրաթյանի ծննդյան 80-ամյակը, եթե մոտ չորս տարի առաջ չկտրվեր նրա բեղմնավոր կյանքի թելը:

Մանկությունն անցկացրել էր ծննդավայրում՝ գեղատեսիլ Սյունիքում, կրթությունն ու աշխատանքային մկրտությունը ստացել պրոլետարական Բաքվում, տեսել ու լսել էր Շահումյանին, Ջափարիձեին, Ազիզբեկովին ու տակավին շատ երիտասարդ՝ զենքը ձեռքին կռվել սովետական կարգերի հաղթանակի համար:

Տեղափոխվելով Երեւան, 1922-24թթ. նա սովորում է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում, կյանված լսում Լեոյի, Մանանդյանի, Աբեղյանի, Աճառյանի, Տերտերյանի եւ

նորիշների դասախոսությունները: Այստեղ էլ հենց բարենպաստ պայմաններում սկսում են ծարձակվել բնականից օժտված, շնորհալի երիտասարդի պատմաբանասիրական ունակությունները: Համալսարանը չավարտած, 1925թ. նա ուղարկվում է կոմերիտական ղեկավար աշխատանքի՝ սկզբում Սիսիանի, ապա Գորիսի ու Դիլիջանի շրջաններում:

1930թ. Մ.Հասրաթյանն էքստենզիվ ըննությամբ ավարտում է համալսարանը եւ գործուղվում Լենինգրադ՝ ասպիրանտուրա: Այստեղ նա երկու տարի Ն.Մառի եւ Զ.Օրբելու ղեկավարությամբ խորանում է հայագիտության մեջ, հարուստ գիտելիքներ ձեռք բերում, հաղորդակից դառնում ռուսական գիտության եւ մշակույթի նվաճումներին: Նա Սովետական Հայաստանից գործուղված առաջին պատմաբանն էր, որ հաջողությամբ ավարտեց Մառի եւ Օրբելու «լենինգրադյան դպրոցը» եւ նրանց երաշխավորությամբ գիտական աշխատանքի անցավ Հայաստանում:

Վերադառնալով Երեւան, 1933թ. Հասրաթյանը նշանակվում է Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: Շուտով առաջ է քաշվում եւ նշանակվում հեղափոխության թանգարանի դիրեկտոր եւ կուսակցության պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: Այստեղ 1934-36թթ. նա կազմակերպական եւ գիտական բեղմնավոր գործունեություն է ծավալում՝ հանդես գալով որպես Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության հմուտ հետազոտողներից մեկը: 1937-38թթ. վարում է Մատենադարանի դիրեկտորի պաշտոնը:

1940 թվականից Մ.Հասրաթյանի գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հնագիտության,

բանասիրության, հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմության ուսումնասիրության ուղղությամբ: 1940-41թթ. նա ուսումնասիրում է Ավանի նշանավոր հուշարձանը: 1942-46թթ. աշխատում է գրականության ինստիտուտում, միաժամանակ կատարում ԳԱ հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի պարտականությունները: 1947-1954թթ. աշխատում է ԳԱ պատմության ինստիտուտում, գործուն մասնակցություն ունենում պատմության եւ հնագիտության հարցերի ուսումնասիրությանը, հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմության դպրոցական ձեռնարկի պատրաստման եւ խմբագրման աշխատանքներին:

Լայն էին ու համակողմանի Մորուս Հասրաթյանի գիտական հակումները: Հայ ժողովրդի պատմության, հնագիտության, բանասիրության, ճարտարապետության, ազգագրության վերաբերվող շատ ու շատ հարցեր իր ելույթներում նա քննում եւ վերլուծում էր գիտական բարձր մակարդակով:

Անգնահատելի է Մ.Հասրաթյանի վաստակը սայաթնովագիտության բնագավառում: Սայաթ-Նովայի հայերեն տաղերի ձգգրումներն ու նորովի մեկնաբանությունները, վրացերեն ու ադրբեջաներեն տաղերի հայերեն թարգմանությունները, հիրավի, բանաստեղծական տաղանդի, պատմագիտական ու բանասիրական բարձր ունակությունների արգասիք են: Մ.Հասրաթյանը շարունակելով Գ.Հախվերդյանի, Գ.Ասատուրի եւ Գ.Լեոնյանի գործը, հարստացրեց ու նոր բարձրության հասցրեց սայաթնովագիտությունը:

Մորուս Հասրաթյանը հմուտ մանկավարժ էր: Մոտ կես դար դասախոսություններ էր կարդում բանֆակում, կուսակցական դպրոցում, համալսարանում, մանկավարժական ինստիտուտում: Նրա հազարավոր սաներից շատերն այսօր նշանավոր գիտնականներ ու մանկավարժներ են, պետական, կուսակցական աչքի ընկնող գործիչներ:

Նա իր գիտելիքները ի սպաս դրեց նաեւ սփյուռքահայությանը: Բեյրութի հայկական առաջադիմական կազմակերպությունների հրավերով 1965-66թթ. դասախոսություններ կարդաց Հայկազյան կոլեջում եւ կրթական այլ հաստատու- >>> 45

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Հայագիտության երախտավորը



ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս

Լրացավ անվանի պատմաբան-բանասեր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս Ստեփանի Հասարակության ծննդյան 100-ամյակը:

Լ ա ծնվել է 1902թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի Ախլաթյան գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել Բաքվում, բարձրագույնը՝ Երեանի պետական համալսարանում, դառնալով ականավոր հայագետներ Լեոյի, Հ Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Ա.Տերտերյանի սանը, որոնց խրախուսով կողմնորոշվում է դեպի հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի ուսումնասիրումը: Համալսարանն ավարտելուց հետո Մ.Հասարակությանը գործուղվում է Լենինգրադ՝ ասպիրանտուրա, որտեղ Ն.Մառի եւ Հ.Օրբելու ղեկավարությամբ խորանում հայագիտության մեջ եւ նրանց երաշխավորությամբ գիտական աշխատանքի անցնում Հայաստանում:

Վերադառնալով Երեան, երիտասարդ գիտնականը սկսում է զբաղվել Անդրկովկասի հասարական-քաղաքական պատմությամբ, 1933թ. դառնում է Հայաստանի նյութական մշակույթի

պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ապա՝ հեղափոխության թանգարանի տնօրեն, միաժամանակ դասավանդելով Երեանի պետական համալսարանում: 1937թ. Մ.Հասարականը նշանակվում է Մատենադարանի տնօրեն եւ մեծ աշխատանք է կատարում հայ մշակույթի գանձերը ոչնչացումից փրկելու եւ պահպանելու համար: Սակայն նման աշխատանքն այդ դժնդակ տարիներին անխուսափելի դիտվեց որպես ազգայնական, հետեւաբար՝ հակախորհրդային արարք, եւ Մ.Հասարականը հայ մտավորականության սերունդի հետ միասին բռնադատվեց: Բարեբախտաբար, նա այդ անհիմն մեղադրանքներից համեմատաբար շուտ ազատագրվեց եւ անխաթար պահելով իր մասնագիտական ու մարդկային արժանապատվությունը, առանց հիշաչարության եւ ընկճվելու, վերստին անմնացորդ լծվեց հայագիտության սուրբ գործին:

1940թ. սկսած Մ.Հասարականի գիտահետազոտական աշխատանքը ընթանում է հնագիտության, բանասիրության, հայ ժողովրդի հին եւ միջին դարերի ուսումնասիրության ուղիով: Հատկապես մեծ է նրա երախտիքը սայաթնովագիտության մեջ: Չափազանց դժվար գործ էր Սայաթ-Նովայի ստեղծագործությունների մեկնաբանությունները, տեքստաբանական վերլուծությունները եւ ծանոթագրությունները, վրացերեն ու ադրբեջաներեն խաղերի հայերեն թարգմանությունները: Անդրկովկասի ժողովուրդների լեզուների, բանահյուսության եւ ազգագրության խոր իմացությունը, բանաստեղծական ձիրքը հնարավորություն տվեցին Մ.Հասարականին իր բնատուր տաղանդով նոր աստիճանի բարձրացնելու սայաթնովագիտությունը: Հայ ընթերցողի համար նա «հայացրեց» ադրբեջաներեն եւ վրացերեն խաղերը եւ դա այնպիսի մի արվեստով, որ նրա թարգմանությունները համագոր են հանձարեղ հեղինակի հայերեն բնագրերին:

Մ.Հասարականը բազմակողմանի հայագետ էր: Հայ ժողովրդի պատմություն, հնագիտություն, բանասիրություն, ճարտարապետություն եւ



Մ.Հասարականը մոտ 50 տարի դասավանդել է Երեանի պետական համալսարանում եւ Խ.Արքվյանի անվան մանկավարժական ինստիտուտում



1937թ. Մ.Յարաթյանը նշանակվում է Մատենադարանի տնօրեն և մեծ աշխատանք է կատարում հայ մշակույթի գանձերը ոչնչացումից փրկելու և պահպանելու համար: Սակայն նման աշխատանքն այդ դժնդակ տարիներին անխուսափելի դիտվեց որպես ազգայնական, հետեւաբար՝ հակախորհրդային արարք, և Մ.Յարաթյանը հայ մտավորականության սերուցքի հետ միասին բռնադատվեց:

արվեստ՝ ահա այն բնագավառները, որոնցում իր զգալի ներդրումն ունեցավ անվանի գիտնականը: Նա եղել է հայ ժողովրդի պատմության առաջին դասագրքի ստեղծողներից մեկը, գործուն մասնակցությունն է ունեցել հնագիտական արշավախմբերին, հաճախ որպես դրանց ղեկավար և պեղել, ուսումնասիրել և հրատարակել է Յայաստանի բազմաթիվ արժեքավոր հուշարձաններ, առաջինն է հետազոտել և գիտական շրջանառության մեջ դրել հայկական հնագույն եկեղեցիներից մեկը՝ Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկան, որն այդ տարիներին գտնվում էր Ադրբեջանի տարածքում, նախկին Լաչինի շրջանում և համարյա անմատչելի էր հայ մասնագետների համար: Յայ ճարտարապետության պատմության խոշոր գիտակ Վարազդատ Յարությունյանի հետ միասին Մ.Յարաթյանը Բեյրութում մեծածավալ շքեղ գիրք հրատարակեց հայկական միջնադարյան հուշարձաններին նվիրված, որը ջերմ ընդունելություն գտավ սփյուռքում և Յայաստանում:

Մ.Յարաթյանը մոտ 50 տարի դասավանդել է Երեւանի պետական համալսարանում և Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որտեղ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչն էր և ինստիտուտի գիտական գծով պրոռեկտորը: Նա մանկավարժի բնատուր ձիրք ուներ և մեծ հոգատարությամբ հազարավոր երիտասարդ մասնագետներ է կրթել և դաստիարակել, որոնցից շատերը հետագայում դարձան գիտության և հասարակական նշանավոր գործիչներ:

Մ.Յարաթյանը մեկ տասնամյակից ավելի գլխավորել է Յայաստանի պատմության պետական թանգարանը, ուր հայագիտական նոր նյութերով հարս-

տացրել է և նվիրումով պահպանել, հանրությանն ու ժողովրդի սեփականությունն է դարձրել մեր մշակութային արժեքները: Նա մեկն էր այն քերից, որ իր հարուստ գիտելիքներն ի սպաս դրեց նաև սփյուռքին: Մ.Յարաթյանը 1965-1966թթ. հրավիրվեց Բեյրութ, որտեղ դասավանդեց Յայկազյան կոլեջում, ունեցավ բազմաթիվ հրատարակային դասախոսություններ՝ սատար լինելով երիտասարդ հայագետների, մանկավարժների պատրաստմանը, հայրենիքի և սփյուռքի կապերի ամրապնդմանը:

Անվանի գիտնական-մանկավարժը, որին կոչում էին «քայլող հանրագիտարան», ուներ հետաքրքրությունների արտակարգ լայն շրջանակ, հայագիտության համարյա բոլոր ճյուղերի վերաբերյալ իր գրավոր և ավելի շատ՝ բանավոր նյութերում քննում և վերլուծում էր գիտական շատ կնճռոտ հարցեր, շրջանառության մեջ դնում հաճախ անսպասելի, ինքնատիպ տեսակետներ, որոնք առիթ էին դառնում այլոց կողմից այս կամ այն հայագիտական խնդրի նորովի ուսումնասիրությանը և մեկնաբանությանը: Նրա պատմագիտական աշխատությունների մի մասն է տպագրվել, այն էլ հիմնականում «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» գրքում, որը հետմահու հրատարակեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը 1985թ.:

Մորուս Յարաթյանը եղավ իր մեծանուն ուսուցիչների՝ Ն.Մառի, Հ.Օրբելու, Հ.Մանանդյանի և ուրիշների արժանավոր աշակերտը, նրանց գործի շարունակողը և հայագետների երիտասարդ սերնդի հետ նրանց կապող ոսկե կամուրջը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ

Յայագիտության երախտավորը

Յայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ.Յարաթյանի 80-ամյակի առթիվ

« 43 թյուններում, իր կենդանի ու հմայիչ խոսքով լիբանանահայությանը ծանոթացրեց մայր հայրենիքի աննախընթաց վերելքին, գիտության ու մշակույթի ծաղկմանը, նպաստեց երիտասարդ հայագետների պատրաստմանը, հայրենիք-սփյուռ գիտական կապերի ամրապնդմանը: Նրա և ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Յարությունյանի ջանքերով 1975թ. Բեյրութում հայրենի, ֆրանսերեն ու անգլերեն շքեղ հրատարակվեց «Յայաստանի հուշարձանները» արժեքավոր աշխատությունը:

Մ.Յարաթյանը մոտ 10 տարի գլխավորեց Յայաստանի պետական պատմության թանգարանը՝ հայ մշակույթի խոշոր օջախներից մեկը: Նրա ջանքերով հարստացվեցին թանգարանի պատմական, ազգագրական, դրամագիտական և մյուս բաժինները, նկատելիորեն բարելավվեցին գիտական, ցուցադրական-մասսայական աշխատանքները, թանգարանը համալրվեց երիտասարդ մասնագետներով:

Յայրենիքը բարձր է գնահատել Մ.Յարաթյանի գիտական-մանկավարժական վաստակը: Նա քանիցս պարգևատրվել է Յայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրերով, արժանացել է գիտության վաստակավոր գործիչ բարձր կոչման, ընտրվել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ:

«Սովետական Յայաստան»,
5 հոկտեմբերի 1982թ.



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ասյաթնուլա

ՔԱՅԵԲԵՆ
 ՎՐԱՅԵԲԵՆ
 ԱԿԻԲԵՆ
 ԽԱՂԵՐԻ
 ԽՈՒՎԱԾՈՒ

Կապույտ, խմբագրեց
 և ծանոթագրեց
 Մորուս Հասարակական

Կազմողի կողմից

Սայաթ-Նովան այն եզակի երջանիկ դեմքերից է հայ գրականության պատմության մեջ, որի գրական ժառանգության կեսից ավելին հասել է մեզ իր իսկ ձեռքով գրած ժողովածուի միջոցով:

Երկրորդ՝ նա այն բացառիկ տաղանդներից է, որ աղամանդի եւ ոսկունման իրենց փայլով գրավել են աչք ունեցող ամեն անցորդի ուշադրությունը եւ ստիպել, գլուխ խոնարհելով, վերցնել գետնից որպես թանկագին գանձ: Երրորդ՝ իր բնածին տաղանդի ուժով, գեղագիտական այն սնունդն է դարձել յուրաքանչյուր ընթերցողի եւ լսողի համար, որից, հացի նման, չի կարելի ձանձրանալ, երկար ժամանակ կշտանալ, որի կարիքը մարդը կզգա ամեն օր: Ուղիղ կես դար առաջ մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը դիպուկ ասել է այդ մասին, որ Սայաթ-Նովան անմահ է ու անմաշ, «որ ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կլսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարիլ սիրելուց»:

Այդպիսին է եղել եւ այդպիսին է պանդուխտ Կարապետի որդին, վրաց մայրաքաղաքում արհեստավորի աշկերտ, պատանի Արուսիներ (Յարությունը), որ փողոցից ու հրապարակից հասել էր մինչեւ թագավորական դրյակ, գնահատվել, սիրվել ու հռչակվել Կովկասով մեկ, իսկ մահից հետո իր արժանի

ՍԱՅԱԹՆՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ճանաչումը գտել ոչ միայն հին Ռուսաստանում, այլև տասնապատիկ առավել, որչ Սովետական Միության մեջ, եվրոպական որոշ երկրներում, իսկ այժմ համարյա բոլոր երկրներում ու մայրցամաքներում:


Սայաթ-Նովայի մահից հետո այնպիսի իրադրություններ ապրեցին Հայաստանն ու Վրաստանը, որ երկար ժամանակ դժվար էր արվեստով ու գրականությամբ զբաղվելը: Մոտ 30-35 տարի համարյա չընդհատվեցին հրանդիաների որոտը եւ վառողի ծովը: 1795 թ. սեպտեմբերին Իրանի հորդանները երկիրը տրորելով հասան վրաց ծաղկուն մայրաքաղաքը եւ փլատակների վերածեցին այն. քիչ անց վերացվեց վրաց պետականությունը: Անդրկովկաս մտած ռուսական բանակը 1802-1829 թթ. ժամանակամիջոցում, կարճ ընդհատումներով, պատերազմական գործողությունների մեջ էր Իրանի, Թուրքիայի եւ տեղական ընդդիմադիր ուժերի դեմ: Մասսայական տեղաշարժեր, տնտեսական փլուզում, համաճարակ... Անդրկովկասում խաղաղ կյանքն սկսվեց 1830 թվականից, երբ ռուսական տիրապետությունն ամրապնդվեց երկրամասում եւ ժողովուրդները հանգիստ շունչ քաշեցին, բուռն թափով լծվելով տնտեսական եւ կուլտուրական շինարարության: Չանցած 15-20 տարի եւ հիսնամյա մոռացման ծալքերից փյունիկի նման առաջինը հարություն առավ Անդրկովկասի ժողովուրդների անմահ տրուբադուրը՝ Սայաթ-Նովան:

1810թ. Մոզդոկում ծնված Մովսեսը՝ Սայաթ-Նովայի թոռը (Մելիքսեթի որդին), ուսում առնելով Թբիլիսիում (հավանաբար 1824թ. բացված Ներսիսյան դպրոցում), քահանա ձեռնադրվեց Թբիլիսիում: Նա գիտեր, որ իր պապի թանկագին դավթարը՝ խաղերի ժողովածուն, սրբությամբ պահվում է Մոզդոկում բնակություն հաստատած իր ավագ քրոջ մոտ: Տեր Մովսեսն այդ ձեռագիրը բերեց Թիֆլիս: Այդ այն ժամանակներն էին, երբ ազգային ինքնագիտակցությունը համակել էր հայ առաջավոր խավերին, հատկապես նորաստեղծ մտավորականությանը: Խաչատուր Աբովյանը իր բոցավառ հոգու նրբին թելերով հյուսում էր հայրենասերի ողբը՝ «Վերջ Հայաստանի» վեպը: Ռուսաստանի համալսարանները տալիս էին արեւելահայ շրջանավարտներ, իսկ ֆրանսիական համալսարանները՝ արմտահայ շրջանավարտներ, սերտ կապեր էին ստեղծվում արեւմտահայ եւ արեւելահայ մտավորականության միջեւ: Կովկասի եւ Ռուսաստանի հայկական դպրոցները եւ տալիս էին ուսումնական երիտասարդներ: Ստեղծագործական ոգեւորությունը նկատելի էր ամենուրեք: Մեծ էր ռուսական առաջավոր մտքի, գրականության եւ կուլտուրայի բարերար ազդեցությունը: Աբովյանի եւ այլոց գլխավորությամբ պայքար էր ծավալվում ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվի համար: Հանդես էին գալիս բազմակողմանի զարգացում ունեցող եւ ժողովրդի շահերին նվիրված լուսավորիչները:



19-րդ դարակեսի լուսավորիչներից եւ հայագիտության պայծառ ներկայացուցիչներից մեկն էր Գետրգ Ախվերդյանը (1818-1861): Ուշագրավն այն է, որ նա ոչ միայն ազդեցիկ ազնվական ընտանիքից էր (պաշտոնյայի որդի), այլև ազգակցական ու բարեկամական կապերով կապված էր հայ եւ ռուս բարձր խավերի ու մտավորականության հետ: 1834թ. Ախվերդյանն ավարտում է Լազարյան ճեմարանը, իսկ հինգ տարի հետո՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Երիտասարդ մասնագետը դառնում է Ռուսաստանի ռազմական մինիստրի՝ իշխան Չերնիշեւի անձնական բժիշկը: Այն Չերնիշեւի, որն այդ տարիներին Նիկոլայ 1-ին թագավորից հետո երկրորդ դեմքն էր ցարիզմի պետական բարձրագույն ապարատում, որին թագավորը հանձնարարել էր Կովկասյան հատուկ կոմիտեի նախագահությունը: Սակայն այդ բարձր կարիերան ու միջավայրը չէին հրապուրում Գետրգ Ախվերդյանին (Յուրի Ախվերդովին), որի հոգուն մոտ էր ժողովուրդը, գիտությունը, հայ ժողովրդի լուսավորությունը, հայ արհեստավորն ու հայկական ժողովրդական բանահյուսությունը: Գ. Ախվերդյանը ծնվել էր՝ կոչված էր լուսավորիչ լինելու, կանգնելու Խաչատուր Աբովյանի կողքին:

1846թ. Ախվերդյանը վերադառնում է Թիֆլիս եւ, մասնագիտությունից բացի, իր ականջը դնում ժողովրդի լեզվին, հարուստ ֆուլկորին, աշուղների երգին: Երթեր է հավաքում, կուտակում, միաժամանակ սկսում հայերենում խորանալ ու մոտիկից ծանոթանալ համաքարությունների կյանքին: Կարճ կյանք ունեցավ հումանիստ գիտնական բժշկապետը: Նա իր սիրած աշխատանքին հազիվ կարողացավ նվիրել իր կյանքի



ՍԱՅՈՒՄՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 47 վերջին 15 տարիները. մեռավ 43-րդ տարիքում, բայց մեծ եւ անմահ գործ կատարեց գիտության, հայագիտության համար: Չորսհինգ բացառիկ կոթող թողեց Գետրոգ Ախվերդյանը, որոնցից յուրաքանչյուրը առանձին վերցրած նույնպես կանմահացներ բժիշկ բանասերին: Առաջինը՝ նա գտավ հայ ժողովրդի պատմության, ավելի ճիշտ, մինչեւ 5-րդ դ. հայ նախարարության պատմության հնագույն եւ ամենարժեքավոր փաստաթուղթը՝ գահնամակը, երկրորդը՝ առաջին անգամ գերագանց գիտական լեզվաբանական կարողությամբ, ուսումնասիրեց թիֆլիսահայ բարբառը, երրորդը՝ մի սովոր հատորի մեջ հավաքեց մինչեւ 19-րդ դ. կեսի թիֆլիսահայ եւ արեւելահայ երգիչների-աշուղների ստեղծագործությունները, չորրորդը՝ ուսումնասիրեց Թիֆլիսի հայ համաքարների կյանքն ու կազմակերպական սկզբունքները եւ նրանց ապագայի հարցը, եւ վերջապես հինգերորդ՝ ուսումնասիրեց Սայաթ-Նովայի դավթարը եւ աշխարհին տվեց մեծ երգչի հայերեն գրական ժառանգությունը, բարձր գիտական ուսումնասիրությամբ ու ապարատով, հյուսելով նաեւ երգչի առաջին կենսագրությունը:

Սայաթ-Նովայից շուրջ 100 տարի հետո ծնված այս բացառիկ ազնիվ ու անձնագրի գիտնական-հայրենասերի «Սայաթ-Նովա» աշխատությունը, որին նա ձեռնամուխ եղավ Աբովյանի անհայտացումից երկու ամիս հետո՝ 1848թ. մայիս ամսից սկսած, գիտական մի անօրինակ սխրագործություն էր, որն անմահ փառքով պսակեց այդ երախտաշատ լուսավորչին:

Սայաթ-Նովան երջանիկ է շատերից նաեւ այս տեսակետից, որ առաջին անգամ մեծ սիրով եւ գիտական կարողությամբ նրանով զբաղվեց անցյալ դարի 40-50-ական թթ. մտավորականության այդ ամենատախտաշատ եւ կարկառուն դեմքերից մեկը, որին պարտական է երգչի հայերեն 46 խաղերի առաջին գիտական հրատարակությունը (1852թ.):

Անցյալ դարի 40-ական թվականներին Գ.Ախվերդյանը գիտակցում էր, թե ինչ անմահ գործ է ձեռնարկում՝ հավաքելով, ուսումնասիրելով հայ ժողովրդական երգիչների-աշուղների ժառանգությունը եւ գլուխ բերելով նրանց տպագրությունը:

Սրանցից առաջինը, իրավամբ, եղավ ամենամեծն ու ամենարժանին՝ Սայաթ-Նովան, որի մասին բանասեր բժիշկը հայտնեց իր հայագետ բարեկամին՝ Մոսկվայի պրոֆեսոր Մկրտիչ Էմինին: Իր նամակներից մեկում, գրված 1850թ. մարտի 6-ին (18-ին), Ախվերդյանը գրում է Էմինին, որ «իր ձեռքի տակ է հայտնի ջութակահար (скрипач) Սայաթ-Նովայի 45-50 երգերը, գրված Թիֆլիսի բարբառով եւ որ նրանց մեջ «այնքան շատ է տեղական կոլորիտը, որ ուղղակի հրաշալիք է (чрезвычайно): Դրա հրատարակությունն ինձ շատ է զբաղեցնում, - շարունակում էր Ախվերդյանը, - մանավանդ, որ Սայաթ-Նովայից հետո ես ուզում եմ ընթացքի մեջ դնել Ազբար-Աղամին, Թուրինջին եւ այլոց»: Մ. Էմինը համաձայնում է կատարել Ախվերդյանի կազմած «Սայաթ-Նովա» ժողովածուի խմբագրությունը, դժվարին սրբագրությունը եւ Մոսկվայում իսկ գլուխ բերել հրատարակության գործը, որն անչափ ուրախացնում է Ախվերդյանին:

Այստեղ իսկ միջանկյալ պետք է խոսել վերջին հիսնամյակում տարածված մի թյուրմացության մասին: Հայ բանասերներից շատերը, դեռ չեմ ասում մամուլի աշխատակիցների շրջանում, Գ. Ախվերդյանին համարում են այն մարդը, որը փրկել է Սայաթ-Նովային՝ մոռացումից, փրկելով եւ լույս աշխարհի հանելով նրա ձեռագիր դավթարը՝ հավիտյան կորստից: Պաշտամունքի չափ գնահատելով Գ. Ախվերդյանին, ես չեմ կարող կրկնել այդ «գեղեցիկ հնչող» բառերը: Լավ բան է բանաստեղծությունը, բայց բանաստեղծելը գիտության մեջ, հանուն շատ բաների, մանավանդ սեփական ցանկությունը գեղեցիկ դարձնելու: միջոցով ճշմարտության տեղ անցկացնելը՝ ընդունելի է:

Նախ՝ Սայաթ-Նովայի որդիներն ու թոռները, Քիչիկ-Նովայի վշտացյալ այրիի մակարդակի վրա չեն եղել, որ ոչնչացնեին իրենց հարազատի, մեծ նախորդի ձեռագիր-հիշատակը, որը սուրբ մասունք են համարել՝ սերնդեսերունդ: Երկրորդ՝ եթե անգամ որեւէ պատահարով, կորստի մատնվեր մեզ հասած ձեռագիր դավթարը, ինչպես սրա վրացերեն խաղերի մի մասը՝ հայերեն եւ աղբյուրներն այլ շատ խաղերի հետ, որոնք կորել են անհետ, Սայաթ-Նովան (որոշ չափով պակաս, իհարկե) կրկին կձանաչվեր որպես Սայաթ-Նովա, հե-

ղինակային ձեռագրից դուրս պահպանված խաղերով: Որովհետեւ երգչի որդու՝ Օհանի կազմած ժողովածուի մեջ մնացել է 80 խաղ՝ 26 հայերեն, 26 վրացերեն, 26 աղբյուրներն, 1 երկլեզվյա, 1 չորսլեզվյա խաղ: Դրան գումարած 45-50 խաղ պահպանվել են աշուղական ժողովածուներում եւ այլ արխիվներում (հայերեն մոտ 20, վրացերեն մոտ 10, աղբյուրներն մոտ 20 խաղ) այսինքն՝ այժմյան եղած կեսից ավելին:

Ախվերդյանի կատարած գործի մեծությունը հենց այն է, ինչ գիտեք:

Որպեսզի պատկերացում ունենանք այն ժամանակների համար Ախվերդյանի ձեռնարկության դժվարությունների մասին, որպեսզի վերհիշենք ռուսական կրթություն ունեցող Ախվերդյանի, մոտ չորս տարվա կատարած, տառապալից աշխատանքը, հատկապես թիֆլիսահայ բարբառի քերականության ուսումնասիրության եւ վրացական տառերով գրված մեծ երգչի խաղերի վերծանման վրա, մի փոքր ծանոթանանք նրա հետ, իր իսկ գրած մի քանի տողերով: Նրան գնահատելու համար հիշենք նաեւ այն, որ այդ այն ժամանակ էր, երբ արեւելահայ աշխարհաբարը դեռ գտնվում էր խանձարուրի մեջ, իսկ միջակից բարձր գրագիտություն ունեցող մարդկանց հարյուրներով կարելի է հաշվել:

Պրոֆեսոր Էմինը որոշել էր գրքի տպաքանակը՝ 1200 օրինակ, որը պետք է նստեր այն ժամանակվա համար մի բավականին մեծ գումար՝ 250 ռուբլի, ամբողջը Ախվերդյանի հաշվին: Այդ պատճառով Էմինը խորհուրդ է տալիս բաց անել նախնական բաժանորդագրություն: 1851թ. դեկտեմբերի 22-ին (ն.տ. 1852թ. հունվարի 3-ին) գրած նամակում Ախվերդյանն առարկում է դրան, հետեւյալ պատճառաբանությամբ. ...«*Դու գիտես, որ մերոնք բաժանորդագրությանը նայում են որպես ողորմության. ես չեմ ցանկանում այդ: Ժամանակին ամեն ոք կզնի, ում պետք կգա այդ գիրքը: Ես նրանց չեմ մեղադրում, դա անգրագիտության հետեանքն է... Ես միանգամայն գոհ եմ ու երջանիկ, երբ քեզնից լսում եմ այդքան գովեստի խոսքեր, որոնց արժանի եմ արդյոք, չգիտեմ... Դու գոհ ես ինձնից, իսկ դրանից հետո մարդիկ կարող են այս կամ այն կերպ մեկնաբանել, ինձ համար միեւնոյն է. ես գիտնականի փառք չեմ որոնում եւ վերջապես, ես ի՛նչ*

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

գիտնական են: Ես պատրաստ եմ տքնել նաեւ հետազայում, հենց այս նույն ոգով եւ ոչ այլ կերպ: Ես անձամբ համոզված եմ նման աշխատանքի անհրաժեշտության մեջ եւ պետք է աշխատեմ, քանի դեռ աչքերս ծառայում են ինձ...»:

Ահա ինչպիսի արժանի կնքահայր է ունեցել պատմության մթազնած ծալքերում առժամանակ համարյա մոռացված Սայաթ-Նովան, ահա ղվ է երկրորդ հարությունը տվել հայ ժողովրդի մեծ գավակ Արութինին:

Իսկապես, կես դար ավելի, մինչեւ 1912-1915 թթ., այդ պատմական գրքի մեծագույն մասը մնաց նկուղում, առանց թերթվելու, եւ 30 տարի դրա «լիս զցելուց» հետո, 1982թ. Թիֆլիսում հայերեն գրքերի հրատարակչության ընկերությունը N 13-ի տակ հրատարակեց մայր գրքի 46 խաղերից 20-ը, 2 էջ կենսագրականով եւ 150 բառի բառարանով 36 էջանոց մի գրքուկ եւ 5 կոպեկով շուկա հանեց: Եվ այդ հայ ազգային կուլտուր-քաղաքական բուռն զարթոնքի ժամանակ... իսկ այժմ, ինչպէս են փոխվում ժամանակները:

Այնուհետեւ, Սայաթ-Նովայի կենսագրությունը լրացնելու եւ հայտնի էջերը ծշտելու տեսակետից հայ եւ վրաց գրականության մեջ ու մամուլում առանձին հետաքրքրություն սկսվեց 70-ական թթ. վերջերից սկսած: Մեծ գործ են կատարել հայտնի բանասեր-գիտնականներ Գեորգ Ասատուրը (անցյալ դարի վերջերից մինչեւ մեր դարի 30-ական թվականները), Լ.Մելիքսեթ-Բեկը սկսած 30-ական թվականներից մինչեւ այժմ եւ վերջապես 1916-1931թթ. վրաց նշանավոր գրողներ Ի. Գրիշաշվիլին եւ Գ.Լեոնիձեն: Ադրբեջանում Սայաթ-Նովայի ժառանգության ուսումնասիրության եւ տարածման գործով բուռն հետաքրքրություն սկսվեց 1945 թվականից: Սեյիդովի առանձին ուսումնասիրությունը լույս տեսավ Բաքվում՝ 1954թ. (150 էջ):

Սայաթնովագիտության մինչ սովետական շրջանի հարուստ ժառանգության մեջ առանձին փայլով շողողում են Յովհաննես Թումանյանի եւ ռուս գրականության նշանավոր եւ բազմաբան-քար դեմքերից մեկի՝ Վալերի Բրյուսովի գրածները՝ նրանց կողմից ըստ արժանվույն արված երգչի գնահատականը:

Մեծ գուսան-պոետի կենսագրության եւ նրա ապրած էպիսոպի գնահատման հարցերում շնորհակալ գործ են կատարել Գարեգին Լեոնյանը, Յ. Ջավրյանը, իսկ նրա ժառանգության ուսումնասիրման եւ գնահատման հարցերում հիշատակման արժանի լուծման ռուս գրող Յակով Պոլոնսկին, նկարիչ Գ. Բաշինջալյանը, պատմաբան Լեոն, արեւելագետ Ռուբեն Աբրահամյանը...Մնացած մի քանի տասնյակ բանասերներն ու հեղինակները երգչի կենսագրության հարցերում կատարել են մանր լրացումներ, սրբագրություններ, ուղագրավ առաջարկներ ու գնահատումներ, ուսումնասիրել, տարածել նրա մեղեդիները (Շարա Տայյան, Մուշեղ Աղայան եւ այլն), թարգմանել այլեայլ լեզուներով:


Այս մեծ բանակի մեջ ոմանք էլ կրկնել են հայտնի հեղինակներին, կատարել ընդհանրացումներ եւ ամփոփումներ, զանազան ընդունելի կամ վիճելի առաջարկներ արել, կամ թե նույնիսկ հեռացել իրականությունից իրենց մերժելի առաջարկներով ու եզրակացություններով:

Բավական է հիշատակել, որ 1852-1959 թթ. Սայաթ-Նովայի հայերեն գրած խաղերը, լրիվ կամ ոչ բոլորը, առանձին գրքերով-ժողովածուներով հրատարակվել են 15 անգամ :

Այս քանակը ինքնին վկայում է մեծ երգչի գրական ժառանգության շուրջը վաղուց սկսված հետաքրքրության, նրա հանդեպ արթնացած ինքնաբուխ սիրո բուռն աճը: Սակայն, ավելի քան նշման արժանի է այն, որ այս հարյուրամյակում տասնյակ հեղինակներ այս կամ այն առիթով գրել են բանասիրական շատ հողվածներ, հաճախ սուր բանավեճի բռնվելով երգչի որեւէ գործի, կենսագրական որեւէ էջի շուրջը, անգամ նրա մեկ բառի մեկնաբանության համար: Ջանազան ժողովածուներում եւ մամուլում բազմիցս հրապարակվել են Սայաթ-Նովայի առանձին խաղերը, երբեմն մեկ-երկու տասնյակի չափ, գրվել առանձին ուսումնասիրություններ:

Ավելին, Սայաթ-Նովայի շուրջը ահագին գրականություն է ստեղծվել նաեւ ռուսաց լեզվով, սկսած 1851 թվականից: Այդ տարվա սկզբին ռուս գրող Յակով Պոլոնսկին, Թիֆլիսում, իր ընկեր բարեկամ Գ. Ախվերդյանից ստացել էր, դեռեւս տպագրության միջոցով լույս աշխարհ չտեսած, երգչի ոտանավորներից մի քանիսը, թարգմանել, ծանոթացել կենսագրության հետ եւ ռուսատառ «Կավկազ» թերթում առաջին ջերմ խոսքի, գիտական բարձր գնահատականի հետ հրապարակել իր թարգմանությունները: Սակայն երգչին իր ողջ մեծությամբ ռուս, եւ ոչ միայն ռուս իրականությանը մեր դարասկզբին բացառիկ սիրով եւ մեծարումով ծանոթացրեց ռուսական կուլտուրայի խոշորագույն դեմքերից մեկը՝ բանաստեղծ-գրականագետ Վալերի Բրյուսովը, միաժամանակ տալով 12 խաղի հրաշալի թարգմանությունը: Սայաթ-Նովայի խաղերը ռուսերեն թարգմանած, առանձին գրքով, լույս է տեսել երեք անգամ, 1939, 1945, 1961թթ., չհաշված առանձին ժողովածուներում լույս տեսածները:

Թիֆլիսում՝ Վրաստանում ծաղկած երգչի մասին գրավոր հիշատակություններ պահպանվել են միմիայն վրաց լեզվով եւ վրաց տառերով (չհաշված իր՝ հեղինակի, մի քանի հայերեն նշումները), ուստի, պակաս հարուստ չէ նրա մասին ստեղծված նաեւ վրացերեն գրականությունը: Վերջին 45-ամյակում, մանավանդ երգչի միջավայրի եւ նրա կենսագրության մուգ ու խրթին հարցերին վերաբերող ամենաբովանդակալից հատուկ ուսումնասիրությունները լույս են տեսել վրաց լեզվով: 1918թ. պոետ Ի. Գրիշաշվիլին հրատարակեց Սայաթ-Նովայի վրացերեն գրված 28 երգերի առաջին ժողովածուն, ընդարձակ



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 49 առաջաբանով, պոետ Գ. Լեոնիձեն 1930թ. լույս ընծայեց երգչի կենսագրական էսքիզը, նոր հարուստ փաստերով, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը 1930թ. նույնպես կենսագրական նոր հարուստ փաստերով հրատարակեց մի գիրք, իսկ 1935թ. վրաց լեզվով լույս ընծայեց իր չափածո թարգմանությամբ հայերեն բոլոր խաղերը:

Ադրբեջաներեն լեզվով 1954թ. լույս տեսած առանձին ուսումնասիրությանից գատ մի շարք հոդվածներ են տպագրվել մամուլում, կատարվել են հայերեն և վրացերեն խաղերից թարգմանություններ, իսկ նրա ադրբեջաներեն խաղերի ժողովածուն, դեռեա ոչ ամբողջովին, մեր կողմից պատրաստված է հրատարակության համար:

Սայաթ-Նովայի խաղերից թարգմանված են նաև ուկրաիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և այլ լեզուներով:

Ամենից ուրախալին եւ հատուկ նշան արժանին այն է, որ միայն 1931-1952թթ. ժամանակամիջոցում, սփյուռքահայության միջավայրում, Սայաթ-Նովայի հայերեն խաղերը, կենսագրական և բանասիրական ուսումնասիրությամբ, լույս են ընծայվել 5 անգամ (Բեյրութ, Թեհրան, Ալեքսանդրիա, Պոլիս, կրկին Բեյրութ) և մամուլում գրվել մի քանի, շատ բարձրորակ հոդվածներ:

Այս ամենը ցույց է տալիս, թե ինչպես մեծ գուսանը, ժողովրդական հանճարի ուժով, ոսկի թելերով իրեն կապել է սերունդների հետ:

Այսպիսով, բանասիրության մեջ ստեղծվել է մի նոր ճյուղ՝ Սայաթնովագիտություն, որը հարյուր տարվա ընթացքում ունեցել է բուռն կերպով արտահայտված մի քանի էտապներ, 1850-1856, 1912-1917, 1926, 1930-1936, 1940-1946թթ.:

Գիտության և գրականության մեջ անցյալում ձևանշված շատ խոշոր անուններ են զբաղվել Սայաթ-Նովայով: Գ. Ախվերդյան, Յա. Պոլոնսկի, Գ. Պատկանյան, Գ. Այվազովսկի, Գ. Ասատուր, Ն. Մառ, Ա. Խախանով, Մթածմինդեյի, Ա. Լեյստ, Մ. Չերազ, Ա. Չոբանյան, Յ. Թումանյան, Գ. Բաշինջաղյան, Վ. Բրյուսով, Ի. Գրիշաշվիլի, Գ. Լեոնյան, Գ. Լեոնիձե, Լեո, Լ. Մելիքսեթ-Բեկ, Կ. Կեկելիձե, Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան և շատ ուրիշներ: Սրանցից Գրիշաշվիլին, Մելիքսեթ-Բեկը և Լեոնիձեն դեռ շարունակում են երգչի շուրջը իրենց հե-

տաքրքրությունը:

Մեծ գուսանի ազդեցությամբ, հայ, վրացի, ադրբեջանցի շատ աշուղներից գատ, բանաստեղծություններ են գրել Բեսիկյան (Գաբաշվիլի), Գր.Օրբելիանին, Յա. Պոլոնսկին, Եղիշե Չարենցը և ուրիշներ:

Մինչեւ այժմ Սայաթ-Նովայից մեզ հասել է հայերեն 66 խաղ, որից մեկը, դեռ բանասիրական ուսումնասիրության չենթարկված, հրապարակվեց վերջերս «Սովետական Վրաստան» թերթում (27-6-63թ.) ուստի տեղ չգտավ սույն ժողովածուում: Դրան գումարվում է նաև երկու հատ երկլեզվյան (հայերեն-թուրքերեն) և մեկ հատ քառալեզվյան, ընդհամենը 69 հատ: Սրանցից 48 լրիվ հայերեն խաղեր և 3 հատ խառն լեզուներով (51) պահպանվել են հեղինակի ձեռագրի դավթարում, 8 հատը երգչի որդի Օհանի ժողովածուի մեջ (59), 4-ը բանահավաք Գ. Թարվերդյանի գտածներից, 3-ը զանազան աղբյուրներից: Վրացերեն խաղերից 26-ը պահպանվել են Օհանի կազմած ժողովածուի մեջ, մոտ 10 հատ զանազան ժողովածուներից ու արխիվներից (1-2-ը դեռ վիճելի է): Դրանցից հայերեն թարգմանված է 32 հատ:

Ադրբեջաներեն (ազերի թուրքերենով) գրված անթերի խաղերից 105-ը մնացել է հեղինակի դիվանում-դավթարում, 3-ը՝ Օհանի ժողովածուում (մնացած 23-ը կան մայր դավթարում) և 7 հատ հայտնաբերել է Գ. Թարվերդյանը, ընդամենը 115 լրիվ խաղ: Դավթարում կա նաև 3 անավարտ խաղ (2-ը 8 տողից, 1-ը՝ 6), այս բոլորի քանակը հասնում է 118-ի:

Սրանցից բացի, դավթարում մնացել է նաև 7 առանձին խաղերի առաջին քառատողերը՝ տունները, որոնց հետ միասին ադրբեջաներեն լրիվ և անավարտ խաղերի քանակը հասնում է 125-ի: Եթե սրանց գումարենք նույնպես դավթարում գետեղված 2 հատ պարսկերեն-թուրքերեն լրիվ խաղերը, ապա ընդամուր քանակը կհասնի 127-ի, վերը նշված հայրենախառը խաղերի հետ՝ 130-ի: Ըստ որում, վերը նշված 7 կամ 9 հատ անավարտ խաղեր բառերի տակ չպետք է հասկանալ այնպես, որ երգիչը դրանք սկսել և չի ավարտել, այլ դրանք տետրերի մեջ ավարտված են եղել, բայց առաջին տունները նախապես դասավորել, տեղադրել է ըստ դիվանի՝ (արեւելյան բանաստեղծություն-

ների ժողովածուի) կարգի, սխտեմի, այն էլ հայերեն նոտրգրով, բայց ինչ-ինչ պատճառով չի կարողացել շարունակել, որովհետեւ նկարել նոտրգրով մեծ ժամանակ էր պահանջում, որից զրկվեց Սայաթ-Նովան և չկարողացավ իր այդ նպատակն օգտագործել: Ու ստիպված եղավ հայկական կամ վրացական սովորական արագագրով լրացնել այս կամ այդ նույն երգերը, որոնց 4 տողը գրված էր նոտրգրով, կամ ազատ մնացած էջերում այլ խաղեր տեղադրել, թողնելով այդ 4 տողերն անավարտ: Այդ է պատճառը, որ մեր գրականության մեջ տարածվել է այն վերսիսան, թե Սայաթ-Նովան թուրքերեն-ադրբեջաներեն խաղերը գրել է հայկական տառերով, իսկ հայկական խաղերը՝ վրացական տառերով (որովհետեւ հայերեն խաղերը պահպանվել են մի մասով՝ հին վրացատառ դիվանում, իսկ մեծ մասով սեւագիր տետրերի մեջ):

Քահանա ձեռնադրվելուց և Թիֆլիսից վտարվելու օրերին Սայաթ-Նովան իր այդ ձեռագրերը թողել է իր ընկերոջ, պալատական գեղագիր Պենդելենց Օհանի (Իովանեի) մոտ, որպեսզի վերջինս արտագրի, ինչպես վայել է դիվանին, բայց վերջինս երեւի չի հասցրել կամ կատարածը անդարձ կորել է Թիֆլիսի ավերման ժամանակ:



Սույն ժողովածուն փաստորեն, վերահրատարակությունն է 1945 և հատկապես 1959թ. լույս տեսած (նույնպես մեր կազմած) երկու ժողովածուների:

Առաջին անգամ 1945թ.-ին հայերեն խաղերի հետ լույս աշխարհի հանվեցին Սայաթ-Նովայի 57 ադրբեջաներեն խաղերը (եղածի մոտ կեսը), ինչպես նաև 25 վրացերեն խաղ, բոլորը թարգմանված հայերեն, սակայն երգչի լեզվով՝ թիֆլիսահայ բարբառով: Երկրորդ տարբերությունն այն է, որ հայերեն հայտնի խաղերը համեմատվել են հեղինակի և նրա որդու կազմած ձեռագրերի՝ վրացատառ դավթարների հետ, ճշտված և լրիվ մեկնաբանված: Ապա՝ լրացված նոր, ամբողջական բառարանով և հակիրճ ծանոթագրություններով:

Ավելի քան տասներեք տարի հետո երկրորդ անգամ վերահրատարակվող ժողովածուն տարբերվում է իր նախորդից համեմատաբար ոչ մեծ չափով:

Չհաշված խմբագրական մանրա-

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մասնությունները եւ շատ հակիրճ կենսագրակա- նը, երկրորդ ժողովածուի մեջ զետեղված էին երգ- չի բոլոր, թվով 65 հայերեն խաղերը (որից երեքը՝ հավելվածում) եւ 3 կիսահայերեն խաղեր՝ տարա- լեզու տողերը կամ կիսատողերը (ադրբեջաներեն, պարսկերեն, վրացերեն) թարգմանված հայերեն:

Ճիշտ է, ոչ մի նոր խաղ չէինք «հայտնաբերել», բայց այստեղ ամփոփված 65, ավելի ճիշտ, 68 խա- ղերը համարում ենք Սայաթ-Նովայից մեզ հասած հայերեն երկերի առաջին լրիվ ժողովածուն, ոչ միայն նրա համար, որ նախորդ ժողովածուները պարունակել են 46, 54, 60 (իսկ մեր կազմած սրա նախորդ գիրքը՝ 58) հայերեն խաղ, այլ այն պատ- ճառով, որ համարյա լրիվ վերականգնված է ինը, թերի վերծանված կամ աղավաղված ու կիսատ խաղ, երկուսը անջատված հայտնի խաղերից եւ ինքնուրույնություն ստացած, եւ վերջապես, երգչին վերագրվող եւ հրատարակված զանազան խաղե- րից, մանրագնին ուսումնասիրությունից հետո որոշ վերապահությամբ, մի քանիսը տեղ գտան անվի- ճելի խաղերի շարքում: Ինչ վերաբերում է երգչի անունով հրատարակված մի քանի այլ խաղերին, ապա սրանց քաղաքացիական իրավունք տալը, թեկուզ գրքի հավելվածում, մեր կարծիքով, կլիներ սրբապղծության հավասար արարք: Այս անգամ հայերենի բաժնում ոչ մի հավելում չի կատարված:

Սայաթ-Նովայից մեզ հասած վրացերեն ժա- ռանագությունից թարգմանվել էին կրկին 7 խաղ, որից 3-ը, բնագրում իսկ, անհասկանալի վիճակում էին եւ երկար ժամանակից հետո միայն հնարավոր եղավ վերականգնել ու վերծանել: Սրանով համա- րյա ավարտվում է վրացերեն բաժնի թարգմանու- թյունը, բացառությամբ մեր ձեռքի տակ չգտնվող մի երկու խաղերից, որոնք դեռ կարոտ են լրացու- իչ ուսումնասիրության:

Ադրբեջաներեն լեզվով գրված խաղերից երկ- րորդ հրատարակության մեջ ավելացել էին 14-ը, որով նրանց քանակը հասավ 71-ի՝ կազմելով այդ լեզվով մնացած ժառանգության մոտ երկու երրոր- ղը: Ըստ որում, չհաշված աննկարագրելի բար- դությունները, ինչպես կենսագրական, այնպես եւ արվեստի հեղինակի աշխարհահայացքի տեսա- կետից շատ կարեւոր են վրացերենից եւ ադրբե- ջաներենից նոր թարգմանված այս խաղերի մի զգալի մասը: Եվ այս ամենով արդեն ստացվում է Սայաթ-Նովայի ու նրա թողած ժառանգության թո- դած պատկերը:

Երկրորդ ժողովածուն պետք է հրատարակվեր 1952 թվականին՝ նվիրված պաշտելի հայագետ- քիչկ Գետրգ Ախվերդյանի կազմած Սայաթ-Նո- վայի («Գուսանք Ա.») առաջին եւ աննման ժողո- վածուի լույս ընծայման 100-ամյակին, բայց որոշ հանգամանքների պատճառով հնարավոր չէրավ ժամանակին իրագործել այդ: Սակայն, եթե նկա- տի ունենանք, որ Սայաթ-Նովայի ժառանգության յուրաքանչյուր խաղը, նույնիսկ տողն ու բառը դար- ձել է, այսպես ասած «մասունքի» պես մի բան,

ապա այս ուշացած հրատարակության նոր էջերի կեսից ավելին, թերեւս վարձահատույց եղան այդ մեր գեղեցիկ ու երախտապարտ ծրագրի իրակա- նացմանը:


Ինչպես կնկատի ընթերցողը, հայերեն եւ ադրբեջաներեն լավագույն երգերի մեծ մասը գրված է ուղիղ 200 տարի առաջ՝ 1758 եւ 1759 թվականներին, 40-ը անց երգչի ստեղծագործա- կան բուռն վերելքի ու փայլատակման տարիներին: Բայց հենց 1759 թվականից էլ կտրվում է ստեղծա- գործական կյանքի թելը: Չափածո խնդրանքների, գանգատների ու բողոքների լքման ու հալածման կարճատեւ մի շրջանից հետո ամբաստանված պոետը եկեղեցի է մտցվում, վտարվում Թիֆլիսից եւ դադարում Սայաթ-Նովա լինելուց, թեւս դրանից հետո ապրում է ավելի քան երեք տասնյակ տարի: Այս տեսակետից կարծես երկրորդ հրատարակու- թյունը օբյեկտիվորեն համընկավ որոշ տարեդար- ծի հետ :

Թեւս 1945թ. հրատարակված գրքի առթիվ լույս տեսած գրախոսականում ասվեց, որ «Սայաթ-Նո- վայի վրացերեն եւ ադրբեջաներեն տաղերը ավելի շուտ նպատակին կհասնեին, եթե թարգմանվեին գրական հայերենով» («Տեղեկագիր», ՀԳԱ, Հաս. բաժ. 6, 1946), բայց մենք կրկին շարունակեցինք թարգմանել թիֆլիսահայ բարբառով, քննադատի (եւ մեր) այդ ցանկության իրականացումը թող- նելով հետագային: Այդ կենսական հարցը միայն այսուհետեւ կարելի է հրապարակ քաշել, որպես օրակարգի հարց, որը շատ վաղուց ծառայել է Հ. Թումանյանի եւ արեւմտահայ հեղինակների առջեւ: Ի դեպ, 1944թ. Եգիպտոսում (Ալեքսանդրիա) լույս տեսած ժողովածուի մեջ 20 խաղ զուգահեռ տրված է արեւմտահայերենի վերածված: Մենք այս ժողո- վածուի հավելվածում եւս պահում ենք միայն չորս խաղի նմուշ հրապարակային քննարկումը շարու- նակելու նպատակով:

Սույն 3-րդ հրատարակությունը, նվիրված Սա- յաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին, որոշ չափով տարբերվում է 2-րդ հրատարակությունից: Ինձ համար այդ կատարվեց անասելի շտապողակա- նությամբ: Թերեւս ամենից ուշագրավն այն է, որ կարողացա հայ ընթերցողների սեփականությունը դարձնել երգչի 14 ադրբեջաներեն խաղերը՝ նոր թարգմանությամբ, ընդհանուր քանակը հասցնե- լով 85-ի: Իրենց որակով սրանք թերեւս զիջում են արդեն ծանոթ շատ խաղերի, բայց ունեն իրենց տեղն ըստ ամենայնի: Մանավանդ որ յուրաքան- չյուրի մեջ ընթերցողը երկուսից-չորս տող գոհար կգտնի, իսկ այդ քիչ չէ:

Երկրորդն այն է, որ ընդարձակված է երգ- չի կենսագրական ակնարկը, երրորդը՝ մասամբ լրացված, սրբագրված են ծանոթագրությունները, բառարանը եւ անցյալում թարգմանված որոշ խա- ղեր: Չորրորդ, այս ժողովածուն, առաջինի նման, հրատարակվում է նկարչական շքեղ ձեւավոր- մամբ:

Ս. Յ.



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սայաթ-Նովա.

Կենսագրական ակնարկ

ՄՈՐՈՒՍ
ՀԱՄԱԲԱՅԱՆ

Հայ ժողովրդի երգիչ-գուսան Սայաթ-Նովան պատկանում է գրականության և արվեստի այն բացառիկ դեմքերի շարքին, որոնց ստեղծագործական ժառանգությունը հաջող քննություն է հանձնում ամենամեծ քննադատին՝ ժամանակին, և իրենք էլ, որքան հեռանում են դարերի խորքը, այնքան բյուրեղանում, պայծառանում են և դառնում գալիք սերունդների սիրելին:

Հարուստ է միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգուների թողած ժառանգությունը, թեև այն հասել է մեզ ոչ ամբողջությամբ: Միայնված չենք լինի, եթե ասենք, որ հայ տաղերգության լեռնաշղթայի բարձր գագաթներն են Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրացին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգոր Աղթամարցին և Նաղաշ Հովնաթանը: Եթե, իրավագիտորեն, հանդիմանություն ստանանք այս անունների քչության համար, ապա այդ միմիայն ուրախություն կպատճառի մեզ, սակայն համոզված ենք, որ բոլոր հայ ընթերցողների և մասնագետների կարծիքն արտահայտած կլինենք, եթե ասենք, որ *Սայաթ-Նովան հայ տաղերգության լեռնապարի բարձրագույն գագաթն է*, որ 13-18-րդ դարերի այդ նշանավոր տաղերգուների համաստեղության մեջ նա փայլում է որպես առաջին կարգի մեծության աստղ, որովհետև իր բանաստեղծական հանձարի ուժով ժողովրդական-աշուղական արվեստը հասցրեց համաշխարհային պոեզիայի բարձրագույն աստիճանին:

Սակայն այս չէ միայն, որ ժողովրդի գավակ գուսան-բանաստեղծին դնում է բացառիկ վիճակի մեջ, Սայաթ-Նովան նույնպիսի տաղանդով, ժամանակակիցների վկայությամբ, միաժամանակ հանդես է եկել որպես անզուգական



Եթե Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը դասավորենք ըստ թեմատիկայի, ապա խաղերը շարենք հերթականությամբ, կստացվի չորս աննման պոեմ՝ նվիրված սիրո, խրատի, բողոքի և բնության ու հասարակական կյանքի ներդաշնակությանը (արդարության, ազնվության, բարեկամության):

նվագող. որպես գերող ձայնով օժտված երգիչ, որպես ստեղծագործող երաժիշտ, որի հուզիչ, ախորժալուր երգերը հաճույքով ու անձանձիր լսել և լսում են ոչ միայն Հայաստանում և Անդրկովկասում, այլև շատ հեռուներում: Ավելին, Սայաթ-Նովան բացառիկ է և նրանով, որ համարյա հավասար ուժով տաղեր է հորինել երեք լեզվով՝ ոչ միայն իր մայրենի լեզվով, այլև վրացերեն և ադրբեջաներեն (նույնիսկ պարսկերեն), քաջ տիրապետելով այդ բոլոր լեզուներին:

Դեռ էլ ավելին, երկու հարյուր տարի առաջ հայ և վրաց գրականության մեջ Սայաթ-Նովան հիմք է դրել ժողովրդական-աշուղական նոր դպրոցների (արեւելյան ձեւի) և ամենայն իրավունքով պատվավոր տեղ գրավել այդ երկու, դարերով ամենամոտիկ ժողովուրդների գրականության պատմության էջերում: Ինչպես տեսնում ենք, «մուսաները» ոչինչ չեն խնայել անհայտ ու աղքատ ընտանիքից ելած կիսաճորտ պատանի Արուֆինին: Բայց ավելի ճիշտ է ասել՝ նրա բնական առատ ու ներդաշնակ հատկությունները, ավելի քան երկու հարյուր տարի առաջ հասարակական շատ կարճատեւ ամառ ապրող մի ժամանակաշրջանում պարարտ հող են գտել ժողովրդական հանձարի անդաստանում, սնվել ժողովրդական ստեղծագործության վճիտ ու անսպառ ակունքներից:

Ուստի զարմանալի չէ, որ այս հանձարեղ ռամիկը յուրահատուկ է նաեւ իր կենսագրությամբ:

Նախապես խոստովանում եմ, որ ինձ համար բավական դժվար է Սայաթ-Նովայի կենսագրությունը շարադրելու համար գրիչ վերցնելը, թեև երկար ժամանակ այդ առիթով բազմիցս հորդորներ եմ լսել և հանդիմանություններ ստացել իմ բարեկամներից և մասնագետներից:

Եթե հասարակությանն զբաղեցնող անհատը իր անմիջական ժամանակակիցների կողմից գրավոր կենսագրության տեր չի դարձել (կամ այն եղել է ու կորել), ապա դարեր հետո նրա կենսագրությունը ենթարկվում է «դրական չարչարանքի»: Բանասիրական միտքը խլրտում է, երբեմն բորբոքվում որոշ դադարներից հետո: Գրականությունը, մամուլի հետ, հեղեղվում է թեր ու դեմ կարծիքներով, առաջարկներով: Սերունդների անզուգական հարցասի-

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րության տարափի տակ նորանոր գյուտեր են արվում, երբեմն էլ հորինվում են մտացածին բաներ, իհարկե, տքնություն չսիրող եւ անիրազեկ մարդկանց կողմից: Վերջիններիս գրիչը շարժվում է ավելի հեշտ ու թեթեւ, ոչ միայն անվիճելին կրկնելով, այլեւ պակասն ու կասկածելին լրացնելու եւ պարզելու բուռն ցանկությամբ: Երանք փորձում են նույնպես նոր խոսք ասել, սպառելով իրենց բանասիրական եռանդի վառողը, հաճախ ավելի թանձրացնելով անհայտ հարցերի մշուշը: Սակայն անվիճելի է մի բան, որ բոլորն էլ ցանկանում են դրական եւ հանրագուտ գործ կատարած լինել գիտության համար, սիրված անձնավորության հիշատակի համար: Այդպես է գիտության օրենքը: Հիշենք Շեքսպիրի կենսագրության դարավոր հարցը, հիշենք Սայաթ-Նովայից մոտ հարյուր տարի հետո ասպարեզ իջած հաչատուր Աբովյանի կենսագրության շուրջը ծագած հարյուրամյա վեճը:

Սայաթ-Նովայի կենսագրությունը հյուսելու համար փոքր քանակով, այն էլ կտրտված թելեր են մնացել: Դրանք հանդիպվում են իր՝ երգչի եւ նրա որդի Օհանից մնացած ձեռագիր դավթարների եւ Սայաթ-Նովայի կազմած մի եկեղեցական ժողովածուի էջերում, ապա երգչի ժառանգների եւ նրա ծերության շրջանի հայ եւ վրացի ժամանակակիցների հարեանցի, երբեմն էլ հակասական, գրավոր տեղեկություններում եւ բանավոր հաղորդած ժլատ հուշերում: Եվ այս ամենը հավաքվել եւ հանգուցվել է աստիճանաբար, ավելի քան հարյուրամյա ժամանակամիջոցում՝ սայաթնովագիտության սկզբնավորումից:




Ո՞վ էր Սայաթ-Նովան-Յալեպից եկած ոմն պանդուխտ Կարապետի եւ Թիֆլիսի արվարձան Յավաբարում բնակված Սառայի որդին: Այս անվիճելի է, մի քանի անգամ նշված հենց իր՝ Սայաթ-Նովայի գրչով:

Ո՞վ էր Կարապետը եւ ինչո՞ւ էր 18-րդ դարի սկզբին Սիրիայից հասել Քուռ գետի ավազանը: Այն ժամանակներում սովորական երեւոյթ էր բախտ որոնելու, գլուխ դնելու համար ապահով տեղ գտնելու նպատակով հեռունները չվելը, նույնիսկ մուրացկանության ցուպն առած երկրից երկիր անցնելը: Այդ սովորական էր մանավանդ հայերի համար, որոնք հաճախ էին ենթարկվում տնտեսական եւ ազգային-կրոնական ճնշումների: Նման հալածանքի ենթարկվեց Յալեպի բնակչությունը 1705 թվականից, երբ Կարապետը շուրջ 20 տարեկան երիտասարդ պետք է լիներ: Պետք է ենթադրել, որ Կարապետի հայրն էլ (գուցե Սայաթ անունով) Յալեպ էր եկել Ադանայից, թերեւս հենց փոքրիկ Կարապետի հետ, ինչպես կարելի է կռահել երգչի աղբրեջաններն ոտանավորներից մեկի վերջին տողերից. «Սայաթ-Նովու հոր վաթանից հարց կուտան, ասում է վուր Յալարն է կամ Ադանան»: Ենթադրել, թե վերջին անունը հանգի համար է

գործածված, չի կարելի, որովհետեւ Միջագետքի եւ Պաղեստինի հայ բնակչությունը մեծ մասամբ համալրվում էր Ադանայի մարզից, Կիլիկիայից: Երգիչը իր հորն անվանում է Մահտեսի կամ Մղդսի Կարապետ: Մուղղուսի-Մուղսի-Մահտեսի համեստ «տիտղոսը» Յայաստանում սովորաբար տրվում էր Երուսաղեմ ուխտ գնացածներին, անկախ նրանց տարիքից ու սեռից, իսկ Յալեպից Երուսաղեմ գնալը առանձին հոգնություն ու ծախս չէր պահանջում: Սակայն Մուղսի էին կոչում, մանավանդ վիրահայերը, նաեւ սովորական ժամկոչին, եկեղեցու զանգահարին ու լուսարարին, որպիսի պաշտոնը հանձնարարում էին գյուղի եւ քաղաքի ամենաթշվառ կամ դարիք մարդկանց՝ չնչին վարձատրությամբ: Այս դեպքում դժվար ենթադրելի է, որ նման աշխատանքը հանձնարարվեր 20-25 տարեկան երիտասարդին, որքան էլ նա դարիք լիներ: Նվազ չափով հնարավոր է, որ Մուղսի Կարապետը եղել է նաեւ շրջիկ նվագող, որովհետեւ երգչի որդի Օհանը իր հոր «Քամանչա» խաղի տակ, վրացերեն, ծանոթագրում է. «Այսպես, Սայաթ-Նովան գովում է մեր հայրական (վրացերեն-մամուլի) քամանչան»: Իհարկե, հայրական ասելով կարելի է նախ հասկանալ իր հոր հայտնի քամանչան, բայց պայպենականը եւս կարելի էր հայրական անվանել:

Վրաստանի վերջին Գիորգի թագավորի որդիներից Թեյմուրազը (1782-1846), անտարակույս, անձամբ տեսել էր Սայաթ-Նովային՝ նրա ծերության ժամանակ, ծանոթ էր երգչի եռալեզվյան ստեղծագործություններին եւ ինքն էլ տիրապետում էր այդ լեզուներին: Պետերբուրգում նա պատվիրել էր Սայաթ-Նովայի որդի Օհանին՝ իր համար կազմելու Սայաթ-Նովայի խաղերից մի ժողովածու: Իր պատրոնի այս պատվերը բարեխղճորեն կատարում է Թեյմուրազի մոտ ապաստան գտած, նույնպես վարժ նվագող, երգչի որդին 1823 թվականին, երբ ինքը շուրջ 65 տարեկան էր: Պատմագրական հարցերում հմուտ գիտնական, Ռուս. Գիտ. ակադեմիայի պատվավոր անդամ արքայազն Թեյմուրազը, իր նոթերում, ի միջի այլոց, Սայաթ-Նովայի մասին գրում է նաեւ հետեւյալը. «Այսպես Սայաթ-Նովան Էրեկլե 2-րդի ժամանակ ձորտագրված էր Գիորգի 13-րդի (այսինքն՝ իր հոր-Մ.Յ.) մոտ եւ համարվում էր արքայազուն Գիորգիի ձորտը: Սակայն հաճախ լինում էր Էրեկլե թագավորի մոտ, որովհետեւ շատ լավ սազանդար էր, զանազան գործիքներ նվագող: Նվագում եւ միաժամանակ ստեղծագործում էր եւ երգում զանազան երգեր: Նա Վրաստանի հայերից էր - Գիորգի 13-ին պատկանող արքունական Սանահին գյուղից: Ստեղծագործում էր հայերեն եւ թուրքերեն երգեր ու բանաստեղծություններ, նվիրված զանազան դեպքերի: Յուրաքանչյուր դեպքին զարմանալի սազեցնում էր հարմարավոր, խելացի տողեր ու երգում: Թեեւ պարզ, հասարակ տողեր էին դրանք, ժողովրդական գունավորումով կազմած, >>> 54



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«53 բայց խիստ դուրեկան» (Գ. Լեոնիձեի «Սայաթ-Նովա» գրքից):

Պանդուխտ Կարապետը հազիվ թե հիմնավորված լիներ Սանահնում եւ այստեղից գաղթած կամ տեղափոխված վրաց մայրաքաղաքը: Հավանականը նախ Թիֆլիս գալն է, ուր 1710-ական թվականներին ամուսնանում է, անտարակույս սանահնեցի ծնողների գավակ, Հավաքար թաղում բնակված Սառայի հետ, ապա վերադառնում Սանահին, կամ Թիֆլիսում ծնված իր փոքրիկ Արուֆինի հետ, կամ վերջինս ծնվում է Սանահնում՝ վերադարձից հետո: Երկու դեպքում էլ երգչի ծնողները, Վրաստանում ընդունված կարգով, պարտավոր էին կալվածատիրոջ ցուցակում գրանցվել որպես գլեխի, այսինքն՝ անձնական ազատությունից չզրկված ճորտ կամ կիսաճորտ՝ պարտագրված որոշակի ժամանակով: Այդ պարտագրության ժամանակը սովորաբար դառնում էր մշտական եւ անցնում ժառանգներին: Երգիչը իր վրացերեն հայտնի բողոքոտանավորի մեջ պարզ ասում է՝ Սէ գլեխի վար, թավադրբա արմինդա (ես գլեխի եմ, թավադ-իշխան լինել չեմ ուզում): Իր խաղերի մեջ երգչի բազմիցս գործածած դուլ, ստրուկ բառերը սոսկ բանաստեղծական արտահայտություններ են: Մի այլ ոտանավորի մեջ երգիչը ասում է. «Սայաթ-Նովուն Գուրգեն խանի դուլը կոսին ճմարիտ է»: Գուրգենը դա հենց նույն Գիորգի թագաժառանգն էր, իսկ խան ասվում էր, որովհետեւ դեռ թագավոր չէր եւ մանուկ էր կամ պատանի: Ուստի երգչի հոր՝ Կարապետի Սանահին գյուղի հետ կապ հաստատելու պատճառը պետք է ընդունել հենց նրա կնոջ՝ Սառայի, սանահնեցի լինելու հանգամանքով, որը թերեւս փոքր ժամանակ ծնողների հետ գաղթած կամ գնացած լինի Թիֆլիս եւ ամուսնանալուց հետո խաղաղ պայմաններում վերադարձած իր հայրենի Սանահին գյուղը, հայրական սեփականության վրա:

Այս ենթադրությանը զորավիզ են մի քանի այլ փաստեր. նախ երգչի դպրոցական հատուկ կրթություն ստանալու հանգամանքը, որը Սանահինի հին ու հռչակված վանական դպրոցից բացի, այլ վայրում հնարավոր չէ տեղադրել: Երկրորդը, երգչի խաղերում Լոռու բարբառից մեծ քանակությամբ ոճերի, առածների, դարձվածքների առկայությունն է, որոնք իրենց քանակով

պակաս չեն թիֆլիսահայ բարբառից քաղածներից, սրան գումարած Լոռու եւ Բորչալուի թուրք-ադրբեջանական բարբառի ազդեցության առկայությունը երգչի ադրբեջաներեն խաղերի մեջ: Երրորդը, Սայաթ-Նովայի կին՝ Մարմարի Լոռու Այգեհատ գյուղացի Շավերդու դուստրը լինելու հավանականությունն է, որպիսի ենթադրություն առաջինը, միանգամայն իրավացի կերպով, կատարել է պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Քեկը եւ հետագայում այդ համոզմունքին էի եկել ես ինքս, երգչի դավթարի լուսանցքներում, նրա որդու՝ պատանի Մելքոյի խզբզոցներից: Իրոք, Շավերդուի պապը այդ ժամանակի մարդ է եղել՝ հանդիսանալով ամայացած Այգեհատ գյուղի նոր հիմնադիրը: Հավանաբար հենց այդ ժամանակ էլ Շավերդին եթե ազնվականի կոչում չուներ, գոնե մի ունետուր եւ ազդեցիկ ընտանիքի տեր մարդ էր, որի ժառանգները հետագայում դարձան ամբողջ գյուղի միակ ու միատոհմ բնակիչները: Չհաշված հոգեւորական դարձած Սայաթ-Նովայի Հաղպատի վանքում հիմնավորվելու փաստը, որը շատ մոտիկ էր Սանահինի, երգչի այդքան մոտիկությունը Լոռու բարբառին պետք է համարել ոչ միայն նրա սոսկ այնտեղացի լինելը եւ Սանահնում սովորելը, որքան նրա մոր լռեցի լինելու հանգամանքը, ինչքան էլ որ Լոռու հայ բնակչությունը սերտ շփման մեջ լինել իրենց միակ քաղաքի՝ Թիֆլիսի հետ:

Մեր բանասերներից ոմանք, ինչպես Գ. Ասատուրը, Գ. Լեոնյանը, վիճում էին ոչ միայն Գ. Լեոնիձեի հետ, այլեւ առարկում նրա անվիճելի աղբյուրը հանդիսացող համարյա երգչի ժամանակակից վրաց արքայազն Թեյմուրազին, որ եթե Սայաթ-Նովան ինքը կրկնել է իր թիֆլիսեցի լինելը, ուրեմն Թեյմուրազը սխալվել է երգչի սանահնեցի լինելու հարցում: Նրանք մոռանում էին, որ ոչ միայն այն ժամանակներում, այլեւ մինչեւ մեր դարի սկզբները, հատկապես արեւելքի եւ Կովկասի մարդիկ իրենց հայրենիքը համարում էին ոչ այնքան իրենց ծննդավայրը, այլ՝ հոր ու պապի: Հենց ինքը՝ Սայաթ-Նովան, դեռեւ չհրապարակված ադրբեջաներեն խաղերից մեկում, իրեն ուղղակի կոչում է «Սայաթ-Նովա Հալեպցի»: Սայաթ-Նովան որպես դեմք, որպես գործիչ, որպես վրաց մայրաքաղաքի արգասիք, որպես վրաց պալատական

երգիչ, իրեն ամենայն իրավամբ պետք է համարեր թիֆլիսեցի, անկախ նրանից, թե որտեղ է ծնվել՝ Սանահնում, թե Թիֆլիսում: Այդպես են իրենց կոչել միջնադարյան արեւելքի շատ գործիչներ, բանաստեղծներ: Այդպես իրենց կոչել են Կիրակոս Գանձակեցին, նրանից շատ հետո Արեւմտյան Հայաստանում ծնված, մեծացած, բայց Սյունիքում հռչակված Գրիգոր Տաթեւացին, Սյունիքից ոչ հեռու՝ Դվին մայրաքաղաքում ծնված ու սնված 7-8-րդ դարերի հռչակավոր գիտնական-փիլիսոփա Ստեփանոս Սյունեցին եւ շատ ուրիշներ: Ուստի վիճել վրաց Թեյմուրազ արքայազնի հաղորդած փաստի դեմ ոչ միայն սխալ է, այլեւ անարդար:

Սայաթ-Նովայի հայրը՝ պանդուխտ Կարապետը, ըստ երեւոյթին ապրել է շուրջ 75 տարի: 1758թ. գրված ադրբեջաներեն մի խաղում երգիչը արտահայտում է «մորից ու եղբորից զրկվելու» իր վիշտը: Այս մանրամասնությունը նշում ենք այն պատճառով, որ աշխարհ տեսած եւ օտար լեզուներից նվազագույնը՝ թուրք-օսմաներենը եւ արաբերենը իմացող Կարապետը երկար ժամանակ է ունեցել իր ուշիմ որդու հետ զրուցելու, նրա հարցասիրությունը բավարարելու համար, եւ որ ավելի կարեւորն է, սովորեցնելու թուրք-օսմաներենը եւ արեւմտահայ բարբառներից մեկը, որով երկար տարիներ խոսել է նա, գուցե եւ գեթ որոշ չափով որդուն ծանոթացրել արաբերենի հետ, որին երեսում է բավականին ծանոթ էր Սայաթ-Նովան: Այն ժամանակ արաբերենը ավելի շատ տարածված էր, մուսուլմանական բոլոր հոգեւոր դպրոցներում՝ մադրասաններում եւ հատկապես քաղաքային մզկիթներում, որտեղ էլ դրանք գտնվելու լինեին, գրագիտություն սովորեցնելու պարտադիր լեզուն արաբերենն էր, պոեզիայի եւ գրագրության լեզուն՝ պարսկերենը: Վերջինս սովորեցնում էին նաեւ հայկական դպրոցներում: Իսկ Սայաթ-Նովայի պարսկերեն իմանալը, ինչպես նաեւ արաբական այբուբենով վարժ գրել-կարդալը ոչ մի կասկածի ենթակա չէ:

Չարմանալի կերպով Սայաթ-Նովայի ծննդյան թվականը ավելի շատ է զբաղեցրել բանասերներին, քան մի քանի այլ կարեւոր հարցեր, կապված նրա ստեղծագործության եւ կենսագրության հետ: Գ. Ավետիսյանից սկսած երգչի ծննդյան տարին ընդունված է 1712

ՍԱՅԱԹԵՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

թվականը: Վերջին հիսնամյակում այդ թվականի դեմ եղան առարկություններ՝ վեճը տարուբերելով մեկ տասնամյակի միջև:

Ավելի կարեւորն այն է, որ ապագա երգչի մանկության տարիներին նրանց ընտանիքը ապրել է Սանահնում, իսկ 1719 թվականին, լեզգիների ասպատակության ժամանակ, գուցե եւ 1723թ. ամառը, թուրքական արշավանքի ժամանակ, որը գյուղի հետ գաղթել է Թիֆլիս: Այստեղ է, որ պատանի Արուֆինը սովորում է արհեստ՝ երեւի ջուլիակություն: Գ. Ախվերդյանը անվերապահ գրում է. «Պատիկ Արուֆինին տալիս են աշկերտ մի ջուլիակի մոտ. խիստ աջքաբաց ըլելով, կարճ ժամանակում էնքան վարպետանում է Արուֆինն, որ ինքն իր համար մի մեքենա է հնարում, որով կտավը երկայն փողոցի մեջ հինելու տեղ, հինում եւ գործում է էլել իր սենյակում»: Այս ավանդությունը մասամբ համընկնում է երգչի «կենսագրական» ոտանավորին, ուր ասված է.

Տասներկու տարեկանում ինձ հանձնեցին ուստաբարին.

Տասներեք տարեկանում իմ արհեստում տվի անցա.

Տասնչորսում իմ շնորքով վարպետս պարզեւ ստացավ...

Ըստ երեսույթին Արուֆինը երկու անգամ է սովորել Սանահնում: Մեկ մինչ ջուլիակի աշկերտ դառնալը, երկրորդ անգամ՝ արհեստում վարժվելուց հետո՝ 15-17 տարեկանում: Այստեղ նա սովորել է ոչ միայն հայերեն-գրաբար, այլև վրացերեն, գուցե եւ մասամբ պարսկերեն: Ուշագրավ է, որ 18-րդ դարի վերջերից մնացած Յաղպատի վանքի տնտեսական գրությունների որոշ մասը գրված է վրացերեն: Յետագայում երգիչը բավականին զարգացել է ինքնուսուցմամբ եւ շատ մոտիկ ու հեռավոր վայրերում գտնվելով, հենց Թիֆլիսում բարձր ու առաջավոր խավերի եւ այլ նշանավոր մարդկանց հետ ունեցած հանդիպումների ընթացքում ձեռք բերել բավականին գիտելիքներ:

Թեեւ պարսկերեն գրված ամբողջական ոտանավոր չի հասել մեզ (գուցե եւ չի ունեցել), բայց կան դեռեւս չթարգմանված աղբյուրներն-պարսկերեն ոտանավորներ, որոնց տողերը մեկընդմեջ կամ առանձին կարճ նախադասություններով, պարսկերեն են, ինչպես եւ հայտնի չորս լեզվյան խաղի տունների երկրորդ տողերը, որ նույնպես պարսկերեն են:


Երգիչը, ինչպես երեւում է նրա դավթարից ու դեռեւս չիրապարակված մի երկու ոտանավորներից, հրաշալի իմացել է արաբական այբուբենը, որով այժմ էլ գրում են պարսիկները եւ արեւելքի ու Աֆրիկայի այլ ժողովուրդներ: Նրա ձեռագիր դավթարում կան աղբյուրներն «այիֆլամա»-այբուբենական ոտանավորներ, իսկ անավարտ մի ոտանավորի առաջին տունը գրված է առանց արաբական այբուբենի հայտնի կետերի-նողդասըզ, որը կարող էր գրել շատ գրագետ մարդը:

Երգիչը իր անփոյթ գրած դավթարի կամ գրա-

բար մի քանի տողերի ուղղագրական սխալների համար որոշ բանասերների կողմից «անբավարար գրագիտության» կամ ուղղակի «անգրագիտության» գնահատական էր ստացել անցյալում, սակայն բավական է վերլուծել միայն 50-րդ հայերեն այբուբենական կիսատ խաղի վերջին տունը, որպեսզի այդ գնահատականը հասնի լրիվ բավարարի: Այդ վերլուծումը մենք կատարել ենք ուղիղ 22 տարի առաջ եւ լույս ընծայել ՍՍՌՄ գիտ. ակադեմիայի Յայկական ֆիլիալի «Տեղեկագրում» (1943, N3) «Սայաթ-Նովայի հայերեն մի քանի խաղերի մասին» վերնագիրն ունեցող հոդվածում:

Վերը հիշված «կենսագրական» կոչված ոտանավորում, իր 19-րդ տարիքի մասին երգիչն ասում է, որ ման է եկել «Յաբաշու Յինդուստան»: Իհարկե, սա տարածված եւ սովորական բանաստեղծական ոճ է, ընդհանրապես աշխարհաճանաչության եւ կատարած ճանապարհորդությունների մասին, որպես հեռուների հասկացողության սիմվոլիկ արտահայտություն: Սակայն, համարյա չի կարելի կասկածել, որ Սայաթ-Նովան տեսել է Էջմիածինը, Գառնի-Գեղարդը, Մշո սուրբ Կարապետ վանքը եւ Սեանի կղզին: Ավելի հեռուներից պետք է ենթադրել՝ Պոլիս-Ստամբուլը, անկասկած՝ Պարսկաստանը, նույնիսկ Յնդկաստանը: Արուֆինը հնարավոր է, որ եղած լինի վրաց Թեյմուրազ թագավորին ուղեկցող շքախմբի մեջ, երբ, 1735թ. հոկտեմբերի 6-ին, Թիֆլիսը գրավելուց քիչ անց, Նադիր Շահը նրան տարավ Աֆղանստան: Վերջինիս կենտրոն Ղանդահարում, 1738թ., Նադիրը թոյլ տվեց Թեյմուրազին իր շքախմբով վերադառնալ Վրաստան, բայց նրա 18-ամյա որդուն, արդեն ճանաչված մարտիկ Յերակլին, որին նոր էր բերել տվել Վրաստանից, համարյա որպես պատանդ, մասնակից արավ հնդկական արշավանքին:

Յերակլը մենակ չէր, այլ շքախմբով, որի մեջ շատ հնարավոր է, որ եղած լիներ նաեւ Սայաթ-Նովան: Ճիշտ է, երգչի խաղերում հիշատակվող Յնդկաստան երկիրը կարելի է նաեւ բանաստեղծական ոճ եւ հնարանք համարել, բայց ոչ, ինչպես արվել է բազմիցս, որպես համոզմունքի համեմունք, երգչին Յնդկաստան ուղարկելու համար: Իսկ մեզ այդ ենթադրությունն են բերում այլ ավելի հիմնավոր փաստեր: Առաջինը այն է, որ Սայաթ-Նովան մի քանի անգամ հիշում է «Թովուզի տախտը», ինչպես 34-րդ խաղի այս տողում. «խոսրով Փաչայեմեն», թողած դուն թովուզի տախտ իս, գոզալ»: Սա հնդկական մողոլի սիրամարգյա գահին է, որը ավարի էր մատնել Նադիր Շահը (տես 34 խաղի ծանոթ.): Սայաթ-Նովան այն համարում է խոսրով Նուշիրվանին պատկանած գահը: Այս վերսիան կարող էր հորինվել հենց նույն ժամանակ, անգամ Դեիլիում, Նադիրի կամ նրա մերձավորների կողմից, որպեսզի նախախնամության կամքով արդարացվեր Իրանի պատահական նոր աշխարհակալի իրավունքը՝ դսմաթը հաստատվել նաեւ Սասանյանների



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«55 գահին տիրանալով: Կարող են առարկել, թե Սայաթ-Նովան այդ մասին լսած կլիներ մեծ մոլորի գահը անձամբ տեսած Յերակլից, բայց ինչպես բացատրել ադրբեջաներեն դեռ չիրատարակված մի ոտանավորի վերջին երկու պարսկերենախաղը (գուցե ոչ միայն պարսկերեն բառերով) հետեյալ տողերը. «Թյուրքիջա գոյ, վեր ֆարսիջա, միգոգար աղվանջա, ֆեդայի բերահի բելուջ (թուրքերենը թող, անցիր պարսկերենին, աֆղաներենին, բելուջերենին): Այս տողերը միայն իրավունք են տալիս այդ ենթադրությունն ավելի վստահ առաջ-քաշելու համար: Բելուջ իրանական ցեղը բնակվում է Իրանի հարավ-արևելյան մասում եւ Աֆղանստանի հարավային մարզերում, որոնք սահմանակից են Յնդկաստանին: Վերջ բերված տողերը կարող են գրվել այդ ժողովուրդներին ծանոթ մեկի կողմից, գրել նրանց լեզուները լսած մարդը: Այդ լեզուներն էլ իրանական են, մատչելի պարսկերեն իմացողներին: Վերջապես այն հարգանքն ու մեծարումը, որ Սայաթ-Նովան ունի Նադիր Շահի նկատմամբ, նույնպես ավելի է, քան միայն նրա մասին եւ նրա արարքները լսածով ոգետրված մարդու: Կարելի է բերել մի հավելյալ փաստ եւս, ադրբեջաներեն 9-րդ ոտանավորի վերջին տունից, որի 3-րդ տողը եւ սխալ էի թարգմանել, սխալ վերծանման պատճառով, («Դում քիրման-դումաշ իս Արաղստանի») մինչդեռ պետք է լինի. «Ղում, Քաշան, Քիրմանն ու Արաղստանը»: Ղազվինից կամ Թեհրանից Ղումի եւ Քաշանի վրայով հին եւ նոր ուղին տանում էր Քիրման եւ այստեղից Ավղանստանն ու Յնդկաստան կամ Ղումի վրայով՝ Իսպահան-Քիրման: Իսկ Արաղստանը-Իրաք-Իրաղստանն է: Այս վայրերին եւ ուղեգծերին անձամբ ծանոթ մարդու նման է գրում Սայաթ-Նովան: Կրկնում ենք, գուցե երիտասարդ Արուֆին Սայաթ-Նովան եղել է միայն Թեյմուրազի շքախմբի մեջ եւ նրա հետ Ավղանստանից վերադարձել Կրաստան, չուղեկցելով Յերակլին դեպի Յնդկաստան, գուցե եւ հակառակը: Սակայն երկու դեպքում էլ նա շատ բան տեսած եւ լսած կլիներ, կվարժվեր պարսկերենում եւ ավելի կձանաչվեր վրաց թագավորի եւ նրա որդու՝ Յերակլի կողմից, որը հետագայում բախտորոշ եղավ նրա կյանքում: Այս առիթով արժե նշել նաեւ մի այլ փաստ: Սայաթ-Նովան իր խաղերում ժամանակին հռչակված շատ երկրներ ու քաղաքներ է հիշում, ինչպես արեւելյան այլ պոետները, որոնց մի մասին անձամբ ծանոթ պետք է եղած լիներ: Օրինակ, իր խաղերից մեկում գրում է. «Փայթախտ Իստամբուլդա Ֆադիշահ Թախտ յանընդաղըր Այա-Սոֆ» («Մայրաքաղաք Ստամբուլում... ֆադիշահի պալատի մոտ է Այա-Սոֆ (տաճարը)»): Իհարկե, այս տողը կարողալուց հետո չես կարող հարց չտալ, թե Սայաթ-Նովան չի՞ տեսել արդյոք նաեւ այս հռչակավոր քաղաքը: Շատ մութ էջեր կան երգչի կենսագրության մեջ, կասկած հարուցող հիշատակություններ, որոնք զանազան ենթադրությունների ու կռահումների պատճառ են դառնում: Օրինակ, բանաստեղծական այն տողը, որ ասում է. «Սայաթ-Նովան պահիր քեզ մոտ, պահպանիր, էլ չի գնա շահի մոտ եւ սուլթանի» (Վր. 32): Եթե սա համարենք սոսկ բանաստեղծական արտահայտություն կամ երգում, որ ուրիշ թագավորների մոտ չի գնա ծառայելու, ապա ինչ ասենք գրույցի ժամանակ Յաղպատի ծեր վանական նույն Սայաթ-Նովայի հետեյալ բառերը իր հեռավոր անցյալի մասին, «Ես ամենի մոտ տեղ ունեի ոչ միայն երգելու համար, այլեւ սրախոսություններիս, այլեւ աշխարհիկ գործերիս համար»: Այս ամենը հարկադրել է ոմանց (պրոֆ. Կ. Կեկելիձե, Ս. Օզանեգաշվիլի եւ այլք) ասել, որ գուցե քաղաքական բանակցությունների համար ուղարկված դեսպանություններին եւ մասնակից է եղել մեր երգիչը: Յնդկական արշավանքից հետո Նադիր Շահը մեծ նվերներով Յերակլին ուղարկում է Կրաստան, իսկ մի քանի տարի անց նրան հաստատում Կախեթի թագավոր, իսկ Կախեթի թագավոր նրա հորը՝ Թեյմուրազին, հաստատում Քարթլի թագավոր՝ Թիֆլիս մայրաքաղաքով: Թեյմուրազը Թիֆլիս մտավ 1744թ. հուլիսի 9-ին եւ մեծ ցնծությամբ ընդունվեց բնակիչների կողմից: Կրաստանում սիրված ու հռչակված Յերակլը Թիֆլիս հասավ այդ եռօրյա խնջույքի ժամանակ, որին հաջորդեց նրա քրոջ՝ Աննայի հարսանիքը՝ իշխան Դեմետրե Օրբելիանու հետ: Այդ ցնծագին հանդեսներին եւ հարսանիքին անկասկած մասնակցել է եւ Սայաթ-Նովան՝ իր քանակալով ու երգերով, մանավանդ վրացերեն նոր երգերով: Կրացերեն խաղերից մեկի (6) 4-րդ տան առաջին երկու

տողերը գուցե վերաբերում են հենց այս հարսանիքին.
Էսենց հարսնիք, նշանդրիք շահն էլ չարեց Ջալի համա,
Ինչ վոր արեց սա իր հալալ աղջկա,
գոզալի համա:
 Նույն այս ոտանավորը վերջանում է հետեյալ բառերով՝ «Սայաթ-Նովու թագավորին Շահբագ-Էրեկլե ին ասում»:
 Այդ ժամանակից էլ, 1744թ., կարելի է ընդունել, որ Սայաթ-Նովան պալատական երգիչ է դառնում եւ, երկու-երեք տարվա ընդմիջումով մնում մինչեւ 1759-1763թթ., ավելի ճիշտ՝ 1759թ. վերջերը: Վաղուց վանական երգիչը, իր ծերության ժամանակ, Յաղպատում իր հյուրը դարձած վրացի արեղա Խելաշվիլուն պատմել է հետեյալը. «Ես հիանալի չունգուր էի նվագում եւ միաժամանակ պարսկական (բանաստեղծական) ձեւերի վրա հորինում-հարմարեցնում վրացերեն երգեր: Այդպիսի բան դեռ չէր եղած: Երբ Էրեկլե թագավորը երաժիշտներիս մեջիս հրավիրեց, ես պարսկական ձեւերով ու եղանակներով վրացերեն երգեցի: Թագավորին շատ դուր եկավ եւ ինձ խալաթ պարգևեց: Դրանից հետո շատերը ցանկացան իմ օրինակին հետեւել: Ինձ սիրով էին ընդունում ամենքը ոչ միայն իմ երգելու արվեստի, այլեւ սրախոսություններիս կատակներիս ու այլ աշխարհային գործերիս, մարդկանց մեջ ինձ լավ պահել գիտենալուս համար» (Գ. Լեոնիձե, էջ 29-30): Յամարյա նույն բառերով այդ մասին պատմում են եւ վրաց ժամանակակիցները:
 Որովհետեւ Սայաթ-Նովան իրեն համարում է վրաց թագավորի՝ Յերակլի, սագանդար, ոմանք կարծում են, թե այդ տեղի է ունեցել 1762 թվականից (Գ. Լեոնիձե), երբ հոր մահից հետո Կախեթի թագավոր Յերակլը դարձավ միացյալ Կրաստանի թագավոր, վերջնականապես հաստատվելով գլխավոր մայրաքաղաք Թիֆլիսում: Այդ անախրոնիկ թյուրիմացություն է եւ սխալ: 1762 թվականին, մանավանդ դրանից հետո, Սայաթ-Նովան հազիվ թե նույնիսկ պալատը տեսած լինի: Յայր եւ որդի թագավորներն այնքան հաշտ եւ բարեկամ են եղել, որ ձեռական է համարվել երկու պետությունների գոյությունը: Յերակլը իր այդ տարիների մեծ մասն անց է կացրել հոր մոտ, իսկ Թելավում եղած ժամանակ Սայաթ-Նովան եւս այնտեղ է գտնվել:

Սայաթ-Նովան իր խաղերում ժամանակին հռչակված շատ երկրներ ու քաղաքներ է հիշում, ինչպես արեւելյան այլ պոետները, որոնց մի մասին անձամբ ծանոթ պետք է եղած լիներ: Օրինակ, իր խաղերից մեկում գրում է. «Փայթախտ Իստամբուլդա Ֆադիշահ Թախտ յանընդաղըր Այա-Սոֆ» («Մայրաքաղաք Ստամբուլում... ֆադիշահի պալատի մոտ է Այա-Սոֆ (տաճարը)»): Իհարկե, այս տողը կարողալուց հետո չես կարող հարց չտալ, թե Սայաթ-Նովան չի՞ տեսել արդյոք նաեւ այս հռչակավոր քաղաքը: Շատ մութ էջեր կան երգչի կենսագրության մեջ, կասկած հարուցող հիշատակություններ, որոնք զանազան ենթադրությունների ու կռահումների պատճառ են դառնում: Օրինակ, բանաստեղծական այն տողը, որ ասում է. «Սայաթ-Նովան պահիր քեզ մոտ, պահպանիր, էլ չի գնա շահի մոտ եւ սուլթանի» (Վր. 32): Եթե սա համարենք սոսկ բանաստեղծական արտահայտություն կամ երգում, որ ուրիշ թագավորների մոտ չի գնա ծառայելու, ապա ինչ ասենք գրույցի ժամանակ Յաղպատի ծեր վանական նույն Սայաթ-Նովայի հետեյալ բառերը իր հեռավոր անցյալի մասին, «Ես ամենի մոտ տեղ ունեի ոչ միայն երգելու համար, այլեւ սրախոսություններիս, այլեւ աշխարհիկ գործերիս համար»: Այս ամենը հարկադրել է ոմանց (պրոֆ. Կ. Կեկելիձե, Ս. Օզանեգաշվիլի եւ այլք) ասել, որ գուցե քաղաքական բանակցությունների համար ուղարկված դեսպանություններին եւ մասնակից է եղել մեր երգիչը: Յնդկական արշավանքից հետո Նադիր Շահը մեծ նվերներով Յերակլին ուղարկում է Կրաստան, իսկ մի քանի տարի անց նրան հաստատում Կախեթի թագավոր, իսկ Կախեթի թագավոր նրա հորը՝ Թեյմուրազին, հաստատում Քարթլի թագավոր՝ Թիֆլիս մայրաքաղաքով: Թեյմուրազը Թիֆլիս մտավ 1744թ. հուլիսի 9-ին եւ մեծ ցնծությամբ ընդունվեց բնակիչների կողմից: Կրաստանում սիրված ու հռչակված Յերակլը Թիֆլիս հասավ այդ եռօրյա խնջույքի ժամանակ, որին հաջորդեց նրա քրոջ՝ Աննայի հարսանիքը՝ իշխան Դեմետրե Օրբելիանու հետ: Այդ ցնծագին հանդեսներին եւ հարսանիքին անկասկած մասնակցել է եւ Սայաթ-Նովան՝ իր քանակալով ու երգերով, մանավանդ վրացերեն նոր երգերով: Կրացերեն խաղերից մեկի (6) 4-րդ տան առաջին երկու

ՍԱՅՄԱԹՆՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պարսկերենին, թուրքերենին, ու ադրբեջաներենին եւ պարսկական արվեստին քաջ ծանոթ Թեյմուրազն ու Յերակլը հաճույքով էին ունկնդրում այդ լեզուներով հնչվող երգերին եւ նրանց եղանակներին: Ավելին, Կրաստանի քաղաքական եւ կուլտուրական բուռն վերելքի այդ տարիներին արդեն ուրախությամբ ու հպարտությամբ պետք է ընդունեին, թեկուզ եւ արեւելյան ձեւերով ու մոտիվներով, բայց վրացերեն լեզվով այդ նոր երգերը, որ բերում էր Սայաթ-Նովան վրացական պալատի նաղարախանան-երաժշտանոցը եւ Թիֆլիսի մարդաշատ հրապարակները: Չէ՞ որ ավելի քան մեկ դար էր, ինչ այստեղ ավելի շատ լսվում էին ոչ վրացերեն երգեր ու մոտիվներ: Դրա պատճառն այն էր, որ Կրաստանը պարսկական լծի տակ կիսանկախ վիճակ ապրելով, նրա վասալ թագավորները, երբեմն հարկադրված, կամ առերես մահմեդական դարձած, նախապես իրենց դաստիարակությունն ստանում էին պարսկական շահերի արքունիքում, վստահություն ձեռք բերում, ապա հաստատվում «Գյուրջիստանի վայի», իհարկե չազատվելով իրենց քաղաքական-կուլտուրական վարքագծի խիստ հսկողությունից: Թեյմուրազն ու Յերակլը ազատ էին այդ կարգի ստորացումից:

Ո՞ր տարիքից է սկսել Սայաթ-Նովան խաղեր հորինելը: Դրա պատասխանը պետք է գտնել վերը հիշված «կենսագրական» ոտանավորի հետեւյալ քառատողում.

*Տասնյոթ տարիս լրացավ,
դեռ ես չէի եղել դաստան,
Տասնութ տարիս երբ բոլորեց,
տեսա եւ վարդ եւ վարդաստան,
Տասնինը տարեկանում ման եկա Հաբաշ,
Հինդուստան,
Քսան տարուց, էշիս ընկած,
լալ կը ծախսեմ սովդաքարին:*


Առաջին տողի «դաստան» բառը բացառում է երկրորդ տողի «վարդ եւ վարդաստան տեսները», ենթադրել նրա առաջին սիրո ակնարկությունը: Չէ՞ որ իր հայերեն առաջին խաղի՝ ոտանավորի ծանոթագրության մեջ ասում է. «պստուց ինչ որի յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին»: Իսկ եթե քսան տարեկանից է «լալ» ծախում, այդ նշանակում է, թե սկսել է գրել բարձրորակ գործեր եւ ճանաչվել որպես լալ ու գոհար արտադրող բանաստեղծ: Ադրբեջաներեն խաղերում շատ անգամ է իր ստեղծագործությունները «լալ» անվանում: Եզրակացությունն այն է, որ Սայաթ-Նովայի գրական ասպարեզ մտնելը սկսվում է 18-րդ դարի 30-ական թվականներից, որի ապացույցն է նաեւ 1742թ. հունիսի 1-ին թվագրված ադրբեջաներեն իսկապես բարձրորակ մի խաղը՝ «Մովեն էլած թանգ մարգարիտ ու մարջան» (2):

Անկասկած է, որ Սայաթ-Նովան նախապես սկսել է հորինել ազերի կամ ադրբեջանական թուրքերենով, ինչպես նրանից առաջ, նրա ժամանակ եւ նրանից հետո հանդես եկած արեւելահայ

աշուղների մեծագույն մասը: Դրա պատճառը հասկանալի է, նախ եւ առաջ դարավոր քաղաքական գերիշխանությունն էր: Երկրորդը այն, որ հատկապես վերջին 5-6 դարերում Անդրկովկասի հայ եւ ադրբեջանցի բնակչությունը ապրել է ոչ այնքան իբրեւ սահմանակից, այլ թե՛ քաղաքներում եւ թե՛ գյուղական միջավայրում՝ որպես խառն ապրող հարեաններ: Բնական է, նրանք պետք է շատ մոտիկից հաղորդակից լինեին կյանքի ու կենցաղի բոլոր ասպարեզներում, կրեին փոխազդեցություններ՝ տարբեր բնագավառներում, տարբեր աստիճանի: Եթե հայ բնակչության տնտեսական ազդեցությունը պետք է գործուն դեր խաղար, ապա լեզվի ասպարեզում գերիշխող դիրք պետք է ունենային նրանք, ովքեր իշխում էին երկրում:

Չայ, թուրք եւ ադրբեջանցի աշուղները ժողովրդական մտայնության արտահայտիչներն էին, ասիական բռնակալության, կամայականությունների եւ կրոնական հակամարտության ու հալածանքների պայմաններում, հանդիսանալով իշխողների հետ խառն ապրող եւ կրկնակի-եռակի հարստահարվող հայ սայայի եւ թուրք աշխատավորների անսքող կամ գաղտնի տրամադրությունների արտահայտիչները-ժողովրդի խոսուն լեզուն: Նրանք արվեստի ուժով փորձում էին ներազդել տիրակալների բիրտ զգացումների վրա, նրանք խաղաղության, հաշտ-համակեցության եւ մարդասիրության քարոզիչներն էին եւ ժողովրդի սիրելիները: Ընդհանուր հասկանալի լեզվով, երգով ու խոսքով մեծ գործ էին կատարում ժողովրդի համար: Չաճախ դժվար է լինում երգում հիշվող հեղինակի ազգությունը աշուղական ծածկանվամբ որոշելը: Նույնիսկ հայերեն գրել հայ աշուղների տասից ինը պարսկերեն, արաբերեն կամ թուրքերեն հատուկ անուններ ու մականուններ էին ընտրում, բազմաթիվ ածական ու գոյական բառերով, որոնք ծանոթ էին Առաջավոր Ասիայի բնակիչներին: Կրոնական մոտիվներով ու տարբերություններով եւս հաճախ չի լինում որոշել նրանց էթնիկական պատկանելությունը: Այդպիսի մի կեղծանուն էլ ընտրում է Մուղսի Կարապետի որդի՝ Արուֆինը՝ Սայաթ-Նովա, բայց գրում է Սայաթ, ինչպես մարդը, վարդը, գրում է մարթ, վարթ, բացառությամբ մի քանի դեպքերի: Նովա բառն իսկ ցույց է տալիս, որ ընտրել է արաբ.-պարսկ. «որսորդ մեղեդիի» (մելոդիայի-երգի) գրական անունը, թեեւ վերջերս ավելի շատ տարածվում է այն կարծիքը, որ դա պարզապես (թուրքերեն) նշանակում է «Սայադի թռ»: Այս դեպքում չէր գրի Նովա, այլ անպայման կգրեր Նեվե:

18-րդ դարի 20-30-ական թվականներին քաղաքական այլեկոծում էր ապրում Առաջավոր Ասիայի մեծագույն մասը, հատկապես Անդրկովկասը: Իրանի Սեֆյան պետությունը ապրում էր իր հոգեվարքը եւ քայքայում: Թուրք-պարսկական երկարատեւ, ավերիչ պատերազմների հաջորդած 1639թ. հաշտության պայման-



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 57 նագրի ուժով այս դժբախտ երկիրն ապրեց բացառիկ մի շրջան՝ առաջին անգամ-70-ամյա խաղաղության եւ շոշափելի բարգավաճման շրջանը: Սակայն 18-րդ դարի սկզբներից, Իրանի տնտեսական ճգնաժամին հաջորդեց քաղաքական այլեւոճման, ապստամբությունների, պատերազմների ու ավերումների շրջանը: Թուրքիայի սադրանքներով Դաղստանի ֆեոդալների ավերիչ ասպատակությունները Վրաստանում, Ադրբեջանում եւ մի շարք հայկական գավառներում (որից զերծ չմնաց եւ Լոռին), հայկական, վրացական եւ ադրբեջանական, հատկապես հայկական ազատագրական ապստամբությունները, ռուսական անավարտ պարսկական արշավանքը, թուրքական արշավանքը եւ հայերի հերոսական դիմադրությունն ու պատերազմը Երեւանում, Լոռիում, Ղարաբաղում եւ Սյունիքում, Անդրկովկասի տասնամյա օկուպացիան թուրքերի կողմից (1724-1735թթ.) Նադիր Շահի հաղթական պատերազմները Թուրքիայի դեմ, ռուսների նահանջը՝ Կասպիականի գրաված ափերից...

Ահա քաղաքական այն խառն ու բարդ իրադրության հակիրճ պատկերը, այն կարճատե, բայց դառն ու հարուստ էպոխան, որի մեջ ընթացել է երիտասարդ Արուսեանի (Սայաթ-Նովայի) մանկությունն ու պատանեկությունը, լինի այդ Լոռու Սանահնում, թե Թիֆլիսում, միեւնույն է. յոթ տարեկան Արուսեանը մինչեւ 18, 20-25 տարեկան դառնալը ապրել է տագնապալից տարիներ, գուցե տեսել է եւ գաղթ, եւ մահվան ու գերեվարման վտանգի պահեր, նույնիսկ գուցե գերի տարվել արշավանքների ընթացքում:

Տեսած, լսած ու ապրած քաղաքական այս հարափոփոխ եւ ազդու անցքերը չէին կարող աննիշ ու անարդյունք անցնել պատանի Արուսեանի համար, նրա աշխարհաճանաչման տարիներին չէին կարող չհարստացնել նրա միտքը, չնպաստել բազմաթիվ մարդկանց հետ հանդիպելուն, լեզուներ սովորելուն, նույնիսկ եթե նա մնացած լիներ Սանահնի վանքում որպես մոնթ, որը պակաս հավանական չէ նրա 15-18 տարեկանում:

Նադիրի շահության (1736-1747), հատկապես առաջին 7-8 տարիները հանդիսացան արհեստների ու առեւտրի զարգացման, ազատ երթեւեկության եւ ազգային ու կրոնական հա-

լածանքներն օրենքով դադարեցնելու տարիներ: Չէ՛ որ դրանից առաջ, քառորդ դարի ընթացքում, Անդրկովկասը եւ ողջ Իրանը այլեւոճող պատերազմների, կոտորածների ու ավերումների տրվում էր նաեւ կրոնական պայքարի աստառ, մանավանդ թուրքական օկուպացիայի եւ թուրք-պարսկական պատերազմների ժամանակ: Կրոնական անհանդուրժողականությունն արհեստականորեն բորբոքվում էր ոչ միայն մահմեդական եւ քրիստոնյա հավատի միջեւ, այլեւ ոչ պակաս չափով մահմեդական շիա եւ սյունի հատվածների տարբերությունը մեջտեղ քաշելով: Ժողովուրդները հոգնել էին այդ քառսից, ծարավի էին խաղաղության: Այս տրամադրությունն համակեց եւ իշխող խավերին. իր ռազմավարական տաղանդով բարձրացած արեւելյան հերթական դեսպոտը՝ Նադիրը, Իրանի տերության ղեկը իր ձեռքն առնելով, իր նորաստեղծ, բազմացեղ եւ բազմադավան մեծ տերության հիմքերն ամրապնդելու հույսով վճռել էր համերաշխության մի հայտարար գտնել ոչ միայն սյունի եւ շիա կրոնական հատվածների միջեւ, այլեւ մահմեդական եւ քրիստոնեական (նույնիսկ հուդայական) կրոնների միջեւ: Այդ նպատակով նա հանձնարարեց մի շատ գրագետ հայի պարսկերեն թարգմանել Ավետարանը, առատ վարձատրելով նրան, ունենալով մի ընդհանուր կրոն ստեղծելու հեռավոր նպատակ: Այս բոլորն անհայտ չէին մնում ժողովրդից:

Խաղաղության, համերաշխության այս ձեռավորված տրամադրության գիտակից արտահայտչի ու քարոզչի դերում հանդես եկավ յուրահատուկ արեւելյան-ժողովրդական փիլիսոփա, ազատախոհ Սայաթ-Նովան: Սիրո եւ բարության իր երգերի համար նա պետք է ընտրեր այն լեզուն, որը ավելի տարածված էր ամենուր, միջցեղային խոսակցական լեզվի դեր ստացած, Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին, հատկապես հայ-ադրբեջանական մասսաներին, Թիֆլիսի հայ, վրացի եւ ադրբեջանական բնակիչներին հասկանալի լեզուն:

Ավելին, հայ ժողովրդաազատագրական շարժումների ընթացքում եւ նրանց պարտությունից հետո սասուկացել էին ազգային ու կրոնական հալածանքները հայ բնակչության նկատմամբ, մասնավորապես նրա ռուսական օրինետացիայի համար: Թուրքական

տիրապետությանը հաջորդած Նադիրի կարճատե խաղաղ տիրապետության ժամանակ տակավին մխում էր այդ վերաբերմունքը, իսկ Նադիրից հետո, 1748 թվականից, սկսվել էր հայահալած մի ահավոր քաղաքականություն, դավանափոխության հարկադրանքի սաստկացումով: Այդ ժամանակ պետք էր բարեկամության, սիրո եւ խաղաղության քարոզը հնչեր, հարգալից վերաբերմունք ցուցաբերվեր հանդեպ քրիստոնեական եւ մահմեդական կրոններն ու սրբությունները, այն էլ ընդհանուրին հասկանալի լեզվով:

Իր ադրբեջանական ոտանավորներից մեկում մարդկանց համար երեքական կարիքներ թվելով, Սայաթ-Նովան հասնում է սեղանին դնելիք երեք մեծ կարիք-սրբության-«Մեկն Աստվածաշունչը, մեկը Ղուրանը, մեկն Ավետարանը».

Ահա այն պատճառները, որ Սայաթ-Նովան դիմեց նախ ազգերի թուրքերենով գրելուն:

Սակայն, շուտով, երեւի 1742-43 թվականներից սկսած, Սայաթ-Նովան զգաց հաճույքով ունկնդրվող իր խոսքի անհրաժեշտությունը նաեւ վրաց լեզվով: Նա, ինչպես վերը տեսանք, սկսեց հորինել եւ վրացերեն, արժանանալով խրախուսանքի ու հասարակական վերնահարկերը բարձրանալուն, մինչեւ պալատ:

18-րդ դարի 30-ական թթ., կեսից սկսած խաղաղության եւ ազգային-կրոնական նկատելի հանդուրժողականության պայմաններում արդեն ճանաչված երգիչը չէր կարող չզգալ ժողովրդի եւ իշխանավորների հետ Թիֆլիսում եւ շրջակայքում իշխող ժողովրդական լեզվով խոսելու-վրացերեն երգեր հորինելու անհրաժեշտությունը: Նա քաջ գիտեր, որ մասնավորապես վրաց մայրաքաղաքի երեք քառորդը կազմող հայ բնակչության մեջ հայերենին համարյա հավասար կիրառվում էր վրացերենը: Սայաթ-Նովայի բազմակողմանի տաղանդը գտավ իր պարարտ հողը եւ նա արագ կերպով բարձրացավ եւ հռչակվեց որպես վրաց պալատի առաջին սազանդարը եւ անձամբ Յերակլ թագավորի սիրելին: Այս հանգամանքին մեծապես նպաստում էին նաեւ ռամիկ երգչի խիզախությունն ու հասարակական ակտիվությունը:

Մենք իմացանք այն պատճառները,

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

որոնք Սայաթ-Նովայի խաղեր հորինելու տաղանդը բաց էին արել ոչ մայրենի լեզվով, այլ ադրբեջաներենով: Իմացանք նաեւ այն մղումները, թե ինչու դրանից շուրջ տասը տարի հետո երգիչը դիմեց հաջորդ լեզվին՝ վրացերենին:

Սայրենի լեզվով գրելու առթիվ թվում է, թե հարկ չկա պատժառ որոնելու, որովհետեւ բնական է այդ: Բայց կասկածի ենթակա չէ, որ Սայաթ-Նովան հայերեն սկսել է գրել երեսուն տարեկանում, երբ արդեն երկար տարիներ գրական-աշուղական անցյալով ծանաչված հեղինակություն էր: Սայաթ-Նովան հայերեն իր առաջին բանաստեղծության տակ, ծանոթագրության կարգով, հայատառ ու հայերեն պարզ գրել է. «Յիմի գուգիմ թե հայեվար ախիմ, ամեն աստված, յիս մղոսու վուրթի Արուֆինս, պստոց ինչոր յարսուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն, ու տամբուրեն»:

Սայրենի լեզվով խաղեր հորինելը դժվար չէր Սայաթ-Նովայի համար, որովհետեւ քաջ գիտեր Թիֆլիսի եւ Լոռու բարբառները, գումարած եւ արեւմտահայ մի բարբառ, որ սովորած կլիներ իր հորից: Մասամբ գիտեր գրաբար, իսկ ավելի լավ՝ իր նախորդ հայ տաղերգուների «լեզուն», բայց նա ընտրեց թիֆլիսահայ բարբառը, կարիք եղած դեպքում ազատ շեղումներ կատարելով: Լեզվի տեսակետից թիֆլիսահայ բարբառի այդ ընտրությունը պատահական չէր եւ ուներ իր պատճառները:

Վրաց քաղաքի հոծ հայ բնակչությունը խոսում էր իր մայրենի լեզվով-թիֆլիսահայ դարավոր եւ ուրույն բարբառով, որով ստեղծված էր հարուստ բանահյուսություն՝ զանազան երգեր, խաղեր, առակներ, ասացվածքներ, հեքիաթներ: Այդ բնակչությունը, մանավանդ 18-րդ հեղինդուկ դարում, անվերջ լրացվում, թարմանում էր հայ գաղթականներով՝ Գուգարքից եւ Արարատյան դաշտից, Աղստեփի հովտից ու Գանձակից, Արցախից ու Շիրվանից, Արեւմտյան Յայաստանից ու Պարսկաստանից, որովհետեւ վրաց մայրաքաղաքը եւ Արեւելյան ու Միջին Զարթին այն ժամանակ, ինչպես եւ 11-16-րդ դարերում, այն միակ վայրեր էին աշխարհում, ուր վաղաբնակ ու տարագիր հայն իրեն զգում էր ինչպես իր հարազատ հայրենիքում: Զաղաքներում հայերն ապրում էին ավելի լավ պայմաններում, քան նույնիսկ վրացի աշխատավոր բնակիչները, վայելելով վրաց արքունիքի առանձին հոգատարությունը, որը արտահայտվում էր հատկապես հայ արհեստավորի եւ առետրականի նկատմամբ: Թիֆլիսում ստեղծված էր ուրույն հայկական կենցաղ՝ կուռ համքարային կազմակերպություններով: Գործում էին բազմաթիվ (շուրջ երկու տասնյակ) հայ լուսավորչական եկեղեցիներ (կային եւ հայ կաթոլիկներ): Թիֆլիսի շրջապատում կային զգալի քանակությամբ հայաբնակ գյուղեր, Լոռին ենթակա էր Վրաստանին, Յաղպատի ազդեցիկ առաջնորդարանը գտնվում

էր Թիֆլիսում եւ այլն: Այստեղ էր, որ հայ բնակիչը կարող էր միշտ հանգիստ քնել, հագնվել, ազատ ծիծաղել ու կատակել, նվագել, երգել ու պարել:

Մերոպ Թաղիադյանը իր «Ճանապարհորդություն ի Յայս» աշխատության մեջ նկարագրում է, թե ինչպես անցյալ դարի սկզբներին, կիրակի եւ տոն օրերին այս գեղեցիկ եւ ուրախ քաղաքի բնակիչները, գինիով, թմբուկով ու զանազան նվագարաններով, զարդարված, խումբ-խումբ դաշտ են դուրս գալիս զբոսնելու, ուտել-խմելու, խաղալու եւ խնդալու համար, հեռու ամեն հոգսից: «Ոչ տեսի ես քաղաք ուրախ, քան զայս» բացականչում է նա եւ ավելացնում, որ Թիֆլիսի հայ բնակիչներն այնքան զվարճաբան են, որ նրանց ասածները լսողը ծիծաղից թուլանում է, որ եկեղեցական շարականներ երգելու փոխարեն զանազան ծաղրալի երգեր են հորինում, որոնցից մեկը, նվիրված գինու տկին, սկսվում է այսպես.

Ու էիր ու տիկ դարձար,

Տկահան չարչարվեցար.

Հավաքարի դարի դուսին

Տվին մշակի ուսին.


Ով սուրբ տկճուր,

Լուրդ բաց, մեզ ուղորմիս:

Յայկական այս միջավայրում չէր կարող հայերեն խաղ հորինելու կարիքը չզգալ շնորհիվ հայ գուսանը, որն առաջինը եւ վերջինը չէր, եւ իրեն «խալիսի նոքար»-ժողովրդի ծառա հայտարարած հայ աշխատավոր ժողովրդի այդ եզակի զավակներից մեկը վճռեց ընտրել ժողովրդի լեզուն, նրա խոսակցական հարուստ բարբառներից մեկը, որ ժառանգն էր Անիի եւ Յուսիսային Յայաստանի միջնադարյան խոսակցական լեզվի, որի մեջ ամենից շատն էր տարբեր բարբառների, բառային ու քերականական էլեմենտների հյուսվածքը, քան այլ բարբառներում, ում ճյուղը զարմանալի կերպով հյուսվել էր հին կու ճյուղին, բաղաձայնները հիմնականում պահպանված իրենց հին հնչումով: Մեծ թերությունը հատկապես եւ ձայնավորի շրջվելն էր ի-ի (մեր-միր, տես-տիս): Չմոռանանք, որ այդ օագիս բարբառը զորեղ կերպով հնչեց նաեւ Սունդուկյանի կախարդ գրչով:

Սայաթ-Նովան ընտրեց Թիֆլիսի բարբառը: Սակայն հայերեն գրելուն խթանեց մի երկրորդական, բայց զորավոր հանգամանք եւս, որքան էլ սա հնչի տարօրինակ. այդ նրա մեծ սերը համապատասխան խորությամբ արտահայտելու բուռն մղումն էր: Ազատ տիրապետելով ադրբեջաներենին եւ վրացերենին, անգամ գրագետ լինելով այդ լեզուներում, այնուամենայնիվ նա չկարողացավ իր ֆահրադյան ու մեջնունյան սերն արտահայտել ոչ մայրենի լեզվով: Ինչից ենք եզրակացնում այդ, ինչն է մեզ մղել այդ համոզմունքին: Երեք լեզուներով գրված նրա սիրային բանաստեղծությունների զգացողական ուժը, գեղարվեստական որակը, շունչն ու կրակը համեմատելիս:

Ինձ կարող են առարկել, կարդալով >>> 60



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 59 հեղինակի երեք լեզվով հորինած խաղերի հայերեն սույն ժողովածուն, ուր համարյա չի զգացվում որակական տարբերությունը: Սակայն իրականությունը պահանջում է խոստովանել, որ այդ տարբերությունն զգացվում, անգամ խիստ նկատելի է դառնում, երբ դրանք կարդում ես բնագրերում: Կրացերենում եւ ադրբեջաներենում Սայաթ-Նովան կանգնում է մեր առջեւ որպէս սիրաբան ու հուզաթաթավ, ազնիվ ու անմիջական, իմաստուն ու բարոյախոս մի աշուղ-բանաստեղծ, որպէս ժամանակի ընթացքում չմոռացվող շատ շնորհալի եւ մշտապես սիրելի բանաստեղծներից մեկը: Իսկ հայերենում նա անկրկնելի է իր անմիջականությամբ ու պարզությամբ, անօրինակ է իր նրբությամբ ու գունազգողությամբ, բացառիկ է հոգու եւ մտքի, աչքի եւ լեզվի ներդաշնակությամբ, մի պարզ, գերող կախարհ, մշտապես բաբախուն ջերմ սիրտ, ժողովրդական մի իսկական հանձար: Հայ գրականության մեջ մարդու եւ աշխարհի հետ այդ լեզվով եւ այդպէս են խոսել հատկապէս Նարեկացին ու Լաստիվերտցին, Աբովյանն ու Ալիշանը, Թումանյանն ու Իսահակյանը, Դուրյանն ու Տերյանը, վերջապէս այդպէս է մրմնջացել դարերով տառապած հայ ժողովուրդը հայ կնոջ եւ հայ պանդուխտի շփոթերով:

Ունկն դրած հայ ժողովրդական եւ ընդհանրապէս արեւելյան բանահյուսության գոհարներին, Սայաթ-Նովան մի կողմից ձայնակցում է հայ ժողովրդական հայրեններին, միջնադարյան հայ տաղերգու Գրիգոր Աղթամարցուն եւ այլոց, իր անմիջական նախորդ Նաղաշ Հովնաթանին, մյուս կողմից Դոստիին, ադրբեջանական աշուղ բանաստեղծ Աբբաս Դիվարգանլուն եւ պարսից մեծ պոետներին, մի կողմից՝ բիբլիական «Երգ-երգոցին», մյուս կողմից, արեւելյան հսկաներին՝ Ֆիրդուսուն եւ Բաբաթախերին, Նիզամուն եւ Ֆիզուլին...

Կասկածից վեր է, որ Սայաթ-Նովան ունեցել է սիրո մեծ տրագեդիա, որն սկսվել է 1740-ական թվականներին (հավանականը 1745-47թթ.): Այդ անհասանելի եւ հրկիզող բուռն թափն ու մեծությունը երգելու համար պահանջվում էր մայրենի լեզուն, այն լեզուն, որով թոթովել է մանկուց, որով մտածել ու մտածում էր: Սիրատոչոր բանաստեղծի վարար զգացմունքների համար լայն

հուն է բացվում մայրենի լեզվի միջոցով եւ նրա երգերը հորդում են ամբարտակը ձեղքած լեռնային գետի պես: Սա բանաստեղծի ինքնաձանաչությունն էր, մեծ գյուտն էր, որին հասավ բնական ու հասարակական զորավոր մղումով:

Անվիճելի է, որ Սայաթ-Նովան, մանավանդ հայ իրականության մեջ, հռչակվել է որպէս լիրիկ, սիրո երգիչ, նաեւ իր անձնական անբախտ սերը անօրինակ թափով ու նրբությամբ երգելու համար: Այս ամենը, իհարկե, նախ եւ առաջ պարտական է նրա բանաստեղծական տաղանդին, բայց երգչի նույնիսկ անձնական սերը եւ այդ մեծ սիրո մասին հորինած չափածո խոսքը հավասար չափով վառ ու անմար են մնում նաեւ այլ պատճառով: Այն, որ երգչի անձնական սիրո պատմության ու գրական-երաժշտական արտահայտության մեջ, նրա տաղանդի շնորհիվ, զարմանալի վարպետությամբ, չափի զգացումով ու անկեղծությամբ, հարազատորեն ցոլացել է իր ժամանակի հասարակական հարաբերությունների եւ կրոնական կապանքների մեջ խեղդվող ու բոցկլտացող սերն ընդհանրապէս եւ աշխատավոր ժողովրդի դարերով քանդած անբախտ սերը մասնավորապէս: Իսկ այս մեզ հետ կապված մի ամբողջ էպոխա է, մի աշխարհ, որի մեջ մարմնավորված է մեծ գուսանի անմեռ հմայքի գաղտնիքը, եւ որին նա հասնում է մայրենի լեզվով շարահյուսելու հատուկ ձեւերով, կենդանի ոճերով ու պատկերներով:

Իհարկե, Սայաթ-Նովան եւս իր շատ բարձրորակ խաղերի մեջ ունի միջին որակի խաղեր, բայց ոչ թույլ ու ձանձրալի: Ասում են, թե արծիվը երբեմն հավից էլ ցած է թռչում, բայց միշտ արծիվ է մնում: Միաժամանակ դժվար գործ է լավերի մեջ լավագույնի ընտրությունը: Նայած ո՞վ է ընտրում, ի՞նչ աշխարհայացքով-մոտեցումով, երբ է ընտրում, նույնիսկ կյանքի, տարիքի, անգամ տրամադրության ո՞ր պահին: Սա էլ վկայում է բանաստեղծի աշխարհընկալման հորիզոնի եւ տաղանդի մեծության մասին: Բայց եւ այնպէս անվիճելի է ընդհանուրի կողմից ձանաչվող բարձրարժեք երկի, արվեստի այս կամ այն գերազանց գործի գոյությունը:

Երկար ժամանակ զբաղվելով Սայաթ-Նովայի գրական ժառանգությամբ, եկել եմ այն համոզման, ավելի ճիշտ համաձայն եմ ծանոթ ու անծա-

նոթ այն ընթերցողների ու գրականագետների հետ, որոնք երգչի հայերեն ամենաբարձրորակ գործերը, այսպէս ասած շեղերները համարում են կամ կիսամարեն հետեյալ յոթ բանաստեղծությունները՝ «Պատկիրքս դալամով քաշած», «Աշխարհումս ախ չիմ քաշի», «Քանի վուր ջան իմ», «Խոսկիրտ մալում իմ արի», «Մե խոսկ ունիմ իլթիմազով», «Բլբուլի հիդ լաց իս էլի», «Դուն էն գլխեն իմաստուն իս» (2, 24, 29, 12, 31, 3, 10):

Որոշակի հերթականությամբ ներկայացնելով խաղերի այս ցուցակը, համարյա չեմ կարող համոզիչ առարկություններ գտնել, եթե ներկայացվի նրա յոթ այլ խաղերի ցուցակը, դնելով առաջին յոթնյակի հավասար շարքում, նույնիսկ մի երկուսի գերազանցությունը նշելով: Դրանք են. «Արի, համով դուլուդ արա», «Էնդուր աչքս չէ ցամաքում», «Էշսմետ հիվանդացիլ իմ», «Քամանչա», «Ինձ սիրեցիր էշին ընգար», «Գուգիմ ումբըս հենց անց կացնիմ», «Ինչ կոնիմ հե քիմն» (37, 33, 36, 1, 23, 15, 26):

Կասկածից վեր է, որ շատ ու շատ մարդիկ կնեղանան, որ այս ցուցակում չեն նշված N N 21, 53, 41, 54, 9, 39, 43, 60, 16, 35 եւ այլ խաղերը, որոնցից մի քանիսը շատ տարածված, հացի պես սիրված երգեր են:

Կրացերեն խաղերից գեղարվեստական բացառիկ արժեք են ներկայացնում հետեյալները. «Ինչ գարբար իմ», «Էշստ սիրտս», «Հենց իմացար սոված էի», «Ասողերու պես» եւ այլն:

Ադրբեջաներեն խաղերից - «Էշխի ծովի միջեն հանած», «Նազու յարի նախջը տեսք», «Խասս դաշտերում», «Լիրթս էրվից», «Պունգնիրտ բլբուլի պես բաց արա», «Մահըս իրա վուտով գու քա» եւ այլն:

Թերեւս ոմանց համար անտեղի ու անսովոր թվա այս ցանկը, քանի-որ Սայաթ-Նովան երկու հարյուր տարի ձանաչված եւ սիրելի անուն է պոեզիայի մեջ, եւ նրա բոլոր գործերը հաճելի են ու արժեքավոր: Բայց չէ որ թանկագին քարերի մեջ աղամանդը նշվում է առաջինը:

Սայաթ-Նովան իր սիրային մոտիվներում երգել է կնոջ հանդեպ ունեցած անձնագոհ սերը, կնոջ հավասար իրավունքը փոխադարձ սիրո մեջ, սիրո գերազանցությունը աստվածային դրվածք մահի հանդեպ, հոգու ազատագրությունը «չար եւ ազահ»

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

մարդկանց ստեղծած անաստված օրենքներից, դարավոր կապանքներից: Այս ամենը վկայում է, որ Սայաթ-Նովան մի ամբողջ գլխով բարձր էր կանգնած իր շրջապատից, հանդիսանալով գաղափարական մեծ քարոզիչ ու մարտիկ, մի խոշոր մարդասեր՝ հումանիստ: Եվ այս ամենը նա արտահայտել է պարզ ու հասկանալի, մարդու զգացմունքն ու միտքը զվարթացնող, գեղեցիկ ու վարակիչ տողերով: Ահա թե որը պետք է համարել կախարդական ուժի տեր տաղանդավոր գուսանի դեպի դարերը նայող առաջավոր գաղափարները:

Երբ կարդում կամ լսում ես Սայաթ-Նովայի խաղերը, զգում ես, որ այդ տողերի հեղինակը ոչ թե նախապես մշակել, հարմարեցրել է իրար մի բան ասելու համար, այլ բառերի բնական, սահուն ընթացքով խոսում է քեզ հետ, եւ դու նրա ամեն ասածը ընկալում ես հաժույթով ու հեշտությամբ: Նա իր ասելիքը շատ պարզ բառերով, երբեմն առանց պատկերների արտահայտում է այնպիսի նրբությամբ, պարզ զրույցի այնպիսի եղանակով, որ նման օրինակներ հազվագյուտ են գրականության մեջ.

*Գիշեր-ցերեկ ման իմ գալի, էշխետ
յանա-յանա, գոգալ,
Անգաճ արա, մանտաղ իմ քիզ,
մե քիչ կամաց գնա, գոգալ,
Աշխարհս ո՛մն է մընացի, վուր ինձ
ու քիզ մընա, գոգալ,
Մակամ մի՛ ռավ Սայաթ-Նովեմ՝
անգաճըտ խաղին կարոտ է: (30)*

*Աշխարհըս ծով, դուն մեշըն նավ,
ման գու քաս, փրփուր իս, ախպեր.
Վախում իմ թե ինձ էլ էրիս՝
անհանգչելի հուր իս, ախպեր...
Բսկի չին գալի, չին ասում.
«խիստ իս լալիս, Սայաթ-Նովա».*

*Զըլֆ միտկըտ մուրավիլի է,
սրտումըտ պխտոր իս, ախպեր: (13)
Իր լեզվով ասած, մեծ վարպետների «մշտական աշակերտ»-ը տարբերվում է իր շատ նախորդներից նաեւ նրանով, որ շատ քիչ բառերով մի ամբողջական պատկեր, միտք, վիճակ է արտահայտում, ավելի խոր, ավելի ազդու.*

*Էնդուր աչկըս չէ գամաքում՝
սրտիս մեշըն արին մընաց... (33)
Աշխարհս աշխարով կշտացավ,
յիս քիզանից սով, աչկի լուս... (31)
Էշխըն վառ կրակ է, էրվելով գու քա... (18)
Տա՛ լղա տվիր, զեմիս տա՛րար
ծովի պես... (26)
Դուն կըրակ, հաքածըտ կըրակ,
վո՛ր մե կրակին դիմանամ...*

Սայաթ-Նովայի հիպերբոլները՝ չափազանցությունները (որ թույլ կողմն է շատ հին ու նոր պոետների), զարմանալի բնական ու ներդաշնակ

են, չեն ճշում, չեն ցցվում «հավասար զոլից»:
*Տասնեմետ մեկըն չին ասի, թեգուզ աշխարհս քիզ
գովի... (2)
Բաս աշուղն վոնց դիմանա էտ քու տված կեծակուն...
Թե վուր սարերուն հանդիրիս, կու հալիս մումի նըման... (4)*


Բացառիկ է Սայաթ-Նովան իր սահուն, գեղեցիկ ու ընտրովի խոսքով, օրինակների եւ պատկերների թարմությամբ եւ ծայրագույն նրբությամբ.
*Յիրգնուց վըրետ ձուն է էկի, փունց
մանիշակ նուր իս, ջանում...
Ջընի տակեն նուր դուս էկած,
արիվ դիպած սընբուլի պես...
Մութըն տիղըն լուս իս տալի,
առանց կըրակ վառ բաց արած...*

Երկրում ու երկնքում նմանը չունեցող իր նազուլույթի այնուամենայնիվ երգիչը հաճախ հարկադրված է լինում համեմատել նաեւ երկրային տարրերի հետ: Բայց որովհետեւ այդ օրինակները վաղուց բերված են շատերի կողմից, ուստի գերադասում է «Երգ-երգոցի» «Չովտած շուշանն» ու «Ծովային ծաղիկը», քան սովորականը: Յարին համեմատում է մանուշակի հետ, այդ էլ ասված է հազար անգամ՝ «գարնան մանուշակ»: Սայաթ-Նովան վերցնում է ամենավաղ գարնան ամենաթարմ մանուշակը, որի վրա ձյուն է եկել, նույնը եւ սմբուլը, բավական չէ, որ այդ սմբուլը ձյունի տակից նոր է դուրս եկել, այլև պետք է արեփ առաջին շողերն ու ջերմությունը առած, այսինքն՝ այն պահին լինի, երբ սպիտակ գույնը կարմրին տալով է անցնում կանաչ գույնի. կամ թե մոպս տեղը լույս է տալիս յարը, առանց կրակի, հեքիաթային «օձի բերնի հուլի» (աղամանդի) նման...»:

Սայաթ-Նովան սովորական հետետող չէ, այլ ինքնուրույն մի վարպետ, եթե «Երգ-երգոցի» Ե գլխում ասված է. « Ես ննջեմ եւ սիրտ իմ արթուն կա» նրա խաղերից մեկում կարդում ենք. «Յիս գարթուն իմ, սիրտս է քնած»:

Արեւելյան բոլոր հեղինակների մոտ սոխակը միշտ արթուն է, երգում է, դալալում, լալիս, բայց Սայաթ-Նովայի խաղերում բլբուլը մեծ մասամբ ինքը հեղինակն է, անարդարության, չարության, դեմ ծառացած անեծք, բողոքի սիմվոլ: Մի տեղ միայն՝ «Քանի վուր ջան իմ» ջընաղ երգի մեջ իր յարին առաջարկում է զբոսանքի գնալ բախչեն եւ որպեսզի անդորրությամբ շնչող գիշերվա հասկացողությունը տա, դրա համար յոթ եւ ութերորդ տողերը ուժեղացնում է 15-րդ տողով.

*Բաղըն գարթարած, բլբուլն քնած վարթի սաջարին:
Գոնե ինձ հայտնի չէ, թե մի որեւէ այլ պոետ քնացրած լինի բլբուլին, եւ դրանով այդքան ուժեղ ընդգծած գիշերվա անդորրը:
Առաջին հայացքից մոնոտոն, միալար թվացող Սայաթ-Նովայի բազմաթիվ երգերն ու մոտիվները որքան նյութանսներ, ներքին տարբեր գծեր ունեն իրենց մեջ, նրանք*



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 61 արաբեսկաներ չեն, այլ նման են հայկական՝ միայն հայկական, մանավանդ բազմահազար խաչքարերի պարզ, անխճող քանդակներին: Առաջին հայացքի արտաքին նմանությունն իսկույն վերանում է ներքին բազմազանությամբ եւ մարդու աչքը չի կարողանում հեշտությամբ կշտանալ ու պոկվել ժանյակ դարձած այդ քարերից, որոնց սիմետրիան տրված է ներքին սիմետրիայի մեջ, եւ ոչ մի էլեմենտը չի կրկնում մյուսին: Այստեղ Սայաթ-Նովան խիստ շեշտված, զարմանալի հայ արվեստագետ է:

Այս երեւոյթը բացառիկ սրությամբ նկատել է Սայաթ-Նովայով հափշտակված եւ նրանով զբաղված առաջին ռուս մարդը՝ գրող Յակով Պոլոնսկին, 1850 թվականին, երբ տակավին չիրապարակված, դեռ բոլորին անհայտ խաղերի դավթարին ծանոթացել է Թիֆլիսում իր ընկեր-բարեկամ Գետրգ Ախվերդյանի մոտ: Պոլոնսկու այդ հափշտակությունն էր պատճառը, որ Սայաթ-Նովայի անունը առաջին անգամ, շատ ջերմ գնահատված հնչեց մամուլի էջերում «Кавказ» թերթի 1851թ. N 1 եւ 2-ում: Այստեղ էլ Պոլոնսկու թարգմանությամբ նույնպէս առաջին անգամ լույս տեսավ երգչի մի երկու խաղը՝ ռուսերեն լեզվով՝ Ախվերդյանի կազմած ժողովածուից մեկ տարի առաջ Ախվերդյանի ընտրությամբ եւ օգնությամբ թարգմանված: Պոլոնսկու ներածական խոսքից բերում ենք իրենց թարմությունը պահպանած հետեւյալ տողերը.

«Սայաթ-Նովայի երգերի բնավորության մասին ընդհանրապես խոսելով դժվար թե սխալվեմ, եթե ասեմ, որ նրանք բոլորովին նման չեն ոչ հարեան ցեղերի երգերին, ոչ էլ այլ երգերին, որ եկել են արեւելքից, թեւ հիշեցնում են նրանց:

...Սայաթ-Նովան ընդհակառակը գուտ քննադատական բանաստեղծ է, եւ թերեւս մեր ժամանակի հասկացողությամբ, չափազանց անհատական... Նրան ավելի դուր է գալիս, երբ ծիծաղի տակ արցունք է նկատում, քան երբ լսում է ծիծաղը, որ արցունքը ճնշում է:

...Սայաթ-Նովայի երգերում քիչ կան այն վառ փայլուն գույները, որոնցից արեւելքում բնությունը հաճախ առնում է մի տարօրինակ ու խաբուսիկ արտաքին փայլ: Չկան եւ այն ֆանտաստիկ պատկերները, որոնց ասես թե հաշիշն է ծնում: Առհասարակ նրա երգերում քիչ

երեակայություն կա, շատ՝ զգացմունք: Եվ այդ զգացմունքները նրա երգերում մեծ մասամբ արտահայտում են այնքան մեղմ ու անվրդով խաղաղություն, որ նրա սերը նման է ընկերության, ընկերությունը՝ սիրո... Նրա հոգու տարրը, ոգետրության ժամերին չի կարողանում հաշտվել զգայականության հետ, ինչպես կրակը չի կարող հաշտվել ջրի հետ: Նա այնքան է բարոյական, որ աշուղի կոչմանն էլ նայում է բարոյական տեսակետից»:

Սա մամուլի, գրականության առաջին գնահատականն է մեծ երգչին, նրա մահից ավելի քան 50 տարի հետո, նրան բռնությամբ մոռացության տալուց մոտ մեկ դար հետո, մեզանից ավելի քան մեկ դար առաջ ասված, որն ոչ թե պահպանել է իր ուժը, այլ տասնապատկվել:

Եվ այնպէս, ինչպէս ճորտ ջուլիակը իր տաղանդի, իր բնատուր հանձարի ուժով խրճիթից, արհեստանոցից, փողոցից ու հրապարակից իր կենդանության օրով հասավ մինչեւ թագավորական պալատ, այնպէս էլ նրա շողշողուն գրիչը, նրա բլբուլի ձայնը հեղինակի մահից հետո, արեւի շողի պէս մեկ դարի ընթացքում ձեղքեց բոլոր արգելքները եւ տարածվեց, բարձրացավ ու մուտք գործեց մինչեւ համաշխարհային արվեստի ու գրականության պալատները:

Սայաթ-Նովան իր խաղերում օգտագործում է այն մոտիվները, ձեւերն ու պատկերները, որոնք դարեր շարունակ զարգացել ու տարածվել էին Արեւելքում: Իր հարազատ հայկականից բացի, նա մեծ չափով կիրառում է պարսկականը, արաբականը, աղբրեջանականը, թուրքականը, վրացականը:

Առաջավոր Ասիայի եւ միջնադարյան հայ պոեզիայի օրինակով նա եւս իր պատկերների, տրոմպետների-մետաֆորների, էպիտետների ու այլագորիաների համար օգտագործում է տարբերների, բնության՝ կենդանական եւ բուսական աշխարհի լավագույն օրինակները, հասարակական կյանքի՝ առասպելների, հեքիաթների շարանները, էպիկական եւ իրական հերոսների, ապա՝ մետաղների, առավել ազնիվ մետաղների, թանկագին քարերի, բազմաթիվ գործվածքների, համեմունքների, խմիչքների, օժանելիքների հռչակված անունները (Թիֆլիսի կարավանային առետուրը եւ հարուստ շուկան նրա սուր աչքի առջեւ էին միշտ):

Նրա պատկերներում եւ օրինակներում գերակշռում են արեւն ու լուսինը, աստղերն ու կրակը, մարալն ու ջերանը, բլբուլն ու խարը, փարվանա-թիթեռը, սոնան ու բազեն, վարդն ու մեխակը, սմբուլն ու մանիշակը, շուշանն ու նունուֆարը, սոսին ու նոճին, հեքիաթ-առասպելներից՝ հրեղեն ձին, ֆենիքսը, սիրենները (հուրիներ), հեքիաթային օձն ու դեւերը: Վիպական ու պատմական անուններից՝ Ռուստամն ու Ջալը, Ֆահրադն ու Շիրինը, Սողոմոն իմաստունն ու մեծ Իսկենդերը, Մեջնունն ու Լեյլին, Բահուլը, Լողմանը, Աբելն ու Աբրահամը, Խոսրով Փարվիզը, Լենկ-Թեմուրը, վերջապէս Շահ-Աբբասն ու Նադիր Շահը, Ռուսթի ցար-թագավորը (Պետրոս 1-ին), Վրաց թագավորներ Յերակլն ու Գիորգին, 15-րդ դարի սկզբին իսլամի ատյանի վճռով կենդանի մորթագերծ արված թուրք-աղբրեջանական ըմբոստ փիլիսոփա-բանաստեղծ Նասիմին եւ ուրիշները:

Նրա հիշատակած աշխարհագրական անունների շարքում են Յնդկաստանն ու Չինու-Սաչինը, Իրանն ու Թուրանը, Արաքն ու Յաբաշը, Ֆրանգուտանն ու Ինգիզը, Ռուսթ-Մուսկովն ու Ենի-դունյա-Մանրիկան, Բյուզանդիան ու Ղրիմը, Թուրքիան ու Եգիպտոսը, Կիպրոսն ու Քիոսը, Իզմիրն ու Վենետիկը, Բուրսան ու Գյումուշխանան, Ադանան ու Յալեպը, Երուսաղեմն ու Սինայը, Իրաքն ու Բելուջիստանը, Բալխն ու Բուխարան, Մարանդն ու Շամը (Ղամասկոս), Շիրազն ու Խորասանը, Դաղստանն ու Աղբրեջանը, Թիֆլիսն ու Շամախին, Մուշն ու Էջմիածինը եւ այլ անուններ ու տեղանուններ:

Սա մեծ դիպացան է, բայց ոչ բացառիկ, արեւելյան գրականության մեջ: Տարբերությունն այն է, որ Սայաթ-Նովան այս անունները հազվադէպ դեպքերում է գործածում ոչ թե հանգի թելադրանքով, այլ յուրաքանչյուր դնում է իր տեղում, կապված տարածության, արտադրանքի կամ պատմական ու վիպական անցքերի հետ:

Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդայնությունը սովորականից տարբերվում է նրանով, որ նրա հեղինակը ինքը իր ժամանակի լավագույն տարբերով խտացված ժողովուրդն է, ինչպէս հանքի մի բեկոր, ինչպէս զարնան վաղորդյան մի ցող, որ արտացոլում է յոթնարփի արեւը: Բայց նա ցողից տարբերվում է նրանով, որ չի ցնդում եւ

ՍԱՅՄԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կրկնվում, այլ արձանացած, բյուրեղացած է՝ մշտապես:

Այդ համոզմանն ենք գալիս, մանավանդ, երբ համեմատում ենք երգչի լեզուն, խաղերում կիրառած պատկերները, ոճերն ու դարձվածքները, միմիայն իր նեղ շրջապատում թիֆլիսի եւ Լոռու հայկական միջավայրում տարածված բանահյուսական փշրանքների հետ: Ըստ որում, վերջիններս հավաքվել են երգչից շուրջ մեկուկես դար հետո, Տեր-Աղեքսանդրյանի եւ Ե. Լալայանի կողմից այն էլ՝ մի չնչին մասով: Սայաթ-Նովայի թողած ժառանգության ուսումնասիրությունը այս տեսանկյունով ուղիղ ծանապարհով բերում կանգնեցնում է մեզ Աբովյանի, Կոմիտասի եւ Թումանյանի շեմքին, մանավանդ՝ Կոմիտասի:

Ինչքան ժամանակ Սայաթ-Նովան մնաց որպես վրաց պալատական գլխավոր երգիչ-երաժիշտ: Բոլոր սովյալներից երեւում է, որ այդ տեւել է 15 տարի. երկու-երեք տարվա ընդմիջումով:

Երգիչը պալատում մնաց (Թելավում եւ հատկապես Թիֆլիսում) 1744թ. մինչեւ նվազագույնը 1759 թվականի ամառը կամ աշունը: Այս թվականին է, որ նա երկրորդ անգամ ամբաստանվեց եւ վտարվեց պալատից: Սկսվում է նրա, մեզ համար անհայտ, տրագիկ տարիները դեռեւս մայրաքաղաքում, որը տեւում է երեք մինչեւ 1762-1763 թվականները:

Ո՞րն էր կամ որո՞նք էին նրա հալածանքի պատճառները: Դժվար է հաստատ ասել բոլորը, բայց եւ չի կարելի չկռահել, քանի որ կան կողմնակի ժլատ վկայություններ, կան եւ տողամեջ կարդալու իր իսկ խաղերում որոշակի փաստեր:

Սայաթ-Նովան պալատում միայն սիրո երգեր չէր հորինում ու երգում, իր ձայնով ու նվագարաններով զվարճացնում մեջլիսների հյուրերին ու գոզալներին, հաճախ նույնիսկ հանպատրաստից, հատկապես վրացերեն, հորինում էր եւ քաղաքական սուր ոտանավորներ, քառյակներ եւ շանթում անարժան մեծամեծներին: Պալատական պայմաններում նա երբեք չդավեց «խալխի նոքար» իր կոչումին: Մեծերին նվիրված ծոցերի հեղինակ չդարձավ: Նրա սուր սլաքներից զերծ չէին մնում պալատականները, բարձրաստիճան թավադները, վաշխառուներն ու վաճառականները, նույնիսկ վրաց հոգետոր պետ, արքայական տան շառավիղ Անտոն կաթողիկոսը:

Էս վրաց թավադներու մեջ ջիվան կինքս մաշեցի, Անարզանքի դրոշմ ճակտիս, խալխի նամուս քաշեցի...

ասում է նա իր աղբբեջաններն ոտանավորներից մեկում:

Առաջին հայացքից եւ ընդհանրապես տարօրինակ ու անհասկանալի է, որ արքունիքին ծառայագրված մի ռամիկ, այն էլ հայ, կարող էր այսքան անպատիժ համարձակություն ցուցաբերել վրաց պալատական-իշխանական միջավայրում: Նախ պետք է կրկնել, որ Վրաստանում եւ հատ-


կապես Չերակլի պալատում հայի հանդեպ օտար վերաբերմունքը չի եղել իսպառ, անգամ հաշվի չի առնվել եկեղեցական-ծիսական տարբերությունը: Գլխավորը՝ դասային տարբերություններն էին՝ ֆեոդալական, թանձր ճորտատիրական պայմաններն ու կարգերն էին, որոնց կողքով չպետք է անցնել: Այս բացառիկ թվացող իրական փաստերի ծայրերը կապելու համար բանասերներից ոմանք ելնելով այն բանից, որ երգիչը իր մասին ասում է. «ես խումար եմ», Սայաթ-Նովային միաժամանակ համարում են պալատական ծաղրածու (խումարի), իսկ ծաղրածուին, ամենուրեք, որպես տրագիցիա թույլատրելի էր համարվում շատ բան. մեծերին իսկ ծաղրելը: Սակայն, բացի այն, որ այս բառը պարսկերենում նշանակում է գինով, հարբած, վրացերեն ավելի շատ նշանակում է սոսկ կատակաբան, զվարճասեր, զվարթ, քան ծաղրածու: Փաստարկ չի կարող ծառայել այդ ենթադրության համար նաեւ երգչի ամենավերջին գանգատ-ոտանավորներից մեկը, որի մեջ նա ասում է. «Թագավորներից մեջլիս կանչվողիս թավադների կողմից պատվով, ուրախությամբ ընդունվողիս, կարմրագույն կաբայով զարդարվածիս, սեւ քուրճը (կրոնավորի) բաժին ընկավ»: Նախ, կարմիր գույնի կաբան (շալից կամ մահուդից) անսովոր հագուստ չէր պալատներում եւ ազնվականների կենցաղում, երկրորդ՝ սիրո օբյեկտին նվիրած վրացերեն (տես 1 եւ 19) երկու խաղերում էլ հիշվող «խումար բառը բնավ չի համապատասխանում կատակաբան իմաստին, այլ նշանակում է՝ գինով:

Բայց սրանք վերը առաջ քաշված հարցին պատասխան ծառայել չեն կարող: Արդ, ո՞րն էր թագավորական սազանդարի այդ համարձակության գաղտնիքը: Մի թե միայն իր անձնական խիզախությունը կամ հասարակական առաջավոր հայացքները: Այդ գերազանցապես բխում էր Թեյմուրազ եւ մասնավորապես Չերակլ Երկրորդ թագավորների սկսած ներքին քաղաքականությունից, որպես սրա արձագանքը:

Պարսկական եւ թուրքական հզոր բռնապետությունների կռանի եւ սալի արանքում տառապող վրաց իշխանություններում անվերջ հրահրվում էին ֆեոդալական անջատականությունը, ըմբոստություններն ու ընդհարումները, ներքին որբւէ հեղինակություն չճանաչելը, ճորտ գյուղացիների անասելի հարստահարությունները, նրանց վաճառքը եւ այլն:

18-րդ դարի 30-40-ական թթ. Վրաստանում ծագեցին գյուղացիական ապստամբություններ եւ ճորտերի մասսայական փախուստներ՝ գյուղերից: Վանքապատկան գյուղացիները նույնիսկ ավելի շատ էին հարստահարվում, մեծապես տուժել էին արհեստներն ու առետուրը: Այս ամենը պետք է որ կարգավորվեր, որի համար էլ անհրաժեշտ էր նախապես ընկճել դիմադիր կենտրոնախույս ուժերին, որը եւ ձեռնարկվեց:

Օգտվելով բարեպատեհ քաղաքա- >>> 64



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 63 կան առիթից՝ Նադիր Շահի ժամանակ ձեռք բերած վստահությունից եւ ներքին իրավունքների ընդլայնումից, իսկ Նադիրի մահից հետո՝ հինգ տարվա ծանր պայքարով ձեռք բերած Վրաստանի անկախությունից ու ապահովությունից ոգետրված, Թեյմուրազն ու Յերակլը դիմեցին կենտրոնախույս էրիսթավների-ֆեոդալների սանձահարմանը, դիմեցին որոշակի ռեֆորմների՝ տնտեսական իրավական դատաստանական, կուլտուրական եւ այլ բնագավառներում, հատկապես գյուղացիների վիճակն ու իրավունքները զգալի չափով թեթեացնելուն:

Բռնի ուժից բացի, ինչպես միշտ, կարիք էր լինում դիմելու խոսքի ուժին-հորդորին, ծաղրին, մերկացմանը: Այս դեբում ահա հանդես եկավ նաեւ պալատական երգիչ Սայաթ-Նովան իր սուր խոսքով ու գրչով՝ վայելելով իր ամենագոր պատրոն Յերակլ թագավորի հովանավորությունը:

Եռանդուն եւ բարձր կուլտուրայի զարգացման ջատագով Անտոն կաթողիկոսը եւս ենթարկվեց Սայաթ-Նովայի ծաղրին, որովհետեւ թեքվում էր եւ նրա քաղաքական ազդեցության աստղը: Պալատի հանդեսում բոլորի ներկայությամբ ցույց տալով իր դատարկ, պատռված գրպանը, չափածո եւ հանգավոր եռատողերով երգիչը դիմում է կաթողիկոսին հետեյալ հանդուգն խոսքերով. «Սրբազնագույն դու պատրիարք, արժանավայել գովքդ պիտի տամ, ասում են գրպանուդ է (գրպանդ լիքն է), այդ ոնց պատահեց»: Այս տողերում երեւի ակնարկվում է կամ գյուղացիների կողոպուտը եկեղեցու կողմից կամ ավելի հավանականը ինչ-որ դրամական «մատակարարում» կաթոլիկ միսիոներների կողմից:

Զարմանալի է, որ բարձր առաքինության, համեստության տեր Սայաթ-Նովան խիստ անհարգալից է նույնիսկ բարձրաստիճան գիտնական-կրոնավոր-պետի հանդեպ: Հավանական է, որան մղել է առավել այն իրողությունը, որ վրաց կաթողիկոսը ընդհանրապես հետաքրքրություն էր ցուցաբերում կաթոլիկության սկզբունքներին եւ շատ մոտիկ կապեր պահպանում կաթոլիկ միսիոներների հետ: Նա փորձ էր անում խափանել Թիֆլիսի եւ Գորիի՝ հատկապես հայերին կաթոլիկ եկեղեցու փառախը հրապուրելու նրանց ջանքերը:

Վերջապես, երգչի քաղաքական

համոզմունքների եւ հասարակական ակտիվության դասային արմատները մեծ չափով պետք է որոնել քաղաքային, հատկապես արհեստավորական խավերի հասարակական-տնտեսական ձգտումների մեջ, որոնք հաճախ էին խլրտում ֆեոդալական բռնությունների դեմ եւ դրանով իսկ մոտենում գյուղացիության քաղաքական նկրտումների:

Անտոն կաթողիկոսի դեմ Սայաթ-Նովայի ելույթը պետք է, որ տեղի ունեցած լինի 1755թ. գարնանը, որովհետեւ կաթողիկոսը իր այդ վարքագծի համար մեղադրվեց նույն թվի օգոստոսին եւ դեկտեմբերին: Վրաց տարեգրողներից մեկը գրում է, որ պապական միսիոներները այդ ժամանակ արդեն Թիֆլիսում «ուր եկեղեցի ունեին... որոնք զավթել էին մի քանի հայոց եւ մի քիչ էլ վրացական եկեղեցիներ...կաթողիկոս Անտոնը, որ Թեյմուրազ թագավորի քրոջ որդին էր, պատրերին (հոգետր հայրերին) երես էր տվել: Վրաստանի ժողովուրդն ասում էր, թե կաթողիկոսը Հռոմի դավանությանն է հարել, որը արդարացի դուրս եկավ...»:

Նույն հեղինակը պատմում է, որ 1755թ. դեկտեմբերի 16-ին Յերակլ թագավորի նախագահության բարձրաստիճան հոգետրականների եւ իշխանների ներկայությամբ ատյան է կազմակերպվում եւ Անտոն կաթողիկոսը ու նրան հարած քահանաները խոստովանում են իրենց կատարածը: «Այս Անտոնին նույն ժամին կաթողիկոսությունից հեռացրին եւ արգելեցին պատարագել, հինգ (վրացի) քահանայի եւ մի հայ տերտերի եւս մյուս օրը կարգալուծ արին» (Լ.Մելիքսեթ-Քեկ, վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հատ. Գ. էջ109): Աթոռնկեց կաթողիկոսը հեռանում է Ռուսաստան եւ մնում մինչեւ1762թ. :

Ուշագրավն այն է, որ Սայաթ-Նովան, հագիվ մեկ-երկու տարի էր, ինչ առաջին անգամ երկու-երեք տարով պալատից վտարվելուց հետո կրկին վերադարձել էր պալատ, էլի շարունակում էր իր հանդուգն ելույթները:

Սա անկասկած է, որ 1752-53թթ. Սայաթ-Նովան ընկնում է թագավորի աչքից եւ վտարվում պալատից, որպիսի կարծիքի իրավամբ հանգել էր Գ. Ասատուրը: Պետք է ենթադրել, որ երգչի հակառակորդներին, ավելի շուտ նրանից վիրավորանք կրած մեծամեծներին, հաջողվել էր համոզել Յերակլին

սաստելու եւ վտարելու հանդուգն ռամիկին: Բավական է կարդալ 1753թվականին գրված երգչի հայերեն երկու ոտանավորները, մեկը դիմում վրաց թագավորին. «Դուն էն գլխեն իմաստուն իս», մյուսը իր անձնական մտորումները արտահայտող «Արի ինձ անգամ կալ, այ դիվանա սիրտ», որպեսզի պարզ լինի երգչի առաջին հալածանքն ապրելու: Սա նրա համար կրկնակի վիշտ էր, որովհետեւ դրանով նաեւ բաժանվում էր եւ իր գաղտնի սիրո օբյեկտից, որը եղել է նույն պալատական միջավայրում: Անհավանական չէ, որ երգչի սիրո այս փաստը եւս օգտագործած լինեն նրա դեմ, որն արտահայտվում է նույն թվականին գրված «Յիս կանչում իմ Լալանին» (11), ծածկատողեր պարունակող խաղում, հատկապես հետեյալ տողերում. «Դուն իս ասի՝ նհաղ տիղյարի սիրտը զայ անին», «Սկզբնական մերանին», «Սե ու այիբ մաս անին»... Որ այս կոնֆլիկտի հիմնական պատճառը երգչի սոցիալական մոտիվներով գրված սուր տողերն էին, երեսում է նաեւ վրաց «Դրոբեա» թերթում, 1878 թ. Զ. Մթածմինդելու հաղորդած վերսիսից. Սայաթ-Նովան կալվածատերերին դատապարտող վրացերեն մի խիստ ոտանավոր է գրել, ճորտ գյուղացիներին հարստահարելու առթիվ, որ տարածվել է ժողովրդի մեջ, բնական է, եւ աղմուկ առաջացրել, եւ որ ամենից ուշագրավն է, զայրացած ֆեոդալների զանգատները Յերակլը թողել է անհետեւանք: Եթե բարձր իշխանավորներին չհաջողվեց դրանով սաստել թագավորին, ապա նրա սիրահարության գաղտնիքը բաց անելով անպայման կհասնեին իրենց նպատակին:

Հայտնի չէ, թե Սայաթ-Նովան մինչեւ երբ մնաց պալատական երգիչ-երաժիշտ, բայց առայժմ, գուցե եւ ընդմիշտ, պետք է համաձայնվել, որ նա իր սիրո եւ իմաստուն խրատների «դավթարը փակել է» (Գ. Ասատուր)1759 թ. վերջերին կամ հաջորդ տարվա սկզբներին: Թեեւ կարելի է համաձայնվել արդեն ասված բանասիրական շատ տրամաբանական մի եզրակացության հետ, որ այդ տեղի է ունեցել 1762թ., երբ Պետերբուրգում Թեյմուրազի մահից հետո նրա որդին՝ արդեն միացյալ Քարթլի-Վախտեթի թագավոր Յերակլը, Պետերբուրգից ետ է կանչում համարյա արտոբված Անտոնին եւ վերականգնում կաթողիկոսական իրավունքի մեջ (մին-

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

չեւ 1788թ.), Անտոնը դեռ Թիֆլիս չհասած, պալատական ավագերեց Զաքարի Գարաշվիլին, որը կաթողիկոսին աթոռագորկ անողներից եւ նրա գլխավոր հակառակորդներից մեկն էր, ընդմիջտ փախավ Իմերեթիա: Կարող էր նրան անարգած հայ աշուղը այս անգամ եւս դիմանալ պալատում: Կարելի է առաջ քաշել նաեւ մի այլ դեպք, կապված հայ ազատագրական շարժմանը զինվորագրված հնդկահայ խոշոր քաղաքական գործիչ Յովսեփ Էմինի դիվանագիտական գործունեության հետ, որը Թիֆլիսում բանակցություններ էր վարում վրաց արքունիքում Յայաստանի ազատագրման հույսերը կապելով Յերակլի միջամտության եւ նրա կողմից այդ գործը գլխավորելու հետ: Սկզբում թագավորի հետ շատ բարեկամացած Էմինը վերջում կորցրեց իր վստահությունը, վտարվեց Թիֆլիսից եւ նրա հետ վտարվեցին հայ գործիչներից ոմանք: Այդ դեպքը տեղի ունեցավ մեզ զբաղեցնող 60-ական թվականներին: Պատմա-բանասիրական հաճելի գրավչություն ունեցող այս ենթադրությունը, որ առաջինը հայտնել է պրոֆ.Մեյիքեսե-Բեկը, խիստ թուլանում է հենց Սայաթ-Նովայի կրած պատժի ձեւից, որ անշուշտ Յերակլի հրամանով կամ համաձայնությամբ բռնի կերպով ձեռնադրվեց քահանա, եւ առանց ընտանիքի, մենակ քշվեց Զաքարալայի Կախի կոչվող փոքրիկ հայկական ավանը:

Սայաթ-Նովայի կենսագրության ամենամուգ էջերը, որ եւ ամենակարեւորն է, 1759թ. վերջերից մինչեւ 1762-63 տարիներին է վերաբերվում: Մեկ, թե մի քանի պատճառ է եղել պալատից վտարելուն եւ բռնի կարգով քահանա ձեռնադրելուն, անունը փոխելով Տեր-Ստեփաննոս, որը սովորական էր եկեղեցու կյանքում: Եթե մինչեւ 1762-65 թվականները մնացել է պալատում, ինչպես ենթադրում են բանաստեղծական վկայությունը, ուր են այդ տարիներին գրած խաղերը, միթե բոլորը կորան անհետ, կամ ինքը վառել, ոչնչացրել է: Եթե վտարվել է պալատից 1759թ. կեսերին (որին համամիտ ենք), մնացել է մայրաքաղաքում 3-4 տարի, թե հեռացել կամ հեռացվել, եւ ինչո՞վ է զբաղվել...Առայժմ ամենահավանականն այն է, որ պալատից վտարվել է ավելի վաղ, քան 1762-64թթ. (Անտոն կաթողիկոսի կամ Էմինի հետ կապված), որը այդ տարիներին մնացել է Թիֆլիսում հալածական վիճակում եւ իր գրած գուցե ամենագրեղ, բողոքով լի ցասունայից, ինչպես եւ ծանր ապրումներն արտահայտող գործերը ոչնչացրել է կամ մեկ ուրիշն է ոչնչացրել: Համոզված ենք, որ կենսասեր երգչի քահանա ձեռնադրելու պատիժը համապատասխանում է երգչի սիրո ռոմանը ջրի երես հանելուն: Սխալ է գրականության մեջ հնում տեղ գտած այն կարծիքը, թե իբր Սայաթ-Նովան հուսահատված, հոգնած աշխարհիկ կյանքից, իր կամքով է ընդունել հոգեւորականի ծանր լուծը՝ ապաշխարելու նպատակով: Եվ որպես ապացույց բերում են նրա հայերեն խաղերում հանդիպող այն տողերը, որոնց մեջ հանդի-

պում են քրիստոնեական կրոնի հետ առնչվող այս կամ այն բառը, մանավանդ 1753 թվականին գրած երեքնակ ոտանավորի-«Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե» տողը: Վկայակոչելով այս տողը, մոռացվում է, որ դրանից հետո մինչեւ 1759 թվականը նա ապրել է իր ամենաբուռն ստեղծագործական շրջանը՝ սիրային լավագույն խաղերով: Այս կարծիքին հարողները բավական է, որ մեկ անգամ եւս կարդան 1759թ. մարտի վերջին գրված «Պատկիրքս դալամով քաշած» բոցավառ սիրո բանաստեղծական գերագույն արտահայտությունը հանդիսացող խաղը, մի քանի օր հետո նույն թափի, բայց հակառակ սայրից գրված «Աշխարհս մե փանջարա է... խաղերումեն բեգարիլ իմ» խաղի հետ, որպեսզի հրաժարվեն իրենց կարծիքից: Այս տարբերությունը նկատելով, արդ՞յոք պետք է եզրակացնենք, որ հենց 1759թ., ասենք, ապրիլի 1-ից է սկսել Սայաթ-Նովայի տրագեդիան՝ բացվել նրա անհավասար սիրո գաղտնիքը, թե համարենք աշխարհի հետ հազար թելով կապված բանաստեղծի բոցկտացող տրամաբանության արգասիք: Եթե հնարավոր ենթադրությամբ ու տրամաբանությամբ 1759-ով թվագրված մի քանի խաղերից «Քամանչա»-ն համարենք հունվար-մարտ ամիսներին գրված, իսկ «Աջաք քու սիրտն ով շինից» (43), «Բեդասլին վուր՝ խոսեցնիս» (44), «Ինձ ու իմ սիրեկան յարին» (54) խաղերը համարենք ապրիլից հետո գրված, ապա կհանգենք այն եզրակացության, որ երգչի սիրո օբյեկտն է հրաժարվել նրանից կամ կռահելով հասարակ ռամկի հանդուգն սիրահարությունը, մատնել ու քշել է տվել պալատից:

Այսպես է ստացվում, որովհետեւ այդ խաղերում ենք կարդում հետեւյալ տողերը.

*Հայրաթ սերքս կես է էլի, վուր միգի
ատիլ է ուզում,*

*Չուրս տարեկան երեխի պես յարքս
խրրատիլ է ուզում: (43)*


*Մարթ վուր քու խոսկով մեռանի,
գալ անիլն ինչի՞ն է շահ...*

*Ում հաքին հին շալ ին տեսնում,
էլ չին ասում թե էս ով ա...(44)*

*Ով տեսնում է. էս է ասում «վայ քու
դարին, Սայաթ-Նովա...*

*«Ինչով չելավ, չըռաստ էկար մի լավ
յարին, Սայաթ-Նովա: (54)*

Սակայն ուշադիր հետեւելով հատկապես 1754-1758 թթ. գրված հայերեն խաղերի անմիջակա-նությանը, կասկած չի մնում, որ երգչի «նազանի յարը» ոչ միայն իրազեկ էր նրա բուռն սիրույն, այլեւ բաժանում է այդ սերը, սակայն սոցիալական անհավասարության, անշուշտ եւ ընտանեկան հանգամանքները նրան պահում են որոշակի հեռավորության վրա, եւ այդ սերը մնում է որպես հար կրկնվող, բայց կիսատ ու անավարտ մի ջքնաղ երագ: Ուշագրավ է, որ 1750-ա-



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 65 կան թվականների վերջերին երգիչը իր խաղերի դիվա- նը լրացնելու նպատակով սկսել է նոր սեռագրությունների արտագրությունը մի նոր դիվանի մեջ: Սակայն 20-րդ էջը, նույն թանաքով, «Նախշել է» շուրջ 9-10 տարեկան մի երեխա, այն է՝ իր որդի Մելքոնը, շատ անվարժ նկարելով մի գլուխ եւ «ծաղիկ»: Ավելի վատ է վարվել 70-րդ էջի հետ՝ ամբողջը լցնել ծանգառոցներով, չմոռանալով նաեւ իր անունը, ինչպես եւ 37-րդ էջում: Հարց է ծագում, մոտավորապես 1747-48 թթ. ծնված Մելքոնն (Մելիքսեթ) է եղել 1810 թ. ծնված Մովսեսի հայրը (1883), թե՛ երգիչը այրիացել է, զրկվելով եւ կնոջից, եւ որդուց, ապա կրկին ամուսնացել, այս անգամ 1768թ. տապանաքարով հայտնի (լռեցի) Մարմարի հետ եւ ունեցել չորս երեխա, ավագ որդու անունը նույնպես Մելիքսեթ դնելով: Շատ կսազեր, եթե երգչին, նրա բուռն սիրահարության ժամանակ, այրի համարենք, թե՛ն ընտանիք ունեցող 35-45 ամյա նման մի ներաշխարհով մարդը եւս կարող էր բուռն թափով սիրել, մանավանդ որ այն ժամանակ բացառիկ երեւոյթ էր սիրահարությամբ ամուսնությունը, իսկ երգչի թոռ Տեր-Մովսեսի ծնունդը 1810 թվականից, մի քանի տարով, առաջ համարելիք, կամ ավելի հավանականը համարենք 60-62 տարեկան նույն Մելիքսեթի որդին: Այս շատ ինտիմ հարցը մենք առաջ չէինք քաշի, եթե վերջին տասնամյակներում գրականության մեջ այդ մասին խոսք չլիներ ասված բծախնդիր բանասերների կողմից:

Իսկ ի՞նչ կարող էր լինել վրաց պալատական բանաստեղծ-երաժշտի սիրո օբյեկտը: Պարզ է մի բան, պալատին մոտ կանգնած, բարձր, զուցե եւ արքայական ծագումի մի երիտասարդ տիկին, որը 1755թ. մանկիկ է օրորել:

Աջաբ քանի ժամանակ է, թաք գիտենամ տարիտ, էրնեկ.

*Վունց ուտիլ գուզե, վունց խմիլ՝
մողըտ նստող յարիտ էրնեկ...*

Քու գաթըն քու նման կուլի,

կշտիտ ունիս օսկե բարուր,

Քալքա մեկ էլ դեղեն բերե՛

նման բարեբարիտ էրնեկ:

Երգիչը նախանձում է իր սիրածի մոտ

նստող յարին, որին կրկին երանի է տալիս

երեք տարի հետո (խ.38):

Էրնեկ ըլի քու տիրուչըն՝ մըտիկ տալեն չի բեզարի...

Էրնեկ մտաղը նստող յարին, վուր քիզի պես

համդամ ունե,

Խտայեն յարին չէ ռաստ էկի, քիզանից

խաթըրջամ ունե...

Սխալ կլիներ ենթադրել, թե այս վերջին երեք տողերը վերեւի երկրորդ տողի հետ կարող են իրեն, երգչին վերաբերել, ընդհակառակը, այստեղ հասկացնում է, որ իր սիրածը հավատարիմ է ընտանեկան առազաստին (եւ ոչ շատ սիրավետ ու «մատչելի», ինչպես կարծել են), եւ նրա հետ ապրողը, դավաճան (խային) յարի չի հանդիպել, հանգիստ ու վստահ է՝ «խաթըրջամ ունե»:

Այս վերջին տողից հետո, հեռվից հոգով-սրտով սիրող երգիչը իրեն մխիթարում է լոկ նրանով, որ ինքը սիրում է, իսկական սիրով եւ դրանով իսկ այլեւս աշխարհում ուրիշ հոգս չունի, որը սակայն, իրեն իսկ խաբելու փորձ է, որովհետեւ ուրիշ անգամ, նույն թվականին մատնում է իրեն այլ երազներ արտահայտելով՝ «Միռնելուս համա չիմ հոգում, ցիղի համա իմ լալի» (36), այսինքն՝ շատ կուզեի ժառանգ ունենալ քեզինից:

Դժվար է առարկել այն տարածված ենթադրության դեմ, որը մոտ 30 տարի է, ինչ սրամիտ փաստերով առաջ քաշեց սայաթնովագիտության լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ բանասեր Գեորգ Ասատուրը, որ իբր երգչի սիրո օբյեկտը հանիսացել է Հերակլ Երկրորդի քույր Աննան: Վերջինս, 1744 թվականին ամուսնացել է իշխան Դեմետրե Օրբելյանու հետ (տե՛ս Դ. 11 եւ Վ. 6, 7, 10, Ա. 33 խաղերի ծանոթագրությունները): Անվիճելի կարելի է համարել այն, որ երգչի անհասանելի «թագավոր» յարի անունը եղել է Աննա, բայց միթե պալատական շրջապատում (Թելավում կամ Թիֆլիսում) չէր կարող լինել մի ուրիշ Աննա եւս, թեկուզ կրկին թագավորական բազմանդամ ընտանիքից, որի գոյությունը ավելի հավանական կդարձներ երգչի հանդուգն սիրո վերսիսան: Այս հարցը մնում է չլուծված: Ըստ երեւոյթին սիրատույր երգիչը հաճախ է տեսել իր սիրածին: Եթե բառացի ընդունենք 1758 թվականին գրված խաղերից մեկի տողերը:

«Յիս էլ ուրիշ յար չիմ սիրի, աշխարումս դուն իս իմըն,

Թե մե շարաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ

քամանչի սիմըն»:

Վերջապես այս տեսակետից եւ ուշագրավ է այն, որ երգիչը իր բարդ ռոմանի հետ առնչվող ամենաուժեղ, կենդանի ու անմիջական տողերը գրել-երգել է հայերեն, որի պատճառներից մեկը, արդեն նշված հիմնական պատճառներից բացի, որոնց մասին ասվեց վերը, մասամբ կարելի է եւ իր որոշակի հույզերը թաքցնելու հանգամանքը համարել:

Բռնությամբ քահանա ձեռնադրվելուց հետո, տեր-Ստեփաննոս-Սայաթ-Նովայի առանց ընտանիքի եւ սիրած դավթարի նշանակում են Հաքաթայայի հայաբնակ փոքրիկ վաճառաշահ ավանի՝ Կախի-Քարվանսարայի ծխատեր քահանա: Սա պարզապես մի տեսակ աքսոր էր: Անկասկած է մի բան, որ հայոց ՌՄԺԵ (1215+551)= 1766թ. նրա ձեռքով, բավականին վարժ ու գեղեցիկ բոլորագրով ընդօրինակված ու կազմած եկեղեցական բավականին սովոր ժողովածուն չէր կարող հեփհեփ գրվել հենց նույն թվականին կամ թեկուզ մեկ-երկու տարում: Նոր կրած ծանր հարվածից հետո ժամանակ էր պահանջվում, որպեսզի նա հաշտվեր, հարմարվեր, տրամադրվեր եւ ձեռագրեր, նյութեր հավաքեր: Եվ, իրոք, իր թողած հակիրճ հիշատակարաններից զգացվում է, որ արդեն գրիչ Ստեփաննոսը երեք-չորս տարվա քահանա է: Դրանցից բերենք մի օրինակ.

Թուին հայոց ՌՄԺԵ, գիր տարլոյն Յոն է, տանուտերէն Այծեղջիրն է, Իսկ Խեցգետինն ու Կարիճն եւ Ձուկն՝ նահանց են:

Երբ գիր տարլոյն ի նոցա կարգն հասնիս ի մարտի ամիսն,

Թէ՛ Թէ՛ է, դու Փիւն բանեցոյ եւ թե Փիւր է, դու՛ զՇիւնն,

տոյնպես մինչեւ ցԱյրն: Ի թարլոյն ա գիր յառաջ տուր

եւ թիւ մի ավելի կալ գթուականն, եւ ուղիղ գաս:

Գրեցավ ի Կախոյ քարվասարէն,

ն՛կ ընթերցող յիշեալ զգծող գրոյս

մեղապարտ Ստեփանոս քայհանայս,

որ Սանեաղ Նովայ կոչեն,

եւ հայրն իմ մահտեսի Կարապետն եւ

մայրն իմ

Սառայ

եւ դուք յիշեալ լինիք յառաջի Այ, ամէն:

Պատշաճ պատահականությամբ

ՍԱՅԱԹՆՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քահանա բառը ոչ մի անգամ ճիշտ չի գրել բռնի նորընծա Ստեփաննոսը, բայց իր հարազատ Սայաթը, այստեղ արդեն անսխալ գրել է դ-ով-Սանադ (Սայադ): Ավելին, եկեղեցական այս ժողովածուի մի էջում էլ «անթույլատրելի» կերպով նշված են միայն «Սայիադ Նովայ գրեալ է» բառերը, առանց «մեղապարտ քահանա Ստեփաննոսի»:

Անվիճելի է, որ Սայաթ-Նովային քահանա են ձեռնադրել իր կամքին հակառակ, որպես պատիժ եւ այդ տմարդի վերաբերմունքը նա չնռաջավ մինչեւ վերջ: Նախապես գանգատվել-բողոքել էր իր «հոգեւոր հայր» թագավորին, որ «արդար դատե» որովհետեւ իրեն անարգել, վտարել են պալատից, որ չի կարող նրանից հեռանալ, եթե Քուռը բավական չլինի, ծովը կնետի իրեն: Այստեղ էլ նշում է, որ իր լեզվի պատճառով է ավելացրել իր դարդերը (Վ. 30):

Այս աղերսանք ոտանավորը պահպանվել է երգչի որդու կազմած ժողովածուի մեջ, վերջինիս հետեւյալ ծանոթագրությամբ. «Յիշատակված է, որ Սայաթ-Նովան, իր ողորմած, ամենուրեք հայտնի, Վրաստանի բարձրապատիվ տեր թագավորի կողմից դժգոհության է արժանացել եւ նա խռովել է իր խեղճ ստրուկ Սայաթ-Նովայից եւ հեռացրել պալատից, ասելով-«Էժան առած չկարծես»: Այստեղ դժվար հասկանալի են «Էժան առած» (գնած) բառերը, որոնք համընկնում են մի այլ բողոք-ոտանավորի «Թանգ առած իմ քու ահագին ծախսերով» տողին: Սայաթ-Նովան կիսաճորտ է եղել, արքունական տանը պատկանող, անձնապես ազատ, բայց պարտագրված, կախյալ վիճակում դրված՝ գլխի, որը չէր կարող գնված լինել, եթե գերի տարված չի եղել ինչ-որ դիպվածով կամ որեւէ ասպատակության ժամանակ, ապա փրկագնված թագավորը կամ դեռեւս թագաժառանգ Յերակլի կողմից: Դժվար է այդ ծախսերը հասկանալ որպես հագուստ, սնունդ, վարձատրություն, այդ դեպքում երկու կողմից չէր ասվի՝ «Էժան առած» եւ «թանգ առած»: Չի կարելի ասել, թե ասված է՝ բարոյական իմաստով, որ «թանկ» է նստել թագավորին, իր հանդուգն վարքագծի, գրգռիչ երգերի համար, անվերջ հովանավորելով: Ինչպես մեկնաբանում ենք, մնում է գերության, ստրկության վարկածը՝ Դաղստանում, Թուրքիայում կամ այլ վայրերում:

Կասկածների ու հարցերի համար ավելի առիթներ է ստեղծում ոտանավորի մի այլ տողը, ուր երգիչն ասում է .«ոչ հարսնախոս ունեմ, ոչ էլ կողակից»(կին): Նրա կինը՝ Մարմարը, մահացել է 1768թ.՝ թողնելով չորս զավակ, որոնց ծննդյան ժամանակամիջոցը պետք է նվազագույնը համարել 10-11 տարի, այն էլ այն պայմանով, եթե ընդունենք, որ բոլորը ծնվել են «փրար ետեւից», որ մանուկների վաղ ու միջանկյալ կորուստ չի ունեցել ընտանիքը, որը բացառություն էր այն ժամանակներում: Իսկ ոտանավորի ոգին ու բովանդակությունը վկայում են հալածանքի անմիջական, թարմ տպավորության մղումից գրվելու հանգամանքը եւ ոչ որպես

տարիներ հետո կատարված իրողության վերապրում: Բացակայում է նաեւ բողոքի եւ դժգոհության շեշտը, բացի «արդար դատվելու» աղերսական պահանջից: Այս բոլորը մղում են դեպի այն կասկածը, որ այս ոտանավորը եւս կարող է գրված լինել առաջին մեղադրանքի եւ վտարման ժամանակ մոտ 1752թ., երբ հնարավոր է, որ Սայաթ-Նովան այրի եղած լինի, բայց ոչ ամուրի, ինչպես երբեմն հայտարարում են որոշ բանասերներ:

Մինչդեռ բոլորովին այլ տրամադրությամբ է հանդես գալիս երգիչը, հոգեւորական դարձնելու նախօրյակին կամ նոր միայն ձեռնադրված ժամանակ գրած բողոք-ոտանավորի մեջ.

*Ձեռը վի կալ, վաղ մարթութին
չիմ ուզում...
Յիս մարդ մարթ իմ՝ նամարդութին
չիմ ուզում.
Յիս ռամիկ իմ՝ թավադութին չիմ ուզում:*


*Եկ մի վիթի իմ արունըս թասերով...
Դուն ինձ պահիր ատլատով ու խասերով,
Միլ կաբայում սրբվորութին չիմ ուզում:*

Բայց զգալով, որ իր ասածները (բացատրությունը) թագավորը ճիշտ չի համարելու, որ սգավորի (հոգեւորականի) սեւ կաբան վճռված է հագցնել, կտրել կյանքից, զրկել արվեստից, նա վերջին տողում, խռոված տոնով, բայց համարձակ եւ արժանապատվության բարձր զգացումով, ինչպես եւ հայերեն 10-րդ խաղում, բացականչում է.

«Աղուհացիտ ախպերութին չիմ ուզում» (Վ. 31, նախորդ հրատ.25):

Կնոջ մահից մի քանի տարի հետո, երեւի 1770-ական թթ. Սայաթ-Նովա-Տեր-Ստեփաննոս քահանային վանականի (վարդապետ) աստիճան են շնորհում եւ փոխադրում իր հայրենի Յաղպատի վանքը՝ «Վրաց տան» հայոց հոգեւոր թեմի կենտրոնը, իհարկեւ, կարող էր եւ կնոջ մահից 2-3 տարի հետո վարդապետ ձեռնադրված լինել, մանավանդ, որ արդեն ծանաչված ուսյալ, գիտնական-քահանա էր, կամ նրա աշխույժ բնավորության ու ոչ հեռավոր անցյալում հանցավոր ծանաչելու համար շտապեին հեռացնել մայրաքաղաքից, բայց երեխաները փոքր, անչափահաս էին զրկվել մորից, պետք է, որ թույլատրած լինեին, գոնե 6-7 տարի մնար ընտանիքի հետ, մինչեւ որ նրանք ջրաթափվեին: Այդ պատճառով ավելի հավանական է, որ Սայաթ-Նովան վարդապետ ձեռնադրված լինի 1775 թվականին՝ կնոջ մահից յոթ տարի հետո:

Յաղպատում Սայաթ-Նովան լուսարարի պաշտոն է ստանձնում, որը հայտնի է իր մի կորած ոտանավորից պահպանված երկու տողից. «Յաղպատի լուսարար Սայաթ-Նովեն իմ, մէ կանթիղս վառելու ձեթ չունիմ»: Այս երկու տողը շատ բան են ասում կենդանի թաղված բանաստեղծի տրամադրության եւ բոլորովին անհայտ կենսագրության համար: Այս երկու տողից եւս պարզվում



ՍԱՅՈՒՄՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 67 է, որ նա քահանա եւ վարդապետ ժամանակ էլ իրեն կոչել է Սայաթ-Նովա, երկրորդը՝ շարունակել է գրելը, եթե ոչ խաղեր, գեթ՝ խրատական-խոհական տաղեր: Հիշենք նաեւ աղբրեջաներեն լեզվով պահպանված շատ հայտնի երկտողը, ուր ասված է «Չըխմանամ քիլիսադան, դոնմաջամ Իսադան» (չեմ դուրս գա եկեղեցուց, չեմ ուրանա Հիտուսին): Ինչպէս հայտնի է, այս երկտողը վերագրված, հարմարեցված է երգչի տրագիկ մահվան վերսիային, որ իբր նա արտասանել է, երբ պարսից բանակի սարվազները թուր են քաշել իր վրա: Այս երկտողը նույնպէս, գուցէ եւ առաջ, աշխարհական ժամանակ, գուցէ եւ, հավանականը, քահանա կամ վանական ժամանակ գրված եւ կորած ոտանավորներից մեկի բեկորն է: Հայերեն գրված երկու առակները(58, 59), նույնպէս գրված կլինեն այդ տարիներին: Բայց, որ ունի վրացերեն լեզվով իր վիճակը ողբացող եւ գուցէ նույնիսկ 70-ական թվականներին, երբ արդեն շուրջ 60 տարեկան էր, գրված մի ոտանավոր, այդ արդեն անկասկած է: Սա հայտնի «Իմ խիղճ զըլուխ քիզիդ էս ինչ պատահից» ոտանավորն է, ուր հիշում է իր անցյալ լավ օրերը, կրկին չմոռանալով իր պատժված լինելու հանգամանքը. *Բըրինձ էի, գարի դառնայն ինչին էր... Անք, կրոնավոր դառնայն ինչին էր, Իմ տունն էլ, վուր էսօր էս խոցն էլավ, Դե էլ յիս ում միդ դընիմ, ինչից էլավ. Էս ամենըն հենց իմ էս խիքից էլավ:*

(Վ. 32)

Այս խաղը իր խցի մեջ վրացերեն երգել է, իր չունգուրի նվագակցությամբ, Հաղպատի ծեր վանականը՝ Սայաթ-Նովան, եւ նույն ժամանակ երեւի, գրի է առել երիտասարդ վրացի արեղան, որ Էջմիածնից վերադառնալիս հյուրընկալվում է դեռ անծանոթ, վրացախոս վանականի կողմից: Երիտասարդ արեղան զարմացած ծեր վարդապետի այս անսովոր «անվայել» ելույթից, ուր ողբում էր իր հոգեւորական դառնալը, եւ բացականչում է. ««Վարդապետ, դեպի ձախ ես խոտորում»». «Երբ քո տարիքին էի, դեպի ձախ էլ էի գլորվում, դեպի աջ էլ»». «Ուրեմն դրա համար ես սգում ու լալիս»». - «Դրա համար էլ, քեզ համար էլ, որ այդքան ջախել դարձել ես կուսակրոն», - ստանում է հյուրասեր, անծանոթ վանականի պատասխանը: Հյուրի հարցին, թե ո՞ւմ հետ է խոսում. - «Ես դժբախտ Սայաթ-Նովան եմ, եթե

լսել ես, իհարկե»: Արեղան պատասխանում է. «Ինչպէս չեմ լսել. քո համբավը, որպէս լավ երաժիշտ եւ խելոք մարդ տարածված է ամեն տեղ», եւ այնուամենայնիվ խորհուրդ է տալիս աշխարհիկ երգերից ու սագից ձեռք քաշել:

«Իմ վանահայրն էլ է նույնն ասել ինձ, - սրամտելով պատասխանում է Սայաթ-Նովան, - բայց ես հետեւյալ պայմանը դրի, քանի որ այս լարերը չեն կտրվել եւ սագիս վրա են, ես նրանցից ձեռք քաշողը չեմ, որովհետեւ ինձ արեղա ձեռնադրելու ժամանակ այս լարերը գրպանումս էին մնացել եւ ինձ հետ միասին օրհնվել, ուստի նվագում եմ օրհնված լարերով»: Այսպէս խաղաղ ու կատակներով մենք վերջացրինք մեր ծաշը»-պատմում է երիտասարդ արեղան (Իոնն Խելաշվիլին):

Որ տարեց վանական Սայաթ-Նովան չէր կտրվում իր սիրած արվեստից, վկայում են նաեւ սերնդից սերունդ անցած որոշ ավանդություններ, պահպանված Թիֆլիսի հայ, վրացի եւ աղբրեջանցի բնակչության մեջ: Դրանցից մեկը բերում է Սայաթ-Նովայի առաջին կենսագիր Գ. Ախվերդյանը (չհավատալով իհարկե), որ Սայաթ-Նովան Հաղպատից երբեմն գալիս էր Թիֆլիս, իր վաղեմի շնորհքը ցույց տալիս ծպտյալ աշխարհականի հագուստով: Մանավանդ բոլորի կողմից նշվում է մի դեպք, որ Սայաթ-Նովան լսում է մի օտարական աշուղի Թիֆլիս գալը եւ աշուղական «բասս»-ի՝ մրցման ժամանակ մայրաքաղաքի բոլոր աշուղներին հաղթելու լուրը: Նա չի համբերում, գալիս է քաղաք, ծպտյալ ներկայանում անպարտելի աշուղին, գրույցի բռնվում նրա հետ: Վերջինս պատմում է իր հաղթանակների մասին եւ ափսոսում, որ հռչակված Սայաթ-Նովային չի հանդիպել: Այնուհետեւ թուրքերեն լեզվով (երեւի թուրք կամ աղբրեջանցի է եղել) հարցնում ուշիմ ծերունուն. «Դու չգիտես, որ այդպիսիս աշուղ է եղել, չեմ ճանաչում նրան, չեմ տեսել նրան»: Սայաթ-Նովան յուրաքանչյուր հարցին պատասխանում է մեկական, բայց երկիմաստ բառով-բիւմանամ (չեմ իմանա) թանըմանամ (չեմ ճանաչած), գյորմանամ (չեմ տեսնի, չեմ տեսած): Աշուղը չկռահելով, որ այդ բառերը երկրորդ իմաստով են ասված՝ բիլ, մանամ-(իմացիր, ես եմ), գյոր, մանամ (տես, ես եմ), թանը, մանամ (ճանաչիր, ես եմ),

ասում է. «Չեմ հավատում քո պատասխաններին, որովհետեւ նա ամենից ճանաչված, հռչակվածն է եղել»: Սայաթ-Նովան ձեռքը դնում է կրծքին եւ շեշտված ասում՝ ինան՝ մանամ (չեմ հավատա) կամ՝ ինան, մանամ- հավատա, ես եմ: Աշուղը վայր է դնում իր սագը եւ պարտված հեռանում Թիֆլիսից: Եթե անգամ սա մի սովորական ֆոլկլոր լինի, ավելի հին անցյալով, բայց հենց այն փաստը, որ աղբրեջանական իրականության մեջ վերագրված է միայն Սայաթ-Նովային, ցույց է տալիս նրա մեծությունը եւ մեծ ժողովրդականությունը:

Այդպիսին է եղել Սայաթ-Նովան, եւ այդ պատճառով էլ նրա ֆիզիկական վախճանի, մահվան ժամանակն ու հանգամանքները տասնապատիկ ավելի են զբաղեցրել ժողովրդին եւ մասնագետներին, քան նրա ծննդյան ժամանակի հարցը: Սկսած Գ. Ախվերդյանից, մինչեւ 1930 թվականը, 80 տարի, անվիճելի է համարվել այն ավանդությունը, որ Սայաթ-Նովան շատ-շատերի հետ սրախողխող սպանվել է Պարսկաստանի դաժան տիրակալներից մեկի՝ ներքինի Աղա-Մահմեդի սարվազներից, 1795թ. սեպտեմբերի 11-ին (ս. տ. 22-ին) Թիֆլիսի գրավման եւ ավերման ժամանակ: Այդպէս են պատմել Ախվերդյանին նրա թաղմանը մասնակցած իր ժամանակի ծերերը, 1848-1851 թվականներին: Այդ վերսիան չի ժխտել երեւի նաեւ Սայաթ-Նովայի թոռ Տեր-Մովսես (1810-1883) քահանան, (որը, ի դեպ, վանքի եկեղեցու ավագերեց լինելով, 1839 թ. սեպտեմբերի 8-ին պսակել է Խ. Աբովյանին), մի գրագետ մարդ, որը 1844 թվականից, միաժամանակ, վարել է Ներսիսյան դպրոցի տպարանն ու գրատունը: Տեր-Մովսեսն է իր պապի ձեռագիր դավթարը 1848թ. տրամադրել Գ. Ախվերդյանին, ապա՝ ետ վերցրել:

Պարսից բանակը հազարավոր գերիներով ու մեծ ավարով Թիֆլիսից դուրս գալուց հետո, «վեր են առնում նրա մարմինն, -գրում է Ախվերդյանը, - ու թաղում են մեծ բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դռան առջեւ: Թեպետ Սայաթ-Նովու գերեզմանն չունի քար գցած, բայց էսպէս պատմում են նրա թաղման պատահողները»:

Բնական է, գիտական միտքը չի կարող բավարարվել ավանդություններով, երբ հանդես են գալիս դրանք մերժող կամ լրացնող իրական փաստեր:

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վրացական արխիվներից Գ. Լեոնիձեն եւ պրոֆ. Մելիքսեթ-Քելը հայտնաբերեցին վկայություններ, որ Սայաթ-Նովան մեռել է իր բնական մահով՝ 1801 թվականին: Անկախ դրանից, վերը հիշված վրացի արեղան Սայաթ-Նովային հանդիպել է Յաղպատում 1800թ. աշնանը: Իսկ եթե սրանց գումարում են եւ այն, որ Սայաթ-Նովայի նահատակության մասին ոչ մի ժամանակակից իր հիշողություններում չի նշել, բայց այդ օրը սպանված մի քանի, նույնիսկ երկրորդական մարդկանց անուններ են տալիս, ապա նրանց կռվաններն ավելի տրամաբանական, ավելի զորավոր են դառնում: Իր որդիները (եւ թոռները) նույնպես ոչինչ չունեն ասած այդ մասին բայց եւ չեն առարկել Գ. Ախվերդյանի բերած վերսիայի դեմ:

Փաստական-բանասիրական կարգի վերջին ավելի զորեղ եւ տրամաբանական վերսիան, որ երգիչը մահացել է ուշ, իր բնական մահով, ավելի զորավոր կլիներ, եթե չլինեին կասկածի կամ ժխտման իրավունք ընձեռնող հետեյալ հանգամանքները՝

- ա. ժամանակակիցները կարող էին հատուկ չնշել հազարավոր երիտասարդ սպանվածների հետ սպանված մի շատ ծեր վանականի անունը, մանավանդ որ սպանված շատ քիչ մարդկանց անուններն են հիշել.
- բ. կարող էին չնշել Սայաթ-Նովայի սպանության մասին, որովհետեւ շատ շատերին է հայտնի եղել, իսկ երբեմն շատ հայտնի բանը հատուկ չէր նշվում ժամանակակից կողմից.
- գ. կարող էին չնշել Սայաթ-Նովայի սպանության մասին, որովհետեւ արդեն մոտ 35 տարի էր, ինչ նա չկար թիֆլիսի հորիզոնում եւ միայն ճանաչում էին ծերերն ու մոտիկները, որոնցից ոչ մեկը հիշատակարան չի թողել.
- դ. Թիֆլիսի ավերման մասին գրավոր տեղեկություններ թողած հայ հեղինակները չէին ճանաչում Սայաթ-Նովային, իսկ մեկ-երկու ճանաչողները անուններ չեն հիշատակում: Օրինակ, խոշոր գրասան Շասնի Մելքոն (ծնվ. 1760-65թթ.), որի ընտանիքը ամենից շատ էր տուժել, ինքն էլ հերոսաբար մասնակցել էր քաղաքի պաշտպանությանը, սպանել «չորս ղզբաշ գինվոր եւ մի խան (հրամանատար), այդ մասին միայն մի տող է գրել. «Վարդապետներ կոտորեցին, լեշեր էր ածած տերտերի»: Մի այլ ժամանակակից՝ Յովհաննես վարդապետ Ղրիմեցուց եւս ավելին պահանջել չի կարելի, որովհետեւ անուններ չի հիշում: Նա պատմում է, որ երբ իրանական բանակի առաջապահ գունդը թափանցեց վրաց մայրաքաղաքը, կոտորեցին բերդի եկեղեցում թաքնված հաղպատցի վարդապետներին, որոնք ողջ գյուղի հետ փախել եկել էին Թիֆլիս: Ինչո՞ւ չէր կարող սրանց մեջ լինել եւ Սայաթ-Նովան: Սայաթ-Նովան ավելի ճանաչված էր վրացական բարձր շրջաններում, որոնց ներկայացուցիչներից եւ ոչ

մեկը չի իմանում՝ չի հիշում նրա սպանության մասին, ընդհակառակը, նրանցից երկուսը, առանց որեւէ դրդապատճառի կամ հատուկ հետաքրքրությունից մղված, անմեղորեն գրել են վերը բերված փաստերը:

Սակայն այստեղ եւս առարկելու հարցեր են ծագում:

ե. ինչու նրանցից եւ ոչ մեկը 1851-56թթ., երբ հայերեն եւ ռուսերեն լեզվով գրում էր երգչի եղերնական մահվան մասին, նրան ճանաչող 70-80 տարեկան մարդկանցից եւ ոչ մեկը չառարկեց եւ չասաց, որ նա չի նահատակվել, այլ իր բնական մահով մեռել է 5-6 տարի հետո:


զ. Ավելին, այնքան, որքան ամենագլխավոր եւ հավաստի աղբյուրը, վրաց թագավորների տան ամենամոտ մարդկանցից մեկի որդու (1809թ. ծնված), պատմաբան Պլատոն Յոսելիանու վկայությունն է, իր հոր պատմածների հիման վրա, որ Սայաթ-Նովան մեռել է 1801թ., հիշողության դավաճանությունից բխած թյուրիմացություն կարելի է համարել: Այդ ասում ենք այն պարզ պատճառով, որ Յոսելիանին Սայաթ-Նովային համարում է վրաց վերջին թագավոր (1798-1800) Գիորգի 13-րդի մերձավորներից, համարյա շքախմբի անդամներից մեկը, որը պարզ թյուրիմացություն է 80-ից ավելի տարիք ունեցող ծեր վանականի համար:

Այդ նման է մոտավորապես հիշողության շփոթից եւ «ասում են»-ներից ստեղծված այն վերսիային, որով Յաղպատի 80-83-ամյա զառամյալ վարդապետին «կանգնեցրել էին Թիֆլիսը պաշտպանող ժողովրդի առաջին շարքում որպես նվագող-ոգետորող, որպիսին իրոք եղել է, բայց ոչ Սայաթ-Նովան, այլ՝ նրա աշակերտ Մաչաբելին:

Ավելի զորավոր փաստը վրացի արեղայի հանդիպումն է Սայաթ-Նովային՝ Յաղպատում, իբրեւ թե 1800թ. վերջին: Սակայն երկու վանականների ճաշկերույթի ընթացքում տեղի ունեցած զրույցի հոգեբանական անալիզը ցույց է տալիս, որ այդ ոչ թե 80 տարին անց վանականին (կամ ոչ վանականին), այլ ամենաշատը 70-75 տարեկան մարդուն համապատասխանող ճաշկերույթ է եւ տրամադրություն: Այսինքն՝ ավելի վաղ եղած մի հանդիպման արդյունք:

Սակայն այս ամենը իրավունք չի տալիս առ այսօր ժխտել, որ Սայաթ-Նովան չէր կարող իր բնական մահով, ավելի ուշ, մեռած լինել: Բայց զորավոր եւ անժխտելի դարձածը երգչի գերեզմանի գոյությունն է, որի վրա 1914թ. մայիսի 15-ին հայ զորողների, մասնավորապես Յովհ. Թումանյանի եւ նկարիչ ու գրական գործիչ Գ. Բաշինջաղյանի նախաձեռնությամբ, հայ եւ վրաց գրական գործիչների եւ ողջ Թիֆլիսի հասարակության կողմից կանգնեցվեց մահարձան:

Թիֆլիսի բոլոր լեզուներով խոսող բազմահազար բնակիչներ, համքարներն իրենց դրոշակներով, հայկական դպրոցների



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«69 աշակերտները, բանվորներ, ծառայողներ, գիտնականներ, գրողներ եւ արվեստի գործիչներ, յուրաքանչյուրի կրծքին մի կարմիր վարդ, որպէս երգչի սիրո սիմվոլը՝ այդ օրվա խորհրդանշանը, շարժվում է դեպի Կաթողիկէ սուրբ Գեորգ եկեղեցին, եւ բացվում է համաժողովրդական շքեղ ու պատմական հանդես, նվիրված Սայաթ-Նովայի անմահ հիշատակին, նրա սրբազան դարձած գերեզմանի վրա: Ահա թէ դրն է անժխտելին:

«Աշուղների պոեզիան անհասանելի բարձունքներին հասցնող երգիչը եղել է Սայաթ-Նովան. իր հանձարի ուժով ժողովրդական երգի արհեստը նա դարձրեց պոետի բարձր կոչումը» - գրել է ռուս նշանավոր գրող Վալերի Բրյուսովը:

Ինչպէս հայտնի է, տասնյակ հայ, վրացի, ռուս, ադրբեջանցի եւ օտար հանրահռչակ հեղինակություններ ամենաբարձր, ամենաջերմ եւ անկեղծ գնահատականներով են խոսել Սայաթ-Նովայի մասին, վեր հանել նրա արժանիքները եւ տաղանդի ուժը:

Ինչպէս Զ. Թումանյանն է ասել. Սայաթ-Նովան *«մոդա չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի... գեղեցիկ ձեւի մեջ մի մշտական հուր հոգի է նա, մի ազնիվ եւ լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ, որ մեր աշխարհքի հարազատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա...»*:

Իր ժամանակակիցներից մի ամբողջ գլխով բարձր կանգնած Սայաթ-Նովան, իրավամբ համարվել ու համարվում է Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության մի անթառամ սիմվոլ:

Իր մայրենի լեզվով եւս մտնելով գրական ասպարեզ, Սայաթ-Նովան համարձակ կերպով դիմեց ժողովրդական հարուստ, կենսալի խոսակցական լեզվի օգնությանը, մերժեց տաղերգուների դարավոր քարացած բանաստեղծական ձեւերը, առաջ քաշելով ժողովրդական ոճերն ու ներդաշնակ՝ բացառիկ սիմֆոնիայով հանգավորման եղանակները: Սակայն սրանք եւս անբավարար էին նրա այդ մեծ գործի համար եւ նա ավելի մեծ համարձակությամբ դիմեց ժողովրդի մեջ տարածված ու հարազատացած պարսկական եւ թուրքական պոեզիայի հարուստ ձեւերին ու հանգավորման եղանակներին եւ, հայերին ծանոթ, այդ լեզուներից ընդհանրացած բազմաթիվ բառերի ու

տերմինների:

Ավելին, Սայաթ-Նովան կոտրեց նաեւ շեշտադրման քարացած կանոնները եւ կիրառեց ժողովրդական-գրուցային ազատ շեշտը, հաճախ դնելով բառերի առաջին վանկի վրա, մանավանդ, որ հայոց լեզվում շեշտը չի փոխում բառի իմաստը: Այսինքն՝ Սայաթ-Նովան կատարեց այն, ինչ չկարողացավ հաղթահարել իր շնորհալի նախորդը՝ Նաղաշ Զովնաթանը:

Սայաթ-Նովան հպարտությամբ իրեն կնքեց աշուղ անունով, մերժելով նույնիսկ տաղ բառը, իմանալով, որ այդ գալիս է եկեղեցական, հոգետր երգերի անունից, փոխարենն ընդունելով ժողովրդական խաղ բառը: Որպէսզի չթվա, որ նա այդ արել է բարբառի ազդեցությամբ ինքնաբերաբար, հիշենք մի երկու օրինակ. «խաղ իս էլի, Սայաթ-Նովա», «խաղի դավթար իմ քիզ համա». եւ միաժամանակ, հատուկ նշում է խաղն ու տաղը՝ անջատված իմաստով.

*Մեջիսներու խաղըն դուն իս,
Վանքերումըն տաղըն դուն իս:
Սայաթ-Նովու բաղըն դուն իս(28):*

Երգչի գրական ժառանգության մեջ սիրային մոտիվին նվիրված բազմաթիվ խաղերի շարքում հանդիպում ենք իր անձնական վշտերն ու ապրումներն արտահայտող շուրջ 15 խաղի, նույնքան էլ ինքնաձանաչությանն ու իր արժանապատվության զգացումներին է նվիրված, բայց այս ամենի մեջ զգալի տեղ են գրավում Սայաթ-Նովայի խոհական-խրատական մոտիվները, որոնց նվիրված է նրա ստեղծագործության մեկ հինգերորդից ավելին: Դրանցից շուրջ 30 խաղ գրված է ադրբեջաներեն լեզվով, երկու երրորդը թարգմանված եւ տեղ գտած սույն ժողովածուում: Ըստ երեւոյթին, մոտավորապէս այդքան էլ պետք է եղած լինել վրացերեն, բայց որովհետեւ վրացերեն խաղերի ժողովածուն, դավթարի մի զգալի մասի հետ կորել է (գուցէ եւ անդարձ), ուստի մեզ հասել է նման մի քանի խաղ միայն (օր.22, 23, 29):

Չամարձակ կարելի է ասել, եթէ Սայաթ-Նովայից պահպանվելին միայն այս ոչ սիրային մոտիվներով գրված խաղերը, թեկուզեւ համեմված կրոնական մորալով, նա կրկին պատվավոր տեղ կգրավեր գրականության եւ գրականության պատմության մեջ: Առանց այս

մոտիվների, Սայաթ-Նովան չէր լինի իր հասարակության կյանքն արտահայտող խոշոր ներկայացուցիչն ու քարոզիչը, իր էպիխայի հայելին:

Յուրահատուկ փիլիսոփա-բարոյախոս, առաջավոր քաղաքացի եւ մարտիկ Սայաթ-Նովայի պոետական մեծությունը, սակայն, հանդես է գալիս գերազանցորեն սիրո խաղերի մեջ: Նրա անմահությունը նրա թողած սիրո երգերի մեջ է. իր անհավասար սերը մեծ խորությամբ ու նրբությամբ երգելու մեջ, իր ազնիվ հոգու եւ պայծառ մտքի ողջ կարողությամբ: Եվ այդ, ինչպէս ասվեց, միայն իր՝ երգչի անձնական սերը չէր, այլ ֆեոդալական-ավատական պայմաններում, կրոնական քարացած դոգմաներով շրթայված մարդու շրթայված հույզերի պոռթկումն էր հանձարեղ գուսանի շուրթերով:

Բավական էր, որ «խալխի նոքարը» դուրս եկավ այդ քարացած սկզբունքների դեմ հետեւյալ համեստ բառերով.

*«Թե վուր հոգուտ կամքն իս անում,
մարմինդ բեդամաղ է ըլում...»*:

Իր սիրային երգերում օգտագործելով ոչ միայն հայ ժողովրդական երգերի ու տաղերգուների սիրած մոտիվները, այլեւ Առաջավոր Ասիայում ընդհանրացած մոտիվները, ձեւերն ու պատկերները, բոլոր դեպքերում նա ինքնուրույն է եւ ինքնատիպ, սեփական ոճով, եւ ոչ պասսիվ հետեւորդ:

Եթէ Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը դասավորենք ըստ թեմատիկայի, ապա խաղերը շարենք հերթականությամբ, կստացվի չորս աննման պոեմ՝ նվիրված սիրո, խրատի, բողոքի եւ բնության ու հասարակական կյանքի ներդաշնակությանը (արդարության, ազնվության, բարեկամության):

Յակով Պոլոնսկուց 65 տարի հետո ռուս ականավոր պոետ եւ գրականագետ-բանասեր Վալերի Բրյուսովը «Չայկական պոեզիայի անթուղգիան» պատրաստելիս, թարգմանելով Սայաթ-Նովայի երգերից մի քանիսը, նրան դատում է *«առաջնակարգ այն պոետների շարքին, որոնք իրենց հանձարի զորությամբ, դադարում են մեկ ժողովրդի սեփականությունը լինելուց եւ դառնում են ողջ մարդկության սիրելին»*: Վ. Բրյուսովը Սայաթ-Նովային համարում է *«երկնային այն հազվագյուտ պարգեւներից... որոնք օրհնանք են թողնում իրենց դարին ու իրենց ժողովրդին»*:



ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պարույր Սեւակի «Սայաթ-Նովա» դոկտորական դիսերտացիայի մասին

ՍՈՐՈՒՍ
ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայ բանասիրության և գրականագիտության մեջ 120 տարի է, ինչ ստեղծվել է մի հատուկ ճյուղ, որը կոչվում է Սայաթնովագիտություն: Դրանից ավելի վաղ և ավելի մեծ ու լայն ընդգրկումով ստեղծված էր Խորենացիագիտությունը, ապա՝ նշենք Մաշտոցագիտությունը, Նարեկացիագիտությունը: Սայաթնովագիտությունից հետո հինգերորդը պետք է համարենք Աբովյանագիտությունը, ապա՝ Նաբանդանագիտությունը և այլն: Այս ոչ զգուշավոր, գուցե թերի, թվարկումից իսկ կարելի է պատկերացնել, թե հայ գուսան, ժողովրդական երգիչ աշուղ Սայաթ-Նովան ինչպիսի պատվավոր, իր լեզվով ասած, «Բարձր թարեք» է զբաղեցրել հայ հարուստ մշակույթի երկու հազարամյա պատմության մեջ:

Հայ մեծ բանաստեղծ Յովհաննես Թումանյանը 55 տարի առաջ զգուշացրել է, որ «Սայաթ-Նովան մոդա չէ», այլ «մի ամբողջ ժողովրդի պարծանք է... անմաշ ու անմահ: ...Որ ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կը լսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարի սիրելուց»: Ռուս մեծագույն գլուխներից մեկը՝ Վալերի Բրյուսովը, կես դար առաջ, Սայաթ-Նովային դասեց «առաջնակարգ այն պոետների շարքը, որոնք իրենց հանձարի գորությամբ դադարում են մեկ ժողովրդի սեփականությունը լինելուց



**Միով բանիվ,
Սայաթ-Նովան հետազոտված և գնահատված է իր ամբողջության մեջ, այլև իր ժամանակաշրջանի մեջ, նախորդների և հետնորդների մեջ:**

և դառնում են ողջ մարդկության սիրելին... օրինանք թողնում իրենց դարին և իրենց ժողովրդին»:

Կարճ ասած, ինչպես վաղուց գրել ենք - «Սայաթ-Նովան, որպես պոետ, նմանվում է հանապազօրյա հացի, որին մշտապես տեսնում ենք սեղանի վրա, ճաշակում և չենք ձանձրանում»: - Եվ այսպես ասվել է այն ժամանակ, երբ վերոհիշյալ և շատ այլ հեղինակներ ծանոթ էին միայն երգչի ժառանգության մոտ մեկ քառորդին:

Անցյալ դարի կեսից սկսած, գիտության և գրականության մեջ ճանաչված շատ խոշոր անուններ են զբաղվել Սայաթ-Նովայով. Գ.Ախվերդյան, Յա. Պոլոնսկի, Գ.Պատկանյան, Գ.Այվազովսկի, Գ.Ասատուր, Ն.Մառ, Ա.Խախանով, Ջ.Մթաժմինդեյի, Ա.Լեյստ, Ա.Չերազ, Ա.Չոբանյան, Գ.Լեոնյան, Յ.Թումանյան, Գ.Բաշինջաղյան, Ն.Աղբալյան, Վ.Բրյուսով, Ի.Գրիշաշվիլի, Լեո, Լ.Մելիքսեթ-Քեկ, Կ.Կելեյիժե, Մ.Արեղյան, Գ.Լեոնիժե, Յ.Չավրյան, Ռ.Արախամյան, Յ.Ա.Երեմյան, Ա.Յակոբյան, Ա.Օգանեզաշվիլի, Ա.Բարամիժե, Վ.Կիրպոտին և այլք. իսկ վերջին երեք տասնամյակում, հայ, ռուս, արքեպիսկոպոսական, ուկրաինական, ֆրանսիական, անգլիական, արաբական և այլ բազմաթիվ սովետական և այլ ժողովուրդների լեզուներով այնքան ճանաչված և անծանոթ հեղինակներ են խոսել Սայաթ-Նովայի մասին, թարգմանել, գնահատել, որ կազմում է մի սովոր հատորի բիբլիոգրաֆիա: Սայաթ-Նովայի բանաստեղծությունները հրատարակված են աշխարհի տասնյակ լեզուներով մի քանի տասնյակ անգամ, և թվում է թե «ալ կբավէ», բայց այդպես չէ:

Տարիներ առաջ այդ առթիվ մենք գրել էինք հետեւյալը, որից չի կարելի հրաժարվել և այսօր ու վաղը:

«Եթե հասարակությանն զբաղեցնող անհատը իր անմիջապես ժամանակակիցների կողմից գրավոր կենսագրության տեր չի դարձել, կամ այն եղել է ու կորել, ապա դարեր հետո նրա կենսագրությունը ենթարկվում է «գրական չարարանքի»: Բանասիրական միտքը խլրտում է, երբեմն բորբոքվում, որոշ դադարներից»



Յ.Ռուսկյան,
«Սայաթ-
Նովա» (1960,
Ե. Չարենցի
անվան գրականության
և արվեստի
թանգարան)

« 71 հետո: Գրականությունը, մամուլի հետ, հեղեղվում է թեր ու դեմ կարծիքներով, առաջարկներով: Սերունդների անզսպելի հարցասիրության տարալի տակ նորանոր գյուտեր են արվում, երբեմն էլ հորինվում են մտացածին բաներ, իհարկե, տրնություն չսիրող եւ անիրազեկ մարդկանց կողմից: Վերջիններիս գրիչը շարժվում է ավելի հեշտ ու թեթեւ, ոչ միայն անվիճելի կրկնելով, այլեւ պակասն ու կասկածելին լրացնելու եւ պարզելու բուռն ցանկությամբ: Նրանք փորձում են նույնպես նոր խոսք ասել, սպառելով իրենց բանասիրական եռանդի վառողը, հաճախ ավելի թանձրացնելով անհայտ հարցերի մշուշը: Սակայն անվիճելի է մի բան, որ բոլորն էլ ցանկանում են դրական հանրօգուտ գործ կատարած լինել գիտության համար, սիրված անձնավորության հիշատակի համար: Այդպես է գիտության օրենքը: Հիշենք Շեքսպիրի կենսագրության դարավոր հարցը, հիշենք Սայաթ-Նովայից մոտ 100 տարի հետո ասպարեզ իջած Խաչատուր Աբովյանի կենսագրության շուրջը ծագած հարյուրամյա վեճը... »:

Այս ամենը ասված է հենց Սայաթ-Նովայի կենսագրության եւ գրական ժառանգության առթիվ: Եվ ի՞նչ. դրանից անմիջապես հետո, երգչի ծննդյան 250-ամյակը նշելու կապակցությամբ, 1962-ից սկսած այնպիսի մի գրական-բանասիրական պսիխոզ ծայր առավ, մանավանդ հայատառ մամուլի էջերում, որ բանը հասավ кому не лень-ի:

Բանասիրական մարզանքները բառերի հեղեղի հետ հասան մինչեւ արտառոցության: Լույնիսկ գրվեցին առանձին գրքեր ու բրոշյուրներ, որոնցից մի երկուսը եթե մեկ բռնվ իսկ մզես, կդառնան 4-ից 6 էջանոց լուրջ ընթերցելի հոդվածներ միայն: Ըստ որում, շատերը նրանցից, իրենց նախորդ բա-

նասերների կշիռը թեթեացնելու եւ իրենց՝ բանասիրական արեւի տակ տեղ ապահովելու նպատակով, նրանց դիտողություն են անում, որ այսինչ բանը չեն նկատել. նույնիսկ չեն ասել, որ արեւը միշտ ծագում է արեւելքից կամ գարնանը գերակշռում է կանաչ գույնը...

1962-ից սկսած եւ շարունակվող այս բռնկումը վեցերորդն է սայաթնովագիտության մեջ: Առաջին հինգը տեղի են ունեցել՝ 1850-56, 1912-18, 1926, 1930-36, 1940-46 թվականներին:

Հայտնի է, որ նախորդ այդ էտապներում մասնագետներին գերազանցորեն զբաղեցրել են՝ երգչի կենսագրության, լեզվի, գրական ժառանգության, երգերի հարազատության, ծննդյան եւ մահվան թվականների, սիրո օբյեկտի, լեզվի եւ գաղափարախոսության հարցերը: Նրա ժառանգության գրաքննադատական, գնահատման հարցերը մասամբ է զբաղեցրել Պոլոնսկուն, Գ.Լեոնյանին, Յ.Թումանյանին, Ն.Աղբալյանին, Գրիշաշվիլուն, Ս.Հակոբյանին, Մ.Աբեղյանին: Այս թերին լրացնելուն վերջերս դիմեցին Խ.Սարգսյանը, Ս.Հարությունյանը, Գ.Արովը եւ այլք: Անշուշտ դրա պատճառը այն էր, որպեսզի նախապես

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պարզվեր, թե ով է Սայաթ-Նովան, ինչ էլ ինչպես է ստեղծագործել, վերջապես նախ ինչպես հասկանալ հեղինակին, ինչն է սրբագրվելու և այլն:

Գուցե որոշ դեր խաղացել է և այն, որ ոչ բոլորը գիտեին հեղինակի քիչ մատչելի վրացերեն խաղերի և հայերենին ու վրացերենին քանակով գերազանցող բնավ անմատչելի աղբբեջաներեն խաղերի գոյության մասին, որոնց հնարավոր դարձավ ծանոթանալ միայն վերջին 22 տարիների ընթացքում:

Ահա, այսօր քննարկման է գնահատման է դրված, որպես թեկնածուական դիսերտացիա, պատմական և մանավանդ գրաքննադատական մի նոր, ստվար ուսումնասիրություն Սայաթ-Նովայի մասին, որի հեղինակը Պարույր Սեալկն է, մի մարդ, որը վերջին 7-8 տարիների ընթացքում, առաջին անգամը չէ, որ ամենից լուրջ է օրհգինալ ձեռով անդրադարձել է մեծ երգչի ժառանգությանն ու գնահատմանը:

Դիսերտանտի սույն մենագրությունը, որ զբաղեցնում է շուրջ 450 մեքենագիր էջ, ամենից ընդարձակն է և ամբողջականը: Ավելի քան 300 էջը նվիրված է երգչի ժառանգության գեղարվեստական արժեքի բազմակողմանի ուսումնասիրության, իսկ մեկ երրորդը դարձյալ բանասիրական, տեքստաբանական հարցերին է նվիրված: Ըստ որում, դիսերտանտը այստեղ եւս հանդես է գալիս նոր խոսքով, նոր թեգերով, հայտնի հարցերը յուրովի լուծելու վճռականությամբ, չկրկնելով ոչ մի նախորդ հեղինակի: Ուստի, իմ խոսքը եւս կսկսեմ հենց այս բանասիրական հարցերից:

Ճիշտ է, բանասիրությունը ոմանց թվում է շատ դյուրին և իրոք գրավիչ բնագավառ, բայց ամեն մեկին չի հաջողվում մնայուն արդյունքի հասնել: Դիսերտանտ Պարույր Սեալկը, ունենալով իր անձնական առավելությունները, ձեռքի տակ ունենալով Սայաթ-Նովայով զբաղվող հին սերնդին պատկանող հեղինակների ժառանգությունը՝ ընդունված նվաճումները, առանձին հարգանք է տածել միշտ լրջություն պահանջող գիտության նկատմամբ: Մանավանդ նա ծանոթ է վերջերս սունկի պես բասծ նոր սայաթնովագետներից ոմանց ընդունելի կամ վիճելի առաջարկներին, իսկ ավելի շատ աղաղակող սխալներին: Ուստի, բանասիրական հարցերին, ըստ ամենայնի, նա մոտեցել է

լրջությամբ ու շրջահայացությամբ և մեծ մասամբ դրսեւորել բացառիկ տաղանդ նաեւ այստեղ: Բայց որովհետեւ բանասիրությունը մարդուն երբեմն դնում է որսորդի թուլության մեջ, ոգեւորում, խանդավառում է այնքան, որ հյուսիս-հարավը շփոթում է, ժամանակից շուտ կրակում, Պարույր Սեալկը եւս չի կարողացել խուսափել դրանից: Օրինակ, նա երկար, շարանով, տասից ավելի փաստեր է բերել, որպեսզի անպայման Սայաթ-Նովային դուրս բերի 1722թ. ծնված: Դրանով իհարկե գրեթե ոչինչ է փոխվում, 250 տարվա անցյալին վերաբերող վեճը տատանելով 10 տարիների արանքում: Երանից 100 տարի ուշ հանդես եկած Աբովյանի ծննդյան ժամանակի վեճն էլ տատանվում է 8 տարիների արանքում (1804-1812) և ոչինչ է փոխվում:

Դիսերտանտի հաջորդ փաստերից մեկը, դարձյալ նույն 1722թ. ապացուցելու համար, երգչի և նրա պատրոն՝ վրաց Յերակլ 2-րդ թագավորի տարիքների հարաբերությունն է. «Եթե երգիչը ծնվել է 1717թ., ապա մեծ էր Յերակլից 3 տարով: Մինչդեռ 1722թ. ծնվածը փոքր էր 2 տարով, ուստի թագավորին «հայր և մայր», թեկուզ և հոգետր ծնող կոչելու համար պետք է շատ թե քիչ փոքր լիներ նրանից /էջ 27/: Ո՛չ թե միջնադարի, այլ 20-րդ դարի կեսի համար այս սայթաքուն արգումենտը բերելուց հետո, դիսերտանտը, մեծ վստահությամբ, գոչում է. «Ո՛վ է ինչպես պիտի պատասխանի այս «հասարակ» հարցին»: Հասարակ բառը առված է չակերտի մեջ, շատ զորավոր դարձնելու նպատակով. զորեղ թափով մոռանալով, որ նման արտահայտության ծանոթ ենք մասսայաբար և 20-րդ դարի կեսից, անկախ տարիքի հարաբերության... Այն էլ, ոչ թե հոգետր հայր, այլ գրեթե իսկական հայր կոչելով: Ճորտ արհեստավոր Արուֆին Սայաթ-Նովան այնքան էլ երախտամոռ

չէր լինի, որպեսզի պալատում իրեն հովանավորող արժանի հերոս Յերակլին հոգետր հայր չանվաներ, թեկուզ 5-10 տարով վաղ ծնված լիներ նրանից: Սայթաքուն բանասիրական այս ընտրած ուղիով ընթանալով, դիսերտանտը երգչի թուրքերեն պարզ արտասանած «յաղըմըզի թեուալիֆ իքի քաֆ» բառացի՝ տարիքներս՝ այսինքն՝ իմ տարիքս 9-ը, 1, 2 անգամ 20 բառերը (թիվ արտահայտող արաբական տառերը)՝ դարձնում է ոչ թե 50, այլ՝ 441, վրացական քրոնիկոն ստանալու համար: Ո՛ր վրացագետ, արաբագետ է նպաստել կամ համոզել այդպիսի եզրակացության հանգելու համար: Եվ սրա համար էլ անթվակիր ոտանավորը 1753 թվականի գրված է համարում, որպեսզի դրանից հանելով 50-ը, ստացվի անընդունելի 1703 թվականը: Այդ դեպքում ինչո՞ւ չընդունել այդ անթվակիր խաղը՝ գրված 1759-ին, որպեսզի 50-ը հանելուց հետո ստացվի ընդունված 1712-ին մոտիկ՝ 1709 թվականը: Եվ այս առթիվ դարձյալ բացականչում է. «Միայն այս չորս ապացույցները բավական էին, ըստ իս, որպեսզի Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցը վճռված համարվեր» (էջ 21): Նման մի օրինակ էլ տեսանք երգչի Յնդկաստանում լինելու հարցին հարեանցիորեն անդրադառնալիս:

Ես երկու, երեք անգամ թեական ու ենթադրական համարելով, գրել եմ, որ երգիչը հնարավոր է եղած լինի նույնիսկ Յնդկաստանում, բայց նախապես լինելով վրաց Թեյմուրազի շքախմբում, 1736-37թթ., հետո գուցե նրա երիտասարդ որդու՝ Յերակլի: Ապա եզրակացնում եմ. «Կրկնում ենք, գուցե երիտասարդ Սայաթ-Նովան եղել է միայն Թեյմուրազի շքախմբի մեջ և նրա հետ Աֆղանստանից վերադարձել Կրաստան, չուղեկցելով Յերակլին դեպի Յնդկաստան, գուցե և հակառակը (էջ 12):

Իսկ դիսերտանտը անպայ- ➤ 74

Ճոխ, հատու և փառավոր լեզվով վեր է հանված Սայաթ-Նովան իր ստեղծագործական տաղանդի, խոր, համամարդկային ապրումների, առատ ու զուլալ զգացումների, նուրբ գեղագիտական ճաշակի, հոգեկան հարուստ այլեկոծումների, նրա իմաստության, հատու և արթուն ռամիկ մտքի, բարոյական բարձր առաքինությունների և քաղաքացիական քաջության բուլոր կողմերով

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 73 ման, այն էլ մի երկու, երեք տարի ուշ, ծամբում է Յնդկաստան, նույնիսկ երբեմն առանց Յերակլի՝ որը ըստ դիսերտանտի տակավին 1744 թվականին անձամբ չէր ծանաչում Սայաթ-Նովային: Բայց եւ այնպես, 18-րդ էջում զգուշացնում է մեզ. «Ալ.Շահսուվարյանը եւ Մորուս Յասրաթյանը, իբրեւ նոր վարկածի հեղինակներ, պիտի լինեին շատ ավելի զգույշ»: Այդ զգուշավորությունը առաջին հերթին հանձնարարենք դիսերտանտին, իսկ մենք չենք հրաժարվում այդ լավ խորհրդից:

Ապա, մանրագնին ուսումնասիրված է նաեւ երգչի սիրո օբյեկտի՝ նրա ով լինելու հարցը: Դիսերտանտը չի առարկում, որ իր բոլոր նախորդները չեն ժխտում այդ օբյեկտի անունը, որ եղել է Աննա, որի մասին ավելի քան 30 տարի առաջ փայլուն ելույթ ունեցավ վաստակավոր բանասեր եւ սայաթնովագետ Գետրոզ Ասատուրը: Երեսուն երկու տարի է, գրեթե ինձնից բացի, եթե երբեւէ մեկը խոսել, հողված է գրել Սայաթ-Նովայի մասին, շեշտել է, որ երգչի սիրո օբյեկտը Յերակլ 2-րդ թագավորի քույր Աննան է: Այդ հարցին, վերապահությամբ միայն մոտեցել եմ եւ հետեւյալը գրելով հայերեն 11-րդ խաղի ծանոթագրության մեջ: «Այս բարդ խաղը իրավացիորեն երգչի սիրո պրոբլեմի հետ են կապում սայաթնովագետները, որի վրա առաջին անգամ հատուկ ուշադրություն դարձրեց հանգուցյալ բանասեր Գ.Ասատուրը: Նա այս խաղով, կարելի է ասել, համարյա ապացուցեց, որ լավ-անի, յար-անի եւ այլ նման բառերի եւ այբ տառի տակ թաքնված է Յերակլ 2-րդ թագավորի քույր Աննայի /Անա/ անունը» /էջ 237/:

Ներածական խոսքիս մեջ, 31-րդ էջի վրա, կարդում ենք հետեւյալը. «Դժվար է առարկել այն տարածված ենթադրության դեմ, որը մոտ 30 տարի է, ինչ սրամիտ փաստերով առաջ քաշեց սայաթնովագիտության լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ բանասեր Գետրոզ Ասատուրը, որ իբր սիրո օբյեկտը հանդիսացել է Յերակլ երկրորդի քույր Աննան: Վերջինս, 1744 թվականին ամուսնացել է իշխան Դեմետրե Օրբելյանու հետ/տես նաեւ հայերեն 11-րդ եւ վրացերեն 6, 7, 10-րդ, աղբյ. 33-րդ խաղերի ծանոթագրությունները: Անվիճելի կարելի է համարել այն, որ երգչի անհասանելի «թագավոր» յարի անունը եղել է Աննա, բայց միթե պալատական շրջա-

պատում /Թելավում կամ Թիֆլիսում/ չէր կարող լինել մի ուրիշ Աննա եւ, թեկուզ կրկին թագավորական բազմանդամ ընտանիքից, որի գոյությունը ավելի հավանական կդարձներ երգչի հանդուգն սիրո վերսիսան: Այս հարցը մնում է չլուծված»:

Այսպես եմ գրում, երբ դրանից ուղիղ 18 տարի առաջ, 1945 թվականին, ռուսերեն հատուկ ուսումնասիրություն էի գրել /դեռեւս անտիպ/ մեզ զբաղեցնող արքայադուստր Աննայի եւ Սայաթ-Նովայի սիրո մասին:

Անտիպ է մնացել եւ Գրականության ինստիտուտի կողմից մոռացության տրվել նաեւ Գետրոզ Ասատուրի ուսումնասիրությունը: Արդ, ինչո՞ւ եւ որոշ վերապահության եմ ենթարկել հին տեսակետս: Որովհետեւ, դարձյալ վերապահ, կասկած ունեմ մյուս Աննայի վրա, որին գտել է եւ դիսերտանտը: Դա 46-60-ամյա վրաց Թեյմուրազ թագավորի երկրորդ կին Աննան է, որի մասին երկար խոսում է դիսերտանտը՝ չոր-չոր մերժելու համար այդ հնարավորությունը: Այս Աննա խանումը, Յերակլի մորացուն, գրում է դիսերտանտը, «դուստրն էր Բարաթաշվիլու եւ այրին Զայխոսրո Ֆիցիշվիլու, ամուսնացավ 1746-ին, Թեյմուրազ թագավորի հետ, երբ վերջինս 46 տարեկան էր: Երբ Թեյմուրազը Պետերբուրգ մեկնեց 1760-ին, վերադարձին՝ 1761-ին, մեռավ Աստրախանում: Յաջորդ տարին /լավ լսեք, այսինքն 1762-ին/ Աննա խանումը, այդ զեղեցկուհի բանաստեղծուհին մտավ կուսանոց եւ մեռավ 1788-ին:

Եվ որպեսզի որեւէ մեկի կասկածը հեռացնի, դիսերտանտը բերում է Գ.Լեոնիձեի բառերը, որ «Աննա խանումը եղել է պատվախնդիր, խստաբարո եւ հպարտ», որ «ինքը՝ Յերակլն էլ չէր սիրում Աննա խանումին, իբրեւ խորթ մոր»: Ապա ավելացնում է իր կողմից. «Այրիացած, երկրորդ անգամ ամուսնացած, Ս.Նովայից անկասկած շատ տարեց, պատվախնդիր ու պատվասեր, խստաբարո ու հպարտ, հանդգնության չափ անվախ եւ ամուսնուն սիրող: Անկարելի է, որ այսպիսի մեկը, կամա թե ակամա, դառնար Սայաթ-Նովայի ձակատագրական սիրո եւ ծածկագրությունների պատճառը: Ամուսնու մահից հետո կուսանոց մտնելն էլ այլ բան չէր, քան դժգոհության ու բողոքի ցույց ընդդեմ Յերակլի, ապա եւ իբրեւ ապացույց այն սիրո, որ նա տածում էր հանգուցյալ

թագավոր ամուսնու հանդեպ» /էջ 46-49/: Լավ լսեցի՞ք: Այժմ դառնանք ըստ էության՝ հոգեբանական, կենսաբանական եւ ընտանեկան հարցերին:

Թեյմուրազ թագավորը պետք է ծնված լինի 1700 թվականին: Այրիացած գեղեցկուհին՝ երիտասարդ բանաստեղծուհի Աննա խանումը գրեթե, 1722թ. ծնված արքայադուստր Աննայի մոտավոր տարեկիցն էր, եւ նրանից մեծ կլինեի հազիվ 4-6 տարով, այսինքն ծնված 1716-18 թվերին: Սրա ծնվելու տարվա մասին հոգ չի տարել դիսերտանտը, բայց շտապել է գրել, որ Աննա խանումը Սայաթ-Նովայից մեծ պետք է լինեի 10-15 տարով: Դիսերտանտը իր թեզերից մեկն էլ համարում է երգչի հայտնի ոտանավորի առաջին տողը, ուր ասված է. «Ինձ ու իմ սիրեկան յարին, մե տարի բերած գիտենաք»: Որովհետեւ Աննա արքայադուստրը ծնված է 1722-ին, ուստի Սայաթ-Նովան եւս ծնվել է 1722-ին: Այս նույն փաստն օգտագործում էր Գ.Ասատուրը իր հայտնի դասախոսության մեջ /զոնե այս մեկը եւ շատ լավ եմ հիշում/: Յարք է ծագում, իսկ եթե Աննա խանումը ծնված լինի 1717-18թթ., դեռ չեմ ասում 1712-ին, այդ դեպքում իրավունք չունենք ենթադրելու, որ երգիչը եւս այդ թվերի ծնունդ է: Իսկ եթե Աննա խանումի ծննդյան տարին հայտնի չէ ոչ ոքի, իրավունք չունենք Սայաթ-Նովայի ծննդի ենթադրյալ 1712 կամ 1717-18 թվերով գտնել եւ զեղեցկուհի թագուհու ծննդյան տարին: Մյուս հարցը. ինչո՞ւ Յերակլը չէր սիրում մորացուհին, արդյո՞ք այն պատճառով չէր, որ մորացուն գրեթե իր քրոջ՝ /հոր դստեր/ տարիքին էր կամ շատ համարձակ էր, իշխանատենչ եւ սիրավետ: Եվ ո՞վ է ասել, որ պատվախնդիր, խստաբարո, հպարտ, երկրորդ անգամ ամուսնացած, իր ամուսնուց շուրջ 15 տարով փոքր, 30-35 տարեկան գեղեցկուհի, բանաստեղծուհի, հանդգնության չափ անվախ տիկինը չէր կարող սիրել իր տարեկից, թեկուզ 5-10 տարով փոքր, վառվռուն, անտարակույս նույնպես գեղեցիկ, /այլ կերպ պալատ չէր ընկնի/ շնորհալի բանաստեղծին: Ինչո՞ւ է անկարելի նման սերը:

Դիսերտանտը անզուգույն է ցուցաբերել նման բնութագրով, նպատակ ունենալով հեռացնելու մեր կասկածները եւ ստեղծել է իր նպատակը չեզոքացնող, ազատամիտ, իշխանատենչ մի կնոջ հոգեբանական մի շքեղ

ՍԱՅԱԹԵՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պատկեր, որը միանգամայն համապատասխանում է լինելու երգչի հոգեկան բոլոր տառապանքների պատճառը: Եթե իրոք երգչի սիրո օբյեկտը սիրել է արտահայտել է իր սերը, ապա միմիայն կարող էր Աննա խանումի նման հարուստ ներաշխարհի ունեցող մեկը լինել, մանավանդ պատվախնդիր ու պատվասեր, խստաբարո է հպարտ, հանդգնության չափ անվախ գեղեցիկ բանաստեղծուհի, կավելացնեի եւ կենսափորձ ունեցող, ավելին, եթե երգչից էլ մի քանի տարով մեծ էր, ուրեմն... տարիքը փախչելու նախօրեին: Հապա էլ ո՞վ կարող էր այդքան զուսպ սիրո տեր լինել, պատվախնդիր եւ հպարտ կի՞նը, թե՛ ավելի երիտասարդ մեկը՝ 22-25 տարեկան, նոր ամուսնացած, շատ ավելի երիտասարդ մի իշխանի հետ, մի անփորձ, երեւի գեղեցիկ երիտասարդ կին, որի անունից բացի ոչ մի բարեմասնություն չգիտենք, որը կարծես մի մանկեն լինի մեզ համար: Առաջին հերթին թագուհուն կարող էր երգիչը ասել «Դուն մէ թաքավոր իս, յիս մէ խեղճ դերվիշ»: Թագուհուն կարող էր ասել «Գուռդ պահող ջար գվարդիա ունես», թե՛ սովորական իշխանուհի դարձած արքայադստեր: Երբ ամուսնացած, պալատից դրյակ փոխադրված արքայադուստրը կարող էր ամեն շաբաթ պալատում սուփրա-սագանդար ունենալ, թե՛ պալատի տեր թագուհին: 1754թ. ապրիլի 1-ին երգիչը գրում է իր գլուխգործոցներից մեկը՝ «Աշխարհումս այս չիմ քաշի» եւ դիմացի էջում գրում է յարի անունից՝ «ինձ սիրեցիր էխշն ընգար, խաղի դավթարիմ քեզ համար»: Խաղը, ուր յարը ասում է. «Յիս քիզիդ սիրով դամ անիմ, ով գուզե բեղամաղ ըլի» կամ՝ «Քու դարդըն ինձի պառվեցուց, ումն ասիմ, Սայաթ-Նովա»... եւ վերջում, հեղինակը ծանոթագրում է. «Էս Արուֆինը եւ իր սիրեկանը, որ խոսել էին էն է. սիրեկանն ասել է ուղղակի Սայաթ-Նովայի երեսին...» այս տողերը ո՞ւմ է սագական. Աննային, թե՛ Աննա խանում-թագուհուն:

Իսկ ինչո՞վ է հայտնի, որ վերջինս մահացած ամուսնու սիրուց է մտել կուսանոց եւ ոչ թե Հերակլն է հարկադրել եւ նույն տարին՝ նաեւ Սայաթ-Նովային բռնությամբ քշել եկեղեցի, ապա վանք, այսինքն՝ այդ մարդու կուսանոց...

Վերջապես ինչու պետք է Աննա խանում թագուհին Հերակլի դեմ դժգոհության եւ բողոքի ցույցը արտահայտեր կուսանոց մտնելով: Հիշենք, որ 18-րդ

դարի 40-ականի վերջերին եւ 50-ի սկզբներին Սայաթ-Նովան լինում էր եւ Թեյվում-Թեյմուրազի պալատում, որ Թեյմուրազը 1760 թվականին հեռացավ Վրաստանից, գնաց Պետերբուրգ՝ անվերադարձ, որովհետեւ մեկ տարի հետո ճանապարհին մահացավ: Վերջապես ինչո՞վ կարող ենք, ենթադրությունից բացի, ապացուցել, որ Սայաթ-Նովան իր սիրո գաղտնիքը բաց է արել օբյեկտի առջեւ կամ օբյեկտը անպայման սիրել է ռամիկ երգչին: Միայն մի հատիկ զորավոր կռվան ունի դիսերտանտը, այն էլ բանաստեղծական / բայց խիստ կոնկրետ արտահայտված/, երբ 1755 թվականին գրած «Աջաք քանի ժամանակ է, թաք գիտենամ տարիտ, երնեկ» խաղի երրորդ տան վերջին երկու տողում, ուր ասված է. «Քու զաթըն քու նման կուլի, կշտիդ ունիս օսկէ բարուր. բալքա մեկ էլ դեդեն բերէ՛» նման բարեբարիտ երնեկ»: Հազիվ թե 55 թվականին Աննա խանումը բարուր ունենար իր կշտին: Ուստի, պետք է ջանադիր հետազոտողը ստուգեր, թե արքայադուստրը, որ երկու տղայի տեր էր, այդ կամ նախորդ տարին մանկիկ ունեցել է արդյոք: Այստեղ իսկ փակագծում պետք է զարմանքով ու զայրույթով հիշեցնեն այն ծախսող տողը, ուր հեղինակն ասում է. մինչեւ այժմ «ոչ ոք ուշադրություն չի դարձրել երգչի այն տողին, որ ասում է. «Ինձ ու իմ սիրեկան յարին մէ տարի բերած գիտենաք /էջ 31/: Չեմ ցանկանում հավատալ, որ այս, միայն դեղնակտուց չտեսին հատուկ ծախսող արտահայտությունը Պարոյր Սեալկինն է: Քիչ առաջ նկատեցինք, որ այդ վարուց ուշադրության արժանացած տողը, որ հրապարակված չէ տակավին, դիսերտանտի բավականին թույլ կռվաններից մեկն է, որովհետեւ կարող էր եւ իրեն տարեկից Աննա խանումի մասին ասված լինել: Առավել աններելի եմ համարում այս հոյակապ ուսումնասիրության հեղինակի համար, որ 30 տարի առարկության չհանդիպած, վերստին Աննա անունը հաստատելու, հիմնավորելու նպատակով հայերեն 11-րդ «Յիս կանչում իմ Լալանին» խաղի մեջ 25 անգամ նշած Աննա անուն է հաշվել կամ գտել: Մինչդեռ ես միայն հինգ տեղ եմ սեռով տպագրել տվել եւ երկու անգամ ա տառը, որ նույնպես Աննայի ինիցիալն է: Այդ բառերն են. Լալանի, յարանի, գալանի, մերանի, մասանի, որոնք մանրամասն ծանոթագրված են

իմ կողմից: Բազմաթիվ սովորական հանգավոր բառերի մեջ ես Անի հատուկ անուն է գտնում դիսերտանտը, մի քանիսն էլ այդ խաղի մեջ միացրած այլ խաղի՝ ջանգյուլումի հանգավոր կոնկրետ բառերից թխել: Հարց է ծագում, ինչի՞ համար է այս խառնափնթոր հեղեղը: Ամենախակ բանասիրությունն անգամ նման փորձի դեմ կառարկեր: Մեկ ծածկագիր Աննան էլ բավական էր, բայց երգիչը հինգն է գրել. ինչպես կարելի է 23 հատ էլ ամենաբռնագրուսիկ ձեռով ավելացնել: Եթե այդպես է, ապա երգչի բոլոր ոտանավորների մեջ հայ եւ օտար բառերի միջից, սկզբից, մանավանդ վերջից կարելի է մի քանի հարյուր Անի, Անա հավաքել:

Իհարկե, այս աչք ծակող փաստերը լսելուց հետո դիսերտանտը, իրավամբ, կհայտարարի, թե այդ բոլոր տողերի իմաստը ինքն էլ նույն ձեռով է հասկացել, մանավանդ, որ բոլորը բացատրված են երգչի ժողովածուի բառարանում եւ խաղի ծանոթագրության մեջ, բայց այդպես, այդ քանակով է հաշված, որպեսզի ցույց տրվի, թե երգիչը դիտմամբ է հայերեն անել բային այդ բարբառային ձեռը տվել, որ բոլորը միաժամանակ կարդացվեն եւ Անի:

Գուցե եւ ո՞չ այսպես, այլ մի այլ կերպ պատասխանի: Իսկ ի՞նչ կասի այս չարչարված պարզ ոտանավորի մասին ասված հետեւյալը, որ 28 անգամ Անին կրկնվում է հայերեն 11-րդ խաղում, որը «ցայսօր» վերծանված չէ /թերեւս աղավաղման պատճառով/ ու եթե պիտի վերծանվի, ապա՝ վրացագետների կողմից /էջ 35/: Հայերեն գրված պարզ ու հստակ ոտանավորը պետք է վերծանի վրացագետը:

Իսկ ինչ ասենք նաեւ մի այլ թեքնիս ոտանավորի աղավաղման մասին, այս անգամ թարգմանված աղբբեջաներենից, որը 18-րդ խաղն է (էջ 153): Սրա մեջ ես մի քանի հատ ծածկագիր Աննա-ներ են հայտնաբերված: Ահա այդ խոշտանգված տողերը. 1. «Միջինը յա ջավահիր է յա դանա» /դենե, հատիկ, թանկագին ակ/, 2. «Վորթին մեռնի, յիփ սուք կոնե յադ անան /խորթ անան՝ մայրը/, 3. «Չորք վուտանի յա մէ հորթ է, յա դանա / մոզի/, 4. Սայաթ Նովու հոր վաթանից հարց կուտան, ասում է վուր Հալաբն է յա (կամ) Ադանան: Հավատալի է, որ այս Ադանա քաղաքի անունը, աղծատելով կարդում էր ադ /անուն/ Աննա, իսկ առաջինը՝ երեւի

ՍԱՅՈՒՄՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 75 յար /օտար՝ խորթ/ Աննա: Եվ 36-րդ էջում համարձակ եզրակացնում է դիսերտանտը՝ «Սայաթ-Նովան հինգ անգամ ոչ միայն տալիս է իր սիրածի անունը, այլև նույնքան անգամ պարզապես ճշում է, «անունն Աննա է/ «ադ-անա»/:

Վրացագիտության այդպիսի մի թյուրիմացության էլ հանդիպում ենք 41-րդ էջում, ուր վրացերեն 8-րդ խաղի «դուն մէ փուքը սիրուն բերթիս՝ գուղի նիղ դուռն ինչ իս անում» տողի առթիվ սոցիոլոգիական բաժնաբաժնիք եզրակացության է հանգում, մի բան, որ ինքը՝ դիսերտանտը իրավամբ եւ կրթով քննադատել է իրենից առաջ հանդես եկած նման չափազանցությունների սիրահար հեղինակներին: Ահա, ինչ է գրում հեղինակը վերը բերված տողի առթիվ. «Գյուղի նեղ դռան փոխաբերությամբ նշանակելով իրական եւ իրավական իր վիճակը՝ ընդդեմ «մէ փուքը, սիրուն բերթի»:

Մինչդեռ երգիչը դիմում է իր սիրածին, որի «քոչք-ամարաթին ոսկե տախտակներ են սագում», որը «մի հնդու թաքավորի թախտ է», որը մի սիրուն բերդ է, որը պահականոցի, թիկնագործի՝ ջարի կարիք չպիտի ունենա, երբ Սայաթ-Նովան է աղաչում, որը իրավատեր է. էլ ինչու է անհամարձակ, վախկոտ եւ նեղլիկ մուտքերով հանդիպում, որը վայել է միայն վախկոտ գողին / ոչ թե գյուղին/ եւ երանի է տալիս, որ օթախումն «համաշա» երկուսով լինեն եւ այլն:

Տողում պարզ ասված է՝ բարբառով՝ գուղի, այսինքն՝ գողի, եւ ոչ թե՝ գյուղի եւ այստեղից էլ սոցիալական հարցերի, դասային, դասակարգային անհավասարության հանգամանքներ են դրսեւորվում:

Կան եւ այլ թերություններ, որպես շտապողականության, անշրջախայացության, ոգեւորության արդյունք: Օրինակ. երգիչը սիրածի գեղեցկությունը նկարագրելիս ասում է, որ քո գեղեցկությամբ՝ հիացմունքից շլացրել, շշմացրել ես քո նկարչին, որը տեսնելով քեզ, մաթ է մնացել, այսինքն՝ այլեւ չի կարողացել վրձին շարժել: Այս, բոլորին հասկանալի, մաթ բառը, ուղղակի գոռով դարձել է շահմաթ խաղի մատ-ը: Այստեղից էլ հետագա եզրակացությունները, որպեսզի մի նոր, հետաքրքիր, օրիգինալ բան ստացվի ասելու: Եթե սա ենթադրություն է, գեղեցիկ նորոյթով տարվել է, վերջապես բառը յուրովի հասկանա-

լու համոզմունք է, մանավանդ իմաստի նմանություն էլ կա երկու մաթ-երի մեջ, բայց ստորեւ բերվող այլ օրինակը, մի բռնագրոսիկ արարք է, որդեգրած թեզը հավելյալ փաստով զորացնելու միտումով արված:

Երգչի բուռն սիրո, տվայտանքի եւ ստեղծագործական սլացքի տարին, 1758-ին /մարտի 6/17-ին/ գրված միակ քառալեզու /հայերեն, վրացերեն, պարսկերեն, աղբբեջաներեն/ խոհական խաղի պարսկերեն մի տողի մասին է իմ խոսքը, որովհետեւ այդ նույն տողը արժանացել է դիսերտանտի հատուկ ուշադրության: Մի տառի հավելման հարց է, որ առաջին հայացքից կթվա իմ կողմից բժախնդրության արտահայտություն, պեղանտիզմի դրսեւորում: Բայց ո՛չ, նայեցե՛ք, այս մեկ տառի հավելումը փոխում, աղավաղում, ուղղակի փչացնում է ողջ խաղի մեջ անկշկուռ թելի նման անցնող խորունկ մտորումների, վշտի, դժբախտության, ինքնախարազանման, մանավանդ դառնություններ նյութող սիրո մեջ սխալվելու պատճառով եւ մեզ համար քիչ հասկանալի այլ մեղսաբեր արարքների պատճառով:

Ճոխ, հատու եւ փառավոր լեզվով վեր է հանված Սայաթ-Նովան իր ստեղծագործական տաղանդի, խոր, համամարդկային ապրումների, առատ ու զուլալ զգացումների, նուրբ գեղագիտական ճաշակի, հոգեկան հարուստ ալեկոծումների, նրա իմաստության, հատու եւ արթուն ռամիկ մտքի, բարոյական բարձր առաքինությունների եւ քաղաքացիական քաջության բոլոր կողմերով: Միով բանիվ, Սայաթ-Նովան հետազոտված եւ գնահատված է իր ամբողջության մեջ, այլեւ իր ժամանակաշրջանի մեջ, նախորդների եւ հետնորդների մեջ:

Ավելի քան մեկ դար ուսումնասիրված, գնահատված, երբեմն խիստ հանդիմանության, երբեմն էլ գերագնահատման արժանացած կիսաճորտ հանձարը հանդես է գալիս արդեն մի նոր, ամբողջական ու հիասքանչ կերպարով, իր բոլոր առավելություններով եւ փոքրիկ թերություններով հանդերձ: Ուշագրավ է որպես նորոյթ Սայաթ-Նովային դիտելը մի լայն ֆոնի վրա, բաղդատության մեջ իր ժամանակի եւ իրենից առաջ եվրոպական մեծ հեղինակների, մանավանդ Շեքսպիրի, Արեւելքի եւ Արեւմուտքի քաղաքական-մշակութային հարաբերությունների ֆո-

նի վրա:

Նա կանգ է առնում եւ 18-րդ դարի կովկասյան իրականության վրա, որի մեջ ծնվել, աճել է մեծ երգիչը՝ հայ հանձարեղ գուսանը: Չարմանալի դիպուկ մի քանի խոսքով դիսերտանտը բնութագրում է երգչին եւ նրա դերը այդ հարազատ իրականության մեջ, ասելով. «Սայաթ-Նովան միայն հայ բանաստեղծ չէ... Նա յուրատեսակ մի ավագան է, որի մեջ մկրտվեց երեք ժողովուրդ՝ եթե ոչ հավատով, ապա սիրով» /112/: Այսպիսի խտացված լակոնիկ պատկերավոր ոճերը, գնահատումները, եզրակացությունները անթիվ են աշխատության մեջ, հատուկ՝ բոլորիս ծանոթ հեղինակին:

Ըստ որում՝ ուսումնասիրողը երգչին չի առնում պատրաստի վիճակում, այլ՝ նրա զարգացման մեջ: 128-131 էջերում համեմատում է «դեռ ոչ ջունուն, այլ միայն խեւ Արուֆին Սայաթ-Նովային» հետագայի հասուն իսկական Սայաթ-Նովայի հետ:

Ասել, թե սիրահարի բարձր խանդավառությամբ շարադրված այս գիտական կուռ ուսումնասիրության այս բաժնում եւս չկան առարկելի կամ ուղղակի քննադատելի կողմեր, սխալ կլիներ: Բայց սրանք միայն թեթեւ խմբագրման եւ սրբագրությունների կարիք ունեն, եւ բնավ չեն խաթարում ուսումնասիրության հոյակապ ամբողջությունը:

Եթե նշելու լինենք այս ամբողջության մեջ զգացվող եւ լրացման ենթակա թերիներից մի երկուսը, ապա առաջինը պետք է համարել եվրոպական հայտնի գրականության հետ բաղդատման, արեւմտյան գրական-գեղարվեստական ընդհանրությունների հետ բաղդատման գերակշռությունը Սայաթ-Նովային հարազատ արեւելյան՝ հատկապես պարսկական եւ աղբբեջանական գրականության օրինակների նկատմամբ: Պատճառը հասկանալի է: Յեղինակը չի սիրում հանրածանոթ հարցերի մասին խոսել, հարասել հայտնին՝ արդեն ասվածի մասին խոսել. այլ չասվածի, մոռացության տրվածի կամ պարզապես չնկատվածի: Առաջին հայացքից նույնիսկ տարօրինակ է թվում աշուղ Սայաթ-Նովայի մասին խոսել եվրոպական գրականության հայտնի դեմքերի հետ զուգահեռներ անցկացնելով կամ նրանց հետ համեմատելով: Թերեւս ոչ ոք՝ սայաթնովագետներից չի էլ հանդգնել մտածել այդ ուղղությամբ.

բայց դիսերտանտը կատարել է իմացության բարձր ոլորտի մեջ: Եվ երեւի ինքն էլ անգլիացի Կեւենդիշի նման զարմացած այդ իսկապես անհրաժեշտ գյուտի վրա, երբեմն չափի զգացման սահմանները շատ է ընդարձակել. որը մեզ թվում է թե մեկ եւ-ով կարելի է, բայց հինգ եւ-ով չի կարելի:

Օրինակ, Սայաթ-Նովային համեմատելով Նահապետ Քուչակի հետ, եւ ի դեպ, ճշմարիտ բանասիրական խոսք ասելով այսպես կոչված Քուչակ անձնավորության, նրան վերագրվող գոհարների ժամանակի մասին, երկու էջ հետո ոչ միայն մոռանում է իր այդ ճշմարիտ դիտողությունը, այլ հանկարծ Քուչակի առնչությամբ հիշում է մեծն Վոլտերին, ասելով «Օռլեանի կոյսի» հեղինակ Վոլտերին զարմացնում է իրենից 200 տարի առաջ ապրած Քուչակ կոչված աստվածավախը» /էջ 80/:

Բանաստեղծությունը եւ հիպերբոլան հազվագյուտ պարագաներում կարելի է օգտագործել գիտության մեջ՝ որպես համեմունք, բայց՝ ոչ որպես գիտական եզրակացություն: Թե չէ, մեկ անգամից ստացվում է երկու սխալ:

Կամ թե Սայաթ-Նովային համեմատում է իրենից ավելի քան 100 տարի հետո հանդես եկած անգլիական դեկադանսի խոշոր ներկայացուցիչ Օսկար Ուայլդի հետ, որը «արվեստը գեղեցիկ սուտ է» արտահայտությամբ կատարում էր մարդկային հոռի հարաբերությունները կարգավորելու սոսկ մի նիհար փորձ, բայց դիսերտանտը նկատում է. «այստեղ է, որ /մարգարիտից մինչեւ նուշ ու բաղամ/ հայ ռամիկը կանխում է անգլիացի արիստոկրատին եւ կանխում ավելի քան 100 տարով» /186/:

Չեղանկ, չէ՞ որ ինքը՝ Սայաթ-Նովան զգուշացրել, հանձնարարել է, որ «խոսքը պետք է ասվի հավասար զրլի /շերտի, ժապավենի/ վրա»: Չէ՞ որ բերված օրինակները սոսկ ձեւական, ֆորմալ նմանություններ ունեն:



Վալերի Բոյուսով

Շատ ուշագրավ բաժին է Սայաթ-Նովայի եւ նրան նախորդած հայ մեծ հեղինակների՝ Նարեկացուց մինչեւ Նաղաշ Յովնաթանի հետ զարգացման եւ զուգահեռների գիծ անցկացնող բաժինը: Այդ մասին մինչեւ այժմ սոսկ հայտարարություններ եւ մասնակի օրինակներով հիշեցումներ են եղել մեր գրականության մեջ, չհաշված Յովհաննես Թումանյանի մեկ հոյակապ օրինակը՝ Նաղաշ Յովնաթանի առնչությամբ: Համեմատելով կենսուրախ լարերի մեծ հեղինակներ Քուչակի եւ Նաղաշ Յովնաթանի հետ, լարեր, որոնք գրեթե իսպառ բացակայում են դարդոտ ու հոգով մշտական վիրավոր Սայաթ-Նովայի մոտ, դիսերտանտը գեղեցիկ մի

դիպուկ շտրիխով վերջացնում է. «Եթե Սայաթ-Նովայի մեծ նախորդները՝ Քուչակն ու Յովնաթանը գերազանցապես երգիչն էին բարեկենդանի, Սայաթ-Նովային վիճակված է դառնալ երգիչը Պասի, այն էլ մեծ պասի» /133/: Գուցե եւ այդ է պատճառը, որ մեծ գուսանը, ինչպես եզրակացնում է դիսերտանտը, «չի նկատում փիղը, որպիսին է բնությունը, մանավանդ Վրաստանի բնությունը», որ երգչի գարունն ու մայիսը, բաղն ու բաղչեն նույնքան անկենդան ու պայմանական են, որքան «վարթ ու բլբուլ» կլիշեն /178-179/:

Երկար համեմատություններով դիսերտանտը կանգ է առնում այս հարցի վրա եւ այս առիթով էլ բերում Օսկար Ուայլդի օրինակը, որը բնությունը համարում էր սոսկ ակնարկ գեղեցկության եւ ոչ թե գեղեցկության միայն իլյուստրացիա եւ դեկոր եւ ո՛չ ավելին»: Բայց չէ՞ որ անցյալ դարի վերջերին հանդես եկած անգլիացին այդ անում էր նախագծված, տեսականորեն գիտակցված, որպես իր դասակարգային >>> 78

Սայաթնովագիտության մինչ սովետական շրջանի հարուստ ժառանգության մեջ առանձին փայլով շողշողում են Յովհաննես Թումանյանի եւ ռուս գրականության նշանավոր եւ բազմաքան-քար դեմքերից մեկի՝ Վալերի Բոյուսովի գրածները՝ նրանց կողմից ըստ արժանվույն արված երգչի գնահատականը:

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 77 Վիճակից ու հոգեբանությունից բխող ու թելադրվող երեւոյթ, իսկ Սայաթ-Նովան, նախ ինքը մի բնութայն էր, չունէր բուրժուական բարձր անհատականութեամբ մշակված ուրբան կամ ուրբսի գիտակցություն եւ աշխարհագրագում: Ինչպէս կարելի է իրար հետ բոլորովին համեմատվելու եզր չունեցող դեմքերի համեմատություն կատարել, որպէսզի ստացվի սոսկ ասելու համար գեղեցիկ (բայց սայթաքուն) խոսք՝ որ իբր Սայաթ-Նովայի մոտ էլ, Օսկար Ուայլդի նման, «բնութայնը այլ բան չէ, քան մի անկենդան դեկոր, մի անշունչ իլյուստրացիա, մի քարացած պայմանականություն»: Եվ մտորումների մեջ է ընկնում, թե այս ինչով բացատրել: Եթե «աշուղական բանարվեստի քարացած ձեւերն են մեղավոր, հապա ինչու Քուչակի եւ Լաղաշ Զովնաթանի մոտ, հատկապէս գարնան փոխանցիկ ու միջանցիկ շունչ /կենդանի բնություն/ կամ ու կամ» /182/: Ապա փորձում է բացատրել մոտավոր ճիշտ հասցեով, բայց դարձյալ տարակուսում է: Ասում է. կարծիք կա... որ պարզ ու պայծառ երկնքի տակ ապրողները նվազ են զգում նոյն այդ երկինքը եւ նրա տակ փռված գեղեցկությունները բնութայն, քան պարզ ու պայծառ երկնքի կարոտություն ունեցողները»: Սակայն դարձյալ տարակուսում, որ «Քուչակն ու Զովնաթանն էլ կարող էին հպարտանալ իրենց պարզ երկնքով եւ գեղեցիկ բնութայն, ուստի, պետք է «գումարենք արքունիքը՝ անկենդան բնությունը»: Սայաթ-Նովան այդ էր տեսնում, քան թավուտ անտառը, ավելի պերճանք էր տեսնում, քան պերճ բնություն:

Ու վերջապէս դիտարկանալով կանգնում է սիրո պատճառի վրա: «Սերը, ասում է դիտարկանալով, որի տառապանքը խել է նրա սիրտն ու հավասը, ուստի, գերզգալի է անկենդան բնութայն ներկայությունը» /184-185/:

Լախ, նկատենք, որ բազմաթիվ աշուղներ, որոնք Սայաթ Նովայի նման տառապել են սիրոց, բնավ էլ բնութայնը, որպէս օբեկտ, չեն տեղավորել իրենց երկերի մեջ: Երկրորդ՝ Սայաթ-Նովային սիրոց պակաս չեն զբաղեցրել, նրա սիրտը, հոգին եւ միտքը կաշկանդել ընդհանուր մարդկային, հասարակական հարաբերությունների բարդ պրոբլեմները: Երրորդ՝ Լաղաշի եւ Քուչակի բնութայն պատկերացումները եւս որեւէ նմանություն եւ շարժառիթ

չունեն իսկական բնութայնը երգողների նման: Զորորդը՝ իրեն՝ Սայաթ-Նովային չի կարելի այդքան խստորեն զրկել բնութայնից: Այն մարդուն, որը եթէ միայն խորունկ կարոտի եւ բնութայն բուռն զգացումի բացականչությամբ արտասաներ «գարունքվան վախտը լցվի է, երանի՜ ձեզ, ծաղկած վայրեր», որը այնքան համահնչուն է Վահան Տերյանի հետեւյալ տողերին. «Յովիվներն այնտեղ կրակ են արել, ճ, անուշ հեռու», որպէսզի ասենք դիտարկանալին, այս է երգչի կողմից մեծ «փիղը չտեսնելը, անկենդան դեկորը»:

Կամ, միթե կարելի է «անշունչ իլյուստրացիա, քարացած պայմանականություն» համարել, երբ երգիչը ասում է.

«Յիրգնուց վրեր ձուն է էկի, փունջ մանիշակ՝ նուր իս ջանում», կամ՝ «գարնան շնչի ծաղկի նման, կամ՝ ձընի տակեն նոր դուռ եկած, արիվ դիպած սմբուլի պես... »:

Սրանք են քարացած «կիշները»: Եվ ի՞նչ նմանություն ունեն շատ ուրիշ աշուղների, երգիչների կիշներին, որից իրոք, հաճախ չի կարողացել խուսափել եւ մեր երգիչը: Ես բերել էի մի փաստ, մի տողով, եւ ասել թե գիշերվա անդորրը այգում զորեղ վրձնով արտահայտելու համար երգիչը ասում է. «Բաղըն զարթարած, բլբուլը քնած վարդի սաջարին»: Ապա ավելացրել էի. «գոնե ինձ հայտնի չէ, թե մի որեւէ այլ պոետ քնացրած լինի բլբուլին եւ դրանով այդքան ուժեղ ընդգծած գիշերվա անդորրը», որ արեւելյան երգիչների մոտ բլբուլը միշտ երգում, շաղակրատում է գիշերը: Դիտարկանալով ցանկանում է անպայման առարկել, որ իրեն հայտնի է նման փաստեր եւ բերում է երկու օրինակ՝ Աղթամարցոց, այն էլ բավականին տափակ օրինակներ. «Պլպուլն զարթնի կես գիշերին» եւ «Թմրով պլպուլն եղավ պեհուլ»: Հիշենք Սայաթ-Նովայի այդ տողը. «Մոտ բախչեն նագով» ջնաղ երգի կոնտեքստում, որպէսզի զգանք այդ անօրինակ տողի գեղարվեստական արժեքը: Հապա, էլ ի՞նչ, Սայաթ-Նովան քիչ հասարակական անձնական ցավ ու հոգս ուներ, անձամբ բնութայն լինելով, բնութայն մեջ ապրելով, միջնադարյան ֆեոդալական հոգեբանության իշխող պայմաններում, որպէսզի մասնավոր կարգով անդրադառնար բնութայնը, բնութայն պատկերներով բացատրեր մարդկային բարդ հարաբերություններ

ը, առաջ տաներ իր խրատներն ու քարոզը: Դրա համար նրա աղբյուրներն էին ժողովրդական դիպուկ եւ ցասման ու խրատական ասոյթները, առածները, առակները, էպիկական ու հեքիաթային փաստերն ու եզրակացությունները, իմաստասերների եւ խիկարի խրատները, իսկ տեսական գինանոցը՝ Աստվածաշունչն ու ավետարանը, նոյնիսկ իսլամական կրոնից փեղամբարների եւ իմամների ասոյթները: Այլ գենքերով նա չէր անի այն, ինչ կարողացավ անել իր ժամանակ:

Ի դեպ, այդ գենքերով միայն Սայաթ-Նովան չէր պայքարում միջնադարյան ըմբոստների շարքում, այլ՝ շատ-շատերը: Եվ ո՞չ միայն պայքարի համար գինավելու, այլեւ իրենց անձնական եւ սիրային մտորումների համար օգտագործում էին բոլորին ծանոթ այդ մեծ գինանոցից փաստեր, պատկերներ, ասոյթներ: Դիտարկացիայում Շեքսպիրից բերած եւ Սայաթ-Նովայի հետ համեմատած որոշ փաստեր էլ նույնպէս զալիս եւ համընկնում են այդ ընդհանուր աղբյուրին: Շեքսպիրի այն գեղեցիկ տողերը. «Իմ հայացքը քնիս մեջ էլ քո պատկերն է անվերջ ծնում. ու ես քնած, նա քնածիս սիրտն է կրկին զարթեցնում» /386/. Սայաթ-Նովան էլ, յուրովի, ավելի գեղեցիկ շրջելով, ասում է. «Յիս զարթուն իմ, սիրտս է քնած»: Երկուսի աղբյուրն էլ՝ «Երգ երգոցն» է. «Ես քնած եմ, սիրտս է արթուն»: Վերջապէս այլ կերպ ինչպէս կարող էին, զգացումների, աշխարհաճանաչման, գրեթե համանման հարաբերությունների որոշ սահմաններ ունեցող լեզվական ու ոճական ընդհանրությունների պայմաններում մարդիկ նույն տրամադրությունները բոլորովին այլ կերպ արտահայտել, երբ աշխարհի եւ բառերի հարաբերությունները համահնչուն են դարաշրջանին:

Պետք է համաձայնվել դիտարկանալի հետ, որ Սայաթ-Նովան իր սիրո էութեամբ տարբերվում էր ֆրանսիական տրոպեդոսներից /Պրովանսալյան 12-13-րդ դդ./, ինչպէս եւ իր ազգակից Քուչակից եւ Զովնաթանից, նմանվելով միայն իր կրակած եւ վառվառն սրտով, պատկերավոր ոճով, արվեստի գեղեցկությամբ եւ երաժշտականությամբ /81/: Եվ երգչին, իրավամբ, ավելի նմանեցնում է գերմանական մայստրեգինգերներին, բայց անշուշտ հեռու նրանց նման բնութայն ընկալելուց, միայն մոռանում է, որ այդ

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նմանությունն էլ մեծապես երգերի կանոնացված ձևերի հետ է առնչվում, քան ներքին էության, այն էլ պետք է համեմատել միայն 16-րդ դարի մայստերգինգերների հետ: Բայց ավելի ճիշտ կլիներ, եթե համեմատություններն անհրաժեշտ էին, երգիչը ավելի շատ համեմատվեր մանավանդ հարավային գերմանական 13-14-րդ դդ. միններգինգերների / սիրերգակների/ հետ, որոնց միններգինգերը /սիրերգը/ շատ ավելի ժողովրդական է առարկայական սիրո արտահայտություններ էին:

Դարձյալ վերադառնանք մեր իրականության: Դիսերտանտը երկար կանգ է առնում երգչի գրագիտության հարցին եւ բազմաթիվ օրինակներ բերում, ապացուցելու համար «39 բառի մեջ 33 կետադրական նշան, այսպիսի կետադրող մեկին հնարավոր է համարել կատարյալ գրագետ, ոչ մի կերպ» /336/: Մենք բացատրել էինք, թե որտեղից է գալիս գրեթե ամեն բառից հետո նրա վերջակետ դնելը /Յադբատի եւ Սանահնի արձանագրություններից/ բառերը անջատելու, անջատ կարդալու համար: Բայց միայն այս կարգի օրինակներով չի առարկում դիսերտանտը, այլ հայերենից անթիվ քերականական սխալների փաստեր է բերում: Եվ ճիշտ է անում նրանց դեմ, ովքեր փորձում էին «լավություն» անել երգչին, նրան ամեն բանում մեծարելու համար: Բայց այդ ճշտության մեջ կա եւ խստությունը: Այդ նույն փաստերն ու նրանց հանրագումարները եւ բերել էի, ի միջի այլոց եւ իր սեփական անունը բազմապիսի ձևերով գրելու փաստերի հետ, միաժամանակ ցույց տվել, որ նա իր ժամանակի համար բավականին գրագետ է եղել: Մանավանդ, որ ժողովրդական լեզվով, բարբառով գրելու իր որդեգրած սկզբունքը բերել էր նրան այդ համոզմունքին, գրել այնպես, ինչպես արտասանվում է: Ես նշել էի, որ երգիչը շատ բառեր առանց ուղղագրա-

կան սխալի էլ գրում է, երբ դրա կարիքը զգացվում էր: Դիսերտանտը իր բանավեճի մեջ սահմանը խախտել է եւ ցանկանում է, որ այն ժամանակվա գրագետները լինեին քերականորեն գրագետ՝ գրիչների նման: Քերականական սխալներով գրելը դեռեա լեզվին չտիրապետելու եւ անգրագիտության վկայականը չէ: Այժմ էլ կան հիանալի եւ ճոխ լեզու իմացողներ, բայց բազում կետադրական եւ այլ քերականական սխալներով գրողներ: Այս տեսակետից երգչի վրաց ձեռագրում, ուր ավելի վարժ է եւ փորձառու, շատ քիչ սխալների կհանդիպես: Ինչ վերաբերում է այն հարցին, թե երգիչը ինքնուսույթամբ է միայն սովորել իր պարզունակ գրագիտությունը, քիչ գրաժանաչ լինելով, ճիշտ է՝ միայն կիսով չափ: Անօգուտ եւ անարդար է վիճել այն ապացուցված թեզի դեմ, որ նա տարիների ընթացքում ուսում է առել մի վանական դպրոցում: Այլ կերպ չէր սաի «Քենը քար ունե, եւ օ ֆ-են կարդալու աստված ծար ունե»: Հայկական այբուբենի այդ եւ, օ, ֆ-ի մասին այժմ էլ շատ գրագետներ կան, որ գաղափար չունեն: Միանգամայն անընդունելի է դիսերտանտի, մանավանդ այն եզրակացությունը, որ «գրաբարի նրա հեռավոր ծանոթությունն էլ գալիս է ոչ թե դպրոցից, այլ իր զարմանալի սուր ականջից» /էջ 345/: Այս կարելի էր ասել աշխարհաբարի համար, բայց ոչ երգչի թեկուզ կիսատ գրաբարի մասին:

Հատկապես խիստ ազդվել է դիսերտանտը, որ Հարաբայանը երգչի մոտ «լեզվաշինարարական համարձակ փորձեր» է գտնում, մինչդեռ պրոֆ. Ղարիբյանը այդ փորձերը «հանգերի հարստացման» եւ լեզվի զեղեցկության նուրբ զգացմամբ ընտրություն կատարելու» նպատակով արված երեւոյթ է համարում: Զարմանալ կարելի է, որ դիսերտանտը երգչի բանաստեղծական մեծ տաղանդը իրավամբ հասցնում է

ամենաբարձր գագաթներին, լեզվի կիրառման, ոճերի, բառերի տեղադրման բացառիկ վարպետ է համարում, իսկ լեզվաշինարարական նրա փորձերն ու արտահայտությունները ժխտում: Հապա ինչպես է դարերի ընթացքում լեզուն հարստանում եւ ձկուն գենը դառնում: Այդ է պատճառը, որ 348-րդ էջում բերված բազմաթիվ հոմանիշ եւ զուգահեռ բառերի կետը, որպես զորավիզ իր թեզին, իր դեմ են աղաղակում:

Այդպես էլ երգչի պարսկերեն իմանալու հարցն է: Այստեղ դիսերտանտը ճիշտ է քննադատում չափազանցությունների սիրահարներին, բայց դարձյալ ծայրը խիստ թեքելով դեպի մի կողմը:


Դիսերտանտը խոսում է հայ իրականության մեջ եւ աշըղ բառի ու մասնագետի հանդես գալու ժամանակի մասին, եւ, իրավամբ, տանում մինչեւ 13-րդ դ. վերջերը, կամ 14-ի սկզբները, առավել եւս 15-16-րդ դարերը: Սակայն բերված օրինակները շատ թույլ են: Օրինակ, Յովհաննես Երզնկացուց բերված տողը «ասաց թե՛ սերըն կնեղէ, որ վրայ վարդին աշըղ եղէ» կամ մյուս օրինակը, ավելի հին հեղինակից՝ Կոնստանտին Երզնկացուց «Երթաս անգուման նստիս, Չի գիտես՝ քո աշըղ եմ ես» /էջ 304-305/: Այս երկու օրինակների աշըղ բառերը պարզ, շատ վաղուց Արեւելքում գործածված արաբերեն միայն սեր, սիրած, իմաստով են բերել երկու հայ տաղերգուները:

Վերջակետ դնենք, թեեւ կան եւ 8-9 դիտողություններ, որոնք բոլորն էլ հաճախ շատ մեծ գործերին հատուկ, ավելի ճիշտ անխուսափելի ուղեկից փոքրիկ վրիպակներ, թերատեսություններ եւ դյուրին սրբագրելու փաստեր են, իհարկե, եթե կարող են համոզիչ լինել հեղինակի համար: Բայց կարծում ենք, վատ չէր լինի, եթե գոնե մի զգալի մասը ընդունելի դառնար հեղինակի համար, այդ դեպքում այս գործին նվիրած իմ ուշադրությունը եւ ժամանակը կհամարեի օգտակար, դարձյալ՝ ավելի շատ մեր պաշտելի մեծ ու անօրինակ Սայաթ-Նովայի համար:


Այս դիտողություններից, առարկություններից ու քննադատությունից հետո իսկ պետք է կրկնեմ, որ դիսերտանտի քննարկման դրված աշխատությունը հենց այն է, որ շատ-շատերս սպասում էինք, թե երբ պետք է տեսնենք մի ընդարձակ ուսումնասի- >>> 80

Պետք է համաձայնվել դիսերտանտի հետ, որ Սայաթ-Նովան իր սիրո էությանը տարբերվում էր ֆրանսիական տրոպադուրներից /Պրովանսալյան 12-13-րդ դդ./, ինչպես եւ իր ազգակից Քուչակից եւ Հովնաթանից, նմանվելով միայն իր կրակած եւ վառվառուն սրտով, պատկերավոր ոճով, արվեստի զեղեցկությամբ եւ երաժշտականությամբ /81/

ՍԱՅՈՒՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



« 79 րություն, որը իրոք արժանի լինի մեծ երգչին, նրա թողած շքեղ ու անմար ժառանգությամբ: Իհարկե, դարձյալ դժվար է ասել, թե այլևս չի կարելի ավելի կատարյալ մի այլ ուսումնասիրություն սպասել: Անտարակույս, այսպես մտածելը կլինեն անբնական: Բայց ես համոզված եմ, որ այս գործ մնալու է Գ.Ախվերդյանի ուսումնասիրության շարքում, որպես բացառիկ, իրոք շքեղ, խոր գիտական գրաքննադատական մի ուսումնասիրություն, որին գերազանցողը, պետք է ընդհանրապես գերազանցի Պարույր Սեակին, իր ամբողջ առումով: Տաղանդավոր բանաստեղծի վաղուց անվիճելի ձանաչում գտած գիտական կարողությունները, պատմագիտական եւ գրական-բանասիրական խոր գիտելիքներն ու լայն ընդգրկումը, լեզվական եւ հրապարակախոսական բացառիկ տաղանդը, սուր մտքի փայլը, տեսնելու եւ շատերիս համար անսովորն զգալու եւ գնահատելու անօրինակ շնորհքը, տեսական-փիլիսոփայական բարձր պատրաստությունը եւ ընդհանրացումների կարողությունը նրան դնում են այն երջանիկ անհատների շարքին, որոնց պարտավոր ենք բոլորս, խղճի մտքը, ընդունել, գնահատել եւ բարձրաձայն հայտարարել այդ մասին: Միայն մեր հիսնամյա իրականությունը, միայն



Անսամբլի ղեկավար, Յայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակյանը

մեր առաջավոր՝ մարքս-լենինյան գաղափարախոսության հաղթանակը կարող է ծնել եւ ստեղծել այնպիսի տաղանդներ, որպիսին է մեր դիսերտանտը՝ Պարույր Սեակը: Դիսերտանտը համեստ բառեր է գրել իր բացառիկ խոր, մեծ դիպպագոնի

Սայաթ-Նովայի երգերի մասսայականացման գործում շնորհակալ գործ է կատարում բանաստեղծի անունը կրող գրասենյակի անսամբլը

հասնող ուսումնասիրության ծակատին, այն է. հայցում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Բայց միթե մեր գիտական խիղճը, Յայատանի գիտ. Ակադեմիայի Գրականության ինստիտուտի պատկառելի կազմ ունեցող գիտական խորհուրդը պետք է այս դեպքում համաձայնվի դիսերտանտի հետ, երբ նրա արդեն հայտնի, հրապարակված-ուսումնասիրությունները վաղուց են նվաճել այդ իրավունքը: Ուստի, ես առաջարկում եմ հետեւել ՎԱԿ-ի ընձեռած այն իրավունքին, որ բառացիկ դեպքերում գիտական խորհուրդը իրավունք ունի թեկնածուականի համար ներկայացված բացառիկ արժեքի գիտական ուսումնասիրությունը ներկայացնել որպես գիտության դոկտորի գիտական աստիճանին արժանի գործ: Զննարկվող դիսերտացիան ես համարում եմ հենց այդպիսին եւ հեղինակի համար առաջարկում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

ՍԱՅԱԹԵՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վրացերեն խաղեր, որոնք թարգմանել է Մորուս Յասրաթյանը

Ինչ գարբար իմ

Ինչ գարբար իմ, ինչ ատլաս իմ, յիս ինչ գար իմ, զի՞ դիս, աջար.
Մանիշակի, վարթի կարոտ ինչ զեփյոտ իմ, զի՞ դիս, աջար.
Գիշեր-ցերեկ սազը ձեռիս մե նոքար իմ, զի՞ դիս, աջար.
Քու ծընուրբար իմացիլ ին, վուր քի յար իմ, զի՞ դիս, աջար.
Բա ինչպես է՝ դուն չիմացար. խելագար իմ, զի՞ դիս, աջար:

Դե արի, ինձ անգամ արա, թե աշխարհ վունց ման էկա.
Լելլումի թայ յար կորցրի՜ Մեջլումի պես հա ժուռ էկա.
Բլբուլի պես վարթ պըտրեցի, մեկ էլ չայիր-չիման ընկա՜.
Վարթիս ճամփեն էլ չը գըթա՜ միևնի վիրչը գուր ման էկա.
Արիվ տեսքըտ շանց տուր, վատված միևուճար իմ, զի՞ դիս, աջար:

Էս իմ սըրտի դարդ ու ցավըն իմաց տըվի Իրանեթին,
Արիվիլթին, արիվմուտին, թաքավուրին, ժողովուրթին,
Էլ ինչ կանամ ավել անիլ՝ յարի շեմթին ինձ կու մորթին.
Էսքան իլթիմագն անում է ճար ու ճըրաք մե մոր վուրթին.
Մաշվեցա, հալվեցա պըրծա՜ յիս շաքար իմ, զի՞ դիս, աջար:

Աշունքվա վախտըն հասիլ է, ինչո՞ յիդ մընամ՝ չըվարած,
Քու վարթըն ինչրու կըացվի, յիս էլ... ո՞վ սաղ, յա ո՞վ մեռած,
Էրզեն ումբըր կունենայի, վուր չըլեի էշխետ էրած,
Էս գիշեր քի մող իմ գալու, մատաղ իմ քի, ունթիրըտ բաց.
Շուտ-շուտ չասիս, «վի կաց, զընա», յիս քի հուր իմ, զի՞ դիս, աջար:

Մայաթ-Նովեն գանգատ ունե, վուր ման էկա թուր չը գըթա,
Ուզում իմ, թե սիրտըս խուցիմ՝ պըտրեցի մե թիր չը գըթա,
Շոցիտ պահած ջուլստ նըրնեթուն հասնելու մե դուռ չը գըթա,
Մրտիս, զըլխիս բըռնած ցավին մե չարա, մե դիդ չը գըթա,
Բերում իմ գառ աղլուխնիրը, յիս խումար իմ, զի՞ դիս, աջար:
(Մուխամմազ)

Բաղըն բլբուլով լցվիլ է

Բաղըն բլբուլով լցվիլ է, վարթ-գուլագըր չէ պակասում.
Բացվիլ ին գառ ծաղկընիրը, սիրուն նագըր չէ պակասում.
Յասամաննիրն էլ ին ուրախ, լավ էրագըր չի պակասում.
Շամիրը շամդանում վառած, զիրանդագըր չէ պակասում.
Մարթին, լիքը մեղրանումըն քանդիրբագըր չէ պակասում:

Չեղանաս, այ իմ ազիգ, իմ խոսկիրբըս առակնիր ին.
Հագար հիդ «քիզ մատաղ» ասի, բա յիս քանի գլխի տեր իմ.
Վուր ինձ չասիս սիվերես իմ, դուլ իմ դառի քու դըներին.
Էս գիշեր դուն միզ մող արի, անգամ կալ իմ խաբարներին.
Ամենքըն միզ մող ին էկի, վուր բագագըր չէ պակասում:

Քանի գիդը լի ու շեն է, անքեփ, անսաղ ինչպես կուլի.
Քու թարիփի համա խոսկն ու խաղը պակաս ինչպես կուլի.
Թե մառանում գիևին թափվի, առանց լի թաս ինչպես կուլի.
Մեջլիսն ինչքան սարթով ըլի, վուր դուն չկաս, ինչպես կուլի.
Պատվում ին օսկե թասիր, լելլում-նագըր չէ պակասում:

Էսենց հարսնիք, նշանդըրիք Շահն էլ չարեց Չալի համա.
Ինչ վուր արից սա իր հալալ աղջկա-գոգալի համա.
Էս ինչ գլխոքըս անց կացալ, վուրչն իմ տարբոտ հալի համա.
Քամանչայի, նայի համա, դավուլի, դավալի համա.
Չուրս բոլորբըտ խաղ ին ասում, սանթուր-սագըր չէ պակասում:

Բուրտ վունցոր բուսած դամիշ, քի սագ գու քա քիրման շալըն.
Ակըթընիրըտ շար մարբարիտ, հնդու սիվ բիբար է խալըտ.
Դուն փահլեաննիր իս ախտում, վունց գովական Ռոստոմ-
Չալըն.
Արի գանըր դադաստանի, թե վուր չըլի միզ մող գալըտ.
Մայաթ-Նովու թաքավուրին Շահբագ-Էրեկլե ին ասում:
(Մուխամմազ)



Հենց իմացար սովա՞ծ էի

Հենց իմացար սոված էի, յի սեղանի համա էկա,
Քիզիդ խոսիլ էի ուզում՝ մողըտ դամի համա էկա.
Ասի, քիզիդ լուսացընիմ, ուրախ ժամի համա էկա.
Մոռացիլ իմ... լավ միտս չէ, թե ինչ բանի համա էկա:

Դուն մե թաքավուրի թագ իս, յիս էլ...հա ճուրտի դարումըն
Դուն համաշա գարթարած իս դիբայումն, անգին գարումըն.
Միրուն բըրոլե շուշա իս՝ սանդալե թանգ փանջարումըն.
Էրեսըտ՝ օսկե հալիլա, քի մող ջամի համա էկա:

Էնդու համա թանգ հախ ունիս՝ դիբա իս, գարբար ու գար իս.
Խորասանու ջավարդեն իս, Հնդաստանի դալամբար իս.
Յիս մե դարիք սովդաքար իմ, դուն Մարանդի շեն բագար իս.
Չունթի դարի գինը չունիմ, էնդու խամի համա էկա:

Իմ աչկի լուս, պարտկ դի վրես, լիզուս քի պարտկի տիդ կու տամ
Գըլուխըս քի բարաթ կու տամ, մեջլիսի քեփ ու գող կու տամ.
Համաշա քու տիսըն գու քամ, իմ ջանըս քի մատաղ կու տամ.
Յա ինձ կիևը տու, յա սըպանի, դադաստանի համա էկա:

Թեգուզ աշխարքըս հավաքվի, քու թարիփըտ ինչպես կարվի.
Ինչ Հնդստան, Փռանգստան, քու նըմանըտ վունց կու ճարվի
Էս ջրատար Մայաթ-Նովեն աղաչում է վուրչ աշխարհին.
Թոզի Հալաբն ու հիռացա, քի մող Շամի համա էկա:

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թուրքերեն խաղեր, որոնք թարգմանել է Մորուս Յասրաթյանը

Միտկըտ ինչ է, իմ նագանի, ազիզ յար

Միտկըտ ինչ է, իմ նագանի, ազիզ յար,
Չշվոթվիս դուն միր էս խոսկիրեմեն,
Այս քաշելեն լիրթ ու թուքս զայ էլավ,
Արուն-արտսունք հուսից միր աչկիրեմեն:

Յար, գիդիմ, վուր էշտվլա ինձ կու վառիս,
Սրտիս միջին սուր-սուր նիտիր կու շարիս,
Դե ինչ կուլի, բարի աչկով մե նայիս,
Վունց էսքան շուտ հիռսցար քու յարեմեն:

Առանց ջուղար դուն իմ հոքին հանում իս,
Լիսնի պես հերիք քամիս արունըս,
Աղաչելուց ջան չմնաց ջանումըս,
Եկ մի գցի աղաբեմեն, արեմեն:

Տեսնելուս էլ մի բառ էլա չի ասում.
Քաղած վարթըն էլ նուրմեկանց չի բսնում.
Էլ միր բռնած գործը տիդին չի հասնում՝
Ուժը կորավ միր աղեմեն, սուփրեմեն:

Գուգիմ էշխի մեչ տապակվիմ ու խորվիմ,
Ծուռ գամ շամիտ փարվանի պես ու վառվիմ,
Մայաթ-Նովեն կոսե, թուղ լի յիս էրվիմ,
Թաք քիզ պեճ չիդիջի միր վառ քուրեմեն:



Ասի՛ գո՛գալ, դարդըս ասիլ չիմ կանա

Ասի՛ գո՛գալ, դարդըս ասիլ չիմ կանա,

Շահ-դամարիս միլ տարար, աման-աման.
Քու արածըտ դավթար անիլ չիմ կանա՝
Յարալու է սիրտս, ճար, աման-աման:

Մատաղ իմ քու սիվ մագերուն, սիվ ծամին,
Կարոտիլ իմ բարկ էրեսիտ յիս ջամին.
Անգրծակի դիբա էշխիտ վառ շամին,
Փարվանին մի վառի, նար, աման-աման:

Արնուտ մարալ իմ, սարեմեն գրգվիլ իմ,
Էշխի թաս խմած, սաղեմեն գրգվիլ իմ.
Ղարիբ բլբուլ իմ, բաղեմեն գրգվիլ իմ,
Կոկոնըս զայ չանիս, խար, աման-աման:

Համիտը չառած բերնիտ պալին կարոտ իմ,
Վարթ էրեսիտ ջուխտակ խալին կարոտ իմ,
Ոսիտ գցած թիրման շալին կարոտ իմ.
Դուն զարբար հաքնող իս, զար, աման -աման:

Այ սիրտ, յարը ցավ կու բերե քիզ մե օր,
Կու խուցե, յա դավ կու բերե քիզ մե օր,
Ախրը յարը մահ կու բերե քիզ մե օր,
Մայաթ-Նովու պես կաց, յար, աման-աման:



Էշխեմետ յիս դառա խաստա

Էշխեմետ յիս դառա խաստա.
Բնձ գոռով նաչաղ իս արի.
Միվ մագիրըտ դաստա-դաստա,
Աչկի լուս, վարթ-մանիշակ բաղ իս արի, բաղ իս արի:

Բլբուլ իմ, խարին կաղաչիմ,
Բաղեմեն գրգված կու փախչիմ,
Միվերես արիլ՝ կամաչիմ,
Ջանըմ յար, քու էրէսըն պարզ իս արի, պարզ իս արի:

Յար, գիևի տուր ինձ միևջի լիս,
Քու գուլփերուն մանտաղ լիմ յիս,
Սրտիս քուրեն դուն գըտիլ իս,
Միրելիս, էշխիտ հուրըն չաղ իս արի, չաղ իս արի:

Չիմ գիդի վունց գովիմ յարին՝
կարոտիլ իմ լուսին թահրին.
Աչկիրըս լցրիլ իս արին,
Բեննորվաթ, սիվ ջիզարըս դաղ իս արի, դաղ իս արի:

Լաց իմ ըլում՝ դարդըս ծով ա,
Առանց միզի Մայաթ-Նովան
Քու լիզվի նիտից խորով ա.
Չուր տիդը նասաղ իս արի, սաղ իս արի, սաղ իս արի:

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մասամբ գրականացված չորս հայերեն խաղ

ՍՈՐՈՒՍ ՀԱՄԱԹՅԱՆ

Կրկնությունը խիստ չզգացվելու նպատակով, ոչ թե հավելվածի, այլ ծանոթագրությունների վերջում այս անգամ էլ թողնում ենք երգչի հանրահայտ եւ ամենից շատ տարածված մասամբ գրականացված չորս խաղը, կիսով չափ կամ, ավելի ճիշտ, երկու երրորդով թիֆլիսահայ բարբառից եւ անհասկանալի օտար բառերից բեռնաթափված վիճակում:

Ա

յս տարօրինակ թվացող, բայց թերեւս բոլոր ընթերցողների համար ավելի շատ ենթագիտակցորեն անհրաժեշտություն զգացվող, երեւոյթի բնորոշումը երկար նախադասությամբ ենք գրում, որպեսզի խուսափած լինենք դյուրահնչյուն «թարգմանություն» բառից, եւ ինչպէս կնկատի ուշադիր ընթերցողը, գերզգուշությունը խիստ սահմանափակել է իմ սրբագրական, խմբագրական եւ առանձին բառերի թարգմանության եռանդը: Սույն ժողովածուի առաջին հրատարակության ներածական «երկու խոսքի» վերջում, մոտ 20 տարի առաջ, գրել



Գաղտնիք չէ, որ հայ իրականության մեջ, խնջույքներում եւ հարսանիքներում, ամենից շատ Սայաթ-Նովան է երգվում...

էինք հետեւյալը. «Ընդհակառակն, անձամբ այն կարծիքին ենք, որ հետագայում, ակադեմիական հրատարակությունից հետո, անհրաժեշտ կլինի աստիճանաբար մեղմացնել անգամ երգչի հայերեն խաղերի լեզուն, որպեսզի այն հասկանալի դառնա ամենուրեք- ավելի շատ ընթերցողների»:

Այսքան տարիների ընթացքում լայն գրական արծազանք չգտավ այս ցանկությունը: Իհարկե, այդ կարելի է բացատրել ավելի շատ նրանով, որ սովորաբար ընթերցողները տպագրված գրքերի «երկու խոսքերը» չեն կարդում, եւ ոչ թե այն պատճառով, որ դեմ կամ կողմ են եղել տվյալ ցանկությանը կամ առաջարկին: Ուստի, կրկին որոշեցինք, քննարկման կարգով, որպէս նմուշ, միայն չորս օրինակ նվիրել ընթերցողի ուշադրությանը, նախապէս իմանալով, թե ինչպիսի երեք կարծիքներ են հանդես գալու՝ դեմ, կողմ եւ միջին, վերջինս մի քանի վարիանտներով (այսինքն՝ կարելի էր այսպէս անել եւ ոչ այդպէս): Պետք է խոստովանեմ, որ այս հայերեն խաղերից յուրաքանչյուրը հայերեն դարձնելն ինձնից ավելի շատ ժամանակ է խլել, քան թե վրացերեն եւ ադրբեջաներեն գրած առանձին բարդ խաղերի թարգմանությունները: Սրանք եւս պահանջել են ամիսներ եւ ավելին հատկացնել իրենց՝ տարիների ընթացքում տասնյակ ու մի քանի տասնյակ անգամ անդրադառնալ յուրաքանչյուր բառին, տողին կամ ամբողջ խաղին:

Գաղտնիք չէ, որ հայ իրականության մեջ, խնջույքներում եւ հարսանիքներում, ամենից շատ Սայաթ-Նովան է երգվում. հայտնի է նաեւ այն, թե ինչպիսի աղավաղումներով են երգվում այդ խաղերը, որովհետեւ եղանակը թոյլ է տալիս երգել չհասկացածը եւ: Եվ քանի հեռանում ենք ժամանակով մեծ պոետից, այնքան անհասկանալի են դառնում նրա օտար եւ բարբառային բառերն ու դարձվածքները եւ դրանցով կառուցված բազմաթիվ տողերն ու տունները:

Ինչպէս յուրաքանչյուր թարգմանված բառը, մասամբ փոփոխված տողը, այնպէս էլ ամբողջ խաղի տպավորությունը (սովոր ականջի ընկալմամբ), ինքնին վկայում եւ հուշում են մեր ընդունած սկզբունքի էությունը, ուստի անհրաժեշտ չենք համարում դրանց մասին պատմել եւ պարզ տեսանելին նկարագրել: Միայն այսքանը կասենք, որ ամենակարեւորը, բոլորի մեջ, ժամանակի կոլորիտի, լեզվական, աշխարհընկալման եւ պատկերների պահպանման հարցն է: Բազմիցս զայում-ը դարձրինք անգութ եւ ջնջեցինք, պահպանելով հեղինակի զայում-ը. փաղիշահը դարձրինք թագավոր, բայց էլի մնաց փաղիշահ եւ այլն:

Հուսով եմ, որ ընթերցողը կհասկանա այս գործի եւ դժվարությունը, եւ պատասխանատվության զգացումի մեծությունը: Մեր ձեռքի տակ գումարված մի քանի վարիանտների մեջ նախ ընտրեցինք այս վերջինները, դնելով ընթերցող հասարակության դատաստանի առաջ, անձամբ գիտակցելով միաժամանակ, որ, իհարկե, Սայաթ-Նովան ավելի լավ է ու գեղեցիկ իր սեփական տարագով, իր էպոխայի պատկերով: Սակայն ավելի զորավոր հանգամանքը՝ ռեալ իրականության պատկերը, թելադրում է ո՛չ միայն մտածել այդ մասին, այլեւ գործնական քայլերի դիմել՝ աննման Սայաթ-Նովային կրկնակի մատչելի դարձնել նրան սիրող հայ

ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 83 մասսաներին:



Ամեն սագի մեջն գոված, դու մեկ չես, տանն ես, քամանչա.
Չնչին մարդը քեզ չի տեսնի, դու նրան պանն ես, քամանչա.
Ջանք արա, էլ լավ օրերի ետեւից հասնես, քամանչա.
Քեզ ինձնից ո՞վ կարա խի, աշուղի բասն ես, քամանչա:

Ականջդ արծաթից պիտի, գլուխդ ջավահիր քարած,
Կոթդ փղոսկրյա պիտի, փորդդ սաղափով նախշ արած,
Լարդդ ոսկուց քաշած պիտի, երկաթդ բոլոր զարդարած,
Ոչով գինդ չի՛ իմանում, լավ ու ալմասն ես, քամանչա:

Ճիպոտդ ոսկեզօծ պիտի, տեսք ունենա հազար ռանգով,
Մազդ ռաշխի պոչից պիտի, որ դու խոսես քաղցր հանգով.
Շատին մինչ լույս արթուն պահած, շատին նինջ կտաս քո
բանգով.
Անուշահամ գինով լեցուն, դու ոսկե թասն ես, քամանչա:

Ածողիդ երկու կշինես. առաջ չայ ու դափա կուզես,
Կմեծարվես սրահումն, պարսալ ժամի ռափա կուզես,
Իսկ երբ ներս գաս, մեջլիսումն քաղցր խնջույք՝ սափա կուզես,
Բոլորքդ գոզվուներ շարված, մեջլիսի կեսն ես, քամանչա:

Շատ տխուր սիրտ կխնդացնես, կկտրես հիվանդի դողն.
Երբ քաղցր ձայնդ վեր հանես, կբացվի հետդ քաղցողն.
Խալխից միայն էքսանն ուզի՝ ասեն «սպրի քու ածողն».
Քանի ողջ է Սայաթ-Նովեն, շատ բան կտեսնես, քամանչա:



Աշխարհումս այն չիմ քաշի, քանի որ ջան ես ինձ համար,
Անմահական ջրով լիքը ոսկե ֆինջանն ես ինձ համար.
Նստեմ. վրես շվաք անես՝ զարբար վրան ես ինձ համար.
Մեղքս իմաց, հետո սպանիր՝ սուլթան ու խան ես ինձ համար:

Մեջքդ սայրի-չինարի պես, գույնդ ֆռանգի ատլաս է,
Լեզուդ շաքար, շորթերդ՝ դանդ, ակռերդ՝ մարգրիտ, ալմաս է.
Ոսկու միջին միևնա արած, աչքերդ, ակնակապ թաս է.
Ո՞վ պատվական անգին գոհար, լալ-բաղախան ես ինձ համար:

Էս դարդին ես ո՞նց դիմանամ, միթե սիրտս ունեմ քարած,
Արցունքս արյուն շինեցիր, խելքս էլ՝ գլխիցս տարած,
Նոր բաղ ես, նոր պարտեզի մեջ, բոլորքդ վարդով չափարած,
Վրեղ շուտ գամ բլբուլի պես, սիրով սեյրան ես ինձ համար:

Քու սիրուդ գինով դառա. ես արթուն եմ, սիրտս է քնած.
Աշխարհն աշխարհով կշտացավ, իմ սիրտը քեզնից սով մնաց.
Յան, էլ ինչո՞վ գովքդ անեմ՝ աշխարհումս բան չմնաց,
Ծովից էլած հուր-հրեղեն ռաշխ ու ջեյրան ես ինձ համար:

Ի՞նչ կլի մի հետս խոսես, թե որ Սայաթ-Նովու յար ես.
Շողքդ աշխարհս բռնել է՝ արեգակիցն էլ դու վառ ես.
Հոտավետ հիլ, դարչին, մեխակ, վարդ, մանուշակ, սուսամբար
ես.
Կարմրագույն, դաշտի ծաղիկ, հովտաց շուշան ես ինձ համար:



Մի խոսք ունեմ աղաչանքով, ականջ արա, ո՞վ աչքի լույս.
Սրտումս մեծ կարոտ ունեմ, քու տեսն բարով, աչքի լույս.
Արդյոք քեզ ի՞նչ գեթ եմ արել՝ կենում ես խռով, աչքի լույս,
Աշխարհն աշխարհով լիացավ, ես քեզանից սով, աչքի լույս:

Միթե ոչով յար չէ սիրել էս ի՞նչ արի, էս ի՞նչ բան ա,
Քեզ սիրելուց խենթացել եմ, ման եմ գալի յանա-յանա.
Էս ցավից թող մարդ չքաշի՝ կեսի կեսին չի դիմանա,
Սիրտս լորի պես խորվեցիր, սիրուդ կրակով, աչքի լույս:

Դոստերիս դուշման շինեցիր, օտարներին ո՞նց դոստ անեմ,
Անցած օրերն էլ չեմ տեսնում, քանի կուզի որ դաստ անեմ.
Ատված վկա, խիստ դժվար է, գլուխս ինչպե՞ս դուրս տանեմ,
Ես մի փոքր նավի նման, քո սերըն է ծով, աչքի լույս:

Կուզեմ բերանս բաց անեմ, գովքդ ասեմ թարփի պես,
Տաս տարի է ման եմ գալիս փառիչախի շարփի պես,
Օխտը տարի էլ ման կգամ, սազը ձեռքս, Ղարիբի պես՝
Իմ հույս Շահսանամս դուն ես, էլ չունիմ ոչով, աչքի լույս:

Թեկուզ հազար դարդ ունենամ, ես սրտումս մի չեմ ասի.
Իմ տեր-տիրակալը դուն ես, էլ ուրիշի Շահ չեմ ասի,
Սայաթ-Նովեն ասաց, զանում, ես էն մահին մահ չեմ ասի,
Էնքան ըլի դուն վրես լաս, մազդդ շաղ տալով, աչքի լույս:



Էնդոր աչքս չէ ցամաքում՝ սրտիս մեջն արին մնաց.
Ոչ մի ճարով չլավացավ՝ միլամն հետ յարին մնաց.
Միբուց ցավից հիվանդ պառկած, աչքս ճանապարհին մնաց,
Երբ մեռա, նոր ինձ տես եկավ, նազն բեհդարին մնաց:

Գարունքվա վախտը լցվել է, երանի ձեզ, ծաղկած վարեր,
Թե բլբուլին բաղն եք գրկել, մանուշակով լիքն սարեր,
Բա ինչի՞ ձայնը չի գալիս, սանրի-չինար, էդ ի՞նչ արիդ,
Ճյուղքդ բլբուլին սպանեց՝ կարմիր վարդը խարին մնաց:

Այ կակաչըն, ասին, սարում խաբել է դարիբ բլբուլին,
Երբ բլբուլը միտն գցեց ռեհնով կապած վարդ-թայգուլին.
Ո՞վ շուտ գնաց, վարդը քաղեց, չանին, թե պետք է բլբուլին.
Վայ՛ քու օրին. դարիբ բլբուլ. որ լեղ չափարին մնաց:

Խոսքերդ քանցր-քաղցր են, լեզուդ շաքարի նման է,
Ձեռիդ բռնածը շարբաթ է, խմողն էլ ի՞նչ վնաս կանես.
Շարաթվա օխտն օրերին էլ քու հազածը տոնական է,
Հազել ես բեհեզ ծիրանին, ծալած դալամքարին մնաց:

Աշուղի լեզուն բլբուլ է, օհնանք ունի, նալաթ չկա.
Շահի մոտ խոսքն անց կրկենա, սպանելու ջալլաթ չկա.
Իշխան ու դատաստան չկա, մի արդար աղալաթ չկա,
Մի մարդ չկար, որ ազատեր, Սայաթ-Նովեն դարին մնաց:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուրվագիծ հայկական ճարտարապետության

ՍՈՐՈՒՍ
ՀԱՄԱԹՅԱՆ

Աշխարհագրական և պատմական ենթահող

Հայկական ճարտարապետությունը եւս, մի շարք այլ ժողովուրդների ճարտարապետության նման, ունեցել է եւ ունի իր ազգային նկարագիրը, յուրահատուկ ոճը, այն էլ՝ վերջինիս համար ընդունված լայն հասկացողությամբ:

Ինչ բնորոշ նախադրյալներ է ունեցել հայկական շինարվեստի զարգացումը:

Նախապես հիշենք, որ հայկական լեռնաշխարհը եղել է մարդկային ցեղի զարգացման բնօրրաններից մեկը, ուր վաղագույն քարի դարից՝ ստորին պալեոլիթից հարատեւել է մարդը, անընդմեջ անցնելով զարգացման բոլոր փուլերը:

Որպես հրաբխային երկիր Հայկական լեռնաշխարհը ունեցել է եւ ունի ընտիր շինանյութ՝ քարի բազմազան տեսակների բացառիկ հարուստ պաշարներ, որոնք մեծապես նպաստել են շինարվեստի զարգացմանը: Լեռնաշխարհը պղնձի (ապա եւ բրոնզի) ու երկաթի մշակման հնագույն օջախներից մեկն է աշխարհում:

Ուստի բնական է, որ այդ երկրամասում առանձին զարգացում է ունեցել հատկապես նորքարեդարյան, պղինձօքարային (էնեոլիթյան) եւ, մանավանդ, ողջ բրոնզեդարյան մշակույթը՝ զարգացած տնտեսությամբ: Այդ ժամանակներից պահպանվել են բազմահազար ժայռապատկերներ (Ուղտասար), բազմաթիվ մեգալիթյան հուշարձաններ-դոլմեններ, մենհիրներ, կրոմլեխներ եւ դոլմենային բնակավայրեր, ինչպես՝ Օշականի մոտի կայանը եւ Սիսիանի Ցից քարեր կոչվող դոլմենյան



Հազարավոր շինարար հայ վարպետներ, գործավորներ, իրենց ճարտարապետների հետ, մասամբ բռնությամբ, մասամբ կացությունից հարկադրված, տարածվել էին Հայաստանից դուրս, բյուզանդական եւ խալիֆաթի ընդարձակ տերությունների մեջ:

մեռյալ քաղաքը, աշկատարյան (կիկլոպյան) կոչվող շատ բերդավաններ:

Հարավից եւ արեւմուտքից սահմանակից լինելով հնագույն բարձր քաղաքակիրթ Միջագետքի, Միջերկրական-Էգեականի արեւելյան ափերի եւ Փոքր Ասիայի երկրների հետ, Հայկական լեռնաշխարհի ցեղերը մշտապես շփվել են այդ երկրների հետ եւ կրել փոխազդեցություններ:

Հայկական լեռնաշխարհի մի զգալի մասում, մանավանդ արեւմտյան մարզերում, երկրորդ հազարամյակի կեսերից սկսած գոյություն են ունեցել հայ-արմենական ցեղերի առանձին իշխանություններ, որոնք միավորման փորձեր են արել XI-IX դարերում (մ. թ. ա.): Դրանից հետո, շուրջ երկու հարյուր հիսուն տարի, լեռնաշխարհի կենտրոնում իշխել է հին արեւելյան բարձր մշակույթ ունեցող Ուրարտական պետությունը, որի կյանքին սերտորեն մասնակցել է երկրի հիմնական բնակչությունը՝ հայ-արմենական ցեղային (էթնիկ) տարրը: Իսկ VII դարի վերջից (մ. թ. ա.) երկրում գերիշխել են հայ-արմենները, հետզհետե միաձուլելով ուրարտացի կոչվող վանյան խորրիտներին, զարգացնելով նաեւ նրանց ժամանակից մնացած մշակույթը, մասնավորապես՝ շինարվեստը: Դրա լավագույն վկայություններից են Վան եւ Երեւան-Էրեբունի քաղաքների ուրարտական-հայկական կառույցների՝ բերդերի, տաճարների, բնակելի շենքերի, պահեստանոցների մնացորդները:

VI դարի կեսից սկսած (մ. թ. ա.), ավելի քան երկու դար, Հայաստանը, որտեղ թագավորում էին հայկական Երվանդունիները, կրել է պարս-աքեմենյան կայսրության պետական եւ մշակութային ազդեցությունը: Այդ ժամանակների մասին կան Հերոդոտի վկայությունները եւ Քսենոֆոնի նկարագրությունը (401թ. մ. թ. ա.):

III դարի սկզբից (մ. թ. ա.) մինչեւ քրիստոնեական դարաշրջանի III դարի վերջը, այսինքն վեց դար, երկիրը գտնվել է հելլենիստական մշակույթի ոլորտի մեջ: Դրա ավելի քան երկու դարի ընթացքում Հայաստանը եղել է Առաջավոր Ասիայի հելլենիստական ուժեղ պետություններից մեկը, իսկ 90-65թթ. (մ. թ. ա.)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 85 Տիգրան Մեծի օրոք, դարձել է աշխարհի երեք-չորս հզոր կայսրություններից մեկը: Ներքին ու արտաքին այդ զորավոր գործունեները պիտի նպաստեին, որ բավականին ընդարձակ ու հարուստ այդ երկրի բնակչությունը դարերի ընթացքում կերտեր իր ներքին կյանքին ու վիճակին համապատասխան մշակույթ, նաև ունենար բարձրարվեստ ճարտարապետական կառույցներ: Նշենք Արտաշատ եւ Տիգրանակերտ մայրաքաղաքների թատրոնների գոյությունը, Գառնիի եւ Տիգրանակերտի բերդերը, Գառնիի I դարի հեթանոսական տաճարը:

Անտարակույս, հեյլենիզմը Հայաստանում չունեցավ այն տարածումն ու զարգացումը, որպիսին Սիրիայում-Փոնիկիայում, Փոքր Ասիայում եւ այլ երկրներում, թեւեւ երկիրը II եւ III դարերում, պարտադիր կամ կամավոր, բավականին սերտ շփման մեջ էր Հռոմի հետ: Լեռնաշխարհի իրարից անջատ հովիտներում ապրող հայկական ցեղերը, իրենց ցեղատիրական կարգերով, դրությամբ, չէին նահանջում վերեւից մտցվող ստրկատիրական ավելի բարձր կարգերի առջեւ: Սելեւկիայի, նույնիսկ Հռոմի տիրապետությունը Հայաստանում չեղավ ամուր ու տեսական: Երկրի բնակչությունը ուներ հազարամյա ուրույն մշակույթ եւ կայուն բարքեր, համապատասխան իր կենցաղին: Ահա թե ինչու հայկական շինարվեստի մեջ հեյլենիստական սկզբունքներն ու տարրերը, քրիստոնեության հաղթանակից հետո, պահպանվեցին հազիվ մեկ դար: Վաղ միջնադարի եկեղեցական շինարարության մեջ հայ վարպետներն ընդունել էին նաև անտիկ սիրիականի, ավելի համեստ չափով՝ նաև հռոմեական, վաղ բյուզանդականի որոշ ձևերը, ենթարկվելով ընդհանուր քրիստոնեական եկեղեցու մշակած կանոններին: Բայց հնից եկած տեղական շինարվեստը մեկ դար հետո գերակշռություն

ստացավ՝ հայ բնակչության համար հարազատ՝ նորություններով:

Արժե փակագծում շատ համառոտ նշել, որ վերջին հարյուրամյակի ընթացքում հայկական նշանավոր հուշարձանների միայն մի մասի, այն էլ հաճախ հարեանցի ուսումնասիրությամբ է, որ հայ շինարվեստը գտել է իր դեռեւս շատ համեստ տեղը շինարվեստի ընդհանուր պատմության մեջ: Հայ ճարտարապետության զբաղվել են Թեքսիեն, Շուազին, Մառը, Թորամանյանը, Ստրժիգովսկին, Տոկարսկին: Մեծավաստակ Թորամանյանից եւ Թեքսիեից հետո հայ շինարվեստի առաջին լուրջ եւ սրատես գնահատողը, նրա միջազգային դերը նշողը եղավ շինարվեստի մեծագույն գիտնականներից եւ պատմաբաններից՝ ֆրանսիացի Շուազին, տակավին անցյալ դարի 80-ական թվականներին, այն էլ մի չնչին մասով ծանոթ լինելով նրան: Իսկ մեր դարի սկզբին շատ կարեւոր աշխատանք կատարեց Ստրժիգովսկին, Թորամանյանի հետ գործակցաբար:

Զարգացման ազդակներ

Խիստ թերի եւ հակասական է որեւէ ժողովրդի շինարվեստի մասին կարծիք հայտնելը տվյալ ժողովրդի ընդհանուր վիճակից, նրա պատմությունից դուրս:

Պատմական ինչ վեր ու վար ընթացքի մեջ է զարգանում հայկական շինարվեստը:

Հզոր եւ նվաճող դրացի երկրների՝ Իրանի եւ Հռոմի դեմ անկախության համար Հայաստանի մղած դարավոր պայքարը որոշ չափով մեկուսացման հոգեբանություն էր մշակել երկրի հատկապես վերնախավերի մեջ: Ուստի, զարմանալի էր, որ իր շրջապատի հզորներից ամենից շատ տուժած, մեծ ուղիների խաչմերուկ Հայաստանը պետականորեն ամենից վաղ ծանաչեց քրիստոնեությունը (301 թ.): IV դարի ուղ-

ղակի մուտքից սկսած՝ Հայաստանում սկսվեց վաղ քրիստոնեական սրբավայրեր՝ աղոթատեղիներ կառուցելու գործը, թերեւս ունենալով նախատիպ օրինակներ՝ Փոքր Ասիական եւ սիրիական քրիստոնյա, տակավին կեսօրինական, համայնքների նախաձեռնություններից:

Հայաստանը 325 թվականից մասնակից եղավ Նիկիո տիեզերական առաջին ժողովին, ուր մշակվեց հավատո հանգանակը՝ քրիստոնեության կրեդոն:

Կոպտական եւ հայկական եկեղեցին, ինչպես եւ ասորի Հակոբյան եւ եթովպիական եկեղեցիները, Քաղկեդոնի ժողովից անդամաձան մնացին Նիկիո սկզբունքներին, որպես հավատարիմ միաբնակյան (մոնոֆիզիտ): Սրա ներքին խոր պատճառների մեջ մեծ դեր ուներ դիմադրությունը՝ Արեւելյան Հռոմի, ապա եւ Բյուզանդիայի ռազմաքաղաքական զորությանը: Հայկական եկեղեցու շրջագծի մեջ էին դրացի վրացական (մինչեւ 608 թ.) եւ հայ-ալբանական եկեղեցիները, որպես հայկական թեմեր: Այդ ժողովուրդների նման դիրքորոշումը շատ օգտակար էր Սասանյան Պարսկաստանին, որ ոչ միայն չէր խանգարում, այլեւ նկատելի չափով օժանդակում էր քրիստոնեական հին սկզբունքին կառչած եկեղեցիներին, ընդդեմ Արեւելյան Հռոմի՝ Բյուզանդիայի:

Հռոմի օգնությամբ, 370 թվականին, գահ բարձրացավ հայոց թագավոր Պապ Արշակունին, որը անմիջապես երկիրը անկախ հայտարարեց ոչ միայն Պարսկաստանից, այլեւ Հռոմից, վճռականորեն անցկացնելով լուրջ բարենորոգումներ: Պապ թագավորը հայոց եկեղեցին անջատեց Արեւմուտքի ավանդական ազդեցությունից (373 թվականից), եւ հայոց կաթողիկոսությունը մշտապես ստացավ ինքնիշխանության (ավտոկեֆալ) իրավունք: Բայց Պապ թագավորի դավադիր սպանությունից հետո (374թ.), հռոմ-պարսկական համաձայնությամբ, Կասպից ծովի ափերից մինչեւ Եփրատի ոլորանը ձգված Հայաստանը ծվատվեց նրանց կողմից (387թ.): Նախապես յուրաքանչյուր կողմ համիշտակեց չորսական նահանգ, որից հետո Մեծ Հայքը բաժանեցին ազդեցության գոտիների, որոշ ժամանակ երկու մասում էլ պահելով հայ թագավորներ: Հռոմը զիջեց այդ գործում, նրան բաժին ընկավ մեկ քա-

IV դարի սկզբից մինչեւ VI դարի վախճանը, երեքդարյա այդ ամբողջ տեւողությունը հանդիսացավ հայ միջնադարյան ճարտարապետության զարգացման ժամանակաշրջան, իսկ VII դարը՝ շինարարական մտքի ծառագման եւ հարուստ փորձի ամփոփման դար:



ռորդից պակաս տարածություն: Այսպիսի անհավասար բաժանումը մեծապես օգտակար եղավ հայ ավագանուն եւ ժողովրդին, որովհետեւ, զրադաշտական Պարսկաստանի հանդուրժող ու տանելի ազգային քաղաքականության շնորհիվ հայ մշակույթը շատ ավելի ապահով էր այստեղ եւ մեծ թափով զարգանում էր իր ազգային կերպարանքով: Մինչդեռ, բարձր մշակույթ ունեցող աշխարհակալ քրիստոնյա Ջոնմին (ապա՝ Բյուզանդիային) ենթակա մասում ինչպէս է ընթացել հայ մշակույթի զարգացումը: Արդյո՞ք որպես հռոմեական, հատկապես հունական մշակույթի մի սոսկ տարբերակ, հայտնի չէ, զի չի ենթարկված հատուկ ուսումնասիրության:

Չորրորդ դարը ֆեոդալական հարաբերությունների վերջնական ձեւավորման, հայկական եկեղեցու եւ հայկական քրիստոնեական մշակույթի անկախացման եւ տեղայնացման դարն է Հայաստանում: Շինարվեստին, մանավանդ եկեղեցական շինարարությանը պետք է հատկացվեր առաջնակարգ տեղ՝ հայկական տարագի, այսինքն տեղական ավանդությունների գերիշխանությամբ:

Յինգերորդ դարի սկզբին Հայաստանը կորցրեց իր միացյալ, անկախ, ապա կախյալ պետականության իրա-

վունքը (428թ.), վերացավ հայ Արշակունի հարստությունը: Բայց, դրա փոխարեն, հայ ավատապետները՝ իշխանական տները, արդեն մի-մի փոքր թագավորներ էին, մասնավորապես արեւելյան (Պարսկաստանի) մասի հինգ ընդարձակ նահանգների սահմաններում: Բոլոր նահանգների հայ բնակիչները կապված էին իրար հետ միասնական լեզվով, ազգային դարավոր ավանդություններով, միասնական մշակույթով, մանավանդ ինքնուրույն եկեղեցիով: Պակասում էին ազգային այրուքները եւ դպրությունը. այն էլ հայ ժողովուրդը ունեցավ Մեսրոպ Մաշտոցի, Վռամշապուհ թագավորի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի ջանքերով, Հայաստանի բաժանումից չանցած մեկ տասնյակ տարի՝ 396 թվականին:

370 թվականից մինչեւ 695 թվականը՝ 325 տարի մեծ մասամբ խաղաղ շինարարության մի շրջան եղավ, շուրջ 40 տարվա որոշ ընդհատումով՝ հետեւանք ազատագրական պայքարի: Երեք դարերի ընթացքում Հայաստանը ապրեց մեծ շինարարության, գիտության, ընդհանուր արվեստի եւ գրականության զարգացման այնպիսի բեղմնավոր ու բացառիկ ժամանակաշրջան, որ դրանցից V դարը իրա-

Աղթամարի Սբ Խաչ եկեղեցի

վամբ կոչվում է Հայկական ոսկեդար: VII դարի սկզբներից վերսկսված բյուզանդա-պարսկական պատերազմների եւ ապա արաբական հաղթարշավի տակավին ձեւական տիրապետության ընթացքում Հայաստանը երեք քառորդ դար (615-690թթ.) գրեթե անկախ վիճակ էր ապրում: Իշխանական տների եւ եկեղեցու հավաքած հարկերի եւ արտաքին առեւտրից ստացված օգուտների մեծագույն մասը մնում էր երկրում եւ դրվում գերազանցորեն եկեղեցական եւ քաղաքացիական (աշխարհիկ) շինարարության մեջ:

Պատմական իրականության այդ բարդ գետնի վրա է, որ IV դարից սկսած զարգանում եւ իր ուրույն կերպարանքն է ստանում հայ ավատական, քրիստոնեական շինարվեստի առաջին ժամանակաշրջանը, որը տեւեց մինչեւ VII դարի վերջը, հասնելով գերագույն նվաճումների:

Հայկական շինարվեստի առաջին շրջան

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 87 միջնորդի վկայությունների եւ հայ ծարտարապետության ուսումնասիրության գործի մեծագույն երախտավոր Թորոս Թորամանյանի համոզիչ եզրակացությունների՝ 301 թվականից սկսած հայկական հին հեթանոսական մեհյանների մի զգալի մասը, գրեթե անփոփոխ կամ մասնակիորեն վերակառուցվելով, օգտագործվեց որպես եկեղեցի: Իսկ մի քանի խոշոր մեհյաններ, որոնց քլորմերը դիմադրեցին, ավերվեցին զինական ուժով եւ նրանց հիմքերի վրա (անշուշտ ոչ առանց փոփոխման) նրանց քարերով, շինվեցին եկեղեցիներ:

Բացահայտ չէ տակավին, թե Հայաստանում եղել են իսկական բազիլիկ շենքեր իրենց երեք նավով, որպես հեթանոսական տաճարներ: Սակայն դրանց հնարավորությունը չի ժխտվում արդի հետազոտողների կողմից, ունենալով Քասաղի, Տեկորի եւ Ծիծեռնավանքի (մինչեւ սրա վերակառուցումը) հուշող օրինակները:

Բայց եւ այնպես, IV-V դարերի ընթացքում, Հայաստանի մեջ եռանավ բազիլիկաների շինարարության նույնիսկ փոքր ծավալով զարգացումը գուցե իրավամբ համարվի առավելաբար արեւմուտքի ազդեցության արգասիք: Սակայն իրենց ծավալային-ճարտարապետական կառուցվածքով եւ հարդարանքով սրանք եւս հանդես են գալիս դարձյալ զուտ հայկական սկզբունքով ու տարազով: Չտարակուսելու համար բավական է հիշատակել պահպանված հնագույն բազիլիկանները՝ Քասաղ, Աշտարակ, Ծիծեռնավանք ու Եղվարդ: Իսկ Տեկորը (մինչ գմբեթավորումը) եւ Երերույքն այդ տեսակետից առանձին տեղ են գրավում: Բազիլիկ շենքերը ունեն երեք կամ չորս, նույնիսկ վեց-յոթ զույգ մույթեր ու երբեմն նաեւ արեւելյան պատից դուրս ընկած ելուստ, որը ամփոփում է խորանը (աբսիդը):

Հայաստանի եռանավ բազիլիկաների գլխավոր կամ կենտրոնական նավը, ճնշող մեծամասնությամբ, արտաքուստ ամփոփվում է ամբողջ ծածկը ընդգրկող երկթեք տանիքի տակ: Կենտրոնական նավի ավելի բարձրությունը՝ երկու կողմից բացված լուսամուտներով, երկհարկ տանիքով, շատ քիչ է հանդիպում Հայաստանում: Այս երեսույթը կարելի է բացատրել երկրաշարժերի հանդեպ ունեցած զգուշությամբ, թերեւս նաեւ՝ արեւմտյան ազդեցությունից եւ նմանու-

թյունից ազատագրվելու նկատառումով: Բացառիկ տեղ է գրավում Տեկորի նման բազմաստիճան պատվանդանի (ստիլոբատի) վրա բարձրացած Երերույքի տաճարը, որը հատկապես արտաքին հարդարանքով շեշտված նմանություններ ունի սիրիական՝ արդեն ավերված Տուրմանիկի եւ մասամբ Սիմեոն Սյունակյացի (Քալաթ Սըման) տաճարների հարդարանքներին, ունի նաեւ խոյակների եւ լուսամուտների համանման մշակում եւ, անկասկած, պետք է լինի նրանց ժամանակակիցը:

IV-V դարերում Հայաստանում տարածված այսպես կոչված միանավ բազիլիկաների (իմա՝ ձգված հատակագծով թաղածածկ դահլիճների) պայտածեւ աբսիդները արեւելյան պատից դուրս երբեմն ունեն եւ ունեցել են մեծ մասամբ բազմանիստ ելուստ: Այդ տաճարները աչքի են ընկնում առավելաբար իրենց կառուցվածքի բազմազանությամբ եւ զուսպ հարդարանքով: Ինչպես միանավ, նույնպես եւ եռանավ բազիլիկաների մի մասը ունեն նաեւ արտաքին սյունասրահ, մեծ մասամբ արեւելյան փոքրիկ խորանով: Այդ սրահները հիմնականում ավելացվել են հետագայում: Ըստ երեսույթին դրանք ծառայել են ժամերգությունից դուրս ժամերին աղոթելու, այլեւ, ժամերգության ընթացքում հավելյալ հասարակ բազմության, ինչպես նաեւ գուցե նորադարձների համար որպես աղոթքի վայր:

Հայ գմբեթավոր եկեղեցիների ծագումն ու զարգացումը

373-ին հայ եկեղեցու անկախ հայտարարումը Արեւմուտքից եւ 451-ին Քաղկեդոնի ժողովին մասնակցելուց հրաժարվելը Նիկիո սկզբունքներին հավատարիմ մնալու վճռականությամբ, գաղափարական հեղաշրջում առաջ պետք է բերելիս հայ մտքի մեջ: Իսկ VI դարի առաջին կեսից սկսած բյուզանդական արքունիքի եւ եկեղեցու պետերի ձեռնարկած հայաստանյայտ քաղաքականության առաջ բերած ատելությունը եւ 507, 554 թվականների Դվինի հայ եկեղեցական ժողովների որոշումները՝ բյուզանդական եկեղեցու հետ ունեցած անգամ թույլ կապերը խզելու մասին, հայկական շրջաններում ավելի զորացրին արդեն բոլոր մարզերում լիակատար ինքնուրույնության դրոշ-

պարզելու վճռականությունը, առավել եկեղեցական շինարարության մեջ: Ուստի, ներքին մղումով, պետականությունից զրկված Հայաստանի հոգեւոր պետը, ավագանին, ազատանին եւ հայկական հոգեբանության արտահայտիչ հայ արվեստագետը, մասնավորապես ծարտարապետը պետք է դիմելիս այդ գործին: Բյուզանդացու եւ հռոմեացու նման հայը (եւ սիրիացին) դեռ կարող կամ հարկադրված չէր՝ նախ դիմելու երկրում «Աստուծո ստվերին»՝ միապետին՝ կայսրին (որովհետեւ չունեւ), ապա՝ Աստծուն: Հայ մարդը չէր կարող դիմել իր վրա գերիշխող իրանական կամ բյուզանդական օտար միապետին: Նրան մնում էր միայն մի գորավոր ուժ՝ երկնքում Աստվածը եւ Նիկիո ընդունած մեկ բնություն ունեցող Քրիստոսը:

Իհարկե հույնի եւ հռոմեացու համար եւս Աստծուն դիմելու առաջին օրինական վայրը եկեղեցին էր: Սակայն կրկնակի շահագործվող հայ աշխատավոր մարդը եւ օտարին ենթարկված հայ ավագանին չէին կարող այդ նոր եկեղեցու մեջ՝ բազիլիկալ շենքում, ոչ երկինք տեսնել, ոչ էլ երկնքի ձեւը հիշեցնող մի պատկեր: Ընդունելով եբրայական երկնային Եհովայի պաշտամունքը, հայերը նրան կոչել էին իրենց հարազատ, մեր համոզմամբ, զուտ հայ-արմենական մեծ պաշտամունքի երկնքի անունով, որի սիմվոլը կոչվում էր Աստված:

Իր տան մեջ աղոթելիս հայ մարդը, հայ շինականը, դարեր շարունակ, իր գլխի վերեւ բացված երդիկից էր դիմում սուրբ երկնքին, նրան կոչելով աստված: Պատի մեջ լուսամուտ չունեցող նրա բնակարանի առաստաղի կենտրոնում, գմբեթածեւ վեր բարձրացող այդ երդիկից էր երեւում երկինքը, որի մեջ հետագայում պետք է բազմեր բիբլիական Եհովա աստվածը: Երդիկից էր թափանցում արեւի լույսը եւ կաթում լուսնի շողը: Պետք էր նման հարմարություն ստեղծել նոր սրբավայրում, խոր դարերից եկող տան երդիկի նման վեր բարձրացող եւ երկնականարը հիշեցնող կիսագնդով: Ուստի, եկեղեցական այդ «նոր ձեւ» շենքը պետք էր մի կողմից ստեղծվեր բազիլիկայից, նրա կենտրոնից ձեղքելով ու վերաշինելով փոքրիկ երկնականար, վերից կաթող լույսով, աղոթողին քաշող դեպի վեր, դեպի երկինք՝ դեպի աստված, ինչպես Տեկորի վրա արվեց 490-ական թթ.: Մյուս կողմից՝

աղոթատուն-եկեղեցու գրեթե քառակուսի մի այլ շատ ավելի հին ձեռք պիտի ընդօրինակվեր հայ ժողովրդական տան ձեւից, որ կենտրոնում ուներ չորս սյունի վրա կռնած փայտե ցածրիկ գմբեթ-լուսամուտ՝ քառանիստ թմբուկով: Եթե սրանց վրա ավելացնենք բրգաձեւ ժայռերի մեջ վաղնջական բնակարաններ (ցարդ պահպանված Սյունիք-Չանգե-գուրում) եւ գմբեթի պես բարձրացող բազում սրբազան լեռնագագաթների վրա պահպանված հին արեապաշտական անշուք փոքրիկ շենքերը, պարզ կլինի, թե ինչպես պետք է ընթանար հայ եկեղեցական շինարարությունը V դարից, մանավանդ՝ VI դարի կեսերից:

Ոչ բազիլիկ աղոթատները՝ պարզ եկեղեցիները, ըստ երեսույթին, ամենից ուշը առաջին անգամ հանդես են եկել Չայաստանում V դարի կեսերից: Նվազագույնը գեթ մեկ դարի փորձ էր հարկավոր, որպեսզի այդ նոր ձեռք, բազիլիկ տիպերի գմբեթավորման հետ, առանձին թափով իր ակնառու զարգացման անցներ 560-ական թվականներից, այսինքն՝ Դվինի եկեղեցական ժողովից հետո:

Չայ եկեղեցական նորաձեւ շենքերի կենտրոնից վեր բարձրացող այդ ծավալը հին ձեռքով շարունակվեց կոչվել գմբեթ: Սա մի բառ է, որ ասորական լեզվից անցել էր պարսիկներին ու քրիստոնեությունից դարեր առաջ մուսուլմաններին: Բառի գոյությունն իսկ ապացույց է, թե պարսկա-արեւելյան կիսագնդաձեւ գմբեթը ունեցել են եւ հայերը, ձեւի յուրահատուկ մշակումով անշուշտ:

Եկեղեցին նախ փայտով գմբեթավորելուց հետո՝ քարաշենին անցնելիս, հատկապես կիսաձագարի (տրոմպի) օգնությամբ, սրբատաշ խոշոր քարերով ու կրաշաղախով կամարների վրա ամուր կանգնած շենքի տանիքային մասը հայկական վերամբարձ թմբուկով հյուսելու եւ կաթողիկե ծածկով ավարտելու եղանակները V դարի ընթացքում լուծում գտած հարցեր էին հայ շինարարների համար:

Այսպիսով, հայկական եկեղեցիների գմբեթավորումը ծագել է երկու ձեռքով. գմբեթ են ավելացրել բազիլիկ շենքերի վրա, ապա, գրեթե նույն ժամանակներում, ավելի հավանականը՝ քիչ ավելի վաղ, ինչպես վարվել են նաեւ Փոքր Ասիայում, Սիրիայում, Չայաստանում եւ կառուցել են հատուկ գմբեթավոր



Տեկորի տաճարը



Երերույքի տաճարը

աղոթատներ: Սակայն այստեղ դրանք կառուցվել են ժողովրդական տների օրինակով, որպես քառակուսի մուտեցող քիչ երկարավուն շենքեր: Սրանք ծածկվել են նախապես ցածրիկ ու քառանիստ, թերես նույնիսկ, հետագայի նման, ութանիստ թմբուկ ունեցող գմբեթով: Այդ երկու ձեւերի համար որպես օրինակներ կարելի է հիշատակել Կոտայքի Ողջաբերդը, Տեկորը, վաղագույն Էջմիածինը եւ Արթիկի փոքր եկեղեցին:

Երկար ժամանակի փորձերը միայն կարող էին հասցնել VI դարի Լմբատի, Օձունի եւ Պտղնիի, VII դարի Թալինի Մեծ տաճարի, Արուճի, Զվարթնոցի, Բագարանի ավարտուն գմբեթներին, իրենց զուտ հայկական վերասլաց թմբուկներով:

Երեք կամ չորս խորանների կոնքերը, ձգվելով դեպի վեր, դեպի գմբեթի բացվածքը, նմանվում էին դեպի երկինք պարզված աղոթող կիսաբաց ձեռքերի: Գմբեթը աղոթասրահի հարմարեցնելը ճարտարապետության գաղափարական մեծագույն նվաճումներից մեկն էր, եւ այդ գործում իրենց որոշակի բաժինն ունեցան հայ շինարարները:

V-VII դարերի հայկական գմբեթավոր եկեղեցիների տիպերի թիվը հասնում է մոտ տասի, իրենց բնորոշ տարբերակներով: Սրանց հատակագծային բազմազանությունը ավելի զորավոր վկայություն է երկրում անընդհատ զարգացող ճարտարապետական մեծ փորձի եւ նվաճումների... >>> 90

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 89 ընդմասին:

Յետեւելով ավանդության, այդ տիպերի մեջ առաջինը նշենք գմբեթավոր բազիլիկան, որից, չհաշված V դարից գմբեթավորված Տեկորը, VI դարից մնացել է Օծունը, իսկ VII դարից՝ Գայանեն, Բագարանը, Մրենը: Այլ տարբերակներ են Օշականի հին եկեղեցին եւ Դվինի Մայր տաճարը, որ երեւի VII դարի սկիզբներին են գմբեթավորվել: Այս նոր ձեւը ստացվել է հարավային եւ հյուսիսային պատերից դուրս ավելացնելով ներսից կիսաշրջան-խորան, որը դրսից ամփոփվել է հնգանիստ ելուստի մեջ: այսինքն՝ արտաքուստ եւ խաչի ձեւ է տրվել այդ ընդերկայնական շենքերին: Սրանց օրինակով VII դարի կեսին կառուցվում է նաեւ Թալինի հսկա տաճարը՝ հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը: Սակայն շենքի այդ օրինակը չի ունեցել իր շարունակությունը հետագայում: Հաջորդը հիշենք ավելի քիչ պահպանված գմբեթավոր սրահի (դահլիճ) տիպը: Սրա նմուշը ունենք դարձյալ V դարից, որպես նախատիպերից մեկը, որ Ջովունին է: Իսկ VI դարի վերջերից արդեն փառահեղ Պողոսին է, VII դարից Դոմաշենը, Շողակաթը (հիմնովին վերաշինված XVII դարում) եւ լուսառատ Արուճը: Հայկական հնագույն միանավ եկեղեցիներից հետո, որպես սրանց տրամաբանական զարգացում, իր տարածական-ծավալային ամբողջականությամբ իբրեւ ավելի հարմար ընդարձակ աղոթասրահ մշակվեց գմբեթավոր դահլիճի այս ձեւը, որի ներսից, գմբեթի միջոցով, անխափան ապահովվում էր մեծաթիվ աղոթողների կապը երկնքի հետ, իսկ անմույթ կամ անսյուն ձգված ազատ եւ ավելի ընդարձակ տարածության մեջ՝ կապը սրբազան բեմի՝ ավագ խորանի հետ:

Հայ եկեղեցական տարբեր ձեւեր

Սելջուկ-թուրքերի եւ մոնղոլ-թաթարների տիրապետության երկու-երեք դարերի ժամանակաշրջանում ավելի զորացավ հայ վանքային շինարարությունը: Խոշոր վանքերը, համեմատաբար խաղաղ պայմաններում, օգտվելով եկեղեցական որոշ իրավունքներից, սկսեցին փոխարինել հալածվող հայ ֆեոդալական տներին:

Ապա գալիս են բազմախորան եկեղեցիները, որոնք ունեն վեց-ութ խորաններ եւ ներքնամասի հատակագծով նմանվում են բացված բազմաթերթ ծաղկի: Սրանց մեջ հնագույններն են VII դարից՝ Եղվարդի Ջորավորը (կամ Ջորավարը) եւ Իրինդի շատ ուշագրավ եկեղեցին: Այս տիպը եւս վերստին կյանք առավ X-XI դարերում, Անիի դարոցի ջանքերով:

Սակայն, հայկական գմբեթավոր այս կառույցների մեջ ամենից ավելի տարածվածը կենտրոնագմբեթ խաչածեւ եկեղեցիների տիպն է, որը ունի նույնպես բարդ հորինվածք եւ ծանոթ է ձեւի մի խումբ տարբերակներով:

Սրանց մեջ աչքի են ընկնում ներքուստ եւ արտաքուստ ուղղանկյուն խաչածեւ եկեղեցիները, արեւելյան միայն մեկ ավագ խորանով՝ ապա՝ եռախորան եւ քառախորան շենքեր:

Քառախորանների մեջ հատուկ ուշադրության են արժանի՝ արտաքուստ եւ խաչածեւ, չորս հնգանիստ ելուստներով եւ ներսից չորս մույթերով եկեղեցիները, որպիսիք են՝ թերեւս V դարում այդ ելուստներն ստացած արդի Էջմիածինը եւ VII դարի Բագարանը: Այդ տիպի, բայց առանց մույթերի, շատ տարածում չգտած տարբերակ են VI դարի երկրորդ կեսի կառույցներ Մաստարան, Հառիճի եկեղեցին եւ Ոսկեպարը, իսկ VII դարից՝ Արթիկի Մեծ եկեղեցին:

Վերջապես, կա քառախորան կենտրոնագմբեթ հայկական խաչածեւ հռչակավոր տիպը, որ կոչվում է Հռիփսիմեի եւ Ավանի տիպ (թեւեւ գուցե սխալ չէր լինի կոչել Էջմիածնի տիպ): Այդ տաճարներից են Այգեշատի Թարգմանչացը, Հռիփսիմեն (VII դարի սկիզբ), Սիսիանի Սյունի եկեղեցին, Գառնահովիտի եկեղեցին (VII դար):

Քառակուսի պատերի մեջ առանց խորանի այս նույն տիպի եկեղեցիներից են Երեւանի արվարձանում պահպանված Ավանի եւ Արամուսի VI դարի վերջերին կառուցված եկեղեցիները, որոնք,

խորշերի բացակայության պատճառով, երբեմն դիտվում են որպես նախնական օրինակներ:

Ուրույն տեղ է գրավում VII դարի առաջին կեսից ավարտուն Չվարթնոցի տիպը, հայկական եռահարկ ռոտունը՝ չորս զորեղ մույթերով, ներքուստ կամարագարդ սյունակերտ քառախորան խաչով: Դրանցից են՝ ընդհանուր ճարտարապետության բացառիկ կառույցներից մեկը՝ հայկական շինարվեստի շատ նվաճումներն իր մեջ յուրովի ամփոփած Չվարթնոցը, երեւի սրան նախորդած նույն Ներսես Շինարարի Տայք նահանգում կառուցած Իշխանի եկեղեցին, Չվարթնոցի նմանությամբ՝ Հայաստանի սահմանակից Աղվանքում՝ Լյաքիթի եկեղեցին, նույնպես Տայքում կառուցված Բանայի տաճարը եւ 1001-1014 թվականից Հայոց Գագիկ թագավորի կառուցած տաճարը՝ Անիի մեջ: Հայկական հողի վրա Չվարթնոցի տիպը հուշող շինվածքներ կարելի է տեսնել վերը նշված, արտաքուստ կլոր, քառախորան եւ բազմախորան կառույցների շարքում:

Թվով տասնապատիկ ավելի համանման հուշարձաններից դարերի ավերումին դիմացել ու մինչեւ այժմ գրանցվել են շուրջ տասնյակ ճարտարապետական կոթողներ: Պաշտամունքային եւ աշխարհիկ հատուկ ուշադրության արժանի այդ հուշարձաններն են, որ առաջին հերթին վկայում են հայկական շինարվեստի նվաճումները V-VII դարերում: Սրանք ցույց են տալիս հայ ճարտարապետների ու շինարարների բազմադարյան փորձերի բարձրագույն արդյունքը եւ քրիստոնեական ճարտարապետության մեջ բռնած իրենց ուրույն տեղը:

Հայ վարպետները մշտապես դիմում էին նորանոր ձեւերի, երեւութական նմանության մեջ ստեղծելով ներքին բազմազանություն, որը շարունակվեց, գրեթե անփոփոխ, մինչեւ օրս, որպես ազգային ոճի ավանդություն: Այս կրոնական կառույցները բազմազան են ոչ միայն իրենց հատակագծերով, ներքնամասի նպատակահարմար մշակումով, տարածական լուծումներով, արտաքին ու ներքին զուսպ հարդարանքներով, այլեւ ձեւի իրենց զարմանալի տարանմանությամբ: Նմանությունները, կրկնությունները, մանավանդ հասնում են աննշան չափերի:

Այս շենքերի կառուցողական

եղանակների քննարկմամբ հնարավոր է գրեթե անսխալ որոշել նաև նրանց կառուցման եւ վերակառուցման ժամանակները: Որպես հատկանիշ՝ առաջին հերթին ուշադրություն են գրավում, չնչին բացառությամբ, մինչեւ VII դարը տեսած պայտածե կամարները, ուղղահայաց եւ հորիզոնական անթերի ռիթմիկ գծերն ու ժլատությունը հարդարանքի ու քանդակների, որոնք, սակայն, գրավիչ են իրենց լրջությամբ եւ զարմանալի պարզությամբ: Աչքի են զարնում երկրաչափական եւ բուսական բազմաձեւ քանդակները, հատկապես խաղողի ողկույզը տերեւով եւ նուրբ: IV-VII դարերի հայկական նշանավոր այդ կառույցների տանիքները ծածկվել են հիմնականում կղմինդրով, ինչպես նաև քարե սալերով: Սակայն, մինչեւ մեր օրերը իրենց կղմինդրե նախնական ծածկը պահել են շատ քիչ հուշարձաններ (Աշտարակի Կարմրավոր, Մրեն):

VI-VII դարերում քիչ են կենդանական եւ մարդկային քանդակները: Սկսած V դարից, մանավանդ VI-VII դարերում, սովորական է եղել պաշտամունքային այդ շենքերը ներսից զարդարել խճանկարով ու որմնանկարներով: Նույնիսկ խոյակների քանդակները երբեմն ներկել են կարմիր գույնով: Յետագայում, սակայն, վերացվել է այդ սովորությունը, շարունակել են միայն որմնանկարումը, որից պահպանվել են խիստ վնասված սակավաթիվ նմուշներ:

V դարից մինչեւ VII դարի առաջին կեսը գմբեթների թմբուկները գերազանցորեն հյուսված են կիսաձագարի (տրոմպի) վրա, հազվադեպ միայն առագաստով (Ավան, 590-ական թ.), որը սովորական դարձավ VII դարի երկրորդ կեսից:

Հայկական հեթանոսական տաճարների օրինակով վաղագույն եկեղեցիները եւս զուրկ են եղել անկյունների ավանդատներից: Յետագայում ավելացրել են մեկ, երկու սենյակ ավագ խորանի մեկ կողմից, ապա՝ երկու կողմերից: Այդ կառույցների պատճառով արեւելյան կողմից խորանն ամփոփող պատից դուրս հնգանիստ ելուստ ունեցող շենքերը գրկվել են այդ ելուստից, եւ պատը կանգնել է մեկ հարթության վրա, առանց խորշի կամ երկու խորշով, կամ թե կրճատ՝ եռանիստ ելուստով, եթե ավանդատունը երկու կողմից ունեցել է նեղ հորիզոնական ձգվածություն:

Վերը հիշված կառույցների արտա-



Մեղրու բերդը, դրվագ

քին եռանկյուն խորշերը VII դարում հասան կատարելության: Նրանք ծառայում էին պատերի թանձր մասերը թեթեացնելու, ապա՝ արանքներում բացված հավելյալ լուսամուտների միջոցով ավելի լուսավորելու ներսը, իսկ պատերը ազատում էին միալար հարթությունից՝ գեղեցիկ ուղղահայաց գծերով: Ավելին՝ այդ խորշերի միջոցով արտաքուստ եւս խաչի ձեւ էր տրվում շենքին՝ տանիքի խաչաձեւին համապատասխան, մանավանդ՝ Յոհաննիսի տիպի շենքերի վրա: Ըստ երեւոյթին դրանք նպաստում էին նաև երկրաշարժային հարվածները չեզոքացնելուն: Այդ խորշերի վերին կորնթարդը որոշ կառույցներում օգտագործվել էին բարձրաքանդակ (Սիսիան) կամ այդ խորշերի կիսանկյունով ձգված նուրբ կիսասյան վրա կիսանդրիներ դնելու համար (Ջորավոր, Թալինի մեծ եկեղեցի, Գառնահովիտ): Տաճարների մուտքերը մշակվում էին շքեղ՝ որմնասյունների եւ կամարների միջոցով: Լայն ու բարձր լուսամուտները մինչեւ VII դարը (չհաշված չնչին բացառությունները) ավարտվում էին պայտածե կամարով, իսկ վերին մասը պսակվում նրբագեղ զարդաքանդակներ ունեցող հոնքանման պարակալներով:

Հայաստանը, գեթ Մեծ Հայքը, իր դրացիների եւ շատ այլ երկրների մեջ եղել է թերեւս բացառիկ երկիրը, ուր V-VI դարերից սկսած ոչ միայն խոշոր, այլեւ միջակ մեծության գյուղերում կառուցել են հոյակապ եկեղեցիներ՝ սրբատաշ տուֆ քարից: Այդ եկեղեցիները, մեծագույն մասով, եղել են միանավ, կամ երկթեք տանիքի տակ առած բազիլիկ շենքեր: Ավելի ուշագրավն այն է, որ փոքր

գյուղերում շքեղ քարաշեն եկեղեցիներ կառուցելու այդ սովորությունը շարունակվեց մինչեւ XIX դարի վերջը:

Հայկական տաճարները չեն զարմացնում իրենց խոշորությամբ: Թագավորի կամ երկրի իշխանության աշխարհակալական հզորությունը չէին կարող արտահայտել նրանք, ինչպես Բաաբեկը, Քալաթ Սըմանը (Սիմեոն Սյունակյացի) կամ Պուլիս Ս. Սոֆիան:

Սակայն, անարդար կլիներ հայկական եկեղեցիների փոքր չափերը վերագրել հայ վարպետների անփորձության կամ իշխանական տների աղքատության, որովհետեւ բոլոր դարերում կան եւ հակառակն ապացուցող փաստեր: Որպես օրինակ նշենք V-VII դարի Դվինի հսկա Մայր տաճարը կամ ավելի ուշ՝ VII դարի առաջին կեսին կառուցված Բագարանը եւ Զվարթնոցը, իսկ երկրորդ կեսին՝ Թալինի գմբեթավոր մեծ տաճարը: Այսուհանդերձ, փոքր չափերով իսկ, հայ վարպետները հասել էին արվեստի գերագույն ըմբռնման՝ ճարտարապետությունը իսկապես դարձնելով քարացած երաժշտություն:

Աշխարհիկ շինարարություն (V-VII դարեր)

Հայ շինարվեստի մասին խոսելիս եկեղեցական շենքերից սկսելու պատճառը այն է, որ հիմնականում պահպանվել են այդ շենքերը: Ապա, ինչպես գրեթե **» 92**

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 91 ամենուրեք, շինարարական հանձնարը ավելի շատ դրսևորվել է պաշտամունքային կառույցների վրա: Սակայն աշխարհիկ շենքերը եւ, գերազանցորեն կիրառական նշանակությունից բացի, ունեցել են նաեւ գեղարվեստական արժեք, հատկապես քաղաքների զարգացման ընթացքում:

Քաղաքի ցածր խավի բնակարանների ճնշող մեծամասնությունը անշուշտ եղել է խիստ պարզունակ: Բայց միջին խավերից սկսած, մանավանդ վերնախավերի ու բազմաթիվ մեծ ու փոքր ավատապետների (ֆեոդալների) բնակարանները, բերդ-դղյակները, ինչպես նաեւ հասարակական շենքերը (ամրոցները, կամուրջները), նշանավոր անձանց դամբարանները եւ այլ հուշարձաններ, անտարակույս, ունեցել են ճարտարապետական մեծ արժեք:

Ամբողջ կես հազարամյակ՝ հելլենիստական արվեստի սկզբունքներով առաջնորդված, նույնիսկ վաղ միջնադարում հելլենիստական վերապրուկներով շարունակվող կառույցները զուրկ չեն եղել ճարտարապետական արժեքից: Այլ կերպ չի կարելի պատկերացնել Արտաշատ եւ Տիգրանակերտ մայրաքաղաքների հայկական թատրոնների շենքերը, պալատներն ու դղյակները: Թող նրանք չունենային հունա-հռոմեական, եգիպտական, ասորական կամ իրանական (պերսեպոլյան) չափանիշներ, բայց ժամանակի եւ մարդու ավերումից փրկված բեկորներն իսկ, ինչպիսիք են Տիգրանակերտ մայրաքաղաքի երկու հազար տարվա պարիսպները, Էրեբունի-Երեւանի ետոլարտական շենքերը, Գառնիի բերդն ու տաճարը եւ այլ մնացորդներ հին շենքերից ու կամուրջներից վկայում են Հայաստանի նաեւ աշխարհիկ շինարարության բարձր մակարդակի մասին: Եթե նկատի ունենանք V-VII դարերում

կառուցված բերդերի եւ դղյակների, պալատների (Դվինի, Արուձի) բազմաթիվ հնագույն մնացորդները, ապա պարզ կդառնա, որ աշխարհիկ, մանավանդ հասարակական շենքերը իրենց որակով, սրբատաշ տուֆակերտ հորինվածքով, զուսպ եւ ընտիր ձակատներով ու քանդակներով քիչ են զիջել եկեղեցական շենքերին:

V-VII դարերի այդ կառույցների մեջ աչքի են ընկնում Դվինի, Արուձի, մանավանդ Զվարթնոցի աշխարհիկ համակառույցները՝ կաթողիկոսական պալատներով, ընդունարանով, վանականների բնակարաններով, բաղնիքներով եւ այլ կարգի շենքերով:

Բացառիկ է Արուձի Գրիգոր Մամիկոնյան մեծ իշխանի պալատը, կառուցված VII դարի երկրորդ կեսին: Ուշագրության արժանի են ընդհանրապես հին վանքերին կից կիրառական շենքերը՝ վանականների խցերը, սեղանատները, գրատները, ջրավազանները, աղբյուրները՝ սրբատաշ քարից: Հայաստանի՝ գարնանն անանցանելի բազմաթիվ գետակների եւ գետերի վրա մեկից մինչեւ 3-4 եւ ավելի թռիչքով (կամար) սրբատաշ քարից շինված կամուրջները ապացույց են իրենց ժամանակի կառուցողական բարձր տեխնիկայի:

Կոթողներ եւ հուշայուներ

Չորրորդ դարի սկզբներից մինչեւ յոթերորդ դարի վերջը, թերեւս եւ ութերորդ դարի սկզբները, այսինքն 400 տարի, հայկական փոքր չափերի ճարտարապետական կառույցների մեջ գերիշխել են կոթողները: Դրանք զարգացել են ուրարտական կոթողների հեռավոր նմանությամբ եւ մշակվել վաղ հեթանոսական հայկական կոթողների օրինակով:

Դարերի ընթացքում հայկական կո-

թողները ընդունել են բազմազան ձևեր՝ 1, 3, 4 եւ 7 աստիճան ունեցող պատվանդանով: Հատակին երկուսից մինչեւ ութ մետր տրամագիծ ունեցող աստիճանների վրա դրված շուրջանակի քանդակված խարիսխի վրա տեղադրվում է 2-4 մետր բարձրությամբ, մեծ մասամբ քառանիստ եւ քանդակազարդ մենասյունը (ստելա), որը պսակվում է գեղեցիկ մշակված խոյակով, իսկ նրա վրա դրված թակաղաղը կրում է կեսից մեկ մետր երկարությամբ, բաց թելերով ու քանդակված քարե խաչ: Հայկական այդ հին կոթողները ունեցել են 4-10 մետր բարձրություն: Դրանցից հիշենք Դվինում, Բյուրականում, Դսեղում (Լոռի), Անգեղակոթում (Սիսիան), Թալինում, Երեւանի արվարձան Ավանում պահպանվածները: Հայկական այս կոթողները մեծ մասամբ գետնափոր, թաղակապ դամբարանները պսակող կամ որեւէ մեծ դեմքի եւ դեպքի նվիրված հուշարձաններ են: Այս կոթողների մեջ բացառություն են կազմում երկուսը, որոնք, նվազագույնը, VI դարի վերջերի կերտվածքներ են՝ շատ ինքնատիպ: Օձունի (Լոռի) եւ Աղուտիի (Սիսիան) փառահեղ մահարձան կոթողներն են դրանք, որոնց թեւեւ վերին մասերը չեն պահպանված, բայց մնացած հիմնական մասերով իսկ իրավունք ունեն պատվավոր տեղ գրավելու աշխարհի ծանաչված կոթողների շարքերում, մանավանդ՝ Աղուտիին: Որպես վերապրուկ՝ X դարում բարձրացել են Տաթևի եւ Որոտանի վանքերի կոթողները:

Հայկական շինարվեստի երկրորդ շրջան, անկում եւ կրկին վերելք

IV դարի սկզբից մինչեւ VI դարի վախճանը, երեքդարյա այդ ամբողջ տետոլությունը հանդիսացավ հայ միջնադարյան ճարտարապետության զարգացման ժամանակաշրջան, իսկ VII դարը՝ շինարարական մտքի ճառագման եւ հարուստ փորձի ամփոփման դար: Վերը համառոտակիորեն թվարկված այդ նվաճումներին հայ շինարարները հասան հաղորդակից լինելով նաեւ հելլենիստական դարաշրջանի շինարվեստին, մշակելով հայկական հին ուրույն ոճը շինարարական բազմազան եղանակներով եւ անկրկնելի հարդարանքների տեսակներով ու ձաշակով:

Միջնադարյան Հայաստանում կարելի էր տեղ են գրավում առետրական բանուկ ծանապարհների վրա X-XIV դարերում կառուցված իջեւանատները: Հիշենք Չորի, Արուձի, Անիի, Թալինի, Սյունիքից՝ Հարժիսի եւ Սուլեմայի (Սելիմի) իջեւանատները, որոնք իրենց ճարտարապետական բարձր արժանիքներով կարող են մրցել նուրբ ձաշակով կառուցված հասարակական այլ շենքերի հետ:

IV-VII չորս բեղմնավոր դարերին հաջորդեց արաբական տիրապետության շրջանը, որ VII դարի կեսից մինչեւ դարի վերջը տանելի եւ գրեթե ձեռնարկաբեկ իշխանության մի հիսնամյակից հետո, հետզհետե դարձավ ծանր ու դժվարին:

Ամբողջ VIII դարը եւ IX դարի առաջին կեսը ընդգրկող երեք հիսնամյակները Հայաստանի վաղ միջնադարի գրեթե ամուլ ժամանակաշրջանն էր: Ծանր կորուստներով վերջացող ազատագրական ապստամբությունների, հայ աղանդավորական, գյուղացիական մեծ շարժումների, մեծ հարկերի ու գերեզմարության մի շրջան էր այդ, որ Հայաստանում լռեցրել էր նաեւ շինարարական մուրճի ձայնը:

Հազարավոր շինարար հայ վարպետներ, գործավորներ, իրենց ճարտարապետների հետ, մասամբ բռնությամբ, մասամբ կացությունից հարկադրված, տարածվել էին Հայաստանից դուրս, բյուզանդական եւ խալիֆայի ընդարձակ տերությունների մեջ: Սրանք իրենց ճարտարությունը, քրտինքն ու փորձը ներդրում էին այդ վայրերում: Ոչ միայն կատարում էին տեղական պատվերը, այլեւ, բնականորեն, այդ վայրերն էին փոխադրում նաեւ հայկական շինարվեստի դարավոր նվաճումներից անհրաժեշտը եւ ընդունելի՝ այդ երկրների եւ ժողովուրդների համար:

Խալիֆայի հետզհետե թուլացման հետեանքով, իշխանական մի քանի հայ տների ներքին լայն իրավունքներ ստանալուց կես դար հետո, 860-ական թվականներին Հայաստանը վերստին ձեռք բերեց անկախություն, հիմք դնելով Բագրատունիների հարստությանը:

Խալիֆայի ճանաչումից քիչ հետո, 876 թվականին, Հայոց անկախությունը ճանաչեց նաեւ Բյուզանդիան, հանձին հայկական ծագումով Վասիլ Ա կայսեր, որ ոչ միայն թագ ուղարկեց հայ մեծ իշխան Աշոտ Բագրատունուն, այլեւ նրանից թագ պահանջեց, որովհետեւ Բագրատունիները հայոց թագավորների թագադիրներն էին, իսկ Վասիլ կայսրն իրեն համարում էր հայ Արշակունիների շառավիղ:

Հայաստանում ընդհատված շինարարական կյանքը եւս վերակենդանանում է 860-ական թվականներից եւ, առանց ընդմիջումի, բուռն վերելք ապրում մինչեւ XI դարի կեսը:

IX դարում այսպարով ձեռք բեր-



Հարժիսի քարավանատուն (իջեանատուն)

ված անկախությունը նպաստեց նաեւ արհեստների եւ առեւտրի արագ աճին, խթանելով քաղաքների զարգացումը եւ նոր քաղաքների հանդես գալը:

Այս ժամանակներում է ահա, որ երկրի ընդհանուր վերելքին համընթաց հայկական շինարվեստը երեք ուղղությամբ հասավ այնպիսի աստիճանի, որ մասնագետները իրավամբ գնահատում են որպես արեւելյան նախավերածնունդ: Այդ երեք ուղղություններից առաջինը պետք է համարել քաղաքաշինությունը, որի ամենափայլուն օրինակը՝ մեկ դարի ընթացքում բացառիկ ծաղկում ապրած հայոց նոր եւ գլխավոր մայրաքաղաք Անին էր: Երկրորդը՝ քաղաքներից դուրս, հայ վարպետների կերտած համատարած վանական համակառուցներն էին, որոնց շինությունը սկսվեց IX դարի վերջերից եւ երկրով մեկ շարունակվեց մինչեւ XIV դարի սկզբները, մի կարծառեւ վերակենդանացում ունենալով XVII դարում: Իսկ երրորդը, առանձին կառույցների՝ եկեղեցիների, հուշակառույցների, կամուրջների, իջեանատների, բերդերի եւ դղյակների շինարարությունն էր:

Սեանի ավազանի եւ կղզու մի քանի եռախորան ու քառախորան եկեղեցիները, ինչպես եւ նրանց գրեթե ժամանակակից Շիրակավանի եկեղեցին, վկայում են, որ IX դարի երկրորդ կեսին, նույնիսկ X դարի սկզբներին, հայ վարպետները գրեթե ընդօրինակում էին VI-VII դարերի խաչածե եկեղեցիները եւ գմբեթավոր սրահները: Այդ նկատելի է նաեւ Նորատուսի եւ Զոռոմոսի եկեղեցիներում:

Սակայն այդ ընդօրինակումնե-

րին զուգընթաց ընդհանուր կառուցման եղանակների եւ հարդարանքների տարբերությունից բացի հետզհետե մշակում էին նաեւ հատակագծային տարբերակներ, մասնավորապես հիմք ընդունելով գմբեթավոր սրահը, որը օգտագործվող տիպերի մեջ ամենից կենսունակը եւ ժամանակի պահանջներին ու ճաշակին համապատասխան նկատվեց: Ստեղծված խաղաղ եւ անկախ պայմաններում Հայաստանի հին քաղաքներից նոր փայլ ստացան Դվինը, Երեւանը, Նախիջեանը, Վանը եւ այլ քաղաքներ Վանա լճի ավազանում, իսկ նորերից արագ զարգացան Կարսը, Արծնը, մանավանդ Անին:

Շուրջ մեկ դար տեսած անկախությունից հետո, 961 թվականից սկսած, Բագրատունյաց Հայաստանի վարչատնտեսական ու մշակութային կենտրոնը դարձավ Անին, որը ժողովրդական ավանդությունների եւ ժամանակակիցների գրավոր հիշատակությունների մեջ, արեւելյան տասնապատիկ չափազանցությամբ, կոչվել է «1001 եկեղեցիների քաղաք»:

Նախկին փոքրիկ բերդավան Անին, մանավանդ արտաքուստ վերափոխվելով, ժառանգում էր VI-VII դարերի նվաճումները, գրեթե վերարտադրում հատակագծային օրինակները: Մայրաքաղաքը գեղեցկացավ ոչ միայն եկեղեցիներով ու պալատներով, այլեւ հասարակական շենքերով, պանդոկ- կարավանատ- >> 94

ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 93 ներով, թաղակապ նկուղի վրա բարձրացած մեկ-երկու, երբեմն երեք հարկանի բնակելի տներով, շքեղ մուտքերով ու ճակատներով:

Հայաստանից դուրս եւս հռչակված Տրդատ ճարտարապետի եւ նրան հավասար կամ աշակերտած այլ վարպետների տաղանդով Անիում կառուցվեցին պալատներ եւ քառախորան, բազմախորան, կրճատ բազիլիկ ու սրահածեւ գմբեթավոր եկեղեցիներ, թե XI դարում Բագրատունիների ժամանակ, թե XII-XIII դարերում՝ Հաբարյանների եւ մոնղոլների իշխանության ժամանակ: Դրանցից էին՝ Բագրատունիների թագավորական պալատը, Մայր տաճարը, Աբուղամրենց եկեղեցին, Գազկաշեն Սուրբ Գրիգորը, որ կառուցվեց Ջվարթնոցի օրինակով, ապա՝ Փրկչի բազմախորան եկեղեցին, ավելի ուշագրավը՝ Էջմիածնի օրինակով հնագույն բառախորան Առաքելոցը եւ շատ փոքրիկ Հովվի եկեղեցի կոչվող ռոտունը: Մեծ շքեղությամբ մշակված են այդ եկեղեցիների եւ դրանց օրինակով կառուցված Անիից դուրս մի քանի այլ եկեղեցիների գմբեթի թմբուկները, որոնց մի մասի վեղարը՝ գագաթը պսակվել է հովհարածեւ ծածկով:

Նույն շրջանի ճարտարապետության մի այլ հատկանիշն է պատերի հարդարումը դեկորատիվ միջոցներով: Լավագույն նմուշը կարող է համարվել Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, որ կառուցվել է 915-921-ին: Եթե V-VI դարերում գերակշռում էին հորիզոնական ծանր ու խաղաղ գծերը, VII եւ IX դարերի մեջ ուշագրավ էր հորիզոնական եւ ուղղահայաց ռիթմիկ գծերի ներդաշնակությունը, ապա՝ X-XI, հատկապես XII-XIII դարերի հայկական շինարվեստում նկատելի է վերապայց, նուրբ եւ աշխույժ գծերի գերակշռությունը:

Հաբարյան շրջան եւ Կիլիկիա

Սելջուկների սամուհի նման ավերիչ արշավանքները եւ ապա տիրապետությունը դարձան ահավոր աղետ Հայաստանի համար: Ուժեղ դիմադրությունից հետո Անիի ընկավ 1064-ին, կիսով չափ ավերվեց, եւ բնակչության զգալի մասը ոչնչացավ: Ավերվեցին եւ մյուս քաղաքները, բոլորից մեծը՝ Արծնը ավերվեց հիմնահատակ: Սկսեց բազմահազար կենսունակ ուժերի նոր արտագաղթը դեպի Փոքր Ասիա, Կիլիկիա, Բալկան-

ներ եւ հեռավոր այլ վայրեր:

XII դարի վերջին քառորդից մինչեւ XIII դարի առաջին քառորդը, սելջուկյան էմիրություններից Վրաստանի օգնությամբ ազատագրված եւ նրա հետ ունեցած դաշնակցային միությանը զորացած Արեւելյան Հայաստանը ապրեց բուռն թափով զարգացման քառասնամյա մի բացառիկ շրջան: Այդ Հաբարյանների շրջանն էր, որը արդարացիորեն, կարող է բաղդատվել X-XI դարերի հարյուրամյա անկախության շրջանի հետ: Ուշագրավ է, որ նույն XII-XIII դարերի ընթացքում հայկական մշակույթը եւ պետական կյանքը բացառիկ ծաղկում էին ապրում նաեւ Միջերկրականի ափին՝ XI դարի վերջերից հիմնված Հայկական Կիլիկյան անկախ թագավորության սահմաններում: Այստեղ եւս շինարարությունը, հատկապես քաղաքացիական-աշխարհիկ-թեքունով (թեեւ կառուցված են շուրջ միայն 30 նշանավոր վանքեր), ընթացավ գրեթե նույն թափով, որպիսի թափով՝ մեկ դար առաջ Արեւելյան Հայաստանի շինարարությունը:

Արվեստի, գրականության ու գիտության բոլոր մարզերում Վերածնության նախադուռը հանդիսացող այս վերելքը որոշ ժամանակ ընդհատվեց մոնղոլ-թաթարական կործանիչ արշավանքով եւ տիրապետության սկզբում, բայց նրանց հարյուրամյա տիրապետության համեմատաբար խաղաղ պայմաններում, Հայաստանում որոշակի աշխույժ ապրեց նաեւ շինարարությունը: Նորանոր շենքեր բարձրացան Անիում, Լոռի-Գուգարքում, Արցախ-Խաչենում եւ այլ վայրերում, հատկապես՝ Սյունիքում, որը, Օրբելյան իշխանների ջանքերով, մոնղոլ Մեծ խանից ստացել էր ներքին ինքնավարական իրավունք:

Վանական շինարարություն

Իներորդ դարի կեսից անկախության հասած եւ արդեն անհամեմատ խաղաղության պայմաններում ապրող հայ ֆեոդալական տների զարգացմանը զուգահեռ, բուռն թափով զարգացան նաեւ վանական հաստատությունները: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ մինչ այդ ամբողջ մեկ եւ կես դար (690-850) երկրի բնակչությունը խաղաղ շինարարական աշխատանքի հնարավորություն չունեց, այլ առավել եւս այն, որ վանական շինարարության ծավալմամբ

մեծապես շահագրգռված էր աշխարհիկ ավագանին: Հայ ավագանին խորապես զգացել էր եկեղեցու զորավոր ուժը, մանավանդ՝ օտար տիրապետության ծանր ժամանակներում:

IX դարի երկրորդ կեսից՝ սնկի պես բուսնող հայկական վանական համակառուցները հետզհետե դարձան ավատական-տնտեսական զորեղ ու բազմամարդ հաստատություններ եւ մշակութային կրթական օջախներ: Վանքերը սովորաբար կառուցվում էին քաղաքներից, նույնիսկ գյուղերից դուրս, ավելի շատ խոր ձորերում, բարձունքներում կամ լեռների դժվարամատուց լանջերին, նախընտրաբար՝ հին սրբավայրերի մոտ, հին կամ նորաշեն եկեղեցիներին կից: Ամբողջ կառուցախումբը՝ եկեղեցին իր հարակից շենքերով, ամփոփվում էր բերդանման պարսպի մեջ:

Սելջուկ-թուրքերի եւ մոնղոլ-թաթարների տիրապետության երկու-երեք դարերի ժամանակաշրջանում ավելի զորացավ հայ վանքային շինարարությունը: Խոշոր վանքերը, համեմատաբար խաղաղ պայմաններում, օգտվելով եկեղեցական որոշ իրավունքներից, սկսեցին փոխարինել հալածվող հայ ֆեոդալական տներին: Իսկ խռովության ժամանակ, իրենց շրջափակող պարիսպներով, ծառայում էին նաեւ որպես ամրոցներ:

Վերջապես, օտար իշխաններին անմիջականորեն ենթակա քաղաքներից ավելի վանքերն էին դառնում հայ մշակութային եւ կրոնաքաղաքական գործը կենտրոններ: Նման ծառայություն հայկական վանքերը պատվով կատարեցին մինչեւ XX դարի սկզբները, պետությունից զուրկ, մշտապես հարստահարվող իրենց ժողովրդի համար:

Վանական եկեղեցիներում հիմնականում նկատի են առնված գմբեթի լուսավոր հովանու տակ ծավալված տարածության մշակումը, գմբեթի հենարանը եւ չորս ավանդատների կառուցման ձեւը: VI-VII դարերի ընդարձակ ու դիմացկուն գմբեթավոր սրահների դեպի ներս ձգված որմնամույթերի փոխարեն գմբեթակիր կամարների հենարանները մշակվում են քիչ այլ ձեւով: Վանական նոր եկեղեցիների մեծ մասի արեւմտյան կողմի երկու որմնամույթերը, ուղղանկյուն կորություն ստանալով դեպի արեւմուտք, դառնում են ավանդատների երկու պատերը, միա-

ժամանակ իրենց անկյունը դարձնելով գմբեթակիր քառակուսու հենարանը: Այուս կողմից, ավագ խորանի երկու որմնամույթերը, քիչ առաջ բերվելով դեպի սրահ, իրենց հերթին դառնում են գմբեթավոր քառակուսու հենարան՝ արեւելյան կողմից:

Իրավացի կլինենք, եթե X-XIV դարերում գերիշխող եկեղեցական այդ տիպը կոչենք վանքային կամ վանական տիպ:

Կառուցողական բարձր նվաճման եւ գաղափարական ներդաշնակության արգասիք գմբեթավոր սրահի այս պարզ ձեւը վերակենդանացվեց եւ, ուրիշ ձեւերին զուգահեռ, դարձավ իր նման, բայց զգալապես տարբեր նոր ձեւի՝ վանական տիպի հիմք: Այդ նորը ունեցավ երկարատեւ ու տիրական զարգացում, ինչպես վկայում են մեզ հասած բազմաթիվ օրինակները:

Վանական եկեղեցիների արտաքին հարդարանքը եւ կառուցվածքային (տեկտոնիկ) տարբերությունները չեն թաքցնում դրանց գերիշխող մասով ընդհանրացած հատակագիծը, մասնավորապես Արեւելյան Հայաստանում: Այդ մի նոր եւ ուշագրավ երեւոյթ էր հայկական շինարվեստի մեջ, որի վարպետները հայտնի էին իրենց պրպտուն մտքով, նորոյթներ ստեղծելու մեջ մոլի կրքով եւ տիպականացումի հանդեպ ունեցած ուղղակի ավանդական թշնամանքով:

Սակայն ինչպէս հանդուրժվեց գրեթե տիպականացած այս երեւոյթը: Այդ կարելի է բացատրել մի քանի պատճառներով: Նախ՝ օտար տիրապետության ստեղծած անկայուն վիճակը միջոց չէր տալիս հայ ճարտարապետին հետամուտ լինելու շատ նորոյթների, երկրորդ՝ որպես հակազդեցոյթ թաղաքներում, հատկապես Անիում, կառուցվող շքեղ եկեղեցիների, որ հեռանում էին քրիստոնեական խստակեցոյթունից, վանքերում նախապատվոյթուն էին տալիս պարզ, հին ձեւերին, մասնավորաբար՝ գմբեթավոր սրահին: Երրորդ՝ եկեղեցու սրահային այդ տիպը, որ արդեն ցուցաբերել էր երկրաշարժային հաճախադեպ շարժումների դեմ իր դիմացկունոյթունը, իր ներքնամասի միակտուր տարածքով ստեղծում էր նաեւ ընդհանրական զգացողոյթուն՝ աղոթողների միջեւ:

X-XI դարերի ծավալուն շինարարոյթյան ընթացքում, կառուցվածքային տարբերակներ ստեղծելուց եւ հար-



Հին Ջուղայի գերեզմանոցը

դարանքների ճոխոյթյան կիրառումից բացի, հանդես եկան նաեւ այնպիսի նորոյթներ, որոնք մի առանձին փայլով պսակեցին հայկական շինարվեստի պատկերն ու պատմոյթունը: Բաղաքացիական շինարարոյթունից ու վանական համակառուցոյթներ ստեղծելուց բացի, սովորական էր վանական եկեղեցիների հատկապես արեւմտյան ծակատին կից ընդարձակ դահլիճներ (գավիթներ) եւ ժամատներ կառուցելը: Վերջինս գրեթե աշխարհիկ դերով մի շենք էր, ոչ միայն աղոթքի, այլ առավել զանգվածային հավաքոյթների՝ աշխարհիկ ժողովների, նաեւ իշխանավորներին թաղելու համար:

Ուշագրավն այն է, որ այս նոր տիպի շենքերը կառուցում էին հին հայկական ժողովրդական տների սկզբունքով հաճախ չորս սյունների, կամ մոյթերի վրա, լուսավորոյթունը վերելից՝ երդիկից: Նշանավոր գավիթներ ունեն Յոզումուսը, Խորակերտը, Գանձասարը, Գեղարդը, Սանահինը, Հաղբատը, Գոշավանքը, Հովհաննավանքն ու Սաղմոսավանքը եւ վանական շատ եկեղեցիներ: Գավիթներից եւ ժամատներից բացի՝ վանական համալիրներում կառուցվել են զանազան մեծոյթյան սեղանատներ, որոնց լավագոյն օրինակները պահպանվել են Հաղարծինում եւ Հաղբատում: Այդ դարերում գավիթների, ժամատների, սեղանատների ծածկերը մեծ վարպետոյթյամբ իրականացվում էին խաչաձեւով կամարներով:

Կառուցվում էին թաղակապ աղբյուրներ, գրադարան-գրատներ, դպրոցական շենքեր, երկհարկանի դամբարան-եկեղեցիներ: Հատկապես XIII դարից

սկսած հանդես են գալիս եւ վերասլաց զանգակատները:

Այդ առանձին կառուցոյթների վարպետ-ճարտարապետները եւս ազատ էին ձեւի ընտրոյթյան եւ հարդարանքի մեջ, քաղաքներում գործող իրենց արվեստակիցների նման: Պատերը դառնում էին նուրբ ու թեթեւ, գմբեթների թմբուկներին տրվում էր առավելապես բազմանիստ կամ կլոր ձեւ, լուսամուտները՝ ավելի փոքր, նեղլիկ ու երկար, իսկ խորշերը ստանում էին ավելի դեկորատիվ նշանակոյթուն:

Աշխարհիկ շինարարոյթուն (X-XIV դարեր)

Միջնադարյան Հայաստանում կարեւոր տեղ են գրավում առեւտրական բանուկ ճանապարհների վրա X-XIV դարերում կառուցված իջեւանատները: Հիշենք Զորի, Արուճի, Անիի, Թալինի, Սյունիքից՝ Հարժիսի եւ Սուլեմայի (Սելիմի) իջեւանատները, որոնք իրենց ճարտարապետական բարձր արժանիքներով կարող են մրցել նուրբ ճաշակով կառուցված հասարակական այլ շենքերի հետ: Նշենք նաեւ Վանա լճի ափերի եւ Աղթամար կղզու X եւ հետագա դարերի քաղաքացիական շինարարոյթյան մասին գրավոր հաղորդումները, մանավանդ Անիի X-XI դարերում կառուցված բերդն ու պանդոկները, գրադարանները, հասարակական ու բնակելի այլ շենքերը: Այս ամենից հետո հայ քաղաքացիական

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 95 շինարարության գնահատականը գրեթե զուգահեռ կտրվի եկեղեցական շինարարության հետ: Այս երկուսի միջև տարբերությունն այն է, որ քաղաքացիական շենքերը՝ ինչպես երկրի բնիկների, նույնպես եւ առավել օտար բնակիչների ու նվաճողների կողմից ավերվել են մեծ չափերով, մեծ մասամբ նրանց սրբատաշ քարերը իրենց նոր շինարարության վրա օգտագործելու նպատակով: Այդ արարքը, ինչպես ամենուրեք, չի համարվել սրբապղծություն, չունենալով կրոնական շենքն ավերելու վախը, ավստոսանքի զգացումը սովորաբար զիջել է թշնամության եւ ազահության զգացումին:

Հայկական խաչքարերը

XIV դարից, ավելի ձիշտ՝ 1330-ական թվականներից, մոնղոլական Արեւելյան էլիսանության քայքայման եւ Միջին Ասիայից այիք առ այիք ներխուժող թուրք-թաթարական ռազմաքոչվորական ցեղերի ավազանու միջև գերակշռության համար մղվող երկարատե ներքին կռիվների պատճառով Հայաստանում գրեթե իսպառ դադարում է արվեստ արտահայտող շինարարական գործը, մանավանդ մոնումենտալ շենքերի կառուցումը: Այդ դրությունը տեսում է մոտ 300 տարի: Աննշան բացառություն են կազմում հյուսիսարեւելյան Հայաստանի՝ Սյունիքի, մասնավորապես Սեանա լճի ավազանի եւ Գողթան-Չանգեզուրի, ինչպես նաեւ Արցախ-Ղարաբաղի գավառները: Խիտ հայ բնակչություն եւ հայկական փոքր իշխանություններ ունեցող այդ լեռնոտ վայրերով անցնում էին այն ժամանակների առետրական ուղիները: Այդ գավառները որոշ չափով հեռու էին ռազմական անվերջանալի բախումներից: Հայ իշխանական տների բեկորները, մանավանդ հայ վաճառականները, կառուցում էին գեղեցիկ տներ, եկեղեցիներ, կամուրջներ, մասնավորապես կերտում քանդակագործական արվեստը ու խաչքարեր:

Խաչքարային արվեստը, սակայն, սկիզբ է առել հայոց մեջ շատ ավելի վաղ ժամանակներում եւ IX-XVII դարերի հայկական մշակույթի մեջ գրավում է առանձնահատուկ տեղը:

Խաչքարային մշակույթը քրիստոնյա աշխարհում բնորոշ է հայ ժողովրդին: Նախապես, մինչեւ IX դարի սկիզբը, այն

ունեցել է բաց թեւերով խաչի ձեւ: Հայ վարպետների թողած ճարտարապետական բազմազան աղբյուրները, դժբախտաբար, շատ քիչ են ծանոթ արվեստին: Այս մշակույթի նոր ձեւը շարունակվել է ութ եւ կես դար, 840-ական թվականներից մինչեւ 1700-ական թվականները: Եթե հայ ժողովուրդը միջնադարում չթողներ ճարտարապետական եւ արվեստի այլ գործեր, միայն խաչքարերը բավական կլինեին, որպեսզի նա իր պատվավոր տեղը գրավեր աշխարհում արվեստով հարուստ այլ ժողովուրդների շարքում:

Խաչքարը, վերջին հաշվով, կոթողի մի տեսակ է, ստելայի մի տարբերակ, սակայն յուրահատուկ, յուրօրինակ ձեւով:

Ութերորդ դարի սկզբից մինչեւ իններորդ դարի կեսերը օտար իշխողները Հայաստանը զրկեցին ոչ միայն խոշոր շինարարական աշխատանքներ, այլեւ, նույնիսկ, մանր գործեր կատարելու հնարավորությունից: Ավելին, ամբողջ ութերորդ դարում, մետաղյա դրամական հարկի պահանջով, նրանք հարկադրում էին բնակիչներին փորփրել անվանի պապերի դամբարանները, ազնիվ մետաղ գտնելու նպատակով: Ըստ երեւոյթին, հնագույն կոթող-դամբարանների ավերման մի զգալի մասը տեղի է ունեցել հենց այդ ժամանակներում եւ ավելի ուշ՝ XIV-XVIII դարերում:

Հայկական առաջին խաչքարերը ստեղծվել են Խալիֆաթի տիրապետությունից Հայաստանի ազատագրման ժամանակներում, որպես տապանաքար, հուշաքար, սահմանաքար: Խաչքարը ավետում էր մեկ ու կես դար դադարած շինարվեստի վերածաղկումը երկրում: Առաջին խաչքարերը (IX-X դդ.) պարզ են՝ ժյատ, բայց նուրբ ճաշակով արված քանդակներով: Հետագայում, հատկապես XII-XIII դարերում եւ XIV դարի առաջին կեսին, խաչքարային մշակույթը Հայաստանում հասնում է իր բարձրագույն աստիճանին: Գերեզմանոցներից զատ՝ վանական կառուցախմբերը ներսից եւ դրսից զարդարում են առանձին կամ խմբով, հաճախ հատուկ մշակված պատվանդանների վրա բարձրացող կամ պատերի մեջ ազդեցված բազմազան խաչքարերով: XIV-XVI դարերի ճարտարապետական այդ փոքր կերտվածքները կարծես թե փոխարինում էին չկառուցվող մեծ շենքերին եւ համատարած

էին գրեթե բովանդակ Հայաստանում: Հարթ կամ օրորոցաձեւ տապանաքարերի քանդակների մեջ արտացոլվում էին հանգուցյալի զբաղմունքն ու կենսագրությունը՝ երկրաչափական եւ մասամբ բուսական բազմազան նախշերի միջոցով:

XVI դարում առանձին ծաղկում ապրեց Արաքսի ափին կառուցված Հին Ջուղա քաղաքը, մինչեւ 20-22 հազար զուտ հայ բնակչությամբ, որի վաճառականները տարածվել էին ողջ Ասիական մայր ցամաքում ու թափանցել Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի շուկաները եւ ավելի հեռուները: Պարսկական պետության արտաքին առետրի գրեթե ամենաշնորհյալ տերերն էին Ջուղայի հայ վաճառականները: 1604 թվականին, Շահ Աբբասի կողմից բազմազան աղբյուրից հետ բռնությամբ զաղթեցվելով Իրան, Ջուղայի բնակիչները հաստատվեցին Սպահան մայրաքաղաքի արվարձանում՝ Նոր Ջուղա անունով: Հայ վաճառականները ողջ XVII դարում եւ XVIII դարի սկզբներում շարունակեցին Հին Ջուղայի գործը՝ հասնելով մինչեւ Հնդկաստան, Տիբեթ, Չինաստան, Ինդոնեզիա եւ Նոր աշխարհ:

Շահ Աբբասի ավերած Հին Ջուղայից պահպանվել են շատ տներ եւ կիսավեր շենքեր, կամուրջներ, եկեղեցիներ, հատկապես XVI դ. գերեզմանատունը, որի հազարավոր խաչքարերի եւ ինքնատիպ քանդակներով բազմաձեւ տապանաքարերի բացառիկ անտառը այսօր իսկ հիացմունք եւ զարմանք է պատճառում դիտողին:

Տասնյակ հազարավոր այդ փոքրիկ հուշարձանները կրում են հարուստ երկրաչափական, բուսական եւ կենդանական ճոխ քանդակներ, գծեր ու վարդյակներ: Տուֆի եւ բազալտի վրա քարացած այդ ժանյակները տարբերվում են այլ քանդակներից նրանով, որ հարազատորեն պահպանել են հայ արվեստի, հայ վարպետի հնուց որդեգրված սկզբունքը՝ չկրկնել արածը, այլ ներքին տարաչափություններով (ասիմետրիայով) ստեղծել համաչափություն (սիմետրիա): Այս առանձնահատկությունը չի նկատվում առաջին հայացքից եւ ստիպում է յուրաքանչյուր մասնիկը դիտել առանձին եւ ուշադիր:

Հայկական շինարվեստի եր-

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՐՈՐՈՂ շՐՋԱՆ, ՎԵՐՍՏԻՆ ԱՆԿՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԵԼՅՔ

Հայկական ընդհանուր կյանքի, ինչպես նաև շինարվեստի նոր վերելքը սկսվեց XVII դարի 30-40-ական թվականներից համաշխարհային տնտեսական եւ մշակութային ընդհանուր վերելքին զուգընթաց: Հայաստանի նահանգների համար այդ վերելքի գլխավոր պատճառը թուրք-պարսկական 80-ամյա հաշտությունն էր, հաջորդած 125-ամյա ավերիչ պատերազմներին, որոնք մեծ մասամբ տեղի էին ունենում Հայաստանի տարածքի վրա: 1555 թվականից Հայաստանը առաջին պայմանագրով բաժանվել էր երկու տերությունների միջև եւ այդ բաժանումը վերստին հաստատվել էր 1639 թվականի պայմանագրով:

XIV-XVII դարերի ավերվածությունները Հայաստանում, երկրի բնակեցումը թրքական եւ քրդական տարրով պատճառ դարձան հայկական երրորդ եւ ավելի մեծ արտագաղթին՝ դեպի մերձավոր ու հեռավոր երկրներ: Նրանք հասան Վուգայի ավազանը, Ղրիմ, Բալկաններ, Կենտրոնական Եվրոպա, Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա, ապա՝ Եգիպտոս, նույնիսկ Հեռավոր Արեւելք, Հնդկաստան եւ այլ վայրեր: Այդ երկրներում հայ շինարարները, ինչպես իրենց նախորդները (սկսած V դարից), կառուցումներ էին անում ոչ միայն երկրի տերերի, այլեւ իրենց համար (տներ, եկեղեցիներ): Այդ կառույցների մեջ որոշ չափով պահպանում էին հայրենի ավանդությունները: Հայկական այդ գաղութներում զարգանում էր նաև ազգային մշակույթը, հիմնվում էին դպրոցներ, հայերեն դպրության եւ թարգմանչական օջախներ: 1510-1512 թվականներին Վենետիկում դրվեց հայ տպագրության սկիզբը, զարգացան նկարչությունն ու ձեռագործ արվեստը: XVII դարում Լվովում ստեղծվեց հայկական թատրոն: Կատարվում էր մշակույթի փոխադարձ լրացում հայրենի երկրի եւ գաղութահայ օջախների միջև, հատկապես XVII դարի կեսից մինչև XVIII դարը, ավելի ճիշտ՝ 1640-1710 թթ.: Այդ 70 անհամեմատ խաղաղ տարիների ընթացքում, հեռավոր ու մոտիկ հայաբնակ գաղութներում ու երկրում, առավել չափով պարսկական մասում (Արեւելյան Հայաստան), X-XIII դարից հետո հայկական կյանքն ապրեց իր եր-

րորդ վերելքը, որը նման էր վերածնության, միայն առանց ճարտարապետական նոր թռիչքի:

XVII դարի հայկական ճարտարապետությունը ոչ միայն չհասավ միջնադարի նվաճումներին, այլ նույնիսկ չնմանվեց նրան: Նախ շինարարությունը ընթացավ հազարավոր ավերակների մի մասի վերականգնելու ուղղությամբ: Հարյուրավոր գյուղերում վերականգնվեցին կամ հին հիմքերի վրա վերաշինվեցին բազիլիկ եկեղեցիները: Դրանք մեծ մասամբ թաղակապ են, հիմքերը, անկյուններն ու քիվերը սրբատաշ քարով շարված, իսկ պատերը՝ գերազանցորեն անմշակ քարերով:

Այդ դարում գմբեթավոր եկեղեցիներ անհամեմատ քիչ կառուցվեցին: Եկեղեցական շենքերի մեծագույն մասը եռանակ բազիլիկներ են՝ երկթեք տանիքով: Բոլոր այդ եկեղեցիների, ինչպես նաև քաղաքացիական շենքերի մուտքերը, հատկապես դարպասները, մշակվել են շքեղորեն: Նույնպիսի շքեղությամբ զարդարվել են հին ու նոր տաճարներին կից կառուցված գանգակատները: Կառուցվում եւ վերաշինվում էին կամուրջներն (Երեւան, Օշական, Աշտարակ) ու մենաստանները՝ Ագուլիսի, Երնջակի, Մաղարդավանքի, Լիմի եւ Կտուցի (Վանա լճի), ինչպես եւ Տաթևի Մեծ անապատը (համալսարանը):

XIX դարի երեսնական թվականներից, հատկապես Արեւելյան Հայաստանի խաղաղ պայմաններում, գերազանցորեն զարգացավ քաղաքաշինությունը, թեւեւ կառուցվեցին նաև բավականին եկեղեցիներ, մանավանդ Ալեքսանդրապոլում, Երեւանում եւ հայաբնակ այլ քաղաքներում ու ավաններում: Քաղաքացիական շենքերը մեծ քաղաքներում կառուցվում էին սրբատաշ սեւ տուֆով, ռուսական գավառական ամպիրի ազդեցությամբ, իսկ փոքր քաղաքներում եւ բազմաթիվ խոշոր ավաններում՝ հայկական քաղաքաշինության հին ավանդություններով (հին Գյումրիի-Ալեքսանդրապոլի, Ագուլիսի, Մեղրիի, Գորիսի, Էջմիածնի, Աշտարակի, Շուշիի եւ այլ վայրերի): Այդպիսի բնակելի շենքեր էին կառուցվում Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի մեծ ու փոքր քաղաքներում եւ ավաններում (Վան, Կարին, Երզնկա, Մուշ, Խարբերդ եւ այլն): Որոշ վայրերում, մանավանդ Արարատյան դաշտում,

XVII-XVIII դարերի օրինակով կառուցում էին նաև աղյուսաշեն տներ՝ մուտքերի, լուսամուտների եւ պատշգամբների ավելի շքեղ մշակմամբ:



Հինարվեստի տեխնիկական նոր նվաճումներին զուգակցելով միջնադարյան հայ վարպետների ժառանգությունը, XX դարի 20-ական թվականներից, հայ մեծ ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի ու նրա ճարտարապետական նոր դպրոցի գլխավորությամբ մշակվեց սովետահայ ճարտարապետության նոր ոճ, որը շարունակություն է հայ ինքնատիպ դասական ճարտարապետության:

Հայ շինարվեստի չորրորդ վերելքի ապացույց են ոչ միայն նորակերտ Երեւանը, այլեւ Լենինականում, Կիրովականում ու գավառական այլ քաղաքներում եւ գյուղերում կառուցված շենքերն ու հրապարակները, արտադրական, հասարակական, մշակութային մոնումենտալ բազմաթիվ ու բազմազան կառույցները, արձանները եւ հուշարձանային այլ կառույցները: Հայկական շինարվեստի տարբեր շրջաններից մեզ հասած հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ վարպետները մեծ հմտությամբ նկատի են առել շինանյութի տեսակը, բնության տարբեր երեսույթների ներգործությունը, մանավանդ՝ երկրաշարժային ցնցումները դիմակայելու եղանակները եւ հասել կառուցողական կատարելության:

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ հայկական շինարվեստը, իր ծագումից իսկ երբեք չի ձգտել շլացնելու կամ շշմեցնելու դիտողին, բնավ չի ունեցել զարմացնելու նպատակ: Հայկական ճարտարապետական հուշարձաններին, հատկապես պաշտամունքային կառույցներին, դրսից նայողը եւ ներսից ընկալողը իրեն չի զգացել փոքրացած, չի շփոթվել ու չի կրել նրա առնչվող գործությունը հասկանալու դժվարություն:

Հայկական շինարվեստը, իր պարզ ու տրամաբանական լրջությամբ, իր անխճող բովանդակությամբ ու ձեւերի բազմակողմանի ներդաշնակությամբ հիացրել ու հիացնում է դիտողին՝ ստեղծելով հոգեկան խաղաղ վիճակ, ազնիվ զգացումների եւ գեղեցիկ մտորումների տրամադրություն:



ՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծիծեռնավանք

ՄՈՐՈՒՍ
ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայաստանի հին և հռչակված ուխտատեղի վանքերից մեկն է եղել Ծիծեռնավանքը: Այս բազիլիկ տաճարը կառուցված է պատմական Սյունիքի Աղահեճ (1) գավառի Աղավնո գետի ափին... Գորիսի շրջանի Խնածախ գյուղից 4-5 կմ դեպի հյուսիս:

Վանքը գտնվել է հին հայաբնակ գյուղի ծայրին, որը նույնպես կոչվել է «Ծիծեռնավանք»: Գյուղը երեւի եղել է միջակից քիչ մեծ, որովհետեւ XIII դ. Տաթևի վանքին տվել է տարեկան 10 արծաթ տուրք, իսկ Տաթևին 681 հարկատու գյուղերից ավելի քան 600-ը այն ժամանակ տվել են 6-12 արծաթ (2):

Ստեփաննոս Օրբելյանը Ծիծեռնավանքը հիշում է Սյունիքի մոտ 150 վանքերի մեջ որպես 30 նշանավոր վանքերից մեկը, բայց ոչ իր ժամանակի (XIII դ. վերջին) առաջնակարգ վանքերի շարքում: Նա որոշ հերթականությամբ այն դասում է 17-րդ տեղը, թեև մինչև Ծիծեռնավանքը նշվում են մի քանի աննշան վանքեր (3): Ուշ միջնադարում նույնպես Ծիծեռնավանքը պատկանել է Տաթևի թեմին: «Թէմի եղեալ վանք եւ անապատք են սոքա. Մեղրոյ սուրբ Յովհաննէս անուն վանքն. Մեծ անապատն արանց. Հարանց անապատն արանց. Ընհերու Աստուածածին անապատն կուսանաց. Հայիծորու անապատն կուսանաց. Մանլետու ամենափրկիչ անապատն կուսանաց. Գանձափարախու վանքն, Կարծեանու սուրբ ուխտն Յովհաննու եւ Ծիծեռնակու սուրբ վանքն» (4): Տաթևի թեմին անմիջապես պատկանող այսքան վանքերի եւ անապատների ցանկը կարելի է բացատրել միայն նրանց ուխտատեղի լինելու հանգամանքով, որոնց ստացած եկամուտը կամ մեծագույն մասը Տաթևին է հատկացվել: Ուշագրավ է հատկապես կուսանաց անապատների թվարկումը, որոնց քանակը սովորաբար մեծ չի եղել Հայաստանում:

Ծիծեռնավանքի տաճարը, որ բավական լավ է պահպանվել, իր ճարտարապետական առանձնահատկություններով բացառիկ տեղ է գրավում հայ շինարվեստի պատմության մեջ: Այն գտնվում է երկու ձորակներով շրջապատված, մոտավորապես սեղանաձև հարթ գագաթով բլրակի վրա, պարսպապատ տարածքի հյուսիսարևելյան մասում:



Պատմիչը հիշում է Ծիծեռնավանքի անունը նաև մի այլ առիթով: 844թ. Սյունյաց նախարար Փիլիպեն Տաթևի վանքին է նվիրում նաև իր հայրենի Տաթև գյուղը՝ ամբողջ հող ու անդաստանով: Պայմանագրի տակ իշխաններից եւ ազատներից հետո, որպես վկաներ, ստորագրում են նաև մեծ եւ փոքր կրոնավոր դեմքեր՝ «Ահարոն՝ Երիցու վանական, եւ Գրիգոր քահանայ, Ստեփաննոս՝ Մաքենոցաց վանական, Յակոբ՝ Ոյծայ աագերէց, Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս՝ Ծիծեռնոյ վանական, Գրիգոր՝ դրան երեց, Սիմէոն՝ Շաղատոյ վանական, Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ» (5):

Հիշված Մաքենոց (Գեղամա երկիր), Երիցու (Բաղք-Կապան), Շաղատի եւ



Այունիի (Ծղուկ-Սիսիան) վանքերը IV-VI դարերից գործող նշանավոր մենաստաններից էին: Սրանց շարքում է եւ Աղահեճ գավառի Ծիծեռնավանքը: Այնուհետեւ, 1655թ., Թովմա վարդապետ Վանանդեցին Յայաստանի մեծ սրբավայրերին նվիրված իր չափածո ներբողի մեջ հիշատակում է եւ Ծիծեռնավանքը:

*«Անտի ի վանս մեծ անցեալ
Որ Ծիծեռնան էր կոչեցեալ»:*

Իրոք, XVII դարում եւս, ինչպես կտեսնենք, վանքը իր ամենափառավոր, բարեկեցիկ վիճակի մեջ է գտնվելիս եղել:

Գրականության մեջ շատ քիչ է հիշվել մեզ զբաղեցնող հուշարձանը եւ Թ. Վանանդեցուց հետո, մինչեւ XIX դ. վերջերը, մինչեւ Ալիշան եւ Եր. Լալայան, գոնե մեզ ծանոթ չէ որեւէ այլ գրավոր հիշատակություն: Ծիծեռնավանքը որպես մենաստան եւ վանական նշանավոր հաստատություն հավա-

սար կամ նման չի եղել Տաթևին, Գանձասարին, Դարաշամբի Մաղարդին, Սանահինին, Յաղպատին, Սեանին, Վարագին, Նարեկին եւ այլ վանքերին, այլ մնացել է Տեկորի, Երերույքի, Քասաղի, Պտղնիի, Մրենի եւ նման հռչակավոր հին տաճարների վիճակում: Սակայն Ծիծեռնավանքը վերջիններիս համեմատությամբ ունի այն առավելությունը, որ ժողովրդի մոտ, քրիստոնեության շրջանի բոլոր դարերում, մինչեւ XX դ., որպես ուխտավայր պահպանել է հայոց ամենամեծ սրբավայրերից մեկի հռչակը՝ թերեւս զիջելով միայն Սշո սուրբ Կարապետին եւ Գեղարդին (Այրիվանքին):

Մեր այս հայտարարությունը հարկադրում է մի անհրաժեշտ շեղում կատարել եւ մի քանի խոսք ասել հայոց ուխտավայրերի մասին: Անցյալում, 40-50 տարի առաջ, կային ուխտատեղիներ մեկ գյուղի կամ հարեան երկու-երեք գյուղերի համար (դաշտում ավերակ եկեղեցի, >> 100

ՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

« 99 մատուռ, խաչքար, գերեզման, քարայր, ծառ, որեւէ գյուղի հին եկեղեցի, վանք, մատուռ՝ հաճախ «թովս մանուկ» կոչվող, դամբարան-գերեզման, լեռների գագաթներ՝ իրենց անշուք, անխաչ փոքրիկ կառույցով եւ այլն): Սրանք, բացի կրոնական նշանակությունից, ունեին զանազան հիվանդություններ բուժելու եւ կամակատարի՝ «մուրազ կատարելու» ֆունկցիաներ: Ապա գալիս են գավառային նշանակության ուխտատեղիները, մեծ մասամբ գործող կամ ավերակ վանքերը եւ այլ ոչ կրոնական վայրերը (ինչպես Սիսիանի Ղարաղիան կամ նույնիսկ «Պորտաքարը»): Նահանգային ուխտավայրեր՝ Արցախ-Ղարաբաղի, Լոռի-Գուգարքի, Շիրակի դաշտի, Արարատյան դաշտի, Նախիջեանի, Ատրպատականի, Վասպուրականի եւ այլնի: Համահայկական ուխտավայրեր՝ Էջմիածին, Խոր-Վիրապ, Մշո սուրբ Կարապետ, Գեղարդ, մասամբ Սեան եւ այլն:

Հատուկ պատասխան է պահանջում այն տարօրինակ երեւոյթը, որ, օրինակ, Արարատյան դաշտի եւ Կոտայքի բազմաթիվ վանքերի առկայության պարագայում Երեւանի արվարձան Նորքի շատ անշուք սուրբ Աստվածածին եկեղեցին ավելի շատ ուխտավոր էր ունենում, քան այդ վանքերը: Սեանի ավազանի, Վայոց ձորի, Նախիջեանի, Սիսիանի եւ այլ մոտակա վայրերի բազմաթիվ հռչակավոր վանքերի առկայությամբ նույն Վայոց ձորի Արկազու Սուրբ Խաչ անշուք վանքը հեռավոր վայրերից ավելի շատ ուխտավորներ էր հավաքում իր շուրջը, քան տասնյակ վանքեր: Նման զորությամբ օժտված էին Արարատյան դաշտում Արայի լեռան հռչակավոր ուխտատեղի Ծաղկավանքը, Վարդահերի վանքը: Շիրակի դաշտի եւ Լոռի-Փամբակի համար հիշենք նաեւ Ղաթախչիի բարձունքի Սուրբ Հովհաննես անշուք եկեղեցին եւ այլ բազմաթիվ

օրինակներ:

Այդպիսի նշանավոր ուխտատեղի է եղել պատմական Հայաստանի հյուսիսարեւելյան նահանգների բնակչության համար նաեւ Ծիծեռնավանքը: Գուցե այդ վանքերի անվան կամ սուրբի օրվա հետ կապված երեւոյթն է պատճառը: Բայց ի՞նչ կասենք, որ նույն գավառի կամ նահանգի տասնյակ «սուրբ Գրիգոր» կամ «Աստվածածին» անունը կրող հին եկեղեցիների կամ վանքերի մեջ միայն մեկն է այդ պատվին արժանանում: Հարցի ճշմարիտ պատասխանը միայն կարող ենք գտնել ավելի խոր անցյալի՝ հեթանոսական ժամանակների մեջ:

Եթե պատմական տվյալներով հայտնի վանքերը, կառուցված մեհյանների տեղում կամ հին մեհյանները՝ սոսկ փոփոխությունների եւ վերակառուցումների ենթարկված, չեն պահպանել իրենց հնուց եկող ուխտավայրի նշանակությունը, ապա պետք է բացատրել նրանով, որ այդ գավառի բնակչության սովորույթների հաջորդականության թելը կտրվել է բնիկների գաղթելով, վերաբնակեցում կատարվելով նորեկներով, կամ պարզապես իրենց ժամանակին իսկ այդ մեհյանները խիստ տեղական՝ տվյալ բնակավայրի պաշտամունքի վայր են եղել եւ ոչ լայն շրջանակի: Կամ թե պարզապես նոր կրոնի՝ քրիստոնեության հոգեւոր դասին հաջողվել է այդ պաշտամունքը բռնությամբ արգելել կամ քարոզով մոռացնել, մանավանդ նշանավոր ավաններում եւ քաղաքներում: Նման արգելքները, քարոզը, անեծքը, նույնիսկ հայածանքը, ամենայն հավանականությամբ, շատ քիչ է ազդել մշտաբնակների վրա, հատկապես կենտրոններից հեռու նահանգներում եւ լեռնաստաններում: Այդ էր պատճառը, որ նոր ընդունված կրոնների հայրերը (լինի քրիստոնյա, թե այլ կրոնի), մասնավորապես Հայաստանի

նման աշխարհագրորեն տրոհված երկրում, հարկադրված են եղել գրեթե բոլոր հին հեթանոսական բնապաշտամունքների եւ ծիսակատարությունների օրերը հարմարեցնել քրիստոնեական սրբերի տոների անվան հետ:

Հայկական Անահիտ աստվածուհու գլխավոր սրբավայրերը, բնական է, պետք է կոչեին Մարիամ Աստվածածնի անունով: Սրանով պետք է բացատրել, օրինակ, հնագույն վանքերից ու եկեղեցիներից շատերը Աստվածածին անունով կոչելը եւ Մարիամի մեծ պաշտամունքը: Երեւանի Նորքի Աստվածածնի ուխտավայրի հռչակը հայտնի է հնուց եւ շարունակվում է մասամբ: Մշո սուրբ Կարապետի համահայկական ուխտավայրի պահպանած նշանակությունը, որպես միակ կամ գլխավոր հայ հեթանոսական դպրոցային եւ արվեստի աստված Տիրի պաշտամունքի շարունակություն, պահպանվեց մինչեւ 1914-1915թթ.: Արայի լեռան ստորոտի Ծաղկավանքի ուխտավայրի հռչակը պահպանվեց որպես Արայի պաշտամունքի, որպես զարնան զարթոնքի՝ արեւի հարության տոն (այստեղից էլ Ծաղկավանք): Գեղարդ-Այրիվանք ուխտավայրը ջրի գլխավոր պաշտամունքի վայրերից մեկն էր: Հիշենք թեկուզ այդ վայրի շրջակայքի քարե հսկա վիշապները, որպես ջրի պաշտամունքի խորհրդանշաններ: Անտարակույս, այրի խոռոչից բխող աղբյուրն է պաշտվել, որը շարունակվում է ցարդ: Գեղարդ այցելող ուխտավորը, որտեղից այն եկած լինի, նախ լվացվում է այդ սրբազան ջրով, երեխաների աչքերն ու երեսը այդ ջրով օծում եւ հատկապես այդ աղբյուրի մեջ պարտադիր նետում արծաթ դրամները: Երկար ժամանակ քրիստոնյա հայ հոգեւոր հայրերին, անտարակույս, մտահոգել է հեթանոսական այս մեծ սրբավայրը քրիստոնեական բարձր ավանդությամբ վերափոխելու հարցը: Եվ Այրիվանքը կոչեցին նաեւ Գեղարդ, մի հնագույն երկաթի խաչի ակը (վերին թելը) հայտարարելով այն Գեղարդի ծայրը, որով, ըստ քրիստոնեական ավանդության, խոցել են խաչված Քրիստոսի կողը: Այդ գեղարդը հետզհետե դարձավ պաշտամունք՝ Այրիվանքում, բայց ջրի պաշտամունքը պահեց իր հազարամյակների ավանդական զորությունը, արդեն որպես անհաղթահարելի սովորույթ, բուն իմաստից զրկված ծիսակատարություն: Այդպես էր եւ «դրնդե-

Ջարդաքանդակներով հարուստ է տաճարի ներսը, հատկապես մույթերը: Մույթերի խոյակները զարդարված են ատամիկներով (որոնք դասավորված են հիմնականում մեկ շարքով, բայց կա եւ շախմատաձեւ, երկշարք դասավորություն), ալիքներով, պարանահյուս քանդակով, ճառագայթներով ու բռանկյան բաժանված ուղղանկյուններով, սալիկներով ու գլանիկներով:

զի» (դար անդազի)՝ գարնան արեւի վերածնությունն արտահայտող բազմազան ծեսերով տեսական հրավառությունը, որին տրվեց «Տեառնընդառաջ» անունը, իբրեւ Քրիստոսին 40 օրով տաճարին ընծայելու առթիվ նրա մուտքին այցելության ընդառաջ գնալու պատվին, Տրդատ Ա-ի 1900 տարի առաջ Գառնի հնագույն բերդի մեջ կառուցած հեթանոսական տաճարի պաշտամունքը, ըստ երեւոյթին, դժվար է եղել վերացնել, որքան էլ «Տրդատահովանոց» կամ «Տրդատա թախտ» աշխարհիկ կոչումը տային: Եվ երբ VII դ. հելլենիստական այդ հոյակապ կանգուն տաճարի ուղղակի արեւմտյան պատին կից շինեցին գմբեթավոր մի եկեղեցի (որի հիմքերն են պահպանվել), ապա նոր եկեղեցին կառուցողները ստիպված խնայեցին այդ բացառիկ հեթանոսական կոթողը: Նման վերաբերմունքը սովորական է նոր կրոնի պայքարի ընթացքում հին ու վերանալիք պաշտամունքների դեմ:

Այդպիսի հայ հեթանոսական, հին եւ հռչակված ուխտատեղիներից մեկն է եղել նաեւ Ծիծեռնավանքը, հետագայում վերակառուցված որպես հնագույն հայ քրիստոնեական բազիլիկ տաճար, սակայն պահպանած իր հեթանոս անունը: Այս հին անվանը նույնպես քրիստոնեական բովանդակություն տալու միտումով կամ հեթանոսական գաղափարը մոռացության տալու եւ տրամաբանական չհամարելու պատճառով տվել են մի շատ պարզունակ բացատրություն՝ որովհետեւ հին հայերենում «ծիծեռն» բառը նշանակում է նաեւ ձկոյթ, Ծիծեռնավանքն էլ բացատրեցին «ձկոյթի վանք», ընդ որում նվիրված Պետրոս առաքյալի ձկոյթին: Սակայն այդ մասունքի Հայաստան հասնելը միանգամայն անհնարին էր, եւ պատահական չէ, որ Սյունիքի արքեպիսկոպոս իշխանագուն Ստեփաննոս Օրբելյան պատմիչն իսկ չի հիշատակում հույժ քրիստոնեական այս ավանդությունը, երբ խոսում է մեզ զբաղեցնող վանքի մասին: Մինչդեռ շատ այլ վանքերի շուրջը հյուսված ավանդությունները մեջ է բերում առանց վերապահության (Թանահատ, Որոտան, Կնեվանք եւ այլն):

Հայ հեթանոսական իրականության մեջ թռչուններից ծիծեռնակը, որպես պաշտամունք, առաջնակարգ տեղերից մեկն է գրավել եւ դրա վերապրուկը պահպանվել է Հայաստանի բոլոր նահանգներում, >>> 102



ՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

« 101 գավառներում՝ ազգագրական նյութերի մեջ (Այրարատ, Այու-նիք, Գուգարք, Արցախ, Վասպուրական):

Վաստակավոր ազգագրագետ էր. Լալայանը Գանձակի գավառի ազգագրական նյութերի շարքում բերելով կենդանիների պաշտամունքի օրինակները, սկսում է թափանցիկ եւ առաջինը՝ ծիծեռնակից:

«Ինչպես Վարանդայում, այնպես եւ Գանձակի գավառում, – պատմում է Լալայանը, – թափանցիկ պաշտամունքը մասամբ մնացել է: Մի քանի թափանցիկ սուրբ են համարվում, ժողովուրդը նրանց մեղք է համարում սպանել, նրանց քար չի ձգում, նրանց բները չի քանդում: Այսպիսի թափանցիկ նշանավոր է ծիծեռնակը, սրան ոչ միայն մի որբուկ վնաս չեն հասցնում, այլև նրանից խնդրում են, որ իրենց երեխաներին շուտ եւ ճարտար խոսելու շնորհք պարգևեց, որովհետեւ հավատում են, որ նա էլ երբեմն մի ճարտար, քաղցրախոս երեխա է եղել» (6):

Այս նույն ավանդությանը կհանդիպենք եւ Լոռի-Գուգարքում եւ այլուր: Ավելորդ չէ ասել, որ երբ Լոռին գրեթե ամայացել էր Լենկթեմուրի արշավանքներից, իսկ դրանցից 30-40 տարի անց մարդաշատ Այունիքը ենթարկվել էր թուրքմեն բռնակալ Ջհանշահի հալածանքներին, իշխան Բեշքեն Օրբեյանը բուն Այունիքից, հավանաբար եւ Սեանի ավազանից, 60 հազար բնակիչների գլուխ անցած գաղթում է Լոռի, կրկին շենացնում գավառը: Այսօրվա լուրջները հին, գուգարքյան տեղականին միախառնված Այունիքից տարած կենցաղային բարքերը, սովորույթները, ավանդությունները, բանահյուսական եւ բարբառային որոշ տարրեր պահպանել են ավելի հարազատ, քան բուն իսկ սյունեցիները: Վերջիններս անցած հինգ հարյուրամյակում շատ ավելի բան են փոխել եւ կորցրել օտար, ավելի զորավոր ազդեցությունների տակ:

Գանձակի գավառի հայ բնակչության մասին, որոնց հին ավանդություններից մի բեկոր բերինք վերը, կարելի է ասել ավելին: Այդ բնակչության մի զգալի մասը, 1595-1605թթ., մասամբ եւ 1750-1760թթ., հենց Աղահեծ-Քաշաթաղ գավառից, ուր գտնվում է Ծիծեռնավանքը, եւ Քաշաթաղի հյուսիսային մասը կազմող Ծար (այժմ Զյալբաջար) գավառից, այլև Քաշաթաղի հարավա-

րեամտյան սահմանը կազմող Ծղուկ-Միսիանից է գաղթել Գանձակի գավառը:

Ինչպես վերը նշեցինք, Ծիծեռնավանքի մասին XVII դարից մինչեւ XIX դ. գրավոր այլ հիշատակություններ մեզ չեն հանդիպել. այսինքն՝ շուրջ երեք ու կես դար: Միայն 1893թ. լույս տեսած «Միսական» (Տեղագրություն Այունյաց աշխարհին) իր անկրկնելի աշխատության մեջ Ղեոնդ Ալիշանը անդրադառնում է նաեւ Ծիծեռնավանքին: Եւ մեջ է բերում Ստեփանոս Օրբեյանի եւ Թովմա Վանանդացու հիշատակումները, նշում ծիծեռնեցի ոմն Աստվածատուրի անուն (XV-XVI դդ.) եւ մի այլ վայր՝ «դժուարալար կոչված Մնայատ (XIII դ), որը, անտարակույս, 4-րդ Հայքի Պաղին՝ Պաղնատուն գավառին է վերաբերում, որին եւ հակամիտ է մեծ բանասեր-պատմաբանը (7): Այս օրինակները բերում ենք այն նպատակով, որ ցույց տանք, թե ծիծեռ կամ ծիծեռն անունով այլ կրոնական վայրեր եւս եղել են Հայաստանում:

«Միսականի» լույս տեսնելուց հինգ տարի հետո, հայ վաստակավոր ազգագրագետ (եւ հնագետ) Ե. Լալայանը հրապարակում է իր հերթական ուսումնասիրություններից «Ջանգեզուրը», որտեղ խոսելով գավառի նշանավոր վանքերի մասին, իրավամբ սկսում է Ծիծեռնավանքից՝ տալով վանքի լուսանկարը (8):

Այնուհետեւ կես դարից ավել Ծիծեռնավանքը չհիշատակվեց գիտական գրականության մեջ: Տողերիս հեղինակը ՀՍՄՄ գիտությունների ակադեմիայի 1947թ. կազմակերպած գիտարշավի ընթացքում, պատմական Այունիքի մի շարք հուշարձանների հետ, ուսումնասիրեց նաեւ Ծիծեռնավանքը (այն չափագրեց արշավախմբի մասնակից, ճարտարապետ Լ. Սադոյանը): Տաճարի հատակագիծը (Լ. Սադոյան) հետագայում հրատարակեցին Ա. Սահինյանը (9) եւ իտալացի ճարտարապետ Պաոլո Կունենոն՝ հուշարձանին նվիրված հոդվածում (10): Մեր հաջորդ այցելությունը Ծիծեռնավանք եղավ 1967թ., երբ եւ լրացվեց դրանից քսան տարի առաջ կատարած ուսումնասիրությունը:

Ծիծեռնավանքի տաճարը, որ բավական լավ է պահպանվել, իր ճարտարապետական առանձնահատկություններով բացառիկ տեղ է գրավում հայ շինարվեստի պատմության մեջ: Այն գտնվում է երկու

ծորակներով շրջապատված, մտավորապես սեղանաձեւ հարթ գագաթով բլրակի վրա, պարսպապատ տարածքի հյուսիսարեւելյան մասում: Տաճարն ունի եռանակ բազիլիկայի հորինվածք, ընդ որում «արեամտյան» տիպի, որի գլխավոր նավը արտաքուստ շեշտվում է շենքի ծավալում: Մեզ հասած հայկական մյուս եռանակ բազիլիկաները պատկանում են «արեւելյան» տիպին, որի միջին նավը մյուսների հետ գտնվում է ընդհանուր երկթեք ծածկի տակ: Այս երեսույթը կարելի է բացատրել սեյսմակայունության, թերեւս նաեւ արեամտյան ազդեցությունից եւ նմանությունից խուսափելու նկատառումով: Այսպիսով, Ծիծեռնավանքը այն եզակի կանգուն հուշարձանն է, որն ապացուցում է Հայաստանում «արեամտյան» տիպի բազիլիկաների գոյությունը:

Ծիծեռնավանքում առաջին հերթին աչքի է զարնում տաճարը երկու տարբեր քարերով կառուցած լինելը: Պատերի ստորին մասը ամբողջ պարագծով, յոթ-ութ շարք բարձրությամբ, կառուցված է մուգ-գորշավուն բազալտի սրբատաշ խոշոր քարերով, իսկ շենքի ողջ մնացածը՝ բաց-դեղնավուն ֆելզիտի մաքուր տաշած քարերով: Ընդ որում՝ ոչ միայն պատերի վերին մասերը, այլև արքայաքար ավանդատներով, մույթերը եւ որմնամույթերը հետագա հավելված են: Տաճարն ունի արեւելքից-արեւմուտք ձգված ուղղանկյուն հատակագիծ (արտաքին չափերն են 12,5X25,6 մ): Երեսի տարածությունը երկու շարք մույթերով բաժանված է երեք նավի, որոնցից գլխավորը (միջինը) կողայիններից լայն է ավելի քան երկու անգամ: Այստեղ ուշագրավ է մույթերի ձեւը՝ նրանք ուղղանկյուն են (հյուսիսային շարք) եւ քառակուսի (հարավային շարք): Հայաստանի մյուս եռանակ բազիլիկների մույթերը ունեն T-աձեւ կտրվածք (միայն Աղցի IV դ. բազիլիկայի մույթերն են քառակուսի): Ծիծեռնավանքում մույթերի տարբեր չափերը երկայնական ուղղությամբ առաջացրել են նրանց միջեւ ձգվող պայտածեւ ու երկկետրոն կամարների թռիչքների անհավասարություն (11): Միջին նավն արեւելքում ավարտվում է շեշտված պայտածեւ հատակագիծ եւ հաղթակամար ունեցող խորանով: Այն լուսամուտ չունի ինչպես IV-V դդ. հայկական հուշարձաններից ճարձակեսը, Թանահատը: Խորանի երկու կողմերում կան սեղանաձեւ հա-

ՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

տակագծով թաղածածկ ավանդատներ, որոնք աբսիդի հետ ներառված են տաճարի ընդհանուր ծավալի ուղղանկյուն եզրագծի մեջ եւ դրսում չեն արտահայտվում: Ավանդատները երկհարկանի են, երկու հարկերն էլ տաճարի արեւելյան ճակատում լուսամուտներ ունեն:

Ծիծեռնավանքի ներքին տարածությունը ունի մի բացառիկ հետաքրքրական առանձնահատկություն՝ դա խորանի վրա գտնվող պատշգամբն է, որը կամարակապ բացվածքով դուրս է գալիս դեպի գլխավոր նավը: Այդ վերնահարկը, որի հատակը ավանդատների երկրորդ հարկերի հատակների հետ միեւնոյն բարձրության վրա է, լուսավորվում է տաճարի արեւելյան ճակատում բացվող զույգ լուսամուտներով եւ նրանցից բարձր տեղադրված՝ կիսաշրջանաձեւ պատուհանով: Վերնահարկի կամարները պայտածեւ են: Նրանց միջի սյուները ունեն պարզունակ խոյակներ եւ խարիսխներ:

Ծիծեռնավանքի վերնահարկը գործառնական նշանակություն չունի, որովհետեւ չկան դեպի այն տանող մշտական աստիճաններ: Միակ մուտքը հնարավոր է հարավային ավանդատան թաղի մեջ թողնված անցքից, որտեղից կարելի է բարձրանալ ավանդատան երկրորդ հարկը եւ այնտեղից անցնել կամարասրահով այդ պատշգամբը: Ծիծեռնավանքի վերնահարկը հիմնականում ունի գեղագիտական նշանակություն՝ տաճարի գլխավոր նավի ձեւավորման գործում (որպես լույսի աղբյուր այն երկրորդական դեր է խաղում): Կարելի է ենթադրել, որ կամարների միջեւ կանգնեցված են եղել ազատ թեւերով քարե խաչեր, որոնք կամարակապ բացվածքների լուսավոր ֆոնի վրա երեւացել են իրենց ուրվանկարով (նման տպավորիչ ձեւավորում ունեցել է Սյունիքի մի այլ հնագույն կոթող՝ Աղուղիի VI դ. մահարձանի եռակամար բացվածքով վերին մասը, որի խաչերի բեկորները մինչեւ վերջերս գտնվելիս են եղել Սիսիանի տաճարում):

Ծիծեռնավանքի այս վերնահարկը լույս է սփռում հայ ճարտարապետության գլուխգործոց Ջվարթնոցի վերակազմության վեճի առիթ ծառայող մի խնդրի վրա: Ջվարթնոցում վերնահարկի գոյության փաստի ընդդիմախոսների հիմնական փաստարկներից մեկը տաճարում դեպի երկրորդ հարկ տանող աստիճանների բացակայությունն

է: Միաժամանակ նշվում է, որ սյունասարահ վերնահարկերը խորթ են հայ ճարտարապետությանը եւ վաղ միջնադարի հայկական եկեղեցիներում չեն հանդիպում: Ահա Ծիծեռնավանքի օրինակը գալիս է ժխտելու այդ փաստարկները (12): Սակայն Յայաստանում մենք ունենք վերնահարկով եկեղեցու մի այլ օրինակ եւ, այն էլ V դ.՝ դա Գյուտ կաթողիկոսի կառուցած Սրկղոնքի տաճարն է, որի հորինվածքի մասին պահպանվել է Ստեփաննոս Օրբելյանի մանրամասն նկարագրությունը: Պատմիչը գրում է. «...հիմնարկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի Գիտոյ երանելոյ՝ Յայոց կաթողիկոսի... Եվ կատարեալ զնա մեծածախ գանձիք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշաքարտար շինուածքով երկազմբթս եւ եռախորանս, եւ յերկուց կողմանէ զափթս եւ սրահակս, վերնատունս սեամբք եւ սքանչելի յօրինուածովք շինեալ» (13):

Ըստ Օրմանյանի հայոց կաթողիկոսների ժամանակագրության՝ Գյուտի գահակալման իններորդ տարին ստացվում է 470թ. (14): Ընդհանրապես Օրբելյանի չափազանց արժեքավոր այս տեղեկությունների հայտնի է դառնում, որ արդեն 470թ. Յայաստանում եղել է զմբթավոր եկեղեցի (ընդ որում երկազմբթ), գավիթով, արտաքին սրահներով (ինչպես, օրինակ, Երերոյքը), եւ, մեզ համար տվյալ դեպքում կարեւոր՝ սյունազարդ վերնատնով (15): Պետք է ավելացնել, որ մասնագետների կողմից դեռ ըստ արժանվույն չգնահատված Սրկղոնքի այս բացառիկ տաճարը անպատճառ անհրաժեշտ է նկատի ունենալ վաղ միջնադարի հայ ճարտարապետության ձեւաստեղծման եւ զմբթավորման խնդիրները ուսումնասիրելիս:

Ծիծեռնավանքի միջին նավը, վերնատնից բացի, լուսավորվում է կողքի նավերի տանիքներից դեպի վեր բարձրացող գլխավոր նավի ընդերկայնական պատերում բացված պատուհաններով եւ արեւմտյան ճակատի զույգ լուսամուտներով (նման զույգ լուսամուտներ հանդիպում են, օրինակ, Լեռնակերտի միանավ եւ Աշտարակի եռանավ, IV-V դդ. բազիլիկներում): Միջին նավի թաղն ունի շեշտված սլաքածեւ կտրվածք: Այն, ինչպես եւ տանիքի քարե սալերը, հավանաբար IX-X դդ. վերանորոգման արդյունք են: Տաճարի նավերի կամարաշարերը, խորանի նկատմամբ,

ավելի ուշ շրջանի գործ են: Դա պարզ է դառնում խորանի արեւմտյան պատի եւ նրան կից կամարաշարի որմնամույթի ու պատերի վերին հատվածների միջեւ եղած կարանների գոյությամբ, ինչպես նաեւ այն փաստով, որ միջին նավի պատերը որոշակի ծածկում են խորանի վերնահարկի եզրային կամարակապ բացվածքները:

Յաջորդ վերակառուցումը, որը տեղի է ունեցել դեռ վաղ միջնադարում, հյուսիսային մույթերի եւ նրանց միջեւ ձգվող կամարների ուժեղացումն է լրացուցիչ որմնասյուներով եւ կրկնակի կամարներով, ինչպես նաեւ հյուսիսային պատին կից կամարաշարի կցումով, որի վեց կամարները նստում են քառակուսի հատակագծով որմնասյուների վրա: Այս բոլորը շինված են սրբատաշ քարով: Ինչ վերաբերում է հարավային շարքի մույթերի ուժեղացմանը, ապա նրանց կցված լրացուցիչ որմնասյուները շարված են կիսամշակ քարով եւ որձաքարով ու հասնում են մինչեւ մույթերի քիվերի տակ: Այս լրացումն ակնհայտ ուշ շրջանի գործ է եւ տաճարի 1779թ. նորոգման արդյունք: Բեմի հատակը մեկ մետր բարձր է աղոթասրահի հատակից: Դեպի բեմ կարելի է բարձրանալ աբսիդի անկյունների մոտ տեղադրված քարե աստիճաններով: Միջնադարում է փորված աբսիդի հարավային պատի միջի փոքր խորշը: Բեմի կենտրոնում բարձրանում է քարե սեղանը՝ սյան վրա դրված խոշոր սալը:

Ծիծեռնավանքի նավերի թաղերը չունեն թաղակիր կամարներ՝ մի կառուցողական տարր, որը հանդիպում է հայկական մյուս բոլոր եռանավ բազիլիկներում: Տաճարի կողային նավերը լուսավորվում են արեւմտյան ճակատում, ծածկի անմիջապես տակ տեղադրված մեկական լուսամուտով եւ ընդերկայնական պատերում բացված, յուրաքանչյուրում չորսական բարձր եւ լայն պատուհաններով: Բոլոր լուսամուտների կամարները պայտածեւ են: Յետագայում (հավանաբար XVIII դ.) փակվել են հյուսիսային պատի բոլոր լուսամուտները եւ հարավայինի երկուսը:

Ծիծեռնավանքը ունի չորս մուտք՝ երեքը հարավային պատում, մեկը՝ հյուսիսային: Նրանցից երեքը, լուսամուտների նման, փակվել են որձաքարով եւ անմշակ քարերով շարվածքով: Բաց է միայն մեկ մուտքը՝

ՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 103 հարավարեւմտյանը, անմիջապէս արեւմտյան պատին կից: Մուտքի նիշը բարձր է տաճարի հատակից հինգ աստիճանով: Մուտքերի ուղղանկյուն բացվածքները տաճարի պատերի հնագույն՝ բազալտե մասում են: Չկան շքամուտքեր, ինչպէս Քասաղի, Երեւոյքի, Տեկորի IV-V դդ. բազիլիկաներում: Այստեղ միակտոր բազալտե բարավորը նստում է բացվածքի երկու անկյուններում դրված քարե պահուսակների վրա:

Ծիծեռնավանքի ճարտարապետության կարեւոր առանձնահատկություններից է արեւմտյան ձակատում մուտքի բացակայությունը: Սա եզակի երեւոյթ է՝ հայկական հնագույն բոլոր բազիլիկաները պարտադիր դուռ ունեն արեւմտյան կողմում: Ընդ որում՝ Ծիծեռնավանքում այդ կողմից մուտք ունենալուն չի խանգարում տեղանքը: Ինչպէս հետո կտեսնենք, այս առանձնահատկությունը շատ կարեւոր է տաճարի հիմնադրման ժամանակաշրջանը որոշելու համար:

Հուշարձանի հյուսիսային եւ արեւելյան ձակատները անմիջակա նորեն դրված են բլրի գառիթափ լանջերին, որի հետեւանքով հյուսիսից տաճարն ունի բազմաստիճան որմնախարիսխ, իսկ արեւելքից՝ վեց շարք կիսամշակ բազալտե խոշոր քարերից հիմնապատ: Ծենքի քիվը ստացվում է տանիքի քարե սալերի շարունակությամբ: Խորանի տանիքի համեմատ՝ միջին նավի երկթեք տանիքը նկատելի ցածր է՝ սա եւս ցույց է տալիս վերջինիս վերակառուցված լինելը: Այս երկու տանիքների միացման տեղում, միջին նավի տանիքի գագաթին բարձրանում է վեցյունանի փոքրիկ գանգակատունը, պսակված կոնաձեւ վեղարով: Այն, անշուշտ, կառուցվել է ուշ միջնադարում, որովհետեւ այսպիսի գանգակատները Հայաստանում բնորոշ են XVII-XVIII դդ. եկեղեցիներին եւ տարածված են հատկապէս Սյունիքում:

Ծիծեռնավանքի արտաքին ճարտարապետական կերպարը զուսպ է եւ նույնիսկ խիստ: Պատերի վրա դրսից կան հարողարանքի սակավաթիվ տարրեր: Հյուսիսային եւ հարավային ձակատների լուսամուտները ունեն պատի հարթությունից դուրս եկող կիսաշրջանաձեւ երեսակալներ, որոնք այժմ խիստ հողմնահարված են: Իսկ արեւելյան եւ արեւմտյան ձակատների

լուսամուտների պարակալները ուղղակի փորված են պատի հարթության մեջ: Արեւելյան ձակատի զույգ լուսամուտների տակով գնում է սալերից շարված հորիզոնական քիվ: Տաճարի պատերի հիմնական զարդաքանդակները վաղ միջնադարին բնորոշ՝ շրջանագծի մեջ ներգծված հավասարաթե խաչեր են: Նրանց տարբերակները փորված են հարավային պատի արեւմտյան կողմում, լուսամուտների միջեւ եւ արեւելյան հատվածում, նույն պատի մուտքերի բարավորների վրա: Իսկ հյուսիսային պատի մուտքի բարավորին շրջանագծի մեջ ներգծված հավասարաթե խաչը նկարված է կարմիր ներկով: Ակնհայտ է, որ մուտքերի եւ պատերի վերին՝ տուֆ մասերի վրայի խաչերը քանդակված են միաժամանակ:

Զարդաքանդակներով հարուստ է տաճարի ներսը, հատկապէս մույթերը: Մույթերի խոյակները զարդարված են ատամիկներով (որոնք դասավորված են հիմնականում մեկ շարքով, բայց կա եւ շախմատաձեւ, երկշարք դասավորություն), ալիքներով, պարանախյուս քանդակով, ճառագայթներով ութ եռանկյան բաժանված ուղղանկյուններով, սալիկներով ու գլանիկներով: Մույթերի վրա քանդակված են վեց թերթիկանի վարդյակներ, ուղղանկյուն շրջանակի մեջ առնված հարթ եւ լայն ժապավենի օձանման հյուսկեն քանդակ, ութ ճառագայթներով եռանկյունիների բաժանված ուղղանկյուններով շրջապատված պարանաձեւ հյուսվածք: Մույթերից վերեւ, նրանց առանցքով, կան երեսակալներ ունեցող ձագարաձեւ խորշեր, իսկ ավելի վեր՝ կամարաշարի պատերին քանդակված են հավերժության նշաններ, ինչպէս նաեւ բազմաթեթ վարդյակներ: Այս բոլոր զարդամոտիվները հատուկ են վաղ միջնադարի հայ արվեստին եւ կիրառվել են IV-VII դդ.: Տաճարի այդ մասի ավելի որոշակի թվագրմանը օգնում է քանդակներից մեկը՝ ութ ճառագայթներով բաժանված ուղղանկյունը, որը հանդիպում է միայն V դ. հուշարձաններում (Երեւոյք, Փարպի), ընդ որում՝ հատկապէս V դ. երկրորդ կեսում (Տեկոր, Ամարաս): Ինչ վերաբերում է մույթերի ավելացված մասերին, ապա նրանց եւ հյուսիսային պատի որմնասյուների (ոչ բոլորի) խոյակները նույնպէս մշակված են ատամիկներով: Հյուսիսային պատին որմնասյուների արանքում

պահպանվել է որմնանկարի մի բեկոր՝ ողջ հասակով կանգնած երկու սրբերի պատկերով: Տաճարի ձեւավորման մեջ օգտագործված է նաեւ գույն՝ կարմիր եւ ներկված որոշ վարդյակներ եւ մույթերի խոյակները:

Վանքի համալիրի շենքերից պահպանվել է միայն հարավային պարսպին կից, որձաքարով եւ կիսամշակ բազալտով շինված, այժմ կիսավեր, սեղանատունը: Այն ուղղանկյուն (ներսի չափերն են 13,75X4,25 մ) թաղածածկ կառուցվածք է, որին որպէս հարավային պատ ծառայել է պարիսպը (այժմ այդ մասում լրիվ քանդակված): Մուտքերը երկուսն են՝ արեւելյան եւ արեւմտյան պատերում: Հյուսիսային կողմից դեպի սեղանատուն բացվում են կամարակապ խորշեր: Սեղանատունը XVIII դ. գործ է, որովհետեւ որպէս արեւելյան մուտքի բարավոր XVII դ. խաչքար է օգտագործված: Վանքի խցերի հետքերը նշմարվում են համալիրի արեւմտյան կողմում: Պարիսպը շինված է որձաքարով եւ գետաքարով, կրաշաղախի միջոցով: Այն նախնականը չէ եւ XVII դ. վերակառուցման արդյունք է: Սրբատաշ բազալտից կառուցված այժմյան դարպասի շքամուտքի շուրջը, պատի շարվածքի մեջ, պահպանվել են նախնական դարպասի կամարի հատվածները, շարված նույն ֆելզիտի սրբատաշ քարերից, որով եւ կառուցված է տաճարը: Հին դարպասի կամարը ունեցել է համեմատաբար ավելի մեծ թռիչք (3,56 մ): Նոր դարպասը ուղղանկյուն բացվածք է, վերետում համակենտրոն կրկնակի կամարներով, կառուցված, ըստ արձանագրության, 1613թ.:

Ծիծեռնավանքը, որոշ հնագույն հայկական տաճարների նման, շատ աղքատ է վիճակագրություններով: Չկա, եւ անտարակույս իսպառ չի ունեցել, շինարարական արձանագրություն: Կարելի է համոզված ասել, որ մինչեւ VI դարի կեսերը ընդհանրապէս Հայաստանում տարածված չի եղել կրոնական մեծ ու փոքր կառույցների վրա գրավոր հիշատակարաններ թողնելը: Այդ, անշուշտ, օրենքով արգելված չի եղել, որովհետեւ ունենք հակառակ փաստեր, ինչպէս Տեկորի տաճարի օրինակը (V դ. վերջ): Սակայն որպէս սովորույթ, այդ շարունակվել է 2-3 դար, հավանաբար, ըստ վաղ քրիստոնեական շրջանում իշխող հոգեբանության եւ գաղափարների, համարվել է անհամեստություն, անվայել

ՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

ցուցամոլություն, մինչև իսկ հասնելով մեղքի հասկացողության:

Երսից եւ մանավանդ դրսից արձանագրությունների մեծ հնարավորություններ ունեն Ծիծեռնավանքի որմերը, իրենց ընդարձակ հարթ մակերեսների եւ քարի ընտիր ու կայուն տեսակի շնորհիվ: Արձանագրություն չունենալու փաստը եւ, ինքնին, ցույց է տալիս տաճարի խոր հնությունը, ինչպես եւ այն, որ վաղ միջնադարից հետո Ծիծեռնավանքը էական վերակառուցման չի ենթարկվել, որը, անշուշտ, պատճառ կդառնար գրավոր հիշատակ թողնելու համար: Ավելին, վանքի պատերը, մինչև XVI դարի երկրորդ կեսը, զուրկ են նվիրատվական, ավելի ճիշտ՝ հիշատակ-արձանագրություններից, որոնցով այնքան հարուստ են շատ այլ վանքեր: Այս էլ թերեւս կարելի է բացատրել երկու պատճառով: Նախ այն, որ ինչպես երեւում է, Ծիծեռնավանքը այն բացառիկ վանական հաստատություններից է եղել, որ նրանից ոչ շատ հեռու Տաթևի, Գանձասարի եւ հեռավոր շատ վանքերի նման անշարժ գույքի մեծ սեփականատեր չէր եւ հողեր ու գյուղեր չի ունեցել, ուստի եւ նվիրատվություններ չեն եղել, որոնք առանց վիճաբանության գրեթե չէին լինի: Երեւի չի ունեցել նաեւ վանականների բազմաքանակ կազմ, որը նկատելի է եւ խուցերի փոքր թվից: Երկրորդ՝ ըստ երեւոյթին Ծիծեռնավանքը ոչ թե կրոնական-վարչական կենտրոն, այլ սոսկ մեծ ուխտատեղի էր, որպիսին եւ մնացել է բազում դարեր, հոգալով իր ծախսերը մեծ մասամբ ուխտավորների նվիրատվություններով:

Տաճարի հնագույն արձանագրությունը՝ ներսում հյուսիսարեւելյան մույթին հանգչող կամարի ստորին քարերի վրայի հետեւյալ երեք բառերն են՝

*ՏԱԻ
ՈՐ Յ ԶԳԻ
ԻՇԵ ՈՐԳ
ՅԷՔ ԳՍ*

(Տարր յիշեցեք գԳիրոգս)

«Տարր»-ը պետք է կարդալ՝ «ուխտատար», բայց որեւէ հիմք չկա հավաստելու, թե արձանագրությունը պակաս է, քար ընկած, կամ այդ քարը այլ տեղից բերած, հարմարեցրած: Ըստ որում՝ մույթից ձգվող այդ կրկնակի կամարը հետագա հավելում է, ամենից վաղ՝ VI դարի վերջերի:

Յին արձանագրություն է նաեւ

դրսից՝ հարավային ճակատի 3-րդ (արեւելյան) մուտքի աջ կողմին քանդակածը.

*ՈՎ ՏՐ ՔՍ Ա
ՋԱՏ ԵՂԲ
ԱՅՐ ՄԻՐՈՂ
ՋԳՐԻԳՈ ՋԱՆԱՐԺԱՆ
ԾԱՌԱՅՍ ՅԻՇԵՅԷ ՅԱ... ԹՍ*

(Ով Տէր Քրիստոս Ազատ եղբայր սիրող գԳրիգոր զանարժան ծառայս յիշեցեք յաղօթս):

Վերջապես նույն դարերի են նաեւ հարավային պատի արեւի երկու ժամացույցների 12 թվերն արտահայտող այբուբենատառերը: Միայն տարօրինակ է (ու եզակին), որ Ժ (10) տառից հետո պետք է գրվեր ԺԱ (11) եւ ԺԲ (12), ինչպես ընդունված էր ամենուրեք, սակայն գրել են Ի (20) եւ Լ (30), այսինքն, ինչպես այբուբենի հաջորդականությունը: Դժվար է ենթադրել, թե ժամացույց ունենալու առաջին փորձերն են եղել եւ կարգը չեն իմացել: Ավելի հավանականը (ինչպես երեւում է ժամացույցների անշուք լինելուց) պարզապես այդ գործի համար բավարար գրագետ մարդ չեն ունեցել: Կապույտ գույնի քարի վրա փորված երկրորդ ժամացույցի Ը (8) տառը եւ Ի (20) (բայց այստեղ 12-ի փոխարեն կամ համարժեքով) տառի պոչը ստեղծված են խաչի թեւերով: Այս երկու տառերը գծված են բարձր արվեստով եւ դրանցից առաջ, ժ տառից հետո կլորմի օղակ է գծված, վերեւից ուղղահայաց գծով պսակված (խնձորի նման):

Առաջին ժամացույցը, ավելի շնորհալի ձեռքով գծված, գտնվում է հարավային ճակատի դեպի արեւելք հաշված 3-րդ լուսամուտի տակ, աջ կողմից երկրորդ քարի վրա: Այստեղ միայն Ի (20=11) տառին հաջորդում է անավարտ եւ անսովոր Բ, առանց մեջտեղի գծիկի (Թ): Այսինքն վարպետի համար պարզ չի եղել, թե Ժ (10) տառից հետո ի՞նչ պետք է գրել 11 եւ 12 թվերի համար: Ուշ միջնադարում այս ժամացույցի տակ գրված է

*ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՏԵՐ ԱՋՐԻՆ
ՀԲՅՆ*

(Սուրբ խաչս բարեխոս Տէր Ազարիային հոգոյն)

Իսկ քիչ վերեւ, աջ կողմից անփոյթ (այժմ տեղ-տեղ եղծված) գրված է.

*ՄԲ ԲԱ... ԽՍ ՏՐ ՄԻԹՐՎԻՐԻՆ ԵՍ
ՄԱԻՐԱ*

որը կարելի է վերծանել՝ «Սուրբ բա-

րեխօս խաչս Տէր Մխիթար հայրին եւ մօրս» (եւ-ը կարդալով եւ):

Երկրորդ ժամացույցը պարունակող այս նույն կապույտ քարի վրա էլ կա նույնպես մի փոքրիկ արձանագրություն, որը առաջինն է թվագրությամբ՝

*ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՈՒՀԱՆԵՍԻՆ ԹՎ
ՈՒ (1581)*

(Սուրբ խաչս բարեխօս Ռեհանէսին թվ ՈՒ)

Այս նույն ժամանակաշրջանի պետք է համարել տաճարի ներսի արձանագրություններից մեկը եւ՝ բեմի ձախ կողմից բացված երկու պատուհաններն (խորշերն) անջատող ոչ մեծ քարի վրա փորված վեց խաչեր (երկուսը փոքր) եւ հետեւյալ գրությունը.

*ԵՍ ՄՀՈՏԻԿ ԿԱՆԳՆԵՅԻ ՋԽԱՉՍ
ՀԱԻՐ ԻՄ
ՄԻԻԹՎԱՐ ԱԹԱՐԲԷԿԻՆ*

Վերապահությամբ այս արձանագրությունը համարում ենք XV դ. ոչ միայն տառաձեւերից, այլ որ այդ հազվագյուտ անունը՝ «Մահուտ» հանդիպում է մեկ անգամ միայն XV դ. (16):

Յյուսիսային երրորդ մույթի վրա.
*ԵՍ ՀՆՋԱՆԳ
ԿՆԿԵՅԻ ՄՐ ՆԾ*

Յարավային պատի առաջին մուտքի ճակատաքարից վեր երրորդ շարքի անկյունից առաջին եւ երկրորդ քարերի վրա 1606թ. քանդակված են երկու հյուսկեն խաչեր ի հիշատակ ոմն Տեր Սկրտչի՝
*ԽԱՉՍ
ՏՐ ՄԿԻՐՏ ԹՎ ՈՒԾԵ
ԻՉԻՆ*

Նրանց մոտ, նույն ժամանակի խաչերի միջեւ է հաջորդ, մաշված, դժվար ընթեռնելի հիշատակը՝
... ՌՃ ...
ՊՈՒՏԱԽ

«Բուդաղ» անունի արեւմտահայերեն տառաձայնությունը՝ «Պուտախ» հանդիպում է XVI դ. առաջին կեսում (17):

Ապա գալիս են, անշուշտ, նույն XVI դ. հողմնահարված մանր հիշատակարաններ, միայն թվերի կեսը կամ «ես»-երը մնացած, հազիվ ընթեռնելի բառերով ու տառերով, ինչպես օրինակ.
... ԳՈՒՐՆԱՄ ԱՏԱՄՆ...

(կամ՝ դովանամ): Երկրորդ >>> 106

ՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

« 105 միջին մուտքից վերեւ, երկրորդ շարի վրա՝
ԹՎ ՌԾԵ (1606)

քիչ վերը, սրան մոտիկ՝
ԹՎ Ռ... ԳԻՐԵՑԻ:

Լույն մուտքի ծակատաքարից վեր, երրորդ շարքի վրա (աջ կողմից)՝
ՄԲ ԽԱՂՍ ԲԱՐԵԽՈՍ ՏՐ ՆԵՍԵՍԻՆ
ՀՔՅՆ

Տաճարի հարավային ծակատի արեւմուտքից առաջին, միակ բաց մուտքի բարավորից վերեւ, բազալտի շարվածքի մեջ հատուկ ագուցված տուֆ քարի վրա, կա Ծիծեռնավանքի գրականության մեջ հայտնի միակ արձանագրությունը, որի առաջին երեք տողը եւ թվականը հրատարակել է Ե. Լայպանը (սակայն «տաճար»-ը կարդալով «գավիթ») (18): Արձանագրությունը հետեւյալն է (մեր վերջին այցելության ժամանակ այն այլեւս չկար տեղում).

ՆՈՐՈԳԵՑԱԻ ԴԱՃՐՍ
ԵԻ ՄԲ ՁԱՆԿԱԴՈՒՆՍ
Ի ԺՄԱՆԿՆ ԻԲՐԱՆՎԻՍ
ԽԱՆԻՆ ՁԵՌՆԲՆ
ԱԻՌՈՒՔԻ ՈՐԴԻ ՆԱՁԱ
ԳՈՒԼԻՆ ԽՆԱՇՈՐԿՑԻ
ԵԻ ԷՐ ՎԱՔԻԼ ԳՈՐ
ԾՅՍ ՈՒԴԻ ՅՈՒՀԱՆՆ
ԹՆ ՌՄԻԸՆ (1779):

Ծիծեռնավանքի XVIII դ. այս նորոգումը վերաբերում է, մեր կարծիքով, տանիքի փոքրիկ զանգակատնից բացի, տաճարի դռների եւ լուսամուտների մեծ մասի փակմանը, եւ հարավային մույթերի ուժեղացմանը, որովհետեւ հուշարձանը այդ ժամանակաշրջանի վերանորոգման այլ նշաններ չունի:

Լորոգման մի այլ արձանագրություն կա Ծիծեռնավանքի համալիրի միակ արեւմտյան դարպասի դրսի պատին, կամարակապ բացվածքից ձախ եւ քիչ վերեւ՝

ՆՈՐՈԳ
ԵՑԱԻ ՊԱՐԻՍՊՍ Ի ՁԵՌՆ ՀԱՅ
ԿԱՁ ԻՇԽԱՆԻՍ Ի ԱՌՋՆԴՈՒ
ԹԻ ՄԿՏՁ ԵՊՍ ԹՎ ՌԿԲ (1613)

Վանքի սեղանատան արեւելյան դռան վրա որպես բարավոր օգտագործված խաչքարի շինության ներսը նայող երեսին կա հետեւյալ արձանագրությունը.

ՄԲ ԽԱՂՍ ԳՈՒՋԼԻՆ ...ՔՍ Թ ՌԾԴ (1605):

Ծիծեռնավանքում չկան կառուցող վարպետների նշաններ: Ինչպես հնագույն՝ պատերի բազալտե ստորին մասի, այնպես էլ վերին՝ տուֆ մասերի վրա բացակայում են վաղ միջնադարի հայկական հուշարձաններում հաճախ հանդիպող այդ նշանները՝ երկրաչափական պատկերների կամ հայկական այբուբենի տառերի ձեւով: Վարպետների նշանների բացակայությունը նույնպես վկայում է տաճարի խոր հնության մասին, որովհետեւ Հայաստանում նրանք տարածում գտան VI դարից: Եվ հատկանշական է, որ Ծիծեռնավանքում հանդիպող շինարար վարպետների երեք նշաններ փորված են հետագայում ավելացված որմնասյունների վրա: Դրանք ունեն հետեւյալ պատկերը (այստեղ կա երեք սիմվոլ): Սրանցով սպառվում են այս հին, եզակի, խստաշունչ ճարտարապետական կոթողի վիմական գրությունները:

Ինչպես տեսանք, Ծիծեռնավանքի արձանագրությունները չեն վերաբերվում տաճարի կառուցմանը: Նրա կառուցման կամ հիմնական վերակառուցումների ժամանակաշրջանը կարելի է որոշել (հիարկե, որոշ վերապահումներով) տաճարի ճարտարապետական-գեղարվեստական առանձնահատկություններից ելնելով: Հուշարձանի նկարագրության ընթացքում նշվեց, որ այն ունեցել է շինարարական չորս հիմնական փուլ: Առաջինը արտաքին պատերի ստորին՝ բազալտե մասի կառուցումն է, երկրորդը պատերի վերին՝ ֆելզիտային տուֆից շարված մասի, վերնահարկով խորանի եւ ավանդատների հավելումն է, երրորդը՝ նավերը բաժանող կամարաշարի կառուցումը եւ տաճարը թաղով ծածկելը, չորրորդը՝ մույթերի ուժեղացումն է եւ կրկնակի կամարների ու հյուսիսային պատին կից որմնակամարաշարի ավելացումը:

Հարդարանքի տարրերի ոճական առանձնահատկությունները, ինչպես տեսանք, թույլ են տալիս երրորդ փուլը թվագրել V դ. երկրորդ կեսով, իսկ չորրորդը՝ VI-VII դդ.: Ինչ վերաբերում է խորանի եւ նրան կից երկու սենյակների հավելմանը (երկրորդ փուլ), ապա դա կարող էր տեղի ունենալ դեռ IV դ. վերջում եւ V դ. սկզբում, երբ կաթողիկոս Սահակ Պարթեփի (387-436 թթ.) կանոնների համաձայն պահանջվում էր, որ ամռանը քահանան եկեղեցում բնակ-

վեր (19): Այդ ժամանակաշրջանում հուշարձանն ունեցել է փայտե ծածկ, եւ եթե նկատի ունենանք տաճարի զգալի լայնությունը, ապա այն արդեն եռանավ բազիլիկա է եղել, միայն նավերը բաժանվել են փայտե սյունաշարերով:

Ամենակարեւորը, սակայն, տաճարի հիմնադրման ժամանակաշրջանի պարզումն է, սկզբնական՝ ուղղանկյուն, արեւելքում առանց խորանի բազալտի մասի թվագրումը: Իհարկե, առկա նյութը բավարար չի Ծիծեռնավանքի հիմնադրման ժամանակն անվերապահորեն որոշելու համար: Սակայն նրա անվան հեթանոսական ծագումը, ճարտարապետության մի քանի կարեւոր առանձնահատկությունները, ինչպես նաեւ Հայաստանում քրիստոնեության տարածման ժամանակ եկեղեցաշինության մասին պատմիչների որոշ տեղեկությունները թույլ են տալիս բավականին հավանական վարկած առաջադրելու. մեր կարծիքով, հնագույն կառուցվածքը եղել է հեթանոսական տաճար՝ Սյունիքում քրիստոնեությունը մուտք գործելուց հետո եկեղեցու վերափոխված:

Ինչն է հիմք ծառայում այս ենթադրության համար:

Հայաստանը աշխարհում առաջին եւ քառորդ դար միակ քրիստոնեական պետությունը լինելու պատճառով պետք էր IV դ. հենց սկզբից նոր պաշտամունքի համար եկեղեցական շենքերի տիպեր միանգամայն ինքնուրույն մշակեր: Քրիստոնեության տարածումից հետո, առաջին տասնամյակների ընթացքում, ողջ Հայաստանում եկեղեցիների բուռն շինարարություն է ծավալվել: Ըստ պատմիչների (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Ջենոբ Գյակ) վկայությունների (20) եւ հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության գործի մեծ երախտավոր Թ. Թորամանյանի, ինչպես նաեւ Ա. Սահինյանի համոզիչ եզրակացությունների (21), 301թ. սկսած Հայաստանի հեթանոսական մեհյանների մի զգալի մասը գրեթե անփոփոխ կամ մասնակիորեն վերակառուցելով, օգտագործվեց որպես եկեղեցի, իսկ մի մասն էլ ավերվեց եւ նրանց հիմքերի վրա եկեղեցիներ կանգնեցվեցին: Այդ վերակառուցումների ընթացքում կրկնվում էր հեթանոսական շենքի երկայնական, արեւելքից-արեւմուտք ձգված ուղղանկյուն հորինվածքը, միայն բեմը՝ «սեղանը» արեւմուտքից տեղա-

ՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

փոխվում է արեւելք (22):

Եվ ահա Ծիծեռնավանքը իր հնագույն՝ բազալտե մասով այս ձեւափոխման ամենահավանական օրինակն է, որը հաստատվում է նաեւ նրա ճարտարապետության եզակի առանձնահատկությամբ՝ արեւմտյան կողմից մուտքի բացակայությամբ: Իսկ դա, ինչպէս տեսանք, հետեւանք է հեթանոսական շրջանում արեւմտյան կողմում զոհասեղանի գոյությամբ: Ծիծեռնավանքն էլ քրիստոնեության տարածման ժամանակ ավերվել է մինչեւ պատերի ստորին մասը: Կամ գուցէ, որն ավելի հնարավոր է, սկսվել է կառուցվել որպէս մեկան, բայց շինարարությունն ընդհատվել է Սյունիքում քրիստոնեության մուտքից հետո:

Սակայն հարց է ծագում, թե Յայաստանում կարող էին լինել որպէս հեթանոսական տաճարներ իսկական բազիլիկ շէնքեր (Ծիծեռնավանքի նախաքրիստոնեական կառուցվածքն իր զգալի լայնությամբ եւ համաչափություններով կարող էր միայն բազիլիկա լինել): Այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ, թեպէս Յայաստանում վաղ միջնադարում եռանավ բազիլիկաների տարածված լինելը գուցէ, որոշ չափով, նաեւ արեւմուտքի ազդեցության արգասիքն է: Ինչ վերաբերում է Յայաստանում հեթանոսական տաճարի պահպանված միակ օրինակին՝ Գառնիին, ապա անհրաժեշտ է նշել, որ հունա-հռոմեական պերիպտերը չէ, որ բնորոշում է հայկական նախաքրիստոնեական պաշտամունքային կառուցվածքների հորինվածքը: Դեռ մինչեւ հելլենիզմը Յայաստանում կային պաշտամունքային զարգացած ճարտարապետություն եւ տաճարների սեփական տիպեր (թե բազիլիկ, եւ թե, որը շատ հավանական է, նաեւ կենտրոնակազմ), որոնք կիրառվել են ընդհուպ մինչեւ քրիստոնեության ընդունումը: Նրանց հորինվածքներն ունեցել են տեղական ակունքներ: Յայ ճարտարապետության պատմության ուսումնասիրողների մի մասը այն կարծիքն ունի, որ եկեղեցիների բազիլիկ տիպը Յայաստան ներմուծվեց հարեւան Սիրիայից: Այս տեսակետը հիմնված է III-IV դդ. Յայաստանի ու Սիրիայի մշակութային կրոնական սերտ կապերի փաստի, ինչպէս եւ այդ երկու երկրների ճարտարապետական որոշ ձեւերի եւ դեկորատիվ արվեստի տարրերի նմանության վրա: Սակայն բազիլիկ կառուցվածքները Յայաստանի տարածքում ընդունումից դեռ հազար տարի առաջ: Ուրարտական քաղաքների միջնաբերդերի ընդունելության դասիկները իսկական բազիլիկաներ են՝ ուղղանկյուն հատակագծով եւ սյունաշարերով նավերի բաժանված: Այսպէս է, օրինակ, Արգիշտիխինիլի-Արմավիրի քարաշէն մոնումենտալ դասիկը, որն ունի մոտավորապէս արեւելքից արեւմուտք ձգված, հայկական բազիլիկաներին բնորոշ համաչափություններով հատակագիծ՝ երկու շարք փայտե սյուներով երեք նավի բաժանված: Յատկանշական է, որ Ուրարտուի անկումից հետո Արմավիրը դարձավ Յայաստանի առաջին մայրաքաղաքը եւ հայկական հեթանոսական կրոնի կենտրոնը: Եվ միանգամայն հավանական է, որ ուրարտական շրջանի բազիլիկ շէնքերի հորինվածքը ազդած լինելը Արմավիրի հայկական հեթանոսական տաճարների ճարտարապետության վրա: Ինչեւիցէ, Յայաստանում բազիլիկան մինչեւ մեր թվարկության IV դարն արդէն ուներ իր զարգացման հազարամյա պատմությունը: Իսկ Ծիծեռնավանքի տաճարը այդ տիպի կառուցվածքների կարեւորագույն եւ հանգուցային հուշարձաններից մեկն է:

Ծանոթագրություն

1. Կոչվել է նաեւ Քաշայթաղ, Խոժոռաբերդ, բայց տեղի եւ Գորիսի, Սիսիանի բնակիչները մինչեւ վերջերս՝ 20-ական թվականները, կոչում էին Մաղավուզ, Աղահեծք-Աղահեջս ավան աղավաղումով:
2. Ստ.Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 516:
3. Նույն տեղում, էջ 339:
4. Նույն տեղում, էջ 499-500: Գրքում Տանձափարախը սխալմամբ «Գանձափարախ» է տպված: Այս ցուցակը, մեր կարծիքով, պատմիչի տեքստում ավելացվել է XVIII-XIXդդ. (ինչպէս եւ վերջին գլուխը՝ «Յավելվածք»), որովհետեւ Ծիծեռնավանքից բացի այստեղ նշված բոլոր վանքերն ու անապատները հիմնադրվել եւ կառուցվել են XVII դ.:
5. Նույն տեղում, էջ 208:
6. Ե.Լալայան, Գանձակի գավառ. «Ազգագրական հանդես», 2 գիրք,

- 1900, էջ 338:
7. Ալիշան. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 267-268:
8. Ե.Լալայան, Ջանգեզուր, «Ազգագրական հանդես», 7 գիրք, 1898, 2, էջ 46-49:
9. Ա.Սահինյան, Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը, Երեւան, 1955:
10. Paolo Cuneo, La basilique de Tsitsernakavank ... le Karabagh, REArm, tome V, Paris, 1967.
11. Ծիծեռնավանքի երկկենտրոն կամարները, ինչպէս եւ Ճարձակեսի (Ջարջարիսի) միանավ եկեղեցու պայտածեւ որմնակամարը Յայաստանում այդ ձեւի կամարի վաղագույն օրինակներն են:
12. Բացառությամբ Ամաղու Նորավանքի. դեպի երկրորդ հարկ տանող մնայուն՝ քարե աստիճաններ չունեն նաեւ Յայաստանի միջնադարյան երկհարկ եկեղեցիները (Կապուտան, Գոշավանք, Կարբի, Եղվարդ, ս. Յովհաննէս Կարապետ):
13. Ստ.Օրբելյան, նշված աշխ., էջ 71:
14. Մ.Օրմանյան, Ազգապատում, Գ հատոր, Բեյրութ, 1961:
15. Երկգմբեթ եկեղեցու ավելի ուշ ժամանակաշրջանի օրինակ հանդիպում է Վրաստանում (Գուրջանի), որը նման է Սրկղոնքի տաճարին նաեւ սրահի եւ վերնատան առկայությամբ:
16. Յ.Աճառյան, Յայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1946, էջ 171:
17. Յ.Աճառյան, նշված աշխ. հ. Ա, Երեւան, 1942, էջ 418-419:
18. Ե.Լալայան, Ջանգեզուր, «Ազգագրական հանդես», 7 գիրք, 1898, էջ 48:
19. «Կանտնագիրք հայոց» հ. 1, Երեւան, 1964, էջ 377:
20. Տե՛ս «Ազաթանգեղայ պատմութիւն», Թիֆլիս, 1882: Փալստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883: Ջենոբ Գլակ, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889:
21. Տե՛ս Թ.Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ.-1, 1942: Ա.Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երեւան, 1955:
22. Ա.Սահինյան, նշված աշխ., էջ 231:



ՂԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՂԵՏ

Մ.Յասարաթյանի հուշերը Եղիշե Չարենցի մասին

ՀԱՏՎԱԾ

հրերի բերումով այնպես եղավ, որ 1932-1933թթ. Չարենցի հետ աշխատեցինք Պետհրատում: Տերյան փողոցի մի հին, գրեթե միահարկ անշուք շենքում, պարսկական հյուպատոսարանի մոտ: Չարենցը վաղուց արդեն գրական-գեղարվեստական բաժնի վարիչն էր, իսկ ես՝ քաղաքական գրականության բաժնի խմբագիր էի նշանակված: Նստած էինք կից սենյակում: Գուցե Չարենցն իր կյանքում այդքան ոգետրված հասարակական-գրական աշխատանքի զգացումը չէր ունեցել մինչև այդ, ես ահա ընկել էր իր տարերքի մեջ, հայ գրական հուշարձաններ տպագրելու մեծ ծրագրով: Առանձին ոգետրությամբ պատրաստում էր նաև արեւմտահայ նշանավոր գրողների եւ Հովհաննես Թումանյանի երկերի ժողովածուները: Վերջինս պետք է կատարեր ինքը՝ անձամբ, Թումանյանի դստեր՝ Նվարդ Թումանյանի աշխատակցությամբ: Այս գործը գլուխ եկավ Չարենցի եւ Նվարդի շատ տխուր եւ խիստ ընդհարումներով, հասցնելով թշնամանքի ու բամբասանքի: Երանց ընդհարումը ավելի սուր եղավ, քան «շունն ու կատվի ընդհարումը», ինչպես ասում էր Չարենցը: Երկուսն էլ, հատկապես Նվարդը, գանգատվում էին ինձ, բայց անօգուտ: Ընդհանրապես պետք է ասել, Չարենցը, իր հանդուգն շիտակությամբ, նույնիսկ ոչ գինով պահին, բոքիկ էր չափի զգացումից: Նա իրերը կոչում էր իրենց անունով, անկախ տեղից ու պարագայից, անձնավորությունից ու սեռից, երբ բանը հասնում էր ասելուն, Չարենցը դառնում էր Տոլստոյ, ուստի բամբասանք բառը, որ գործածեցի, չի համապատասխանում Չարենցի բնավորու-



Շատ մեծ աղմուկ բարձրացավ Չարենցի վերջին գրքի լույս տեսնելու շուրջը («Գիրք ձանապարհի»): Մի գիրք, որի նմանը չէր տեսել հայ գրականության պատմությունը...

թյանը: Չարենցը մտածում էր պատրաստել նաև Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուն: Ճիշտ է, ես մի կարճ ժամանակ զբաղվել էի Սայաթ-Նովայով (1930թ. գարնանը), փորձելով վերծանել նրա թուրքերեն երգերը եւ միայն մեկ հատն էր հաջողվել ու, իմ կամքից անկախ, ընդհատվել: Այդ մասին ես ոչինչ չասացի Չարենցին, մանավանդ որ այն ժամանակ դեռ Սայաթ-Նովայի սիրահարներից չէի:

«Այ տղա, զարմանալի զարմանք է Սայաթ-Նովան, - մեկ անգամ ասաց Չարենցը, - ամեն օր կարող ես նրա խաղերը կարդալ եւ ամեն օր մի նոր բան գտնել, կարծես երեկ չէիր կարդացել: Թումանյանը ճիշտ է ասել, Թումանյանը համ, որ բավական է Սայաթ-Նովային մի անգամ կարդաս, էլ չես կարող ազատվել, տեսնես մենք կարող ենք Սայաթ-Նովայի պես բանաստեղծություններ գրել: Մենք նստում ենք, ծրագրում, օրենքներ գործածում, իսկ նրանք, հենց ինքը գալիս է շերամի հատուն որդի թելի նման»: Փոքրիկ առարկությունից հետո, երբ իրեն համեմատեցի Սայաթ-Նովայի հետ, ցասկոտ հարձակվեց վրաս. «Տո, ուրեմն դու ոչինչ չես հասկանում: Սայաթ-Նովան անտակ ծով է, ծով, նա հո մեզ նման չի նստել, թե բանաստեղծություն եմ գրում, նրանք հենց՝ գրվել է: Մարդ իմանար, թե թուրքերեն ինչ է գրել»:

Մինչև երեսնական թվականները եւ դրանից հետո, շուրջ չորս տասնամյակ, ես շատ մարդու եմ տեսել, շատ անվանի մարդկանց հանդիպել, ոմանց մոտիկից ծանոթ եղել, բայց դրանց մեջ չկա մեկը, որ կարողանամ համեմատել Չարենցի հետ: Մարդկային կրքերով ու զգացումներով առեցուն, այդ վտիտ երիտասարդ մարդը կարծեք ավելի շատ կամ սուկ ֆիզիկական ձեւ էր, իսկ էությունը բաղկացած էր նյարդերի պիրկ հյուսած կծիկից՝ վարար գետի նման հոսող զգացումներից, հորդացող, անսպառ եռանդից, մտքի հրաբուխից, լրացված բացառիկ ուշադրությամբ եւ բացառիկ... անփութությամբ:

Անցյալի մեծություններից, իմ համոզմամբ, Չարենցին կարելի է նմա-



նեցնել միայն մեծ իսպանացի Գոյային, բայց Չարենցը նրա նման չկարողացավ նկարել Չայաստանի եւ միության երկարատեւ Մայիսի 3-ը, որովհետեւ ինքը այդ Մայիս 3-ականների մեջ ընկավ: Տարբերությունն այն է, որ 2007թ. բոլորովին անհնարին կլինի Չարենցի մասունքները Երեւանից իսկ տեղափոխել... Երեւան:

Ասում են՝ Լեւ Տոլստոյը չի գագցել իր բարձր իշխանական վիճակն ու իրավունքը, հանդես գալով ռուս գեղջկական կեցվածքով: Բայց այդ ամենը՝ հենց նրա գերմեծության ցուցանիշն էր եւ գիտակցորեն յուրովի մշակված կամ ստեղծված արտահայտությունը, որոնք մատնում էին նրա մեծությունը:

Այլ էր Չարենցի պարագան: Չարենցին նույնիսկ բեմի վրա չէիր տարբերի սովորական անհատից: Եթե տարբերություն նկատեիր, այդ պիտի լիներ նրա ազատ, անկաշկանդ կեցվածքը, մտքի ճկունությունը սրամտության հետ: Նախ, Չարենցն իր շարժումներով, փողոցում քայլելիս, մարդու հետ հանդիպելիս նման էր մեծավոր մանուկի: Եթե վեճ, կռիվ լիներ փողոցում, գլխարկը կհաներ եւ աջ ձեռքին բռնած, կվազեր

իմանալու թե ինչն ինչոց է. եթե կապիկ պար ածեին, նա, գիքորյան մղումով, կվազեր այդ ուղղությամբ, սիրահար էր թամաշայի, զուռնայի, շարժման, ֆայտոնի, սիրահար էր, մանավանդ, երգի ու երաժշտության, թեեւ Բակունցին հակառակ, փոքր էր նրա երգելու շնորհքը եւ թույլ էր լսողությունը: Այս ամենը զարմանալի էր այդ շատ կրթված, շատ բանիմաց, այդ բարձր կարգի մտավորականի համար, որ նույն կրթով ազաի էր նոր բան իմանալու մեջ:

Ես հետզհետեւ համոզվեցի, որ Չարենցը, բոլոր պարագաներում, միաժամանակ մտածում էր, նույնիսկ՝ հորինում: Մարդիկ, մոտիկները զարմանում էին, թե նա երբ է ժամանակ գտնում մտածելու, քնելու, նստելու եւ այդքան շարադրելու համար, որքան էլ հրաբուխ լիներ: Այդ մեկը անհնարին է կշռի բերել, եթե չընդունենք, որ նա քեզ հետ, խոսելիս, անգամ փողոցում քայլելիս, արդեն զբաղված էր՝ հորինելով: Այդ երեսում էր նաեւ այն պահին, երբ ամենամոտիկ մարդուն իսկ հանդիպելիս, հանկարծակի էր գալիս եւ մինչեւ անունը գտնելը նախ ասում էր՝ «բան ջան»: Միայն կարողալիս էր շատ ուշադիր, կլանում էր

ամենաբարդ մտքերը: Երբ էր այդքանը հավաքել իր ուղեղի մեջ, ինչպես գիտեր ռուսական ու եվրոպական գրականությունը: Նրա հավաքելու, տեղադրելու ծայքերը այլ կերպ էին դասավորված: Այս կապակցությամբ չեմ կարող չհիշել 1934թ. գրողների տանը կայացած նրա մի դասախոսության ընթացքում եղած մի դեպք. «Չայ գրական լեզվի զարգացման տենդենցների» մասին էր խոսում Չարենցը, որի շուրջ ելույթ ունեցավ նաեւ լեզվաբան Սեւակը: Չարենցը պետք է նրան եւս առարկեր, բայց երբ ասաց՝ «Ինչ վերաբերում է ընկեր Լեզվակի ելույթին...», հնար չեղավ հանգստացնել դահլիճը, եւ այլեւս առարկելու խոսք ասելը չարժեր: Բայց նա այդ ասաց այնքան անմեղ ձայներանգով, որ իբր թե լեզվից փախած էր՝ լեզվաբան եւ Սեւակ բառերի պատահական միացում:

Իմ հիշողության մեջ պահպանված շատ դեպքերից երեք-չորսը կապված են Չարենցի ոչ թե ընդհանուր բնավորության գծերի հետ, որոնք շատ-շատ են, եւ շատերը կարող են վերհիշել նման առտնին շատ ու շատ դեպքեր, այլ՝ կենսագրության հետ: Անշուշտ, մեծ պոետի հետ կապված >>> 110

ՆԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՆԵՏ

« 109 առտնին թվացող փաստերը մեծապես տարբերվում են մեր սովորականից, եթե ոչ ըստ ձեւի՝ չարենցյան ձեւի: Լշաձս դեպքերը կապված են Չարենցի կյանքի վերջին տարիների հետ:

Առաջինը վերաբերում է նրա կյանքում ուղղակի հեղափոխիչ դեր կատարած առաջին զավակի ծննդյան հետ, երկրորդ անգամ ամուսնանալուց հետո:

Նա երազում էր զավակ ունենալ, պայմանով, որ առաջինը լինի աղջիկ, որ գեթ անունով պետք է փոխարիներ Չարենցի կյանքի ընկերոջը՝ համբերատար, անթերի, անձնագոհ արարած Արփի (Տեր Աստվածատրյան) Չարենցին, իսկ երկրորդը՝ անպայման տղա: Այդպես էլ «մուրազ» մնաց Աբգար աղայի թոռ՝ արու զավակ ունենալը, որի անունն ընդունեց իմ առաջարկով, երբ իմացավ, որ Ակսել Բակունցի հետ որոշել ենք մեր զավակներին դնել Սյունյաց պատմական մեծ դեմքերի անունները, այն ժամանակ, երբ մեր շրջապատում տիրում էին Լենդրուշ, Ռեփկ, Մելս եւ նման անուններ:

Իմ որդու անունը պետք է լիներ, եւ եղավ Բակուր (նահապետ Սյունյաց), Ակսելի որդին՝ Սեադա (իշխան Սյունյաց) եւ մեր մյուս ընկերոջ (Մուշեղի) որդու անունը՝ Անդոկ (նախարար Սյունյաց):

Չարենցը, ծիծաղելով, մի քիչ էլ իրեն հատուկ սարկազմով ասաց. «Դավաձան սյունեցիներիդ մնում է, որ Վասակ անունն էլ դնեք»: Մենք ասացինք որ Վասակ անունն էլ ունենք եւ էլի կլինի: - «Բա ես ի՞նչ դնեմ Աբգար աղայի թոռան անունը: Տղա, իմ տղան կլինի, ձեր տղաները ինչ կլինեն»:

Ակսելն ասաց. «Իր պապի անունը կդնես: Աբգարը պակաս մարդ չի եղել, բավական է, որ քեզ ստեղծել է»: Իսկ ես անմիջապես առաջարկեցի դնել Թաթուլ՝ պատմական հերոս Վանանդեցու անունը:

Երբ պատմեցի Թաթուլի հերոսական կռիվը Տուրղիլ բեկի զորքերի դեմ եւ նրա հերոսաբար զոհվելու պատմությունը, սելջուկ թուրքերի երրորդ արշավանքի ժամանակ, տասնմեկերորդ դարի կեսին, Չարենցը մանուկի պես վեր թռավ եւ հայտարարեց, որ Թաթուլին պիտի նվիրի մի հերոսական պոեմ: Ապա ավելացրեց. «Տո՛ւ, Մոր ջան, մեկ էլ պատմիր, տո՛ւ վաղվանից պետք է հայոց պատմության գրքեր ձարես ինձ հա-

մար: Տո՛ւ, սա էլ ռուսական դպրոցի օգուտը»: Գրքեր ձարեցի, մի երկուսը հանրային գրադարանից, որոնք այնպես էլ մնացին իր մոտ (ինձ վրա պարտք): Հիշում եմ, մեկ օր էլ ասաց, որ պետք է ուսումնասիրի նաեւ վրաց պատմությունը, պատճառաբանելով, որ «մեծ թերություն է անմիջական հարեանների պատմությունը չիմանալը»: Թեեւ նրանց գրականությունը լավ գիտեր: Ես տվի նրան նաեւ այլ գրքեր, դրանց մեջ՝ Էսաձեի գիրքը, որ շատ ուրախացրեց նրան:

Երբ Չարենցն ամուսնացավ տպարանի մեծ հարգանք վայելող վարպետի համեստ դստեր հետ, տրամադրության մեջ որոշ խաղաղություն մտավ: Ուրախալին այն էր, որ շատ շուտով պետք է հայր դառնար: Ըստ երեւոյթին, գուցե գինով վիճակում, ասել էր կնոջը, որ նախ պետք է իր համար աղջիկ բերի, որպեսզի Արփենիկի անունը դնի:

Մեկ օր (1932) Կապույտ մզկիթի բակում, նշանավոր թեյի սեղանի շուրջը նստած, երբ Չարենցը զբաղված էր իր սիրելի ու հարգելի, մզկիթի հոգեւորական պարս-արաբական կրթություն ստացած, պարսիկ մեծ գրողներին բերանացի իմացող, փոքրամարմին Միրզայի հետ զրուցելով, տիկին Իզաբել Չարենցը դիմեց ինձ, տազնապալից ժպիտով, ասելով, որ Չարենցը իրեն սպառնացել է. «Եթե Արփենիկ չբերես ինձ համար, դանակ կքաշեմ վրադ»: Ես դիմեցի կատակի:

Ահա ամառային մի երեկո, 1932թ. հուլիսին, Հովհաննես Հովհաննիսյանի բակի պարզունակ կաֆեում (Կնունյանցի փողոցի վրա) նստած էինք՝ Չարենցը, Հայկ Գյուլիքեժյանը (որի հետ նորից ընդհարվելու պայմանով միառժամանակ հաշտվել էր Չարենցը), բժիշկ Ստեփան Բաղդասարյանը («Արյունոտ անապատ» գրքի հեղինակը) եւ ես: Չարենցը հայր դառնալու սպասողական տազնապալի մեջ էր, մեկ անգամ ձակատագրական վախ ապրած՝ կյանքի հարվածից (Արփենիկի մահով):

Երբ մեր սեղանակիցներից երկուսը տուն գնացին, Չարենցի հետ գնացի լուր իմանալու, կնոջ երկունքի ժամերն էին: Այդ կլինեք զիշերվա մոտ 12-ին: Նա կանչեց բժշկուհուն, որը ասաց, թե ամեն ինչ նորմալ է ընթանում, եւ կազատվի մեկ-երկու ժամից հետո: Չարենցն ասաց. «Բժշկուհի, բայց ամենանորմալն այն կլինի, որ Արփենիկ ունենամ՝ եթե

ասեք աղջիկ է, ես ձեզ կհամբուրեմ»:

Բժշկուհին նման կատակների ժամանակ չունեւ, անմիջապես հեռացավ՝ դուռը ամուր փակելով իր ետեւից:

Չարենցը դարձել էր շատախոս: Մենք իջանք Պողոս-Պետրոս եկեղեցու մոտերը: Նա առաջարկեց բոքիկանալ եւ ոտքերը կախել Աբովյան փողոցով հոսող առվակի մեջ: Հակառակ նման, այն երեկո զիշերային կույր սրնգահար Ասոն «Կուլտուրայի տան» դեմը նստած էր, որի նվազը Չարենցին հանում էր «վերին երկինք»: Այդ ժամանակ նա ապրում էր նորակառուցյալ հյուրանոցում:

Կրկին վերադարձանք լուր իմանալու, նորություն չեղավ: Իմ ընտանիքը Կիրովականում էր, եւ ես առաջարկեցի գնալ ինձ մոտ, մանավանդ որ բնակարանս հեռու էր (այժմյան «Անի» հյուրանոցի բակում - Քաթանյան նրբանցքում): Նա մերժեց, որովհետեւ շատ անհանգիստ էր եւ ավելի անհամբեր դարձած:

Հարցրեց իմ հասցեն, ես ասացի, որ թեեւ Քաթանյան նրբանցքի վերջին ծայրն է, բայց հասցես Պարոնյան 26 է, 5-րդ Անանուն փողոցին չհասած: - «Ահա, այդ էր, որ վերջին իմաստուն հայր՝ Դավիթ Անանունը, - վրա բերեց Չարենցը, - միշտ ծիծաղում էր մեզ վրա եւ ասում «ինձ ֆոնարի սյունից վար ենք բերել, արդեն հազիվ շուրջս եմ լույս տալիս եւ ամեն շուն, նույնիսկ կատու, ոտքը բարձրացնում է վրաս, բայց եւ այնպես Ձեր մեծություններից յուրաքանչյուրի անունով մեկ փողոց է, իսկ իմ անունով 5 փողոց կա Երեւանում, 1-ին Անանուն, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ Անանուն»: Ասաց եւ ծիծաղեց, ցավելով Դավիթի համար:

Մենք դարձյալ գնացինք լուրի, բժշկուհուն կանչեցինք դուրս, որը եկավ եւ ասաց. «Ընկեր Չարենց, աչքներդ լույս, դուք աղջիկ ունեցաք»: «Բժշկուհի ջան, - ասաց Չարենցը, - դե սպասիր քեզ համբուրեմ, իմ կնոջը նման ես, մանավանդ, որ աղջիկ է ծնվել»: Դուռը ծածկվեց, որի ետեւից բժշկուհին ավելացրեց. «Առողջ եւ գեղեցիկ երեխա է»:

- Այ տղա, տես է, ինձնից գեղեցիկ աղջիկ է ծնվել, ուրեմն Չարենցի աղջիկը Արփենիկին է նման:

Չէր ուզում դռնից պոկվել, ուրախությունից վեր-վեր էր թռչում: Բայց քիչ հետո սկսվեց նրա մտատանջությունների շրջանը: Մեղմ, խաղաղ զիշեր էր, լսվում էին աքլորի ձայներ, հարցնում եմ. «Ինչի՞ մասին ես մտածում, Չարենց»: Գլու-

ՎԱՅՈՑ ՄԵՍԵՐԻ ՆԵՏ

խը տարուբերելով նա պատասխանում է. - «Այն մասին, թե մենք մարդ ենք, հայ ենք, հեթանոս ենք, որ այժմ ոչ մի կերպ չենք արտահայտում ծննդի խորհուրդը: Ամեն ժողովուրդ իր ձեռով նշում է այդ: Մերն էլ շատ լավ էր, խորհրդավոր կերպով, մոմերով, աղոթքով, ընկղմելով ջրի մեջ մեռուներ քսելով...»:

Քիչ անց նա հարց տվեց, թե ես իմ չորս տարեկան տղային կնքել եմ, թե ոչ: Գլխիս բացասական շարժումին՝ ասաց.

- Այ տղա, ուրեմն, դու էլ հայ չես: Կիրովականից գան թե չէ, կտանենք Էջմիածին եւ կկնքենք:

Առարկելը հանցանք էր:

Լա շատ գրգռված վիճակում էր, հանկարծ գլուխը բարձրացրեց եւ ասաց.

- Ուրեմն իմ Արփենիկը պիտի մեծանա եւ մի օտար լակոտ պիտի գա՝ առնի:

Ես սխալվեցի եւ ասացի. «Դե, եթե այդպես է, եւ հեռու չես տա, ուրեմն պետք է տնփեսա բերես»: Լա հայիտանք արձակեց տնփեսայի հասցեին եւ կրկին ընկավ մտքերի մեջ:

Քիչ հետո գլուխը բարձրացրեց եւ ասաց.

- Այ տղա, հանկարծ աղջիկս ինձ նմանվի:

- Ավելի լավ, լավ բանաստեղծուի կունենանք:

- Չէ, խոսքս բանաստեղծի մասին չէ, եւ հետո այդ ո՞ր բանաստեղծի զավակն է, որ բանաստեղծ է դարձել: Խոսքս վարքի մասին է, հանկարծ աղջիկս սիրավետ դուրս գա:

Ես զայրացա եւ ասացի, որ նա դեռ երկու ժամ չկա, որ ծնվել է, իսկ դու հիմար բաներ ես մտածում:

- Այ տղա, ճիշտ որ:

Քիչ հետո ավելացրեց, «Ճիշտ է, որ կինը հարուստ է տղամարդուց: Ժողովուրդը ճիշտ է ասում, որ հայրը հարեան է: Դու պատկերացնում ես, թե որքան հարուստ կլինեինք տղամարդիկս, եթե ունենայինք նաեւ մայրական զգացում եւ երկունքի ցավեր քաշեինք»:

Ապա անցավ բնագիտության-դարվիճիկի հարցերին.

«Այ տղա, կարծես թե բնության մեջ իմաստություն կա: Գուցե հենց այդ իմաստությունն էլ հենց ինքը Աստվածն է: Փոքրիկ խալը ինչ բան է, միլիարդ անգամ փոքր բջիջի միջոցով անցնում է ծնողներից զավակին, արի դե բացատրի: Հայլա, հայլա, մարդ իմանար ծնուն-

դի ամբողջ գաղտնիքը»:

Լուսանում էր, եկավ մեր բաժանման պահը, նա դարձավ ինձ եւ ասաց.

- Այ տղա, մեր լակոտների կնունքը չմոռանաս:

Ես ասացի, որ մեր գնայն անհարմար է, ավելի լավ է, այդ հանձնարարենք մեր կանանց, մայրերին, որոնք սիրով կկատարեն այդ պարտականությունը:

Փակագծի մեջ ասեմ, որ մեկ ամիս անց, երբ ես տատիկին ասացի, որ պատրաստվի, Չարենցի զոքանչի հետ երեխաներին կնքելու տանել Էջմիածին, նա զարմանքով դարձավ ինձ եւ ասաց.

- Այ տղա, ճիշտ ես ասում:

Ես հաստատեցի: Լա ասաց, որ ինքը նախանցյալ տարի Էջմիածնում կնքել է մեր երեխային եւ իր ծեր մայրիկին՝ Թամար տատիկին ասել. «Հիմի կարող ես հանգիստ լինել եւ ազատ համբուրել, որովհետեւ ծոռը կնքված է»: Մոտ ինը տասնամյակ ապրած Թամար տատն ասել է, որ ինքը առաջինն է կնքել երեխային, մեկ տարեկան ժամանակ, Ղարաքիլիսայի (Կիրովականի) եկեղեցում:

Երբ ես այդ մասին պատմեցի Չարենցին եւ ասացի, որ իրենք մենակ տանեն իրենց երեխային կնքելու, նա վեր թռավ եւ, ձեռքերը շփելով, ասաց մի առանձին հրձվանքով.

- Հապա, ընկեր պատմաբան, դրա համար եմ ասում, որ բոլոր ժողովուրդները, հատկապես մեր հայ ժողովուրդը, իրենց գոյությամբ եւ ամեն ինչով, նախ եւ առաջ պարտական են կնքը՝ մայրերին: Դու հա ծառ ասա, դու փորձիր ժխտել ազգային սովորությունը, Թամար տատը իր գործը գիտի:

1930-ական թվականներին Պետհրատի բաժնի վարիչ, բարձր ճաշակի եւ մեծ իմացությունների տեր այդ մարդը առանձին ոգետրությամբ, անվերջ խոսում էր այն մասին, որ ինքն իր վարիչի պաշտոնը կարդարացնի այն ժամանակ, երբ կկարողանա հրատարակել արեւմտահայ եւ արեւելահայ դասականների գեթ մեծ մասին:

Ակսելի հետ խոսում էին, որ եթե որեւէ կերպ Աբովյանի սնդուկը բացվի նրա ժառանգների ձեռքով, եւ Աբովյանի գրական ժառանգության՝ երկերի հրատարակության հերթը գա, ապա այդ, Աբովյանի ժառանգների օգնությամբ, պետք է կատարի Ակսելը:

Ալազանին եւ Լորենցին ոգետրում

էր, որ պատրաստեն արեւմտահայ պոեզիայի անթոլոգիան, Վարուժանի, Մեծարեցին եւ այլոց երկերի ժողովածուները եւ այլն:

Մեկ տարի հետո, ես Չարենցին պատմեցի իմ գաղտնիքը, որ՝ 1930 թվականին, որպես թանգարանի աշխատակից եւ թուրքերեն մի քիչ իմացող, ինձ հետաքրքրեց Սայաթ-Նովայի «Դավթարը», որը նայում էին Ստ.Լիսիցյանը եւ Զր.Աձառյանը: Վերջինս բացասական խոսք էր ասել «Դավթարի» մասին եւ հրաժարվել վերձանման փորձերից, ասելով, որ ինքը «չի տքնի անիմաստ խզբզոցների վրա»: Ես Չարենցին ասացի, որ Սայաթ-Նովայի մի ոտանավորը՝ նվիրված սիրածի խային, կարողացել եմ վերձանել եւ թարգմանել: Այդ թարգմանությունը կարդացի նրան, որ այնքան ոգետրեց պոետին, որ նա հրամայական տոնով ասաց.

- Այ տղա, ամեն ինչ թող եւ թուրքերեն, պարսկերեն լավ սովորիր, որ Սայաթ-Նովայի թուրքերեն 100-ից ավելի ոտանավորները վերձանես: Դա միայն բավական է, որ անմահանաս եւ դառնաս երկրորդ Գետրոզ Ախվերդյան, մանավանդ, որ Լավրենտի Բերիան արդեն իր վերջին ելույթով քար գցեց եւ բուշեփզմի պատմության, եւ հայոց պատմության նորագույն շրջանի վրա:

Ես այս վերջինի շատ քիչ մասնագետներից մեկն էի, եւ համալսարանում դրանից բացի ունեի մշակած նաեւ «Անդրկովկասի ու Հայաստանի բուշեփկյան կազմակերպությունների պատմության» դասընթացը, որը կարդում էի պատմության ֆակուլտետում:

Այդ գրույցից երեք-չորս օր առաջ տպարանից բերել էին ինձ «Անդրկովկասի եւ հայ ժողովրդի նոր եւ նորագույն պատմության պրոսպեկտը (17-20-րդ դդ.)» բաղկացած մի քանի տպագրական մամուլից:

Իմ կազմած եւ արդեն տպագրված այդ ընդարձակ ծրագրի նորագույն շրջանի թեգերը զգալի չափով տարբերվում էին Բերիայի թեգերից: Հատկապես Մեսամեդասիի եւ Ստալինի դերի գնահատման շուրջը: Ես ստիպված հայտարարեցի, որ «Սա այլեւս իրավունք չկա լույս ընծայելու, տպագրությունը պետք է ոչնչացնել»: Չարենցը այդ օրինակը վերցրեց, տարավ տուն, ուշադիր կարդաց, եւ հաջորդ առավոտյան ինձ կանչեց իր մոտ ու ասաց.

- Անփոյթ հրատարակ- >> 112

ՆԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՆԵՏ

« 111 ված, տպագրական սխալներով լի այս ծրագիր-պրոսպեկտը իսկական պատմությունն է՝ ազնվորեն գրված, դեռ մի զգալի չափով էլ վրացական մասը եւ Ստալինի դերը մեծացրած, առաջարկում են սրբագրել եւ անմիջապես լույս ընծայել:

Ես պատասխանեցի, որ մենք գործ ունենք Ստալինի անվան եւ դերի հետ, եւ որ Բերիան, ինչպես Ակսելն էր ասում, շուտով դառնալու է երկրորդ դեմքը մեր երկրում, որ նա այդ նույն զեկուցումը անշուշտ կարդացել է ոչ առանց Ստալինի եւ Քաղբյուրոյի գիտության, ուստի ես չեմ համարձակվի այս բրոշյուրով (թեեւ համոզված եմ, որ ավելի ճշմարիտ է), դուրս գալ նրանց դեմ: Չարենցը բրոշյուրը ձեռքի մեջ թափահարելով, դառն հեզանքով ու գայրոյթով ասաց՝ «վախկոտ հայ», որից ես այնքան վիրավորվեցի, որ մի առ ժամանակ դադարեցի նրան բարեւել:

Մեզ հաշտեցրեց Ակսել Բակունցը, միանգամայն ծիծաղի դնելով ընդհարումը եւ արդարացնելով ինձ: Նա նույնիսկ ասաց, որ «իսկի Լենինն ու Ջերժինսկին չէին հանդգնի դուրս գալ Բերիայի դեմ, եթե ողջ լինեին: Դրանով ոչ միայն կկործանենք մեր Մորուսին, այլեւ մի թանձր ստվեր կնետենք Յասաստանի ղեկավարության եւ նույնիսկ հայ ժողովրդի վրա: Միթե դու կարծում ես, թե այս զեկուցումը հենց Բերիայինն է, դա Բերիայի բերանով Ստալինի զեկուցումն է» - վերջացրեց Ակսելը:

Այդ ժամանակներում ես ի մի էի հավաքել իմ՝ մինչ 1924թ. գրած չափածո գործերը, մեքենագրել եւ մեկ օր համարձակվեցի չառարկել Չարենցին, եւ այդ թղթապանակը հանձնեցի նրան: Մի քանի օրից հետո նա եկավ իմ գրասենյակը, խորհրդավոր ժպիտով, թղթապանակը բացեց եւ քառասուներկու կտոր ոտանավորներ մի տասը քառյակի հետ անջատած, ցույց տվեց, որ ընտրել է շատերից՝ մի փոքր բրոշյուրի համար: Ես առարկեցի, որ միթե ամոթ չի լինի, տասը տարի հետո, այս թույլ բաները հրատարակ հանել: Ի՞նչ ասելու համար: Նա շատ լուրջ հնչեցրանգով առարկեց.

«Ճիշտ է, նոր խոսք գրեթե չկա ասված, ոչ էլ նոր ձեւ կա (բացի մեկից՝ «Ախ, իմ ձի»), բայց սա մեր գրական հոսանքների պատմության, ժամանակի քաղաքական տրամադրությունների պատմության համար պետք է: Այն տա-

րիներին (1917-1921թթ.) հայ գրական բանակում, չհաշված քիչ բացառությունները, մեր պոեզիայի մեջ գեթ իշխում էին հոսահատությունը, լավան տրամադրությունը, մեռնող սիրո մոտիվների հետ, փոքր բացառություն էր կազմում Վեսպերը հենց այդ տեսակետից «սիմպոմատիզմի» (ախտածանաչող) բաներ են այս քո ստիխները»:

Նրան շատ դուր էր եկել Գորիսում գրված իմ չափածո խոսքը (1924թ. մայիսի 2-ին)՝ դիմած մի հին հայկական հուշարձանի (Յարժիսի կարավանատան), թե ինչ ուժ է այսքան դարեր պահպանել քեզ այդքան ամուր եւ ով է կառուցել քեզ: Մուտքի արձանագրությունը պատասխանում է՝ «Օրբեյան»: Բայց հանկարծ պատերից լսվում են ձայներ. «Մտու է, մենք ենք կառուցողն այս կուռ շենքի՝

Հագար ու բյուր անանուն ճորտ, շինական, Եվ բանելիս կոր քրտնաթոր մեր մեջքին Միշտ իջել է իշխանական խարազան»:

Ես ասացի, որ այդ գրված է հենց իր՝ Չարենցի խիստ ազդեցության տակ, գրեթե նրա բառերով, դրա համար էլ հաջող է ստացվել: Նա մնաց անդրդվելի: Իմ մեջ հետզհետե առաջ եկավ մարդկային թուլություն եւ համարյա համաձայնվում էի, բայց ինչ լավ էր, որ այդ խանգարեց Ակսելը, ասելով, որ «տասը տարի առաջ եթե լույս տեսնեին դրանք, գուցե օգտակար լինեին երիտասարդ հեղինակի համար, իսկ այժմ, երբ հեղինակը գերազանցել է դրանց եւ այլ ասպարեզում ճանաչում գտել, անմիտ բան կլինի ուղացած հրապարակ հանել դրանք»: Չարենցը օրինակ բերեց վերը նշված չորս տողը: Բակունցը ծիծաղելով ասաց, որ «քո պատմած, Պուշկինի օրինակով, այդ չորս տողը խցկի քո գործերից մեկի մեջ, որպես Մ-ից հիշատակ»: Չարենցը եւս ծիծաղեց, գլուխը տարուբերելով: Ես ազատվեցի եւ փրկվեցի հետագա զավեշտից:

Չարենցի համար շատ բնորոշ էր, որ իսպառ չէր հաշտվում անհամարձակության հետ, ատում էր եւ ամոթխածությունը, ինքը լինելով այնքան հոգատար, անմիջական ընկեր եւ «հասարակ մարդ»:

1934թ. աշնան էր, թե 1935թ. գարնանը, ինձ հայտնեցին, որ պրոֆ. Յակոբ Մանանդյանի հետ, ժամը 12-ին պետք է լինենք Կենտկոմի քարտուղար Աղասի հանջյանի բնակարանում՝

Յրագրային ափին: Կենտկոմի ավտոն մեզ տեղ հասցրեց հինգ-տասը ռուպե կանուխ: Միջանցքում հանդիպեց Եղիշե Չարենցը, որ դուրս էր գալիս Խանջյանի բնակարանից: Նա հանկարծ կանգ առավ, բարեւեց, անցավ, բայց անմիջապես ետ դարձավ եւ ուղղակի դիմեց ինձ: Բուպեների ժամանակ էր.

«Բան ջան, Մոր ջան, գիտեք, Աղասին հիվանդ պառկած է, եւ ձեզ իր մոտ հրավիրելը, Ստալինի, Կիրովի, Ժդանովի կոմիսիայի արձագանքն է, պետք է դպրոցներում մտցնել պատմություն առարկան, նաեւ՝ հայոց պատմություն, իսկական պատմություն: Իսկ դուք երկուսով այդ գործի հիմքն եք դնելու՝ ռուսերեն հակիրճ հայոց պատմություն գրելով, Մոսկվայում շտապ տպելու համար, պատվով կատարեք: Ես վստահ եմ ընկեր Մանանդյանի վրա, որպես պրինցիպալիզի գիտնականի, բայց դու, Մոր ջան, պետք է նկատի ունենաս եւ տակից դուրս գաս, տես հա՛, մեծ պատիվ է, որ Աղասին այդ բարձր պատասխանատու գործը ձեզ է հանձնարարում եւ քեզ դնում պրոֆեսոր Մանանդյանի կողքին, նոր պատմության բաժինը գրելու համար: Այնպես գրեք, որ չդառնա գլխալի ու որբի պատմություն: Ինչ կա՝ հենց այն էլ գրեք, մենք սուտ խոսելու՝ հորինելու պատճառ չունենք, եղածի ճշմարիտ կեսն էլ գրենք, պատիվ է մեզ համար: Սկիզբը լավ գրեք, հատկապես չլինի թե այնպես ստացվի, որ թուրք փաշան ու բեկը ավելի լավ են եղել հայ գյուղացու համար, քան հայ իշխանն ու վարդապետը: Յաջողություն»:

Վերջին նախադասությունը արձագանք էր Յակոբ Զորյանի մի ձախորդ հողվածի եւ դասախոսության եւ այդ առթիվ Ակսել Բակունցի ցատումով գրված հանդիմանության:

Գրականության հարցերին նվիրված մի երկու նշանավոր դեպք կիիշեմ միայն, մեկը Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում, իսկ մյուսը՝ Գորդնեի միությանը պատկանող դահլիճում (Կուլտուրայի տուն, հրապարակի վրա):

Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում Եղիշե Չարենցը բարձր ոգետրությամբ, ազատ ու անկաշկանդ, առանց հակիրճ շարադրանքի, աննկատելի կաղալով, քայլելով խոսում էր գրականության եւ նոր կյանքի մասին, սոցիալիստական նոր շինարարության, հատկապես՝ գյու-

ՂԱՅՈՑ ՄԵՍԵՐԻ ԴԵՏ

ղական շինարարության մասին: Թեեև թեման ավելի նեղ սահմանների մեջ էր եւ վերաբերում էր այդ ժամանակի գրական նորոյթներին, բայց ավելի շատ ծանրացավ Նաիրի Զարյանի նոր լույս տեսած «Ռուշանի քարափը» պոեմի վրա:

Որպեսզի ապացուցի գրողի լեզվի ու պատկերների, ամենքին համոզող, գրավող, բոլորի հոգուն եւ մտքին հասնող պարզ, բնական ոճի մասին, որպես օրինակ դիմեց «հանձարեղ լռեցուն»՝ Յովհաննես Թումանյանին, անգիր արտասանելով, մինչ այդ շատերի համար աննշան թվացող, 1918 թվականի նրա մի ոտանավորը, «Պատրանք» վերնագրով.

*Վեր է կացել էն սարում
Մեր Չալակը իր թեւից.
Գնում է մութ անտառում,
Քաջ ախպերս ետեւից:*

*Չրնգում են նրանք խոր
Էն անտառում կուսական,
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թվում է, թե կգան...*

*Չուր, վաղուց են, ախ, նրանք
Մեր սարերից գնացել.
Էն գիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մնացել...*

«Լսում եք, տեսնում եք, այսքան պարզ պատկերը, այսպես պարզ կգրեն, որ թվա, թե տեսնում ես նաեւ այժու»:
Այս բառերով վերջացրեց իր արտասանությունը Զարենցը:

Սակայն դա հիշում գտնվողների մեծ մասի համար ամենազարմանալին այն էր, որ մինչ այդ Նաիրի Զարյանից դժգոհ, նրան հայհոյող, նրա հետ խռով ու կրկնակին Նաիրի Զարյանից ստացած, մեծ պոետը այդ նույն Նաիրու, հատկապես նոր լույս տեսած «Ռուշանի քարափը» պոեմը երկինք էր բարձրացնում, ոգետրվում եւ օրինակ հայտարարում բոլոր մյուս գրողների համար:

Ստոիկները շատ էլ չէին զարմանում, որովհետեւ մի քանի տարի դրանից առաջ, որպես իսկական գրող, օրինակ բերում էր տպարանի բանվոր-պոետ Վահան Գրիգորյանին, եւ ինքն իրեն ասում, «կարող ես գրել Վահանի նման...»:

Վերջում, իհարկե, հարցեր եղան, որոնց նա պատասխանում էր ավելի անկեղծ, ավելի վարպետությամբ, ավելի սրամիտ: Զարցերից մեկն էլ վերա-

բերում էր իր եւ Նաիրիի միջեւ եղած թշնամանքին: Նա պատասխանեց, «ճշմարտության համար անձնական գոտիություններն ու հարաբերությունները ոչ մի նշանակություն չպետք է ունենան», եւ բացականչեց. «Բա՛, դուք էլ այդպես լավ գրեք, ձեզ էլ գովեմ»:

Նրա այս վերջին պատասխանից փորձեց օգտվել Զարենցին գաղափարական չարչարանքի ենթարկող ու ենթարկած, ավելի վերացական մարքսիզմի սկզբունքներին կառչած, կարծեմ նախագահող կամ նախագահության կազմում գտնվող, այն ժամանակի փիլիսոփայական հարցերի գլխավոր տեսաբան, մեր բարի Գրույին՝ Յայկ Գրույիքեւյանը: Վերջինս ասաց, որ ինքն էլ այդպես է նայում Զարենցին, նրա հաջողած ստեղծագործությունների եւ նման հիանալի դասախոսության համար եւ ցանկանում է վերականգնել իր նախկին բարեկամությունը:

Զարենցը, ստորին շուրթի ծանոթ շարժումով, ողջ դա հիշի՞մ համար տեսանելի ձեռով, գլխով ու ձեռքերով իր բացասական վերաբերմունքը դրսևորեց՝ հաշտվելու առիթ չտեսնելով:

Երկրորդ ժողովը տեղի ունեցավ Գրողների տանը, անշուշտ, 1933թ., որովհետեւ Գառնիկ Ղազարյանի անտակտ ռեպրիկային Զարենցը մեծ զայրույթով նախ հասկացրեց, որ Գառնիկի անտեսանելի վաստակը նրան իրավունք չի տալիս նման ամբարտավան ռեպրիկայի, որ ինքը (Զարենցը) կարող է այդպես ասել իր մասին, իր գրական վաստակի մասին, եւ այդ իրավունքը տալիս է իր արդեն քսանամյա գրական գործունեությունը: Այդ օրը փոխանակ վերածելու նրա վաստակի 20-ամյակ նշելու օրվան, ընդհակառակը դարձրին կտտանքի օր:

Նախորդ զեկուցման նման եւ էլ առավել, այստեղ փայլատակեց ոչ միայն Զարենցի գրական տաղանդը, այլեւ գրականագետի, փիլիսոփայի, մտավորականի ուժը:

Զարտուղի կերպով այս կամ այն ելույթ ունեցողին երբեմն պատասխանում էր մեկ նախադասությամբ կամ մեկ-երկու բառով: Ամենից ամբարտավան ելույթը Զարենցի դեմ, այն էլ վերամբարձ, խրատական ձայներանգով, մասնավորապես ազգային հարցի եւ պրոլետարական հեղափոխության հարցի շուրջ, ունեցավ երիտասարդ փիլիսոփա Վահան Մարտիրոսյա-

նը (Մարտյան): Զարենցը նրան պատասխանեց այնպիսի տեսական կարողությամբ եւ այնպիսի ջախջախիչ օրինակներով ու փաստերով, որ հանդիսականներին մեծ հիացմունք պատճառեց:

Շատ ավելի գեղեցիկ ընթացավ ռուս եւ ուկրաինացի գրողների հետ հանդիպման օրը, Կուլտուրայի տան (Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճ) լեփ-լեցուն դահլիճում: Զարենցը հանգիստ էր, փայլում էր, հատկապես, երբ անմիջապես թարգմանեց հայերեն ուկրաինացի մեծ գրող, նաեւ հայագետ Պավլո Տիչինայի «Ուկրաինայի հովը (թե քամին)» բանաստեղծությունը, եւ ինքն էլ կարդաց այն:

Երեսունական թվականները կիսվում էին, հետզհետե օրը թանձրանում էր, եւ օղակը նեղանում, պրկվում: Բոլոր մարդիկ ներքին, մի տեսակ անորոշ, ծանր սպասելիքի մեջ, զգուշավոր քայլերով էին շարժվում, վախեցածի հայացքով հանդիպում իրար: Սկսում էին քիչ խոսել ու խուսափել իրար հետ տեսնվելուց: Առանձին եռանդ էին ցուցաբերում 1929 թվականից հատուկ դաստիարակվող բազմաթիվ մանր հացկատակներ, էգոիստ-կարիերիստներ: Սրանք ժողովներում գոռում-գոչում էին եւ կատաղության փսիլներով լեցուն հողվածներով զգոնության քարոզներ կարդում: Զերթով վարկաբեկելով գրեթե բոլոր ծանաչված, հարգված, վաստակած եւ օգտակար մարդկանց, նույնիսկ առաջին հարվածը հասնում էր հենց ինն բոլշեփիկներին:

Զարենցի մեջ որոշ հիասթափության տարր զգացի դեռեա 1928թ. գարնանը, երբ Յայկ Յովսեփյանին (որ կարճ ժամանակ, բայց միշտ մնաց անգույն ղեկավար) եւ նրանից անկախ, նրա շուրջը մնացած, ինն՝ «սպեցիֆիկյան» անարդար անունով կնքված կադրերին փոխարինելու եկան նորերը: Սրանք մի մասով դարձյալ Երեսանից էին (ես էլ մեջները), հատկապես՝ Թիֆլիսից մեծ մասամբ կարիերիստ-նիհիլիստ, ավելի երիտասարդ մարդիկ: Առաջին քարտուղար եկավ, թափով, շքեղ գործիչ Յայկա Կոստանյանը, իսկ երկրորդ քարտուղար՝ Լենինգրադից բերին (անձամբ Ստալինի միջոցով) Աղասի Խանջյանին:

Մեկ օր Զարենցը հարց տվեց մեզ, թե՛ «Տղերք, այս » 114

ՆԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՆԵՏ

« 113 *ինչ վերնահարկային հեղաշրջում կատարվեց Երեանում*»:

Ակսելը, ծիծաղելով, պատասխանեց. «Ընկերպարոն Յոսեֆը (Գետրոյան ծննդանունի վերականգնում) տապալվեց, եւ ընկերպարոն Սիմակը (Ներսիսյան դպրոցի վերականգնում) հաղթեց»։ Իհարկե, Չարենցին չէր կարող բավարարել այդ կեղեցիկի պատասխանը, նա ուզում էր թափանցել էության մեջ եւ հասկացնում էր, որ դա Թիֆլիսից կազմակերպվող բան է։ Ես ինքս էլ շատ հիասթափված էի եւ Չարենցի հետ համամիտ։ Նա շատ զայրացած էր, հատկապես, որ գրաքննիչ նշանակված Ազատ Վշտունին արգելել էր «Կոմիտաս» հրատարակել, որպես վարդապետի։ Չարենցը շուրջ երկու ամիս չգնաց Յայկազ Կոստանյանին տեսնելու։ Վերջապես, երբ հանդիպել էին, եւ Յայկազ Կոստանյանը հարցրել էր, թե ինչ կարծիքի է սովետահայ մեծ գրողը կատարված փոփոխության մասին, Չարենցը կարծ պատասխանել էր, թե՛ «Ընկեր Յայկազ, ճիշտն ասած, մինչեւ հիմա էլ չհասկացա, թե ո՞վ ում վրա էր եւ ինչի համար»։ Քարտուղարը շատ զարմացել եւ նեղացել էր, ինչպես ասաց՝ «Ինքը քրտնել էր Չարենցի փոխարեն»։ Բայց 1929 թվականից մինչեւ 1936 թվականը, Չարենցը շարունակում էր ստեղծագործել, թե՛ 1935թ. վերջից եւ 1936-ին առավել անհանգիստ եւ ջղային վիճակ էր ապրում, բայց եւ այնպես, գրեթե նախորդ երկու տարիների նման, լցված էր ստեղծագործական ավյունով։

Մեծ չափով ենթագիտակցաբար, եւ ընդհանրապես նկատվող այդ օրերին դեռեա անհայտ, անորոշ մթնոլորտը, տազնապի մեջ էր պահում հատկապես դյուրազգաց Չարենցին։ Ստեղծագործական մեծ երկունքի մեջ, նա հաճախ թպրտում էր իր գտած ու մշակած համոզումների եւ կասկածելի, նույնիսկ չարագուշակ ուրվագծերով հանդես եկող իրականության միջեւ։ Պետք է խոստովանել, որ ընդհանուր իրականության թանձրացող մթնոլորտը, գուցե Լենինգրադից հետո, ուժեղ եւ կրկնակի ձեռով, իր խիստ արտահայտությունն էր գտնում Յայաստանում-Երեանում։ «Մեզ մոտ շատ են ջերմեռանդ ջարդարարները», - ասում էր Չարենցը, եւ նա իրավացի էր։ Այդ ոգով զարգանալով, գրեթե անընդմեջ շարունակվեց շուրջ քսան տարի եւ մեծամեծ չարիքների ու հավելյալ կորուստների պատճառ դար-

ձավ։

Շատ մեծ աղմուկ բարձրացավ Չարենցի վերջին գրքի լույս տեսնելու շուրջը («Գիրք ճանապարհի»)։ Մի գիրք, որի նմանը չէր տեսել հայ գրականության պատմությունը, գուցե Նարեկից հետո (որ նախապես, զարմանքով պիտի հնչած լիներ միայն երկու-երեք վանքի խուցերի մեջ)։ Իր օրիգինալությամբ, շոշափած շիտակ ու վիճելի հարցերով ու նորություններով, մերժելի եւ ընդունելի դրույթներով «Գիրք ճանապարհի»-ն բացառիկ երեւոյթ էր, այն էլ այնքան լարված ժամանակներում։ Ամենավիճելի եւ սարսափելի հարցը այս գրքի մեջ տեղ գտած երկարաշունչ, կիսաթատերայնացված երկխոսությունն էր, որը վերաբերում էր այլ անուններով հանդես եկող Ստալինի եւ Տրոցկու վեճերին ու պայքարին։ Հիմնականում դրա պատճառով գիրքը շուրջ չհանվեց, որ առանց այն էլ դանդաղ տպագրվեց՝ իր բովանդակությանն արժանի, Յակոբ Կոջոյանի, նույնպես օրիգինալ նկարագրողով։ Կենտրոնը եւ մի այլ հիմնարկ, կուսակառուցի հետ, գրեթե երկու ամիս մեծ մասամբ այդ հարցով էին զբաղված ու մտահոգված։ Երկխոսությունը թարգմանվեց ռուսերեն (կարծեմ Տիգրան Յախույանի միջոցով) եւ ուղարկվեց անձամբ Ստալինին։ Վերջինս կարդացել էր եւ դատապարտելի ոչինչ չէր գտել դրա մեջ։ Ինչպես ինձ ասաց Չարենցը. «Այդ հարցում ամենախելոքը, ամենազգոն մարդն էր եղել ինքը՝ Ստալինը»։ Բայց եւ այնպես մեզ մոտ համառոտ էին եւ կարողացան, գուցե Կենտկոմի համաձայնությամբ, գրքից հանել տալ այդ հատվածը։ Չարենցը հարկադրված եղավ այդ ահագին էջերի տեղը լրացնել գրքի տպագրությունից մեկ տարի հետո գրված զանազան չափածո գործերով։ Այրած գրքի մի օրինակը պահվում էր նաեւ ինձ մոտ։

Այդ օրերին լուրջ վեճ ունեցա Չարենցի հետ՝ նորոգված գրքի մեջ անփոփոխ տեղ գտած «Պատմության քառուղիներով» պատմական պոեմի, հատկապես նրա առաջին կեսի եւ վերջաբանի շուրջ։ Ես նրան դիտողություն արի, որ իրավունք չունեի, թեկուզ «ոչ պղնձյա գայլի» տեր, երկրի բոլոր էպոսաների բոլոր ղեկավար դասերին եւ ղեկավար անհատներին հավասարեցնել հողին ու մոխրին, որ այդ միայն հուզված ու հիասթափված մարդու ընդվզում է, այն

էլ խորին ազգային պարտության ու կրած ազգային վիրավորանքի պարագաներում։ Չարենցը առաջին անգամ էր լրջացած ուշադրությամբ ունկնդրում գրեթե առանց առարկության եւ առաջին անգամն էր, որ նա չխռովեց ինձնից։

Երկրի շինարարական կյանքը ապրում էր եռուզեռ ու վերելք 1932-1933 թվականների տնտեսական ծանր տարիներից հետո։ Խանջանը բացառիկ գրասեր, կրթված հայ գործիչ էր, հատուկ զբաղվում, գլխավորում էր գրականության եւ արվեստի կյանքը։ Լուսավորության եւ գիտության գործը հանձնվել էր մի ասպետ կոմունիստի, որպիսին էր Ներսիկ Ստեփանյանը։ Բայց խմորումներն ու հսկողությունը ուժեղանում էին։ Աղասի Խանջանի մի քանի օրով բացակայության ժամանակ քաղաքի ակտիվի մեծ մասը, բերիական զսպանակների շարժումով, Խանջանին տապալելու մի հապճեպ փորձ կատարեց եւ երրորդ օրը տապալվեց։ Երկու օրում իրարամերժ բանաձեւ ընդունեց Երեանի ակտիվը։ Խանջանի գալուց հետո անմիջապես աղմկարար որոշ կարգեր հեռացվեցին աշխատանքից։ Ես էլ մի քիչ ծեծվել էի նրանց կողմից (Յայաստանի բնակավայրերի անունները վերականգնելուն, հայացնելուն մասնակցելու համար)։ Չարենցը հանդիպեց. «Մոր ջան, մի կտոր էլ դիպավ քո պոչին, բայց սկսվել է Խանջանին տապալելու փորձ անող անփոխան (անվարտիք, խմբ.) չար մանուկների կտորածը, ես դրանց...»։

Վերջանում էր 1935 թվականը, Յայաստանը պետք է տոներ խորհրդային կարգերի հաստատման 15-ամյակը, ավելի մեծ շուքով, քան՝ 10-ամյակն էր։ Սահակ Տեր-Գաբրիելյանը եւ Աղասի Խանջանը, ինչպես ասում են, արդեն մերվել էին երկրին եւ մեծ ժողովրդակա-նություն էին ձեռք բերել ամենուր։

Յայաստանի պատվիրակությունը մեկ ամիս ուշացումով ընդունվեց Կրեմլում։ Այդ տասնյակ մարդկանց մեջ չկար այն մարդը, որ պետք է առաջինը լիներ՝ չկար Չարենցը։ Յայ գրականությունը ներկայացնում էր մի այլ գրող, Սիմոն Յակոբյանի հետ։ Այդ դաժան ընտրությունը շատ էր ազդել Չարենցի վրա։ Մեր մեկ հանդիպման ընթացքում՝ 1936թ. հունվարյան տոներին, նա գլուխը տարուբերելով ասաց ռուսերեն. «Տեսա՞ր, ինչ արեցին մեր «ուրախ տղաները»»։

ՎԱՅՈՑ ՄԵՍԵՐԻ ՆԵՏ

Անշուշտ նա մխիթարված էր, որ Ստալինը՝ պատվիրակության, Ստեփան Զորյանի խոսքի մեջ մի հարց էր տվել. «*Ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը*»: «*Լավ է*»: «*Բայց ասում են, թե նրան նեղացնում են*»: Այսպիսի ուշադրության, իր կենդանության ժամանակ ոչ մի գրող չէր արժանացել Ստալինի կողմից, եւ այդ մեծ մխիթարանք էր Չարենցի համար, որից հետո «ուրախ տղաների» եւ չարությանը ու նախանձով լցված այլոց վերաբերմունքը զգալի չափով փոխվեց հանդեպ Չարենցի:

Ստուցավ 1936թ. գարունը: Սփյուռքահայ ներգաղթողները Փարիզից բերել էին Կոմիտասի դագաղը՝ զմռսած աճյունով: Դագաղը երկար ժամանակ անտիրական մնացել էր անջատված վագոնում՝ Նավթուղ կայարանում: Եվ դագաղը բերող ներգաղթող հայերը, եւ ընդունելու պատրաստ Երեւանը կրակի մեջ էին մնացել: Ոչ կարողանում էին համարձակորեն փոխադրել Երեւան, ոչ էլ կարող էին թողնել Նավթուղ կայարանում (Վրաստանում):

Վերջապես, մայիսի 28-ին, Կոմիտասի դագաղը դրվեց Երեւանի Կուլտուրայի տան դահլիճում (այժմյան Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում): Քիչ մարդ չգնաց հրաժեշտ տալու վաղուց մեռած Կոմիտասի աճյունին, որի դեմքը ծածկված էր հաստ ապակիով:

Թափորը շարժվեց դեպի գերեզմանատուն (այժմ՝ Կոմիտասի այգի):

Ուղեւորվեցինք ուրիշ ճանապարհով՝ Սպանդարյան փողոցով մինչեւ արդի Լենինի պողոտա, որի դեպի Մասիսը նայող, աջ անկյան տան մեջ ապրում էր Եղիշե Չարենցը: Այդ օրերին նա գրեթե ինքնակամ տնային բանտարկության էր ենթարկել իրեն: Շատ քիչ էր դուրս գալիս փողոց: Թափորը, երբ հասավ այն ժամանակվա Սունդուկյանի փողոց (Լենինի պողոտա), Չարենցը դուրս եկավ պատշգամբ (մի քանիսս գիտեինք, որ նա այդ ժամանակ պոեմ էր գրում Կոմիտասի մասին) եւ անձայն հայացքով ուղեկցեց թափորը: Երկու անմահ հայ մեծություններ հանդիպեցին իրար, մեկը՝ ձեռքերի վրա որպես դրոշ՝ վաղուց կրկնակի մեռած, մյուսը բոցաշունչ հրաբուխ, որ պետք է հաջորդ սեւ տարում մեռներ, փոքրիկ մարմնով, անպարփակելի մեծ շնչով՝ եւ անթափոր, անհայտ, գողունի հորվեր Արարատյան դաշտի անհայտ մի փոսում:

Կոմիտասի դին տանող թափորը

հավվում էր գարնան ձյունի պես: Զորս-հինգ տասնյակ մարդ հազիվ հասանք գերեզմանատուն, եւ այնտեղ, կարճատեւ ելույթներից հետո սկսվեց իսկական, Կոմիտասին արժանի, թաղման արարողությունը: Այնքան քիչ մարդ կար այնտեղ, որ Էդվարդ Խոջիկը մոտեցավ ինձ, եւ չգուպելով հին՝ ազնիվ ժամանակի ցատումը, ասաց.

- Այս ի՞նչ ենք անում:

Ես սառը պատասխանեցի, որ «Կոմիտաս ենք թաղում»: Նա աչքերն արցունքոտ ավելացրեց. «Ո՛հ, հորում ենք, նա այսպե՛ս պետք է թաղվեր, Արարատի, Էջմիածնի ու Երեւանի շուքի տակ եւ Զրազդանի ափին»:

Քիչ հետո ամբիոն բարձրացավ, ոմանց կողմից չսիրված, բայց բոլորի կողմից գնահատված Հայկանուշ Դանիելյանը: Նա երգում էր ժողովրդական հայտնի երգը՝ «*Չինար ես, կռանալ մի, մեր դռներն հեռանալ մի, յար, յար*»: Որտեղից որտեղ, այդ արեւ գարնան օրը, մի կտոր ամպ եկավ եւ մեր գլխի վերեւ անձրեւ տեղաց, խառնվելով երգին ու առատ արցունքների:

Մենք չգիտեինք, որ Թիֆլիսի հայ վաճառականի դուստրը, քաղքենի ենթադրված Հայկանուշը, այդքան հայ է: Նրա աչքերից առատորեն հոսում էին արցունքները, բայց նա երգում էր... Դա ներկաներիս եւ Կոմիտաս ողբացող ժողովրդի հարազատ ողբն էր՝ երգ ու անձրեւ դարձած: Երեւի այդպես էր մեզ ճանապարհելի լուռ Չարենցը: Իսկ Հայկանուշ Դանիելյանը ապացուցեց իր հայեցի ավագանը եւ սարսափ ապրող ներկաներիս կրկին կնքեց իր սրբազան ձայնով ու արցունքով:

...Արդեն ուշ էր, 1936 թվականն էր գալիս, որ ամբողջ չարագուշակ նշանդրեքի կերպարանքով, որպես ահավոր հարսանիքի նախադրու գրեթե սկսվելով Հայաստանից: Ձերբակալվեց Ներսիկ Ստեփանյանը իր չարաբաստիկ օրագրով, որի մեջ Բերիային համեմատել էր Սուլթան Համիդի հետ, կոչելով՝ «Սուլթան Համիդ 3-րդ»։ Հետապնդվեցին նրա մերձավոր բարեկամ-ընկերները: Չարենցը շատ մտահոգ էր նման փաստերի հետեւանքների համար, բայց հպարտ էր Ներսիկ Ստեփանյանի առնական կեցվածքով:

Տեղի ունեցավ Աղասի Խանջյանի անսպասելի ինքնասպանությունը՝ Թիֆլիսում, 1936-ի հուլիսի 9-ին: Թիֆլիս գնալու նախորդ երեկոյան Խանջյանն

ինձ կանչել էր Կենտկոմ: Նա հայտնեց, որ մեծ ուշադրությամբ կարդացել էր երկարաշունչ նամակ-դիմումը, որի մեջ շոշափված էին մեր գրականության, գիտության, պատմագրության հարցերը, նրանց արդի վիճակն ու անելիքները (15- 20 էջ): Ասաց, որ երեք-չորս օր հետո կվերադառնա Թիֆլիսից եւ «մանրամասն կխոսենք այդ հարցերի շուրջը»: Չվերադարձավ, թեեւ ինքնասպանության տրամադրություն ի սպառ չունեց: Խանջյանի չարաբեր դեպքից, բուռն ամբոխային թաղումից եւ Բերիայի ջարդարարական հողվածից հետո («հողմացրիվ» անելու կոչով), ամեն ինչ շրջվեց Հայաստանում, մասնավորապես՝ Երեւանում: Չարենցն Աղասի Խանջյանին՝ «հանձարեղ վանեցուն» շատ էր սիրում, անշուշտ՝ փոխադարձաբար: Նրա մահը ծանր տպավորություն թողեց Չարենցի վրա: Այդ օրերին հանդիպեցինք, եւ նա ասաց, «*արյունայի դեպքեր են սկսվել, իսկ մեզ մոտ էլ սրիկաները փոխանակ ջուր առնեն ձեռքները, մագութի բայուններ են առել, որ բորբոքեն*»: Նա ցավով ու մեծ ափսոսանքով հիշեց Խանջյանին: Հիշեց, որ Խանջյանը ոչ շատ առաջ իրեն հանդիպել է եւ մեծ գովեստով խոսել իմ նամակի մասին, ասելով, որ նման նամակ չի ստացել դեռ ոչ ոքից: Նա ափսոսել է, որ ինձ ուշ է ձանաչել՝ իմ բնավորության պատճառով: Այսքանը ասելով, Չարենցն իր կողմից ավելացրեց, որ ինքն էլ ափսոսում է, որ ինձ իսկականից նոր է ձանաչում, որ ես երբեք իր տունը չեմ տեսել եւ իր կարիքը չեմ զգացել: «*Քո մասին, - շարունակեց նա, - նույն կարծիքն են հայտնել միշտ Ակսելը, Ներսիկը, Գուրգենը (Վանանդեցին) եւ Չուբար Գրիգորը, իսկ ես նոր եմ ձանաչում*»: Ես ընդարմացած վիճակում էի եւ գրեթե խոսելիք չունեի: Միայն զգացի, որ Չարենցը առաջին անգամ ինձ նայում է որպես ողջամիտ, հարազատ բարեկամի, որից հետո հազիվ երկու անգամ կարողացանք հանդիպել իրար եւ գրույց ունենալ: Հերթով ձերբակալվում էին գրական եւ գիտական դեմքեր, գործիչներ:

1936-ի աշնանը փողոցում հանդիպեցինք (ունիվերսիտետի անկյունում). նա խիստ մտահոգ, կարծես զգուշացման նպատակով, իր խոսքն սկսեց հետեւյալ հակիրճ բառերով. «*Չարմանայի տարի է, մի տես, ինչքան դեպքեր տեղի ունեցան այս տարի, »* 116

ՆԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՆԵՏ

« 115 Աղասին ինքնասպան եղավ, Թամանյանը մեռավ, Մաքսիմ Գորկին մեռավ, տղերքը գնացին, դեռ ինչեր կարող է լինել, չարագուշակ տարրի է երեսում. Ավոն գա, տեսնենք ինչ է պատմում: Ես այժմ գրեթե ընկեր չունեմ, մենակի նման եմ եւ գուցե այդպես են շատ շատերը կամ բոլորը» - ասաց, որ երեխաների գոյությունը մեծ մխիթարություն է, ամեն օր ու ժամ թարմացնում են իրեն, ասաց, որ ինքը այնուամենայնիվ չի հուսահատվում, որ համարյա նույն թափով շարունակում է գրել, համոզված, որ մի օր այս «արժիճե սեւ ամպը պետք է ցրվի եւ օդը պարզի ձղակոտոր անող կարկուտից հետո»:

Այսպես, մոտ տասնչորս տարի պետք եղավ, որ մենք մոտենայինք իրար, որպեսզի մեր կամքից անկախ, շուտով բաժանվեինք՝ ընդմիջտ:

Ե կավ անկայուն եւ դաժան 37-ը, ամեն օր ու շաբաթ, ամեն ամիս ու եռամսյակ երկինքը փոփ էր գալիս, հատկապես պիտանի մարդկանց գլխին, առանց որեւէ խտրության առաջին հերթին նրանց գլխին, ովքեր տքնել եւ արյուն էին թափել, իրենց միտքն ու նյարդերը ներդրել խորհրդային կարգերի համար եւ նրա տնտեսական ու կուլտուրական շինարարության համար:

Առավոտը ժխտում էր անցած երեկոն: Զգայուն Չարենցը ավելի լավ էր տեսնում եւ զգում այս ամենը: Բայց պորտով ու արյունով այնքան էր կապված խորհրդային կարգերին, իր երգած ու ողջունած նոր աշխարհին, որ չէր վիատվում, չէր հիասթափվում, չէր թշնամանում: Միայն հուզված, գայրացած պահին առնական կուշտ հայիտյանքներ էր տեղում սրա նրա հասցեին, առաջին հերթին՝ Բերիայի: Ես երբեք, ինչպես առաջ, նրա տունը չգնացի: Այդ տարի ընդամենը երեք-չորս տուն էի այցելում (Ակսելինը արդեն դուրս էր եկած շարքից):

Մի երեկո, գարնանը, Չարենցին հանդիպեցի հյուրանոցի կաֆեում՝ կառուցված Արվյան փողոցը շոշափող հրապարակի մեջ:

Կցկտուր, անհետաքրքիր նախադասություններով էինք խոսում, շատը իմ վախից, որ հանկարծ կարող է պոռթկալ եւ բարձր ձայնով հայիոյել՝ աջ ու ձախ: Բայց զուսպ էր: Սեղանից ելանք, եւ նա առաջարկեց մի քանի քայլ

հեռու (կինո «Մոսկվայի» բակում), այն ժամանակ այդտեղ Արվյանի արձանի փոքրիկ պատվանդանի վրա նստել, ուր գիշերները նստում էին Ակսելի հետ: «Յիշում եմ, - ասաց (մարդ չկար խանգարող, բացվեց), - կարծում ես մեզ չե՞ն հետետում այդ գռեհիկները: Թող հետեւեն, հետո կպարզվի, թե ով է հարազատը: Բայց պետք է ասեմ, - ոչ անմիջապես շարունակեց նա, - որ սխալ էր մարքսիզմի մեջ անհատի դերը ժխտելը: Կամքի տեր, խելքի տեր, հեռատես անհատը, մեծ անհատականություն ունեցող անհատը, մի բանի, մի գաղափարի ձգտում ունեցող կամքով անհատը, մանավանդ հասարակական հեղինակ ունեցող կյանքի եւ հասարակության լինելիության ընթացքը նկատող անհատը կարող է կյանքին նոր ընթացք տալ՝ դրական կամ բացասական հետեւանքով: Չաջողության դեպքում եւ դիմադրական ուժերի գոյության դեպքում, նրա փրկարար միջոցը սովորաբար դառնում է տեռորը, որի օգնությամբ ձեռք բերված հաղթանակը, նույնպես սովորաբար հանգեցնում է անհատի բարձրագույն մեծարումին, ինչպես այսօր մեր երկրում է: Իմ կարծիքով, - եզրակացրեց Չարենցը, - սրա դեմ կռվելու միակ ծանապարհը անհատական տեռորը կլինի, այլ ծանապարհ չկա: Օրինակ, եթե այդ կատաղած շուն Բերիային հնար լինի վերացնել, դրությունը բավականին կփոխվի: Եվ այդ պետք է անեն նրա ատած ու հալածած հայերը: Ավոյին ասացի այդ մասին, թե մի՞թե այլեւս ոտքերի արանքում բան ունեցող մի հայ չի մնացել այս մեծ երկրում: Ի՞նչ պատասխանի, որ լավ լինի, ասաց. «Եղի՜, այդ միտքը վանի՞ր գլխիցդ, ընդհակառակն, պետք է դրանց գովքն անենք, մանավանդ որ գրականությունն արդեն անցել է ներքողի: Սուլթան Չամիդի ժամանակները չեն, որ Իլդը բռնեցի՞ր հրաման տար, թե քսան մարդ կախե՞ր կամ մի քանի գյուղ թափի կապե՞ք: Բեղավորը մի հրաման կարձակի, մեկ էլ տեսար երկու միլիոն հայ Սիբիրում ձեն տվեց, ընդհակառակն, պետք է մեռնել, բայց ժողովրդի կյանքը վտանգի չենթարկել»:

Այսքանը պատմելուց հետո, մի քանի րոպե մնաց լուռ, գլուխը տարուբերեց եւ շարունակեց. «Ես չեմ բաժանում Ավոյի կարծիքը, կտեսնես, կարգին, մի կտոր խելք ունեցող պիտանի հայ չեն թողնելու, բոլորիս գլուխը, տոխի պես պիտի կտրեն: Յի-

շում եմ, - շարունակեց նա, - երբ 1920թ. սկզբին շատ ծանր օրեր էր ապրում Չայաստանի Չանրապետությունը, նույնիսկ երկրորդ տարին չէր կարողանում ապստամբած Բոյուք Վեդի գյուղը գրավել, որովհետեւ հայ զինվորները ոչխար էին դառել, չէին կռվում: Վերջապես դարաբաղցի եւ զանգեզուրցի զինվորներն ու սպաները մի փոքր խմբով, մի գիշերվա հանկարծակի գրոհով, գրավեցին եւ հասան Շարուր: Այդ օրերին էր, որ Նիկոլ Աղբալյանը նախարարական նիստում առաջարկել էր բոլոր զինվոր կանչվող տղաներին մերկացնել եւ նախապես ստուգել, թե տղամարդու ֆիզիկական բավարար հատկանիշ ունեն, թե ոչ: Մի այլ անգամ էլ նա գայրացած առաջարկել էր Սեանից մինչեւ Ջաջուռ մի քանի տարով տղամարդկանց խոնջանը կնքել եւ Ղարաբաղի երիտասարդներով ընդարմացած հայ միջնաշխարհի սերունդը թարմացնել մարտական ոգով: Այժմ էլ ահա այդ օրն ենք ընկել, ընդարմացել, ոչխար դարձել: Ո՞ր գնացին Գոլիցինին, Նակաչիճեին եւ այլ սրիկաներին վերացնող մարտական ձեռքերը»:

«Մեր աստվածացրած առաջնորդը, այդ դաժան եւ խորամանկ կինտոն, տասը տարում կարողացավ ողջ երկիրը դարձնել մի կողմից գայլերի ոհմակ, մյուս կողմից՝ ոչխարի հոտ, էլ ուր մնացին մեր երազներն ու իդեալները: Բայց այսպես երկար չի տեփ, ամուր են բուլչեփզմի արմատները: Ես հույս ունեմ...»:

Ես հանգիստ լսում էի եւ զգուշ առարկեցի, ասելով, որ Ավոն ծիշտ է, որ դու ես ճշմարիտ ես, սա ժամանակավոր երեւոյթ է, որ կշտկվի շուտով՝ հենց վերուստ: Նա մի քիչ էլ խոսեց զանազան հարցերի մասին, մի քանի հարցեր տվեց ինձ. հիշեց մի շարք ձեռբակաված ընկերների անուններ, իր սովորական «պահ, պահը» կրկնելով, վերջում ասաց, որ զարմանալի կերպով բուռն թափով մի ավյուն է սկսվել իր մեջ, որ այս հոգեկան մղձավանջի ու մեկուսացման մեջ շարունակում է գրել ամեն ինչի մասին: Ասաց. «Երեփի ինձ էլ որոշել են այս ձեռով՝ տնային բանտարկության ձեռով եւ անունս չտալով մեկուսացնել եւ կտրել ժողովրդից»:

Ամենից ուշագրավը եւ, ըստ իս, անկասկածը, այն էր այդ օրվա նրա ասածների մեջ, որ ինքը նոր է միայն՝ վերջին չորս-հինգ տարիների ընթացքում է միայն իսկական իմաստով հա-

ՎԱՅՈՑ ՄԵՍԵՐԻ ՆԵՏ

սունացել: «Ինչ որ գրել եմ մինչև 30-ական թվականները, - շարունակեց նա, - եղել է քաղաքացի-պոետիս ներածական խոսքը, ճիշտ այնպես, ինչպես հեղափոխությունն ու նրա ամրացումն էլ հանդիսանում են իսկական նպատակի ներածությունը: Հեղափոխությունը կարելի է համեմատել գինու մածառի հետ, որպես եռման շրջան, որ պետք է վերածվի գինու: Ես էլ մածառ էի, գինի դարձա, սրանից հետո էլ, որ պետք է դառնալ իսկական, հնացած գինի: Արդեն պատրաստ եմ զգում դրա համար եւ մտքիս մեջ մեծ ծրագիր ու թեմաներ ունեմ, դրանց մի զգալի մասը հայկական թեմաներ են: Գիտեմ, արդեն Նարեկացին գրաբարով կարդում եւ շատ բաներ անգիր եմ անում: Այդ ինչ հսկա է, պարծանք է: Մի մասն էլ երեւի փորձեմ արձակով: Այ տղա, զարմանալի բան է, աշխարհի մեծ պոետներից մեկը՝ Գյոթեն ասել է, թե՛ լուրջ բան գրելու համար, լուրջ խոսք ասելու համար պետք է գրել արձակ եւ ոչ թե չափածո: Ուրեմն ես դեռ չեմ հասել դրան: Հայլա, հայլա, զարմանալի բան է մարդու բանը»:

Մենք բաժանվեցինք, այնպես որ, կարծես իրար չէինք հանդիպել: Նա գնաց վար, դեպի Սպանդարյան փողոց, ես գնացի վեր: Ինձնից առաջին անգամ հեռանում էր մի նոր հսկա, մի իմաստուն առաջնորդ, որի գոյության արժեքն ու նշանակությունը մինչ այդ, բոլորի նման, այդպես չէի գիտակցել, քանզի մեզ պես սովորական, մարդկային կրքերով մեկն էր. գիտենալով միայն, որ տաղանդաշատ, մի հանձարեղ պոետ է, իր մարդկային ավելի շատ թերություններով, քան մենք ունեինք:

Բաժանվելու վայրկյանին նա մի արտասովոր գորովալից հայացք նետեց ինձ վրա, որը կարելի էր համարել համբուրելու տրամադրության արտահայտություն կամ կորուստի ենթակա մարդուն ուղղված անձար մարդու բարի եւ խղճահարության արտահայտություն, կամ իր իսկ վերջին հանդիպելու զգացման արտահայտություն: Յարդ դժվար է հաստատուն եզրակացության հանգել: Սակայն բաժանվեցինք, գեթ արտաքուստ գրեթե սառը, առանց որեւէ գուրգուրանքի: Չարենցը երբեք այդքան մեծ, բարի եւ հարազատ չէր եղել ինձ համար:

Այս հանդիպումից մեկ ամիս չանցած, Չարենցը դուրս էր եկել տնից, մտել

Սպանդարյան փողոց եւ հասել Աբովյան պողոտա՝ Կուլտուրայի տուն: Սպանդարյան փողոցում շարժումը կանգ էր առել՝ երկու մայթի վրա: Ամենուր տխուր լուրեր լսող եւ թերթերում ջարդարական հոդվածներ կարդացող շվարած մարդիկ իրենց աչքերին չէին հավատացել, որ Չարենցին տեսնում են ողջ, փողոցում քայլելիս: Այս դեպքը մեծապես եւ խորապես մխիթարական ազդեցություն էր թողել նրբազգաց պոետի վրա: Գուցե ոչ պակաս ուրախություն էր պատճառել նաեւ ինձ: Ես ինձ բնավ ապահով չէի զգում, այսպես ասած հերթագրված էի համարում, բայց Չարենցի եւ Ավ.Իսահակյանի համար, մեծ չափով, աներկմիտ էի, համեմատելով Տոլստոյի օրինակի հետ:

Չարենցի փողոց դուրս գալու եւ այդպես նրան սրտով, բայց լուռ ծափահարելու ձեռով այդ ընդունելության լուրն առնելուն պես, հոգով, սրտով պոետին նվիրված երիտասարդ բանաստեղծի միջոցով հաջորդ օրը, դրկեցի այդ գիշեր մատիտով, հապճեպ (կացնաչեն ոճով) գրված մի քառատող, որի երկու տարբերակներն էլ պահպանվել էին իմ պահպանված գրքերից մեկի արանքում, բառերը խիստ հապավված: Ուղարկած օրինակը հետեյալն էր.

«Ով մեր կյանքի կայծակածին Արագած. Պատնեշ մնա, որ մեր սիրտը չդողա. Փայլիք ձմռան Միդիուսի պես ճառագած, Ծափ եկը զարկում՝ սրտներս քեզ ատարած, Ձի Չարենց ես.

Ոչ թե ինչ-որ մի...»:

Չարենցը կարդացել էր եւ ծիծաղել եւ զայրացել իմ այդքան հանդուգն եւ անզգույշ տողերի համար, այն էլ նման օրերում գրված: Ասել էր. «Ինքն է մեզ բոլորիս զգուշություն ու համբերություն քարոզում, իսկ այսօր ցուցաբերում է այս աստիճանի անզգուշություն»:

Քիչ անց, ոչ ավելի քան մեկ ամիս, ես արդեն «հերթագրված էի», որովհետեւ մեկի հետ փողոցով անցնելիս, դատախազ Դ-ն ասել էր. «Միթե այս մարդը դեռ ման է գալիս, սրա հարցը վաղուց է լուծված»: Դուրս էի գալիս Պատկերասրահից. Կուլտուրայի տան դահլիճի ձեմասրահում տեսա Չարենցը գալիս է դեպի Պատկերասրահ: Մենք բարեեցինք միմյանց եւ, կարգ էր դարձել, կանգ չառանք: Բայց շուտով մի քանի քայլ հետո Չարենցը ետ դարձավ

եւ ասաց. «Այ տղա, Մորուս, այս գիշեր երազիս քեզ թաղում էինք: Ես ասում էի. այխր, երեկ տեսա այս մարդուն, այս ինչպես եղավ, որ մեռավ, ինձ ասացին, թե ինքնասպան է եղել: Շատ ափսոսացի, ուզում էի լաց լինել, չէի կարողանում»: Ես ժպտացի, նա կես ճանապարհից կրկին ետ դարձավ եւ ասաց. «Այ տղա, լսիր, չվախենաս, այդ նշանակում է, ես պիտի մեռնեմ, իսկ դու պիտի ապրես»:

Սա մեր վերջին հանդիպումն էր: Երեւի մեկ շաբաթ էր անցել, երբ լսեցի, որ Չարենցը ձերբակալված է: Իմ վերջին խոսքը եղավ այս. «Թե միթե այդպիսի մեծ շենք կա, որ այդ հսկային իր մեջ տեղավորի»:

Շուտով ձերբակալվեց եւ Չարենցի կինը՝ տիկին Զաբելը: Նրա երկու փոքրիկ աղջիկները մնացին բոլորովին որբ ու անտեր եւ փոխադրվեցին մանկատուն: Բնակարանը խլվեց, կողոպտվեց: Լսեցինք, որ նրա տանից տարել են մեծ քանակությամբ գրքեր եւ մոտ քառասուն թղթապանակ:

Չարենցին հավատարիմ երիտասարդ բանաստեղծներից մեկը՝ Սուրեն Թարյանը (Թարվերդյան) հենց այդ պատճառով ձերբակալվեց եւ մեռավ բանտում (թե աքսորում):

Կես տարի անց կալանքի ենթարկվեցի նաեւ ես, եւ ինչ որ կար ինձ մոտ նաեւ Բակունցից ու Չարենցից (լուսանկարներ, նամակներ, նվիրաբերած գրքեր) բոլորը ոչնչացան, բացի մի նկարից, Բակունցի հետ նկարված, որ առայժմ կորսվել է գրքերիս, թղթերիս մեջ:

Ես Չարենցին տեսնել չէի կարող, որովհետեւ, երբ ես կալանքի ենթարկվեցի, դրանից երեք ու կես ամիս առաջ՝ 1937թ. նոյեմբերի 29-ին, Երեւանի կենտրոնական բանտի հիվանդանոցում, իր ցատունալից, իր շնորհալից կյանքի վախճանն էր գտել հայ նոր բանաստեղծության հիմնադիր-հսկան:

Ինչպես պատմում էին, նա անվախ ու անհանգիստ է եղել նաեւ շատ խիստ ռեժիմի տակ գտնվող օրգանի բանտում եւ կենտրոնական բանտում: Անշուշտ, նա զարմացել էր, թե որքան փոփոխություն է կատարվել դարոց-ուղղիչ տան եւ ստալինյան բանտի միջեւ: Մեռելային եւ ստրկական կարգ ու կանոններին չի ենթարկվել Չարենցը. նա ընդվզել է, գռռացել, հայիոյել: Եվ նրան ստիպված են եղել 2-րդ հարկում մենախցի մեջ պահել: Նրա ձայնը եւ **»** 118

ՆԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ՆԵՏ

« 117 հայիոյանքը լսել են գրեթե ողջ երկրորդ հարկի բանտախցերում:

Լսեցի, որ մահից առաջ օրգանի պատասխանատու դեմքերից մեկը՝ (ռուս) ծանր թղթապանակով ուժեղ հարվածով է փոքրամարմին հանձարի հանձարեղ գլխին, որից նա ուշաթափ ընկել է գետին:

Բանտի բաղնիսում պահպանվել էր Չարենցից մի քանի տող՝ մրով ծեփած (որ չկարդացվի). մեկը՝ նրա նշանավոր քառյակը, որ ոչ մի ուժ չի կարող իրեն բաժանել իր շունդայից պայծառ քնարից, մյուսը՝ հետեւյալը, ինչպես ասում էին.

«Ինչ որ հույս էր, ինչ որ լույս էր մնաց թերի,

Իմ որք հոգին վանդակի մեջ մնաց գերի, Կապրեմ լույսով, վաղվա հույսով իմ սիրելի,

Տեսնեմ վաղը իմ ապագան ինչ կրերի»:

Նա բանտում մեկին ասել էր իմ մասին, որ դուրսը ինձ տեսել է մի գլխակերի ծանկերում եւ համոզվել, որ ես էլ արդեն բանտարկված կլինեմ: Որոշ դադարից հետո նա գլուխը տարուբերել է ու ասել. «ափսոս»:

Երբ ես ծանր հիվանդացա 1939թ. մարտի 15-ին, զարմանալի զուգահիստայամբ, իմ ձեռքակալման տարեդարձին, կիսամեռ վիճակում, օրգանի շենքից ինձ փոխադրեցին կենտրոնական բանտի հիվանդանոցը: Երբ վիճակս ավելի ծանրացավ եւ ամենօրյա երկու գրամ մորֆինը անզոր դարձավ ցավերս մեղմացնելու համար, բժիշկն առաջարկել էր փոխադրել հիվանդանոց, ոտքերս անդամահատման ենթարկելու: Բայց մերժում էր ստացել ղեկավարությունից, մերժել էին նաեւ մասնագետ վիրաբույժ հրավիրելու առաջարկը: Ասել էին, որ ավելի նպատակահարմար է հետզհետե վիճակը ծանրանալ եւ մեռնի, քան թե իմ այդ վիճակը հայտնի դառնա դրսում: Ինձ, մահամերձ հինգ հիվանդի հետ, փոխադրեցին բանտի հիվանդանոցի մեկուսարանը, որտեղ անլուր հանգչում էին ծանր հիվանդները: Բանտարկյալները այդ վայրը կոչում էին «մորգ» (դիարան): Իսկապես, հինգ հոգուց չորսը մահացան չորս օրվա ընթացքում: Ողջ մնացի միայն ես, մթազանծ տրամադրությամբ, երկար ժամանակ ծանր ցավերից անքուն, առանց բուժման ու սփոփանքի:

Մեզ ջուր ու ծաշ բերող քրեական բանտարկյալ Աշոտը ասաց, որ յոթ ամիս առաջ, նոյեմբերի 29-ին, այս քո մահձակալի վրա իր շունդը փչեց Եղիշե Չարենցը: Այդ հայտնությունը ապրելու զորավոր դիմադրական կորով ստեղծեց իմ մեջ: Ցավերիս հետ մտովի պատկերացնում էի մեծ հայի, մեծ հեղափոխական հանձարի վերջին վայրկյաններն ու ժամերը, վերջին ապրումներն ու խոհերը:

Այդ եւ մեկ էլ իմ մյուս ցանկությունը փրկարար եղան ինձ համար:

...Կալանավոր Աշոտն ինձ ասաց. «Չարենցի մահացած գիշերը նրանից բացի բանտում ոչ ոք չէր մեռել: Յեռախոսի անընդհատ զանգերով հարցրել են, թե Չարենցին ուր եւ ինչպես թաղեն: Խոսք է եղել բանտի պատի տակ թաղելու մասին, բայց ասացին, որ տարել են «Թոխմախան լճից» հեռու լանջերում «հողով արել»:

Ամեն պարագայի, բանտի այն ժամանակվա անձնակազմը (բժիշկ, բանտապետ եւ այլք) ոչ միայն ողջ էին, եւ ողջ են մեծ մասամբ, այլեւ, դրանց մի մասը երեւի դեռ աշխատում է բանտում, ուստի, հնարավոր էր սրանց միջոցով պարզել այդ տեղը, հանել կմախքը, որի ծնկի ոսկորի վնասվածքը ծանաչել կտար իրեն եւ թաղել ցանկացած վայրում:

Քանիցս առաջ քաշվեց մեծ պոետի աձյունը գտնելու եւ անաղմուկ, պանթեոնում թաղելու հարցը, ինքս էլ այդ հարցը դրեցի (55-60թթ.), բայց երկրի ղեկավարները մնացին անարձագանք եւ որեւէ հոգատարություն չցուցաբերեցին: Այդպես էլ բանաստեղծի այն երազը, որ գանգրահեր պատանին՝ պիոներդպրոցականը, իր ոտքը կդնի նրա շիրմին, չիրականացավ:

Յենց այստեղ էլ պետք է բերեմ 1961թ. դեկտեմբերի 12-ի սղագրությունից այն պարբերությունը, որ վերաբերում է Չարենցի մասունքները գտնելուն, թաղելուն եւ արձան դնելուն: Այդ ասվեց հայկական մանկավարժական ինստիտուտի կուսակցական դռնբաց ժողովում, ուր ներկա էին եւ երկրի ղեկավար ընկերներից ոմանք: Ահա այդ մասը.

«...Չորրորդը՝ դա հոկտեմբերի մեծ երգչի արձանի կարիքն է, մի մարդու, որը հավասարը չունի 1917-1920թթ., որն իր ասելիքի մեծ բաժինը տարավ իր հետ: Դա Եղիշե Չարենցն է, որի նման հանձարները ծնվում են 100 տարին մեկ անգամ: Գուցե ազգային դարավոր վիշտն էր, որ հոսեց ու միացավ հա-

մայն աշխատավորության գրոհի հորդ գետին, եւ Կարսում ծնված այդ փոքրամարմին չարածժի պատանին պրոլետարական ռեոլյուցիայի արեւը կրեց իր հոգում եւ բարձր ճիչով ազդարարեց այն:

«Ի դեպ, ամոթ է, որ մենք չունենք Չարենցի գերեզմանը: Դեռեա կենդանի են այն մարդիկ, որոնք նրան բուժել են բանտում, թաղել են 1937 նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ի միջեւ (լավ չեմ հիշում): Նրանք չէին կարող չիմանալ, թե ում են թաղում եւ որտեղ պետք է թաղեն: Որքան ես իմացա, այդ գիշեր բանտի հիվանդանոցում ուրիշ մարդ չէր մեռել: Այդ օրը խոսք է եղել Չարենցի դին առանձին թաղելու մասին, մի հատուկ տեղում: Ինչու չի կարելի այդ մարդկանց կանչել, որ հայտնեն տեղը եւ շատ անաղմուկ հանել, հատուկ պանթեոնում հողին հանձնել մասունքները եւ այդտեղ բարձրացնել նրա արձանը կամ կիսանդրին, որ գալիք «գանգրահեր պատանին» ոտքը դնի այդ գերեզմանին:

Չմոռանանք, որ այսօր ռուս, եւ ոչ միայն ռուս, սերունդները անիծում են Պուշկինի եւ Լերմոնտովի դահիճներին: Այդպես էլ մեզ են անիծելու Երեանում մահացած Չարենցի կորած շիրմի համար: Բայց եւ այնպես անկախ այս հարցից արձանը պետք է բարձրանա Երեանում»:

1967-1971թթ.

Ծանոթագրություն

1. Այս աննման երկը նվիրված էր մի աղջկա, բայց Չարենցը, թախսանձագին խնդրանքով՝ ուղղակի պահանջեց, որ այն նվիրվի իր վաղամեռիկ ընկեր-կնոջը՝ Արփենիկին, որին զիջեց Ակսելը:
2. Ճիշտ նման ոգետրություն ապրեց, իր ծանր կեցվածքով, մեծ քաղաքացի գիտնական Լեւոն Աբգարի Օրբելին, դրանից 10-13 տարի հետո, 1945-ի նոյեմբերի վերջին, երբ նրա գլխավորությամբ Միության հյուր-ակադեմիկոսներին Յուլսեփ Օրբելու խնդրանքով ուղեկցում էի Չվարթնոց-Էջմիածին: Լեւոն Օրբելին Ներսես Աշտարակեցու եւ Խրիմյանի գերեզմանի առջեւ, անձրեփ տակ, հանել տվեց բոլորի գլխարկները, ինքը կարդալով տապանագրերը եւ ռուսերեն բացատրելով:



ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այունիքի բնակավայրերի պատմությունից

ՄՈՐՈՒՍ
ՀԱՄԱԹՅԱՆ

Պատմական Այունիքը կամ Սիսական աշխարհը իր ընդարձակությամբ, Վասպուրականից եւ Այրարատից հետո, երրորդ նահանգն է եղել պատմական Հայաստանի 15 նահանգների մեջ, խոր դարերից մինչեւ XIII դ. վերջերը, նույնիսկ XIV-ի կեսը, որպես քաղաքական եւ աշխարհագրական միավոր: Այունիքը ունեցել է 12-15 գավառ եւ մշտապես 1000-ից ավելի բնակավայր, մի քանի տասնյակ բերդերով:

Այունիքի հարավային եւ հարավ-արեւմտյան կայուն սահմանը եղել է Արաքս գետը, Արփայի վերջին գետախառնուքից քիչ դեպի հարավ մինչեւ մեծ Քարավազանի (Խոտաֆիրինի) կամուրջը, հյուսիս-արեւելքից սահման է ունեցել Արցախի լեռները՝ Հագարու գետի ողջ ավազանը իր մեջ առած, հյուսիսից՝ Սեանի լեռնանցքից սկսած Գեղամա լեռնաշղթան, Գնդասարի ուղղությամբ իջած Արփա գետի վրա:

Ալայան լեռների, անդնդախոր ձորերի, տաք հովիտների, առատ ջրերի այդ երկրամասով շատ վաղ ժամանակներից անցել են մի քանի բանուկ ուղիներ. առաջինը՝ Հին Ջուղայի, Նախճավանի վրայով՝ դեպի Արարատյան դաշտ-Վիրք ու Սեւ ծով, մյուսը՝ Նախճավան-Եղեգիս-Կոթ (Սեանի ավազան) գծով, Սեանի լեռնանցքով ձգվել է Աղստևի հովիտը-Քուռի ավազանը: Իսկ Կոթ (Մարտունի)-Վարդենիս-Վասակաշենի վրայով-Փառիսոսով անցել է դարձյալ դեպի Քուռի ավազան-Գանձակ: Մյուսը՝ Սոթ- Հաթերքի (Խաչեն) վրայով ձգվել դեպի Պարտավ-Շիրվան-Բաքու-Դերբենտ: Հարավային կողմից Ատրպատականի երկրորդական գծով մի ուղի էլ Սեղրի-Կապան-Գորայք (Գորիս)-Տեղ-



վորք Քարվազի (Շապուկի-Չաբուղի) կամուրջով անցել է Շուշի եւ հեռուները, մյուսը՝ Նախճավանից- Անգեղակոթի-Սիսիանի վրայով՝ դեպի Գորայք-Տեղ-Շուշի եւ այնտեղից միացել է հյուսիս եւ արեւելք ձգվող մեծ ուղիներին: Չհաշված ներքին՝ նահանգային ուղիները, Գողթան-Սիսիան-Գորիս, Սիսիան- Վայոց ձոր, Կապան-Գորիս եւ այլն:

Այունիքը (Արցախի հետ) իր խոր ձորերով ու լեռնանցքներով, իր մեծաքանակ լեռնական ռազմիկ բնակչությամբ, իր հռչակված ձիաբուծությամբ ու հեծյալ բանակով ոչ միայն բախտորոշ դեր է խաղացել հայոց պատմության մեջ, որպես նրա արեւելյան սահմանների կարծր վահանը, դուրս բերելով հայոց հռչակված այրուձի-բանակի մոտ մեկ քառորդը (ավելի քան 20.000 հեծյալ), այլեւ վճռական դեր էր խաղում (Արցախի հետ) իրանական-պարսկական կայսրության քաղաքական-ռազմավարական կյանքում, լինելով նրա եւս անխոցելի վահանը՝ պարզած դեպի հյուսիս, հաճախակի այլքներով ներխուժող կովկասյան լեռնական ցեղերի դեմ: Այս հանգամանքն էլ որոշակի դեր էր ունենում Այունիքի իշխանության ներքին եւ արտաքին կյանքի մեջ: Ընդարձակ Այունիք լեռնաստանի իշխանները երբեմն իրարամերժ արտոնություններ ու թելադրանքներ էին ստանում մերթ Պարսից արքունիքից, մերթ Հայոց արքունիքից: Դեռեւս կայուն ցեղային ու տեղային-նահանգային ավանդույթների ու զգացումների պարագաներում անսպասելի չէին լինի Այունյաց նախարարների կամ սրանց տոհմի այլ անդամների քաղաքական սայթաքումները - «դավաճանությունը», որի եզակի փաստերը մեր պատմագրության մեջ անցյալում ուռձացվել է եւ գերազնահատվել: Մինչդեռ 24-25 դար շարունակ այդ լեռնաստանում իշխանություն ստեղծած պետերը երվանդունի եւ նրա մի ժառանգորդ ծյուղը հանդիսացող Արտաշեսյան դինաստիաների ժամանակ իսկ, ամուր կապերով կապված էին հայոց կենտրոնի՝ Այրարատի հետ: Հայկյան ավանդավեպի Սիսական ծյուղի տեր Այունյաց իշխանները, իրենց ցեղային բունքով, >> 120

Մեզ ավելի քան բավարար չափով հայտնի է Այունիքի պատմությունը IV դարի առաջին տասնամյակներից սկսած...

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 119 ծագում էին հայ-արմենական ցեղային բնից: Արդեն վաղ միջնադարում Այոնիքը չափազանց կարեւոր դեր էր խաղում միասնական հայկական պետության կազմում: Ըստ երեսույթին պարսից արքունիքը երբեմն փորձել է այս կամ այն արտոնությամբ ու սիրաշահելով պոկել այդ հզոր, ռազմիկ աշխարհը հայոց ընդհանուր կենտրոնից կամ օպոզիցիոն դիրքի մեջ պահել: Միայն մեկ անգամ է այդ հաջողվել, այն էլ շատ ուշ՝ VI դ., ընդ որում միայն հարկային ու վարչական գծով: Անտարակոյս, հայ թագավորները, հայոց կաթողիկոսները եւ արտոնությունների եւ նյութական շահագրգռությունների գծով խոստումների եւ նրանց իրականացմանը դիմած կլինեին Այոնյաց ավագանու նկատմամբ: Այլ կերպ Այոնյաց նախարարները (հատկապես մինչեւ Վարդանանց պատերազմը, այսինքն V դարի կեսը), ավելի մեծ իրավունքների տեր չէին լինի, քան թե անգամ չորս բղջխներից որեւէ մեկը: Չի կարելի պատահականությամբ բացատրել Ծղուկ (Միսիան) գավառի Շաղատ ավանում ծնված Փառանձեմ տիկնոջ հայոց թագուհի դառնալը, այսինքն նրա գեղանիությամբ բացատրելով Արշակ թագավորի, նույնիսկ ոճիր գործելու միջոցով, խնամիական կապի մեջ մտնելը Այոնյաց նախարարական տան հետ: Մինչդեռ այդ պետք է բացատրել առավել Փառանձեմի Այոնյաց հզոր Անդոկ նախարարի դուստրը լինելու հանգամանքով:

Իր անառիկ բերդերով, իր բազում գնդերով, իր աշխարհագրական դժվարամուտ դիրքով շփացել էր ցեղատիրական եւ վաղ միջնադարյան վաղ ֆեոդալական Այոնիքը: Նաեւ այդ էր պատճառը, որ պետականությունից նոր զրկված Հայաստանի բոլոր առաջնակարգ նախարարների մեջ (Բագրատունի, Արծրունի, Մամիկոնյան, Ամատունի...) Այոնյաց նախարարը (Վասակը) առաջինն էր, որ առաջին հերթին իրեն էր արժանի համարում ստանձնելու հայոց թափուր գահն ու թագը: Անշուշտ նման հավելյալ պահանջներ էր դնում նաեւ Այոնիքի քրիստոնեական եկեղեցական թեմը, դարձյալ հասնելով առաջնակարգ արտոնությունների:

Սակայն, աշխարհագրորեն բավականին մեկուսացված Այոնիքը մի կողմից հեռու լինելով միջազգային

առեւտրական մեծ ուղիներից (թեւեւ առայժմ զանազան շատ հին դրամներ ու գանձեր գտնվել են ավելի շատ Այոնյաց սահմաններում, քան Հայաստանի այլ նահանգներում), մյուս կողմից հեռու լինելով բարձր մշակույթ եւ դպրություն ունեցող Միջագետքից, հունա-հռոմեական Արեւմուտքից, Իրանի կենտրոններից, նույնիսկ՝ Հայաստանի կենտրոնական մարզերից, շատ ուշ արժանացավ գրավոր հիշատակության, որպիսի երջանկությունն ունեին Փոքր Հայքը, Ծովքը, Աղձնիքը, Այրարատը, Վասպուրականը:

Հեթանոսական Այոնիքը գրեթե ամբողջովին մնացել է ավանդությունների եւ վեպերի (էպոսի) ոլորտի մեջ: Այդ ավանդությունները մեծ քանակությամբ հասել են մինչեւ XIII դ., մինչեւ Այոնյաց մեծ պատմիչ Ստեփանոս Օրբելյանին, բայց վերջինս, ինչպես ինքն է վկայում, կարեւորություն չի տվել դրանց մեծագույն մասին, համարելով հների հորինած «սնտիապատում վեպեր»: Պատմիչը նույնիսկ ուշադրության չի առել այդ հարցերին վերաբերող գրավոր ավանդությունների մեծագույն մասը: Իսկ հայտնի է, որ Մելիք-շահի մահից հետո, նրա գիշատիչ մանր հաջորդները ավերեցին թուրք սելջուկների տիրապետության տակ ընկած արեւելյան մարզերը, նաեւ Այոնյաց Կապանի վասալ թագավորությունը: 1104-1170թթ. ընթացքում գրավեցին Մեղրի-Արեւիքի, Ծղուկ-Միսիանի բերդերը, եւ այդ ժամանակներում կենտրոն Կապանի ամուր Բաղաբերդը, ուր հավաքված էին Տաթեփ եւ Այոնիքի այլ վանքերի հարստությունը, հատկապես ձեռագրերը: 1170 թվականին այդ ամենը եւ 10.000 ձեռագիր մատյաններ կողոպտվեցին եւ իսպառ այրվեցին, ոչնչացան: Սա բովանդակ Հայաստանի եւ Առաջավոր Ասիայի պատմության եւ մշակույթի ստացած մեծագույն հարվածներից մեկն էր, ի մասնավորի Այոնիքին հասած մեծագույն աղետներից մեկը, որովհետեւ միաժամանակ նրա հին պատմության մի զգալի մասը եւս ջնջվեց վաչկատուն ցեղերի այդ բարբարոս արարքով: Այոնիքի պատմիչ Ստ. Օրբելյանը, դրանից ավելի քան մեկ դար հետո, արցունքով նկարագրում է այդ դեպքը եւ իր գրքի տխուր էջերից մեկի մեջ վերջացնում այդ վայրենաբարո արարքը հետեյալ բառերով. «ամենայն առ հասարակ գերի վարեցան եւ ցան ու ցիր եղեն ընդ

երեսս աշխարհի»:

Մեզ ավելի քան բավարար չափով հայտնի է Այոնիքի պատմությունը IV դարի առաջին տասնամյակներից սկսած: Դրանից առաջ նրա 800-ամյա զուտ հայկական պետականության մեջ գտնվելու պատմությունը, եւ սրանից մեկ-երկու հազար, նույնիսկ շատ հազար տարիներ առաջ եղած պատմությունը վերականգնելը մնում է հնագիտության կարեւոր խնդիրը: Այս առումով կարեւոր է Այոնի եւ այս լեռնաշխարհի երկրորդ անվան՝ Միսականի ծագման հարցը:

Ինչ լեզվով խոսող տոհմեր, կամ շրջանը բռնած ցեղ կամ ցեղեր են ապրել Այոնիքում մ. թ. ա. II-I հազարամյակներում, դժվար է իմանալ: Այստեղ մտնում ենք արդեն տրամաբանական ենթադրությունների ոլորտի մեջ: Ամենայն հավանականությամբ Այոնի-Սիվնի անուն կրող ցեղ է ապրել: Բայց այդ ցեղը կապ ունեցել է հայ-արմենների խոշոր ցեղերից մեկի հետ, որպես կրտսեր ձյուղ, թե տարախոս բնիկ՝ տեղացի եղել ու երկու եւ կես հազարամյակ առաջ շփվելով գերիշխող հայերի հետ, սկսել է հայանալ, որը այն ժամանակներում հավանաբար շատ տեսական ու ծանր պրոցես չի եղել: Հայկական՝ հայախոս տարրը բռնել է այդ լեռնաշխարհը VI-V դարերում, թիկունք ունենալով հայոց զորավոր Այրարատը: Աքեմենյան հզոր տերությունը, հատկապես 510-ական թթ. մ. թ.ա. հայ-արմեններին պարսիկներից հետո երկրորդ արտոնությամբ էր օժտել, Իրանի տերության հյուսիսին իշխելու եւ վահան դառնալու Կովկասյան լեռնաշղթայի ընդարձակ ստորոտների համար: Անշուշտ, աքեմենյան արքաների կողմից այդ արվում էր ոչ թե հայերի հյու-հնազանդ լինելու, զի հյու-հնազանդ ցեղը, ժողովուրդը չէր կարող վստահելի ռազմիկ եւ ռազմական ուժ լինել, այլ ավելի կարեւոր պատճառների համար: Նորաստեղծ Աքեմենյան աշխարհակալ տերության սրտի վրա նստած էր իրենց վրա դարեր գերիշխող եւ միայն Կյուրոսի ու Դարեհի գլխավորած պայքարով ընկճված Մարաստանը: Սեւ ու Կասպից ծովերի միջեւ ձգված Կովկասյան լեռնաշխարհի հարավային եւ հյուսիսային լանջերի վրա ապրում էին տասնյակ ու հարյուրավոր բազմալեզու անհնազանդ ռազմիկ ցեղեր ու տոհմեր, որոնց կյանքի ու կենցաղի գերիշխող մասը ռազմական գործն էր եւ ասպատակու-

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

թյունը: Այս անսպառ ու անհանգիստ ուժը պետք էր անջատել միշտ դժգոհ ու ապստամբելու համար պահեր որոնող մարերից: Աշխարհագրական եւ այլ տեսակետներից այդ դերը կարող էին կատարել հատկապես արմենները:

Չայ-արմենները գուցե եւ չէին կարող կովկասյան ցեղերի եւ մար մեղերի բաղդատմամբ ռազմավարական առավելություններ ունենալ, բայց վաղուց արդեն ձեռք էին բերել ուժեղ կազմակերպվածություն, որն ապացուցել էին նախորդ դարերում: Ունեին բավականին մեծ եւ արդեն միավորված բանակ, բռնած Եփրատի ոլորանից արեւմուտք ընկած տարածություններից մինչեւ Քուռի աջ ավազանը: Այդ տարածության վրա ապրող բնիկ ու եկվոր բազմաթիվ տարախոս ցեղերի մի մասին, դարերի ընթացքում, լուծել էին իրենց մեջ, կամ անբաժանելի բարեկամ ու ենթակա դաշնակից դարձրել իրենց: Բավական է հիշել, որ հայ-արմենները, VI-V դարերում, դուրս էին բերում 48 հազարանոց բանակ, որի մեջ ավելի բնորոշ էր 40 հազարանոց հետեակը, որպես վկայություն կայուն, կարգապահ բանակի: Նկատի պետք է առնել, որ ընդամենը կես հազար տարի էր, ինչ սկսել էր արեւմուտքում աճած-բազմացած հայ-արմենական ցեղերի, տնտեսական մղումով, երկրորդ անկանգ ցեղային շարժումը դեպի առաջ, մինչեւ բավարար հանգրվանի կամ լեռների ու ջրերի բնական արգելք սահմանի հասնելը: Այս հանգամանքը, որ պատմությանը ծանոթ է աճած-բազմացած ցեղերի բնական մղումի նմանվող շարժում (հաճախ մեծաքանակ անասնապահության կարիքների թելադրանքով) գիտության կողմից մոռացության է տրված հայ-արմենների վերաբերյալ: Ճանաչված եւ հայտնի են արիաիրանական, կիմերական, սկյութական ցեղերի, ալանների, մաջարների, սեմական, մոնղոլական եւ այլ ցեղերի շարժումները, հատկապես թուրանական (թուրքական) երկու մեծ շարժումները՝ IV-VI դդ. եւ X-XIV դդ.: Բայց հայ-արմենական երկու շարժումը գրեթե չի ընդունված, ոմանց կողմից էլ ժխտված է, չհաշված առաջինի համար սխալ ժամանակագրությամբ, ցարդ ընդունված մ.թ.ա. XII-XI դարերը: Մինչդեռ հայ-արմենական առաջին շարժումը տեղի է ունեցել 4500 - 4000 տարիներ մեզից առաջ, որը կանգ է առել հիմնականում Եփրատի աջափնյա ոլորանում:

Երկրորդ շարժումը սկսվել է 3000-2500 տարի մեզանից առաջ եւ իր վերջին սահմանը գտել Քուռ-Արաքսի միջեւ ընկած ավազանում, իսկ երկու-երեք դար հետո՝ նաեւ Կասպից ծովի ափերին: Այս զորեղ շարժման ավարտի մոտերքը համընկավ պարս-իրանական հզոր տերության կազմակերպման ժամանակներին, որը կարողացավ օգտագործել հայ-արմենական միության բռունցքը, իր պետական շահերի համար, ներքին մեծամեծ զիջումներ անելով նրա ավազանում, տերության հյուսիսը նրան վստահելով: Չայերը պետք է Կովկասյան մշտապես խլրտացող հյուսիսի վահանը դառնային եւ լայն տարածությամբ անջատեին, ինչպես վերն ասվեց, պարսիկների վրա մինչ այդ գերիշխած բռնությամբ ընկճված իրենց պոտենցյալ անհաշտ թշնամի ամենագորեղ ցեղակից մարերից: Պարսից պետության մղած պատերազմներին էլ արմենները պարտավոր էին մասնակցել իրենց տասնյակ հազարների հասնող հռչակված այրուձի բանակով:

Նույնիսկ մ.թ. VII-VIII դարերում Դերբենդի ամրոցի մեծ պատնեշի մուտքը կոչվում էր Սիսաջանի (Սիսական), այսինքն վստահված է եղել (հենց այն գլխից) հայոց Սյունի-Սիսական աշխարհին: Ավելին, երեւի ողջ V-VI դարերում հայոց այրուձին եւ պահակ էր կանգնած Իրան-Թուրանի սահմանի վրա, հավանաբար Քուփեթ լեռների՝ արդի Թուրքմենիայի մատույցներում: Հիշենք, որ Վարդան Մամիկոնյան սպարապետն անգամ, մինչեւ 440-ական թթ. պարսից բանակի մեջ, հայոց բանակով տարիներ է անցկացրել թուրանական (թուրքական) այդ սահմանի վրա: Այս խիստ համառոտ նախապատրաստական տեղեկություններն ու եզրակացություններն անհրաժեշտ են մեր ստորեւ ասվող «փոքր» հարցերի համար:

Սյունիի եւ նրա Սիսական երկրորդ անվանը հարկ է անպայման անդրադառնալ, որովհետեւ ինչքան հետազոտող, գրեթե նույնքան էլ մոտիկ կամ հեռավոր կարծիքներ են հայտնվել, կամ հարցի վրայից անցել են՝ լուծությամբ: Նշանավոր հեղինակներից կանդրադառնանք միայն մեկին՝ Նիկողայոս Ադոնցին, որը այդ հարցերը եւս շոշափել է իր չգերազանցված պատմաբանասիրական ուսումնասիրության մեջ՝ «Չայաստանը Յուստինիանոսի

էպիստամոս»:

«Սիւր առանձին ցեղ է, թե՛ միեւնոյն ծագումն ունի Սյունիքի հետ, պարզ չէ: Սյունիք ձեւը ավելի հին է Սիսականից, - գրում է Ն.Ադոնցը եւ շարունակում, - Սիսական պարսկական ձեւը առաջին անգամ հիշվում է Չայաստանի Չոստորի կողմից 554թ. մոտերքը: Նրա մոտ Սիսականը Չայաստանից անջատ երկիր է, Առանին եւ Գուրգանին հավասար: Չայ գրականության մեջ նույնպես Սիսականը հանդես է գալիս Սյունիքից ու: Չոստորքրական է, որ Անանունի մոտ Սիսակը Չայկազյանների ծագումնաբանության մեջ չի բերվում, - որ կա հորենացու մոտ: Սյունին անջատվել էր Չայաստանից 571ից մինչեւ 660թ.» (1):

Նախ Չայաստանի Չոստորի ասածը նաեւ 451-484թթ. դեպքերից մեկ դար հետո, հեռուները հասած լուրերի եւ պարսկական միջավայրում տարածված «ասում են»-ների արձագանք եւս պետք է դիտել, թեեւ զուրկ չէ առավել եւս իր ժամանակի անցքերից բխող տրամաբանական հետետեսություններից: Այնուհետեւ, ընդունենք, թե Սիսական ցեղաաշխարհագրական անունը կարող է գրի առնված ձեւով ու ինչպես եկած լինել, քան հայկական գրական միջավայրում հղովվող Սյունիք անունը, բայց, այդ դեռեւս ապացույց չի կարող ծառայել հաստատուն եզրակացության համար: Բավական է սեղանի վրա փռած քարտեզին նայենք եւ կտեսնենք, որ Սյունի անունների (ավան, ամրոց, գավառ) կողքին կան ոչ հեռու Շաքե (տարածել՝ Սակ-Սակ էի) եւ Սիսիան (Սիսական) անունները: Ն.Ադոնցը, անհավասարը հայ պատմաբանասիրության մեջ, հատկապես չասվածի՝ նոր խոսք ասելու մեջ, բնական է, որ նաեւ սխալներ կունենար, այն էլ ավելի շատ փաստերի պակասության պատճառով:

Ինչպես վերն ասացի՝ հարեւանցիորեն, մենք չգիտենք Սյունի բառանվան նշանակությունը եւ թե այդ անունը կրող տոհմը-ցեղը որեւէ կապ (ծագումնաբանական իմաստով) ունեցել է հայախոս մեծ ցեղերից մեկի հետ, որպես մի շյուղ, մի ճյուղ: Սիսիան կարելի է ասել, որ շատ քիչ հավանական է: Բայց երբ խոսքը վերաբերում է Սիսակին-Սիսականին, ասելու բան շատ է հավաքվում: Եվ գիտնականներն ու գիտական հարցերով շատ թե քիչ զբաղվողներից ոմանք, զանազան, հաճախ իրարամերժ կարծիքներ են արտա- >>> 122

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 121 հայտել, որոնց չենք անդրադառնա: Սակայն Արդնցի պարագային չի կարելի լուռ անցնել: Մեծ պատմաբանը տվյալ դեպքում երկու անձնություն է թույլ տալիս Սյունիքի հարցում: Առաջինը, որ Սի-Սակ-ը Սիսակ է դարձնում, երեւի առավել չափով, ելնելով Սիսիան տեղանունից: Սակը՝ սկյութների մի ցեղն է հնդեվրոպական լեզվախմբի արիա-իրանական ընտանիքին պատկանող, ժամանակին հզոր ու բազմաքանակ եւ վաղուց վերացած: Արդի Ուկրաինայի հարավային տարածությունների, Ղրիմի թերակղզում եւ Դոն-Ազովի ավազաններում աճած եւ մոտ երեք հազար տարի մեզնից առաջ ցեղային աճի խլորման եւ շարժման մեջ մտած սկյութական ցեղերը հետզհետեւ Զյուսիսային Կովկասը, Կասպից ծովի հյուսիսը եւ արդի Միջին Ասիան նվաճեցին: Այս մեծ ցեղային միության մեջ էին նաեւ սակերը: Մ.թ.ա. VIII դարի առաջին կեսից Կովկասյան լեռնաշղթայի լեռնանցքները (Դարիալը, Դերբենդը) ձեղքելով՝ նվաճելով, այդ իրանական ցեղերից մի քանիսը հեղեղեցին արդի Անդրկովկասը, մտան Զայկական լեռնաշխարհ, Ատրպատականի հարթավայրերը, անցան ավելի հեռուները, խուժեցին Զյուսիսային Միջագետքը: Սրանք բախվեցին նախ իրենց ցեղակից եւ իրենց կողմից քշված ու հետապնդված կիմերների հետ: Զավանաբար կիմերները Անդրկովկաս եւ Փոքր Ասիա խուժեցին Սեւ ծովի ափերով եւ Դարիալի կիրճով: Անհավանական չէ, որ վրացերեն Գմիրի (հերոս) բառը մնացած լինի կիմերներից, ինչպես հայերեն հսկա (վիթսարի, հերոս) բառը մնացել է սակ ցեղանունից, գուցե եւ Կումայրի-Գյումրի բնակավայրը: Կիմերներն ամրացան Փոքր Ասիայի արեւելյան վայրերում, որոնք բռնված էին հայարմեններով, ստեղծեցին իրենց իշխանությունը (Գամիրքում), բայց հետզհետեւ ձուլվեցին բնիկ արմենների հետ:

Սակերի նվաճումները դժվարացան, երբ մեծ ու փոքր ցեղերից հետո բախվեցին մեղ-մարական, հատկապես զորեղ Ուրարտական եւ հզոր Ասորեստանյան պետությունների հետ: Այնուամենայնիվ նրանց հաջողվեց այդ վայրերում որոշ ժամանակ գերիշխանության հասնել, որը սակայն երկար չտևեց, որովհետեւ դրան խանգարում էին ոչ միայն բնիկների քանակը, կազմակերպվածությունը եւ

կուլտուրան, այլեւ հենց իրենց՝ անվերջ շարժման մեջ գտնվող, ձիաբույծ, անասնապահ ռազմիկ սակ-սկյութների տոհմական կենցաղը եւ պետականություն ստեղծելու հայտնի նախադրյալների պակասը: Այդ էր պատճառը, որ կարծ ժամանակով շփոթված հին արեւելյան ստրկատիրական պետությունները մոտ կես դար հետո դուրս եկան ընդդարմացած վիճակից, պատնեշ դարձան եկվոր ասպատակների դեմ եւ նրանց ցեղապետների կամ դաշնակից դարձրին իրենց, կամ ուղղակի օգտագործեցին որպես վարձկան ռազմիկների: Այս վիճակը համընկավ մ.թ.ա. VII դարին, երբ Մերձավոր Արեւելքի պատմության ասպարեզից վերանում էին հզոր Ասորեստանը, Ուրարտուն եւ նրանց փոխարեն կարծ ժամանակով աշխույժ էր ապրում նոր Բաբելոնը, արագ զորանում էր Մեդիա-Մարաստանը եւ հանդես էր գալիս հայ-արմենական ցեղերի միասնությունը:

Իրենց հետ նաեւ մետաղի (բրոնզի, երկաթի, ոսկու, արծաթի) բավականին բարձր կուլտուրա բերած սկյութ-սակերը նստակյաց էին դառնում, ստեղծելով փոքր իշխանություններ ավելի հոծ բնիկների գավառներում: Նրանց նվաճած այս երկրների հին բնակիչները քանակով, անշուշտ եւ կուլտուրայով, բարձր էին հարձակման ընթացքի բռունցքից հետզհետեւ բաց ձեռք դարձած սկյութ-սակերից, որոնք արդեն իրենց վճռական դերը խաղացել էին հին արեւելյան ստրկատիրական հին պետությունների հիմքերը ավելի թուլացնելու գործում եւ, կասեի, նրանց նվաճած շատ ցեղերի ազատագրման եւ լիներխության աշխույժ ավելի բորբոքելու մեջ: Այս տեսակետից ուշագրավ է ընդհանրապես եւ կարեւոր մեզ զբաղեցնող նյութի համար այն, որ սակերը գուցե բոլոր ցեղերից ամենից շատ բարեկամացան հայ-արմենական ցեղերի հետ: Սրան նպաստում էր ոչ միայն իրար հետ խառն ապրելու կամ դրացի լինելու հանգամանքը, որքան հայ-արմենների թշնամանքը ուրարտական դինաստիայի դեմ, հատկապես Ասորեստանի դեմ, որոնք սակերի եւ ամենազորեղ թշնամիներն էին: Զայ-արմենները, բնիկ լիներվոլ հանդերձ, այս պարագաներում գրեթե նույն վիճակն էին ապրում, որպիսին ապրում էին սակերը: Սակայն հաղթանակը երիտասարդ ուժերին էր պատկանում՝ Մեդիա-Մարաստանի առյուծի

բաժինով: Շուտով ընդհանուր հաղթանակի պտուղներին (Ասորեստանի դեմ) լիուրի տիրացան իրանյան հին ցեղերից մար-մեդերը, որոնք իրենց ցեղակից ու ենթակա պարսիկների, այլեւ հայ-արմենների, որոնց հետ եւ սակերի եւ այլ երկրորդական ցեղերի կապեցին իրենց պետականության արագընթաց սայլին: Այս հանգամանքը պետք է որ մարերին ավելի մոտիկ ցեղակից սակերին մոտեցնեւ ոչ թե նրանց, այլ վիճակակից ու հողակից եւ մեկ-երկու դար դաշնակից հայ-արմեններին: Զայերի սակ (հսկա) բարեկամների մեծ մասը մ.թ.ա. VII-IV դարերում, ասել է շուրջ չորս դարերի ընթացքում, անտարակույս, հայացան, հայալեզու դարձան:

Ուստի հնարավոր էր, որ մ.թ.ա. VII-VI դարերի նրանց ցեղապետները, կամ սրանցից ոմանք, երկրորդական տեղ գրավեին նույնիսկ հայ-արմենական միջցեղային առաջնորդ-նահապետների շարքում: Սիսակն էլ տեղ գրավեց (ըստ Խորենացու) Զայկազյան նախնիների ցուցակում(2):

Ամենայն հավանականությամբ սկյութների մի զորեղ հատվածն էլ՝ ալազունները, շարժվելով երեւի արդի Ուկրաինայի հարավարեւմտյան տարածությունները, անշուշտ նույն՝ մ.թ.ա. VII դ. անցնելով Կովկասյան լեռնաշղթան, Ալանաց դռնից (Դարյալի կիրճից) թափանցեցին վրացական-վիրաքարթվելական մշտական բնիկ ցեղերի բռնած արեւելյան տարածություններից՝ Ալազան գետի միջին եւ ստորին ավազանը: Դարերի ընթացքում սրանք էլ ձուլվեցին վիրական ցեղերի՝ քարթվելների եւ իմերելների հետ, մասամբ նաեւ, հարավից՝ դրացի հայ-արմենների հետ, իրենց անունը թողնելով Ալազան գետի վրա, իրենց շեկ-գեղեցիկ կերպարանքը՝ արեւելյան վրացիների վրա:

Նույնպես հյուսիսից եկած սակ-սկյութների մի ավելի զորեղ հատվածը՝ ալան-օսերը, որոնք իրենց ցարդ իրոն են կոչում, հիմնականում ամրացան լեռնաշղթայի հյուսիսային լանջերի, ձորերի ու ստորոտների վրա: Սրանք երեւի, ավելի ուշ ժամանակներում, շուրջ V-IV դարերում շարժվեցին դեպի հարավ եւ սեպի նման ձեղքեցին վիրաքարթվելական ցեղերի երկիրը, հասան Քուռ գետի ափերը, արդի Թբիլիսիի մոտերքում, սահմանակից դառնալով այդ վայրերին

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

հասած հայ-արմեններին, որոնց նվաճողական առաջընթացը այդ ժամանակներում (մ.թ.ա. II դ. առաջին կեսին) վարում էր Արտաշես Ա հայոց միավորիչ թագավորը: Տրամաբանական է ենթադրել, որ պլանների առաջխաղացման փորձերը պատճառ դարձան հայ-ալանական պատերազմին՝ Քուռ գետի ափերում, որն ավարտվեց, ըստ հայոց գեղեցիկ վեպի, պլանների պարտությամբ, նրանց առաջնորդի որդու գերության, որի քրոջը՝ Սաթենիկին կնության տալով Արտաշեսին՝ հաշտություն կնքվեց նրանց միջև(3): Այս պլանները ես իրենց մեծագույն մասով ձուլվեցին ավելի կենսունակ եւ կազմակերպված վրացական ցեղերի՝ քարթվելական ժողովրդի մեջ:

Արդի օս-իրոնների (հին պլանների) մի հատվածը, Վրաստանի հյուսիսարևելյան գավառների վրա բնակված (Յարավային Օսեթական ավտոնոմ մարզը) դիտում են ոչ թե հնից այդտեղ մնացած բեկոր, այլ XV-XVI դարերում Վրաստան թափանցած օսական տարր: Բայց հին պլանների հյուսիսային միությունը մ.թ.ա. V դ. «ժողովուրդների շարժման» ժամանակներում, զորեղ բռնուցք կազմելով, այլ ցեղերի հետ, շարժվեց դեպի հյուսիս-արեւմուտք եւ տրորեց Եվրոպան, անգամ հասավ հյուսիսային Աֆրիկա: Այսպես է լինում ցեղերի, հատկապես անասնապահ ցեղերի աճից գոյացող խլրտումը, ինչպես մեղվի պարսի, անկաշկանդ առաջ շարժումը, որը ավարտվում է կամ նոր հայրենիք գտնելով (սլավոնական որոշ ցեղեր, մաջարներ, թուրքեր եւ այլք), կամ ասոպի նման հավելվով-վերանալով, ինչպես սակ-սկյութների բոլոր ցեղերը, կիմերները, «ծովային» կոչված ժողովուրդները, հիքսերը, ու ժամանակներում՝ թուրք-խազարները եւ այլք:

Այս արմատական էքսկուրսը դյուրացնում է մեր պատկերացումը, որ Դերբենդի Կասպիական դռներից խուժած սակ-շակերը պետք է որ Կովկասյան լեռնաշղթայի հարավարևելյան ստորոտներում, Քուռի միջին եւ ստորին ավազաններում (Սակաշեն-Շակաշեն, Շաքի), նույնիսկ ձիաբուծության համար ողջ Առաջավոր Ասիայի ամենանպաստավոր տարածությունը հանդիսացող Մուղանի-Միլի դաշտում, մ.թ.ա. VIII-VII դդ. կամ մեկ-երկու դար ուշ, ստեղծեին իրենց իշխանությունները: Մուղանի դաշտը, դաշտային Ղարա-

րաղը բռնած Իրոն-Արան ցեղի անունն էլ կմնար Արան (Իրոն), ալանական հայտնի ցեղի անունով: Ճիշտ է, այս անունը հետագայում մեկնաբանվեց եւ ընդունվեց որպես «տաք երկիր», ուր իրոք դեկտեմբեր-հունվարին նոր բուսած արոտի սննդարար խոտը հաճախ մարդու ծունկին է հասնում, բայց քարացած պարզունակը չպետք է չորացնի գիտական մտքի դալարը, խափանի համոզիչ եզրակացությունների ընթացքը: Ձիու պաշտամունքն ունեցող, մշտական հեծվոր ռազմիկ սակ-ալանները, որ հեղեղեցին նախ արդի Անդրկովկասը եւ այստեղից Մերձավոր Արեւելքի մի զգալի մասը, չէին կարող աչքաթող անել Մուղանի, Միլի, Ղարաբաղի դաշտերը, այսինքն՝ Արանը: Այս վայրն էր, որ մեր թվարկությունից սկսած եւ դարեր շարունակ դարձավ հայոց գլխավոր ձիաբուծարանը:

Անասնապահության համար այս բացառիկ ձմեռանոցի արեւմտյան սահման-մատուցներն սկսվում են Արցախ-Սյունիքի լեռներից: Սյունիք-Ջանգեզուրի կեսի եւ Արցախ-Ղարաբաղի մեծագույն մասի անտառները եթե դժվարություն էին հարուցում ոչխարի շարժման, ապա ձիապահության համար ամառային արոտի դժվարություն չէր լինում, մանավանդ որ Սիսիանը, մասամբ արդի բուն Ջանգեզուրը եւ Զաշաթաղն ու Վայոց ձորը, անցյալում ես այնքան անանտառ ալպյան արոտներ ունեին, որ բազմահազար անասունների կերը լիովի կբավարարեին: Այն գրեթե հավասար էր այժմ եղած արոտավայր տարածություններին, քանի որ պակասած անտառներից ազատված արդի տարածության հավելումը ծածկվում է աճած բնակչության կողմից լանջերը վար ու ցանքսի տակ դրված տարածության չափով:

Չէի ասի, թե Ջանգեզուրի (նաեւ Օշականի) բազմաքանակ դուբենածե բնակավայրերը, նույնաձեւ դամբարանները (Սիսիան-Շաքիի Դիք քարերը (Ղոշունդաշ), Ուզի, եւ ամենախոշորը՝ Գորիս-Վերիշենի եւ շատ այլ վայրերի) եւ նման հուշարձանները լինեն սակ-սիսակների կուլտուրա: Դրանք ավելի հին բնակիչների, այսինքն մեծ մասամբ մի ծագում ունեցող առանձին տոհմերի, ապա ցեղային միության շինարարության արգասիքն են, որոնցից անշուշտ օգտվել են շուրջ 2500- 2700 տարիներ առաջ եկած եւ բնակված սակերը: Շատ

հավանական է, որ արդի Ջանգեզուրի տարածքի վրա գտնվող այդ կուլտուրան սյունիներինն է եղել, որոնց առանձին տոհմերը նստակյաց դառնալով ստեղծել էին գյուղական համայնքներ, պարիսպներով ամրացված բնակավայրերով:

1949-52թթ. մեծ մասամբ Սիսիանում կատարած իմ ստուգողական պեղումները համոզեցին, որ դուբենածե դամբարանների եւ բնակարանների մշակույթը շատ ավելի հին է եւ բավականին տեսական, այսինքն՝ մինչեւ սկյութական ցեղերի արշավը դեպի արդի Անդրկովկասի վայրերը: Սակայն այդ դուբենների կողքին հանդիպում են նաեւ այլ ձեւի թաղումներ, ոչ միայն կառուցման ձեւով, այլեւ բովանդակությամբ: Ասենք ուղիղ քառակուսի, մեկ ու կես մետր խորությամբ դամբարաններում թաղված է միայն մեկ ձիու գլուխ: Կամ թե հին դուբենածե դամբարանի վերին՝ երկրորդ շերտում, բոլորովին այլ մշակույթի եւ այլ ձեւի թաղում կա, ծանր սալերը հին ձեւով կրկին դասավորած, ծածկած (հանդիպեց Սյունի բերդի արեւմտյան փեշերի հարթակի վրա): Այդ երկրորդ շերտի, այսինքն դարի ուշ թաղման իրերի մի մասը՝ հատկապես զարդերը, բառացի կրկնությունն էին հնագետ Կուֆտինի կողմից Վրաստանում կատարած պեղումների նյութերի հետ: Կասկածից վեր է, որ թե Վրաստանում եւ թե Սյունի-Սիսիանում պեղված այդ իրերը սկյութական իրեր են: Ավելին, Սիսիանում հանդիպում են նաեւ հողաբլուր դամբարաններ, որոնց Սիսիանյան ծագումը կարելի է ընդունել անվերապահ: Դրանց նմանները շատ են հանդիպել եւ պեղվել անցյալ դարից, հատկապես Յուսիսային Կովկասում, Դոնի ավազանում: Անշուշտ Սյունի թափանցած սակերը նույնպես նստակյաց էին դարձել երեւի մ.թ.ա. VIII դ. վերջերից եւ իրենց լեզվով, նաեւ իրենց տոհմերի կամ տոհմապետերի անուններով կոչել այդ գյուղերը: Սա կլինի Սյունիքի տեղանունների ցարդ անբացատրելի նվազագույնը երկրորդ շերտը, որին շուտով գումարվեցին V դ. (մ.թ.ա.) առաջին կեսից սկսած նաեւ հայկական անունները:

Անշուշտ, այս շատ հին բնակավայրերից՝ քարակերտ հնագույն շեներից շատերը (որոնցից մեկի ավերակները, երեւի մ.թ.ա. III դ. պահպանվել է գրեթե անվթար, Ուզ գյուղի մոտ, Որոտանի աջ ափի բարձունք) >>> 124

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 123 քի վրա, Այոնի բերդի դեմ-դիմաց) կրել են իրենց տոհմերի անունը: Դրանցից, գրեթե հաստատ համոզմունքով, կարելի է թվել մի քանիսը. Գորայք (Գորայս, Գորես, Գորիս), Տաթեի (յանք), Յարժիք, Տխունիք, Տորունիք, Արատենք (Արատես), Դայք, Աջուք եւ այլն: Իհարկե հոգնակիակերտ «ք» վերջնատառը հայերենի ապացույցն է, բայց շատ ավելի հավանական է, որ այդ հոգնակին հետագայի՝ հայերեն գերիշխող լեզվի ազդեցության արդյունքն է. այսինքն՝ իմաստավորված է հայերի կողմից: Այդպես էին հնչում եւ մեզ համար հասկանալի, հայերենով գյուղանունները. Լորիք, Ուռիք, Գոմք, Դրունք, Թուրք (Թրեր), Մեծիք... Ավելին, հնարավոր է, որ այժմ հայերենով չբացատրվող կամ սոսկ ենթադրության ենթակա անունների մի մասը եւս հայերեն լինեն, ինչպես՝ Խոտուք, Փշատիք, Փշոնք, Պրակք, Լորք (Լորս), Կուրանք, Փառականք, Բնունիք(ս), Անգոնք... Կասկածից վեր է, որ շուրջ երկու հազար տարի առաջ բազում հայերեն բառեր, անուններ վերացել, չբացել են կամ մնացել, բայց այժմ մեզ համար դարձել անհասկանալի: Դրանց մեջ կան եւ հատուկ անուններ՝ մարդկանց, տեղանուններ եւ աշխարհագրական անուններ: Բայց անվիճելի են հատկապես նախահայկական անունները, որոնք անբացատրելի են, որպես զանազան մեռած տարախոս լեզուների մնացորդ, կամ աղավաղված անուններ, որոնք ավելի շատ են եւ գուցե օգտակար չլինի դրանց բացատրության համար թափած ջանքը, երբ պակասում են եզրակացության համար դուրս քաշելիք փաստերը: Օրինակ, ինչո՞ւ փորձենք բացատրել Շաղատ, Ցուր, Լծեն, Բորտի, Շոքար, Թորձուղու, Բղյան, Երեծ, Ախեն, Արիտ եւ այլ տեղանունները: Կարելի է միայն նմանություններ գտնել, ենթադրական առաջարկներ անել: Կարող ես հայերենով անմիջապես բացատրել Մեծիք, Որոտն, Ցողունի, Արծիվ, Գետակից, Ծաղկա, Լոր, Գոմեր, Որձաբերդ, Ակունք, Ձկնարած տեղանունները, որոնցից մնացել են իրենց անունով՝ Որոտան, Լոր, Մեծիքը դարձել էր Ալիշար (Սոփուլու), Ակունքը՝ Բազարչայ (մնացածը հին ավերակներ են): Բայց Մազազնի, Ծեղթի, Աքածի, Ույնի տեղանունների մասին կարելի է միայն բռնազբոսիկ մեկնություններ տալ: Օրինակ, կարող ենք անմիջապես

պատկերացնել Ավան, Ջրվեժ, նույնիսկ Պողոնի (ասենք պտուղ բառից), բայց Քանաքեռ, Գառնի, Կոտայք (ցեղանուն) չես կարող հավաստի բացատրել:

Մեծ շարժումների խաչմերուկներում, էթնիկորեն տարբեր եւ տարախոս ցեղերի, ժողովուրդների մշակութային շերտերը նստել են իրար վրա, երբեմն լրիվ ծածկել նախորդին կամ դրացիական շարքեր կազմել, մեկը հասկանալի, քաջ հայտնի, մյուսը անհասկանալի կամ ենթադրելի: Գորայքի մոտ Ծակածոր, Աղոջրիկ (Մաղանջուղ) կամ Քարա(հ)ունջ, Տաթեի մոտ Լորիք, Արծիվ, Շաղատի մոտ Անգեղակոթ, Ապարանից գետ, Կամավանք-Աքածի, Թորձուղու եւ Խուրեսի մոտ, Դաստակերտ, Մեծիք, Ցողունի, Մորենի... Սա ողջ Հայաստանին՝ ավելիով եւ պակասով հատուկ երեւոյթ է դեռ մինչեւ թուրքական ցեղերի տիրապետությունը եւ նրանց կողմից հին այս ցանկը տասնապատկելը:

Իհարկե, չենք կարող իմանալ, թե քանի հին անուններ էլ շուրջ երկու հազար տարի առաջ, չնչին փոփոխությամբ, իմաստավորած-հայերենացած են, թարգմանված կամ վերանվանված (իհարկե, ոչ որպես կանխորոշ մշակված քաղաքականության արդյունք, ինչպես կատարվեց վերջին երեք-չորս դարերում): Սարերի, արոտավայրերի անունները փոխելը, վերակոչում տալը գուցե ունենար գործնական նշանակություն, բայց բնակավայրերի անունները բռնությամբ, կամայականորեն փոխելը բխում էր ազգային-պետական քաղաքականությունից: Այդ տեսակետից երջանիկ չասենք, անհամեմատ բարվոք վիճակում են հայկական այն գավառները, որոնք քիչ են գաղթել կամ գաղթվել են, բայց բնիկներից թեկուզ եւ մեկ մարդ, կամ մեկ ընտանիք մնացած լինի: Այս մեկը նորեկներին կասեր ոչ միայն գյուղի, այլեւ 128 գյուղի հանդերի եւ նրանց վրա պահպանված ավերակների, լեռների եւ գետերի անունները: Ուրախության հետ ինձ զարմանք պատճառեց, երբ 1926թ. Տաթեում վարպետ Երեմը թվում էր Տաթեի հողային տարածության վրա, անգամ նրանից դուրս գտնված ավերակների, վտակների ու վայրերի անունները: Ինձ թվում էր, թե նա 625-640 տարիներ հետո կարողում էր Ստեփանոս Օրբելյան պատմիչի գրքի էջերը: Նման երեւոյթի հանդիպեցի Գորիսում եւ մոտիկ գյուղերում, նաեւ Խնձորեսկում եւ Տեղում, Շի-

նուհայրում, Սիսիանից Լորածորի գյուղերում (Շենաթաղ, Լոր, Դարաբաս), Բռնակոթ, Ախլաթյան եւ այլ գյուղերում:

Սիսիան (Այոնի-Ծղուկ)

Պատմական Այոնիքի կամ Սիսական նահանգի Ծղուկ գավառը արդի Սիսիանի շրջանն է: Անհիշելի ժամանակներից մինչեւ X դարը Սիսիանը հանդիսացել է Այոնյաց աշխարհի վարչական կենտրոնը՝ մշտապես մնալով նաեւ հոգեւոր կենտրոնը: Ամենավաղ դարերից մինչեւ X դ. Սիսիանը կոչվել է Այոնի, ապա՝ Ծղուկ: Ամենայն հավանականությամբ Այոնիի ածական անունը եղել է Ծղուկ (բազուկ-բռունցք), որը հետագայում ընդունվել է որպես երկրորդ, բայց գործածական անուն: Այս անվանափոխությանը նպաստած պետք է լինի նաեւ այն, որ ընդարձակ այս գավառը (նոր հասկացողությամբ՝ շրջանը) գրեթե միշտ երկու ենթաշրջան է ունեցել՝ բուն Ծղուկը եւ հյուսիս-արեւմտյան նրա մասը Որոտանի ձախ կողմից, որը պետք է նախապես կոչված լինի Ակունք: Հետագայում, XIII դարից, վերջինս կոչվեց Ալախ գավառ, որը երեւի մոնղոլական «յայլաղ» - ամառանոց բառից է, իսկ այժմ էլ կոչվում է Բազարչայի (նույն պատմական Ակունքի) ենթաշրջան: Որոտանի աջ ափը եւ ձախ ափից Աղուղիից մինչեւ Յարժիս, Լորիք (Քյուրղլար), որ բուն Ծղուկն է համարվել, XIII - XVI դդ. ձախ ափում ունեցել է նաեւ Որոտանի (Որոտնա) ենթաշրջանը, իրեն ենթակա աջափնյա մեկուսի Լորածորով (Ձորեր) եւ նույնպես աջափնյակում՝ Տաթեի ենթաշրջանը: Ծղուկի այս մեկուսի ծայրամասերի գլխավոր կենտրոնը Որոտան ավանն է եղել, մոտակա Վաղաղիի հետ, իրենց շրջակա այլ բնակավայրերով, հետագայում՝ նաեւ Աղուերծը, երբեմն՝ Տաթեը:

Պատմական Այոնի ավանը, որ այժմ Սիսիան շրջանային կենտրոնն է Որոտանի ափին, անտարակույս, նույն անունը կրող մի տոհմի կամ ցեղի կենտրոնական առաջին բնակավայրն է եղել: Այլ կերպ նրա անունով չէր կոչվի ոչ միայն ողջ գավառ-շրջանը, այլեւ՝ արդի Հայաստանի չափ տարածություն ունեցած հին Այոնիքը՝ Այոնյաց աշխարհը, որ պատմական Հայաստանի 15 նահանգներից, իր մեծությամբ, երրորդն էր՝ Այրարատից եւ Վասպուրականից

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

հետո:

Սյունի բնակավայրի հին պատմությունը վկայող վաղ միջնադարյան հուշարձաններին (որոնց մասին խոսք կլինի քիչ հետո) 1970թ. գումարվեց եւ հեյլենիստական էպոխայից՝ ուշ Արտաշեսյանների կամ վաղագույն Արշակունիների ժամանակներից, ոչ անվթար, մեզ հասած մի ուշագրավ հնագիտական հուշարձան էա՝ նույն Սյունի վայրում: Այդ մի բացառիկ դամբարան էր, իր հարուստ իրերով: Դամբարանի արժաթե թասերից մեկի վրա, այն ժամանակ Հայաստանում ընդունված, արամեական լեզվով եւ տառանշաններով գրված է ամանի տիրոջ անունը: Ըստ արեւելագետ Ա.Փերիխանյանի վերծանության եւ թարգմանության՝ գրված է. «Այս թասը պատկանում է Արախսզաթին. արժաթի քաշը 100 դրախմ է»(4): Թասը հին պարսկերենով կոչված է ռամբաքի, որ, ըստ Փերիխանյանի իրավացի դիտողության, այժմ դարձել է լամբաքի եւ նալբաքի (ինչպես կոչում էին եւ մեր բարբառում պղնձե, անգամ թեյի սովորական ափսեները): Արախսզաթ անունը եւս մարա-պարսկական է, իսկ նրանց անունները մեծ չափով գործ էին ածում եւ հայերը: Ո՞վ գիտե, գուցե եւ Արաքսի-Երափսի ծնունդ (զաթ) նշանակեր այդ անունը, դարձյալ մարական հորջորջմամբ. բայց անվանի մասնագետը՝ Փերիխանյանը, թարգմանում է. «Երաշխիքով ապահովված ծնունդ» իմաստով:

Այս դամբարանից մեր ձեռքը հասած դրամներից մեկը պարթեւ-պարսկական թագավոր Օրոդ 2-րդի անունով է (57- 37թթ.), որը Տիգրան Մեծի որդի Արտավազդի ժամանակակիցն է: Իսկ թե ի՞նչ դրամներ չեն հասել մեր ձեռքը, հենց թեկուզ երկրում իշխող Արտավազդի եւ նրա հաջորդների նոր էրայի նախորդ եւ առաջին տարիներին կտրված, կամ պարսկական նաեւ ուրիշ դրամներ, դժվար է ասել, որովհետեւ դամբարանի «պեղումը» նախապես կատարել էին տեղի բնակիչները: Հիշենք, որ այս հուշարձան-դամբարանից ավելի քան 2 հարյուր տարի առաջվա Արտաշես Առաջին թագավորի գավառական սահմանային քարերից մեկը, դարձյալ արամեական լեզվով արձանագրված եւ 2140-2150 տարի մեզանից առաջ կանգնեցված, գտնվեց Իշխանասարի ստորոտում, որ դարձյալ Սյունի-Սիսիանի սահմանակետն էր, Հաբանդ կամ

Ծակեձոր (Գորիսի) գավառից անջատող(5):

Այս փաստերին չի կարելի չգումարել համաշխարհային հնագիտության տեսակետից ամենից ուշագրավը եւ բացառիկը, որ գտնվեց 1946թ. դարձյալ Սիսիանում, շրջկենտրոնից քիչ հեռու՝ «Սառնակունքի գանձ» անունն ստացած արժաթ դրամների ժողովածուն, որի քանակը դաշտի ձորակի պռնգին թաքցրած փոքրիկ կավե ամանի մեջ, պետք է եղած լիներ 800-ից մինչեւ 1000 հատ: Պատահաբար գտնված եւ մինչեւ այժմ հազվ կեսը կամ մեկ-երրորդից քիչ ավելին գնված, հավաքված այդ գյուղը եւս համարում են աշխարհում առաջին անգամ հայտնաբերված ողջ հեյլենիստական աշխարհի գանազան երկրներում, վայրերում եւ ժամանակներում կտրված դրամների հատուկ կոլեկցիա, եւ ոչ դրամական գանձ:

Եթե այս դրամական հավաքածուից հետո հիշենք Սիսիանի Տոլորս գյուղում գտնված եւ ավերված դամբարանի փաստը, երեւի 4-5 դար ավելի վաղ ժամանակների, քան Սիսիան ավանի դամբարանը, Սյունի գավառի պատմության այդ երկրորդ շրջանը (հնագիտական հազարամյա շրջանին հաջորդող) հանդես կգա որպես ճիշտ եւ ամուր ատաղձ գավառի վաղ միջնադարյան դարձյալ հարուստ պատմության համար:

Անտարակույս, Սյունի ավանի տարիքին պետք է լինի եւ նրա արեւելյան մատուց-բարձունքի վրա կառուցված Սյունի բերդը: Սյունի-Սիսիան գավառի (շրջանի) չորս հատուկ խոշոր ամրոցներից երկրորդը (Ամուրն Որոտան, Սյունի, Սիսական եւ Բորտո բերդ), իսկ ամեն ավան, քիչ թե շատ միջակ գյուղ, բնակավայր ունեցել է իր սեփական քարապատ բերդը:

Սյունի ամրոցը կառուցված է եղել ավանի արեւելյան բարձունքի վրա, Ուզի (Փոքր Ույծի) դիմացից, Որոտանի ձախ ափի բարձր քարափից սկսած: Իր երեք մետր հաստությամբ պարիսպներով, Սյունի ամրոցը վտանգի ժամանակ Որոտան ձորի գլխավոր ճանապարհը փակող ամուր դարպասն է եղել, հատկապես ձմռանը: Այդ ուղին գալիս էր հեռուներից, մտնում Որոտնա ձորը եւ գետի հակառակ հոսանքով ձգվում դեպի Նախձավան, դեպի Վայոց ձոր՝ Սյունի-Սիսիանի վրայով:

Այդ ռազմաառեւտրական ուղին գա-

լիս էր դեպի Սյունի ավան սրանից մի քանի կմ դեպի արեւելք գտնվող Աղխիտուրի (արդի Աղուդի գյուղի) միջով: Սյունի-Սիսիանի այս հնագույն ավաններից մեկի՝ արդի Աղուդի գյուղի (իր ավերված վանքով եւ նրա բակում ցարդ կանգնած VI դարի բացառիկ ու եզակի մահարձանով) հին Աղխիտուր անունը հուշում է նրա դիրքը, որ նշանակում է փակ վայր, կողպեք: Իրոք: Աղխիտուր-Աղուդին բնական ժայռոտ բարձունքների միջեւ ընկած փոսորակ մի տաք հարթակի մեջ է, այդ մասում անանցանելի Որոտանի քարափի հյուսիսային թիկունքում:

Դժբախտաբար, այժմ Սյունի ամրոցից նկատելի են գետի քարափի վերին մասում պահպանված պարսպի հետքերը, ոչ մեծ հարթակի վրա կառուցվածքների, բնակարանների հետքերով: Երեք մետր թանձրությամբ՝ հաստությամբ (եւ երեւի 3-4 մետր բարձրությամբ) պարիսպների հետքերն այժմ հազվ նկատելի են, որովհետեւ տեղ-տեղ 2-3 մետր բարձրությամբ պահպանված պարիսպների քարերը վերջին տասնամյակներում կրել եւ կրում են շինարարության համար:

Սյունյաց նահանգի այս հինավուրց կենտրոն Սյունի ավանի կենտրոնական մասը եւս ունեցել է իր անմիջական բերդը, որի հյուսիսային քարափի շուրթին պահպանված էին հարավային պարսպի շարքերն ու հետքերը, որոնք պարզ տեսանելի էին դեռեւս 1950- 52թթ.:

Սյունի-Սիսիան ավանի այլ հնագիտական եւ ճարտարապետական հուշարձաններից ուշադրության արժանի եւ մեր եզրակացության համար վճռական նշանակություն ունեցող այլ փաստեր եւս կան Ստ.Օրբեյան պատմիչի երկու թանկագին ասույթի հետ:

Սյունի բնակավայրը բռնել է մինչ Սիսիան ավանի բնակելի արեւելյան հարթակի գետափնյա տարածությունը (այսօրվա օղանավակայանի ողջ սահմանները ներառյալ): Ջրառատ Սիսիանի այդ տարածությունը, այգիներով եւ բանջարանոցներով, զբաղեցրել է քաղաքը իր շուկայով: Ըստ երեւույթին բնակավայրը մոտեցած է եղել Սյունի բերդին եւ գլխավոր՝ Ջարե կամուրջին: Վերջինս երկաթե միացումներով, սրբատաշ բազալտից իր կառուցման եղանակով նվազագույնը հասնում է V դ. եւ միայն պահակակետը՝ ձախափնյա խելից վեր (աջ կողմը չի պահպանված) գուցե հավելում է XVI-XVII դդ.: >>> 126

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 125 Կամուրջի աջափնյա խելի (կրունկի) վերջին մնացորդը եւ գետի մեջտեղում ամուր դիմացող երկու թռչչը-կամարների միացման այուն-խելի կամ ոտքի ստորին մասի հետ քշեցտարավ 1920թ. գարնանը գետի զորեղ վարարումը (որը իմ աչքով եմ տեսել):

Սակայն ամենից ուշագրավն այն է, որ արդի Սիսիանի արեւելյան մասի այդ հարթակի (բանջարանոցների) տեղում, այսինքն ավերված քաղաքի վրա, գյուղ է եղել մինչեւ 1826թ. Գյուլումփա անունով: Քաղաք եմ կոչում այդ մաքրված հարթակը, որովհետեւ այժմյա օդակայանի բաց տարածությունը, ավանդաբար, տեղի բնակիչները կոչում էին Շահրիստան: Այս անունով ողջ միջնադարյան Մերձավոր Արեւելքում պարսկերեն կոչել են քաղաքների բանուկ թաղամասը՝ շուկայով: 1950 թվականին ես որոշ թմբկների ստուգում կատարեցի: Գտնվեցին ջնարակած կավանոթների, միջնադարյան ծանոթ ապակիների բեկորներ, մեկ պատի խոռոչի՝ «պտրիանի» մեջ կտորված՝ ապակյա մի անոթի հետ, որն ուներ ծիածանագույն փայլ, եւ տանիքի ծածկի վկայություն՝ ելուստով, տափակ գրամիտի բեկորներ:

Եթե հնագիտական այս բեկոր-փաստերին գումարենք Օրբելյան պատմիչի երկու տեղեկությունը այս նույն Սյունի ավանի մասին, մեր պատկերացումը ավելի հստակ կդառնա:

Ահա թե ինչ է պատմում Օրբելյանը Սյունյաց նահանգի հոգետր առաջնորդ Մուշե եպիսկոպոսի մահվան եւ Երիցակի ընտրության մասին: Պարսից Կավատ արքայի, հայոց Վահան Մամիկոնյանի եւ տեր Մուշե (՛) կաթողիկոսի հայրապետության տարիներին վախճանվում է Սյունյաց եպիսկոպոս Մուշեն, աթոռը զբաղեցնելով 36 տարի: Որովհետեւ նաեւ կյանքից հեռացել էր Սյունիքի իշխանը եւ նրան փոխարինում էր այրին՝ մեծահավատ բարեպաշտությամբ լի Սահակիա իշխանուհին, նահանգում տիրում է դժգոհություն, լսվում են գանգատներ, Սահակիա իշխանուհու միջնորդությամբ Մուշե կաթողիկոսը, «ըստ հայրապետական ծոխության», ոսկեգոծ թամբով սպիտակ ջորի նստած, ոսկեփայլ խաչով, որպես դրոշ, եպիսկոպոսների եւ բազմաթիվ պաշտոնյաների ուղեկցությամբ, Վայոց ձորի վրայով ծանապարհվում է Սյունիքի կենտրոն: «...Իշխանների գահանիստ Սյունիին մոտենալիս... ըն-

դառաջ է ելնում տիկինը, իր որդու հետ, ազատագունդ բոլոր հեծայլների եւ կես հետիոտն, կես ձիավոր մեծաքանակ բազմությամբ, ընթանում էին կաթողիկոսի աջ եւ ձախ կողմերից եւ տանում նստեցնում են գահավորակի ոսկեթել եւ մարգարտաշար բարձի վրա՝ իշխանական գահի, որը գտնվում էր Կից վտակաց տեղում: Երեք օր այստեղ հանգստանալուց հետո, Սահակիա իշխանուհին կաթողիկոսին նվիրում է արքունի վրանը իր կահավորությամբ եւ բարձերով ու նստեցնելով սպիտակ ջորիների ոսկեպատ կառքը՝ ծանապարհում է դեպի Կապանի Բաղք գավառի Երիցավան-Երիցվանիկ (այժմ՝ Արծվանիկ) ավանը, որի այժմ Կարմրաքար կոչվող քարափի հարթակի վրայի փոքրիկ Երիցավանքի մեջ ձգնում էր Երիցակ վանականը, գիտուն սրբակրոնի մեծ համբավ ստացած: Նա վճռականորեն մերժում էր նահանգի եպիսկոպոսի աթոռը զբաղեցնելու պատիվը: Կաթողիկոսը բռնությամբ օժում է Երիցակին, բայց վերջինս մեկ տարի հետո մահանում է» (6):

Այս նկարագրությունից միանգամայն անվիճելի է դառնում, որ նահանգի իշխանանիստ-գահանիստ ավանը իրոք կրել է Սյունի անուն, Սյունյաց նահանգի 12 գավառների մասին խոսելիս պատմիչը ասում է. «իսկ գաւառք ունի երկրտասան, առաջինն, որ ունի զբուն գահ իշխանացն եւ հայրապետաց Ծղուկ գաւառ անունանեալ, ի Ծղըայ գաւառապետէ»(7): Սյունի-Ծղուկ գավառը նահանգի իշխանների եւ հայրապետների (հոգետր պետերի) գահանիստ վայրն էր:

Սրան ավելանում է եւ այն, գուցե զլխավորը, որ արդի Սիսիանի կենտրոնի փոքրիկ բարձրության վրա է գտնվում Զեփսիմեի տիպի հայկական նշանավոր կենտրոնագմբեթ տաճարներից մեկը՝ Սյունի վանքը, որին հետագայում կոչել են Սիսավանի եկեղեցի, Ղարաքալիսայի եկեղեցի, հնում՝ նաեւ Սինի վանք: Ահա, ցարդ կանգուն այս տաճարի մասին Է գրում պատմիչ Ստ. Օրբելյանը հետեյալը. «Առաջին գլուխ ամենեցունց վանօրէից եւ աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական՝ Տաթե եւ մեծ առաքինարանն Թանահատի վանք, Սինի վանք, որոյ եկեղեցին չքնաղ եւ նորակերտ ձեռով կանգնեալ գմբեթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտուհոյն Վարագոխտոյ՝ Սինեաց տիկնոջէ, յառաջ, քան զհայ

թուականն, յունուն սրբոյ Լուսաւորչին: Եվ առաջեւ վանացն ի մէջ քաղցրահայեաց մեյդանին դնեն իշխանքն տուն արքունի եւ ապարանք իշխանանիստ եւ յամենայն աւուր ասեն գային ի ժամ պատարագին»(8):

Շուրջ 800 տարի հետո պատմիչը այսքան զեղեցիկ ու սեղմ խոսք է ասում նահանգի իշխանանիստ վայրի՝ Սյունի ավանի եւ նրա մեջ կառուցված տաճարի մասին, համարելով, որ կառուցված է Սյունյաց տիկին Վարագոլութի կողմից, հայոց թվականից, այսինքն 551 թվականից առաջ: Բայց նկարագրվող եւ ցարդ աննշան փոփոխություն կրած այդ շենքը, իր ոճով կարող էր կառուցվել միայն 575-675 թվականների արանքում (ունի 637 թվականի մի արձանագրություն, բայց ոչ կառուցման): Ըստ երեւոյթին, շենքի հարավային դռան (մուտքի) վրա ունեցել է արձանագրություն, բայց դուռը ամբողջովին նորոգված է: Ավելի հավանականը, որ նույն շենքի տեղում եղել է IV-V դարերում կառուցված ավելի հին տաճար, ավերված՝ ժամանակի ընթացքում կամ երկրաշարժից:

Ինչպես տեսանք, նահանգի թիվ առաջին տաճարը պատմիչը համարում է արդեն աթոռանիստ Տաթեյը, կոչելով «զուխ ամենեցունց»: Ապա՝ Թանահատի վանքը (Արեւիսի V դ. «Կարմիր վանք»), միայն երրորդը՝ Սյունի վանքը:

VIII դարում Սյունյաց վանքերի մեջ վեճ է ծագում առաջնության հերթակալության համար, հին ու մեծ վանքերի վանահայրերը իրենցն են առաջ քաշում: Զովակիմ եպիսկոպոսը դասավորում է հերթակալությունը՝ հնից եկող. «Նախաթոռը, ամենայն Սինիքի...», ամբողջ Սյունյաց աշխարհի «եկեղեցիների մայր եւ մայրաքաղաք Շաղատի եկեղեցին» համարելով: Այս հին կարգին կողմնակից Զովակիմ եպիսկոպոսի դեմ չարանում է Սյունի վանական Փանոս Ույծեցին: Վերջում սրա եւ Աղխիտով (Աղուդի) միջեւ ավելի մեծ վեճ է բորբոքվում, բայց որոշում են Շաղատից հետո երկրորդ իրավունքը տալ Շաքիի եկեղեցուն, երրորդը Աղուդիի, չորրորդը՝ Մրենի Ավան գյուղաքաղաքին եւ միայն հինգերորդը՝ Սյունի վանքին...(9):

Այդ ժամանակ արդեն, երեւի VII դարի սկզբներից, Սյունին կոչել են նաեւ Ույծ (գատ, անջատված): Իսկ գետի մյուս ափին վերոհիշյալ կամուրջից քիչ այն կողմ, դեպի հարավ-արեւելք գտնված

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ավանը կոչվել է Փոքր Ույծ, որը դարձյալ լավ եկեղեցական շենք է ունեցել, որի մասին վկայում են մեզ հասած չնչին, բայց բացառիկ բեկորները: Առաջին հայացքից թվում է, թե Ույծը հենց արդի Ուզն է եղել (որը ունեցել է Սիոն անունով եկեղեցի), որի վանահայր Փանոս վարդապետը մրցման է դուրս եկել Շաքիի եւ Աղխիտուի (Աղուդի) նշանավոր վանքերի հետ, առաջնության իրավունք ստանալու համար: Այս հարցը երկար տարիներ զբաղեցրել է ինձ (Մրենո Ավան մեծ բնակավայրի հետ) եւ շատ անգամ հանգստացել եմ ինձ համոզելով, այդ դյուրընթաց ճանապարհով ընթանալու վճռով՝ Ույծը համարելով արդի Ուզը, թեեւ Օրբեյյանի ցուցակի մեջ, ինչպես ասացի, արդի Ուզ գյուղը կոչվում է Փոքր Ույծ: Եւ նախկինում է սահմանակից Մեծ Ույծ եւս եղել է: Հնարավոր է նաեւ, որ հետզհետեւ քաղքեղոնականությամբ հարող վրաց աշխարհի Հայաստանին սահմանամերձ Ցուրտավից եւ շրջակայքից, ուր անշուշտ կային (գուցե ավելի շատ) հայ բնակիչներ, հալածվել եւ գաղթել են Սյունիք: Այդ կարող էր տեղի ունենալ մինչեւ 607/8թթ.: վրաց եկեղեցու քաղքեղոնիկ դառնալն ու հայ եկեղեցուց անկախանալը՝ հարելով ուղղափառ կոչված հունական եւ այլ քաղքեղոնիկ եկեղեցիներին: Պետք է, որ այդ հայ ներգաղթածները բնակվեին Սյունիքում, որովհետեւ այդ նոր հոսանքը որոշ արմատներ նետած է եղել այստեղ: Այդ ներգաղթը կարող էր լինել VI դ. վերջին քառորդից մինչեւ VII դարի առաջին տասնամյակում: Այս պատճառով էլ Սյունի անունը վերափոխած լինեն գատ, անջատ «ույծ» բառով: Այս ներգաղթի մասին եւս հայտնում է Օրբեյյանը, երբ խոսում է VIII դ. Ույծի եւ Աղուդիի «սաստիկ հակառակության» մասին: «...Հնագիտակը Աղխիտուացեաց գլխեցեացն հաստատեցին ի Վրաց աշխարհէն լինել պանդոխտ եւ նդժեհ+»(10): Իհարկե խոսքը դրսից եկած հայ բնակիչների մասին է, որոնք եկել էին այն Սյունիքը, որը վարչականորեն եւ թե եկեղեցու գծով 560-70-ական թվականներից գրեթե կես դար եւ ավելի անջատվել էին նույնպես Պարսից ենթակա Հայաստանից՝ Դվին մայրաքաղաքից, անմիջապես կապվել Ատրպատականի, իսկ եկեղեցու գծով՝ Աղվանից հայ կաթողիկոսության հետ, որը նույնպես նեստորական-քաղքեղոնական հակում ուներ: Ըստ որում պետք է խոս-

տովանել, որ Սյունի վանքի եկեղեցին իր վրա ճարտարապետական որոշ տարրեր ունի քաղքեղոնիկ կարգին մոտիկ (օրինակ, մայր խորանում երեք լուսամուտների առկայությունը): Սյունի վանքի հարդարանքի տարրերից կան եւ Զվարթնոցի վրա (եւ ոչ հակառակը, ինչպես կարծում են մի քանի մասնագետներ): Այս է նաեւ պատճառը, որ այդ նշանավոր Սյունի-վանքը գրեթե արիամարիված եւ մոռացված է եղել ոչ միայն գրականության մեջ, այլեւ բնակչության: Ոչ մի ուխտագնացություն եւ ոչ մի երդում նրա անունով չկա: Մինչդեռ Շաղատի, Թանահատի, Որոտնա, Տաթեւի վանքերը, Անգեղակոթի Վարդան Զորավարի հասարակ մատուռը եւ երդմանք եւ ուխտագնացության վայրեր էին: Ուստի, պատահական չէ, որ հետզհետեւ Սյունի վանքի նախկին հեղինակությունը, նրա վանականների թելադրող ուժը պակասում էր, ճիշտ այնպես, ինչպես Զվարթնոցի նման փառահեղ շքեղությունը երդման եւ ուխտագնացության վայր չդառավ, ինչպես եւ քաղքեղոնիկ հայ կաթողիկոս Հովհաննի կառուցած Ավանի Ծիրանավոր տաճարը: Ժիշտ է, հայ ուխտատեղիների մեծագույն մասը գալիս է հեթանոսական-պաշտամունքային վայրերից, բայց քրիստոնեական առաջին հազարամյակում կառուցված եկեղեցիների, վանքերի մի մասը եւս դարձել էին ուխտավայրեր՝ Ծիծեռնավանք, Տաթեւ, Սանահին, Գանձասար, Հաղարծին, Գոշավանք, Հառիճ եւ այլն:

Սյունի բնակավայրը ինչ-ինչ պատճառով զրկվել է նահանգի կենտրոն լինելուց, իր դիրքը զիջելով դեպի արեւմուտք, Որոտանի աջ ափին կառուցված Շաղատ ավանին: Այդ երեւի տեղի է ունեցել II-III դդ.: Եթե Շաղատը որեւէ առավելություն ունեցել է Սյունիի նկատմամբ, այդ միայն կարող է լինել նաեւ այն, որ գտնվել է գետի մյուս կողմի քարափին թիկնած հարթակի վրա ամուր դիրք ունեցող նույնպես ջրառատ՝ եւ նույնպես վաղնջագույն կենտրոն Անգեղակոթի դեմ-դիմաց: Անգեղակոթին գրեթե արվարձան լինելուց բացի, Շաղատը ավելի հարմար եւ մոտիկ դիրք ուներ մեծ մասամբ Սյունիքի մեջ մտնող Նախճավան նահանգի, հատկապես Երնջակի վրայով ձգվող եւ դեպի Նախճավան ու այնտեղից շատ երկրներ ու վայրեր տանող առետրական ուղու վրա: Շաղատը ուրիշ ոչնչով չէր կարող առավելություն ունենալ Սյունիի նկատ-

մամբ: Շաղատում է ամրացել Սյունիքի հզոր իշխանությունը: Այստեղից է Սյունիքն ընդունել քրիստոնեությունը: Շաղատ ավան-մայրաքաղաքում են ծնվել հզոր Անդոկ Սյունի իշխանը եւ նրա դուստր Փառանձեմ թագուհին (Պապ թագավորի մայրը)(11):

Ամեն դեպքում կասկածից վեր է, որ Շաղատը, իշխանանիստ լինելով հանդերձ, մշտապես մնացել է Հայաստան երկրի նշանավոր բնակավայրերից մեկի՝ Անգեղակոթի արվարձանը: Այսպիսով, Սյունյաց աշխարհի վաղ քրիստոնեական կենտրոնները հերթականությամբ դառնում են Շաղատը, որից հետո, ամենայն հավանականությամբ V դարից, Սյունին (Սիսիանը), ապա IX դարից մինչեւ վերջ՝ Տաթեւը: Դադարելով նահանգի հոգեւոր իշխանության կենտրոն լինելուց, Սյունի-Սիսիան ավանը մինչեւ այսօր մնաց գավառ-շրջանի կենտրոն, շնորհիվ նաեւ իր աշխարհագրական հարմար դիրքի:

Շատ հավանական է, որ միառժամանակ, ուշ միջնադարում, հացառատ եւ անասնապահ Սիսիանի վարչական իմաստով կենտրոնը դարձած լինեն այլ բնակավայրեր, ինչպես Սիսիան (Սիսական) բերդավանը, որի անունով էլ վերջին դարերում Սյունի-Շողուկ գավառը, երեւի առաջին հերթին, օտար իշխողների կողմից, ստացավ Սիսիանի մահալ (գավառ) անունը, նաեւ՝ Անգեղակոթը, Որոտանը, Աղուերծ-Դարաբասը, Բռնակոթը: Այդ ժամանակներում արդեն Սյունի-Ույծը, նորից իր անունը փոխել էր, դարձել Զեթովան, որը իր հնչմամբ անընդունելի էր թուրքախոս մարդկանց համար, նրանց լեզվով վատ իմաստ ունենալու պատճառով: Այն Զեթովան է կոչվում, օրինակ, XIV դարի վերջին քառորդի մի հիշատակարանում(12): Եւ համոզված եմ, որ խոսքը վերաբերում է Սյունի-Ույծ ավանին, մանավանդ, որ շատ մոտիկ Փոքր Ույծը արդեն կոչվում էր Ույծ, կամ Ուզ: Եւ նախկինում է XV-XVI դարերից արդեն Սիսիանի այդ պատմական բնակավայրը եւս պետք է նոր անուն ստանար, երբ բավականին ինտենսիվ կերպով սկսվել էր Հայաստանի բնակավայրերի եւ աշխարհագրական անունների փոփոխությունը: Այդ կատարվում էր իմաստի թարգմանությամբ (Կարմրաշեն-Կզլցուղ, Ծաղկաձոր-Դարաչիչազ) Զերմուկ-Իստիսու), իշխողի լեզվին համապատասխան աղավաղումով (օրինակ՝ Պոր-

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 127 տակ-Օրդաքյու, Թեժառուք-Թայաբուլս, Միջավան-Մինջեան, Կապան-Ղափան-Ղափանաթ, Արզական-Արզաքանդ (Խնդրա գյուղ), Բերդի-Վերդի, Նորատուք(ս)-Նորադուգ եւ այլն). իշխող լեզվի իմաստով նոր անուն տալով՝ Որոտան-Բազարչայ, որովհետեւ Որոտանի ակունքի Ակունք ավանը XIII դարի վերջերից դարձել էր ամառային կիրակնօրյա մեծ շուկա - «բազար», կից հոսող Ակունք գետակը դարձավ Բազարչայ, Ակունք ավանը եւս կոչվեց Բազարչայ, ողջ Որոտանն էլ նրանք կոչեցին Բազարչայ: Սակայն հայ բնակչությունը պահեց Օրոտ, Օրոտնա գետ իսկականին մոտիկ անունը, որպէս գրեթե բացառություն, ինչպէս Էջմիածինը (թե՛ւ այն կոչեցին Ուշքիլիսա-երեք եկեղեցի, բայց հայերը չէին կարող այդպէս կոչել իրենց մեծ սրբավայրը): Իսկ երբ, օրինակ, Փամբակի Վանաձորը իր նշանավոր Սեաքար եկեղեցու անունով կոչեցին Ղարաքիլիսա, կամ Սիսիանի Զեթովազնը, իրենց լեզվով ամոթ եւ ծաղրիմաստ նշանակությամբ, դժվարացան արտասանել եւ նույնպէս կոչեցին Ղարաքիլիսա (Սյունի վանքի համար), հայ բնակիչներն էլ դյուրությամբ ընդունեցին այդ մինչեւ XX դարի 30-ական թթ.:

Սիսիան (Սիսական) բերդավանում եւ ամուրն Որոտան ամրոցում իշխողները կայազորային զորամաս էին պահում, զի գավառը խիտ հայ բնակչություն ուներ: Այդ պատճառով էլ, մանավանդ խառնակ ժամանակներում, վարչական կենտրոն պետք է համարվեին այդ բերդավանները՝ Սիսիանը եւ Որոտանը (որին կոչում էին Ուրուֆ):

Աղուերծ կամ Ըղվերծ ավանը՝ Լորաձորում, երեւի XVI-XVII դարերում, եթե ոչ ամբողջ Սիսիանի, գեթ Որոտնա, Տաթեւի եւ Լորաձորի ենթաշրջանների վարչական կենտրոն դարձավ, ուր իշխում էին XVI դարում իսլամական դավանանք ընդունած Բուրթեյ Օրբեյան իշխանի շառավիղները Բուրթեյ օջախ կոչված, այդ նշանավոր ավանը կիսելով երկու կրոնական համայնքի վրա: Այստեղ կենտրոնացավ եւ վարչադատաստանական ատյանը-դարաբասը: Գյուղն էլ կոչվեց Ղարաբաս, բայց նույնիսկ XIX դարի երկրորդ կեսին Լորի, Շենաթաղի ծերերը ասում էին. «գնանք Ըղվերծի Ղարաբասը» (այժմ այս գյուղը կոչվում է Դարպաս):

Սակայն այս ամենի մեջ ավելի ուշագրավ է Սիսիան բերդավանի անունը, որից էլ մնացել է շրջանի Սիսիան անունը:

Այս բերդավանը, 1940թ. պաշտոնական որոշմամբ, իր դարավոր անունը զիջեց, երկար ժամանակ Ղարաքիլիսա անունը կրելուց հետո, մոտ մեկ տասնամյակ (մեր երեսունական թվականներին) Սիսավան անունն ստացած եւ անցյալում, ինչպէս տեսանք, շատ անգամ անվանափոխության ենթարկված այդ պատմական բնակավայրին, որը եւ դարձավ Սիսիան: *Իսկ հին Սիսիանը (անշուշտ ծիսականից մնացած) ստացավ Յացավան նոր անունը, ի դեպ, այս հին Սիսիանը, պատմական հավաստի տվյալներով եւ իմ հաստատ համոզմամբ, Իսրայել Օրու ծննդավայրն է եղել:*

Ոչ հեռավոր դարերում (XV-XVIII դդ.) Անգեղակոթ նշանավոր ավան-գյուղաքաղաքում նստում էին Սիսիանի հոգեւոր պետերը եւ մելիքները (օրինակ, Սաֆրազի նախնիներն ու ժառանգները), բայց XVIII դարի երկրորդ կեսից մելիքները փոխադրվեցին Բռնակոթ, ավելի խոշոր դարձած եւ ավելի ապահով ավանը, որը հայաբնակ գյուղերի ավելի մեծ շրջապատ ուներ եւ մեծ ուղուց ու քոչվորական մեծ շարժման ոտատակից քիչ հեռու էր գտնվում: Շրջանի հոգեւոր կենտրոնն էլ Անգեղակոթից փոխադրվում է Վաղարշու վանքը, որը Սյունյաց նահանգային հոգեւոր կենտրոն Տաթեւից հետո, երկրորդ նշանավոր վանական հաստատությունն էր դարձել դեռեւս մեկ հազար տարի առաջ, անհիշելի ժամանակներից լինելով հեթանոսական մեհյան, ապա վաղ քրիստոնեական վանք եւ մինչեւ XX դարի սկզբները մեծ ուխտատեղ, նաեւ Օրոտնա վանք անունով:

Սյունի-Ծղուկ-Սիսիանի նշանավոր հին բնակավայրերից շատերի պատմական հուշարձանների՝ նյութական մշակույթի մնացորդների վերանալով, այսինքն՝ ավերումով, դժվարացել է շրջանի ամբողջական իրական պատմությունը վերականգնելու գործը: Այդ երեւոյթի գլխավոր պատճառը բնակչության ազգային կազմի փոփոխությունն է: Երբեմն նույնիսկ անունների հետքերն իսկ դժվար է գտնել-վերականգնել: Թե՛ւ այդ տեսակետից Վասպուրական, Տարոն, Սասուն, Գուգարք, Աղստեվ, Արցախ-Խաչեն գրեթե չգաղթած կամ քիչ գաղթած (մինչեւ 1915թ.)

մարզերի, գավառների հետ բախտավոր է նաեւ պատմական Սյունիքը (չհաշված Սեանի ավազանը), Վայոց ձորից մինչեւ Մեղրի, մինչեւ Արաքսի ափերը: Բայց եւ այնպէս շատ ավաններ եւ գյուղեր ոչ միայն զրկվել են իրենց պատմական հուշարձաններից, այլեւ նույնիսկ իրենց հին անունից: Յիշենք մի քանիսը՝ Սիսիան-Սիսական բերդավանը (այժմ Յացավան), Որոտանը, Շաքին, Ակունքը (Բազարչայ), նույնիսկ Աղուղին, Վաղարշի ավելի շատ կորուստ են ունեցել: Օրինակ, մինչեւ XIX դարի կեսերը, միայն XVIII դարում անմարդաբնակ դարձած հին գյուղաքաղաք Ակունք-Բազարչայի չորս եկեղեցին, չորս գերեզմանատուն, հին քարաշեն այլ կառույցների հետքերով, նույնիսկ մոտակա կարավանատան սրբատաշ պատերը չեն պահպանվել նոր բնակիչների, XIX դարի երկրորդ կեսի «ջանքերով»: Վերացել են Աղուղի հին գյուղաքաղաքի վանքն ու գերեզմանատունը, Շաքիի վանքը եւ գյուղի հնագույն բազիլիկ եկեղեցին, որ կանգուն էր դեռեւս մեր դարի առաջին տասնամյակում, ինչպէս նաեւ հարուստ գերեզմանատունը: Չենք հաշվում երկրորդական բնակավայրերի հնությունների կորուստը: Բայց հանցանք կլինի լուռ մնալ, երբ վերջին 40 տարիների ընթացքում նաեւ Սիսիանի հայ բնակչություն ունեցող մի շարք հին գյուղերում նույնպէս բավականաչափ հնագիտական կորուստներ են եղել (եւ լինում են), ինչպէս վերը նշված Սյունի-Սիսիան ավանում, Աղվերծ-Դարապասում, Ուգ գյուղում, Ախլաթյանում, նույնիսկ Անգեղակոթի նման պատմական ավանում եւ այլ գյուղերում:

ԼՈՐԱՁՈՐ

Պատմական Ծղուկ գավառի, ինչպէս եւ այժմ Սիսիանի շրջանի ամենագեղեցիկ հովիտը իր առատ բուսականությամբ, մեղմ կլիմայով համարվել է Լորաձորը, որ անցյալում Դարաբասի, այժմ Դարպասի ձոր անունն է կրում, կամ պարզապէս ասում են Ձորեր:

Լորաձորը սկսվում է ջրառատ մեծ Տամով (Դամուրի), Արամազդ, Գամբույլ սարերի եւ Յաչենա ձյունառատ լեռան ստորոտներից: Ըստ բնակավայրերի այն սկսվում է Տատան (Տատնի) հին ավերակ բնակավայրից, որը գտնվում է Շենաթաղից հարավ-արեւմուտք, ձգվե-

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

լով մինչև Աղվերծ-Դարպաս, Լծեն, Երեմի-Երեծ (Երիմիս-Բահարլու), նույնիսկ մինչև Որոտանի հին ամրոցի բարձր քարափի հարավային լանջին թառած ավերակ Բերդ գյուղատեղը:

Լորածորը միջին դարերում ունեցել է շուրջ 15 գյուղ եւ գյուղակ, որոնցից այժմ գոյություն ունեն 5-ը՝ Շենաթաղ (այժմ Լեռնաշեն), Լոր, Գետաթաղ, Դարպաս (հին Աղվերծ-Դարաբաս) եւ Լծեն: *Մրուցի բնակիչները մեկ եւ կես դար առաջ փոխադրվել են Զարծիս (Յայջի)*, Տատանը (Տատնին) նույն ժամանակ էլ լքվել: XVIII դարում լքվել են Երեմիս-Երեծը եւ Մոգույքը (Գետաթաղից արեւմուտք): Մարդակայր (Ծառը ս. Զովհաննես), Մշկաձոր (Դռնապան), Սապատաձոր (Սագու Ղալա), Մագազնի (Ավահիզ), բոլորը Շենաթաղի եւ Լորի սահմաններում եւ երկու գյուղատեղ էլ Դարպասի հանդերում (Ահնի, Միջնադաշտ):

Լորածորի ոչ մեծ նեղ հովիտը արեւմուտքից սեղմված է Պատպատ լեռնաշղթայի արեւելյան անտառաշատ լանջերի, արեւելքից մեծ մասամբ Յուղ կամ Յուղակ սարի հարավային ոչ անտառապատ արեւմտյան լանջի միջև: Լորածորը այժմ էլ, առավել անցյալում, կարծես սուզված է մրգաստան այգիների, փոքրիկ պուրակների, անթիվ թփուտների մեջ: Միակ գետակը՝ Լորագետը հոսում է հարավից, վերոհիշյալ ձյունապատ լեռների՝ Տամուկի, Արամազդի, Գամբույի եւ Զաչենի լանջերից հոսող ձնհալի եւ բազում աղբյուրների ու առվակների սառնորակ ջրերով լրացված եւ Լծեն գյուղի ուղղությամբ խառնվում Որոտանին:

Ձորերի այս մեկուսացված տարածությունը Զայաստանի գրեթե բոլոր շրջանների նման բնակված է եղել անհիշելի ժամանակներից, բայց հնագիտական շատ փաստեր վկայում են նրա 4-5 հազար տարիների անցյալի մասին, հատկապես հայկական վաղ շրջանի մասին, որը սկսվում է շուրջ 2 եւ կես հազար տարի առաջ եւ անընդմեջ հարատեւում իր զարգացման փուլերով: Հնագույն կամ առաջին շրջանի ապացույցներից նշման արժանի են նաեւ մեր պեղումներից ստացված նյութերը Լորի (Դռնապանի ձորի եւ Շորքարի) դոլմենաձեւ դամբարաններից. գենքեր, դաշույններ, նետի բրոնզե սլաքներ, մետաղե եւ այլ զարդեր, գործիքներ, կավե ամաններ: Զայտնաբերվեց անգամ մեզ ծանոթ Միսիանի «սուլպղիատ» ցո-

րենի (սպիտակիատի) ածխացած հատիկ, պահպանված ծածկված ամանի մեջ (նման հատիկ էլ գտնվեց Անգեղակոթի հանդում պեղված նույն ժամանակի դամբարաններից մեկում): Սրանք անվիճելի ապացույցներ են, որ մեզնից ավելի քան 3 հազար տարի, շուրջ 30 դարեր առաջ որքան բարձր զարգացում են ունեցել հացահատիկային երկրագործությունը եւ արհեստները: Լորի Կուզկաքար վայրում 20 տարի առաջ պեղված 7-8 տարեկան աղջնակի քարարկղային գերեզմանը վաղ հայկական թաղման առաջին հստակ փաստն էր մեր հնագիտության մեջ, որովհետեւ 385-405թթ. միջոցում մեռած փոքրիկի առամների արանքում այդ ժամանակների պարսից թագավորի դրամ էր դրված: Ավելի ուշագրավն էր, որ այդ փոքրիկ աղջկա գերեզմանը, որ պատկանում էր Մեսրոպ Մաշտոցի ժամանակին, թաղված էր հեթանոսական ծեսով(13), թեեւ Լորը շատ մոտիկ էր այն ժամանակի Ծղուկի հարյուրամյա քրիստոնեական նշանավոր ավաններին՝ Շաղատ, Անգեղակոթ, Սյունի (Միսիան), Տաթեւ, Վաղարի... Դրանից ավելի վաղ թաղում դարձյալ Լորի Շլորուտում, Սպիտակ խաչերի մատուռից մի քանի մետր դեպի հյուսիս, մեծ դամբարանը, ոչ մի իր չտվեց, որովհետեւ դիակը կամ դիակները այրել էին: Դիակիզման սովորույթ շատ երկրներում է եղել:

Զայաստանի եւ Սյունիքի ապրած դարավոր բազում թոհ ու բոհերի ժամանակներում Լորածորը երբեմն գերծ է մնացել հաճախակի ավերումներից, գտնվելով բանուկ ծանապարհներից կտրված, չհաշված Պատպատի Զամհար լեռնանցքով անցնող քրչերի եւ ամառային առեւտրական ուղին (Գողթնից եկող եւ Որոտան ավանի մոտ Լախիջեան-Միսիան-Գորես-Արցախ ուղուն միացող), որը անցնում էր Աղվերծ-Դարպասի հյուսիսային հանդերի միջով: Անտառներն ու այգիները եւ խանգարում էին ոչխարի հոտերի անմիջական անց ու դարձին, որ նույնպես քիչ չափով փրկարար էր Լորածորի համար: Քոչվորների մուտքը, առեւտրական կապը Լորածորի գյուղերի հետ (կամ ասպատակությունները) կատարվում էին Պատպատ լեռնաշղթայի զագաթներն ու արեւելյան լանջերը բարձրանալուց հետո (Գաբուռի սար, Արա գեղ, Տամուկ, Դաստակերտի սար եւ այլն) կամ թե երբեմն Տաթեւի ու Կա-

պանի կողմերից էին թափանցում Լորածոր: Մեծապես այդ էր պատճառը, որ Լծեն գյուղից բացի, մնացած չորս գյուղերում մի հազարամյակ պահպանվել են տեղացի բնակիչները, իրենց բարբերով ու Արցախ-Սյունիքի (Ղարաբաղի) բարբառով: Գետաթաղի մասին տեղական ավանդություն կա, որ 1828-30թթ. ներգաղթել են Լախիջեանի հայկական գյուղերից: Լալայանը գրում է. «Գետաթաղի բնակիչները մեծ մասամբ Հին Լախիջեանից գաղթականներ են (ընդամենը 39 ծովս 362 շունչ)»(14): Մինչդեռ իմ ստուգումները պարզեցին, որ դրանք եւ Միսիանի մի քանի այլ գյուղեր (Բռնակոթ, Ախլաթյան, Անգեղակոթ, Վաղարի եւ այլ) գաղթեցված են եղել դեպի Լախիջեան 1795 -1826թթ. երեք անգամ եւ ռուսական կայուն տիրապետությունից հետո վերադարձել են իրենց բնակավայրը, որոնց գումարվել են Դարաբաղից, Պարսկահայքից եւս եկած ընտանիքներ:

V-XVII դդ. միջնադարի այդ երկարատեւ ընթացքում Զայաստանի, մասնավորապես Սյունիքի պատմական անցքերի բախտակիցն է եղել նաեւ փոքրիկ մեկուսի Լորածորը: V-VII, X-XIV դդ, նաեւ XVII դ. Լորածորը եւս ունեցել է իր անհամեմատ խաղաղ զարգացման, բարգավաճման ժամանակները՝ երբեմն քիչ ավելի կամ պակաս: Գետաթաղի եւ Լորի XVII դարում գրեթե հիմքից վերակառուցված եկեղեցիները, որպես V-VI դարերից եկող բազիլիկ շենքեր (հատկապես Գետաթաղինը) այն ժամանակների գորեղ ապացույցներն են: Ինչ վերաբերում է Աղվերծ-Դարպասին, ապա այն միշտ էլ եղել է պատմական Սյունի կամ Ծղուկ գավառի 140-ից ավելի բնակավայրերի 12-13 նշանավոր ավանների էին՝ Անգեղակոթը, Շաղատը, Շաքին, Ակունքը (Բազարչայ), Սյունին (արդի Միսիանը), Աղուդին, Միսականը (նախկին Միսիան, այժմ՝ Զացավան), Որոտանը, Տաթեւը, Վաղարին, Բռնակոթը, Աղվերծը: Սրանցից մի քանիսը՝ Անգեղակոթ, Սյունի, Աղուդի, Ակունք, մասամբ Որոտան եւ Տաթեւ, համարվել են գյուղաքաղաքներ, Միսականը՝ բերդաքաղաք: Այդ ավաններից հատկապես Աղիստուն (Աղուդի), Անգեղակոթը, Տաթեւը, Վաղարին (իր Որոտնա վանքով), Ակունքը (Բազարչայը) եւ Աղվերծ կամ Ըղվերծը նաեւ >>> 130



Լոր

« 129 ձեռագիր գրքեր գրելու վայրեր են եղել, այսինքն՝ բարձր կուլտուրայի օջախներ: Սակայն ուշագրավ է, որ հատկապես XVII դարում գրքեր են գրվել, արտագրվել նաև Գետաթաղ եւ Լոր գյուղերում: Պատահական չէ նաև, որ այդ նույն XVII դարի 60-ական թվականներին այս երկու գյուղերում էլ կառուցվել են, ավելի ճիշտ վերակառուցվել են, այդ ժամանակի ոչ միայն Սիսիանի, այլև ողջ Սյունիքի, ցարդ կանգուն լավագույն եկեղեցիներից երկուսը, հատկապես, իրենց չքնադորեն մշակված մուտքերով: Ըստ որում, ավելի քան ուշագրավ է, որ Գետաթաղի խարխված հնագույն եկեղեցին վերակառուցել են միայն գյուղացիները, իրենց սեփական միջոցներով: Շատ գեղեցիկ քանդակագարդ դեռևս ձակատին կիսագրագետ գյուղացու ձեռով գրված է. «ԷՍ ԵԿԵՂԵՑԻՍ ԿԵՂ ՇԻՆԵՑ ԹԻՎՆ ՌՃԾ-ՌՃԾԱ» (1651-1652թթ.) »:

Դարաբասին Լորի մի քանի ծեր մարդիկ մինչև 1914 թվականը դեռևս նրա հին անունով Ըղվերծ էին ասում: Իսկական Աղվերծ անվանը երեւի այդ-

պես ասել են շուրջ մեկ հազար տարի առաջ բարբառի ազդեցությամբ: Չէ՞ որ շատ անգամ ա-ն դառնում է ը, օրինակ այստեղ-ըստեղ, աշխարք-ըշխարք: Իսկ թե ինչ է նշանակել Աղուերծ՝ դժվար է ասել, բայց եթե արմատը հայերեն աղու բառն է, նշանակում է քաղցր, հաճելի, լավ, նուրբ՝ հոգ չէ, որ շարունակությունը անհասկանալի է կամ աղավաղված: Ամեն դեպքում Աղվերծ ավանը գլխավորն է եղել ձորերում, այն էլ երեւի միշտ, թեւե միայն 844թ. է հիշվում գրականության մեջ: Եթե Լորը երբեմն մրցակից է եղել Աղվերծ կամ Ըղվերծին, այն էլ միայն պետք է հասկանալ ավելի շատ անկախության տեսակետից, այսինքն պատկանած լինի մի ուրիշ, թեկուզ երկրորդական իշխանիկի: Մի բան անվիճելի է, որ XV-XVI դարերից արդեն այս գեղեցիկ հովիտը սկսել են կոչել Դարաբասի ձոր, իսկ ավելի վաղ Լորածոր կոչվելը երեւի ոչ միայն այն պատճառով է, որ այդ ոչ մեծ գյուղը աչքի ընկնող բնակավայր է եղել եւ ունեցել է միջնադարյան շքեղ մատուռ-խաչքար (որին կոչել են «Լորիկ իշխանի մա-

տուռ»), այլ առավել եւս այն պատճառով, որ գետը սովորաբար կոչվում է վերին հոսանքի բնակավայրի անունով-Լորագետ: Ճիշտ է, Լորից հարավ դեպի ջրաբեր լեռները եղել են մի քանի այլ բնակավայրեր՝ Մրուց, Շենաթաղ, Մարդակայր (Ծառը սուրբ Յովհաննես), Մշկածոր, Տատան (Տատնի), Մագազնի (երեւի Ավահիզը) եւ այլն, բայց դրանց մեջ աչքի է ընկել Լորը: Մեր այս անվերապահ հայտարարության համար հավելյալ ապացույց է նաև Լորի արդի եկեղեցու տեղում, նույն հիմքերի վրա, շուրջ 1,5 հազարամյակ առաջ եղած եկեղեցին, որպիսին եւ Գետաթաղին է (ավելի շատ վկայություններ պահպանված): Լորի եկեղեցու գավիթը կարգավորելիս բացվեց ցամաքած հին աղբյուրի մնացորդը, հարավարեւմտյան անկյունի մոտ, ձանապարհի տակին: Պարզ է, աղբյուրի ջուրը բերած են եղել հոգաղբյուրից կամ Յանգստարանի ձորի վերին ակունքներից:

Լորի պատմության համար մեծ կորուստ է եղել կառուցման ժամանակ հին հանգստարանի-գերեզմանոցի տա-

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

պանաքարերի օգտագործելը դպրոցի շինարարության վրա, որի պատճառով ոչ մի հին տապանաքար ու խաչքար չի մնացել, չհաշված Խաչիպապանց տան պատի մեջ մնացած միջնադարյան խաչքարը եւ «Ապիտակ խաչերի» տոհմական գերեզմանները: Այդ տեսակետից ձորերի գյուղերից շատ երջանիկ է Դարպաս-Աղվերձը եւ վերջին երեք դարերի համար՝ Շենաթաղ-Լեռնաշենը:

XIII դարից սկսած, հզոր Աղվերձի առկայության պայմաններում, Լորում իշխել են Որոտան կամ Որոտն ավանում հիմնավորված Սյունի իշխանների ժառանգները, որոնք, երեւի, արդեն դարձել էին սոսկ ազատներ, թեւ կոչվում էին Որոտշահ, որը գործ էր ածվել նաեւ որպէս հատուկ անուն: Այս ժամանակ է, որ Օրբեյանները, հենց Որոտն ավանում, իրենց հոգեվարքը ապրող Սյունյաց հին իշխանական այդ չքացող տոհմի հետ կապվեցին խնամիական կապերով, նրանց հազարամյա ավատական-ֆեոդալական իրավունքի ժառանգորդը եւս համարվելու նպատակով, որպէս դրսի նորեկներ: Մեծ իշխան Տարսայիժ Օրբեյանը ամուսնացավ բռնությամբ իսլամ ընդունած Սյունյաց վերջին իշխաններից մեկի՝ Սադունի դուստր Արուս Խաթունի հետ, որը պատմիչ Ստեփանոս Օրբեյանի մայրը դարձավ (թաղված է Տաթևի վանքի մեջ, 1286 թվականին, արդեն որպէս «մեծահավատ» քրիստոնյա տիկին):

Ես, գրեթէ առանց վերապահության, առայժմ կարծում եմ, որ Սյունիքին տիրացած նորեկ Օրբեյան տունը Որոտշահ կոչվող այս երկրորդական Սյունյաց իշխանական տանն են թողել՝ վերահաստատել կամ նոր հատկացրել նրանց հին կալվածքներից Լորը կամ նաեւ Լորը: Սյունիների կալվածքներից մեկն էլ Որոտանից հետո միշտ եղել է մոտակա Վաղարի ավանը, ուր XIV դարի սկզբներին ծնվել է այդ մարող ընտանիքին պատկանող ապագա մեծ գիտնական-փիլիսոփա Օհան Որոտնեցին:

Լորի հնության համոզիչ ապացույց է Լորի խաչ-մատուռի յոթ հարյուր տարվա - 1271 թվականի - արձանագրությունը.

ԵՍ ՈՐՈՏԱՆԱՅ, ԳՐԻԳՈՐ ՈՒ ԼՈՐԻԿ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԵԱՎՁՍ ՀԱՒԻ ԻՄ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՍՈՒՐ ԻՄ ՈՎ ԿԱՐ-ԳԱՅՔ ՅԻՇԵՅԵՔ Ի ՔԻ Ի Թ: ՉԻ: ՄԱՄԻԿ»

Այս եղբայրներից ավագը՝ Որոտշահը սույն արձանագրությունից երեք տարի հետո մեծ իշխան Տարսայիժ Օրբեյանի նվիրատվական մի փաստաթղթի վկաներից մեկն է եղել, որպէս նրա ենթակա ազատներից: Այստեղ Որոտշահը կոչվում է «Լորի թռն»: Յասկանայի է դառնում՝ Որոտշահի փոքր եղբայր Լորիկը կրել է իր վաղուց մեռած Լոր անունով պապի անունը: Բայց ըստ երեւոյթին շատ երիտասարդ կամ նույնիսկ երեխա է եղել եւ փաղաքշորեն Լորիկ են ասել: Ավելի հավանական է, որ այդ անունը կնքել են լոր թոչունի եւ Լոր գյուղի անունով եւ ոչ հակառակը՝ Լոր գյուղը կոչել Մեծ Լոր իշխանի անունով: Գուցէ Գրիգորը եւս բավականին երիտասարդ է եղել, որ նրա մեծ եղբայրը հիշված երկու եղբայրներին զանց առնելով երեքի հոր՝ Յայրապետի համար կանգնեցրած խաչքարմատուռի վրա գրում է. «ՅԱԻՐ. ԻՄ (ՅՈՐ ԻՄ) ՅԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՍՈՒՐ (ՄԱՅՐ) ԻՄ»: Մար գրելու փոխարեն բարբառի ազդեցությամբ պետք է գրեին մոր մեր, բայց սխալ գրել են մոր, այն էլ ոչ թե «մեր», այլ դարձյալ «իմ», մինչդեռ երեք եղբոր անունով է սկսված արձանագրությունը: Որոտշահը կարծես իր կրտսեր եղբայրներին ուղղակի հաշվի չի առել եւ չի դրել «հար մեր եւ մոր մեր», այլ երկու դեպքում էլ գրել է «իմ»:

Ամեն դեպքում Լոր գյուղի այդ գեղեցիկ մատուռ-խաչը (վարպետ Մամիկի կառուցած) պատկանում է Յայրապետին եւ իր կնոջը, որի անունը նրա որդիները չեն հիշատակել արձանագրության մեջ: Սա մի բացառություն է, որովհետեւ սովորաբար գրվում էր եւ կնոջ անունը:

Եթե մատուռ-խաչքարը Յայրապետի անունով չի հիշվել հետագայում, ապա պետք է կոչվեր գեթ գլխավոր կառուցողի անունով՝ Որոտշահի անունով, բայց որովհետեւ շատ ծանոթ հեշտ ընթացիկն է հասկանալի է եղել Լորիկ բառը (գյուղն էլ Լոր է կոչվել), երեւի վերջին երկու-երեք դարերում մատուռ-խաչքարն էլ բնակիչները կոչել են «Լորիկի մատուռ»:

Յայրապետի պատմության մեջ ծանր ժամանակներից մեկը իրավամբ համարվում է XV դարը, հատկապես՝ նրա առաջին կեսը: Այս դժվար ժամանակներում, երբ մի քանի տարի էր ինչ խաղաղ կյանք էր սկսվել, 1445թ. Լորեցի ոմն Նահապետի որդիք՝ Սարգիսը եւ

Ամիր Յասանը (Լորի դպրոցից գրեթէ մի քանի հարյուր քայլ դեպի հարավ-արեւմուտք, այգու մեջ) կառուցում են, հասարակ շինվածքով, փոքրիկ մատուռ-եկեղեցի, Ս. Աստվածածնի անունով, իրենց «հայրական հալալ արդյունքով» գնված հողեր նվիրում նրա պահպանության համար (քահանայի եւ այլ ծախքերի համար): Նվիրատվություն են անում նաեւ Դավիթ եւ Միրան եղբայրները (հապավված զաւգնն բառը հնագետ Սեդրակ Բարխուդարյանը կարդում է չաւգանն, որպէս հարկի տերմին, մինչդեռ հապավված Ջաւգնն (զաւգնականությանմբն) սովորական բառն է, «Ձ» տառը հստակ գրված): Ամեն դեպքում, քանի որ XV դարի առաջին կեսին գրեթէ որեւէ շինարարություն չի եղել Յայրապետանում եւ Սյունիքում, այս անշուք փոքր շենն իսկ վկայություն է Լոր գյուղի շեն եւ բարվոք վիճակի մասին նաեւ այդ խիստ ավերի տարիներին:

«Ծառը սուրբ Յովհաննես» անունն ստացած եւ XVII դարում վերակառուցված Ծղուկ-Սիսիանի, անգամ Ջանգեզուրի գավառի նշանավոր ուխտավայրերից մեկի առկայությունը եւս Լորի հանդում (Շենթաղի եւ Լորի արանքում) ավելացնում է Լորի պատմական հուշարձանների քանակը եւ պատմության էջերը: Ճիշտ է, այդ հուշարձանը ծառայել է որպէս Մարդակայր կոչված փոքրիկ գյուղի եկեղեցի, բայց, անտարակոյս, եղել է սրբազան ծառի եւ ջրի հեթանոս պաշտամունքի վայր, որ հետո կապել են քրիստոնեական սրբի անվան հետ, որը նույնպէս ջրի պաշտամունքի խորհրդանիշներից է: Ուշագրավ է, որ XVII դարի կեսերին վերակառուցված այդ սրբատաշ քարից փոքրիկ եկեղեցին շինելու ժամանակ նոր ուռենի են տնկել աղբյուրի մոտ, որը կանգուն ու կանաչ էր մինչեւ 1951թ., այսինքն՝ մոտ երեք դար:

Ինչպէս վերը նշեցինք, Լորի եկեղեցին հիմքից վերակառուցվել է XVII դարում: Այն կառուցվել է Գողթնի Ագուլիս վաճառաշահ գյուղաքաղաքի բնակիչ Մուզսի (մուղդուսի) Պետրոսի որդի վաճառական Պողոսի կողմից, իր եւ իր մեռած ու ողջ երկու որդիների հիշատակին 1666 թվականին, հայոց ՌՃԺԵ (=1115 + 551): Թեւեւ վանդություն կա, որ այդ, Ագուլիսի ու մեկ այլ եկեղեցիների շինարարության ծախքերը կատարել է ագուլիսցի մի նշանավոր վաճառականի >>> 132

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 131 տիկին, որը առեանգված է եղել եւ տարված պարսից պալատ ու ազատվելուց եւ կրկին քրիստոնյա դառնալուց հետո կառուցել է երեք եկեղեցի իր անձեղ «հոգու փրկության համար»: Կառուցման արձանագրությունը՝ գրաբար, գեղեցիկ տառերով փորագրված է ձոխաքանդակ դռան ձակատին.

*«Ի ԹՎՆ: ՌՃԺԵ: ՇՆՀԸԲ
ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ՇՆՅԻ ՍԲ ԵԿԳՅՍ
Ի ՀԱԼԱԼ ՎՍՏԿՅ ԻԻՐՅ Ի ՄԱՀԴԱ-
ՍԻ ՊՏՐՍԻ ՈՐԴԻ ԽՃՅ ՊՕՂՍԻՆ ԵԻ
ՈՐԴՈՅՆ ԻԻՐ ՓՈՒՄՆԳԿՈՒԼԻՆ: ԵԻ
ՄԻԻՍ ՀԱՆԳՈՒՅԼ ՈՐԴՈ ԸՍՏԵՓԱ-
ՆՈՍՆ: ԵԻ ԿՐՍԵՐ ՈՐԴՅՆ: ՅՐԻԹԻՆ
ՅԻՇԵՅԷԲ Ի ՔՍ ԱԾ»:*

Բռնակոթ

Շուրջ հազար հինգ հարյուր տարի առաջ Բռնակոթի խոշոր ավան լինելու վկայագիրը պետք է համարել V - VI դարերում կառուցված խոշոր բազիլիկ եկեղեցու գոյությունը: Նման մեծության եկեղեցիներ շատ քիչ են եղել Ծղուկ-Սյունի գավառում: Ճիշտ է, այդ եկեղեցին նվազագույնը 2 անգամ, մեկը՝ IX-XIII դդ. ժամանակամիջոցում, մյուսը՝ 1700-ական թվականներին, վերանորոգման է ենթարկվել, բայց հիմքն ու պատերի առաջին երկու շարքը չեն փոփոխել, ավերել: Սրա պատճառը նաեւ այն է, որ գյուղը, ըստ երեսույթին, միշտ ուժեղ, բազմաբնակից է եղել, թեեւ մինչեւ XVII դարը, երեւի շրջանի մի քանի այլ գյուղերի նման, վարչակազմապետական կենտրոն կամ իշխանական նստավայր չի հանդիսացել, ինչպես՝ Անգեղակոթը, Տաթեւը, Սյունի-Սիսիանը, հնագույն Շաղատը, Աղիտուն եւ Վաղարին, Որոտանը, Աղուերծ-Դարաբասը, Ակունքը (Բազարչայը) եւ Շաքին: Հարկի քանակից իսկ պարզվում է, որ Բռնակոթը XVII-XVIII դդ. ամենամեծ գյուղն էր:

Բայց գանազան ժամանակների այնքան ընտիր խաջարերը, որ պահպանվել են եկեղեցու պատի մեջ, գոտի շարած վերջին վերակառուցման ժամանակից (իսկ մի այդքան էլ ոչնչացած է, այլ տապանաքարերի հետ, մի մասը հենց եկեղեցու նոր պատերը վերաշարելու համար), ապա գյուղի մեկ թե երկու թաղային եկեղեցիների գոյությունը ցույց են տալիս գյուղի մշտական շեն եւ տնտեսապես ու կուլտուրապես զորավոր լինելը: Ի դեպ, Բռնակոթի եւ

Անգեղակոթի տարբերությունը շրջանի մյուս կենտրոն-ավանների համեմատությամբ, որպիսիք էին Սյունի-Դարաքիլիսա-Սիսիանը, Ակունք-Բազարչայը, Աղվերծ-Դարաբասը, Սիսական-Սիսիան-Յացավանը, եղել է այն, որ Բռնակոթում եւ Անգեղակոթում օտարները իսպառ չեն եղել, որպես վարչական ներկայացուցիչներ կամ բնակիչներ: Ըստ որում, Բռնակոթը մշտապես ունեցել է եւ իր արվարձան գյուղերը, հանդիսանալով նրանց կենտրոն-ավանը: Այդ գյուղերն են՝ Խանքը (Ալիու), Որձաբերդը (երեւի Քարձորը), Կիրակոսիկը (հին Աղբենդը), Ծաղկան, Կորովին (Կրովը), Ծեղթին (երեւի Ծակերի ձորը, կամ մոտերքը), Գայլոց վանքը (Կլեվանսը), Կամավանքը (Գյունեին), Ագարակիկը, որի տեղը պարզ չէ ինձ համար, չեմ կարողացել որոշել (եթե Սիսիանի ճամփի վրա չէ), ապա՝ Վասակակերտը (Մագրայից արեւմուտք ավերակ բերդավանը), Մուցը (Մագրան): Կլեվանսը, Կրովը եւ Կիրակոսիկը, շրջանի շատ գյուղերի հետ, ամայացելավերվել են 1804 -1826 թվականներին: Վերջինս պարսկահայ գաղթականներով շենանում է 1828-ին, բայց ջրի պակասության պատճառով շուտով նրանք փոխադրվում են մոտակա գետի ափը՝ կոչելով հին պես Աղբենը՝ (Աշտուավան):

Կրովի եկեղեցին վերաշինվում է 1704թ. *«ԹՎ. ՌՃԾԳ (1704) ԵՍ ԱՍԾԱՏՈՒՐ ՎԱՐՂԱՊԵՏՍ ՇԻՆԵՅԻ ԶԱՅՍ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻՆ»:*

Եկեղեցուց դեպի արեւմուտք երկու գերեզմանաքարերից մեկի (կոտորվածի) վրա գրված էր (քարը կար 1926թ.). *«ԱՅՍ Է ՇԻՐԻՄՆ ՀԱՆԳՍԵՍԱՆ ՇԱՀԿԱ, ՈՐԴԻ ՎԱՐՀԱՄԱ ԵՎ ԻԻՐՈՅ ՏԻԿԼՈՅ. ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՂՈՅՍ (շահիկը), ՈՐ ԹԵՐԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԻ ՓՈՒՆԵՅԱԻ Ի ՔՍ (այսինքն երիտասարդ մահացավ) ԵՎ ԵԹՈՂ ԶՆՆՈՂՍ ԻԻՐ ՍՈՒԳ ԱՆՍԽԻԹԱՐ ՈՒՆԱՅՆԱՅԵԱԼ ԱՇԽԱՐՀԻՍ... ԹՎ. ՉՅԵ» (= 775+551 = 1326թ.):*

Մոտ 650 տարվա այս տապանաքարը մոնղոլական տիրապետության վերջերին է գրված, Սյունիքի Օրբելյան իշխանների գործը եւ դեռ փառավոր շրջանում, որը պետք է հետզհետե խախտվեր դրանից 20-30 տարի հետո: Երկրի ընդհանուր կացության համապատասխան, Բռնակոթի փառավոր շրջանները եւս եղել են V-VII, IX-XV եւ հատկապես XVII-XVIII դդ.: 1706-ին ժա-


մանակագիրը այն նույնիսկ անվանում է գյուղաքաղաք:

«Ես Աստուածատուր կրօնատուր, որ եմ երկրէն Սիւնեաց, ի գիւղաքաղաքէն Բռնակոթու ի ազգէն Թորոսե(ն) յցի, ի թվականութեանս հայոց ՌՃԾԵ (1155+551=1706թ.) ի թագաւորութեանս պարսից Շահ Սոլթան Յիսեփին եւ ի Յայրապետութեան Ս. Էջմիածնայ տեառն հանգուցեալ Նահապետ կաթողիկոսին, ի տէրութեանն գիւղաքաղաքիս աղա Սաղադեկին եւ իշխանութեանն հայոց Մելիք-Ամիրխանին, ի հայրապետութեան սուրբ աթոռոյս Թաթէի (Տաթեի) Յովսափ վարդապետին»:

Սաղադեկը, անշուշտ, Նախիջեանի խաների գործակալ-պաշտոնյաներից էր, շրջանի կեսի, կամ ավելի ճիշտ ամբողջ շրջանի կառավարիչը:

Մելիք Ամիրխանը երեւի նույնպես ամբողջ շրջանի անմիջական պատասխանատուն էր՝ ենթակա Սաղադեկին, բայց ժառանգական իրավունքով եւ բնակիչներն ու գրիչը հին սովորությամբ իշխանությունը նրանն են համարել: Երվանդ Լալայանը 1897թ., տեղի ավանդության համաձայն («Սիսիան»), այդ Մելիք Ամիրխանյանին համարում է Անգեղակոթում հիմնավորված մեծ Մելիք Սաֆրազի հաջորդը եւ որդին: Այս իրարից անկախ երկու հիշատակությունը՝ փաստաթղթով եւ պահպանված ավանդությամբ հարկադրում են որոշակի եզրակացությունների հանգել: Այն, որ Իսրայել Օրու գլխավորած Անգեղակոթի 1699թ. գաղտնի ժողովի առաջին դեմքը՝ գլխավոր մելիքը՝ Սաֆրազը մահացել է ժողովից մի քանի տարի հետո, եւ նրան մինչեւ 1706 թվականը հաջորդել է Ամիրխանը: Հիշենք, որ այս հիշատակարանը գրված է Դավիթբեկի գլխավորած ապստամբությունից 15 տարի առաջ, իսկ Անգեղակոթի ժողովից յոթ տարի հետո: Ըստ ավանդության, Ամիրխանի հաջորդը եղել է Մելիք-Նարինը, իսկ թողը՝ 1749-ին Նախիջեանի Յեյդար խանի կողմից սպանված Մելիք Սաղաթը: Անտարակոյս Մելիք Ամիրխանը, հատկապես Մելիք Նարինը, մասնակից են եղել Դավիթբեկյան ազատագրական կռիվներին, գուցե եւ սպանվել երկուսով էլ (կամ մեկն ու մեկը) Նախիջեանի դաշտում, անհաջող կռիվ ընթացքում, որովհետեւ այդտեղ ընկած հարյուրավոր մարտիկների մեծ մասը պետք է որ սիսիանցիներ եղած

Բռնակոթի Սուրբ Գեորգ եկեղեցի



լինեն: Հազիվ թե այդ մեկիքները լոյս կամ պասիվ դիրքի մեջ լինեին Նախիջեանի խանի նկատմամբ, որովհետեւ նրանց մեծ նախորդը՝ Սաֆրազը այդ ազատագրական պայքարի առաջին կազմակերպիչներից մեկն էր, Իսրայել Օրու հետ:

1749-ին սպանված Մելիք-Սադաթի որդի Մելիք-Սաֆրազ Երկրորդը հպատակվում է Փանահ խանի հիմնադրած Ղարաբաղի խանությանը: *Սաֆրազն էր, որ Նախիջեանի խանության դեմ ապստամբած շահկերտցիների (ղազանչեցիների) մեծ մասին եւ ազուլեցիների մի զգալի մասին օգնեց փոխադրվելու նորակառույց Շուշի բերդը: Նույնպես այս Մելիք-Սաֆրազ Երկրորդն էր, որ կիսով չափ իր հանգրվանը փոխադրել է Բռնակոթ, որովհետեւ Որոտանի ծախսափնյա Այլախ ենթագավառի հայկական գյուղերը՝ Ակունք-Բազարչայր, Շաքին, նույն Անգեղակոթը, Ղարաքիլիսան եւ տասնյակ այլ գյուղեր մաշվել եւ մաշվում էին ազատագրական ապստամբությունների պարտությունից հետո կամ կոտորվել էին, կամ գաղթել զանազան վայրեր եւ տառապում էին Ղարաբաղի խանների հենարան քոչվոր ցեղերի ամառային հալածանքներից, մանավանդ նրանց մի մասի նստակեցության անցնելու կապակցությամբ: Նույնիսկ օսմանյան բանակի նահանջի ժամանակ ոչ միայն*

Կապան-Ղափանից, այլեւ Սիսիանից, հատկապես Ախաթյանից (ողջ Բնունիսը, Արեփսը), երեւի նաեւ Բռնակոթի ահագին բնակիչներ գաղթեցին Թուրքիայի խորքերը, Բուրդուր, մինչեւ Իզմիր, Միջերկրականի ափերը՝ սարսափած տեղական խաների, բեկերի եւ քոչվորների վրեժխնդրությունից:

Հայ բնակչության գլխավոր հենարանները շրջանում մնացել էին առաջինը՝ Բռնակոթը, ապա Տաթեւը, մասամբ Ախաթյանը, Աղվերծ-Ղարաբաքը, փոքրիկ Շենաթաղը, դարձյալ դեռ ուժերը պահպանած Անգեղակոթը եւ Վաղաղին: Սրանք էին մյուս նվազող հայ գյուղերի զորավիգը: Այդ էր պատճառը, որ մելիք Սաֆրազ Երկրորդը (ծնված 1720-30-ական թվականներին) հույսը դրել էր ոչ այնքան հայրենի Անգեղակոթի, այլ՝ ավելի Բռնակոթի վրա: Սակայն այս նույն ժամանակներում, XVIII դարի երկրորդ կեսից Բռնակոթում զորանում էր Մելիք-Թանգյանի տոհմը: Այս տոհմի ծագումը տակավին մութ է: Իրենց շառավիղների մեջ պահպանված է ավանդություն, որ իբր այդ տոհմի նահապետ Մելիք-Ստեփանը Անիում եղել է զորապետ, ստանալով Մելիք-Սարդար կոչումը, որից հետո գաղթել է Բռնակոթ: Սա, իհարկե, անհիմն, անախրոնիկ ավանդություն է, մի ճշմարտության թելով՝ որ Թանգյանների տան նախորդը

եկվոր է, երեւի Լոռուց կամ Կրաստանից, գուցե՝ հենց XVIII դարի առաջին կեսի ազատագրական շարժումների խառն ժամանակներում, գուցե եւ դավիթբեկյան շարժման մասնակից մարտիկներից մեկն է, հիմնավորված Բռնակոթում: Թեւեւ Թանգի անունը ավելի տարածված սովորաբար կանացի անուն է եւ ոչ այդ մարդու: Ավանդությամբ՝ Մելիք-Թանգի ավագը կազմակերպել է գյուղի պաշտպանությունը ասպատակություններից: Այս դեպքերը կարող էին լինել 1750-ից՝ Նադիր-շահի մահից (1747) հետո սկսած անիշխանության, Խամսայի մելիքությունների վերացման, Ղարաբաղի խանության կազմակերպման եւ Նախիջեանի խանության հետ (հատկապես Զանգեզուրի շուրջը) ունեցած մրցակցության ժամանակներում: Այս մրցակցության մեջ Սիսիանի մեծ ու փոքր մելիքները պետք է որ թեր ու դեմ կողմնորոշում ունենային, երբեմն հակվելով դեպի հին Նախիջեանը, երբեմն դեպի նոր Ղարաբաղը, նայած ով ինչ զիջումներ կխոստանար: Մելիք-Թանգյանների եւ Մելիք-Սաֆրազյանների մրցակցությունն ու թշնամությունը նաեւ այս մրցակցության արտահայտություններից էին: Իհարկե, հիմնականում, թե ով պետք է գերիշխի Բռնակոթում եւ նրա մերձակա գյուղերի վրա: Անգեղակոթը դուրս էր գալիս >>> 134

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 133 Սաֆրազյանների ոտքի տակից, հույսն ու հենարանը մնում է Բռնակոթը: Ըստ երեւոյթին 1760-70-ական թվականներին Սաֆրազյաններից ոմանք արդեն բնակություն էին հաստատել Բռնակոթում: Որովհետեւ այդ տարիներից մեկում Մելիք-Թանգուկրտսեր եղբայր Փանին (Ստեփանը) փորձել է առեւանգել Սաֆրազյանների հարսին, եւ սրանք քավոր Սաֆին եւ ըմբոստ Ադին սպանել են նրան:

Մելիք-Թանգուկ Առաջինը նկատելով, որ սա գյուղի ըմբոստացումն է նաեւ իր դեմ հոգուտ Սաֆրազյանների, փորձում է փախչել Շուշի, բայց Սաֆրազյաններից մեկը՝ Նազարը, հետապնդում եւ գնդակահարում է նրան: Մոտ 200 տարի առաջ տեղի ունեցած այս դրամատիկոդերգական անցքերը արձագանքն են գյուղի ըմբոստության ընդդեմ նոր ամրացող Թանգյան մելիքության:

Սպանված Թանգուկինը դիմում է Շուշի, Իբրահիմ խանի օգնությամբ: Իբրահիմ խանը կառավարել է 1760-1806թթ.: Մեզ զբաղեցնող դեպքերը պետք է որ տեղի ունեցած լինեն շուրջ 1780-ական թվականներին: Այս եզրակացությանն ենք գալիս, որովհետեւ 1787 թվականի նշանավոր արձանագրության ոչ Տաթևի եւ ոչ Բռնակոթի եկեղեցու (ավելի ընդարձակի) օրինակների մեջ չկան հիշված Մելիք-Թանգուկ եւ նրա ժառանգների անունները: Ընդհակառակը՝ այդտեղ հիշվում են թե՛ Մելիք-Սաֆրազ երկրորդը (կամ Երրորդը), թե՛ նրա զավակները, զուցե եւ եղբայրները կամ եղբոր որդիները:

Ուստի, Իբրահիմ խանի կողմից Բռնակոթի եւ Սիսիանու մահալի մելիք կարգված ոչ մի տեղ չարձանագրված Մելիք-Թանգուկ հաջորդներից մեկը՝ կամ Մելիք-Կարապետը կարող են մելիք նշանակված, հաստատված լինել միայն XVIII դարի վերջերին, ավելի ձիշտ՝ 1790-ական թվականներին, երբ Մելիք-Սաֆրազյանները, երեւի որեւէ պատճառով, ընկել են Իբրահիմ խանի աչքից, զուցե՝ ըմբոստության կամ կասկածելի հավատարմության պատճառով:

Անշուշտ, եթե Անգեղակոթի, մասամբ եւ Բռնակոթի գերեզմանաքարերը անվթար պահպանված լինեին, հնարավոր էր որոշ բաներ հաստատ իմանալ: Ռուսական արխիվների, անցյալ դարի 30-60-ական թվականների մելիքական իրավունքների շուրջ եղած դիմումներ-

րի եւ փաստաթղթերի (ֆերմանների եւ ուկազների) պատճենների հիման վրա հնարավոր է շատ բաներ պարզել:

Կարելի է միայն ասել, որ Բռնակոթի եկեղեցու պատերին ագուցված մի քանի տապանաքար-խաչքարերից երեւում է, որ Հայաստանի մռայլ դարերից մեկում՝ XV դարում եւս Բռնակոթը շեն եւ տնտեսապես, կուլտուրապես ուժեղ է եղել, Անգեղակոթի եւ Աղվերծ-Դարաբասի նման:

Եկեղեցու վերջին վերակառուցումը սկսվել է 1701թ. եւ ավարտվել 1704 թվականին: Շինարարության նախաձեռնությունը պատկանել է Տաթևի առաջնորդ, այսինքն Սյունյաց թեմակալ Հովասափ Աղվերծեցի (Դարաբասցի) վարդապետին: Ներսը՝ սյունի վրա գրված է վերաշինումն սկսելու տարին՝ ՌՃԾ (1701թ.), մուտքի վրա՝ ավարտելու թվականը ՌՃԾԳ (1704թ.): Ոմանք կարծել են, թե այս թվերից մեկն ու մեկը սխալ է, մինչդեռ սխալ չկա, այլ հսկա շենքը գյուղը վերակառուցել է չորս տարում, իհարկե, ավերելով գյուղի մի քանի դարերի պատմության մեծ մասը՝ գերեզմանատունը:

Անտարակույս, 1720-ական թվականների ազատագրական համար ու հերոսական կռիվներին Բռնակոթը եւս, Սիսիանի շրջանում Անգեղակոթի, Աղվերծ-Դարաբասի, Վաղաղիի, Շենաթաղի, Շաքիի նման ղեկավար դիրքում է գտնվել, զուցե եւ առաջին կամ երկրորդ դերի մեջ: Նախիջեանի խանի կողմից Բռնակոթի վրա հարձակումները XVIII դարի կեսերին եւ ավերմունքները հավանաբար այդ ակտիվության դեմ պատժիչ միջոցառման հետեւանքը եղած լինեին: Դժվար է ասել, թե ովքեր են առաջնորդել Բռնակոթի ազատագրական ուժերին, գյուղի եւ շրջակա գյուղերի մարտիկներին: Ամեն պարագայում Մելիք-Թանգյանների նախորդը, զուցե Ստեփան կամ Սարգար անունով, այդ գործի մեջ կարող է ղեկավար դեր ունեցած լինել, կամ մեկ ուրիշը եւ ուրիշները, որ մնացել են անհայտության մշուշի մեջ: Դավիթ-Բեկի զինակից Տեր-Ավետիսը, ինչպես ենթադրել է Ն. Ադոնցը, կարող է Բռնակոթից լինել, բայց հազիվ թե սա մոտ լինի իրականության: Այլ կերպ չենք կարող ընդունել, որովհետեւ Ադու հայր Ավետիսը ծնված կլինի 1730-ական թվականներին, իսկ սրա պապը, եթե դարձյալ Ավետիս անունն ունենար, ապա 1720-ական

թվականների եռանդուն, շուրջ 35-45 տարեկան, հերոս Տեր-Ավետիսը չէր կարող լինել: Իսկ հայր ու որդի, այն էլ քահանայի որդի, նույն անունն ունենալին՝ դժվար ենթադրելի է:

Անշուշտ, բացառիկ փաստագիր է բռնակոթիցների շինարարական արձանագրությունը, որ թողել են Տաթևի վանքի սրահում եւ գրեթե նույնը՝ Բռնակոթի եկեղեցու մեջ՝ սեղանի աջակողմյան մույթի (սյունի) վրա:

Հայ միջնադարի խոշորագույն դեմքերից մեկի՝ փիլիսոփա Գրիգոր Տաթևացու դամբարանի վրա դարեր հետո մատուռ է կառուցվում Սյունյաց հոգեւոր պետ տեր Հովակիմի նախաձեռնությամբ, այն էլ XVIII դարի մռայլ տարիներին (1787թ.), եւ այդ գործի ծախքը սիրահոժար քաշում են Բռնակոթի մի քանի աչքի ընկնող ընտանիքներ, նույնիսկ երկրորդական դեմքեր իրենց «հոգու փրկության համար»: Այս փաստը եւս ապացույց է Բռնակոթի նյութական եւ բարոյական-կուլտուրական կարողության բարձր վիճակի մասին, այն էլ XVIII դարի երկրորդ կեսին: Ըստ որում, շատ ուշագրավ է, որ այդ մասին պահպանվել է նույնանման երկու արձանագրություն:

Որոշ ազատ շարադրմամբ, ավելի լավ է բերել արձանագրության երկու օրինակներն էլ, որովհետեւ երկրորդը՝ գյուղինը, թեեւ իբրեւ պատճեն է հանդես գալիս, բայց այլ կռահումների տեղիք է տալիս՝ իր մեջ եղած տարբերություններով եւ հավելումներով:

Տաթևի արձանագրությունը հետեւյալն է՝ քիչ ազատ շարադրված եւ նոր ուղղագրությամբ. «Շնորհիվն Աստծո, շինեցավ սուրբ Մատուռս յորձալույս ռաբունապետին եւ երկրորդ ոսկերեբանին, երիցս երանելի վարժապետին մերո եւ չորրորդ լուսավորչին, սրբույն Գրիգորի Տաթևացվոյն, ձեռամբ բազմաշխատ եւ օգտաջան Սյունյաց պետի, տյառն Հովակիմա Սյունեցվո. արդյամբ եւ ծախյուք բռնակոթեցվոց. այսինքն՝

1. Տեր Գետրոգ
 2. Տեր Հակոբ եւ
 3. Տեր Հարություն
- քահանայիցն. նաեւ
4. Կարապետին եւ
 5. Մկրտչին
 6. Հակոբջանին
 7. Սիմոնին
 8. Աղբեին,
 9. Հովակիմին,

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10. Պետրոսին,
11. Գրիգորին եւ
12. Մարտիրոսին
13. Քարամղդուն,
14. Ստեփանին եւ
15. Յոնանին
16. Յարությունին
17. Մուսեսին,
18. Մկրտչին
19. Շահնագարին եւ
20. Ասծատուրին

այլեւ բարեպաշտուհի կանանցն՝

21. Նազուրին
22. Յովիգարին
23. Մարիամին
24. Գովկարին

որոնց հիշատակն օրհնությամբ եղիցի եւ աղոթք սրբույն Գրիգորի ի վերա նոցա լինի, ամեն:

Կառուցավ սուրբ (Մատուռ) ի հայրապետության սրբո գահին Էջմիածնի տեառն Ղուկասու, ի ՌՄԼԶ թոռջս մերում, հավուրս Փանսայան Իբրահիմ խանին»:

Ցուցակի այս անունները, շատ քիչ բան ասող, տոսկ անուններ են, որոնցից գուցե մի քանիսը հետագայում դարձել են տոհմի անուն:

Անկասկած է, որ երկու անվան արանքի եւ-ը պետք է հասկանալ եղբայրներ, ինչպես սկզբի Կարապետը եւ Մկրտիչը, ապա Գրիգորը եւ Մարտիրոսը, Շահնագարը եւ Ասծատուրը: Ադ-դեն, անշուշտ, Արոնց տոհմի հիմնադիր Ադին է (կամ նրա թոռը):

Երկրորդը՝ գյուղի եկեղեցու միջինը, թեեւ կրում է նույն թվականը, բայց անտարակույս մեկից մի քանի տարվա տարբերություն պետք է ունենա: Ըստ երեւոյթին, մեծամեծ դեպքեր՝ ընդհարումներ են տեղի ունեցել առաջին եւ երկրորդ արձանագրությունների արանքում, անուններ են ջնջվել եւ անուններ ավելացել. անշուշտ, ոչ ծախսը թեթեւացնելու համար: Գրիչը նույնը չի, ավելի քիչ վարժ ու գրագետ է: Ներածական մասը պահպանվել է նույնը, որպիսին Տաթևին է: Երեք քահանաների անունները հերթով պահպանված են եւ այստեղ: Նկատենք, թե գյուղը որքան կարող, գրագետ եւ բազմամարդ է եղել այն մռայլ տարիներին, որ ունեցել է երեք քահանա, երբ երեք գյուղը մի քահանա հագիվ էր ունենում: Տաթևի արձանագրության երկու առաջին անունները չկան այստեղ (անշուշտ եղբայրներ Կարապետի եւ Մկրտիչի). դրանց տեղը գրված են

երկու ուրիշ անուններ - Մելիք Շահնագարի եւ Մելիք Շափրագի (Սաֆրագի): Այստեղից պետք է եզրակացնել, որ Կարապետը եւ Մկրտիչը Թանգյաններ են եղել եւ տապալվել-հեռացվել են Տաթևի արձանագրությունից (1787 թվականի) ամիսներ, տարի կամ ավելի ճիշտ տարիներ հետո: Դրանց փոխարեն հանդես են գալիս երկու մելիքներ՝ Շահնագար եւ Սաֆրագ (Երկրորդ կամ Երրորդ), այն էլ՝ Անգեղակոթից: Երեւի սրանցից մեծը Շահնագարն է՝ ավելի վաղ եկած ու հիմնավորված: Այդ իմանում ենք մի շատ կարեւոր տապանաքարային, դժվար ընթեռնելի, արձանագրությունից, որ պահպանվել էր գավթի մուտքի դռան տակ մնացած կամ գուցե դիտմամբ այդտեղ դրված: Գուցե, իրոք, պատահական չէ, որ այդ քարը գտնվում է Մելիք-Թանգյանների կառուցած գավթի մուտքի դռան տակ: Այդ քարի վրա հագիվ կարդացվում էր. «ՏԱՊԱՆՍ ՇԱՅՆԱԶԱՐԻ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ Է ԸՆԿԵՂԱԿՈՒԹՅԻ, ԹՎԻՆ ՈՍԼԷ» (1237+531=1788): Տաթևի արձանագրությունից մեկ տարի հետո է մեռել Գրիգորը, անշուշտ, ծնված Անգեղակոթում: Ուրեմն, Մելիք Շահնագարը գլխավոր դեմքն է եղել եւ եկել տիրացել է նաեւ Բռնակոթին, վերջում բերել նաեւ եղբորը, կամ եղբոր որդուն՝ Սաֆրագին, որը նույնպես մելիք էր՝ դեռեա Անգեղակոթում: Թե չէ բեկ կոչումը կունենար. կամ թե բոլորովին նոր էր եկել Բռնակոթ:

Երկու ցուցակներում հիշվող մյուս Շահնագարը սովորական գյուղացի է, անշուշտ, ունետր եւ ազդեցիկ, հետագա տոհմի հիմնադիր:

Բռնակոթի ցուցակի գլխավոր առավելությունը այն է, որ այստեղ եւ անուններն են շատ եւ մի մասինը հայտնի է դառնում, թե ում որդին է կամ ում տոհմից: Բերենք նաեւ Բռնակոթի արձանագրության օրինակը (իմ ընթերցմամբ)(15), առանց ներածական մասի, որը, ինչպես նշեցինք, անփոփոխ է: Ահա այդ ցուցակը.

1. Տեր Գեորգ
2. Տեր Յակոբ
3. Տեր Յարթեն
4. Մելիք Շահնագարին
5. Մելիք Շավրագին
6. Յակոբջանին
7. Քարամղդուին
8. Պալի որդի Ասծատուրին
9. Բունիաթի որդի Գրիգորին
10. Շահնագարին

11. Սիմոնին
12. Ավաքին
13. Պետրոսին
14. Ստեփանին
15. Յոնանին
16. Ավետիսի որդի Ադին
17. Փաշումի որդի Պետրոսին
18. Իսախանի որդի Յովակիմին
19. Ս (ոյ)լի որդի Մկրտիչին
20. Մուսին
21. Յարությունին
22. Միկու որդի Իսախանին
23. Մուքու որդի Յակոբին
24. Յարութին
25. Ազար(ի)այի դուստր ամուլ Նազուրին
26. Շիրինի դուստր Գյուլփարին
27. Թամրասագի դուստր Փարին
28. Յովհաննիսի մայր Նազուրին
29. Օհան(ին)
30. Մարմար(ին)
31. Բայու Սառին
32. Բունիթի որդի Գեորգին
33. Մարիանի որդի Խաչատուրին

որոնց հիշատակն օրհնությամբ եղիցի... Այս անվանքս գրայալ կան ի վերա Սուրբ Տաթեւացու մատուռին... թվ ՌՄԼԶ-ին...»:

28-րդ անվան «Յովհաննիսի մայր Նազուրին» բառերից հետո է գրված «որոց հիշատակն օրհնությամբ եղիցի», այսինքն՝ ավարտած են համարել: Բայց դրանից հետո ավելացրել են Օհանի, Մարմարի, Բայու, Սառայի անունները եւ երեւի փոփոխությունները թաքցնելու համար ավելացրել, որ «այս անվանքն գրայալ կան ի վերա Սուրբ Տաթեւացու Մատուռին»: Մինչդեռ 9 անուն ավելի է, մի քանի անուններ էլ՝ փոխված, այսինքն՝ ջնջված: Սրանից հետո եւս ավելացրել են «Բունիաթի որդի Գեորգի» անունը եւ վերջում միայն անփոփոխ դրել Տաթևի թվականը՝ 1787: Նույնիսկ սրանից հետո ամենավերջում ավելացրել են «Մարիանի որդի Խաչատուրի» անունը: Իհարկե, այս հավելյալ անունները ձրի չեն գրել, այլ ինչ-որ գումար ստացել են փոխարենը: Բայց ուշագրավը Տաթեւում եղած մի շարք անունների ջնջումը-վերացումն է եւ հագիվ թե նրանց քաշած ծախսը փակած ետ վճարած լինեն: Անօգուտ է այլ ենթադրություններ անել:

Մի բան կասկածից վեր է, որ XIX դարի սկզբին, այսինքն՝ վերոհիշյալ դեպքերից 15- 20, գուցե նույնիսկ ավելի պակաս տարիներ

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 135 անցնելուց հետո Ղարաբաղի Իբրահիմ խանը Մելիք-Թանգու որդուն, ավելի ճիշտ թռռանը՝ Մելիք Կարապետին հաստատում է Սիսիանի մելիք, ետին դիրքի մեջ թողնելով Մելիք Սաֆրազյաններին: Այնպես որ գուցե նույնիսկ վերջին Սաֆրազը (կամ սրա հաջորդը) զրկվում է «մելիք» տիտղոսից եւ ստանում երկրորդական՝ բեկ տիտղոսը: Այդ է պատճառը, որ Թանգյանները մնացին Մելիք-Թանգյան տոհմանունով, իսկ Մելիք-Սաֆրազյանները դարձան Սաֆրազբեկյաններ:

1805թ. մայիսին Ղարաբաղի 80-ամյա Իբրահիմ խանը ստիպված եղավ առերես ընդունել ռուսական հպատակությունը (ստանալով ռուսական զենքերայի աստիճան), որը դրանից մեկ տարի մեկ ամիս հետո պետք է սպանվեր ռուսներին դավաճանելու մտադրության համար: Ղարաբաղի խանի ռուսական կողմնորոշումը պետք է որ անկեղծորեն, սիրով եւ վառ հույսերով ընդունեին նրան ենթակա հայ մելիքները: Նրանց թվում եւ Մելիք Կարապետն ու սրա հաջորդը՝ մեծ շինարար ու երկարամյա եռանդուն կառավարիչ, «Այոնյաց հազարապետ» Մելիք-Թանգին, որը շրջանը կառավարեց մինչեւ XIX դարի երկրորդ կեսի սկիզբը:

Ռուս-պարսկական վերջին պատերազմի սկզբից նահանջող պարսկական ուժերը, հին սովորությամբ, որոշել եւ կիրառել են բնակչությանը, հատկապես հայերին, բռնի գաղթեցումը երկրի խորքերը, ամայի տարածություն թողնելով թշնամուն: Նախիջեանի խանը հրաման է ստանում բռնությամբ գաղթեցնել նաեւ Սիսիանի հայ բնակչությանը՝ Նախիջեանի խորքերը եւ անցկացնել Արաքսի այն կողմը: Գաղթելու հրաման է ստանում եւ Բռնակոթը, բայց մի քանի բռնակոթեցիներ անցնում են Գորիս, ուր ռուսական զորամաս կար եւ կամավոր գրվում, օրինակ, Բադունց տղաները եւ Ակոփանց Սուվեյմանը:

1823թ. Բռնակոթում մնացել էր 66 ընտանիք, մյուս մոտ 15 հայկական գյուղերից յուրաքանչյուրում մնացել էր 5-10 տուն, միայն Ախլաթյանում՝ 15 տուն: Իհարկե այն ժամանակ գերդաստան ընտանիքի շնչերի միջինը պետք է ընդունել 14 -15: Այսպիսով, Բռնակոթի բնակիչների թիվը պետք է լիներ շուրջ 900 հոգի: Առանց Լորածորի, Սիսիանում մնացել էր 203 հայ ընտանիք, որից 66-ը՝ Բռնակոթում: Բռնակոթից մոտ 25

ընտանիք զինված փախչում են սարերը, քերծերը եւ թաքնվում: Գաղթեցվում են 40 ընտանիք: Գավուկի սարում բռնակոթեցիներին եւ 15 տուն ախլաթյանցիներին միացնում են, մի փոքրիկ էլ կռիվ է ծագում սրանց մեջ: Ըստ երեւոյթին սիսիանցիներին հասցնում են մինչեւ Գողթանի շրջանը, որովհետեւ Ալաիի գյուղից Մյուրգուղի թուրքերը փախցնում են բռնակոթի Զոհրաբենց աղջկան (Զոհրաբենք, ինչ-ինչ պատճառներով, վերադառնում եւ հաստատվում են Ախլաթյանում): Լաքաթաղից էլ մինչ այդ փախցրած են լինում ախլաթյանցի Թունու-Յաղմուրի քրոջը: Ռուսական բանակը հասնում է Արաքսի ափը եւ փրկում հայ գաղթականներին: Բայց նրանք բավականին ուշ՝ կես տարուց մեկ տարի հետո են վերադառնում իրենց տները: Այդ ժամանակամիջոցում սիսիանցիներին պատսպարում են Նախիջեանի հայ գյուղերը՝ Ղազանչի-Շահկերտը, Ապրակունիսը եւ այլն:

Մինչ այդ, ռուսական ձեռական տիրապետության ժամանակ, Իբրահիմ խանի որդին՝ Մեհթի Ղուլի խանը, որին 1806-ից ռուսական զինվորական իշխանությունները բազմեցրել էին իր սպանված հոր տեղը, գրեթե ամբողջ Սիսիանը նվիրել էր իր հավատարիմ, գիշատիչ բեկերից մեկին՝ Յաջի Աղալար բեկին, որը ստացել էր ռուսական կապիտանի աստիճան: Սա ավերել էր Սիսիանը: Բնակչության փախչող մասը ապաստան էր գտնում Նախիջեանի խանության հայկական գյուղերում: Երբ Մեհթի Ղուլի խանը 1822-ին փախավ Պարսկաստան եւ Ղարաբաղի խանությունը վերացավ, Սիսիանի մելիք կարգվեց Մելիք Կարապետի որդի եռանդուն Մելիք-Թանգին, սակայն շուտով ծագեց ռուս-պարսկական վերջին պատերազմը, որի ընթացքում շատ ավելի կորուստներ կրեց հայ բնակչությունը:

Ռուսական տիրապետության առաջին շրջանում Մելիք-Թանգին հոգ տարավ Սիսիանի հայ բնակչությունը ամրացնելու եւ բազմացնելու վրա: Նրա օժանդակությամբ Խոյ-Սալմաստից եւ Թավրիզի մոտերքից ներգաղթած հայերի մի սովոր խումբ բնակվեց Ղարաբաղի խաչայում (ուր մնացել էին բնիկ 4 տուն), Անգեղակոթում, Աղբենդում, Մագրայում, Բլեքանում, Թագագյուղում, Ալիուլում, Լծենում, նաեւ մեծ մասամբ Նախիջեանի բնակիչներից՝ Տոլրոսում:

Բռնակոթի բնակիչները, դեռ շատ

վաղուց, զբաղվում էին նաեւ փոխադրական գործով-քրեհարությամբ, հիմնականում Նախիջեան - Գորիս - Շուշի ուղղությամբ, զխավորապես մատակարարելով քարաղ: Ուրիշ գյուղացիների չարչարում էին դեռեւս անապահով ճանապարհներին. բայց բռնակոթեցիներից վախ ունեին ամեն տեղ, որովհետեւ ուժեղ էին, բռունցք դարձած եւ մելիքական կենտրոն գյուղ էր: Բազմաթիվ բեռնատար եւ հեծնելու ընտիր ձիեր կային գյուղում, մինչեւ այս դարի 20-ական թվականները: Պատահական չէր, որ Մելիք-Թանգին կառուցեց Ապարանից (Արիքուրի) կարավանատունը, Ռոտանի վրա Փուլի կամուրջը եւ Լորածորը շրջանին կապող ցարդ գործող միակ կապը՝ Ռոտանի (Օրոտնա) կամուրջը:

Քաշաթաղ-Խնածախ

Գորիսի շրջանի Խնածախ գյուղի անունը գրավոր հիշվում է առաջին անգամ Ստեփաննոս Օրբելյանի Սյունիքի պատմության մեջ XIII դարի վերջին: Այդտեղ Խնածախը գրված է Խոնածախ ձեռով(16): Ուստի ոչ մի կապ չունի խան բառի հետ, կամ խանի(ն) ծախած սխալ պարզունակ բացատրության հետ: Իսկ թե ինչ է նշանակում Խոնածախ, դժվար է ասել: Գուցե արմատը եղել է խոնցած, փոս, քաղցր, կամ օրհնված, բայց հաստատ բան ասել դրանց հիման վրա, գիտական չի լինի, գուցե թարգմանվի հին հայերենով՝ փոսավերջ: Մի բան պարզ է, որ թեեւ Խոնածախ անունը 7 դար է, ինչ հիշվում է, բայց գյուղը նվազագույնը երկու հազար տարեկան, ավելի ճիշտ երկուս եւ կես հազար տարեկան է, որի հնագիտական հատուկ ուսումնասիրությունը կարգի, հասցնելով դեռ ավելի տարիքի: Խոնածախը Յաբանդ գավառի (այժմ Գորիսի շրջան) Տաթեի վանքին հարկատու 53 գյուղերից մեկն է եղել: Բայց իմ համոզմամբ, Յաբանդ (նաեւ Ձագեձոր կամ Ծակեձոր) գավառը, այն ժամանակներում ունեցել է ոչ թե 53 գյուղ, այլ դրա կրկնակին:

Յաբանդ գավառի վանքին հարկատու գյուղերի մեջ Խոնածախը շատ հարկ տվողներից մեկն է, սակայն այդ չի նշանակում, թե անպայման մեծ գյուղ լինելու պատճառով է մեծ հարկ մուծել: Օրինակ, Շինուհայրը 24 դրամ է մուծել, Խոնածախը՝ 20, Վանոցան (Ջիջիմլու)՝ 20, Քրվանքը (Քերլար)՝ 20, Գորուն՝ 20 (որը անկասկած փոքր է եղել)(17): Մինչ-



Խոնածախ

դեռ անվիճելիորեն այն ժամանակների խոշոր գյուղերից Գորայքը (Գորես-Վերի շեն)՝ 6, Ձագածորը (Նոր Գորիս - Յին շենը)՝ 12, ոչ հեռու Աղահեճ-Քաշաթաղ (Մաղավուզ) գավառին պատկանող Միննին (Մինքենդ)՝ 6 դրամ, Յունչասը (Յոչագ)՝ 12, Ձյունասարը (Սինասար)՝ 6 դրամ, Շապուկը (Ձաբուղը)՝ 7 եւ այլն(18): Ծղուկ-Սիսիանին պատկանող Տաթեւ գյուղը տվել է 10 դրամ, Շաղատը եւ Բռնակոթը՝ 12-ական: Ամենախոշոր Անգեղակոթ ավանը մուծել է 10 դրամ(19): Բայց, իհարկե, սա չի նշանակում, թե Խոնածախը այն ժամանակ եւս խոշոր գյուղ չի եղել: Ի դեպ, մոտիկ Խոզանավար գյուղը, որ նույնպես աչքի ընկած գյուղ է եղել միջին դարերում, անգամ չկա ցուցակի մեջ, նշանակում է այլ վանքի, ասենք, երեւի Ծիծեռնավանքին է հարկ մուծել:

Խոնածախը, իր աշխարհագրական դիրքով, սահմանակից Աղահեճ-Քաշաթաղ (Մաղավուզ) գավառի ուղիղ սահմանի վրա է գտնվել: Իսկ Արահուժը (Արավուզը), Վաղատուրը (Բայանդուրը), Խոզանավարը եւ Ծիծեռնավանքը Քաշաթաղի վրա են եղել: XIV-XV դարերից Խոնածախը եւս մտցվում է Քաշաթաղի մեջ:

Խոնածախ ավանի պատմական նշանակությունը բարձրանում է XIII դա-

րից սկսած եւ Յայաստանի ընդհանուր քայքայման-ավերման դարերում, XV-XVI դդ: Այդ ժամանակներում Խոնածախը դառնում է Սյունիքի առաջնակարգ ավան-կենտրոնը (վարչական առումով), գերազանցելով Տաթեւին, Տեղին, նույնիսկ Գորես-Վերին շենին եւ Անգեղակոթին: Այդ դարերում, մինչեւ XVII դ. կեսը, Աղահեճ-Քաշաթաղը, Ձարի (Քալբաջար), մասամբ Սեանի ավազանի եւ Ձագեճորի ու Կապանի շրջանների հետ թիկունք կազմելով Արցախ-Ղարաբաղին, ամենախիտ եւ զուտ հայ բնակչություն ունեցող փոքրիկ լեռնահայաստանի կենտրոնական գավառն էր, կենտրոն ունենալով Խոնածախը, ուր ամրացել էին Սյունիքի հայ իշխանական հին տոհմից սերված Մելիք-Յայկազյան իշխանները: Այս հանգամանքը, քաղաքական տեսակետից, խիստ մտահոգում էր Սեֆյան Իրանի կառավարությանը, բայց այդ վտանգը կանխելու համար ազդու միջոց այն չէր կարողանում գտնել: Իսկ երբ ծագեց Իրան-Պարսկաստանի եւ օսմանյան Թուրքիայի երրորդ ահեղ պատերազմը, ապա դրությունը միանգամայն փոխվեց:

Ջուտ հայաբնակ, կիսանկախ այդ լեռնաստանը պետք էր ցրել, տրոհել՝ իրարից անջատել (այդ վճիռն ընդու-

նեց ավելի փորձված օսմանյան Թուրքիան): Երբ շուրջ երկու տասնյակ տարի Արաքսի ձախ ավազանին եւս տիրեցին թուրքերը՝ 1586-1607թթ., նրանք առաջին հարվածը հասցրին Քաշաթաղ-Ձագեճոր հատվածին: Քաշաթաղ-Մաղավուզի գավառում 1590-ական թվականներին հարավից բռնի գաղթեցված ըմբոստ մի քանի քրդական ցեղեր բերին եւ բնակեցրին Քաշաթաղում (նաեւ Բարկուշատում)՝ լայն արտոնություններ տալով նրանց, ընդդեմ հայ բնակչության:

Անհավանական չէ, որ մի քանի հայկական գյուղեր (չհաշված անհատական արտագաղթերը) Քաշաթաղից, Ծակեճորից-Յաբանդից, Ծղուկ-Սիսիանից բռնությամբ գաղթեցվել են, մասամբ էլ իրենք խիստ հարստահարությունների պատճառով, գաղթել են մինչեւ Գանձակի կողմերը:

Թուրքական շուրջ 15-ամյա տիրապետությունը անտանելի էր դարձել առավել հայ բնակչության համար: Բազմաթիվ հայ մելիքներ եւ մեծամեծներ Ղարաբաղից եւ Սյունիքից, անգամ գյուղեր, Ղարաբաղից եւ Գողթնից փախչում են օսմանցիներից եւ ապաստան գտնում Իրանի կենտրոններում՝ Մազանդարանում, Իսպահանում եւ այլուր: Շահ Աբա- ➤ 138

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

« 137 սը հոգատար վերաբերմունք է ցուցաբերում դրանց նկատմամբ, որոնց մեջ էր եւ Քաշաթաղ-Մաղավուզի ամենուր ճանաչված իշխանը՝ Մելիք-Յայկազը, Խոնածախ գյուղից: XVIII դարի սկզբին վերակազմված պարսից բանակի հակահարձակմանը եւ հաղթանակին, Նախիջեանից մինչեւ Գանձակ, շրջափելի մասնակցություն է ունենում Մելիք-Յայկազը: Շահ-Աբասը կրկնապատկում է նրա արտոնությունները եւ, ըստ ավանդության, Շահը Յայկազին կոչել է «Ծեր առյուծ» (Գոջա ասլան): Այդ ավանդությունն իսկ ցույց է տալիս, որ Յայկազը տարիք առած զորավար-իշխան է եղել այդ ժամանակներում:

Անհրաժեշտ է դառնում այստեղ իսկ ետադարձ հայացքով բացել մի կարեւոր փակագիծ, ոչ մեծ, բայց ոչ պակաս ուշագրավ երկու հարցերի պատասխանը գտնելու համար: Նախ պետք է իմանալ, թե ով էր այդ «Ծեր առյուծը» եւ իր ոչ պակաս նշանավոր նախորդը, հարագատ հայրը՝ Յայկազար իշխանը: Ինչ ծագումն էին. դրսից եկած, թե՛ բնիկ: Եթե դրսից Քաշաթաղ եկած, ապա ովքեր էին կառավարում մինչեւ նրանց գալը Քաշաթաղ-Փոքր Սյունիքի այդ բազուկը:

Այս հարցերին կարող են պատասխանել ոչ մեծ քանակով մեզ հասած գրավոր աղբյուրները՝ ձեռագրի հիշատակարանները եւ վիճաբար արձանագրությունները: Վերջինիս համար մեծ աղբյուր են ծառայում Խոնածախի հագիվ փրկված եւ արդեն ավերված հուշարձանների, ժամանակին մեկ մասով գրի առնված, գրավոր վկայությունները:

Պարզվում է, որ Մելիք Յայկազի նախորդները տեղափոխվել են Քաշաթաղ XV դարի վերջին քառորդում: Եկել է Մելիք Յայկազի պապը՝ Պարոն (իշխան) Յայկազը, որին կոչել են նաեւ Աղաջան:

Յայկազ իշխանը պատկանում է XVIII դարից Արցախ-Նարաբաղից Սյունիք (Վայոց ձոր) եւ Կոտայք թափանցած եւ տեղի հզոր իշխողներին՝ Ջաքարյան եւ Օրբեյան իշխանական տներին ապավինած, Խաղբակ-Պռոշյան իշխանական ընտանիքին: Այս վաստակաշատ ընտանիքը (Գլածորի համալսարանի հիմնադրումը եւ հովանավորումը, Գեղարդի ժայռափոր տաճարների կառուցումը) խնամական կապերով կապվել էր Ջաքարյան եւ Օրբեյան տների հետ եւ մեծ անուն հանել

ոչ միայն XIII, այլեւ հետագա դարերում:

Յայկազ իշխանը, մեծ Պռոշի (-1284) թոռան (Էաչիի) թոռ Միրիշիկի (մոտ 1400-1470) չորս որդիներից մեկն էր (Պարոն Յայկազ, Ամիր Վասակ, Յաղբակ, Ամիր Յասան): XV դ. երկրորդ կեսին Վայոց ձորի տեր իշխանը Միրիշիկի եղբայր Ջումա իշխանն էր: Թուրքմենական տիրապետության ժամանակներում հայ իշխանական տների բեկորներին արտոնված էր իրենց գավառներում կամ ենթաշրջաններում ունենալու որոշ ավատական իրավունքներ: XV դարի վերջերին Վայոց ձորի իշխողը Ջումայի թոռ պարոն Արդուֆան էր, Լալաբեկի որդին: Սրանից իսկ երեւում է, որ Միրիշիկի որդիներին տեղում մնում էր լինել փոքրիկ իրավունքների տեր մեկ կամ մի քանի գյուղերի սահմաններում:

Եվ ահա XV դարի կեսերին ծնված եւ XVI դարի սկզբներին մահացած, (1450/55 - 1615/1620) Պարոն կամ Մելիք Յայկազը հիմնավորվում է Վայոց ձորին եւ Ծղուկ-Սիսիանին սահմանակից ամենահայաշատ եւ իր աշխարհագրական դիրքով ավելի ապահով Սյունիքի Աղահեծ-Քաշաթաղ գավառում: Յայկազը Ծիծեռնավանքից ոչ հեռու Աղավնո գետի մոտ գտնվող Քաշաթաղ ավանի (հետագայում՝ քրդաբնակ Սուլթանքենդ) մեջ պահպանված երկհարկանի քարաշեն դղյակի (կողքի կամարաշար ավերակով) կառուցումը անտարակույս պատկանում է Մելիք Յայկազին՝ XV դ. վերջերին:

Սակայն ինչ-ինչ պատճառներով, ամենայն հավանականությամբ, առաջին հերթին ամուր դիրք ունենալու շնորհիվ, XVI դարի սկիզբներից սույն գավառի վարչական-իշխանական կենտրոնը Քաշաթաղ ավանից փոխադրվում է 10-12 կմ դեպի հարավ՝ մեծ քարայրներով հարուստ եւ ոչ պակաս պատմական Խոնածախ գյուղը: Փոխադրվողը լինում է Մելիք Յայկազի որդին՝ Յայկազարը: Սա, գուցե նույն վարպետների ձեռքով կառուցված, դարձյալ հարակիցը շենքերով (Խոնածախ-Խնածախում, որ ավելի հարուստ էր պատմական հուշարձաններով, քան՝ Քաշաթաղը) մի շարք ավեր ու կիսավեր այլ հուշարձաններ եւ խաչքարերի հետ, պահպանվել եւ հասել է մեզ:

Նախքան Մելիք-Յայկազյան իշխանական տոհմի մասին մեր խոսքը շարունակելը անհրաժեշտություն է ծագում մի կարեւոր հարցի պատասխանը եւս

տալ, այն է, Քաշաթաղում, մինչեւ Յայկազ իշխանի այդտեղ հիմնավորվելը, ովքեր են իշխել եւ ինչ պարագաներում այն դարձավ Մելիք Յայկազի եւ նրա հաջորդների ենթակա գավառ:

Դարիս սկզբներին վաստակաշատ բանասեր-արվեստաբան, գիտնական Գարեգին Յուսեփյանը հրապարակեց Վարդաշենի ավետարանի հիշատակարանը, որի մեջ խոսվում է Վայոց ձորի Յերիեր գյուղի եւ շրջակայքի իշխող ոմն Շահունեցի Ամադինի մասին, որպես «նիզակակալ եւ կորովածիզ ասպարապետ... ի դրան թագաւորաշուք իշխանաց Բուրթելին եւ Վախախին» (Ստ. Օրբեյան): Խոսքը վերաբերում է XIII դ. վերջին քառորդին: Յայտնի է նաեւ, որ Ամադինը եղել է Վահրամ Շահունեցու որդին եւ Ուքանի ու Յասանի եղբայրը: Վահրամ իշխան Շահունեցու կինը եղել է Տարսայիչի շառավիղներից Օրբեյան իշխանուհիներից մեկը՝ Խոսրովիկի դուստրը: Այս նորեկ զույգը XIII դարի երկրորդ կեսին, ավելի ճիշտ վերջին քառորդին, ունեցավ երեք-չորս զավակ, որոնք XIV դարի 20-ական թվականներից սկսած խառն ժամանակներում գտնվում են: Այդ հերոս երիտասարդներից (միջնեկը) Ամադինը ամուսնացած էր Սյունյաց հին իշխանական տնից Որոտաշի Իվանեի դստեր՝ Թուղթանի հետ: Որոտանի ամիրա եւ պետ Իվանեն հայրն է միջնադարի մեծ գիտնական Օհան Որոտնեցու (1315-1386): Դեռ Օհան Որոտնեցին չէր ծնված, որ նրա հայրը իր հարագատ Որոտան ավանից փոխադրվեց Որոտնա կամ Վաղաղնու վանքին ավելի մոտիկ, ավելի ապահով եւ բնական ամրություն ունեցող Վաղաղի ավանը: Իվանեի եւ Տիկնանց տիկնոջ աղջիկ-զավակ Թուղթանը, Ամադին Շահունեցու կինը, շատ կանուխ այրիանալով, Վայոց ձորի երերն (Յերիեր) գյուղում, իր սկեսուր Գոնցա տիկնոջ հետ մեծացնում է իր միակ փոքրիկ դստեր Նաթելին: Այս անունով երեւի վերջանում է Շահունեցոց նաեւ իզական սեռի գիծը: Ինչպես նկատելի է գրավոր հուշարձանների լռությունից, ցարդ անհայտ է մնում նրանց վերջը, առավել եւս նրանց սկիզբը:

Անգեղակոթի «այգում» խաչքարի վրա կա մի անավարտ արձանագրություն. «Ես Նաթելս կանգնեցի գխաչս, յիշատակ Յովան. հրաման»: Չկա թվականը, անգամ խաչի տիրոջ անունը անավարտ է մնացել, ինչպես եւ հրա-

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ման բառը անիմաստ կախված է կարծես խաչքարի ձախ կողմից: Անհավանական չէ, որ այս խաչքարը XIV դարի առաջին կեսին պատկանի, բայց սույն Նաթելը, որ վրացական հատուկ անուն է (Լուսիկ), հատուկ է եղել Օրբելյան ընտանիքին, որից կարող էր տարածվել իշխող վերնախավի մեջ: Ի դեպ, այդ ժամանակներից մնացած եւ Սյունիքի նույն նշանավոր ավան Անգեղակոթի եկեղեցուն մոտիկ թմբին ընկած գեղեցիկ խաչքարի վրա հիշվում է Յէկազ (Յայկազ) անունը: («Ես Միրազէս Յէկազս կանկնեցինք խաչս թվ. ԶՂԸ (1549). Ակոր նկարող»): Այս թվականին Մելիք Յայկազ Երկրորդը կնամայնում հազիվ 15 տարեկան պատանի էր: Ուտի, պարզ է, որ Յայկազ անունը պետք է որ տարածված լիներ մելիքական շրջաններում Պարոն Յայկազ Ա-ի ժամանակներից, այսինքն՝ XV դ. կեսերից: Կցկտուր գրավոր հիշատակություններից հնարավոր չէ կռահել, թե ինչպես հայտնվեցին Շահումենցիք Վայոց ձորում: Այդ փոքրիկ ավատատերերը կարծես թե սկզբից եւթ Երերն (Յերհեր) գյուղի տերերն են եղել: Այդ ցեղի առաջին հայտնի դեմքը Վահրամ Շահումենցին է, որը ծնված պետք է լինի XIII դ. կեսերին՝ 1250- 60ական թթ.: Վահրամը որդին է Վասակի, որի մասին այլ փաստեր չկան: Վահրամի միջնեկ որդու՝ Ամադինի կինը (Օհան Որոտնեցու քույր Թուղթանին) իր սկեսրայրին՝ Վահրամին համարում է «յազգէն Տարսայիճենց», այսինքն Օրբելյան իշխանական տան շառավիղ: Որ Վահրամի կինը՝ Գոնցան Օրբելյան տան օրիորդներից է եղել, այդ անվիճելի է, իսկ որ նրա ամուսնու արական գիծը եւս գալիս է Օրբելյան տոհմից, խիստ կասկածելի է: Այնքան, որքան նրանք ապավինած էին Սյունյաց տեր Օրբելյան մեծ իշխանական տան զորությանը, կարող էին եւ ազգակցական կապ հորինել, մանավանդ, որ հնարավոր է եւ խնամիական կարգի արյունակցական կապի մեջ լինելին: Մի շարք հանգամանքներ մեզ մղում են, որ Շահումենցուց դիտենք եկվոր, նրանց ծագումը ավելի շուտ համարելով Արցախ-Ղարաբաղից: Մեզ այս եզրակացությունն են բերում նախ այն, որ թուրքական, ապա մոնղոլ-թաթարական տիրապետությունների ժամանակ, հատկապես սկսած XII-XIII դարերից, Արցախ-Խաչենի (Ղարաբաղի) հզոր իշխանական տների իրավունքները

խիստ կրճատվել էին դեպի հյուսիս եւ արեւելք հայաբնակ գավառներում: Այդ վայրերում արդեն իշխելու դիրքեր էին գրավում նորեկ վաչկատուն ցեղերի ավագանու ներկայացուցիչները: Բնիկ տերերը մնացել էին անառիկ Արցախ-Խաչեն լեռնաստանի սահմանների մեջ եւ իրենց աճող հավելյալ ուժերը ձգտում էին դեպի արեւմուտք եւ հարավ-արեւմուտք՝ մասնավորապես երկրի սահմանակից նահանգները՝ Գուգարք, Աղստեփի հովիտ, Սյունիք... Այս իշխանական տներից էին ոչ միայն Խաղբակյան-Պռոշյանները, այլեւ, ամենայն հավանականությամբ նաեւ փոքրիկ Շահումենցիք: Փոքրիկ ասելով պետք է հասկանալ որեւէ մեծ իշխանական տան երկրորդական շառավիղ, ինչպես Յասսան Զալյանների, նույն Խաղբակյանների եւ այլոց: Իհարկե, սա չի նշանակում, թե նույն ամուսնու Արցախ-Խաչենը, Փառիսոսը, Գարդմանը եւ այլ գավառները, Կրաստանի հետ չէին դառնում եւ կենտրոնական Յայաստանի հալածական հայ իշխանական տների անդամների համար ապաստան ու հենարան (անգամ Մամիկոնյանների):

Այնքան, որքան Քաչաթաղ (Աղահեծ Մաղավուզ) Սյունյաց գավառը (Ծար-Քալբաշար գավառի հետ) ամիջական սահմանակից էր Արցախ-Ղարաբաղի նահանգին, ավելի դյուրին էր, որ Արցախի իշխանական տների մի երկրորդական ձեռներեց շառավիղ թրով կամ հայկական օգնությամբ հաստատվեր այնտեղ, տիրանար Քաչաթաղին: Սյունիքի մեջ Շահումենցիք բնակավայր կամ գավառ չի եղել, թեւ ինձ հայտնի չէ նման անուն եւ Արցախ-Խաչենի սահմաններում, բայց հնարավոր է, որ եղել է կամ այդ նահանգում, կամ մերձակա հայաբնակ գավառներում:

Ինչպես կնկատի ընթերցողը, մենք համոզված, անվերապահորեն շահումենցուց նախավերջին հայրենիքը համարում ենք Քաչաթաղը: Այդ դրա առաջին, համոզիչ ձեռով հուշող փաստը համարում ենք Պռոշյան պարոն Յայկազ Առաջինի հաստատվելը Քաչաթաղում: Չէ՞ որ Յերհեր ավանում հիմնված Շահումենցուց արական գիծը սպառնաց XIV դ. առաջին կեսերին: Ըստ երեւոյթին նրանց բուն գիծը հիմնված Քաչաթաղում, որտեղ նրանք փոխարինել էին Օրբելյան շառավիղներից մեկին, նույնպես վերջացած պետք է համարել, բայց շուրջ մեկ հարյուրամյակ ուշ, քան իրենց մեր-

ծավորները Վայոց ձորում-Յերհերում: Մինչեւ Շահումենցուց Քաչաթաղ մուտք գործելը, բնական է, որ ամեն տեսակետից այդ հետաքրքիր գավառի տերերը եղած պիտի լինեն Օրբելյանները: Դրա հավելյալ ապացույցներից մեկն է հազիվ պահպանված, շատ դժվար ընթեռնելի արձանագրության առանձին բառերից բխող-եզրակացությունը՝ «...ապատի տն Ստեփաննոս Միւնեաց եպիսկոպոս ես խոստ... սբ խորանս յիշատ...»:

Կիսատ պահպանված «արժանապատի, ամենապատի կամ մեծապատի» տիտղոսով Սյունյաց եպիսկոպոսը ավելի շուտ պետք է ընդունել մեծ Տարսայիցի որդի պատմիչ Ստեփաննոս Օրբելյանին, երբ 1280-ական թթ. երկրորդ կեսին Կիլիկիայում օծում ստանալուց հետո վերադարձել էր հայրենիք: Ինչ վերաբերում է Խոնածախ-Խնածախին, թեւ ինքը Օրբելյանը այն տեղադրել է Յաբանդ (Ծակածոր) գավառի գյուղերի շարքում, բայց միշտ էլ, հատկապես XV դարից սկսած, այդ նշանավոր ավանը կենտրոնական դեր է ունեցել Քաչաթաղ գավառի կյանքում:

Երկրորդ փաստը, որ Շահումենցուց հայրենիքը ցույց է տալիս Քաչաթաղը, մի խաչքար է, որ բախտի բերմամբ կանգուն է մնացել կնամայն գյուղի մեջ, Ջումանց կալերում. «Կաման Այ ես Աւքան կանգնեցի գխաչս ի փրկութեան հոգոյ իմո յիշեք ի Զս թվ 2Ծ»: Յայոց 2Ծ (750) թ. այսինքն՝ 1301թ. կանգնեցված այս խաչքարի տերը ոմն Ուքանն է, թեւ գրված է Օքան (Աւքան): Ահա այս անունն է, որի հիշատակը կամ կրկնությունը պետք է համարել Յերհեր գյուղի Վահրամ Շահումենցու եւ Գոնցայի կրտսեր գավառի՝ Ուքանի անվան մեջ: Խաչքարի վրա հիշված Ուքանը հնարավոր է, որ լինի Վահրամի ավագ եղբայրը կամ հորեղբայրը:

Իհարկե, կարող են առարկել, թե Խոնածախի խաչքարի հիշված Ուքանը կարող է որեւէ կապ չունենալ Շահումենցուց հետ: Բայց երկրորդ մի գորավոր փաստ եւս թելադրում է վերը բերված եզրակացություններին հանգելուն: Այդ Ծիծեռնավանքի գավառի արեւելյան մասում լավ պահպանված մի տապանաքար է, հավանաբար XIII դ. սկզբներին, կամ առաջին կեսին պատկանող (եւնելով շրջակայքի այլ տապանաքարերի ժամանակից): Այդ տապանաքարի վրա կարդում ենք. «Այս է հանգիստ Մխիթարայ Շահե-»

ՄՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«139 թոյր, յիշեցեք»: Գուցե նաեւ պատահական չէ, որ արդեն ծանոթ Շահուռնեցոց պատկանող Յերիեր գյուղում, ամենայն հավանականութեամբ, սովորական ոգեկոչման կարգով կնքված, ոմն Մխիթար 1310թ. մի խաչքար է կանգնեցրել իր եւ եղբոր՝ Վարդան վարդապետի հիշատակին, ինչպէս նշում է Ալիշանը(19):

Ահա այն բոլոր փաստերը, որոնք իրավունք են տալիս Վայոց ձորի Շահուռնեցոց երկրորդ հայրենիքը համարել Քաշաթաղ-Խոնաձախը, նույնիսկ ենթադրել, որ այդ փոքրիկ ավատատերերը Խաղբակյան-Պռոշյան մեծ պորտի ճյուղերից մեկը եղած լինեն: Եվ երբ թե Վայոց ձորում (Յերիերում) եւ թե Քաշաթաղ-Խոնաձախում վերջանում է Շահուռնեցոց արական սերունդը, սահմանափակ իրավունքների տեր մնացած Պռոշյան ծոռներից Պարոն Յայկազը XV դ վերջին քառորդում Վայոց ձորից փոխադրվում է սահմանակից Քաշաթաղ եւ փառքով իշխում, իր արժանավոր հաջորդներով:

Պարոն Յայկազ Առաջինը անտարակույս հիմնավորվել էր Քաշաթաղ գավառի կենտրոն Քաշաթաղ ավանում, շատ մոտիկ Ծիծեռնավանք հռչակավոր եկեղեցի-ովստավայրին: Այնտեղ էլ պետք է, որ նա թաղված լինի: Ցարդ-Քաշաթաղ (Սուլթանքենդ) գյուղում պահպանված կիսով չափ ավերված դղյակ-ամարաթը հենց Յայկազ Առաջինի կառուցածն է, մի բացառիկ հուշարձան այդ դարից պահպանված՝ իր մաքուր հայկական ոճով: Միայն ցավել կարելի է, որ ճակատային մասի աջ կողմին եղած կից շենքի ստորին հարկի ցածրիկ կամարաշարն է պահպանվել: Մնացածը գրեթե անմատչելի լինելուց զատ, հազիվ թե պահպանված լինեն: Ուստի, Յայկազ Առաջինի որեւէ այլ, հատկապէս գրավոր հիշատակություն, այժմ դժվար է սպասել այդ կողմերում: Իսկ Յայկազի որդի Յախնազարից ինչոր մնացել էր Խնաձախում, շատ ավելի մեծ պատմական արժեքներ էին, բայց, ավաղ, միայն նրա կառուցած դղյակտունն է պահպանվել:

Բարձրաձառակ արվեստագետ-վարպետ ոմն Ստեփաննոս արեղա 1551 թ. «կազմել» էր (կառուցել ստեղծել էր) Յախնազար իշխանի գերեզմանը. մի անօրինակ ձեւով ու շքեղությամբ: Զո-

րիզոնական վիճակով դրված քանդակազարդ երկար տապանաքարը դրված էր 7 աստիճանների վրա: Միայն քանդակներից ազատ երեսի (վերին մասի) հարթության վրա գրված էր հետեւյալը. «ԵՍ ՄԵՐԱԻՍ. ԿԵԳ ՍԲ ԽԱԶՍ: ԿՈՂԱԿՅԻՆ ԻՍ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ: ՈՐ ՄԵՇ ԻՇԽԱՆ ԷՐ Ի ՄԷՋ ԹԱԳՕՈՐԱՅ, ԵՎ ՈՐԴԻՆ ԻՍ ՀԱՅԿԱԶ ԿԵՅՕ ԳԵՂԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԹՎ. Ռ: ԵՍ ՄՏԵՓԱՆՈՍ ՀՊԷՂԱՍ: ԿԱԶՄԵՅԻ ԱՅՍ ՏԱՊԱՆՍ ԵՂ.»:

Այս հոյակապ կոթողը շրջապատի հուշարձանների հետ պահպանվել էր անվթար մինչեւ 1930-31 թթ. (ես տեսել էի 1926թ. աշնանը):

Յախնազար իշխանի կինը Սիրոնկան Սերովը (հատուկ անուն հիշված XV դարից), իր թելադրած այդ փոքրիկ տապանագրով ոչ միայն մեծարում է իր արժանավոր ամուսնուն, նշում նրա մահվան թվականը (1551), այլեւ նշում, որ այդ նույն թվականից «որդին Յայկազ կանգնեցաւ գեղիս առաջնորդ»: Վերջին այս բառերը հազիվ թե բառացի ընդունվի, որ Յայկազը միայն մի գյուղի (Խնաձախի) առաջնորդն էր, այսինքն՝ տերը եւ ոչ գյուղապետը: Յնարավոր է, որ 1502 թվականից Իրանում, Ատրպատականում, Քուռ-Արաքսի ավազանում եւ Յայաստանում իշխանության տիրացած Սեֆյան թագավորության հիմնադիր Շահ Իսմայիլի մերձավորները կրճատած լինեն Յայկազ Առաջինի եւ նրա որդի Յախնազարի իրավունքները: Դրա պատճառը կարող էր լինել նաեւ այն, որ Յայկազի իրավունքը Քաշաթաղի վրա պետք է որ հաստատված լիներ Սեֆյանների թշնամի թուրքմենական Աղկոյունլու: ցեղի (սպիտակ խոյի) իշխանավորների, անկասկած նրանց հզոր տիրակալ Ուզուն Յասանի կողմից. բայց թեթե այս ենթադրությունն էլ իրականություն լիներ, այնուհանդերձ Յախնազարը պետք է, որ լեզու գտած լիներ իր հավատարմությունը ցուցաբերած նոր տիրակալ Իսմայիլի առջեւ: Յնարավոր է, որ Սեֆյան իշխանավորները, որոնց, հատկապէս հաղթական մարտերից հետո, հարկային իրավունքներ էին տրվում, կարող էին այդ անել թեկուզ հենց Յայկազի գեղեցիկ դղյակը հափշտակած լինելու եւ մի քանի գյուղերի եկամուտներին տիրանալու նպատակով: Բայց պատմական Խնաձախից բացի Յայկազի, ավելի ճիշտ Յախնազարի ավատական իրա-

վունքները պահպանված պետք է լինեն նաեւ մոտակա խոշոր եւ նշանավոր Խոզանավար, ապա եւ ոչ մեծ Վաղատուր (Բայանդուր) գյուղերի վրա: Այս հավաստում է քիչ հետո բերվող մի այլ, ավելի ընդարձակ տապանագիր, որը նույնպէս այժմ գոյություն չունի իր տեղում:

Այնքան, որքան հայտնի է դառնում Յայկազ Երկրորդի մելիքական իրավունքներին տիրանալու թվականը, հոր մահից անմիջապէս հետո 1551թ., հայտնի է դառնում նաեւ այն, որ Քաշաթաղի Մելիք Յայկազի իշխանությունը տեսել է 72 տարի, մինչեւ 1623թ.: Ուստի, պետք է համոզված լինել, որ նա ապրել է 88-89 տարի, ենթադրելով, որ ծերացած մարդու զավակը, որ փոխարինել է հորը, որպէս իշխանավոր, պետք է եղած լինի գեթ 16-17 տարեկան, այսինքն ծնված 1534-36 թվականներին: Շահ Աբբասի կողմից նրան «Ծեր առյուծ» կնքելը եւս ավելի հավաստի է դարձնում Յայկազի վերը նշված տարիքը: Փակագծում ասենք, որ Յախնազարը այլ որդիներ եւս պետք է ունեցած լինի: Երկուսի մասին կարելի է, գրեթե առանց վերապահության, ասել: Մեկի մասին վկայում է Խնաձախ գյուղի հյուսիս-արեւմտյան մասում կանգնած մի մենավոր խաչքար, որի վրա գրված է. «ԵՍ ՅԱԽՆԱԶԱՐ ԿԱՆԳՆԵՅԻ ԽԱԶՍ ՅԱԻՐԵԴԱԻՐ ԻՍ ՂՈՒԼԻՆ, ԹՎ. ՈՒ (1581)» Յախնազար անունը թելադրում է, որ սույն Յախնազարը թռն է իր մեծ պապի եւ նրա մահից (1551) հետո ծնված, որ իրավունք է տվել կրելու պապի անունը, գրեթե պարտադիր սովորությամբ: Սրա հորեղբոր անունը (Ղուլի), անշուշտ, կրճատ ձեւն է Ալլահ-ղուլի (Աստծո ծառա) անվան եւ պետք է որ լիներ Մելիք Յայկազի կրտսեր եղբայրը: Իսկ ինքը, խաչքար կանգնեցնող Յախնազարը, որի որդին էր: Գինսպի, թե՛ հենց Մելիք Յայկազի: Վերջինիս չորս տղաների անունները հայտնի են, առանց մեզ զբաղեցնող այս անունի: Սակայն այս չի նշանակում, թե նա չէր կարող երկարակյաց Յայկազի (անտարակույս ունեցած) առաջին կնոջից ծնված զավակներից լինել՝ Աղանի միամորթի եղբայրը: Եթե 1570-ական - 80-ական թթ. ծնված Աղանը 1620թ. առանձին խաչքար կանգնեցրած չլիներ Պողոս վարդապետի հիշատակին, մենք սրա անունը եւս ոչ մի այլ տեղ չէինք գտնի՝ այսինքն չէինք իմանա, որ Մելիք Յայկազը ունեցել է եւ Աղան

ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

անունով որդի:

Ի դեպ Խնածախ գյուղի հյուսիսարևելյան բարձունքի վրա կանգնեցված սույն խաչքարը, այն բացառիկ խաչքարերից է, իր հազարավոր նմանների մեջ, որ վարի կեսում, խաչի կողքերից եւ երեք տող ստորին մասում ունի նաեւ պարսկագիր արձանագրություն: Քիչ մաշված արձանագրության հայերեն մասը հետեյալն է.

«Ի ԹՎԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՇԱՀ ԱՐԱՄԻՆ ԵՍ ԱՂԱՆ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱՁԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԱՆՈՒԱՆԸՆ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԲԱՐԵԽՍՍ. ԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ. Ի ԹՎԿՍ ՀԱՅՈՑ: ՌԿԹ ԵՐԿՐԻՍ ՄՈՅԼՔՆ ՊՐՆ ՀԱՅԿԱՁԻՆ ԷՐ»:

Բացի երկլեզվյան լինելուց, այս արձանագրությունը երկու կարեւոր փաստ է պարունակում իր մեջ. մեկը այն, որ Մելիք Յայկազը 1620թ. դեռեւս ողջ է եղել, մյուսը, որ նա ունեցել է նաեւ Աղան անունով որդի:

Ավելի ուշագրավ, շատ բան ասող եւ շատ հարցեր պարզող ու տրամաբանության պահանջով ենթադրություններ հուշող տապանագիր-արձանագրություն է ստորեւ բերվողը: Այս արձանագրության հեղինակները Մելիք Յայկազի երեք որդիներն են, որոնք Յայկազար Մեծի դամբարանից երեք քայլ հեռավորության վրա, ուղիղ 100 տարի հետո, 1651թ. թաղել են իրենց մորը, որի վրա թողել են հետեյալ ընդարձակ արձանագրությունը, հարավային ճակատին:

«ՄԵՔ ՈՐԴԻՔ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱՁԻՆ, ԳՍԲԲՍ ՇՀՆՁՐՍ, ԲԷԿՆԱՁԱՐՍ, ԿՆԿԵՑՈՒՑԱՔ ՍԲ ԽԱՉՍ ՓԼՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՑ ՄԱԻՐՆ ՄԵՐՑ ...ԱԱԲԻ ԽՆԻՆ, ՈՐ ԲՁՍ ԵՐԱԽՏԻՍ

արեւելյան ճակատին.
ՈՒՆԻ ՎՐ ՄԵՐ ԼԸ ԱՍ ԱՅՐԻ ՆՍԱԿԻ ԲՁՍ ԱՆԳՍ Ի ԴՈՒՌԸՆ ԹԳՐՑ ԵՒ ԽՆԵՐՑ

երեսի կողմին.
ԳՆԱՅ ԵՒ ՄԵՐ ՀՅՐԵՆԻՔ ՄԼՔԵՐՆ ԱՆԿԵԼ ԷՐ Ի ՁԵՌՑ, ԹԳՐԷՆ ԴԲԼՑ ԷԱՌ ԱՅՍՔՆ ԳԵՂԻ: ԽՆԾԻՄ:
ՊՅԻՆԴԻ: ԽՁՆՎՐ:

արեւելյան ճակատին.
ՓՈՒՄԵՅԱԻ Ի ԹՎԻՍ ՌՅ (1651)»:

Ինչպես առաջին իսկ հայացքից նկատելի է, Մելիք Յայկազի մեզ արդեն ծանոթ որդու՝ Աղանի անունը չկա իր երեք եղբայրների հետ այս տապանագիր-արձանագրության մեջ, եթե Յայկազարին համարենք ոչ թե Յայ-

կազի, այլ նրա եղբոր որդին: Եթե անգամ Աղանը ողջ լիներ այդ ժամանակ, 1551թ. (մոտ 70 կամ քիչ ավելի տարիքի մեջ), դարձյալ չէր մտնի այդ անունների շարքը, ավելի ճիշտ երեք եղբայրները չէին գրի նրա անունը, որովհետեւ Գուլաբի խանումը, զարտուղի բոլոր տվյալներից եզրակացնելով, Աղանի խորթ մայրն է եղել:

Ինչպես նկատելի է արձանագրության տողերից, Յայկազի կինը կամքի տեր, իշխանատենչ եւ հանդուգ անձնավորություն է եղել, որը կարողացել է, իր համառ պայքարով, վերադարձնել Յայկազի մահից հետո խլված նրա հայրական ժառանգություն մնացած մուլքերը՝ ետ ստանալ երեք գյուղի (Խնածախ, Բայանդուր, Խոզանավար) հողային-հարկային իրավունքները ու սեփականությունը: Անհավանական չէ, որ իր ծեր ամուսնու վատառողջության տարիներին եւս նա իր կամքը թելադրած լիներ նրան, գուցե եւ իշխանի ավագ որդիներին չեզոքացրած: Այդ կարելի է կռահել նաեւ մի փաստից, որ ոչ այնքան «Ծեր առյուծի» մահից հետո սկսած գերիշխող բեկերի, մեծ ու փոքր իշխանավորների հալածանքների, որքան Մելիք Յայկազի ընտանիքում ծայր առած գծությունների պատճառով է եղած: Այդ փաստը այն է, որ հսկա Մելիք Յայկազի տապանաքարը, իր հոր դամբարանի բաղդատմամբ, շատ անշուք էր, անգամ առանց գրության եւ միայն երկու իրար դեմ ծառացած, ուռուցիկ հիանալի քանդակով պատկերված օձերն էին պահպանում առյուծ ննջեցյալին:

Յայկազ երկրորդ երեւի 10-15 տարի վտարանդու կյանք է վարել Իրանի խորքերում, 80-ական կամ 90-ական թվականներին հեռանալով թուրք-օսմանական ժամանակավոր եւ դաժան տիրապետությունից: Այդ ժամանակներում արդեն նա շուրջ 50 տարեկան տղամարդ էր, նվազագույնը մի քառորդ դար առաջ ամուսնացած: Օսմանական բանակները Անդրկովկասի արդի տարածքից վտարելուց հետո, 1606-1607 թվականներին, շահի հավատարիմ հերոս սիրելիներից մեկը դարձած Մելիք Յայկազը շահից «Ծեր առյուծ» մականունը ստացած Քաշաթաղից դուրս եւ իրավունքներ է ստանում: Արդի Գորիսի եւ Կապանի շրջաններում նա որոշ գյուղերի մուլքերը, պետական հարկերը, կամ դրանց մի մասը զանձելու իրավունքը եւ (թիուլը) ստանում է որպես ռոճիկ:

Ծանոթագրություն

1. Адонц, Армения в эпоху Юстиниана, II изд. Ереван, 1971, с. 423.
2. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, գիրք առաջին, ԺԲ:
3. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, գիրք երկրորդ, Ծ:
4. А.Г.Периханян, Арамейская надпись на серебряной чаше из Зангезура (ИФЖ), 1971, N3.
5. А.Г.Периханян, Арамейская надпись из Зангезура, (ИФЖ), 1965, N4.
6. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 72-77:
7. Նույն տեղում, էջ 12:
8. Նույն տեղում, էջ 338:
9. Նույն տեղում, էջ 48-49:
10. Նույն տեղում, էջ 49:
11. Նույն տեղում, էջ 29:
12. Լ.Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 527:
13. Մ. Յասարայան, Լոր գյուղի դամբարանը, ՅՍՄՅ ԳԱ Տեղ. հաս. գիտ. 1952, N1.
14. Ե.Լալայան, Ջանգեզուրի գավառ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, N1, էջ 64:
15. Բազմավաստակ Սեդրակ Բարխուդարյանի հիանալի աշխատանքներից մեկի՝ «Դիվան հայ վիճագրության» 2-րդ հատորում այս արձանագրության վերծանման մեջ մի քանի թերություններ եւ սխալներ կան. ինչպես, օրինակ, «Մելիք Շահնազարը» կարդացվել է տպագրվել է Մելիք նաեւ «Նազար», «Փաշումը» կարդացվել է «Փաշում», «Միկու որդի», «Միկալ որդի», «Մուքի»-ն՝ «Մոքի», «Շիրին»-ը՝ «Շերին», «Մարմար»-ը՝ «Արմար», «Բալու (դուստր) Սառ»-ին՝ «Բաջու-Սառին», Բունիաթի որդի Գեորգին՝ «Բունիաթի որդի Զիրովան» (էջ 125):
16. Ստ. Օրբելյան, նշված աշխ., էջ 517:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում, էջ 516:
19. Նույն տեղում, էջ 509-510:
20. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 117:


ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՆՈՂՎԱԾՆԵՐ

Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը

«Սովետական Չայաստան» օրաթերթը 1969թ. հունվարի 12-ին տպագրել է գրող Խաչիկ Դաշտենցի հոդվածը՝ «Ո՞րն է պատմահոր ծննդավայրը» վերտառությամբ:

ՄՈՐՈՒՍ ՉԱՄՐԱԹՅԱՆ

Հոդվածը մի առարկություն է այն տեսակետի դեմ, ըստ որի ավելի հավանական է համարվում Մովսես Խորենացու սյունեցի լինելը, քան ավանդաբար ընդունված Տարոն-մշեցի: Դաշտենցը ուղղակի սրբապղծություն է համարում այդ ավանդությունը անգամ գիտական զորավոր փաստարկներով վերանայելու փորձը: «Այս վեճին պետք է մեկընդմիջտ վերջ տրվի, - գրում է հոդվածագիրը, - մանավանդ որ մոտակա տարիներին նշվելու է Մովսես Խորենացու ծննդյան մեկ եւ կես հազարամյակը»(1):



Ինչեւ ըստ էության խոսք ասելը, կարելի է հարց տալ հոդվածագրին եւ նրա այդ կարծիքը բաժանողներին. ի՞նչը կփոխվի Մովսես Խորենացուց, եթե հանկած պարզվի, որ նա ծնվել է ոչ թե Տարոնում, այլ, ասենք, Սասունում, Վանում, Մոկսում, Լոռիում, Արարատյան դաշտում, Գողթնում կամ Սյունիքի որեւէ այլ գավառում: Պատմահոր մեկ եւ կես հազարամյակը կխախտվի, թե՛ նրա

գրածների հավաստիությունը կթուլանա: Օրինակներ բերենք մեր անցյալի մի քանի մեծությունների կյանքից, Ղազար Փարպեցին՝ Արարատյան դաշտից, Եզնիկը՝ Այրարատի Կողբից: Ավելին, քանի՞ ոչ պակաս մեծությունների մոտիկ ծննդավայրն իսկ չգիտենք՝ Կորյուն, Եղիշե, Դավիթ Անհաղթ... Ի՞նչ են կորցրել կամ շահել այս, նախորդ եւ այլ անուններն իրենց ծննդավայրի պատճառով: Բառացի՞ ոչինչ: Նույնիսկ եռամեծ փիլիսոփա Գրիգորը «կորցրել է» իր իսկական ծննդավայրը՝ Քաջբերունիքի Արժեշ քաղաքը եւ կոչվել Տաթեացի, VIII դ. առաջին կեսի ոչ պակաս մեծ գիտնական Ստեփանոսը՝ Դվին մայրաքաղաքի ավագ քահանայի որդին, ճանաչվեց Սյունեցի եւ այլն: Բայց սրանցից ոչ մեկը դրանով չկորցրեց իր կյանքից ոչ մի արժանիք, եւ ոչինչ ավելի չէին շահի, եթե իրենց ծննդավայրի՝ հայրենի գյուղի կամ քաղաքի անունով կոչվեին ու ճանաչվեին:

Շտապենք Դաշտենցի մի քանի փաստարկները եւս հիշել: Թե ինչո՞ւ պետք է Խորենացին լիներ Տարոնացի: Հեղինակը, ընդունված ավանդությունից հետո, որպես երկրորդ, զորավոր փաստարկ, նշում է, որ «Տարոնը խիտ բնակեցված հայկական գավառ է եղել: «Կսես Մշո դաշտ հինգ հարյուր գեղ է», - ասվում է Տարոնի ժողովրդական երգերից մեկում»:

Իսկ ո՞վ կարող է այդ ժխտել եւ միթե նույնիսկ այսօր, հարկ կա ասելու, որ Տարոնը «հայկական գավառ է եղել»: Իսկ մեկ ուրիշը, որպես այդ փաստարկի պատասխան, կասի, որ նույնպես խիտ բնակեցված 12-15 գավառ ունեցող Սյունիքը ունեցել է հազարից ավելի հայանուն գյուղեր եւ այսօր էլ 300 գյուղ միայն Չայաստանի սահմաններում են, իրենց շեն անունները պահպանած, հայտնի են նույնքան ավերակների անուններ եւ նույնքան անուններ էլ կան հարեան վայրերում: Եզրակացությունը պարզ է:

Երկրորդ փաստարկն այն է, որ Տարոնում եղել է Խորենի կամ Խորոնք անունով գյուղ: Իսկ Սյունիքում էլ եղել է (ավելի մոտ Խորենացի բառին) ուղղակի Խորեա-Խորեա գյուղ:

Դաշտենցը ասում է, որ Տարոնում



Դաշտենցի մի այլ առարկությունն էլ այն է, որ «չէր կարող պատմահայրը ծնված եւ ապրած լինել Սյունիքում եւ մեռնելուց հետո տարվեր եւ թաղվեր Տարոնի Առաքելոց վանքի արեւելյան պարսպի տակ»

*Մովսես Խորենացու
պատկերը ԵՊՅ
բանասիրության
ֆակուլտետի շենքում*

նշանավոր «Առաքելոց կամ Թարգման-
չաց վանքը եղել է մտավոր կենտրոն եւ
ամառանոցավայր»: Եթե Դաշտենցը
Տարոնի բոլոր հոգեւոր կյանքի կենտ-
րոն-վանքերին գումարեր մոտակա
Վասպուրականի գավառների հոգեւոր
կենտրոնները, այն ժամանակ միայն
կարելի էր համեմատելու հարց դնել
Այրարատի, Սյունիքի եւ հյուսիսարեւե-
լյան Յայաստանի նման կենտրոնների
հետ: Չէ՞ որ Սյունիքում էլ կային, մեկ մա-
սով մեծագույն Տարոնացու՝ Մաշտոցի
իսկ հիմնած, հոգեւոր մտավոր կենտ-
րոններ: Բավական է հիշել Շաղատը,
Որոտնա կամ Վաղաղնու վանքը, Տա-
թեւը, Գեղամա երկրից՝ Մաքենյաց Մեծ
մենարանը, Վանաց վանքը, Ցախաց
քարը, Գողթանի վանքերը եւ տասնյակ
այլ վանքեր: Ըստ որում, սրանց մեծ մա-
սը նաեւ աննման ամառանոցավայրեր
են:

Դաշտենցի մի այլ առարկություն
էլ այն է, որ «չէր կարող պատմահայ-
րը ծնված եւ ապրած լինել Սյունիքում
եւ մեռնելուց հետո տարվեր եւ թաղվեր
Տարոնի Առաքելոց վանքի արեւելյան
պարսպի տակ»: Նախ չպետք է մոռա-
նալ, որ, շատ հին ավանդությանը հե-
տեւելով, նույնիսկ հայ Արշակունի թա-
գավորների, կաթողիկոսների եւ այլ
մեծամեծների անշնչացած մարմիննե-
րը Արարատյան դաշտից տանում էին
Տարոնից ավելի հեռու, դեպի արեւմուտք
գտնվող Դարանաղյաց եւ Եկեղյաց
գավառների, Անի, Թիլ, Երիզա, Թոր-
դան սրբավայր ավանները եւ այնտեղ
թաղում: Բայց ինչո՞ւ պետք է Սյունցի
պատմահոր դին տանեին, իրոք համա-
հայկական ոչ պակաս հին սրբավայրեր
ունեցող Տարոն գավառում թաղելու: Ին-
քը՝ պատմահայրը կարող էր իր կամքով
գնալ Տարոն՝ այդ պատմական գեղեցիկ
գավառում աշխատելու եւ անցնելու իր
կյանքի վերջին մասը, կամ հոգեւորա-
կանի պաշտոնով ղրկված, կամ ավե-
լի հավանականը, հալածված լինելու եւ
Տարոնում գտնելու իր ապաստանը, իսկ
մեռնելուց հետո թաղվել Առաքելոց
վանքի պատի տակ:

Դաշտենցը ասում է. «Մի բան էլ կա,
Մովսես անունը այդ դարում Սյունիքին
գրեթե անծանոթ կամ քիչ ծա-



ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 143 նոթ, իսկ Տարոնում շատ տարածված անուն է եղել: Նախ, այս «մի բանը», չպետք է բերվեր, որովհետ, Մովսես անունով հայ մարդիկ եւ այն ժամանակ, եւ հետագայում շատ կային ամենուրեք: Իսկ եթե դիմենք պահպանված փաստերին, կծախողվի նաեւ այս, ավելի թույլ փաստարկը: Որպեսզի մերկապարանոց առարկություն չթվա, հիշենք թեկուզ հանրահայտ փաստերը. Դաշտենցը պետք է որ նայած լինի Զայոց անձնանունների բառարանի Գ հատորի Մովսես անունը, սակայն բավարարված միայն առաջին նշանավոր Մովսեսով, որը Տարոնացի է, բայց հայտնի, որպես Սյունյաց Գողթնի առաջնորդ եպիսկոպոս, որին ավանդությունը տանում է Բ դար: Եթե այս ավանդությունն ընդունենք անվիճելի, ապա երկու-երեք հարյուր տարիների ընթացքում, հենց միայն այդ անվան պատճառով, քանի՞ Մովսեսներ կնքած կլինենին Սյունիքում: Եթե գեթ մինչեւ X դարը հասնող նշանավոր Մովսես անունների ցանկը թերթեր Դաշտենցը, ապա կտեսներ, որ կես հազարամյակում Տարոնից կան 3, իսկ Սյունիքում եւ Աղվանքում 13 Մովսեսներ:

Այս ամենից հետո պետք է, սակայն, ասել, որ Դաշտենցի ամենագորեղ կռվանը այն է, որ ժողովրդական ավանդությունը պատմահոր գերեզմանը համարում է Մշո Առաքելոց վանքը: Ահա այս է, որ պետք է հարգել, գնահատել եւ միանգամայն հնարավոր համարել: Ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնելու այս մեկը: Սյունիքում չկա այդ ավանդությունը, բայց ժողովրդի մեջ տարածված է Տարոնացի Վարդան Մամիկոնյանի գերեզմանի ավանդությունը՝ պատմական Անգե-

ղակոթում: Կա Մխիթար սպարապետի գերեզմանի փաստն ու ավանդությունը, բայց չկա Սյունիքի հռչակված զորավար Դավիթ-Բեկի գերեզմանի մասին վկայություն կամ ավանդություն: Այո, Պատմահոր եւ այլ մեծերի գերեզմանի տեղը պետք է համարել Մշո Առաքելոց վանքը:

Բայց այլ է պատմահոր ծննդավայրի հարցը, որի մասին Դաշտենցը ասում է, որ Մովսես Խորենացին ոչ թե երբեմն է կոչվել Տարոնացի, այլ 1500 տարի նրա ծննդավայրը համարվել է Տարոնի աշխարհը: Այս մեկն արդեն հենց այնպես ասած՝ չափազանցություն է: Անշուշտ, ինչպես վերն ասացինք, պատմահոր մահվան հետ կապված ավանդությունը, կամ, մեզ համար եւս անվիճելի համարվող, թաղման վայրի փաստը շարունակվել է Տարոնում՝ այդքան երկար ժամանակ, բայց ծննդյան վայրի մասին XVII դարից առաջ հագիվ թե խոսք եղած լինի եւ բանավոր ավանդության, եւ գրականության մեջ: Մինչեւ այս հիմնական հարցին ըստ էության անցնելը, մի երկրորդ փոքրիկ նախաբանի անհրաժեշտություն եւս կա:

1934թ., երբ լույս տեսավ ակադեմիկոս Զ.Մանանդյանի «Մովսես Խորենացու առեղծվածի լուծումը» գրքուկը, կրկին արթնացավ, շուրջ քսան տարի լռության մատնված, խորենցիագիտությունը: Ընդհանուր հարցերի մեջ չէր կարող մոռացվել նաեւ պատմահոր ծննդավայրի հարցը: Առաջինը, գրավոր հանդես եկավ բազմավաստակ հայագետ Ստ.Մալխասյանցը: 1940թ. նա տպագրեց «Խորենացու առեղծվածի շուրջը» բանավիճակային աշխատություն: Նաեւ Մովսես Խորենացու «Զայոց պատմությունը», աշխարհաբար թարգմանությամբ, ընդարձակ ներածական

խոսքով եւ ծանոթագրություններով:

Այս վերջին գիրքն է, որ վերահրատարակվեց անցյալ տարի ամռանը՝ անվանացանկի հավելումով: Եվ այս վերահրատարակությունից է, որ խաչիկ Դաշտենցը մեջբերում է անում իր հոդվածում:

Այստեղ ակադ. Մալխասյանցը գրում է. «Ավելի հավանական է կարծել, թե նա (Խորենացին Մ.Յ.) ծնված է Սյունիքում, Զաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստեփ. Օրբելյանը («Պատմություն», Թիֆլիս, եր. 517), տասներեքերորդ դարի վերջում» (էջ 5):

Դաշտենցը նշում է նաեւ պրոֆ. Թ.Յակոբյանին, որն իր «Յայաստանի պատմական աշխարհագրությունը» գրքի մեջ հիշում է այդ նոր կարծիքը եւ ավելացնում, «ըստ երեւոյթին, վերջին տեսակետը ավելի հավանական է» (էջ 168):

Իհարկե, ավելի լավ կլիներ, եթե Դաշտենցը մեջբերումն աներ Մալխասյանցի «Խորենացու առեղծվածը» գրքից, որի վերջին երեք էջը կազմում է մի փոքրիկ գլուխ՝ «Մովսես Խորենացին սյունեցի է եղել» վերնագրով: Այստեղ գիտնականը բերում է շատ համոզիչ փաստեր, որոնք նրան հանգեցրել են այդ եզրակացությանը: Արդարամիտ հանգուցյալ ակադեմիկոսը Դաշտենցի նշած եւ օգտագործած համառոտ պարբերությունը շարունակել է եւս մի քանի տողով, որ չի ցանկացել մեջ բերել Դաշտենցը, անշուշտ դժվար առարկելի լինելու պատճառով: Դաշտենցը կարճ է կապել: Ահա թե ինչ է գրել Մալխասյանցը վերոհիշյալ համառոտ պարբերության վերջին տողերում. «Օրբելյանի հիշած Խորեա ձեռը հինգերորդ դարում հնչում էր ավելի լիակատար ձեռով՝ Խորեան: ...Այս ենթադրությանը ուժ են տալիս մի քանի կողմնակի փաստեր, ինչպես Խորենացու լավ ծանոթ լինելը Սյունիքին, Երասխի հոսանքին, Երասխի ափերին մոտ եղած շեներին, Սյունյաց Նահապետ Սիսակին մեծ գովեստներով հիշելը, հակակրությունը դեպի Մամիկոնյանները, որոնք Սյունյաց հակառակորդներն էին Ե դարի երկրորդ կեսում եւ այլն»: (Տես այս մասին ավելի ընդարձակ մեր «Խորենացու առեղծվածի շուրջը», հավելված Դ):

Իրոք, ընդարձակ փաստարկներին առարկելը շատ ավելի դժվար է, բայց կան եւ ուրիշ փաստեր, որոնց մասին

XIII դարի վերջում Ստ.Օրբելյանի կազմած Սյունյաց գյուղերի ցուցակում Զաբանդ գավառի 57 անուն գյուղերի ցանկում հանդիպում ենք իրար մոտիկ մի քանի գյուղերի անուններ. Խնձորեսկ, Վանոցայ (այժմ Զիջիմլու), Մրկաքար, Խորեայ: Մրկաքարը, այժմ հազիվ հին բնակության հետքերով, մի վայր է Կորինձորից վեր, հարթության վրա՝ փոքր ձորակի մեջ (որի հին անունը 1947թ. միայն մեկ մարդ էր հիշում գյուղում): Ցուցակի հերթականությունը Խորեա-գյուղի տեղը տանում է ուղիղ Կորինձորի վրա:

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈԴՎԱԾՆԵՐ

չի խոսել Մալխասյանցը: Դաշտենցը հիշում է Մալխասյանցի միայն մեկ փաստարկը, որ Խորենացին լավ ծանոթ է «Սյունիքին, Երասխի հոսանքին, Երասխի ափերի մոտ եղած շեներին», եւ դժվարությունից դուրս գալու համար իսկույն օգնության է կանչում Ալիշանին, որը Հայաստանում չի եղել, «առավել եւս Սյունիքում չի ծնվել, բայց լավ ծանոթ է Սյունիքին... եւ շարադրել է իր «Սիսականում»: դարձյալ անհաջող բաղդատում է կատարվում այստեղ: Անշուշտ, Խորենացին իր ձեռքի տակ չի ունեցել ոչ Ալիշանին մատչելի բազմալեզու գրականությունը եւ մամուլը, ոչ էլ, մանավանդ, բազմաթիվ իրազեկ թղթակիցներ եւ լուսանկարիչներ: Բայց մի բան անվիճելի է, որ Խորենացին Վան քաղաքից այն կողմը, դեպի Մշո դաշտ, դժբախտաբար, չի գնացել: Այլ կերպ՝ տասնապատիկ հարուստ Տարոնի ֆոլկլորից մի փաստ եւս կբերեր եւ ոչ թե միայն՝ Գողթան երգիչներից: Տարոնը այն աշխարհը չէր, որ մի, թեկուզ ոչ այնտեղացի, հայ գրագետ մարդ գեթ մի քանի օրով մնար, տեսներ, լսեր եւ երկու տողով գրիչ չշարժեր, կամ որեւէ պատմական ավան եւ բերդ չցույցաներ իր գրչի տակ, չնկարագրեր իր մեծ եւ անմահ նախորդի, Մաշտոցի ծննդավայրը եւ Աշտիշատը, մեծերի գերեզմանները, որոնք պակաս հետաքրքիր չէին լինի նրա համար, քան Գառնի բերդի պարսպի մեջ դրված քարը՝ Տրդատի հունարեն արձանագրությամբ: Այո, Խորենացին չէր զլանա, թեեւ ավելի քան տասն անգամ առիթ է ունեցել իր գրքի մեջ հիշելու Տարոնը: Տարոնի հետ Ցրոնք եւ Ձոր վայրերի հիշատակումն իսկ հնարավոր չէ համարել ականատեսի խոսք:

Մեզնից ոչ ոք, հոգեբանորեն, հաճույք չի կարող զգալ, երբ պատմահոր ծննդավայրը Տարոնից, իրապես, փոխադրվում է Հայաստանի մի այլ գավառ կամ վայր: Տարոնը, իրավամբ, համարվում է պատմական Հայաստանի մշակութային մասամբ եւ քաղաքական կյանքի պորտը, ինչպես որ երկուս եւ կես հազարամյակ է, ինչ Արարատյան դաշտը հանդիսանում է Հայաստանի եւ հայ ժողովրդի բաբախուն սիրտը: Այդպես է յուրաքանչյուր նստակյաց ժողովրդի համար, որը իր մեծ կամ փոքր հայրենի հողի մեջ, երկու-երեք սրբազան ու սրտամոտ վայր է ունենում. հայի համար՝ Արարատյան դաշտը, Տարոնը, Գողթնը, վրացու համար՝ Մցխեթը,



Մովսես Խորենացի, գործ՝ Հովնաթան Հովնաթանյանի

Թբիլիսին, Քութայիսը, ռուսի համար՝ Սմոլենսկը, Մոսկվան, Սուգդալը, պարսիկի համար Շիրազը, Իսպահանը, Խորասանը եւ այլն:

Ահա այդ է պատճառը, որ ցանկալի է (հոգեբանական տեսակետից միայն), որ պատմահայրը լիներ Տարոնից կամ Արարատյան դաշտից, քան թե Հայաստանի մի ծայրագավառից: Բայց ոչ հայոց պատմության, ոչ Խորենացու հիշատակի համար բնավ վիրավորական չէր հնչի եւ թերություն չէր լինի, եթե մեծ պատմահայրը, տվյալ դեպքում, լիներ Սյունեցի, ամենայն հավանականությամբ՝ ինչպես որ է: Այո, պատմահայրը կարող էր լինել նաեւ այն Սյունիքից, որը

գոնե մեզ ծանոթ 1700 տարիների ընթացքում այնքան մեծություններ՝ զորավարներ, պետական գործիչներ, գիտնականներ, արվեստագետներ եւ ամեն կարգի նշանավոր մարդիկ է տվել: Ուստի եթե բովանդակ Հայաստանը հայրենիք դարձրած հայ առաջին պատմաբանն իր ծննդավայրով Սյունեցի լինի, ոչնչով չի պակասի նրա մեծությունը, որովհետեւ կլինի Հայոց այնպիսի մի նշանավոր նահանգից, որը շուրջ 2, 5 հազար տարի հայոց աշխարհի բռնուցքն է եղել, երկրի կրծքավանդակը հանդիսացող Արարատյան աշխարհի եւ պորտը դարձած Մուշի ու Վասպուրականի պահպանության համար >>> 146

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 145 սեղմված: Մի նահանգ, որը 15 նահանգ ունեցող պատմական Չայաստանի բանակի գրեթե մեկ քառորդն է հանել պատերազմի դաշտ, մի լեռնաշխարհ, որը ոչ միայն երբեմն ինքնուրույնության ընդվզումներ է ունեցել (որը հատուկ է եղել բոլոր երկրների ֆեոդալական կարգերին), այլև մեծ մասամբ համահայկական հարցեր լուծելու և դրանցում ակտիվ մասնակցություն ունենալու պատմական ակտերի է դիմել: VI-VII և XIII-XVIII դդ. նաև Սյունիքն էր, որ պետք է մեծություններ ստեղծեր և ստեղծել է, հայոց պատմության մեջ՝ Արարատ-Շիրակի, Արցախի, Գուգարքի և Տարոն-Վասպուրականի հետ: Այսօր տեղայնական նեղմտությամբ իրավունք չունենք լռության մատնելու աղաղակող փաստերը, ճշմարտությունն ու տրամաբանությունը ստորադասելու երերուն հիմքեր ունեցող ավանդություններին: Ինչպես կարող ենք լռել այն անցնել այն փաստի վրայով, որ XIII դարի ներհուն հեղինակ Ստեփաննոս Օրբելյանը, որն իր ձեռքի տակ ունեցել է VI-VII դարերի գրավոր հիշատակարաններ, իր պատմության մեջ յոթ անգամ խոսելով VI դարի 1-ին կեսի Սյունյաց Պետրոս Զերթողի մասին, չորս անգամը նշում է շեշտում է, որ Պետրոս Զերթողը եղել է Մովսես Զերթողահոր աշակերտը. «Ահա զայս ցուցանել մեզ մուղ ինչ Մովսես Զերթողահայրն, և զբովանդակն՝ ճշգրիտ՝ աշակերտ նորին Պետրոս՝ եպիսկոպոս Սիւնեաց»։ «Երանելի մետրապոլիտն Սիւնեաց Պետրոս՝ աշակերտ Մովսիսի Զերթողահորն»... (Ստ. Օրբելյան, Թիֆլիս, 1910, էջ 56, 454 և այլն):

Աղաղակող թյուրիմացություն կլինի մտածել, թե Մովսես Զերթողահայրը Մովսես Խորենացին չէ. բայց պետք է մտածել, թե ինչու է XIII դարի պատմիչը, գրեթե ամեն անգամ, շեշտում Պետրոս Զերթողի հենց Մովսես Զերթողահոր աշակերտ լինելու հանգամանքը: Չեմ կարծում, թե առարկելու փորձեր լինեն,

թե Պետրոս Զերթողը կարող է Տարոնում աշակերտել պատմահորը, կամ վերջինս կարող էր մի առ ժամանակ Սյունիքում ապրած լինել, կամ Պետրոս Զերթողը եւ կարող էր տարոնական ծագում ունենալ: Վերջապես քերթող տիտղոսն իսկ վկայում է նախ եւ առաջ Սյունյաց դպրոցին պատկանելը եւ երկրորդ՝ սյունեցիական ծագումը:

Կասկած լինել չի կարող, որ Ստ. Օրբելյան պատմիչը իր ձեռքի տակ ունեցել է 7-8 դար իրենից առաջ ապրած իր հեռավոր նախորդի՝ Սյունյաց մետրոպոլիտ Պետրոս Զերթողի աշխատության բնագիրը կամ արտագրությունը, որը չի հասել մեզ: Անշուշտ, Պետրոս Զերթողն իր կենսագրական նոթերի մեջ գրած պետք է լիներ նաև այդ մասին, այսինքն, որ ինքը եղել է պատմահոր աշակերտը: Այլ աղբյուր հազիվ թե լիներ եւ հասներ Օրբելյան պատմիչին: Այդ փաստը չորս անգամ շեշտում է Օրբելյանը ոչ թե որպես հանրահայտ փաստ, այլ ինչ-որ մի կարիք է եղել հատուկ նշելու, եւ որը եւս կասկած չի թողնում Խորենացու Սյունիքում ապրած լինելու, դեռևս չասենք Սյունիքում ծնված լինելու, մասին:

Առավել եւս այդ նկատելի է պատմահոր վեհաշունչ եւ ազգաշեն երկի ոգուց: Մեղմ ասած, դժվար կարելի է հաշտվել Մալխասյանցի եւ այլ հեղինակների անվիժելի համարվող այն կարծիքի հետ, ըստ որի, Մովսես Խորենացի պատմահայրը Մամիկոնյան մեծ տան նկատմամբ սառը, նույնիսկ թշնամական վերաբերմունք ունի, իսկ Սյունիքների նկատմամբ մեծարող եւ ջերմ տրամադրություն, կամ թե պատմահայրը հանդես է եկել սոսկ կամ գերազանցորեն որպես թագադիր ասպետ Բագրատունիների ոչ պակաս մեծ եւ նշանավոր տան պատմիչ: Եթե այսպես լիներ, ինչո՞ւ պետք է քերթողահայր կամ պատմահայր կոչումը տրվեր նրան թե հին եւ թե նոր դարերում: Ուստի, ճիշտ չէ Խորենացուն մեկ իշխանական-



ավատական տան պատմիչ համարելը: Սակայն սա չի նշանակում, թե կասկածի տակ պետք է առնենք այն, որ հայոց մեծ իշխան Սահակ Բագրատունին է հանձնարարել կամ պատվիրել, ավելի ճիշտ «նամակով խնդրել» նրան գրելու հայոց պատմություն, ինչպես առաջին տողից իսկ այդ նշում է պատմահայրը: Իրապես, եւ նախաբանով, եւ տոհմագրություններին դիմելիս պատմահայրը որոշակի եւ անթաքույց համակրանք է ցուցաբերում Բագրատունյաց տոհմի նկատմամբ: Սակայն դրանով նա պարզապես ցուցաբերել է երկրի (մանավանդ նրա վաղվա) ընդհանրական շահի տեսակետից ունեցած իր հեռատես հակումը:

Չայաստանի մոտալուտ անկախության կամ կիսանկախ վիճակում դժնախարարական տունը պետք է իր ձեռքը առներ երկրի ղեկը կամ թագավորական գահի հավակնության իրավունքը:

... Դաշտենցի ամենազորեղ կռվանը այն է, որ ժողովրդական ավանդությունը պատմահոր գերեզմանը համարում է Սշո Առաքելյոց վանքը: Ահա այս է, որ պետք է հարգել, գնահատել եւ միանգամայն հնարավոր համարել: Ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնելու այս մեկը:



Չմոռանանք, որ գործ ունենք V դարի երկրորդ կեսի հետ, երբ ավելի քան կես դար տեսած օրակարգի գլխավոր այդ հարցի շուրջն էին պտտվում թե՛ ազատագրական համառ կռիվները եւ թե՛ մանավանդ ներդասային պայքարը:

Ավարայրից հետո, մինչ այդ գահնամակի առաջին տեղը բռնած, Սյունյաց տոհմը մեկընդմիջտ կորցրեց իր հավակնությունը համահայկական կյանքում, որի համար եթե ցավ է զգացել պատմահայրը, ապա այդ արտահայտել է... խորին լռությամբ (ունայն կարծիք ենք համարում պատմահոր իբրեւ թե կորած չորրորդ գրքի գոյությունը): Յայոց պատմության այդ մասը՝ V դարի երկրորդ կեսը, Ավարայրի պատմության հետ, կարող էր գրել եւ գրեց Ղազար Փարպեցին: Գահնամակի 4-5 տեղը բռնող Մամիկոնյանները պետք է կանգնեին այդ ղեկի մոտ, նույնիսկ մեծ Վարդանին հաջողությամբ հաջորդած՝ Յայոց սպարապետը եւ տանուտերը դարձած Վահանի շուրջ երկու տասնամյակների իշխանության ժամանակներում: Ոչ եւ այդ նկատելի է հատկապես պատմահոր տրամադրությունից, Մամիկոնյանները պետք է, ըստ ավանդության,

մնան որպես երկրի թուրն ու վահանը, կանգնած ղեկավար ռազմական դիրքի վրա: Բյուզանդական աշխարհում իրենց հոգեվարքն ապրող հայ Արշակունի ձեռները, հատկապես Արեւելյան կամ պարսկական Յայաստանում, քիչ կողմնակիցներ ունեին: Յրապարակի վրա մնում էին գահնամակի 2-րդ տեղը բռնող թագադիր ասպետ Բագրատունիները, որոնք, ի դեպ, մշտապես բարեկամ մնացին Սյունյաց իշխանական տան հետ: Գահնամակի 3-րդ եւ 4-րդ տեղերը գրավող Արծրունիները եւ Խորխորունիները համընդունելի բարձր դիրքի մեջ չէին այդ ժամանակ:

Ամեն կասկածից վեր է, որ Մեծ տարոնացին՝ Մաշտոցը, հիմնադրել էր Յայաստանի երկրահավաքման եւ անկախության ձգտող մի գորավոր հոսանք, արդի հասկացողությամբ՝ կուսակցություն, որի ռազմական գործը պետք է վարեր Վարդան Մամիկոնյանը, վարչաքաղաքական կազմակերպիչը պետք է լիներ Վասակ Սյունի մարզպանը, իսկ Մաշտոցից հետո, որպես այդ հոսանքի գաղափարախոս, ինչպես այդ նկատելի է նրա երկից, հանդես եկավ պատմա-

Մշո Առաքելյոց վանքը, որտեղ գտնվում է Պատմահոր գերեզմանը

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՆՈՐԿԱԾՆԵՐ

« 147 հայր Խորենացին: Ահա ինչու Խորենացին վեր է կանգնած ավատական կարգերին խորապես հատուկ տեղայնամոլության զգացումից: Ահա թե ինչու, նա, տվյալ դեպքում իսկ, ավելի շուտ պետք է Սյունեցի լիներ, Բագրատունիների եւ Սյունեցիների նկատմամբ ունեցած իր բարյացակամ տրամադրությամբ եւ, որովհետեւ այս երկու նախարարական տոհմերն էին, որ Մամիկոնյանների նման, այդ ժամանակներում մտահոգ էին երկրի ընդհանուր վիճակով եւ հայտնի էին իրենց համահայկական գործունեությամբ:

Հինգերորդ դարի 80-ական թվականների սկզբին, երբ Վահան Մամիկոնյանը գլխավորում էր Հայոց համառ պարտիզանական կռիվները պարսից դեմ, երբ Սյունիքը կիսվել էր երկու մասի, ավելի ճիշտ՝ երբ սյունեցիների մի մասը, Վասակ Սյունի նախկին մարզպանի զավակների, հատկապես «լաւ այր Բաբիկ Սիւնիի» եւ Հազր իշխանի հրամանատարությամբ դաշնակցել էր Վահան Մամիկոնյանին, մի այլ մասը, Հազրի եղբայր Գրիհոն նախարարի գլխավորությամբ, պարսից կողմն անցած, կռվում էր Վահանի դեմ, մինչեւ Գրիհոնի զոհվելը, որից հետո զորամասը իսկույն քայքայվեց: Ահա այս օրերին, արտասահմանյան կրթություն ստացած, մոտավորապես 440 թվականին Արարատյան Փարպի գյուղում ծնված Վահան Մամիկոնյանի պատանեկան «սննդակից» (գուցե կարծազատներից մեկի եւ Արծրունյաց կամ Մամիկոնյան տան դայակի որդի) Ղազար Փարպեցին թողնում է երկրի կենտրոնը՝ Շիրակը (ուր գտնվում էր) եւ իր հայրենի Արագածոտն



Մովսես Խորենացու պատկերը 14-րդ դարի հայկական ձեռագրի վրա:

զավառը, մեկնում Սյունիք:

Այդ մասին Փարպեցին ասում է հետեւյալը, «Որպես թե ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն... եւ երթեալ ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս, զձմեռն ի քարայրի, առ առն միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնատրութիւնս, որում անուն էր Մովսէս, եւ տե-

ղին անձուկ. եւ զամառն, յաղագս տօթոյ տեղոյն, քահանայապետ աշխարհին տէր Մուշե տաներ զիս առ ինքն՝ ուր եւ լիներ ի հովու» (Ղազար Փարպեցի, Թիֆլիս, 1907, էջ 410): Այսպես է գրում Ղազար Փարպեցին, դառնությամբ լի իր հռչակավոր «Թողթի» (նամակի) մեջ՝ հասցեագրված երկրի տանուտեր եւ սպարապետ Վահան Մամիկոնյանին:

Փարպեցին Սյունիքում եղել է երկու տարի, ամենայն հավանականությամբ 484/85-485/86թթ. (ըստ Օրբելյանի՝ 476-78 թթ.): Խնդրվում է կրկին եւ կրկին կարդալ անզուգական Փարպեցու այդ փոքրիկ պարբերությունը, մանավանդ մեր կողմից ընդգծված տողերը, ինչպես նաեւ բերված թվականները:

Գալենքեարյանը, իր սուր դիտողությամբ, հատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սյունիքում ընդունված քերթող (բանաստեղծ, փիլիսոփա, պատմիչ) բառի վրա, որտեղ Մովսես Խորենացուն եւս կոչել են քերթողահայր:

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱՍՏՆԵՐ

Կրկնում ենք. նախ, այդ տարիներին, Փարպեցու նման 40-45-ամյա մի նշանավոր անձնավորություն «հանգիստ առնելու» հարմար թողնում է Հայաստանի կենտրոնը՝ Արարատյան դաշտը իր նշանավոր գավառներով՝ Էջմիածին, Ոստան, Արագածոտն, Կոտայք եւ այլն եւ Շիրակի դաշտը, ուր գտնվում էր ինքը ուղեւորվելուց առաջ եւ երկու տարով հեռանում Սյունիք: Ի միջի այլոց, այս փաստը միայն բավական է ավելի շիտակ պատկերացում ունենալու համար Սյունիքի ընդհանուր վիճակի մասին: Այդ տարիներին Սյունիքի եպիսկոպոսն էր հայ եկեղեցական նշանավոր դեմքերից մեկը՝ Մուշեհ (մոտ. 475-511թթ.)՝ քաջ ծանոթ Ղազար Փարպեցուն: Հենց միայն այս փաստը ինքնին ցրում է փակ աչքով Սյունիքի վրա քաշած պատմագիտական մառախուղը, որ իբր Վասակի եւ նրա հաջորդների՝ Վարազվադանի եւ Գրիգորի 33 տարիների ընթացքում այդ լեռնաշխարհում վերականգնվել էր հեթանոսությունը՝ ավելի ընդունված, իբր Սյունիքում թագավորում էր պարսից հեթանոսական կրոնը:

Սակայն, տվյալ դեպքում ավելի ուշագրավն այն է, որ Ղազար Փարպեցին հյուրընկալվում է ոմն Մովսես կրոնավորի մոտ, նրա նեղիկ քարայրում, եւ ոչ թե իր ծանոթ Մուշեհ եպիսկոպոսի շքեղ առաջնորդարանում: Միայն «գամառն, յաղագս տօթոյ տեղոյն, քահանայապետ աշխարհին տէր Մուշեհ տաներ զիս առ ինքն՝ որ եւ լիներ ի հովու»: Այսինքն, Մուշեհ եպիսկոպոսը Ղազար Փարպեցուն հյուրընկալում էր միայն ամռան ամիսներին: Անկասկած է, որ այդ ժամանակ, մեր կարծիքով, Սյունյաց եպիսկոպոսարանը պետք է որ Սյունյաց աշխարհի կենտրոն Սյունի-Ծղուկ գավառի (Սիսիանի) Շաղատ գյուղից փոխադրված լիներ մոտակա Սյունի բերդավանը (արդի Սիսիան), մինչեւ Տաթևի կենտրոն դառնալը: Այստեղ, իրոք, ամենուրեք ամառանոցային վայրեր էին:

Բայց որտեղ կարող էր տարվա 9-10 ամիսներին հյուրընկալվել Ղազար Փարպեցին, ապրելով քարայրում եւ ուր ամառը լիներ տոթ: Փարպեցու քարայրը կարող էր լինել, ցարդ հետքերը պահպանած, Սյունիքի քարատակը՝ քարայր-տունը: Քարայրային գյուղեր Սյունիքում հայտնի էին Հաբանդ գավառում, որ հետագայում կոչվեց Ձագեձոր-Ձանգեզուր: Այդ գյուղերից բացառիկ էին

Խնձորեսկը, Կորնիձոր կամ Կորինձորը, Գորու-Կյորուն, Շինուհայրը, Ձագեձորը (հին Գորիս) եւ այլ գյուղեր... Ամռան տոթը հատուկ է Որոտանի եւ Ազարու գետերի ստորին հովիտներին:

XIII դարի վերջում Ստ.Օրբելյանի կազմած Սյունյաց գյուղերի ցուցակում Հաբանդ գավառի 57 անուն գյուղերի ցանկում հանդիպում ենք իրար մոտիկ մի քանի գյուղերի անուններ. Խնձորեսկ, Վանոցայ (այժմ Ջիջիմու), Մրկաքար, Խորեայ: Մրկաքարը, այժմ հագիվ հին բնակության հետքերով, մի վայր է Կորինձորից վեր, հարթության վրա՝ փոքր ձորակի մեջ (որի հին անունը 1947թ. միայն մեկ մարդ էր հիշում գյուղում): Ցուցակի հերթականությունը Խորեայ-գյուղի տեղը տանում է ուղիղ Կորնիձորի վրա: Ձոր հավելումը կատարվել է ճիշտ այնպես, ինչպես նույն գավառի գյուղերի ցանկի վերջում երեք գյուղ է հիշվում. Խոտ... Շաթիթաղը (Շահվերդիլար), Շնոյիերը (Շինուհայր-Շնիեր) եւ Հալե, որ այժմ կոչվում է Հալիձոր: Թեեւ խն էր դառնա կ, բայց անիմաստ Խորեան-Խորնիձորը պետք է որ իմաստավորվեր եւ դառնար Կոռնիձոր (կուռն, կողմ): Բնակիչները գիտեն շատ մոտիկ մի ավերակի անուն եւս, մոտավոր հնչումով:

Խոր ձորակի ճեղքի մեջ քարայրային հին Խորեան այժմ գավառի բնակչության շուրթերում հնչում է որպես՝ Կոռնիձոր: Անշուշտ, եթե այս անվան (բառի) արմատը լիներ խոր-խորին բառը, չէր տա Կոռնիձոր, այլ կհնչեր որպես Խորինձոր:

Ղազար Փարպեցին մեկ-երկու շաբաթվա ծանապարհ է կտրել, հանդիպելու եւ հյուրընկալվելու, այն էլ գրեթե երկու տարի, անշուշտ, մի ոչ պատահական Մովսեսի մոտ, որին ինքը ծանոթացնում է որպես գավառի բնակիչների եւ հոգեւորականության մեջ հռչակված մի հոգեւորական(2):

Վահան Մամիկոնյանի սննդակից-բարեկամ, բարձր կրթության տեր գիտնական-վարդապետ Փարպեցին ապրում է Մովսեսի հետ, այդ խոլ գյուղում, եւ նրա բարեկամ Մուշեհ եպիսկոպոսը հանդուրժում է կենտրոնից եկած եւ ծանաչված այդ հոգեւորականին, զիջելով անշուշտ՝ Մովսեսի մեծությանը, որի մասին կասկած լինել չի կարող: Միայն կարելի է ենթադրել, որ այդ Մովսեսը գուցե հարկադրված է ամրացված եղել իր հայրենի գյուղի քա-

րատակ-բնակարանին, որպես մեկուսացման, չեզոքացման մի ձև:

Մեր կարծիքով, ահա, այս Մովսեսի մեջ պետք է փնտրել պատմահորը, եւ Հաբանդի Խորեա-Կորնիձորի մեջ պետք է փնտրել նրա ծննդավայրը:

Որպես զորավիգ այս եզրակացության, կրկին պետք է կարդալ Խորենացու Ա գրքի ԺԲ գլուխը, որի մեջ Սյունյաց իշխանության հիմնադիր Սիսակին նա համարում է Հայկ նահապետի թոռան՝ Արամայիսի ծոռը՝ Գեղամի որդին: Նա նույնիսկ Արամ նահապետին համարում է Գեղամի թոռ, Սիսակի եղբոր՝ Հարմայի որդին: Հայ իշխանական տներից ոչ մեկի ծագումը պատմահայրը չի արժանացրել այս պատվին եւ բարձր աստիճանին: Հրապա Նահապետի ժամանակից էլ բերում է իր մեկենասի՝ Սահակի (Բագրատունիների) տոհմը: Ավելին. պատմահայրը Սյունյաց իշխանական տոհմից է սերում ոչ միայն Գողթնի իշխանական տունը, այլեւ Վարաժունիներին, Ռատունիներին: Իսկ ամենից ուշագրավը՝ նաեւ Աղվանից աշխարհի ոչ միայն իշխող տոհմերը, այլեւ ցեղերը համարում է Սիսակից եւ Սյունիքից սերված: Ահա թե ինչ է գրում այդ մասին իր երկրորդ գրքի Ը գլխի մեջ. *«Մենք առաջին գրքում մոռացանք հիշատակել այս մեծ եւ անվանի տոհմը (հմմ. - Առանի - Ա. 7.), այսինքն՝ Սիսակից սերված ցեղը, որ ժառանգեց Աղվանից դաշտը եւ այս դաշտի լեռնակողմը: Երախս գետից մինչեւ Հնարակերտ կոչված ամրոցը, երկիրն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետեւ նրան աղու էին ասում: Այս (Սիսակի) սերնդից էր եւ այս անվանի եւ քաջ Առանը, որ Պարթեւ Վաղարշակի կողմից Բյուրապետ կուսակալ նշանակվեց: Ասում են, որ սրա գավակներից են սերվել Ուտեացիների ազգը եւ Գարդմանացիների, Ծավղեացիների եւ Գուգարացիների իշխանությունները» (Մ. Խորենացի, Պատմություն հայոց, 1968, էջ 137):*

Ուշադրության արժանի է նաեւ Աղվանից՝ գարգարացիների լեզվի քաջ ծանոթ մարդու՝ Խորենացու, նկարագրությունը, այն լեզվի, որի համար եւս Մաշտոցը ստեղծեց նշանագրեր (էջ 294):

Հնարավոր է, որ Մովսես Խորենացին իր նախնական ուսումն ստացած լինի ոչ թե Սյունի-Ծղուկի (Սիսիանի) վանքերից մեկում

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 149 (Շաղատ, Անգեղակոթ, Այունի, Որոտան, Տաթեի), կամ Քաշաթաղի Ծիծառնու եւ Յաբանդի վանքերում, այլ, նախապես՝ ասենք, Գողթնի Թաղեի վանքում, ապա՝ Գեղամա-Սոթից (Սեանի) Մաքենյաց մենարանում: Միայն չի կարելի համաձայնել Ստ.Մալխասյանցի հետ, երբ գրում է, թե այս տեղեկությունները պատմահորը «հայտնի են շնորհիվ այն հանգամանքի, որ Երասխի հովիտը հնուց ի վեր եղել է հաղորդակցության միակ ճանապարհը լեռնային Այունիքի եւ Արարատյան դաշտի միջեւ, Խորենացին հաճախ առիթ է ունեցել այս ճանապարհով հայրենիքից գալ Վաղարշապատ կամ Վաղարշապատից հայրենիք» («Խորենացու առեղծվածի շուրջը», էջ 146): Այս աշխարհագրական թյուրիմացությունը Խորենացուն դարձնում է դարձյալ Այունիքի, բայց Արեւիք (Մեղրիի) եւ Գողթանի բնակիչ, որովհետեւ Լեռնային Այունիքից Արարատյան դաշտ տանող գրեթե միակ, կամ գլխավոր ճանապարհը Վաղարշապատից ձորի վրայով, Արփայի հոսանքով էր գալիս, ինչպես է եւ այժմ, որ բերում է Շարուր-Ուտանի կամ Վեդիի վրայով դեպի Արտաշատ եւ Վաղարշապատ: Յնարավոր էր, դարձյալ Վաղարշապատից, Սուլեմա լեռնանցքով՝ դեպի Կոթ (Մարտունի-Սեանի), իսկ այստեղից Գառնիի մոտերքով դեպի Դվին-Արտաշատ-Վաղարշապատ: Արեւիք-Մեղրիից եւ Գողթն գավառից իրոք միակ ճանապարհը՝ ձգվում է Ջուղա-Նախճավան-Շարուր-Արտաշատ կամ Դվին: Ձմռան ամիսներին, բացառիկ դեպքում, լեռնային Այունիքից կարող էին գալ Ծղուկից (Սիսիանից) - Նախճավան-Շարուր-Այրարատ: Այնպես որ, Խորենացու քաջածանոթությունը Գողթնին միայն կարելի է բացատրել նախ՝ նրա այնտեղ ուսանելու կամ ուղղակի շրջագայած լինելու հանգամանքով, իր երիտասարդ կամ միջին տարիքում, իսկ Գողթնի գուսաններին կարող էր լսած լինել նաեւ առանց Գողթն գնալու, Այունիքի կենտրոններում կամ Այրարատում:

Այս փոքրիկ շեղումից հետո հերթը գալիս է այն հարցին, թե ինչ կապ կարող է եղած լինի Ղազար Փարպեցու բարեկամ վերոհիշյալ Մովսեսի եւ նույն պատմիչի «Թուղթի» մեջ հիշված հալածական փիլիսոփա Մովսեսի միջեւ: Այսինքն՝ նույն մարդուն է երկու անգամ տարբեր առիթներով հիշել Փարպեցին,

թե՛ սրանք սոսկ ժամանակակից լինելով, համանուն, բայց տարբեր անձնավորություններ են:

Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանին հասցեագրած այն նամակում, նկարագրելով իր հալածական վիճակը, փաստեր է բերում եւ այլ նշանավոր կրթված-լուսավորված մարդկանց - հոգեւորականների ավելի դաժան հալածանքի մասին, տգետ՝, թերուս աբեղաների կողմից, որոնք, ըստ երեւոյթին, ոչ միայն շատ են եղել, այլեւ պաշտպանություն պետք է գտած լինեին տեղական, մանավանդ պարսկական պաշտոնեւորության կողմից: Ուսյալներին սրանք դիտել են որպես «արեւմտականներ» - հունական մշակույթի եւ գիտության ջատագով-քարոզիչներ, զուգեւ իրական կամ կասկածված, որպես քաղկեդոնի համակիրներ: Փարպեցին գրում է, որ իրեն հալածում են:

Մի պահ ընդունենք, որ մեղավոր է, հապա այն առաքելանման մարդիկ ինչ մեղք ունեին, որ ավելի սարսափելի վիճակի արժանացան: Դրանցից առաջինը հիշում է «երանելի փիլիսոփոսն» Մովսեսին, որի լուսավորիչ եւ տգիտությունը հալածող (հավանաբար մեծ մասով՝ հունարեն) գրքերը անպետք եւ աղավաղ համարեցին, իրեն տեղից-տեղ հալածեցին, վերջում, իրենց արած խայտառակությունը ծածկելու նպատակով, նրան եպիսկոպոսի աստիճան պաշտոն տվին, հավասար մահադեղի, սրանով էլ խեղդեցին սուրբին, որը մեռնելուց առաջ «գինչպիսի ահավոր նզովս գրով ի վերայ գլխատրաց քահանայութեանդ ասացեալ է՝ ձեզեն իսկ դիտեք տեղեկացեալք» (436):

Մովսեսի այդ ահավոր նզովքի, անեծքի ու մերկացումների մասին Փարպեցուն պատմել է ինքը՝ Վահան Մամիկոնյանը: Այստեղ է, որ «Թուղթից» մեկ (թե՛ երկու) թերթ են պոկել այդ տգետները կամ, ավելի հավանականը, նրանց տգետ հաջորդները: Իսկ ինչ բովանդակությամբ թերթ է եղել, այդ երեւում է թերթի շարունակությունից: Այստեղ կիսատ նախադասությամբ ասվում է, որ գիշեր ու ցերեկ դժվարին ջանքերով նա վաստակ էր թողնում հանուն Յայոց աշխարհի լուսավորության, բայց նրա ոսկորներն անգամ գերեզմանից հանել տվեցին եւ գետը թափեցին:

Դրանից հետո Տեր անունով հրեշտականման մարդուն եւս ծանր հալ-

ածանքի ենթարկեցին եւ մեռցրին, որը անգամ մեռնելուց հետո չարձավ նրանց անսպառ քենից: Փարպեցին շարունակում է հիշել ոմն հալածական Խոսրովի կի եւս: Չգիտենք, թե ում ոսկորներն են գերեզմանից հանել եւ գետը թափել՝ Մովսես փիլիսոփայի, թե՛ մի այլ նշանավոր անձնավորության: Ավելի հավանական է, որ խոսքն այլ մարդու մասին լինի, որովհետեւ նամակի մեջ նույնիսկ մեկ թերթ էր հատկացնի միայն Մովսեսին:

Ղազար Փարպեցու «Թուղթը» գրված պետք է լինի շուրջ 500 թվականին (երեք-չորս տարի առաջ կամ հետո): Նշանակում է Մովսես փիլիսոփայի պետք է որ մեռած լինի դրանից 10-15 տարի առաջ: Ոմանք, հատկապես Ստ.Մալխասյանը, հենց այս հալածական փիլիսոփա Մովսեսին են համարում Մովսես Խորենացի: Իրոք, այլ Մովսես չգիտենք, որ արժանի լիներ այսքան մեծարման, հավասարված հրեշտակներին եւ սրբերին: Կարող էր եւ նույն Մովսեսը լիներ, որի մոտ հյուրընկալվել էր Փարպեցին, թե՛ն հնարավոր է, որ երկու տարբեր, բայց համանուն մեծություններ եղած լինեն նույն ժամանակամիջոցում: Սակայն պետք է խոստովանենք, որ ինչ որ մի ներքին ձայն ինձ անձամբ հեռու է պահում այդ նույնացումից, որովհետեւ, ըստ երեւոյթին, Խորենացին մահացած պետք է լինի Ղազար Փարպեցուց բավականին ուշ, եւ այն ժողովրդական ավանդությունը, որ մնացել է Խորենացու երկարակեցության մասին (100-ից անց), պետք է համարել իրականին մոտ:

Անարդար եւ անզգույշ քայլ է, երբ իր հողվածում հաչիկ Դաշտենցը Մալխասյանցի մասին գրում է. «Ինչպես պատահեց, որ ակադեմիկոս Ստ.Մալխասյանցը հանկարծ որոշեց դեմ գնալ այդ համընդհանուր կարծիքին, նաեւ իր կարծիքին եւ պատմահոր ծննդավայրը իր ընդունված տեղից տեղափոխել Այունիք: Այդ հարցի պատասխանը, ըստ իս, շատ պարզ է: Մալխասյանցը իր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատությունը գրել է 1937 թվականին, իսկ «Ծանոթագրությունները»՝ 1940-ին: Այդ տարիներին, ինչպես հայտնի է կամայականություններ եղան ոչ միայն գրականության, այլ եւ գիտության ասպարեզում: ...Կարծում եմ, որ մեծահարգ ակադեմիկոսը վերոհիշյալ հարցում պարզապես տուրք է տվել այդ տարիներ-

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱՍՏՆԵՐ

րի մտայնությանը եւ իր կամքից անկախ կատարել այդ անձնությունը, եթե չասենք սխալը»:

Այսինքն՝ Մալխասյանցը, 1940թ. տպագրված իր գործերում, վախեցել կամ խուսափել է Տարոն-Մուշ գավառի անունը տալուց եւ պատմահոր ծննդավայրը փոխադրել է Սյունիք: Չէ՞ որ հենց 1939-1940թթ. էր, որ Երեւանից մինչեւ Լեւինգրադ, Վլադիվոստոկից մինչեւ Լվով, այնքան բարձր ծայրով հնչում էին Սասունի եւ Մուշի անունները՝ Սասունցի Դավիթ վեպի 1000-ամյա տոնակատարության առթիվ: Այնպիսի էլեկտրականացած տրամադրություն եւ ոգետրություն էր իշխում, որ եթե պատմահոր ծննդավայրը ընդունված լիներ Սյունիքը, գիտնականները կառաջարկեին փոխադրել Սասուն կամ Մուշ:

Իսկ ի՞նչ անուն տանք այն փաստին, որ իմ այս տողերը գրելիս միայն իմացա (Աշոտ Յովհաննիսյանի միջոցով), որ սույն հարցը շոշափվել է առաջին անգամ դեռեւս 1912 թվականին, «Տաճար» շաբաթաթերթի էջերում Գնել վարդապետ Գալեմքեարյանի հոդվածներից մեկում (մայիսի 20): Ես համոզված եմ, որ Մալխասյանցն իսկ չի իմացել այդ հոդվածի մասին, թե չէ անպայման կհիշեր գեթ ծանոթագրությունների մեջ:

Այդ հեղինակը նախ Մովսես Խորենացուն համարում է այն փիլիսոփա Մովսեսը, որի հալածանքի մասին գրում է Ղազար Փարպեցին:

Գալեմքեարյանի առաջին թեզը հետեւյալն է. եթե Մովսես Խորենացին «ստուգիվ... ծնած է ի Խորնի Մշո, ապա ուրեմն ինչպէս Մամիկոնյանց բարեկամ մեկը չէ եւ բոլորովին ցուրտ... չփութալով երբեք անմահացնել իր երկրին դյուցազները»:

Երկրորդ թեզն է, երբ պատմահայրը հիշում է Եվսեբիոսի գիրքը, ապա ցույց է տալիս գրքի տեղը «ի Գեղարքունի եւ գաւառին Սիւնեաց... որ եւ այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի» (Բ գիրք, Ժ):

Չէի ասի միանգամայն իրավացի, բայց հեղինակը բնական հարց է տալիս, «ո՞վ կրնար գիտցած ըլլալ, թե Եվսեբիոսի եկեղ. պատմությունը կատվի Սյունյաց վարդապետներուն քով: Տարոնցի մը... կրնար գիտնալ, թե ինչ գիրքեր կան Սյունյաց քով ...Տարակոյս երբեք չկա, թե Սյունյաց գավառն մեկը, որ ապրած էր հոն եւ գրական զբաղումներ ունեցած, եթե նոյնիսկ չուզենք հա-

մոզվիլ անոր Սյունեցի մը ըլլալուն»:

Գալեմքեարյանի երրորդ թեզը այն է, որ բանասիրության կողմից Մովսես Խորենացին է ծանաչված որպես Կալիսթենեսի Աղեքսանդրի պատմության թարգմանիչ: Այս պատմության մեջ մի տեղ ասվում է, թե «քաղեին ի ծովե անտի եւ յերկրե գերերի, որ առ մեզս լինին»: Գերերին՝ «գետնախնձորի նման այդ տունկը»: Աշխարհագրության մեջ եւս (որի հեղինակը մի ժամանակ համարում էին Խորենացուն) համարվում է Սյունյաց աշխարհի բույս: Այդտեղ, ի միջի այլոց, ասվում է եւ հետեւյալը. «լինի ի նմա մուրտ եւ գերերի եւ նուռն...»:

Հայ բանասերները, ովքեր անդրադարձել են այս հարցին, գտնում են, որ Եվսեբիոսի պատմության թարգմանության մեջ «առ մեզս լինի» (որ մեր կողմերումն էլ լինում է) հավելումը, մատնում է թարգմանչի սյունեցի լինելը..., «ավելի բանավոր կերեւի մեզի Դուրյան Եղիշե սրբազանի կարծիքը, - եզրափակում է Գալեմքեարյանը, - ըստ որում թարգմանչին Սյունեցի մը ըլլալն առիթ եղած է այդ հավելման, որով թարգմանիչն կուզե իմացնել, թե գերերին կարտադրվի իր (Սյունյաց) երկրին մեջ»:

Գալեմքեարյանի հաջորդ փաստարկն է լեզվի հարցը, որ Խորենացու մոտ երեւում է հունաբան դպրոցի նախանշանները: Նա գրում է, որ գալով Խորենացու գրքի տակ «ստեպ երեցած հունաբանության ձեւերուն, արդարեւ, ամենն ավելի հույն լեզուն Սյունյաց դպրոցի վրա ազդեցություն գործած է՝ անհերքելիորեն... քանի որ թարգմանությունը կը ստիպեր զիրենք (Սյունյաց վարդապետներին- Մ.Յ.) հավատարիմ մնալու բնագրին»: Իսկ Սյունյաց վարդապետներին Մաշտոցի եւ Սահակ կաթողիկոսի կողմից տրվել էր գրեթե թարգմանական մենաշնորհը եւ պատմահայրն էլ իրեն համարում է այդ պատասխանատու ծառայության համար արտասահման ղրկված: «Ինչպէս բացատրելու է այս զարմանալի զուգահեյությունը, - բացակայում է Գալեմքեարյանը, - Խորենացու եւ Սյունյաց դպրոցի կատարյալ թարգմանիչ ըլլալու հավակնության մեջ»:

Ավելին, Գալեմքեարյանը, իր սուր դիտողությամբ, հատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սյունիքում ընդունված քերթող (բանաստեղծ, փիլիսոփա, պատմիչ) բառի վրա, որտեղ Մովսես Խորենացուն եւս կոչել են քեր-

թողահայր: «Վերջապես դիտելի է նաեւ, որ Սյունյաց սեպհական տիտղոսը՝ քերթող՝ միացվեր է Խորենացվո անունին, երբ Սյունեցվո մը գործերն ընծայվեր են անոր»:

Ահա այս փաստարկներով է 1912թ. Գնել վարդապետ Գալեմքեարյանը հանդես եկել մամուլում: Եթե չեմ սխալվում, երեւի նա առաջին հայ բանասերն է, որ մասնավոր ուշադրություն է հատկացրել մեզ զբաղեցնող հարցին եւ առաջինը հրապարակել իր եզրակացությունը: Չմոռանանք կրկնել, որ Գալեմքեարյանը իր փաստարկները վերջացնում է՝ հիշելով Ղազար Փարպեցու «Թուղթ»-ի մեջ ամենապատվավոր եւ ազդու տեղը զբաղված հալածական Մովսես փիլիսոփային: Ինչպես եւ շատերը, մեր հեղինակը եւս այդ Մովսեսի անվան մեջ տեսնում է Մովսես պատմահորը: Ըստ որում, անտարակոյս, Փարպեցու մոտ հիշված երկու Մովսեսները նույնացնելով, ինչպես եզրակացվում է նրա ողջ շարադրանքի ոգուց եւ ընթացքից:

Վերջացնենք. լավ է, եթե գիտական հարցերը լուծվում են համոզիչ փաստարկներով: Պատմահոր վաստակը Հայոց պատմության մեջ այնքան մեծ է, որ նրա երկուն հանդիպող թերությունները (պակասություններ, ժամանակի ոգուն պատշաճ հորինվածքներ, պարզունակ մեկնություններ, անաքրոնիկ պատումներ) բնավ չեն իջեցնում նրա մեծ երկի արժեքը եւ կատարած դերը: Այնպես, ինչպես մեծ Տարոնացի Մաշտոցը Հայաստանի պետականության անկման օրերին կառուցեց հայ ազգային անպարտելի ամրոցի եւ անխցելի ազգային դրոշի դերերն ստանձնած հայ դպրությունը, այդպես էլ երկրորդ համազգային հրաշագործության հասնող սխրագործությունը կատարեց նրա հետնորդ, նույնպես առնական Մովսես պատմահայրը, որն իր մեկ հատիկ գրքով 14 երկար ու դժվարին դարեր հանդիսացավ համազգային պատմության միակ անփոխարինելի ուսուցիչը:

Այսքանն էլ բավական է, որ պատմահայրը համարվի հայաստանյան ամեն տեղացի, ինչպիսին որ է: *Նրա ծննդավայրը, որտեղ էլ լինի՝ ընդունելի է: Իսկ նրա սյունեցի լինելը պատիվ է բերում ոչ միայն Սյունիքին, այլեւ իրեն՝ հանձարեղ եւ անմահ Խորենացուն:*



ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՆՈՂՎԱԾՆԵՐ

Որտե՞ղ է թաղված Վարդան Մամիկոնյանը

450-451թթ. հայոց ապստամբության եւ Ավարայրի ճակատամարտի մասին պատմել են V դարի երկու հայ նշանավոր հեղինակներ՝ Եղիշեն եւ Ղազար Փարպեցին:

ՄՈՐՈՒՍ ՀԱՄԱԼԹՅԱՆ

Առաջինը՝ Եղիշեն, բորբոքված կրքի անմիջական ազդեցությամբ եւ կրոնական մոլեռանդությամբ, Ավարայրի ճակատամարտի եւ ընդհանրապես հայոց ապստամբության հակառակորդներին, Վասակ Սյունի մարզպանի գլխավորությամբ, համարում է ուխտադրուժ դավաճաններ եւ սեւացնում պատմության էջերում:



Երկրորդը՝ Ղազար Փարպեցին (ծնված 435-440թթ., մահացած 505-510թթ.), դաստիարակված Մամիկոնյան ընտանիքում, պատմաբանի անաչառությամբ փորձում է բացատրել այդ դավաճանության ներքին պատճառները՝ Վասակին նույնպես համարելով ուխտադրուժ եւ նենգավոր: Ժամանակակից այլ հեղինակներից այդ մասին գրված ոչ մի լուրջ պարբերություն չի հասել մեր ձեռքը, իսկ հտորենացին ուղղակի լռել է, գերադասելով թողնել իր «Ողբը», քան ասել ճշմարտությունը: Եղիշեն Վասակին մասնակից է անում Ավարայրի ճակատամարտին, բայց պարսկական բանակում՝ հայե-

րի դեմ: Նույնիսկ նկարագրելով պարսից զորավար Մուշկան Նիսալավուրտի վիշտն եւ զայրույթը, որ ավելի քան երեք անգամ շատ զոհ էր տվել, քան հայերը՝ Վարդանի գլխավորությամբ, ասում է: «*ուրացող Վասակը, որ գազանների (մարտական փղերի) մեջ թաք կացած ազատել էր իր անձը, սկսեց մխիթարել նրա վիատված միտքը եւ նենգությամբ նրան զանազան հնարներ էր սովորեցնում, թե ինչպես կարող է խաբեությամբ կռվել ամրությունների դեմ*» (Եղիշե, էջ 193, 194թ.): Յետեւելով ցասկոտ Եղիշեի սրան խիստ հակասող հաջորդ էջերին, նույնիսկ կարելի է փոքրիկ վերապահությամբ կասկածել, թե վերոհիշյալ տողերը արդյո՞ք Եղիշեի բուն բնագրին են պատկանում, թե՛ հետագա այլ հեղինակների ներմուծում է:

Մինչդեռ Ղազար Փարպեցին նման բան չի ասում, այլ պատմում է, որ մարզպան Վասակը, հրաժարվելով ապստամբական ուխտից, բազմաթիվ հայ իշխանների հետ (անշուշտ, ոչ առանց իրենց գնդերի, դրոշների եւ վաշտերի) կենտրոնից փոխադրվում է Սյունիք, իր հետ տանելով նաեւ ապստամբության կողմնակից իշխանների մի մասի (Մամիկոնյան, Կամսարական...) ընտանիքները, գուցե միայն փոքր զավակներին: Այս լուրը առնելուց հետո Վարդանը Աղվանքի եւ Յայաստանի սահմանի վրա, Կուր գետի ձախ ափերին, պարսից դեմ մղած հաղթական պատերազմից շտապ վերադառնում է Արարատյան դաշտ եւ միանում այն «կայուն» մարդկանց, որոնք «փափագում էին իրենց նահատակության օրին»: Յոգեւոր դասի մոլեռանդ քարոզի ազդեցության տակ պսիխոզի հասած հենց այս տրամադրության դեմ էր ընդվզում Վասակը, որ ապստամբությունը մարտիրոսանալու համար չէր ծրագրվում եւ նախապատրաստվում, այլ հաղթանակի: Սրանից հետո սկսվում է Վարդանի եւ Վասակի գժտությունը: Այս դեպքերը նույն եւ ավելի մանրամասնությամբ ու կրքով պատմում է նաեւ Եղիշեն, որի ազդեցությունից երբեմն չի կարողացել ազատագրվել 10-20 տարով այդ պատմությունը շարադրելու համար նրանից ավելի ուշ գրիչ առած Ղազար Փարպեցին:

**Վարդան
Մամիկոնյանը
ժողովրդի
աչքում իրավամբ
համարվում էր
սուրբ նահատակ:
Ամենայն
հավանա-
կանությամբ
480-490-ական
թվականներին
Վարդան
Մամիկոնյանին,
նրա զոհվելուց
30-40 տարի
անց,
պաշտոնապես
դասեցին սրբերի
շարքը...**



Եղիշեն գրում է, որ Վասակը «դուրս եկավ երանելիների թվից եւ շատերին ապստամբեցրեց իրեն հետ: Չարի անոթ դարձավ... հնարներով կռիվ մղեց իմաստունների դեմ եւ մեծ խորագիտությամբ՝ գիտունների դեմ... շատերին դուրս հանեց Զրիստոսի գնդից եւ խառնեց դեւերի գնդերի հետ: Շատ ուրիշ տեղեր էլ գողաբար սողոսկեց եւ օձի նման ներս մտավ ամրացածների մեջ. եւ ցանկապատի մեջ ձեռքվածք առաջացնելով՝ հայտնապես հափշտակեց առավ ու դուրս հանեց բազմաթիվ ազատների եւ էլ ավելի բազմաթիվ շինականների, ինչպես եւ ուրիշ ոմանց, որոնք միայն անունով էին քահանա... Աղվանիցն էլ չթողեց առաջ շարժվել, նույն ձեռով ետ պահեց նաեւ Աղձնյաց երկիրը... Այդպես էր վարվում նաեւ աշխարհի բոլոր ամուր կողմերում, Տնորիքում եւ Կորդվաց աշխարհում, Արցախում եւ Աղվանքում, Վրաստանում եւ Խաղտյաց աշխարհում... Եվ նրա մեծ չարության համաձայն էլ առավելապես ժամանակը հաջողացրեց նրա գործերը, որովհետեւ Յայոց գորքին դրսից ոչ մի օգնող չեղավ... Եվ այսպես, (Վասակը) շարժեց շփոթեց Յայոց աշխարհը, մինչեւ իսկ բազմաթիվ հարազատ եղբայրների բաժանեց միմյանցից, հորն ու որդուն միաբան չթողեց եւ խաղաղության մեջ խռովություն գցեց» (Եղիշեն, էջ 169-172):

Մենք դիտմամբ այս երկար մեջբերումն արինք Եղիշենից, որպեսզի պարզ լինի ընթերցողի համար նախ Ավարայրի ձակատամարտի նախօրեին

ստեղծված իրադրությունը. որ Վասակը զգալով եւ տեսնելով պարսից արքունիքի բռնած եւ անզիջող դիրքը, որը շտապում էր մեծ բանակով բնում խեղդել հայոց դիմադրությունը, անշուշտ տեղյակ էր, որ հայերը ոչ Բյուզանդիայից, ոչ հյուսիսի դրացիներից այդ օրերին օգնություն չեն կարող ստանալ: Ուստի Վասակը, թեեւ Վարդանին ուղարկել էր պարսից առաջապահ զորամասի դեմ, որ թափանցել էր Աղվանք, անշուշտ, հոների, վրացիների եւ աղվանների հնարավոր օգնությունը խափանելու համար, իսկ գլխավոր բանակը շարժման մեջ դրել դեպի Այրարատ, կարողանում է հավաստիացնել արյաց արքունիքին եւ անձամբ թագավորին, որ իրեն հաջողվել է խաղաղեցնել հայ ապստամբներին, պայմանով, որ արյաց արքան հրաժարվի դավանափոխության հրամանից: Եվ Եղիշեի, եւ Փարպեցու էջերից երեւում է, որ, իրոք, այդ իրավունքը ստացել էր արդեն: Սա նրա՝ Վասակի մեծագույն նվաճումն էր այդ նեղ վիճակում, բայց մոլեգնած հայ բարձր հոգեւոր դասը եւ Վահան Ամատունուն հետետող հայ իշխանական տները մնացին անդրդվելի եւ դիմեցին «մարտիրոսանալու»՝ Զրիստոսի սուրբ խաչի համար «նահատակության պսակին հասնելու օրը տեսնելու համար» (Փարպեցի): Ասել է, թե համաժողովրդական շահերը, երկրի ընդհանուր շահը ստորադասվեցին եկեղեցական դասի եւ որոշ շահախնդիր իշխանների նեղ շահերին, որոնց ոխերիմ թշնամին

*Սուրբ Վարդան
Չորավոր
եկեղեցին
Անգեղակոթում,
որի մոտ
Վարդան
Մամիկոնյանի
ենթադրյալ
գերեզմանն է*

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 153 էր երկրի առաջին պատասխանատուն՝ մարգպան Վասակը:

Եղիշեն Ղետնդ Երեցի բերանով երկարապատում բիբլիական ճառ-քարոզ է կարդում Արտազի դաշտում գտնվող հայոց բանակի պատգամավորների եւ զորականների առջեւ, ուր ի միջի այլոց ասում է հետեւյալը. «*Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետ եւ սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ձակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին՝ որեւէ ամուր տեղ էիք թողնում նրանց, իսկ այսօր եպիսկոպոսները եւ երեցներն ու սարկավազները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրեւ սպառազինված եւ պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ձմարտության թշնամիներին: Եվ եթե նույնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենալու, որովհետեւ ավելի լավ են համարում մեռնել, քան թե մեռցնել» (էջ 186):*

Բնական է, պատմիչներից վերը բերված ասույթների մեջ ընդգծումները մերն են, հատուկ ուշադրություն հրավիրելու նպատակով, որպեսզի ընթերցողը համոզվի, թե ինչ բնույթ էր ստացել ասպտամբության ընթացքը եւ որքան ծանր էր մեծ հայրենասեր զորավարի՝ Վարդան Մամիկոնյանի վիճակը: Հայ բարձր հոգեւոր դասը եւ նախարարական որոշ տներ, իրենց ավատական-ֆեոդալական գոյավիճակով եւ հոգեբանությամբ, շատ գոհ պիտի լինեին, որ 20-30 տարի առաջ վերացել էր Հայաստանի պետականությունը, եւ իրենք կապվում էին պարսից հզոր տերության արքունիքի հետ ոչ թե հայկական վասալ արքունիքի միջոցով, այլ անմիջապես: Նրանց միակ մտահոգությունն այն էր, որ իրենց ներքին վարչատնտեսական իրավունքներին եւ կրոնական զգացումներին չդիպեին պարսիկները: Բայց հետզհետե ստեղծվում էր անտանելի վիճակ: Թեւեւ արյաց արքայից արքա Հազկերտ Բ-ն (438-457) իր հոր՝ Վռան (Բահրամ) Ե-ի նման կրոնական եւ այլ հարցերում ձգտում էր հանդուրժող քաղաքականություն վարել, մասնավորապես հայերի նկատմամբ, բայց զրադաշտական մոգպետը, բարձր մոգերի եւ ավագանու հետ,

որի ղեկավարն էր Միհրնեսուհի հազարապետը, որպես զորավոր կենտրոնախույս ուժեր, աքցանի մեջ էին առել Հազկերտ թագավորին, ջանալով սահմանափակել նրա իրավունքները: Եղիշեն իսկ, բուռն ատելությամբ լցված Հազկերտ թագավորի դեմ, Միհրնեսուհի մասին ասում է. «*Սա ամբողջ Պարսից պետության իշխանն ու հրամանատարն էր... ոչ մեկը չկար, որ համարձակվեր նրա խոսքից դուրս գալ: Եվ ոչ միայն մեծամեծներն ու փոքրերը, այլեւ թագավորն ինքը լսում էր նրա խոսքին, որը հենց ձեռնարկել էր այս ձախողակ գործերը» (166):*

Բայց մենք տեսանք, որ Վասակին հաջողվել էր, անշուշտ ծանր գնով, ոչ միայն մեղմացնել Հազկերտ թագավորի զայրույթը, այլեւ լեզու գտնել Միհրնեսուհիի հետ Հայաստանը փրկելու ոչ միայն վերահաս աղետից, այլ, որ նրա կետ նպատակն էր եւ ամենակարեւորը՝ երկրի զինական ուժերը պահպանելու, հարմար առիթի համար՝ Հայաստանը, եւ ոչ միայն Հայաստանը, ազատագրելու համար: Ուստի նա չէր կարող հաշտվել վերը բերված Ղետնդ Երեցի ճառքարոզի տրամադրության հետ, որքան էլ նրա մեջ իշխող լիներ մարտական ոգին: Եվ Վասակը մինչեւ վերջին ձակատագրական բախման ժամն իսկ չէր դադարում պայքարից ու հորդորից՝ ետ պահելու պարսկական հալածանքներից մոլեգնած եւ անահանջ պայքարի ելած հայկական ուժերի կեսին կամ մեծ մասին, այդ ցատումն ու մարտնչելու եռանդը վստահաբար հաղթանակի հասցնելու օրերի համար պահպանելու նպատակով: Սակայն, ռին էր այդ համառության ու վճռականության պատճառը, որ նույնիսկ զիջման ու ներման հրամաններն ստանալուց հետո հայ ավագանու մի մասը եւ բարձր հոգեւորականությունը մնացին անդրդվելի: Դարերով խորացած եւ լեռնացած ազգային հալածանքներն այնպիսի բորբոքում, դյուրագրգիռ մտայնություն էին ստեղծել հայ մտավորականության մեջ, որ այդ հարցի պատասխանը, այսօր իսկ, հայ պատմագրության մեջ լսվում է Եղիշեի ոգով: Նույնիսկ վաղ ֆեոդալական եւ բռնատիրական կարգերում մեր պատմաբաններից, բանասեր-գրականագետներից շատերը փնտրում են Պարսկաստանի կողմից «ազգային ասիմիլյացիայի» մեթոդիկ քաղաքականություն, որ պար-

սից արքունիքը 150 տարում քրիստոնյա դարձած հայերին, իրենց 1000 տարվա հեթանոսական կրոնին վերադարձնելու փորձով (Հռոմից, Բյուզանդիայից հեռու պահելու նպատակով) իբր վճռել էր ծուլել պարսիկների մեջ: Սա պատմության մոդեռնացման ամենապարզունակ ձեւն է: Հազար տարի պարսիկների հետ գրեթե նույն կրոնական սկզբունքներին հետեւող հայերից, չափազանցված ձեւով ասած, ոչ մեկը պարսիկ չդարձավ, բայց լինում էր հակառակը: Նախ, այն ժամանակներում ազգային-ազգայնական զգացումներ չէին կարող լինել նույնիսկ ամենակույ Յոնուս եւ Յունաստանում, ինչ մնաց Պարսկաստանում: Երկրորդ՝ հայերը պարսից կայսրության ենթակա ժողովուրդների մեջ մշտապես ամենից արտոնյալ ժողովուրդն են եղել սկսած Դարեհ Առաջինից: Հազկերտի ժամանակ ձեռնարկված այդ փորձը, ուժեղ դիմադրության հանդիպելով Հայաստանում, Վրաստանում եւ Աղվանքում զգաստացրեց պարսից արքունիքին, մեծապես Վասակի իմաստուն, համբերատար եւ վճռական ջանքերի շնորհիվ: Այնպես որ արդեն հրամանը չեղյալ էր հայտարարվել, բայց վրդովված հայ ավագանին շարունակեց անփոփոխ մնալ իր մարտական դիրքերում: Վերեւում ասվեց այդ ֆեոդալական կենտրոնախույս տրամադրության գլխավոր պատճառի մասին: Հայ եկեղեցական դասի ղեկավար դեմքերը չէին մոռացել 75-80 տարի առաջ Պապ թագավորի որդեգրած վճռական քաղաքականությունը՝ եկեղեցին ամբողջապես պետական շահերին ստորադասելու գործում՝ ձրիակերությունը, ծույլ ձգնակեցությունը վերացնելով, շարքային քահանաներին զինվորականի համազգեստ հագցնելով, եկեղեցու պետերի իրավունքները սահմանափակելով... Այժմ նրանց դեմ-դիմաց կանգնած էր փորձված հսկա Վասակը՝ ամեն ինչ կենտրոնացրած իր ձեռքում: Ավելին, պարսիկները կրկին պաշտոնագուրկ էին արել ոչ միայն երկրի հազարապետ Վահան Ամատունուն, անտարակույս, ոչ առանց Վասակի մասնակցության, այլեւ կաթողիկոսից խլել էին «մեծ դատավորի» պաշտոնը՝ նպատակ ունենալով հանձնել պարսիկ (կամ հայ) մոգպետի:

Այնուամենայնիվ, Ավարայրի ձակատամարտից առաջ այս ամենը հարթված պետք էր համարել, բայց մարգպան Վասա-

ԲԱՆԱՎԻՆԱՅԻՆ ՆՈՂՎԱԾՆԵՐ



Դրվագ Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» գորելենային պաստառից

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 154 կի հակառակ կողմը՝ Վարդան Մամիկոնյանի, Վահան Ամատունու, Արշավիր Կամսարականի, Խորեն Խորխորունու, Ներշապուհ Արծրունու, Յովսեփ կաթողիկոսի եւ Ղետնդ Երեցի գլխավորությամբ մնացին անդրդվելի եւ ոգեշնչված զանգվածներին նետեցին ծանր պատերազմի մեջ: Զակատամարտն սկսվեց 451թ. գատկի տոներին, մայիս ամսին: Ընթացքը, անշուշտ, ոչ լրիվ, հայտնի է յուրաքանչյուր ընթերցողի: Այստեղ հարկ չենք համարում կանգ առնել մանրամասնությունների վրա, բայց հայկական ներքին երկպառակությունը կանդորադառնանք քիչ հետո:

Երկու պատմիչներն էլ, նկարագրելով Ավարայրի ճակատամարտը, նշում են Վարդանի զոհվելու մասին, որից հետո մինչեւ երեկո շարունակվում է մարտը, եւ մութն ընկնելուց հետո հայոց բանակը նահանջում է դեպի Յայաստանի ամուր խորքերը՝ մանավանդ Արցախ (Ղարաբաղ): Այդ մեծ դեպքի ժամանակակից երկու պատմիչներից ոչ մեկը չի խոսում, թե ինչ եղավ հայոց սպարապետի դիակը: Մնաց մարտադաշտում, հողին հանձնեցին, թե՛ բերին իրենց հետ եւ ուր: Նրանց այս լռությունն իսկ պետք էր լուրջ կերպով հաշվի առնվեր: Ազգային մեծ նահատակ եւ սրբացված Վարդանի հիշատակին Յայաստանում շատ մատուներ ու եկեղեցիներ կան: Սակայն միայն նրա հիշատակին նվիրված: Մասնագետներից ոմանք Վարդանի գերեզմանը փնտրել են Ավարայրի դաշտում (Խոյի եւ Մակուի արանքում, Նախիջեանից դեպի արեւմուտք), ոմանք՝ այլ վայրերում. օրինակ՝ Նախիջեանի Աստապատ գյուղի մոտ գտնվող Կարմիր վանքին գրեթե կից սրբավայրում, Թաղեոս Առաքյալի վանքում, Արագածի լանջերին... Սակայն, միայն ենթադրաբար, առանց որեւէ ապացույցի:

Վերջին 20 տարիներին այդ հարցն զբաղեցրել է ինձ: Պրպտումներն ինձ բերել են այն եզրակացության, որ Վարդան սպարապետի դին ամփոփված է Սիսիանի պատմական Անգեղակոթ գյուղի մոտ:

Ինչը մղեց ինձ մեծն Վարդան Մամիկոնյանի գերեզմանը փնտրելու Յայաստանի անհամեմատ այս հեռավոր անկյունում՝ Շաղատ-Անգեղակոթում եւ ոչ թե Ավարայրի եւ Արարատյան դաշտերում, կամ էլ, ասենք Վարդանի

հայրենիք Տարոն-Մուշում: Նախ եւ առաջ ինձ այդ համոզմանն է բերել այն դարավոր ավանդությունը, որ պահպանել է բուն Սյունի գավառի (արդի Սիսիան) բնակչությունը՝ այդ վայրը համարելով «Վարդան զորավորի» գերեզմանի տեղը:

Անգեղակոթից կես կիլոմետր դեպի Նախիջեան տանող խճուղու եզրին, Շաղատի դիմացի ժայռերի տակ գտնվող «Վարդան զորավոր» կոչվող ուխտատեղիում, մնացել է բազմիցս վերաշինված անշուք մի եկեղեցի, որի շրջապատում եւ փոքրիկ գավթում ընկած են բազմաթիվ գերեզմանաքար-խաչքարեր: Այս վայրը դարեր շարունակ սիսիանցիների համար եղել է ուխտատեղի եւ ճանաչվել որպես Վարդան Մամիկոնյանի գերեզման: Նախապես պետք է նկատել, որ ազգային ավանդությունները, կապված տվյալ վայրի եւ այդ վայրում տեղի ունեցած պատմական մեծ ու փոքր դեպքերի հետ, անջնջելի զորությամբ պահպանվում են դարերով, մանավանդ, երբ տվյալ վայրի բնակչությունը չի ենթարկվել արտագաղթների, այլ ընդհակառակը՝ լրացվել է եկվորներով: Նույնիսկ բավական էր, որ ավերված գյուղերում մնային մեկ-երկու ընտանիք, որպեսզի նորեկներին հաղորդեին շրջապատի տեղանունները, ավանդությունները, բանահյուսական փշրանքները, սրբավայրերի հետ կապված ուխտագնացության օրերը, ծեսերը, պատմական անցքերը եւ այլն:

Վարդան Մամիկոնյանը ժողովրդի աչքում իրավամբ համարվում էր սուրբ նահատակ: Ամենայն հավանականությամբ 480-490-ական թվականներին Վարդան Մամիկոնյանին, նրա զոհվելուց 30-40 տարի անց, պաշտոնապես դասեցին սրբերի շարքը, թե՛ նա հոգեւոր դասին չէր պատկանում, որից հետո արդեն կոչեցին սուրբ Վարդան:

Իմ հաստատ համոզմամբ, ինչպես վերը նշեցի, Ավարայրի ճակատամարտում զոհված քաջն Վարդանի դին նահանջող հայկական բանակի զորամասերը բերել են Սյունիք, այսինքն՝ Սիսիան եւ հանձնել երկրի տեր մարզպան Վասակ Սյունիին: Վերջինս եւ նրա շուրջը համախմբված շատ հայ մեծամեծներ, նշանավոր իշխաններ իրենց պաշտելի հրամանատարի՝ սպարապետի դիակը, թերեւս եւ նրա հետ զոհված իրենցից մի երկուսի

եղբայրների կամ ազգակիցների դիակները (Խորեն Խորխոռունի, Արտակ Պալունի), անկասկած, մեծ շուքով եւ պատվով թաղել են մի շատ հայտնի, դեռեւս հեթանոսական ժամանակներից եկող սրբազան վայրում:

Մեր ավանդական պատմության էջերին ծանոթ ընթերցողը բնականաբար հարց կտա մեզ, թե այդ թանկագին զոհերն ինչպե՞ս էին սիրելի եւ պաշտելի հայոց ուխտի դավաճան Վասակի եւ նրա համախոհների համար, երբ վերջիններս մնացել էին թիկունքում կամ իրենց զինվորական ուժերով նույնիսկ կռվել հայերի դեմ, իսկ Արտագի դաշտում, Վարդանի հրամանատարությամբ, ճակատագրական գոտեմարտ էր մղում ժողովուրդը:

Մինչեւ այդ ծանր հարցին հակիրճ պատասխանելը նախ պետք է ասել, որ հարազատների եւ մարտում զոհված ոչ հարազատների դիակների նկատմամբ, այն ժամանակ գրեթե բոլոր վայրերում, մանավանդ պարսից եւ հայոց մեջ, մի առանձին հարգանք գոյություն ուներ դիակը հողին պատվով հանձնելու սովորույթով: Չմոռանանք, որ Վասակի հետ էին մնացել եւ իրենց ուժերով Սյունիք էին փոխադրվել Բագրատունի մեծ իշխանական տան, Սյունիքի, Արցախի (Ղարաբաղի), Վասպուրականի գրեթե բոլոր իշխանները:

Վասակի հետ էին նաեւ Վարդանի հետ Ավարայրի ճակատ մեկնած իշխանների եղբայրներից ու ազգականներից շատ-շատերը, ինչպես Ռշտունյաց, Խորխոռունյաց, Վահունյաց, Գաբեղենյաց, Պալունյաց, նույնիսկ Վասակի մեծ հակառակորդ Վահան Ամատունու ընտանիքից մեկը՝ Սեպուհ Մանենը եւ շատ ուրիշներ: Սրանք եւս իրենց ուժերով, երկրի կառավարիչ մարզպան Վասակի հետ քաշվել էին Սյունիք եւ բանակ դրել Վասակի հայրենի Շաղատ- Անգեղակոթում:

Յայաստանի վրա արշավող պարսից բանակը հաղթանակի դեպքում իսկ չէր հանդգնի ներխուժել Սյունիքի կենտրոնը՝ Սյունիի Ծղոք (Սիսիան) ամրացված գավառը, որովհետեւ Վասակին հնազանդ Սյունիքը միայն կարող էր 15- 20 հազարանոց այրուձի հանել թշնամու դեմ: Կարելի է ավելացնել՝ չէին համարձակվի հարձակվել Վասակի վրա նաեւ այն պատճառով, որ նա դեռեւս Սասանյան Իրանի մեծ տերության հյուսիսային տիրույթների, այսինքն՝

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

որչ Անդրկովկասի զինական ուժերի գերագույն հրամանատարն էր, հանդիսանալով նաեւ Իրանի խոշոր զորավարներից մեկը: Դրան պետք է գումարել եւ այն, որ Վասակը՝ Կրաստանի նախկին մարզպանը, ապա Յայաստանի մարզպանը, այսինքն՝ նահանգապետ-փոխարքան լինելով, վարում էր խիստ զգուշավոր դիվանագիտություն:

Անվիճելի ժշմարտություն է, որ V դարի կեսի հայ ազատագրական ապստամբության նախածեռնող նախապատրաստողը եւ գլխավոր կազմակերպիչը եղել է Վասակ Սյունի մարզպանը: Սակայն անվիճելի է եւ այն, որ վճռական ելույթի նախօրեին հարկադրված ետ կանգնեց այդ մտադրությունից, գտնելով անժամանակ եւ վնասաբեր: Ինչպես վերը նշեցինք, անտարակույս, պետականությունը նոր կորցրած եւ պարսկական տնտեսական, վարչական, մանավանդ դավանաբանական հալածանքներից վրդովված հայ ղեկավար շրջանները եւ աշխատավոր զանգվածները պատրաստ էին ապստամբելու: Բայց վճռական պահին Վասակը եւ իր համախոհները պարզ գիտակցում էին, որ եթե հայերը նույնիսկ միակամ պատրաստ լինեին դրա համար, ապա միաբնակ, առանց դաշնակցի, ավելի ձիշտ՝ առանց դաշնակիցների, հաջողության չէին հասնի:


Առանց Կրաստանի, Աղվանքի, մանավանդ Յրուսիսային Կովկասում .ամրացված բազմաթիվ ռազմիկ հոների, որոնց հետ զաղտնի դաշինք էր կնքված եւ խոստացել էին օգնել Վասակին, հայոց ապստամբությունը, անտարակույս, չէր պսակվի հաղթանակով: Յայտնի է, որ աղվանները պետք է շարժվեին միայն այն ժամանակ, երբ դաշնակից հոներն իջնեին Կովկասյան լեռնաշղթայից եւ մեծ ապստամբության ձախ թելը վարեին, ջախջախեին Միհրներսեհի բանակը: Վասակի եւ հայոց ապստամբության առաջին մեծ եւ հուսալի դաշնակիցը պիտք է լիներ ոչ թե Բյուզանդիան, այլ ռազմիկ հոների բանակը: Բայց հոները 451-ի գարնանը օգնության գալու երաշխիք չէին տվել ինչինչ պատժառնելով, եւ ըստ երեւոյթին, պահանջել էին շարժումն սկսել աշնանը, որը իրոք եղավ, երբ արդեն շատ ուշ էր:

Վասակի հույսը մինչեւ ապստամբությունը նրա հավատարիմ զինակից, փորձված եւ ծանաչված զորավար Վարդան Մամիկոնյանն էր: Այդ

ամենը պարզվեց կես տարի հետո, մոտ երկու շաբաթ տետղ Տիգրանի դատական ատյանում, որ Վասակի հակառակորդ հայ իշխանները եւ հոգետր պետերը անժխտելի փաստերով ապացուցեցին այդ՝ Վասակի զաղտնի հրահանգները եւ նամակները, իր կնիքով կնքված, հանձնելով պարսկական դատարանին:

Անտարակույս, մարդու ամենամեծ հանցանքը, անմոռանալի եւ աններելի ոճիրը հայրենիքին եւ ժողովրդին դավաճանելն է, կամ նեղ օրին լքելը: Այդ է պատճառը, որ թեպետեւ անժամանակ, թեպետեւ ոչ հաղթանակի հույսով, երբ ժողովրդի եւ ավագանու թեկուզ մի մասը դուրս եկավ արշավող թշնամու դեմ, Վարդան Մամիկոնյան սպարապետը նրանց չթողեց անզուխ եւ իր հերոսական մահով սրբացվեց ժողովրդի սրտում, հավերժ մնաց դարերի հիշողության մեջ, պատմության մեջ: Մինչդեռ Վասակ Սյունին որքան էլ հեռատես պետական-քաղաքական գործիչ եւ մտածող, խռովելով եւ թիկունքում մնալով, վաստակեց ուխտանենգի ու դավաճանի անունը, եւ իր հայրենիքում իսկ ցարդ Վասակ բառը հոմանիշ է դավաճան, մատնիչ բառերին: Սակայն սա հարցի ոչ միայն արտաքին, այլեւ հոգեբանական կողմն է եւ ոչ քաղաքական-պատմական օբյեկտիվ գնահատականն ու պատասխանը:

Վեճն ու գծտությունը հայ բարձր ավագանու միջավայրում այնքան էին խորացել ապստամբության նախապատրաստման եռուն շրջանում, որ սպարապետ Վարդան Մամիկոնյանը, զգված եւ հուսահատված այս ամենից, թողնում է երկրի սահմանները եւ ընտանիքով հեռանում Արեւմտյան Յայաստան: Վասակը հատուկ նամակով մարդիկ է ուղարկում Վարդանի տեւից, որոնց մեջ էր իր արժանի փեսան՝ դստեր ամուսինը՝ բացառիկ հերոս Կամսարական իշխան Արշավիրը եւ եռանդուն ու մոլեգին Ղեւոնդ Երեցը: Առանձին համախոսական նամակ գրել էին նաեւ հայ իշխանները, խոստանալով սպարապետին, որ այլեւս դուրս չեն գա նրա հրամաններից: Վասակի նամակի բնագիրը, իր մատանիով կնքված, Վարդանի զոհվելուց հետո մնացել էր ընտանիքի



Անգեղակոթ, Վարդան Մամիկոնյանի ենթադրյալ գերեզմանի հուշակոթողը (վերակազմություն ճարտ. Յ. Յակոբյանի)

մոտ եւ հասել Արշավիր Կամսարականի ձեռքը, որը ներկայացրեց պարսից արքունի դատարանին, որպես ազդու ամբաստանագրերից մեկը՝ ընդդեմ Վասակի: Այդ նամակը (ոչ ամբողջությամբ) Ղազար Փարպեցին զետեղել է իր գրքում:

Ահա թե ինչ է գրում Վասակը Վարդանին.

«Ինչո՞ւ ես փախել, կամ ի՞նչն է քո վախը, որից երկյուղ ես կրում, - այս մասին ոչինչ չես հայտնել: Արդ՝ մի փախիր եւ ոչ որից մի վախեցիր, որովհետեւ եթե արյաց տիրողից եւ նրա ուժից ես զարհուրել մի վախիր, ետ դարձիր, մենք նամակ կգրենք կայսրին եւ մեր անձերը նրա ծառայության կնվիրենք, եւ նա կհավատա, թե այսպիսի մի մեծ աշխարհ մենք մեր կամքով ենք նրա ծառայության տալիս, եւ նա ուրախությամբ կընդունի ու մեզ զորք կտա, եւ մենք միաբանված այդ զորքի հետ՝ շատ դժվարություններ կպատժառենք արյաց տիրողը եւ արյաց ազգին: Իսկ եթե կայսրն ուրիշ կերպ է մտածում եւ իր օգուտը չի ծանաչում, եւ Կրաստանում մարզպան եղած ժամանակս, երբ իմ ձեռքի մեջ ունեի Աղվանից դուռը (Ալանաց դուռը), հոնաց շատ զորագլուխներ հետս բարեկամացան դաշինքով եւ » 158

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱԾՆԵՐ

« 157 երդումով, եւ այսօր էլ նրանք, հավատարիմ այն ուխտին, գնալ-գալ ունին ինձ մոտ: Հայոց ամբողջ աշխարհի հարկերը ինձ մոտ են, եւ բոլոր պաշտոնյաներն էլ իմ ձեռքի տակ են եւ շատ էլ գույքեր, որ ես խլել եմ պարսիկ պաշտոնյաներից, իմ գանձարանում են հավաքված, եւ եթե դրանց մի մասն ուղարկեմ հոններին, այնտեղից այնքան շատ հոններ կհանեմ, որ նույնիսկ Պարսից հողը բավական չի լինի՝ նրանց ավերանքների համար» (Ղազար Փարպեցի, էջ 179, Թիֆլ. 1907): Իր այդ շատ ուշագրավ նամակի մեջ Վասակը խոսք է բացում եւ իր որդիների պատանդ լինելու պարագայի մասին, ենթադրելով, որ Վարդանը կարող է կասկածներ ունենալ այդ առթիվ: Այսինքն, որ Վասակը որդիների ոչնչացման վտանգի առջեւ կարող է ետ կանգնել ապստամբական ուխտից: Ուստի գրում է սպարապետին «...որքան պարսիկ կա Հայաստանում, ամենքին կապանքներով ամուր բերդերում կպահեմ այնքան, մինչեւ որ արքան հարկադրված իմ որդիներին ազատ կարծակի» (էջ 180):

Երկու խոսք Վասակի նամակի ոգու եւ բովանդակության մասին: Իմանալով Վարդանի հեռանալու բուն շարժառիթները, նա խոհեմորեն անձնական գետնի վրա է հյուսում իր ասելիքը: Վասակը շատ լավ էր ծանաչում Վարդանին, որը վախից այնքան էր հեռու, որքան վախը հերոսությունից: Գիտեր նաեւ, որ վախը չէր հեռացրել նրան սրբազան ուխտից, այլ նախարարների ներքին անձնական հաշիվներն ու խարդախությունները: Վարդանը դարերով Հայոց երկրին եւ պատվին նվիրված Մամիկոնյան մեծ ընտանիքի ազնիվ ու անձնազոհի հսկաների՝ փոքրամարմին Վասակի, Մուշեղի, Մանվելի եւ պատանի Սամվելի պայծառ հաջորդն էր, տասնյակ փառավոր հաղթանակներով հռչակված իր հայրենիքում եւ Իրանի տերության մեջ: Նա զենքի շիտակ մարդ էր, հեռու փոքր հաշիվներից եւ դիվանագիտական բարդ սատանայություններից: Նա տեսնում էր իր մարտական ընկերների եւ ժողովրդի հուզմունքն ու ցատումը՝ պատվով ընդառաջ գնալու հերոսական մահին, անարգված ապրելու փոխարեն եւ նվիրվեց դրան որպես անձնազոհ մարտիկ:

Եվ ռազմի շեփորը հնչեց Արտազի դաշտում: Վարդանը, դիմելով իր քաջ զինակիցներին, ասում է հետեյալ խոսքերը. «Շատ պատերազմներ եմ մղել

եւ, եւ դուք էլ ինձ հետ, տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ, բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել... չերկնչենք եւ չվախենանք հեթանոսների բազմությունից... իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք... վախը թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից...»:

451թ. մայիսի 26-ին, շաբաթ օրվա լուսադեմին, Տղմուտ գետի ափին սկսվեց ճակատամարտը 3-4 անգամ գերազանց թշնամու դեմ եւ տեւեց մինչեւ արեւի մայր մտնելը, երբ ժամեր առաջ զոհվել էր հայոց սպարապետը:

Եվ այդ սրբազան ոգորման օրը՝ Ավարայրի ճակատամարտը, թերեւս ավելի մեծ դեր խաղաց հայոց պատմության, հայ ժողովրդի ինքնաճանաչման եւ արժանապատվության զգացումը մշտապես արթուն պահելու տեսակետից, քան Վասակի ծրագրած հաղթանակը կտար այդ:

Ինչպես հիշյալ պատմիչների տողերից, նույնը առավել Ստեփաննոս Օրբելյանի Սյունիքի պատմության մեջ հստակ գրածից պարզվում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո հայոց բանակը նահանջ է կատարել ոչ թե եկած բանուկ ծանապարհով (Արտաշատ մայրաքաղաքից Արաքսի աջափնյա ծանապարհը՝ Մակուի վրայով), այլ նահանջել են Նախիջեանի դաշտով: Սրանից պետք է եզրակացնել, որ պարսից Մուշկան-Նիսալավորտի բանակը, իր ծախ ճակատից թեանցելով, կտրած է եղել հայոց բանակի նահանջի ծանապարհը դեպի Արարատյան դաշտը՝ Արտաշատ, Դվին կամ դեպի արեւմուտք Դարոյնք (Հին Բայազետ) եւ Վանա լճի ավազան: Պետք է նաեւ ենթադրել, որ հայկական գլխավոր զորամասերը, հրամանատարության եւ հոգետր պետերի հետ, Արաքսն անցել են Նախիջեանից 10 կիլոմետր հարավ, Աստապատի գետանցով, Կարմիր վանքից 2 կիլոմետր դեպի վեր: Ինչից ենք եզրակացնում այս: Որովհետեւ հենց գետանցի բերանին էլ գտնվում է այն նշանավոր ուխտատեղի մատուռը, որ կոչվում է «Վարդան զորավոր» կամ «Սուրբ Վարդան»: Այս կետի մասին ես

կա ավանդություն, որ այդտեղ է թաղված Ավարայրի մեծ նահատակ հերոսը: Բայց Արաքսն անցնելուց հետո կարող էին թաղել այդ ամայի գետափում, որ պատմական հրամ ավանից (Նեհրամ) 7 կիլոմետրի, Աստապատի (Թագայոլ) ավանից 2 կիլոմետրի, իսկ Աստապատի հնագույն Կարմիր վանքից 3 կիլոմետրի վրա է ընդամենը: Այդքան տեղ դիակը բերելուց հետո, դժվար չէր լինի մեկ ժամ եւ առաջ շարժվել եւ հողին հանձնել նշանավոր այդ վայրերում:

Պատմիչները նշում են, որ հայոց բանակը նահանջել է դեպի Վայոց ձորը (որը նույնպես ենթակա էր Վասակին), որպեսզի այստեղից անցնեն Արցախի (Ղարաբաղի) լեռներն ու անտառները, գուցե անմիջապես նաեւ դեպի Դվին կամ Շիրակի դաշտ, թեեւ պարսկական հեծելազորն արդեն կլիներ Արտաշատում եւ Դվինում:

Պատմիչների երկերում ոչ մի խոսք չի ասվում, թե Նախիջեանի վրայով զորքի մի մասն էլ նահանջել է ավելի մոտիկ Ծղուկ (Սիսիան): Եվ այդ լռությունն իսկ հուշում է, որ այդ պատահական մոռացում չէ, այլ մի պարզ պատճառով, որ Վարդանի դիակը չհանձնվի Վասակին:

Ընդհանրապես Վարդանի դիակի հետ կապված լռությունը եւ գերեզմանի մասին որեւէ խոսք չլինելը մեր պատմության մեջ պետք է համարել մի հավելյալ զորավոր ապացույց, որ իրոք Վարդանի եւ գուցե մի քանի զոհված իշխանների դիակները Շաղատ են բերվել եւ երկրի տիրոջը՝ Վասակին ու նրա համախոհ իշխաններին հանձնվել: Ինչու չմտածել, որ դեպի Շաղատ-Անգեղակոթ նահանջող Ջուր (Սուրաբ) Շահապոնս (Շահբուլ) Ուլանի (Քուլանի) գյուղերով անցնող ուղիով եւ Բիչանակի լեռնանցքով Շաղատ իջած զորամասի հրամանատարները կարող էին ոչ միայն թշնամաբար տրամադրված չլինել Վասակի նկատմամբ, այլ գուցե եղել են հենց այն իշխանական տների զավակներից, որոնց եղբայրներն ու տոհմակիցները մնացել էին Սյունի-Սիսիանում:

Հայոց բանակի մեծ մասը, գլխավոր հրամանատարներով, հոգետր պետերով (Հովսեփ կաթողիկոս, Դեոնդ Երեց եւ այլք) նահանջել են Նախիջեան-Ճահուկ (Ջահրի), Խոռատունիս (Խոռադիգ) Ազարակի ձոր (Այար) եւ այստեղից հին կամրջով դեպի Բուրաբերդ (Քեշիչքանդ, արդի Եղեգիս):

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ՂՈՂՎԱՍՏՆԵՐ

Սրանք խուսափել են Տիգան (Ալմալու)-Ողբինով (Օղբին) անցնել Վայոց ձորի սահմանամերձ Յրասեկաբերդ կամ Յրաշկաբերդ, որովհետև սա ձախ էր ընկնում Արցախի ճանապարհից եւ մոտենում Շարուրի դաշտին, ուր արդեն թափանցած կլինեին պարսից զորամասերը: Յայկական մի զորամաս պաշարվում է Բուրաբերդում, հետապնդող պարսիկ Աթաշխուդա զորավարի գնդի կողմից եւ առաջին զոհերը տալիս նահանջի ճանապարհին: Բայց առաջապահ մասն ամրանում է Արտաբույնի (Երդափին) մոտիկ նշանավոր Կապույտ բերդում: Մինչեւ սույն բերդը պաշարելը, պարսիկները հայկական մի փոքրիկ ջոկատ էլ կոտորում են Աղնաձորից (Այնաղուր-Աղավանձոր) 4-5 կիլոմետր արեւելք Անգեղաձորի բերդի մոտ (Ղզղալա), ապա 300 հոգի կոտորում Ոստին (Ղոստուն) գյուղին չհասած, ինչպես պատմում է Ստեփաննոս Օրբեյանը (անշուշտ, ավանդությունից բացի ունենալով այլ ստույգ աղբյուր), որից հետո միայն պաշարում Կապույտ բերդը: Այս բերդից 3-կմ վերեւ, Ցախաց քար (հոշավանք) վանքի մոտ ամենամեծ ջարդն են տալիս, որը չորրորդն էր Վայոց ձորում: Այստեղ ցույց տրվող դիմադրությունից օգտվում են նահանջող գլխավոր ուժերը եւ անցնում Արցախ կամ մասամբ նաեւ դեպի Արարատյան դաշտ, եթե այդ հնարավոր լիներ:

Վասակը մինչեւ Տիգան ուղեորվելը մնացել է Սյունիքում, այն էլ բավականին ժամանակ: Ավարայրից մի քանի ամիս հետո, շուրջ կես տարի նա գրեթե ծայրայղ ղեկավարել է պայքարն իրանական պատժիչ զորամասերի, հարստահարիչների եւ Անդրկովկասում քրիստոնեությունը հալածող պարսիկ-մոգերի դեմ՝ վերջին ամիսներին մնալով որպես Սյունյաց նախարար:

Այդ ժամանակամիջոցում էլ, նրա հրամանով, արդեն պատրաստված կլինելու Վարդանի հոյակապ հուշարձանը:

Ինչո՞ւ այդ վայրն էր ընտրվել՝ Շաղատի դիմաց, Անգեղակոթի ծայրամասում, վայրի ժայռի տակ, այն ժամանակ եւս դեպի Նախիջեան տանող Սյունիքի գլխավոր ճանապարհի եզրին: Ինչպես ասացինք, այդ տեղը եղել է ուխտավայր: Պաշտվել է ժայռի տակից բխող Կաթնաղբյուրը, կամ Սուրբ աղբյուրը: Այդ ջուրը, որ պակասել է վերացել է վերջին երկու տասնամյակում, իր հազարամյակների պաշտամունքային դերը

պահպանել էր մինչեւ վերջերս, ամեն տարի, Վարդավառի տոնին:

Ուշագրավ է նաեւ մի երեւոյթ, որ տվյալ սրբավայրը, վաղուց արդեն կոչելով «Վարդան զորավոր», բնակչությունն ուխտի է գալիս ոչ թե Վարդանաց հայտնի տոնին, այլ Վարդավառի տոնին: Թեեւ վերջին օրերս ուխտագնացության ընթացքում մոտիկ եւ հեռու գյուղերից եկած մի քանի ծեր տատիկներ, իրարից անկախ, տասնյակ խաչքարերի արանքում առաջինը մոտեցան դամբարանի անխաչ խոյակին եւ ջերմեռանդությամբ համբուրեցին այն: Իմ եւ մեր աշխատակցի հարցումին եւ զարմանքին պատասխանում էին, որ այդ քարն է սուրբ Վարդանի գերեզմանը: Իսկպես, խոյակի վերին մասը միշտ բաց է եղել, XIII դարի մի գեղեցիկ խաչքար վրան ամրացրած:

Մեր նոր սկսած պեղումներից դուրս եկած սրբատաշ եւ հին տեսք ստացած մի քանի տասնյակ քիչ սեպանման քարերը ցույց են տալիս, որ նախապես այդտեղ կառուցված է եղել մեհյան, որը հետո վեր է ածվել եկեղեցու: Սակայն ժայռը հետզհետե ծերացել-քայքայվել է եւ գարնան ամիսներին, հատկապես երկրաշարժերի ընթացքում, անվերջ փլվել է եւ այդ շենքը ավերվել, որը կրկին վերակառուցվել է մինչեւ այսօրվա անշուք վիճակին հասնելը:

Վարդանի դին, ըստ երեւոյթին, ամփոփվել է այդ սրբավայրի հարավային պատի տակ: Մահարձանը բարձրացել է, հավանաբար, 7 աստիճանների վրա, որոնք միասին ունեցել են 1, 40 մետր բարձրություն (երկու քարը գտնված է արդեն 20 սմ հաստությամբ):

Աստիճանների վրա դրվել է քառանիստ գեղեցիկ խարիսխը-բազան շրջանի մեջ ներգծված հավասարաթե խաչով: 82 սմ բարձրությամբ բազայի վրա կանգնել է սյունը՝ կարծր եւ ծանր գորշ քարի ութանիստ հաստ մի ձող, որն ունի 3, 4 մետր երկարություն: Դեպի վեր նեղացող այդ հսկա սյունը գտնված է երկու կտորով, որովհետեւ ընկել է, գրեթե մեջտեղից կիսվել: Մենաքար ձողի վրա ամրացվել է խոյակը, մի քանդակված քառակող հսկա գանգված 76սմ բարձրությամբ, նիստերից մեկին օձազալար զարդաքանդակով: Չի գտնված խոյակի վրայի կիսագունդը, որի վրա ամրացվել է բաց թեւերով խաչը: Այսպիսով, հուշակոթողի ընդհանուր բարձրությունը եղել է մոտ 8 մետր: Ամենայն հավանականու-

թյամբ X-XI դարերում որեւէ երկրաշարժի ժամանակ (եթե ոչ թշնամիների ձեռքով) կոթողը հարված է ստացել փլված ժայռից եւ ջարդվել: Յուս կա, որ այդ փլվածքը մաքրելուց հետո կգտնվի եւ գերեզմանի գետնափոր կառուցվածքը, գուցե եւ գտնվեն կոթողի պակասող մասերը, եթե չեն տարել անգետ մարդիկ իրենց կարիքների համար: Ս.Վարդանի հուշարձանի մոտ գտնված է ոչ մեծ մի խոյակ, որը, ըստ երեւոյթին, պատկանում է մի ուրիշ կոթողի: Գործը՝ ոճը եւ քարը նույն ժամանակի, նույն որակի եւ վարպետի գործ է:

Յետագայում՝ XIII-XVI դարերում, այդտեղ տասնյակ թաղումներ են եղել, որոնց խաչքարերը եւ տապանաքարերը պահպանվել են կանգուն վիճակում հողի եւ պատերի մեջ:

Պեղումները, որին միշտ ջերմ աջակցություն են ցույց տվել շրջանի ղեկավար ընկերներն ու կազմակերպությունները, անհրաժեշտ է շարունակել:

Մինչեւ այժմ կատարված ծանր աշխատանքը ժայռաշատ լանջում ճանապարհ բացելն էր, որպեսզի հնարավոր լիներ օգտագործել շինարարական մեքենաներ: Սպասենք ավելի հետաքրքիր արդյունքների, թեեւ արդեն գլխավոր արձանը բնորոշող մասերը գտնված են՝ հստակ V դարի գործ: Ոմանք սպասում են արձանագրության՝ գրված անունին: Դժբախտաբար այն ժամանակ չկար այդ սովորությունը, մանավանդ վիրավորական էր մեծ մարդու անունը գրելը, երբ բոլորը գիտեին նրա մասին: Յթեանոսական, հելլենիստական դարաշրջանի նման, այլեւ նման մահարձանները չէին պատկանում հանգուցյալի պորտրետային քանդակ-կիսանդրիով, այլ բաց քառաթե խոշոր խաչով:

Յայաստանում, այս ու այն վայրում վանքերին կից կամ գերեզմանոցներում պահպանվել են նման տասնյակ մենասուց արձաններ, կիսականգուն կամ խոնարհված վիճակում, գրեթե ամբողջությամբ կամ կիսով չափ պահպանված մասերով:

Դժբախտաբար, նշածս հին կոթողներից եւ ոչ մեկի մասին չունենք հավաստի տեղեկություն՝ թե ում են պատկանում, որովհետեւ գրություն չունեն: Միակ հավաստին, բացառությունը, առայժմ Վարդան զորավարի նորագյուտ - այս հուշարձանն է:



ՆԱՄԱԿԱՆԻ

Ով Մորուսդ իմ սիրելի, ես ապրում եմ ու դեռ կամ

ՀԱՍՈՍԱՅՅԱՆԻ «ՈՏԱՆԱԿՈՐ-ՆԱՄԱԿԸ» ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սիրուշ տիկինը Մորուս Հասրայանի կինն է՝ վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյանը, Դարվինը Մորուս Հասրայանի զարմիկ Դարվին Հասրայանն է, ով այդ տարիներին Երեւանում մասնագիտական կրթություն ստանալիս ապրում էր Մ.Հասրայանի տանը որպես ընտանիքի անդամ: Բակուրը Մ.Հասրայանի ավագ որդին է, ազատ ոճի ըմբշամարտի բազմակի չեմպիոն, ՀՀ վաստակավոր մարզիչ: Մոյրիկը կրտսեր որդին է՝ այսօր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրայանը:

Ծանոթագրությունը՝ Մուրադ Հասրայանի



Եվ բախտավոր եմ, քանզի ունեմ քեզ պես բարեկամ:
Չեմ մոռացել բնավ քեզ, դու պայծառ ես եւ անզին,
Եվ բարության հրեշտակի օթեւան է քո հոգին:
Մրտիս մեջ ես լինում դու անհղացում երգի պես,
Չեմ մոռանում քեզ բնավ, ու երբ քեզ եմ հիշում ես,
Իմ աչքերի առջեւից եմ պարզ, եմ խիտ, եմ բարի
Նահապետներն են անցնում Մյունյաց կապույտ աշխարհի:
Ո՞վ է պահել քեզ թաքուն եւ պահել է ինչ ձեռքով,
Որ այս դաժան ցրտերին աշխարհ բերի հրաշքով...
Քո հոգին է բարության երկինքներից պոկած շանթ,
Ու չի դիպել դեռ նրան ժամանակի ձեռքը ժանտ:
Դու ասում ես, թե վաղուց մեր քերթության պարտիզում
Սիրտդ Մյունյաց լեռներից մի ծաղիկ էր երագում...
Ահա գտել ես համեստ Մանուշակն իմ գլխակոր
Եվ գգվում ես դու նրան քնքշանքներով սիրող հոր,
Ահա, գտել ես նրան, նայում ես ու հիանում
Ու տատրակներ ես մորթում հրճվանքների մեկխանում...
Թեեւ չունեմ Շիրազի աստվածատուր շնորհքից
Եվ զարուհներ չեմ խլում ինչպես Էմինը՝ Նորքից,
Բայց տեղում եմ՝ տքնությամբ-Որոտանից անապակ
Մի կաթիլ ջուր հասցնել մեր քերթության ծովն անտակ:
Ինչպես տողերն այս խրթին ոտանավոր-նամակի,
Երկարել են ինձ համար ճամփեքը ձեր քաղաքի:
Թեեւ այստեղ, այս հարուստ Մուհամեդի ոստանում
Ոսկե դոյակ ու ոսկե լեռներ են ինձ խոստանում,
Միեւնույն է, վաղ թե ուշ ես գալու եմ Երեւան,
Ձի իմ հոգին աշխարհում չունի ուրիշ օթեւան:
Մենք հիմա կանք, ապրում ենք, մտերիմներ իմ անզին,
Երանության գեղեցիկ օր խոստացող հույսերով,
Լուսավորում ենք ահա մեր ճամփեքն ու մեր հոգին
Ապագայի երկնքից պոկած շանթի լույսերով:
Բացվում է մեր երեխան ծաղկի նման բուրավետ,
Եվ մեր սրտերը կապում աշխարհի ու կյանքի հետ:
Բացվում է մեր երեխան-առագաստը մեր բախտի
Ու մեզ այս մութ ծովերով դուռն է տանում դրախտի:
Ի՞նչ եք անում դուք հիմա, ձեզնից չունեմ ոչ մի լուր,
Հիմա ինչպե՞ս եք ապրում, արդյոք ուրախ, թե տխուր:
Կարոտ արցունքն աչքերիս ահա հիշում եմ ես ձեզ,
Սիրուշ տիկին, որ քնքուշ ու բարի ես մորս պես,
Դարվին կոտ ու կորովի, Բակուր Մյունյաց նահապետ
Եվ քեզ Մուրիկդ իմաստուն ընկերացած գրքի հետ,
Քեզ Մորուսդ՝ երգերիս խոստարարո դատավոր,
Որով հոգիս աշխարհում հպարտ է եւ բախտավոր...
Ողջունում են ձեզ սրտանց Մանուշակն ու երեխան:

Պատասխանին անհամբեր սպասում եմ, ձեր՝ Սահյան:
7/ XII 46թ. Բաքու

P.S. Սրտանց բարեւում են ձեզ պապան եւ մաման:
Գրեք՝ ինչպես եք: Բարեւներով ...


ՆԱՄԱԿԱՆԻ



Միրելի Մորուս

Ուղարկում եմ մի բանաստեղծություն, որը թերություններով հանդերձ ինձ դուր է գալիս:
 Խնդրում եմ կարդաս եւ եթե քեզ ես դուր կգա, անես քո ուղղումները եւ առաջարկես տպագրության «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությանը: Վախենում եմ ուղարկեմ իրենց, չհետեւեն, թողնեն դարակներում: Հանգամանորեն նամակ կգրեմ հետո: Գրել եմ մի քանի ըստ իս լավ բաներ, սրտագին ու ջերմ, շուտով կուղարկեմ քեզ: Քեզ կարող եմ ուրախացնել միայն նրանով, որ արդեն կարողանում եմ հուզող բաներ գրել:
 Կարոտով՝ քո Համո


12/XII-46թ., Բաքու



ՆԱՄԱԿԱՆԻ




Միրելի Մորուս,
Աբովյանի հորելյանին
Երեւանում լինելու մի կաթիլ
հույս կա: Դրա համար էլ
կարճ եմ գրում: Ուղարկում
եմ քո լուս պատկերով գրած
մի բանաստեղծություն: Ինձ
մի քիչ բավարարում է եւ
իդեայի եւ արվեստի տեսա-
կետից: Խնդրում եմ կարդաս
եւ կարծիքդ պահես՝ հանդի-
պելիս ասելու համար: Շատ
կարեւոր են նաեւ Միրուշի
եւ Մուրիկի կարծիքները:
Երեւանյան պարասպ օրերից
հետո այստեղ մի քանի բան
գրեցի, կկարդանք:
Ուրիշ ի՞նչ ասեմ, ասեմ ամեն
բան առաջվա կարգով է:
Մանուշակը լավ է, Նաիրիկը
լավ է, մեծերն ու երեխաները
լավ են, բարեւում են ձեզ:
Ջերմ բարեւներ Միրուշին,
Բակուրին, Մուրիկին:
Կարոտով՝ քո Համո
12/IX-48թ. Բաբու



Մորուս Ստեպանովիչ
Խնձորեսկի հարցով եւ խոսել եմ Յա. Չարոբյանի
հետ: Նա լիովին համաձայն է պահպանել Խնձորեսկը:
Կոնկրետ՝
ա) Ռոբերտ Խաչատրյանին հանձնարարեց
(Չարոբյանը) զբաղվել այդ հարցով:
Ասվեց, որ գնահատվեն Խնձորեսկի բոլոր այն շենքե-
րը, որոնք արժեք ունեն եւ դրա դիմաց գյուղացիներին
վճարել (շինակյութով, դրամով եւ այլն) համապատաս-
խան հատուցում:
Խնձորեսկը դրվում է կուլտուրայի մինիստրության հո-
գատարության տակ:
Այնպես որ պետք է նաեւ կապվել Ռ.Խաչատրյանի
հետ, որը գործին տեղյակ է: Եթե պետականորեն չար-
վի այդ լավ գործը, ոչինչ չի ստացվելու:
Ես պատրաստ եմ օգնելու քեզ:

ՍԵՐՈ ԽԱՆՉԱԴՅԱՆ
14 XII 64, Երեւան

ՆԱՄԱԿԱՆԻ



Միրելի Մորուս
 Ուղարկում եմ ուսանավորներիս նոր ժողովածուն: Չգիտեմ՝ այն քեզ ուրախություն կպատճառի, թե տխրություն: Կարողացել եմ, արդյոք, արդարացնել հույսերդ, թե ոչ: Երկարաձգված գործեր կան, իհարկե, բայց հույս ունեմ, որ այստեղ հաջողված տողեր ու համեմատություններ կգտնես: Վերջին տարվա գրածներս, որոնք ինձ ավելի են դուր գալիս, հնարավորություն չունեցա տեղավորել այս գրքույկում: Ուզում եմ լսել կարծիքդ: Կարծում եմ դարբնիները թույլ չեն տա, որ նրա մասին խոսվի մամուլում:

Ամառն անցկացրի Աբասթումանի սուլայց անտառներում: Լավ էր: Բավականին կազդուրվել էի: Բայց Բաքվի մուրն ու փոշին դարձյալ խեղդում են: Առողջությունս համարյա լավ է, եւ գործերս էլ հաջող են ընթանում:

Այստեղ առանձին նորություններ չկան: Կուլտուրայի ճակատում եղած փոթորիկն անցավ, բայց հետքերը մնում են: Հիմա եռանդագին պատրաստվում եմ Մոսկվայում ադրբեջանական գրականության առաջիկա տասնօրյակին: Հայերից մասնակցում ենք եւ եւ Մարգարը: Տասնօրյակի կապակցությամբ լույս տեսավ իմ ժողովածուն ռուսերեն լեզվով՝ 6 տպագրական թերթի ծավալով: Այս քանի օրը քեզ նամակ կուղարկեմ:

Էլ ինչ ասեմ: Կյանքից դժգոհ չեմ: Ընտանեկան համերգները համեմատաբար քչացել են, բայց չեն վերջանում: Մանուշակի գաստրոլյներն էլ չլինեին, կարգին բաներ կգրեի, գլխումս ու սրտումս շատ բաներ կան: Ինչպես ես դու:

Ինչպես է Սիրուշը, Բակուրը, Մուրիկը: Կարոտել եմ, բայց ինչ արած, Երեսանն սկսել է ինձ պատկերանալ Դարբնիների հրեշային կերպարանքով... Ինչպես է Քարամյանը: Կարոտով՝ քո Համո



Միրելի Մորուս,
 Անձամբ պիտի գայի իմ ուրախությունը հայտնելու, բայց չորս ամիս է տանն եմ. սիրտս վատ է: Քանի որ մոտիկից ծանոթ եմ այն անմարդկային վարմունքին, որ մեր ժամանակի ինկվիզատորները ունեցան քո հանդեպ, քանի որ իր ժամանակին կսկծացել կրածդ տանջանքների համար, այդ պատճառով էլ հիմի աշխարհի չափ ուրախացել եմ՝ քեզ տեսնելով այն բարձունքներին, որոնց վաղուց արժանի ես դու:
 Միշտ այդպես բարձր մնաս, քանի որ բարձր ես նաև քո զգայուն ու գեղեցիկ մարդկային հոգով: Հայրս ապրեց ուղիղ մի դար: Ուզում եմ, որ գոնե նրա չափ ապրես:
 Անկեղծ բարեկամդ՝

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

27/X 50թ. Բաքու

ՄՆԵՂԱՎԱՅՐԸ

Վաղատին

ԺՈՐԱ
ԽՈՒՐՇՈՒԴՅԱԼ

Վաղատինը, որտեղից Ախլաթյան են տեղափոխվել Հասրաթյանների գերդաստանի նախնիները, պատմական Սյունիքի Ծղուկ գավառի հնագույն ու նշանավոր գյուղերից է:

Գտնվում է Ջոր-գորի աղբյուրախմբի աջակողմյան բարձունքի վրա՝ Որոտնավանքից դեպի հյուսիս-արևելք՝ Սիսիանից 15 կմ հեռավորության վրա:

Այն հիշատակվում է 906թ. վերաբերող արձանագրություններից մեկում: Վաղատինը տարածաշրջանի պատմաաշխարհագրական եւ հոգետր-մշակութային դիմագիծը որոշող գյուղերից է, ինչպես Շաղատն ու Անգեղակոթը, Սյունին (Սիսիան) ու Բռնակոթը, Լորը ու Ախլաթյանը, Ըղուերծը (Դարբաս) ու Ակունքը (Բազարչայ): Վաղատին գյուղի վրա, անշուշտ, հսկայական է եղել նաեւ նրա հարեանությանը ծաղկող Որոտնավանքի ազդեցությունը, որն Օրբեյանների օրոք Որոտան ենթագավառի կրոնական եւ մշակութային կենտրոնն էր:

Հետագա տարիներին եւ հատկապես Լենկ-Թեմուրի արշավանքների ընթացքում Վաղատինը Սիսիանի բազմաթիվ գյուղերի նման ավերվեց, կողոպտվեց եւ բնակչությունը



1988-1989թթ.
Վաղատին
գյուղը Սիսիանի շրջանի մյուս թուրքաբնակ գյուղերի հետ վերջնականապես մաքրվեց թուրք բնակիչներից:



գերեվարվեց: Ու թեեւ գյուղը մինչեւ 15-րդ դարի վերջը մնում էր որպես Որոտնավանքի հենարանը, սակայն նախկին հզորությունը չունեց:

Վաղատին գյուղում հաստատված Հասրաթյանների տոհմի նախնիների մի մասը մեկիքներ են եղել, մյուս մասը՝ հոգետրականներ: Ավելի վաղ ժամանակաշրջանից տեղեկություններ չունենալով նախնիների մասին՝ տոհմի պատմության գրառումը կատարում ենք Վաղատնի գյուղում 1590թ. ծնված Մելիք Հովսեփից:

Վաղատին գյուղը թուրքաբնակ դառնալու ստույգ ժամանակը հայտնի չէ, սակայն 18-րդ դարավերջին Վաղատինն ուներ 1286, իսկ նրա հարեան Աղուդին 1162 թուրք բնակիչ: Այդ երկու թուրքաբնակ գյուղերը 1905-1906թթ. եւ 1918-1920թթ. տարածաշրջանում մշտական լարվածություն էին ստեղծում:

Միայն Ջորավար Անդրանիկի շնորհիվ 1918 թվականը բախտորոշ եղավ ոչ միայն Վաղատին եւ Աղուդի գյուղերի, այլ նաեւ Սիսիանի տարածաշրջանի մյուս թուրքաբնակ գյուղերի համար: Այնուհետեւ Վաղատինը բնակեցվեց շրջանի Լոր, Գետաթաղ, Լծեն, Ախլաթյան, Բնունիս եւ Գորիսի շրջանի Տաթեւ, Հարժիս



Որոտնավանք

Վաղատին գյուղում հաստատված Հասարթայանների տոհմի նախնիների մի մասը մելիքներ են եղել, մյուս մասը՝ հոգեւորականներ

Եւ այլ գյուղերի բնակիչներով:

Այստեղ են եկել նաեւ Միքենդ գյուղից մահմեդականների հետապնդումներից մազապործ եղած բավական թվով հայ ընտանիքներ: Սակայն խորհրդային տարիներին թուրքերի մի մասը նորից վերադարձավ Վաղատին, եւ գյուղը բաժանվեց երկու համայնքի:

1988-1989թթ. Վաղատին գյուղը Սիսիանի շրջանի մյուս թուրքաբնակ գյուղերի հետ վերջնականապես մաքրվեց թուրք բնակիչներից: Այսօր տեղացի հայ բնակիչների կողքին բնակություն են հաստատել մի քանի հարյուր բռնագաղթվածներ Ադրբեջանի հայաբնակ գյուղերից:



“

ԾՆԵԴԱՎԱՅՐԸ

Ախլաթյան



ՍՈՐՈՒՍ
ՅԱՍՐԱԹՅԱՆ

Պատ-պատ լեռնաշղթայի արեւմտյան փեշին գտնվող այս գյուղի անունը սխալ կոչում են նաեւ Ախլաթյան: Այստեղ խոսքը վերաբերվելու է այն տարածության վրա կառուցված ու դարեր գոյատեւած գյուղին, որը 1931թ. մեծ երկրաշարժից իսպառ ավերվեց (մոտ 100 զոհով) եւ բնակիչները փոխադրվեցին Սեւ ջուր առվակի աջ ափը՝ դարավոր տանձենու շրջակայքը:

Այդ տանձենին երկար-երկար դարեր մնաց որպէս Ախլաթյանի խորհրդանշանը եւ միայն վերջերս, գաղտնի ու դաժան ձեւով զոհվեց կացնի ու սղոցի բերանով: Մինչդեռ բնության այդ պատմական հուշարձանը, որ վերջին 50-60 տարին ծաղկում էր եւ չէր կարողանում պտուղ տալ, պատկանում էր ողջ գյուղին, շրջանին, Յայաստանի բնության պահպանության ընկերությանը եւ բուսաբանական գիտությանը, ուս-



տի այդպէս անխիղճ եւ թաքուն չպետք է սպանվեր: Եթէ պետք էր վերացնել այդ դարավոր տանձենին, ապա գյուղի իշխանությունը եւ դպրոցը նախապէս պետք է դիմեին ուր հարկն էր, որպէսզի բուսաբան-մասնագետ գար եւ թարմ սղոցումից հետո կարողանար գծերով որոշել նրա տարիքը, որը երեք-չորս հարյուր տարուց ավելի պետք է լիներ: Նման մի տանձենի, բայց փոքր պսակով, գտնվում էր գետի ափին՝ Բնունիսի ճանապարհից ցած՝ Սկրտչենց խոտհարում, որը կարծեմ մնաց մինչեւ 1920-25թթ.: Այդ տանձի տեսակը հայերեն կոչվում է քարճին (ձմեռնատանձի մի տեսակը), բայց ասում են նաեւ Ախլաթ. երեւի Վանա լճի Ախլաթ քաղաքի անունով, ինչպէս ալբուխարին, որ Բուխարա քաղաքի անունով է: Կա եւ ախլախնձոր բառ՝ խնձորի տեսակ: Ոմանք, զուցե իրավացի, փորձում էին գյուղի Ախլաթյան անունը բացատրել այդ տանձենու անունով - Ախլաթ-յան (կողմ): Բայց ըստ Ալիշանի՝ դեռ 1291թ. հիշվել է գյուղի անունը Ախլաթյան ձեւով: Իսկ երեք հարյուր տարի առաջ արդեն գրված կա նաեւ Ալխաթյան անունով, այսինքն գյուղացիների կոչած ձեւով

...Ըստ
**Ալիշանի՝
դեռ 1921թ.
հիշվել է
գյուղի անունը
Ախլաթյան
ձեւով:**



(միջի տառերը շրջվել են, ինչպես «կարմունջ», «ոխչար», «ախշարի» եւ այլ բառերի մեջ):

Բայց պետք է նշել, որ Ստեփանոս Օրբելյան պատմիչի բերած Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում չկա Ախլաթյան գյուղի անունը: Օրբելյանը իր այդ գիրքը «Սիսական նահանգի պատմությունը» ավարտել է 1299 թվականին, այսինքն մոտ 700 տարի առաջ: Իհարկե, նրա թողած ցուցակի մեջ շատ անուններ փոխվել են, ինչպես Ակունքը դարձել է Բազարչայ: Ոպնի գյուղը կոչվել էր Բահարլու, Մեծիքը թարգմանաբար դարձել էր Ալիշար, նույնպես եւ Կարմրաշենը թարգմանվել է Կզլջղղ, Բերդիկը՝ Կալաջուղ եւ այլն: Կամ գուցե շատ այլ անունների նման որոշ չափով փոխվել-աղավաղվել է, ինչպես Սապատաձորը դարձել էր Զաբազադոր, Որդիքիզը-Օրթոջուզ, Բազմածակը-Մազմզակ, Շապուկը՝ Զաբուդ, Երեմին-Իրիմիս, Խուրեսը՝ Մուրխուզ, Գայլեվանսը՝ Կիլեվանց, Ույծը՝ Ուզ, Յուրավանքը՝ Սվարանց, Ողիհին-Աղահի եւ այլն: Բայց Օրբելյանի ցուցակում Սյունիքի բոլոր գյուղերը չեն նշված, 8-9 հարյուր գյուղերից նշված են 643-ը, որից միայն Սի-



սիանից (Տաթևի եւ մոտակա գյուղերի հետ) կա 81 գյուղի անուն, մինչդեռ մոտ 40 գյուղի անունը բացակայում է, ինչպես Գետաթաղ, Շինաթաղ, Տոլրու, Երեի նաեւ Ախլաթյան: Այսինքն՝ չեն նշված այն գյուղերը, որոնք Տաթևի վանքին պարտադիր եկեղեցական դրամ չեն տվել ինչ-որ պատճառով, երեի կամ այլ վանքի բաժին են եղել կամ իրենց եկեղեցուն են այդ հարկը տվել:

Ցուցակում փոքր Ույծ-ից հետո (որ այժմյան Ուզն է) գալիս են հետեւյալ անունները՝ Տորնիք (կամ Տորնիս, Տորունիք (կամ Տորունիս), Տորունկա, Տխունիք, Աքածի (Յաքասի), Թործուրու (Գոլյագ), Դաստակերտ, Գրվակ, Մեծիք (Ալիշար), Պիսակ (Փուսյագ), Ախաթմարաթ՝ (Խրմանլար), Խուրես (Մուրխուզ), Յողունի (Չիչակու), Մորենի (Իշիխլար), >>> 168

ՄՆԵՂԱՎԱՅՐԸ

« 167 Արեւիս (Արավուս), Բնունիք (Բնունիս) եւ այլն: Ուզից հետո հիշվող Տորնիքը հազիվ թէ դառած լինի Տոլորք (Տոլորս), այլ պետք է լինի Դուզերի գյուղատեղը, որի տների պատերը եւ եկեղեցին պարզ երեսում էին 50-60 տարի առաջ: Մի գյուղատեղ եւ կար այդ դուզերում՝ Ալակչիի մոտերքը: Մի այլ գյուղատեղի հետք կար Բնունիսի ջաղացի շրջակայքում: Դրան գումարած Քոչոյի խաչի շրջակայքի գյուղատեղը: Տխունիքը հայտնի է, դա Տոլորսից դեպի Պատպատի լեռնապարի Քամաշատի (Ելլիջայի) լանջին ավերակն է, ուր 75-80 տարի առաջ տոլորսեցիք փորձեցին բնակություն հաստատել, որին կոչում են Տխունիս կամ Ցղունի (եթե չեն մոռացել): Օրբեյանի ցուցակում այս Տխունիքը հիշատակելուց հետո պատմիչը հասնում է Աքածի (Չաքասի), ուրեմն Ախլաթյանը մնում է ցուցակից դուրս եւ հազիվ թէ անվիճելիորեն որոշակի Տխունիքից առաջ հիշված Տորունկա անունով գյուղը լինի: Եթե Ալիշանի 1291թ. հիշատակությունը սխալմունք չէ, ապա Ախլաթյանը կարող է Տորունկան լինել: Բայց սա կարող է լինել եւ Գուլերի ավերակը կամ Քոչոյի խաչի տեղը, իսկ Ախլաթյանը իր անունով եղած լինի:

Ահա այսքան դժվար է այդ հարցը լուծելը: Բայց եթե Ախլաթյանի հին գերեզմանատունը 1927-28 թվերին պլուկած-ավերած չլինեին, որպես շինաքար նորակառուցյալ դպրոցի շենքի համար (կարծեմ մեծ աղբյուրի մոտերքում), որը իսպառ ավերվեց երկու տարի հետո, ապա գուցե հնարավոր կլիներ իմանալ, եթե գեթ մեկ տապանաքար պահած լիներ, այդ գյուղի անունը: Իսկ եթե այդ չլիներ, ապա կարելի էր որոշել բոլոր դարերի ընթացքում գյուղի անընդմեջ գոյությունը, նրա լավ ու վատ վիճակը, այս կամ այն դարում: Վերջապես կվերականգնեինք անուններ-ազգանուններ, տապանաքարերի վրայի արվեստը, բայց այդ ամենը, երեք քառորդով, ոչնչացվել է անվերադարձ, գումարած եկեղեցու, հատկապես արեւելյան պատի միջին մնացած 5-7-րդ դարերի առանձին քանդակած քարերը, որ չէին ոչնչացրել մեր անգրագետ պապերը 1000 տարում երեք անգամ վերաշինելու ընթացքում: Երբ ես իմացա, որ այդ քարերը տարել են դպրոցի շենքի համար, խիստ զայրացա, ինձ պատասխանեցին, թե «անտեր մեռելների քարեր էին, հնացած»: Բայց մշակված, գրված քարը չի հնանում, այլ



քանի գնում թանկանում է: Դեռ այսօր ոչինչ, դիմանում ենք, բայց այս տարվա ծնված մանուկներին ինչ պատասխան պետք է տանք 20-30 տարի հետո՝ 2000 թվականին: Պետք է կոկորդից բռնեն եւ պահանջեն իրենց պապերի պատմությունը: Տեսնում եք, ինչ մեծ նշանակություն ունի պատմական ամեն փոքրիկ հնություն աչքի լույսի պես պահպանելը: Ավերակներում, մեր հին կոչված գերեզմանատանը պահպանված տապանաքարերը սկսած 100 տարուց, մինչեւ 400-450 տարվա քարեր են: Ուրեմն ավելի հին գերեզմանատունը այժմյան գերեզմանատան լանջն է, որտեղ կան ավելի հին թաղումների հետքեր: Ես հանդգնեցի եւ, որ այս նոր գերեզմանատունը հեթանոսական եւ վաղ քրիստոնեական գերեզմանատների շարունակությունն է կազմել:

Այդ հինն էլ է ավերվել, բայց թողել է իր հեթանոս սովորության ազդեցությունը: Որովհետեւ շրջանում եւ Չայաստանում միակ նոր գերեզմանատունն է, որ ունի տապանաքարերի հեթանոսական ուղղություն, այսինքն ննջեցյալները դրված են եւ այսօր էլ դրվում են դեմքով ոչ թե ուղիղ դեպի արեւելք, այլ ավելի շատ դեպի հյուսիս: Հին գերեզմանատունը այդ սխալը չունի:

Չնագիտական տվյալներից երեսում է, որ Ախլաթյան բնակավայրը, անկախ նրա այս կամ այն անունից, բնակված է եղել արդեն երեք-չորս հազար տարի: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակներից առաջ մեր գյուղի հանդում երկու նշանավոր բնակավայր է պահպանվել, մեկը Արեւիսի տեղը, սահմանը Հոռուտների կեսը, որտեղ երկու մենհիր

Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական ապստամբության պարտությունից հետո, 1727 թվականից մինչեւ 1827թ. ռուսական տիրապետությունը, Սիսիանը եւս մեծապես մաշվեց, բնակչությունը տասնապատիկ պակասեց կոտորածից, գաղթից, գերեւարությունից, սովից եւ բռնի դավանափոխությունից:

ՄՆՆԴԱՎԱՅՐԸ



են մնում կանգնած, մյուսը՝ հին Ախլաթյանի տեղը, սահմանը գետի ափի երկարությամբ Բարահիրի մեծ քարերից մնացած մի շարք պատը: Այն ժամանակ միասնական գերեզմանատուն չունեին, այլ յուրաքանչյուր ընտանիք, իրարից հեռու եւ առանձին ուներ իր մշտական գերեզմանոցը, մեկ կամ մի քանի գետնափոր «տներից» բաղկացած:

Արեւիսի գլխավոր գերեզմանոցը, երեւի տոհմապետների համար շինված, Զաղացի գլուխն է եղել, որը պեղեցի 1951-1952 թվերին, ապա Իշխիլարի (Արեւիսի անունի թարգմանությունն է «իշիղ» արմատով, ոչ թե Շըխ-Շեյխ արմատով) եւ Ախլաթյանի սահման առվի երկու կողմերը: Իսկ Ախլաթյանի հին գերեզմանները եղել են Դոլայում, այժմյան գյուղատեղում, հատկապես աղբյուրի, խանութի եւ դպրո-

ցի չորս կողմը, ապա Խորանի ձորի տակի եւ Շիրոտների հարթակներում, իսկ երեւի գլխավորը եղել է «Գյոռուտի գլուխ» կոչված փոքրիկ բարձունքում, որի վրա տներ կառուցելիս, ամեն ուղղությամբ դրված մեռելների ոսկորներ են դուրս եկել եւ կարծել են իլամական թաղումներ են, կոչել են «գյոռուտ»:

Մեր եկեղեցու վրայի քարե հին մնացորդները եւ իր շենքի չափերը վկայում էին նրա մոտ 1500 տարեկան լինելը, որը վերաշինվել էր մի երկու անգամ հնությունից եւ երկրաշարժներից: Վերջին վերաշինումը եղավ իմ պատանեկության ժամանակ, 1915թ. տաթեացի հայտնի շինարար վարպետի ձեռքով: Մշակված քարերից կողոպտված այդ եկեղեցու ավերակը իր մոտիկ շրջապատով մեկ օր գիտական պեղման կենթարկվի, որից գուցե հետաքրքիր նմուշներ

գտնվեն:

Հին գյուղը ունեցել է բերդապարիսպ, որի սահմանները լանջի բերանից հասել են մինչեւ Բարսամենց եւ Ավչունց տները, շրջան կազմել մինչեւ Մուսունց տունը, եւ տերտերենց տները հին հիշողությամբ, որ այժմ այգի է: Միջնաբերդը եղել է Դալլաքենց, Բաբենց-Մկրտենց եւ Բաղալենց տների տեղը, եկեղեցին առած մեջը: Հետագայում այդ պարսպի քարերով տներ են շինել: Գյուղը մեծ ժամանակ եղած կլինի մինչեւ 70-80 տուն, ավելի քան մեկ հազար շնչով: 180-200 տարի առաջ դեռ Շլորոտները, մանավանդ Լասուրը պատած են եղել անտառով: Ինչպես եւ բոլոր գյուղերը, Ախլաթյանն էլ շատ անգամ տվել է գաղթականություն:

Մոտ երեք հարյուր տարի առաջ, մեզ հասած ծանոթ տներից եղել են Ունենենք, Բաբենք, Բաղալենք, Շահգալդունք (Շուշի գնացած), Սարվազենք, Մատինենք (Լոռի գնացած), Յավրունք, Դոլուխանենք (Շուշի գնացած, վերադարձած), Խառատ-Խումարենք (Բնունիս գնացած), Աբգարենք: Իսկ մոտ երկու հարյուր տարի առաջ այս տոհմերին գումարվում են եւ դրսից եկածներ Մալունք (Կլեանսից), Զոհրաբենք, Ավչունք, Մեծ Կարապետենք, Պողոսենք (Մուշից եկած, ապա Բնունիս), գուցե եւ Սոհբաթենք եւ այլ ազգանուններ-անուններ, որ հավաքել են հին մարդկանց պատմածներից եւ քարերից, բայց չեն կարող բերել, որ ավելի չերկարացնեն իմ խոսքը:

1730-ական թվականներից, այսինքն մոտ 250 տարի առաջ, Դավիթ-Բեկի պարտությունից հետո, նահանջող թուրքական բանակի հետ, բռնությամբ թեկամավոր (խաների, բեկերի վախից) Դավանի Մելիք Նուբարի գլխավորած բազմության հետ, գաղթում է եւ ամբողջ Բնունիսը՝ 14 տուն, Ախլաթյանի կեսը եւ 7 տուն Արեւիս գյուղից: Սրանք գաղթում են Փոքր Ասիա, Թուրքիայի խորքերը, Բուրդուր: Աձել-պահպանվել էին մինչեւ 1915 սե թվականը: Դավանցիները բնակվել են Իզմիր քաղաքում: Բուրդուրի հայերի բեկորները այժմ ցրված են Բեյրութում եւ այլ վայրերում (մի քանի տուն էլ ներգաղթել են Երեւան), որոնց ծերունիները մինչեւ օրս էլ խոսում են մաքուր Ախլաթյանի բարբառով:

Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական ապստամբության պարտությունից հետո, 1727 թվականից մինչեւ 1827թ. >>> 170

Ամառվա հարձակումներին բնակիչները փախչում էին դաշտերը եւ թաքնվում կանգուն արտերում: Նման փրկարար դաշտերից մեկը եղել է Բնունիսից հարավ ընկած փոսորակ գյուղատեղի (երեւի հին Արթեքի) շրջակայքի արտերը, որ «ջանգուրթարան» են կոչել:



« 169 ռուսական տիրապետությունը, Միսիանը եւս մեծապես մաշվեց, բնակչությունը տասնապատիկ պակասեց կոտորածից, գաղթից, գերեւարությունից, սովից եւ բռնի դավանաափոխությունից:

Այդ արանքում Ախլաթյանը եւս նախ ենթարկվում էր Նախիջեանի խանությանը, ապա Ղարաբաղի խանությանը, երկար ժամանակ մնալով Օրդուբադի բեկի սեփականությունը: Բայց որովհետեւ չորս կողմի գյուղերը, բացի Շիխլարից, դեռ մնում էին հայաբնակ՝ Տոլորս, Կիրակոսիկ (Աղքենտ), Բռնակոթ, Յաքասի, Արեւիս, Թործուղու (Գոլլազ), Դաստակերտ (Սոփուլուի ձորը, հայերից մաքրվել եւ դեռ անբնակ էր մինչեւ 120 տարի առաջ): Թիկունքում էլ Դարաբասի ձորի գյուղերն էին, ուստի Ախլաթյանը Բռնակոթի հետ, գլխավորում էին դրանց, հանդիսանալով ամուր թիկունք: Այդ էր պատճառը, որ Միսիանի հյուսիսային մասի՝ Որոտա-

Ախլաթյանում դարոց, թեեւ ոչ շատ կանոնավոր, բացվում է 1876 թվականից: Մինչ այդ եւ հետագայում ուշիմ մանուկներին դաս էին տալիս գյուղում Ղայալարը, ապա Յասրաթի որդի Ստեփանը, որը Տաթեի վանքի հին դարոցի վերջին մոնթն է եղել: Ղարաքիլիսայում (Միսիանում) բացվեց գյուղական երկդասյան ռուսական դարոց:

նի ձախ ափի խիստ եւ արագ մաշվող հայկական գյուղերից՝ Շաքի, Անգեղակոթ, Վաղադի, նաեւ Կլեվանս եւ Նախիջեանի գյուղերից հայ ընտանիքները մեկ-մեկ, հատկապես 1770-1815 թվականներին, ապաստան էին գտնում Ախլաթյանում: Այդպես, օրինակ, 18-րդ դարի վերջերին, Կոստանդի որդի Մեծ Կարապետը եկավ Անգեղակոթից, Ավչին՝ Շաքիից (իր քավոր Դիլանին թողնելով Բռնակոթում): Մալին եկավ Գայլեվանսից (Կիլեվանս), Փռանգուլենք եւ Խոսունք՝ Ղազանչիից, ամենից ուշ Յասրաթենք եկան (1857թ.) Վաղադիից եւ այլն: Իհարկե, գաղթողներ էին լինում եւ Ախլաթյանից, օրինակ Մարտիրոսենք (Մարտին եւ Չատին) մոտ երկու հարյուր տարի առաջ գաղթում են Լոռի եւ հիմք դնում Չաթինյանների ընտանիքին, որի աչքի ընկնող զավակներից մեկն էր մեր նշանավոր մանկավարժ-հեղինակ հանգուցյալ Սիմակ Սահակյանը: Երկու-երեք ընտանիք գաղթում են Շուշի՝ դարձյալ



ՄՆՆԴԱՎԱՅՐԸ

Ռուսական տիրապետության խաղաղ շրջանում, մինչև 20 տուն դառած Ախլաթյանը, 50 տարում քառապատկվում է, մի տասը տուն եւս ներգաղթողներ ընդունելով:



(Երեւի հին Արթեքի) շրջակայքի արտերը, որ «ջանգուրթարան» են կոչել: Գյուղը, շրջանի եւ նահանգի հետ, տասնյակ անգամ ենթարկվել է ասպատակությունների, ավերմունքի եւ կողոպուտի: Վերջին 400 տարիների ծանր շրջանները եղել են 1580-1606թթ., 1724-1735թթ., 1748-1770-ական թթ., 1795-1805թթ., 1826-27թթ. եւ մեկ էլ 1918-1921թթ.:

Դրանցից մեկի մասին դառնությամբ պատմում էին մեր ծերերը, որը տեղի էր ունեցել իրենցից 100-150 տարի առաջ, կամ 1750-1770 թվերին, կամ քիչ ավելի ուշ, Ախտախանի (Աղա Մահմեդ խանի) արշավանքի ժամանակ, 1795-1796 թվերին, երբ Տաթեւի վանքը, փախած շատ գյուղացիներով, երկար պաշարվում է, սպառվում է սնունդը, եւ սովը կոտորում է մեծ մասին: Իմիջիայլոց, այդ թվականին Տաթեւի վանքում ապաստանած վաղադեցի Մանուկի 7 դեռահաս տղաները մեռնում են սովից եւ միայն 15-16 տարի հետո, երկրորդ կնոջից ծնվում է իմ պապը՝ Խաչատուրը (իր պապի անունով եւ որպես Որոտնավանքի ուխտի պարզեւ), որին թուրք հարեանները կոչում են եղբայրներից կարոտ-Յասրաթ-մականունով:

Ահա երեւի այդ ծանր ավերմունքների տարին է լինում, որ ախլաթյանցիների մի քանի ընտանիք, ովքեր դեռատի աղջիկներ եւ երիտասարդ հարսներ են ունեցել, քահանայի գլխավորությամբ, իջնում են Բարահիրում, քարե հազարանյա գետնափոր բնակարաններից մեկում թաքնվում (որպիսին ես պեղել էի Դոլայում): Բայց տեղն իմանում են, մուտքը բռնում, երիտասարդները նիզակով դիմադրում են, դաժան հարձակվողները ծուխ են դնում, խեղդամահ անեն: Տերտերը դուրս է գալիս աղաչում: Պահանջում են, որ վնաս չեն տա, թող բոլորին դուրս հրավիրի: Դուրս են գալիս եւ տեսնում քահանայի գլուխը կտրած, մուտքի քարին դրած: Տղամարդկանց կոտորում են, աղջիկներին, հարսներին առեւանգում-տանում: Այնքան ծանր ու ազդու է եղել այդ որբալի դեպքը, որ նրանց արդեն ծերացած թոռներն ու ծոռները պատմելիս, վերջացնում էին արցունքով եւ այդ ընդ-

հանուր ժամանակաշրջանը կոչում էին Դարաբայլըղի շրջան (Ֆեռոպոլիզմ, իսկ հարստահարության այդ դեպքերը կոչում էին «ափիլ-թափիլի» տարիներ): Ավելի լավ, անուն առ անուն, հիշում էին նաեւ 155-160 տարի առաջ պատահած դեպքը: Ռուսական տիրապետության նախօրյակին Նախճըվանի Քարիմ խանը, իր զորամասով, ավերակ Բնունիսից իջնում է դեպի Ախլաթյան: Գյուղի ղեկավար հերոս Բաբեն, ժողովրդին հավաքում է միջնաբերդ (Ղազի գլուխի) չախմախլու մի քանի հրացաններով եւ նետ ու աղեղով վճռում դիմադրել: Մուտեցող մի զինվորի առաջին իսկ գնդակով տապալում են ծիուց: Բաբի օգնական, Ունանենց Բաբեն, նույնպես հերոս, բայց մանկամիտ, հավատացող, ասում է. «Ղարայի կրակեք, մեր Քարիմ խանն է, վնաս չի տա մեզ»: Այդ լսում, հասկանում են, առանց զոհ տալու հասնում են բերդին, դուռը բացվում է եւ առաջինն սպանում են Բաբին, եւ ուրիշներին: Գյուղը կողոպտում են, բռնություններ կատարում եւ շարունակում իրենց երթը: Բասի կինը, ոչ պակաս հերոս Եղիսաբետը իր երկու երեխաներին՝ Սկրտչին եւ Թունուն առնում է եւ մենակ փախչում Ղափան, կրկին ամուսնանում մի անպիտան գյուղապետի հետ, բայց կարծ ժամանակից հետո, հղի վիճակում, թքում ամուսնու երեսին, գալիս Տաթեւ, պատմում եւ իրավունք է ստանում կրկին ամուսնանալու: Ղափանի Քրդիգան գյուղից Ալավերդի անունով մեկը գալիս է Սապետի ետեփց, հիմնավորվում Ախլաթյանում եւ ամուսնանում: Սապետը, «Ղարաթ-խաչից» բացի ունենում է եւս մի որդի՝ Սկանդարին: Գյուղում ասել են. «Երեք հորից մի մորից չորս տղա»: Բաբեն թաղված է միջնաբերդի մեջ:

Այնուամենայնիվ գյուղը մաշվել էր, այնքան, որ 1826 թվականին, ռուսական բանակի հաղթական առաջխաղացման ժամանակ, պարսից իշխանությունները, մասնավորապես Նախիջեւանի խանը, որոշում են նաեւ Սիսիանի հայաբնակ գյուղերը գաղթեցնել Իրան, Արաքսի այն կողմը: Ոմն Յաջի բեյի կողմից գաղթեցվում է եւ շատ փոքրացած Ախլաթյանը, որ այդ ժամանակ >>> 172

մոտ երկու դար առաջ, որոնցից մեկը նշանավոր մտավորականների եւ վաճառականների Շահգեյլյան տոհմն էր: Որոշ ընտանիքներ գաղթի ժամանակ մնացել են Ապրակունիսում եւ Գողթանի ու Նախիջեւանի այլ գյուղերում, որոնք գաղթի ժամանակ, մինչեւ ռուսական բանակի հասնելը, մնացել էին հենց այդ գյուղերում, նաեւ Աստապատում, իսկ վերադարձի տարին ախլաթյանցիները ամիսներ եւ մեկ տարով մնացել են նաեւ Ղազանչիում, Յարըմջայում եւ Նորսում: Այնպես որ Ախլաթյանը եւս շատ անգամ ենթարկվել է մանր ու մեծ ասպատակությունների: Նախավերջին անգամ՝ 1826 թվականին, Նախիջեւանի խանի զորամասերի կողմից, իսկ վերջին անգամ, դաշնակցականների՝ 1921թ. մայիսին:

Ամառվա հարձակումներին բնակիչները փախչում էին դաշտերը եւ թաքնվում կանգուն արտերում: Նման փրկարար դաշտերից մեկը եղել է Բնունիսից հարավ ընկած փոսորակ գյուղատեղի

ՄՆԵՂԱՎԱՅՐԸ

« 171 ուներ 15 գերդաստան (երեւի մոտ 200 շունչ): Ծանապարհին, Կարմիր վանքի մոտերքում միանում են բռնակոթցիները՝ 40 ընտանիք: Մեր ալեւորները սրամիտ Ապերավին, Զիվի ամին, Միժի դային բռնակոթցի ալեւորների հետ կատակ-վեժի բռնվելով միշտ հիշեցնում էին, որ սարի գլխին, երբ բռնակոթցիները փորձում են «սաթաշմիչ» լինել ախլաթանցիների հետ, կռիվ է ծագում եւ ախլաթանցիները հաղթում են, բռնակոթցիները տուժում:

Սիսիանցիների մի մասը Արաքսը կիսով անցած՝ ռուսական զորամասերը հասնում են եւ անցում արգելում: Ախլաթանցիներն երկու տարի բնակություն են հաստատում Ապրակունիսում, մասամբ Ղազանչիում, մինչեւ երկիրը խաղաղվելը: Գաղթից վերադառնում են մեծ Բաբենք, Ունանենք, Բաղալենք, մեծ Կարապետենք, Յավրի-Եգան Ղայալարենք, Դոլուխանենք (հետո Բունիս), Ավչունք, Ամոհբաթենք, Մալունք: Պողոսենք (հետո՝ Բունիս), Թումարենք (Բունիս), Սիմոնենք (Բունիս): Քիչ հետո Ապրակունիսից վերադառնում են նաեւ հին ախլաթանցի Սարվազենք, Բռնակոթցի վաղուց փոխադրված Զոհրաբենք, վաղուց Շուշի գաղթած եւ ավելի ուշ վերադարձած Սոհբաթ-Քազոնենք (Ստեփանենք):

Ապա հետզհետե գյուղում վերաբնակություն են հաստատում Աբգարենք (Լաքաթաղից), Փռանգուլենք (եւ Բունյաթենք ու Խոտունք) գալիս են Ղազանչից, Տերտերենք (Վարդապետենք), Ղարադաղից՝ Տաթեւ, ապա Տաթեւից Ախլաթան, Գասպարենք՝ Հին Բայազետից, Իսախանենք Ղարաղլաղից (թե՛ Տեղից), Ավունք, Վարդոնք եւ Քարամենք Ղարադաղից, Քոչոնենք, Սուրադենք, գուցե եւ Խալաթենք Թուրքահայաստանից, Քախիգ-Ակրտիչը նույնպես Թուրքահայաստանից եկած Տաթեւ, Տաթեւից Ախլաթան, Սկանդարենք՝ վերջինիս հայրը գալիս է Ղափանի Քրդիգան գյուղից (դառնում ախլաթանցի), Մադիկենք-Շնհերից, Տաթեւեցունք (Կարապետենք)՝ Տաթեւից, վերջին եկողներից են եւ Մանուկ-Հասարաթենք՝ Վաղարիի վերջին հայ ընտանիքը (ուր ծնվել է եւ իմ հայրը՝ Ստեփանը 1852թ.):

Սրա մասին այսքանը, որքան կարողացել եմ հավաքել, 1915 թվականից սկսած, ուշադիր ունկնդրելով 1820-1850 թվականներին ծնված ծերերի զրույցներին, իսկ 1926-1961 թվականներին

արդեն ինքս հարցումներ անելով 70-80 տարեկան բանիմաց, ուշիմ համագյուղացիներին (Ամերխանենց Աղոյին, Յախի ըբռուն, Տերտերենց Սերգեյին, Սիրզո ըբռուն եւ այլոց):

Ռուսական տիրապետության խաղաղ շրջանում, մինչեւ 20 տուն դառած Ախլաթանը, 50 տարում քառապատկվում է, մի տասը տուն եւս ներգաղթողներ ընդունելով: Ավելին, գրեթե ուղիղ 100 տարի առաջ, Ախլաթանից անջատվում է մոտ 12 տուն եւ փոխադրվում ավերված Բունիս: Մեծ ցեղերից մի մի տուն՝ Կարապետենք՝ Բաղալենք, Մկրտչենք, Փռանգուլենք, Աբգար-Լալենք, Սուրադենք եւ այլ ընտանիքներից, եւ մի քանի ընտանիք դուրս են գալիս ամբողջությամբ՝ Դոլուխանենք (Մանուչարենք, Միրաբենք, Ավանեսենք), երկրորդը՝ Միրզա-Պողոսենք (Հաթոնք, Առաքելենք), երրորդը Խառատ-Մանուկենք, չորրորդը՝ Սիմոնենք: Բունիս են փոխադրվում եւ Խոյից գաղթած Մանուկենք, Տոլորսից՝ Ղազոնք, Աղքենդից՝ Ստեփանը, Թագա գյուղից՝ Մինասենք: Իսկ Ղարազոզենք՝ չգիտեմ: Միայն սովետական կարգերում վերջ տրվեց Ախլաթանի անվերջ կռիվներին իրենց հարազատների դեմ, Բունիսին կից հողերի եւ Քոս աղբյուրի համար: Գուցե այս կռվազանության եւ մահակի քաջության համար է եղել, որ ասել էին «Քյալ Ախլաթան, Ծիտ-Բունիս»:

Ախլաթանցիները հայտնի էին նաեւ նրանով, Սիսիանի շատ այլ գյուղերի նման, որ այգիներ տնկելու սովորություն չունեին, ինչպես նաեւ հող մշակել չգիտեին, պարարտացնել եւ այլն, բացառությամբ մի քանի ռանչպար տներից: Հողերը, առանց օգնության, անորակ էին, անբերրի: Մանավանդ, երբ շարժում սկսվեց դրամական վաստակի համար, դեպի Բաքու: Բաքվի ծանապարհը «ոտքով բաց են արել» մոտ 95 տարի առաջ, առաջինը Գել-Ուսեփը, Գասպարը, Վարդանը: Մի քանի տարի հետո՝ Պապերը եւ այլք: Այդ դարձավ մի ավերիչ հիվանդության նման սովորություն: Տները բաժանվեցին (քիչ բացառությամբ), ընտանիքները փոքրացան: Մենակ աշխատող տարիներով թողնում էր մորը, կնոջը, երեխաներին, հեռանում Բաքու, ապա Անդրկասպյան երկրները: Գյուղը լցվեց սովորուցի բատրակներով-նոքար-երեխաներով, դառնալով գրեթե նույնպես բատրակների բատրակ: Գյուղը ենթարկվեց իս-

կական կապիտալիստական սիստեմին հատուկ տնտեսական քայքայման: Զարգացավ հողերի առ ու ծախը: Մի քանի առեւտրական տներ զբաղվում էին նաեւ ծանր, քայքայիչ վաշխառությամբ: Բացվեցին խանութներ: Աղքատության եւ հողազրկության դեմ միակ պայքարը վաստակի հեռավոր ծառայության եւ բանվորության գնալն էր (շատերի երկարամյա կուտակած ծանր վաստակը 1917 թվականին կորավ բանկերում): Նրանցից շատերը խելոքացած, դատարկ վերադարձան գյուղ 1919-20թթ. եւ կրկին դարձան գյուղացի:

Գյուղում մնացած աշխատավոր տղամարդիկ զբաղվում էին նաեւ փոխադրական գործով՝ քրեհտարությամբ, Նախիժեան, Շուշի, Գորիս եւ այլ գյուղեր: Հիմնականում փոխադրում էին աղ եւ շարժման մեջ գտնվող մարդկանց: Կանայք հռչակվել էին մինչեւ անցյալ դարի վերջը կտավ, գորգ, կարպետ եւ այլ իրեր գործելով: Անանապահությունը եւս իր դիրքերը չէր զիջում: Բայց գյուղը տնտեսապես քայքայող Բաքուն կատարեց նաեւ իր առաջավոր, դրական դերը: Բռնակոթը, Ախլաթանը, Շաղատը, Շենաթաղը, Լորը, Ուզը, Մագրան, Բունիսը, Անգեղակոթը եւ այլ աշխուժացան եւ արագ հաղորդակից եղան կուլտուրային, գրականությանը, առաջավոր կենցաղ ստեղծեցին, լավ անկողին, նոր տեսակի լավ հագուստ, սամովար, գիրք, թերթ...

Ախլաթանում դպրոց, թեեւ ոչ շատ կանոնավոր, բացվում է 1876 թվականից: Մինչ այդ եւ հետագայում ուշիմ մանուկներին դաս էին տալիս գյուղում Ղայալարը, ապա Հասարաթի որդի Ստեփանը, որը Տաթեւի վանքի հին դպրոցի վերջին մոնթե է եղել: Ղարաքիլիսայում (Սիսիանում) բացվեց գյուղական երկրպայան ռուսական դպրոց: 1870-ական թվականից գյուղի ունեւոր ընտանիքների զավակները ուղարկվեցին ուսանելու Ղարաքիլիսա եւ Գորիս: Հերթը հասավ Էջմիածնի Գետրոյան ձեմարանին եւ Շուշիի թեմական դպրոց ուղարկելուն: Զեմարանում սովորեցին եւ 1890-ական թթ. ավարտեցին Ավյան Մեսրոպը եւ իր եղբոր որդին՝ Հովհաննեսը, գրեթե իրեն տարեկից: Գյուղի առաջին դպրոցում (Բաղունց օթախում) նախ դաս է տալիս բռնակոթցի ուսուցիչ: Մեկ-երկու տարի հետո 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, երբ Կարսը գրավում են, ուսուցիչը, իր աշակերտներին

ՄԵՆԴԱՎԱՅՐԸ

նաեւ «ռուսերեն» պարել է սովորեցնում, ի պատիվ հաղթանակի:

Սակայն իսկական դպրոցը իր շենքով եկեղեցու գավիթում, քարահունչեցի Ծատուրով մեծահարուստի օգնությամբ, շենք է շինվում 1890-ին, եւ ուսուցիչ է հրավիրվում լոռեցի Տեր-Ավանեսը: Երկու տարի հետո, 1892թ., երբ խոլերայից նրա երկու զավակը մեռնում են, հեռանում է, եւ նրան մեկ տարի փոխարինում է ուսանող Յովհաննէս Ավյանը: 1894-95թթ. ուսուցիչ է լինում Գողթանի Տանակերտ գյուղից Արշակ Յայրապետյանը, հաջորդ տարին՝ նույն գյուղացի Երվանդ Սարգսյանը, 1896 թվականից մինչեւ 1909թ. վաստակավոր մանկավարժ, իմ եւ բոլոր եղբայրներիս, քույրերիս, որդուս եւ շատ շատերիս ուսուցիչը՝ դարձյալ Յովհաննէս Ավյանը:

Այնուհետեւ չորս տարի գյուղը զրկվում է դպրոցից: Այդ սեւ հիշատակն է գյուղի ուժեղ, ունետր վաշխառուների: Պետք է հիշեցնել, որ Բռնակոթի, Մագրայի նման բորբոքվել էր ուղղակի դասակարգային պայքար, հողը վերաբաժանելու, վաշխառուներին սանձահարելու, անիրավ շահագործումների եւ դպրոց բանալու հարցերի շուրջը: Բաքվում ստեղծվել էր կայուն առաջավոր, երիտասարդ բանվորական սերունդ նաեւ ախլաթյանցիներից:

Նշանավոր եւ աչքի ընկած երիտասարդ բանվորներից եւ ծառայողներից հիշման արժանի են Աղասյան Ղեփն, ծնված 1878թ., հարած բանվորական, սոցիալ-դեմոկրատական շարժման, մեխանիկ Դավթյան Իսաջանը («քնածը», բայց ամենից արթունը, ծնված 1873թ.), Բարսամես Ենոքը, ծնված 1869թ. (հորատող վարպետ), Զագրեսցի Բալասանը, ծնված 1866թ. (գյուղացի առաջին մեխանիկը), Սաքանեսցի Պետին, ծնված 1879թ., Մուրադեսցի Բախշին, ծնված 1878թ. (գրասեն. ծառայող), Տեր-Խաչատրյան Ֆեդայ Աղաջանը: Ապա գալիս է բանվոր-ծառայողների ավելի ակտիվ երկրորդ սերունդը. Ֆռանգուլյան Սուրեն, Պապիկյան Արտեմ, Ավյան Բողդան, Յասրաբյան Զրիստափոր, Մովսեսյան Զավար, Վարդանյան Սուլթան, Գաբրիելը եւ այլք: Սրանց հաջորդում է երրորդ սերունդը. 1885-1895թթ. ծնվածներից, որոնց միասին ստեղծած հայրենակցական միությունը նյութական եւ բարոյական մեծ օգնություն էր ցուցաբերում գյուղին: Գյուղում եւս կային ակտիվ ըմբոստ

մարդիկ, Տռոճանի Ակոբջանը, Աթու Աղաջանը, Տերտերեսցի Սերգեյը, Միրզո Դային եւ այլք: Բաքվում դաստիարակված այս սերունդը, որի մեջ էին եւ մի քանի մտավորականներ, ակտիվ մասնակցություն ունեցավ բանվորական շարժմանը, ոմանք եւ ազգային շարժումների:

Ամենից ծանրը գյուղացիների առողջապահության վիճակն էր, ծաղիկը, բուկուռուցները, կարմրուկը եւ այլ հիվանդություններ հնձում էին երեխաների մի զգալի մասին: Մեծահասակների թշնամին թոքերի բորբոքումն էր (սաթիլաճան) եւ այլ ցավեր, որոնց անունը չգիտեին: Վատ չի լինի մի քանի թվեր բերենք: Նախ հիշենք, որ 1886թ. գյուղն ուներ 110 տնտեսություն՝ 1088 շնչով: 1897թ. մարդահամարին գրանցված էր 106 տուն՝ 1146 շնչով (594 արակ., 552 իգ.), ընտանիքի միջինը՝ 11 շունչ: Տասը տարում ինչո՞ւ է պակասել: Բաժանված տները երկար տարիներ չէին նշում ցուցակում, որպեսզի տան վրա եկած «թովջին», ըստ ծխի, պակաս լինի: Այդ ժամանակ գյուղը երեւի 160 ընտանիքից պակաս չի եղել:

Ահա մի քանի թվեր.
1885-ին - 23 ծնունդ, 7 մահ, 7 պսակ, 1886թ. 29 ծնունդ (21 արական, 8 իգական), 8 մահ, 9 պսակ,
1889-ին - 38 ծն. (27 արական, 11 իգական), 4 մահ, 3 պսակ,
1890-ին - 31 ծն., 5 մահ, 10 պսակ,
1891-ին-21 ծնունդ, 5 մահ, 18 պսակ:
Այս 1891 թվականի համար գյուղի ծեր Զարի քահանան թախծությամբ գրում է. «1891 թվ. Ախլաթյան գյուղում հանգուցյալ եղավ 83-ուրսանատուն եւ երեք երեխա, մեկ ամսացի մինչի հինգ ամաց»: Այս կոտորածը հազիվ թե միայն ծաղիկը եղած լիներ:

1892թ. 30 ծնունդ, 9 պսակ: Սա մեծ խոլերայի տարին էր (10 տարի դրանից առաջ էլ եղել էր մեծ սովի տարի՝ ահագին զոհեր տարած):

Այդ խոլերայի տարին գյուղում մահացել է 44 մարդ, որից միայն 37 հոգի խոլերայից: Հունվարից մինչեւ մայիսը մահացել է 4 մարդ: Հունիս-հուլիսին խոլերայից՝ 10 մարդ, օգոստոսի 2-ին՝ 5 մարդ, օգոստոսի 4-ին՝ 7 մարդ, 8-ին՝ 2, 10-ին՝ 3, 12-ին՝ 2, 14-ին՝ 3, 17-ին՝ 2, 21-26-ը՝ 3, ընդամենը՝ 37 մարդ: Սեպտեմբեր- դեկտեմբերին 3 մահ է եղել:

Օրումեջ եղած մահացությունը ցույց է տալիս, թե ինչպես չիմանալով վտան-

գը՝ վարակվել են եւ մեկ ու կես, երկու օր դիմացել:

1894թ. քահանան արձանագրում է. «ծնունդը շատ է եղել՝ 25 հոգի, բայց հանգուցյալ են եղել»:

1895թ. - 31 ծնունդ, 2 մահ, 15 պսակ, 1897 թվին՝ 27 ծնունդ (18 տղա, 9 աղջիկ), 6 պսակ, 6 մահ, գումարած 17 վախճանյալ մանկունք», այսինքն՝ 23 մահացություն:

Ոչ պակաս սարսափելի մահացության տարիներ էին 1905-1907 թվականները, եւս մանուկների կոտորած էր ծաղիկից եւ այլ տարափոխիկ հիվանդություններից: Իհարկե ավելի սարսափելին 1918-21 թվականներն էին, ծանր տարիներ էին, գաղթականություն, սով, կռիվներ, զոհեր, տիֆ եւ այլ հիվանդություններ: Մահը էժանացել էր այդ տարիներին:

Այնուամենայնիվ գյուղը չէր մաշվում եւ պայքարում էր մահի դեմ բնական անխափան ծնունդով: Գյուղում մալարիան, տենդը (այն ժամանակներում առանց բուժումների), ծանր աշխատանքը, ոչ ընտիր ջուրը չէին թողնում, որ մարդիկ երկար ապրեն: Իմ ժամանակի մարդկանցից երկար ապրել են տղամարդկանցից միայն մի քանի հոգի, այն էլ ոչ ավելի, քան 90-100 տարի. Պետրոս ամին, իր որդի Խաչատուրը, Ավանոնց Զավաղը, Գել-Ուեսփը, Յախշի քեռին եւ այլք:

Առաջին համաշխարհային պատերազմը, քաղաքացիական եւ ազգամիջյան կռիվները եւս մի քանի տասնյակ զոհ պահանջեցին նաեւ Ախլաթյանից:

Յայրենական մեծ պատերազմի ավելի շատ հերոսական զոհերի ոգեկոչման օրն է այսօր:

Ծաղիկ հասակի երիտասարդների այդ թանկագին զոհերը հաջորդեցին տասը տարի առաջ գյուղի կրած բնական ավերիչ աղետի մոտ 100 զոհերին, եւ նախորդեցին Աշխաբաղում պատահած նույնպես բնական աղետի մի քանի տասնյակ զոհերին:

Այդպես է մարդկային կյանքի օրենքը, միայն երբեմն մեկին շատ է բաժին ընկնում, մեկին պակաս:

Բայց այնպես, ինչպես սովի դեմ կռվում են աշխատանքով, ցորենի հասկով, այնպես էլ մահվան դեմ կռվում են դարձյալ աշխատանքով եւ ծնունդով:



ՆԻՇԱՏԱԿ



Մորուս Ռասրաթյանի շիրմարձանը Երեւանի Սովետաշէնի գերեզմանատանը

Խոսք՝ ասված Մորուս Ռասրաթյանի մահվան առթիվ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1979թ. փետրվարի 25-ին, 77 տարեկանում վախճանվեց Ռայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Ստեփանի Ռասրաթյանը:

Ծնվել է Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում, որտեղ եւ ստացել է տարրական կրթություն, այնուհետեւ ուսումը շարունակել է Բաքվում: 1918-1920թթ. Ռասրաթյանը կարմիր զորամասերի կազմում մասնակցել է Կովկասում բռնկված քաղաքացիական կռիվներին:

Ուսման ծարավը Ռասրաթյանին բերում է Երեւանի պետական համալսարան, որտեղ նա երեք տարի ունկնդրում է Ռ. Մանանդյանի, Ռ.Աճառյանի, Լեոյի, Մ.Աբեղյանի եւ հայ գիտական մտքի ուրիշ մեծերի դասախոսությունները: Ավարտելով համալսարանը՝ Ռասրաթյանը նվիրվում է գիտակազմակերպչական եւ հետազոտական բազմաբեղուն գործունեության: 1924-1930 թթ. նա գիտական ու մանկավարժական լայն աշխատանք է ծավալում որպէս ՌԿ(Բ) Կ Կենտկոմի կուսակցության պատմության բաժնի գիտական քարտուղար եւ միաժամանակ՝ Ռայաստանի Ռեզոլուիտիական թանգարանի դիրեկտորի տեղակալ: դասախոսություններ է կարդում Ռայաստանի կուսակցական դպրոցում:

ԴԻՇԱՏԱԿ

1931-1932թթ. Մ. Չասրաթյանն ասպիրանտ էր Լենինգրադում, աշակերտում էր՝ Յոսեփ Օրբելուն, Եվգենի Տարլեին եւ սովետական մյուս ականավոր գիտնականներին: Վերադառնալով Երեւան՝ նա նորից ծավալում է բազմակողմանի գիտական գործունեություն. աշխատում է որպես պատմության եւ նյութական կուլտուրայի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ՝ գիտական գծով, ՀԿ (Բ)Կ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, Հայաստանի հեղափոխության թանգարանի դիրեկտոր:

Չասրաթյանը Հայաստանում հեղափոխական շարժումների եւ կոմունիստական կուսակցության պատմության առաջին հետազոտողներից մեկն էր: Նա կազմում եւ հրատարակում է Մ. Սպանդարյանի մասին փաստաթղթերի եւ հուշագրությունների ժողովածուն, Մայիսյան ապստամբության պատմության վերաբերյալ հուշագրությունների միատորյակը եւ գրում մի շարք գրքույկներ ու հոդվածներ:

1937թ. Մ. Չասրաթյանը նշանակվում է Էջմիածնի մատենադարանի դիրեկտոր. նա զգալի աշխատանք է կատարում հին ձեռագրերի պահպանման եւ ուսումնասիրման ուղղությամբ:

1940թ. սկսած Չասրաթյանն աշխատում է նախ որպես գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, ապա գիտնական քարտուղար, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումից հետո նշանակվում է հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղար, միաժամանակ ձեռնամուխ է լինում Սայաթ-Նովայի ստեղծագործության ուսումնասիրությանը: 1942թ. Չասրաթյանը պաշտպանեց դիսերտացիա՝ նվիրված Սայաթ-Նովայի ստեղծագործության քննական վերլուծմանը: Մեծ խորաթափանցությամբ եւ գիտական լուրջ հիմնավորումով նա մեկնաբանեց Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը, լուսաբանեց նրա շատ անհայտ էջեր՝ արժեքավոր ներդրում կատարելով սովետահայ բանասիրության, մասնավորապես սայաթնովագիտության գանձարանը:

Չետպատերազմյան տարիներին Չասրաթյանն աշխատել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, եղել է հայ ժողովրդի պատմության առաջին դասագրքի ստեղծողներից մեկը, գոր-

ծուն մասնակցություն է ունեցել հնագիտական արշավախմբերին եւ պեղել է Հայաստանի հնագիտական շատ հուշարձաններ, դասավանդել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, եղել է հեռակա մանկավարժական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, ղեկավարել է հարյուրավոր մանկավարժների եւ գիտական կադրերի պատրաստման գործը:

Վերջին ավելի քան մեկ տասնամյակում Չասրաթյանը գլխավորում էր Հայաստանի պետական պատմության թանգարանը, սիրով եւ գործիմացությամբ կազմակերպում էր հայոց նյութական եւ հոգեւոր մշակույթի մատուցների պահպանումը, մշակումը եւ ցուցադրումը. նա հսկայական գործ կատարեց թանգարանի արժեքներն ավելի հարստացնելու, դրանք ժողովրդականացնելու ուղղությամբ:

1965-1966թթ. սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հրավերով Մ. Չասրաթյանը մեկնում է Լիբանան, որտեղ դասախոսություններ է կարդում հայկական կոլեջներում եւ լայն շփում ունենում տարագիր հայերի ամենալայն շրջանների հետ: Չասրաթյանը նրանց մեջ ավելի խորացրեց սերը դեպի սովետական հայրենիքը:

Մ. Չասրաթյանի ստեղծագործությունների մեջ ու նրա գործելակերպում հիանալի զուգակցված էին սոցիալիստական ինտերնացիոնալիզմը եւ հայրենասիրությունը: Մարքսիզմ-լենինիզմի խոր իմացությունը նրան հնարավորություն էր ընձեռում գիտականորեն, ճիշտ դիրքերից լուսաբանելու հայ ժողովրդի պատմության ամենաբարդ հարցերը: Մ. Չասրաթյանը տաղանդավոր, բազմաշնորհ գիտնական էր, պատմաբան եւ գրականագետ, լեզվաբան եւ արվեստաբան, հմուտ մանկավարժ եւ հռետոր:

Իր անդուլ եւ ազնիվ աշխատանքով Մ. Չասրաթյանը ձեռք բերեց մեծ հեղինակություն եւ հարգանք: Նրա ծառայությունները գնահատվել են կուսակցության, կառավարության եւ գիտական հասարակայնության կողմից: 1961թ. Չասրաթյանին շնորհվեց Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1963թ. նա ընտրվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Մորուս Չասրաթյանի՝ անխոնջ գիտնականի եւ ժողովրդանվեր մարդու պայծառ հիշատակը վառ կապրի նրա հազարավոր աշակերտների, ընկերների եւ բարեկամների սրտերում:



ՓԵՐԴԱՍՏԱՆ

Մորուս Չասրաթյանը՝ որդու հուշերում



Անվանի պատմաբանի, հայագետի մասին հուշեր ներկայացրեց կրտսեր որդին՝ ՉՉ վաստակավոր ծարտարապետ, Չայաստանի Չանրապետության պետական մրցանակի դափնեկիր, դոկտոր-պրոֆեսոր Մուրադ Չասրաթյանը



ՎԱՐՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Մեծ անհատականությունների կերպարն ամբողջանում է ժամանակակիցների, մտերիմների, արյունակից բարեկամների բնութագրումներով, հուշ-պատմություններով: Մորուս Չասրաթյանը երկու զավակ է ունեցել՝ Բակուր եւ Մուրադ: Ավագ որդին արդեն հանգուցյալ է, անվանի պատմաբանի, հայագետի մասին հուշեր ներկայացրեց կրտսեր որդին՝ ՉՉ վաստակավոր ծարտարապետ, Չայաստանի Չանրապետության պետական մրցանակի դափնեկիր, դոկտոր-պրոֆեսոր Մուրադ Չասրաթյանը: Նրան առավել ծարտարապետության տեսաբան ու պատմաբան կարելի է անվանել:

1958 թվականին նվաճել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ծարտարապետական բաժինը: 1958-1964 թվականներին աշխատել է «Երեւաննախագիծ» ինստիտուտում, 1964 թվականից՝ ՉՉ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտում:

1988 թվականից արվեստի ինստիտուտի ծարտարապետության բաժնի վարիչն է, 2006 թվականից՝ ՉՉ ԳԱԱ թղթակից անդամ: Առաջինն է հետազոտել ու շարադրել ու միջնադարի հայկական ծարտարապետության պատմությունը: Զբաղվում է Չայաստանի եւ մերձակա երկրների ծարտարապետական առնչություններով: 2015 թվականից ծարտարապետության միջազգա-

յին ակադեմիայի թղթակից անդամ է: Մուրադ Չասրաթյանի փոխանցմամբ՝ մեծ հորեղբայրը՝ Զրիստափորը, ով հորից 20 տարով մեծ էր, գնացել էր Բաքու, ապրուստի եւ դիրքի տեր դարձել եւ իր ութ տարեկան եղբորը՝ Մորուսին տարել այնտեղ, կրթության տվել ռուսական դպրոցում: Մորուս Չասրաթյանը մինչեւ 18 տարեկանը Բաքվում է եղել: Նավթարդյունաբերության քաղաքում հարել է հեղափոխական շարժումներին, լսել Ստ.Շահումյանի, Ջափարիձեի, մյուս հեղափոխականների ելույթները, ոգետրվել: 1918 թվականին, երբ լուծարվում է Անդրկովկասյան սեյմը, երեք հանրապետությունները բաժանվում են, ամեն ինչ խառնվում է իրար, ցանկանում է վերադառնալ Չայաստան: Ճանապարհները փակ են լինում, հայտնվում է Յուլիսային Կովկասում,

Ինչպես որդին է վկայում, հայրը բնավորությամբ հանգիստ էր, բայց սկզբունքային, երբեք չէր նահանջում իր սկզբունքներից, տանն էր աշխատում եւ գիշերները. «Ճատ էր ծխում, այն աստիճան, որ ես ու եղբայրս հակակրանք ունեցանք ծխելու հանդեպ եւ կյանքներումս երբեք չծխեցինք»

ԳԵՐՂԱՏԱՆ

այդտեղ եւս մասնակցում հեղափոխական եւ ազգամիջյան շարժումներին, որպէս երիտասարդ գաղափարական կոմունիստ (որդու բնորոշումն է):

Երեւան գալով՝ ընդունվում է պետական համալսարանի պատմագիտության ֆակուլտետ: Ապագա կնոջ՝ Սիրանուշ Մարտիրոսյանի հետ (ծագումով Կիրովականից, այժմ՝ Վանաձոր) մի կուրսում են սովորել: Սիրանուշը կրթություն էր ստացել Թիֆլիսում, որովհետեւ, ասում է Մուրադ Չասրաթյանը, այն ժամանակ Լոռու քաղաքամայրը Թիֆլիսն էր, Զանգեզուր-Ղարաբաղի քաղաքամայրը՝ Բաքուն: Երեւանը Արարատյան դաշտավայրի մայրաքաղաքն էր (հիարկե, այս ամենը ոչ պաշտոնական): Ինչէի, Սիրանուշ Մարտիրոսյանը հայոց լեզու եւ գրականություն է դասավանդել Երեւանի Ն.Կրուպսկայայի անվան դպրոցում, հանրապետության վաստակավոր ուսուցչուհի էր:

1925 թվականից կուսակցության կոչով Մորուս Չասրաթյանը կոմերիտական աշխատանք է կատարել Լոռիում, հետո էքստերն կարգով ավարտել է համալսարանը: 1930-ական թվականների սկիզբը նշանավորվում է նրա՝ Լենինգրադում սովորելով ու ասպիրանտուրան ավարտելով, աշակերտել է Յովսեփ Օրբելուն եւ Նիկողայոս Մառին, որտեղից վերադառնալով՝ ղեկավար աշխատանքներ է կատարել (կուսակցության եւ նյութական կուլտուրայի ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, հեղափոխության թանգարանի տնօրեն): 1937-ին նշանակվում է Մատենադարանի տնօրեն: Դա այն ժամանակն էր, երբ ստալինյան բռնաճնշումների հետեւանքով հոգեւորականները հալածվում էին, վանքերն ու եկեղեցիները փակվում, ավերվում, այնտեղ գտնվող գրականությունը՝ ձեռագիր վիճակում նույնպէս, հնատիպ գրքերը, որպէս կրոնական գրականություն, ոչնչացնում էին: Չայրը ձգտում էր այդ ամենը փրկել-հավաքել, դրանք պահ տալ Մատենադարանին:

1938-1940 թվականները Մորուս Չասրաթյանի կենսագրության սպիտակ էջերն են: Քանզի բռնադատվել է, երեք տարի անցկացրել անազատության մեջ: Մտավորական ծանոթներից մեկը «մատերիալ» է գրել նրա դեմ, թե իբր երիտասարդների հետ հակասովետական գրույցներ է ունենում: Կալանավորել են 58 հոգիվածով՝ ընդհատակյա պայքար սովետական կարգերի դեմ,



Մորուս Չասրաթյանը եւ Գրիգոր Չասրաթյանը

որն ընդհուպ մահապատիժ է նախատեսում: Նույն ճակատագրի մարդկանց, որոնց քննիչները ստիպել են ստորագրել իրենց ուզած թղթի տակ, հավաքել են մի բանտախցում: Թիֆլիսից ժամանել է «սորոկյան» (ռազմական տրիբունալի անդամներ), եւ սկսվել է «դատավարությունը»:

«Պառկելու տեղ չկար, գիշերը նստած էինք քնում, - պատմել է հայրս, - հերթով կանչում էին, երեքին գնդակահարություն էին տալիս, մեկին՝ աքսոր, դարձյալ երեքին-չորսին՝ գնդակահարություն, մեկին՝ աքսոր: Երջանիկ զուգահիշարությամբ հորս աքսոր է հասնում: Աքսորյալներին հավաքում են, որ Սիրիո տանեն, իր վիճակն այնպիսին է լինում (ոչ քայլում էր, ոչ կարգին տեսնում), թողնում են, որ բանտախցում հոգին ավանդի, բայց ֆիզիկապէս պինդ է լինում, տանում են բուժարան, այնտեղ էլ չի ապաքինվում: Եվ այդպէս մինչեւ 1940 թվականը բանտում է եղել՝ ծայրաստիճան վատառողջ վիճակում»:

Մուրադ Չասրաթյանը պատմում է նաեւ, որ երբ հորը բռնադատել են, իրենց երկու սենյականոց բնակարանից վտարել են: Ի դեպ, նրանց հարեանը Դերենիկ Դեմիրճյանն էր, հիմա այդտեղ գրողի տուն-թանգարանն է: Իրենց բնակարանը հատկացրել են НКВД-ի ժողկոմի տեղակալին, ում երկու ամիս հետո գնդակահարել են: Իրենց մի սենյականոց բնակարան են տվել Լենինի (այժմ Չանրապետության) փողոցում գտնվող դատարանի շենքում: Երկհարկանի շենք էր, առաջին հարկում դատարանն էր, երկրորդում բնակվում էին: Մի սենյականոց այդ բնակարանում իրենց ընտանիքն ապրեց մոտ 20 տարի:

Մորուս Չասրաթյանի բանտարկվելուց հետո նրա ընտանիքի շուրջը

դատարկություն էր ստեղծվել. «Մայրս պատմում է, որ ծանոթ-բարեկամ-ընկեր անհետացան: Փողոցում, երբ ծանոթ մարդու պիտի հանդիպեր, դեռ հեռվից վերջինս փոխում էր մայթը, որ չհանդիպեր եւ չքարտեւր իրեն: Այնքան վախ կար մարդկանց հոգիներում»:

Չոր վատառողջ վիճակի մասին տեղյակ լինելով գտնվեցին մարդիկ, ովքեր խորհուրդ տվեցին Մորուս Չասրաթյանի կնոջը՝ դիմելու ԽՍՀՄ գլխավոր դատախազին, որ նկատի ունենան առողջական վիճակը, վաստակը եւ գործը կարճեն, այն հիմնավորմամբ, որ գիտնականն իր գործունեությամբ կարողարացնի իրեն հայրենիքի առջեւ: Մայրը նման բովանդակությամբ տեքստ է պատրաստում, բայց մեկը պիտի խմբագրեր տեքստը, սակայն ոչ ոք չի գտնվում (դարձյալ վախի պատճառով): Օգնության ձեռք է մեկնում հնագետ, Էրմիտաժի թանգարանի ապագա տնօրեն Բորիս Պիոտրովսկին: Լենինգրադում ասպիրանտուրայում ուսանելիս Մորուս Չասրաթյանը, հավանաբար, ընկերացել էր Պիոտրովսկու հետ: Վերջինս էլ այդ տարիներին պեղումներ էր կատարում Կարմիր բլուրում: Նա հանձն է առել խմբագրել նամակի տեքստը: Մուրադ Չասրաթյանը տեղեկացնում է, որ նամակի ձեռագիրը պահպանված է, որի վրա հայրը մակագրություն է թողել. «Իմ միակ բարեկամը, ով բանտարկվելուց հետո կապը չկտրեց ընտանիքիս հետ»:

Չոր, նաեւ մի խումբ ուրիշների գործերը վերանայում է Թիֆլիսից ժամանած նոր եռյակը: Քննիչները ասում են, հանցանքը գրել, ստորագրել եւ: Չայրս էլ թե՛ կարողացեք իմ խոստո- >> 178

ԳԵՐՂԱՍՏԱՆ

« 177 վանության ամեն նախադասության առաջին տառը (այն ռուսերենով էր գրված):

Կարդում են՝ Всѣ, что здесь написано – ложь: Վերջին տառով էլ յո՛ւր սկսվում էր հետեյյալ նախադասությունը՝ желая быть искренним, я написал эту признательное показание:

Քննիչները զարմացել էին նրա համարձակությունից: Բայց, այնուամենայնիվ, կարճել են գործը եւ ազատել են: Բանտարկությունից հայրս ազատվեց ծայրաստիճան վատառողջ վիճակում:

Եղբայրը եւ քույրը ժողովրդական բուժումներով ուտրի են կանգնեցնում:

Բանտարկությունից հետո էլ դուրին չի անցել Մ.Յասարայանի կյանքի ճանապարհը: Գնում է Յոսեֆ Օրբելու մոտ, քանզի նրա ասպիրանտն է եղել. գործ խնդրելու: Օրբելին Յայրենական մեծ պատերազմի տարիներին Լենինգրադից էվակուացվել էր Յայաստան: Եւ ղեկավարում էր ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Յայկական մասնաճյուղը (Արմֆան), իսկ 1943-ին, երբ հիմնադրվեց Յայկական ԽՍՀ գիտու-

թյունների ակադեմիան, ընտրվեց նրա նախագահ: Եւ էլ թե՛ քեզ պատմության գծով չենք կարող աշխատանքի ընդունել, որովհետեւ կուսակցության համար ամենակարեւոր բնագավառը պատմությունն է համարվում:

Իսկ Յասարայանը թեեւ ազատված էր, բայց դատված լինելու սեւ բիծը մնացել էր (այդպես էին ընկալում): Օրբելին հայտնում է, որ կընդունեն գրականության ինստիտուտ: Մորուսն ընդդիմանում է, թե ինքը գրականության ինստիտուտում ի՞նչ պիտի անի: «Դու լեզուներ գիտես, մայրենի լեզվի չափ գիտես ադրբեջաներեն, վրացերեն էլ գիտես, – ասում է Օրբելին, – մի քիչ էլ դրանք կատարելագործիր եւ թարգմանիր հայերեն Սայաթ-Նովայի ադրբեջաներեն եւ վրացերեն խաղերը: Սայաթ-Նովան մոտ 120 ադրբեջաներեն երգեր ունի, ավելի շատ, քան հայերենն ու վրացերենը միասին: Իսկ դրանց մասին ժողովուրդը տեղյակ չէ: Թարգմանիր, ուսումնասիրիր, դա էլ կդառնա թեկնածուական դիսերտացիայի թեմա»:

Մութադ Յասարայանը նշում է, որ երբ հայրը ընդունվում էր գրականության ինստիտուտ, պատմական գիտությունների թեկնածուի կոչում ուներ, որ ստացել էր 1935 թվականին:

Խուզարկության ժամանակ ամեն ինչ տարել էին՝ փաստաթղթեր, նամակներ, ձեռագրեր, նաեւ գիտությունների թեկնածուի վկայականը: Դիմել է Մոսկվա՝ բարձրագույն ատեստավորման հանձնաժողով, որ կրկնօրինակը տան, պատասխանել են, թե արխիվը տեղափոխել են Կոյբիշեւ (պատերազմ էր), չեն կարող օգնել:

Մի խոսքով, Սայաթ-Նովայի գրական ողջ ժառանգությունը դառնում է հայ ժողովրդի սեփականությունը: Ի՞նչն է ուշագրավ. Սայաթ-Նովայի խաղերը Մորուս Յասարայանը թարգմանել է Թիֆլիսի բարբառով, որոնք բնավ չեն տարբերվել հայերենով գրվածներից: Պատերազմի տարիներին Մորուս Յասարայանը թեկնածուական ատենախոսություն է պաշտպանում Սայաթ-Նովայի ստեղծագործության մասին: Եւ այնպիսի առաջարկվում է միանգամից դոկտորի կոչում շնորհել, բայց առարկողներ են լինում՝ ասելով, թող մի լավ էլ դոկտորական գրի: Մինչեւ 1947 թվականը Մորուս Յասարայանն աշխատում է գրականության ինստիտուտում, այնուհետեւ տեղափոխվում է պատմու-



Մորուս Յասարայանի տոհմաճառը

ԳԵՐԴԱՏԱՆ

թյան ինստիտուտ, զբաղվում հնագիտությամբ, որ նրա տարերքն էր, ավելի ուշ դասախոսում է Երեանի պետական համալսարանում եւ հայկական մանկավարժական ինստիտուտում:

- Մորուս Չասրայանի գործունեության ո՞ր շրջանն է առանձնանում, - հարցնում եմ զրուցակցիս:

«Մեծ ավանդ ունի սայաթնովագիտության մեջ, բայց էությունը պատմաբան էր, հայ ժողովրդի պատմության առաջին դասագրքի հեղինակներից էր, այն դասագրքի, որ տպագրվեց 1951 թվականին: Սիրում էր հնագիտությունը, պեղումներ է արել Սյունիքում, Արարատյան դաշտում, արդյունքներն ամփոփել եւ հրատարակել: Ծիծեռնավանքը ուսումնասիրված չէր, ինչն արել է նա՝ բացահայտելով դրա կարեւոր դերը հայ ճարտարապետության մեջ»:

Ինչպես որդին է վկայում, հայրը բնավորությամբ հանգիստ էր, բայց սկզբունքային, երբեք չէր նահանջում իր սկզբունքներից, տանն էր աշխատում եւ գիշերները. «Շատ էր ծխում, այն աստիճան, որ ես ու եղբայրս հակակրանք ունեցանք ծխելու հանդեպ եւ կյանքներումս երբեք չծխեցինք», - ասում է եւ հավելում, որ չափավոր էր ամեն ինչում, չէր հանգստանում, արձակուրդ կոչվածը նրա համար չէր, առողջարան կամ հանգստյան տուն գնալ չկար: Շատ էր սիրում դասավանդել, ուսանողների հետ շփվել, նրանց գիտելիքներ ավանդել, ուսանողներն էլ սիրում էին նրան: Ընկերները նշանավոր մարդիկ էին՝ ակադեմիկոսներ, պատմաբաններ՝ Սուրեն Երեմյան, Կարո Մելիք-Օհանջանյան, Վարդան Պարսամյան, Վարդգես Չամազասպյան (հետագայում՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ), Լեւոն Խաչիկյան (հետագայում՝ Մատենադարանի տնօրեն), գրողներ՝ Դերենիկ Դեմիրճյան, Ավետիք Իսահակյան, Շիրազ եւ ուրիշներ:

Ի դեպ, Ավ.Իսահակյանի հետ կապված մի դեպք պատմեց Մուրադ Չասրայանը. «Տասը-տասնմեկ տարեկան էի, հայրս բժշկի, թե մի այլ տեղ պիտի տաներ: Ճանապարհին մտանք գրականության ինստիտուտ, ինչ-որ մեկին պիտի տեսներ: Սենյակ մտավ նաեւ Իսահակյանը, հարցրեց. «Ո՞վ է այս երեխան»: Չայրս պատասխանեց. «Վարպետ, իմ տղան է, շատ ընթերցասեր է եւ քո գործերը, համարյա բոլորը կարդացել է»:

Մորուս Չասրայանի բանտարկվելուց հետո նրա ընտանիքի շուրջը դատարկություն էր ստեղծվել. «Մայրս պատմում է, որ ծանոթ-բարեկամ-ընկեր անհետացան: Փողոցում, երբ ծանոթ մարդու պիտի հանդիպեր, դեռ հեռվից վերջինս փոխում էր մայրը, որ չհանդիպեր եւ չբարեւեր իրեն: Այնքան վախ կար մարդկանց հոգիներում»:

Իսահակյանը չհավատաց, ժպտաց, բայց նաեւ հարցրեց, թե ի՞նչ եմ հավանել իր ստեղծագործություններից: Ասացի, որ շատ եմ հավանել երեխաների համար նրա գրածները, լավ կլիներ, որ նա մանկական գրող լիներ: Բոլորը ծիծաղեցին, Իսահակյանն էլ ծիծաղեց, հետո ավելացրեց՝ գոնե երեխան ծիշտ է ասում»:

Շիրազն իր նոր լույս տեսած ժողովածուները նվիրում էր Մորուս Չասրայանին: Չերթական գիրքը նվիրելու ժամանակ Մորուսը նրան ասել է, թե երկար ստեղծագործություններն այնքան ուժեղ չեն, որքան կարճերը, էքսպրոսիվները, ավելի նպատակահարմար է նախապատվությունը տալ կարճերին: Շիրազը գիրքը բացել է տիտղոսաթերթին մի հիանալի բանաստեղծություն է գրում:

Մարտիրոս Սարյանի հետ էր մտերիմ: Գեղանկարիչը սկսել է վրձնել Մորուս Չասրայանի դիմանկարը, բայց անավարտ է մնացել, ուստի ոչ մի տեղ չի ցուցադրվում:

Ուշագրավ են Մորուս Չասրայան-Չամո Սահյան առնչությունները:

Մուրադ Չասրայանն ասում է, որ իր տատը (հոր կողմից) Լոր գյուղից էր եւ իրենց՝ Սահյանների եւ Չասրայանների ընտանիքները բարեկամական կապ են ունեցել: Երբ Սահյանը, ով 1945-ից 1950 թվականը Բաքվում է բնակվել, գալիս էր Երեան, իրենց տանն էր իջեւանում: Իրենց ընտանիքի մասին բանաստեղծություն է գրել: Լաեւ Բաքվից բանաստեղծություններ էր ուղարկում Մորուս Չասրայանին՝ նրա կարծիքն իմանալու:

Կային բանաստեղծություններ, որոնք ուռա-հայրենասիրական ոգով էին գրված, օրինակ, Մոսկվայի 800-ամյակին նվիրվածը՝ Լենին, Ստալին, կոմունիզմ, մեր փարոսը եւ այլն: Կային նաեւ քնարական շնչով գրված բանաստեղծություններ: Դրանք Մորուս

Չասրայանը տանում էր տպելու, չէին տպում, ասում էին՝ դրա ժամանակը չէ, պատերազմի վերջերս ենք բուժում, կոմունիզմ ենք կառուցում, այդ մասին պիտի գրել, այդ ինչեր եք բերել:

«Երկու ծայրահեղություն էր ստեղծվել, - հիշում է Մուրադ Չասրայանը, - բանաստեղծությունների մի մասը հայրս էր խոտանում, մյուս մասը, որն իսկապես տպագրելու բան էր, խմբագրությունները մերժում էին:

Մի խոսքով, Սահյանի անտիպ բանաստեղծություններ էին մնացել մոտս, մի փոքր մասը տպագրվեց Սիսիանի «Որոտան» թերթում, մյուսները հանձնեցի գրականության եւ արվեստի թանգարան»:

Չրապարակման սկզբում նշեցինք, որ Մորուս Չասրայանի ավագ Բակուր որդին ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտում էր դասավանդում, ըմբշամարտի գծով սպորտի վարպետ, ԶՅ վաստակավոր մարզիչ, Չայաստանի բազմակի չեմպիոն, մի խոսքով մարզիկ-մանկավարժ, ունի երկու դուստր՝ Նունե եւ Նարինե, երկուսն էլ՝ պատմության մասնագետ: Երկրային կյանքին Բակուր Չասրայանը հրաժեշտ է տվել յոթ տարի առաջ:

Մուրադ Չասրայանի կինը՝ Աիդա Կարապետյանը, մանկավարժ է, ֆրանսերենի դասատու: Երանք մի որդի ունեն՝ Արեգ Չասրայան, ով շարունակում է հոր գործը: Ճարտարապետ-նախագծող էր, հետո զբաղվեց ճարտարապետության պատմությամբ, ատենախոսություն պաշտպանեց, գիրք հրատարակեց՝ «Արուժի վաղ միջնադարի ճարտարապետական համալիրը»: Հիմնականում աշխատում է ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում, դոցենտ է, համագործակցում է Արվեստի ինստիտուտի հետ, որտեղ էլ համատեղությամբ աշխատում է:



ԳԵՐԴԱՍՏԱՆ


Բակուր Չասրաթյան

(11.01.1927-29.01.2013)

Մորոս Չասրաթյանի ավագ որդին է, ՉԽՍՀ անվանի մարզիկ, մարզիչ եւ մարզական գործիչ:

Ընթացմարտով զբաղվել է 1945 թվականից: 1953թ. ավարտել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: 1947-1957թթ. եղել է Չայաստանի բազմակի չեմպիոն՝ ազատ, հունահռոմեական, սամբո եւ կոխ ըմբշամարտից: «Իսկրա» (հետագայում վերանվանվել է «Բուրեւստնիկ») կամավորական մարզական ընկերության համամիութենական խորհրդի առաջնության 5-ակի հաղթող է (ազատ, հունահռոմեական, սամբո ըմբշամարտ), 1952թ.՝ ԽՍՀՄ առաջնության երրորդ մրցանակակիր (ազատ ըմբշամարտ), 1952-1954թթ.՝ ազատ ըմբշամարտի ԽՍՀՄ հավաքական թիմի անդամ:

1954-1955թթ. աշխատել է Չայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտում, որպես ազատ ըմբշամարտի դասախոս, 1950-1961թթ.՝ «Իսկրա» կամավոր մարզական ընկերությունում, որպես ազատ ըմբշամարտի մարզիչ: 1961-1966թթ. եղել է Չայաստանի ազատ ըմբշամարտի հավաքական թիմի ավագ մարզիչը: 1961-1964թթ. աշխատել է սպորտային բարձրագույն վարպետության հանրապետական դպրոցում՝ փոխտնօրեն, 1964-1966թթ.՝ տնօրեն: 1966-1970թթ. ԽՍՀՄ սպորտկոմիտեի կողմից գործուղվել է Աֆղանստան՝ Զարոյ, որպես ազատ ըմբշամարտի մարզիչ: 1970-1977թթ. աշխատել է մենապայքարային մարզաձեւերի սպորտային բարձրագույն վարպետության հանրապետական դպրոցում՝ տնօրեն, 1977-1984թթ.՝ Չայաստանի սպորտկոմիտեի նախագահի տեղակալ, 1984-1998թթ.՝ մենապայքարային մարզաձեւերի սպոր-



տային բարձրագույն վարպետության հանրապետական դպրոցում՝ տնօրեն:

Եղել է սամբոյի ԽՍՀՄ ֆեդերացիայի խորհրդի անդամ (1960-1966թթ.), սամբո եւ ազատ ըմբշամարտի Չայաստանի ֆեդերացիայի նախագահ (1960-1966թթ.):

Բազմամյա գործունեության ընթացքում պատրաստել է ԽՍՀՄ, Եվրոպայի, աշխարհի եւ օլիմպիական խաղերի հաղթողներ եւ մրցանակակիրներ:

ՆՊՈՒՎԱՆՆԵՐ

- ▶ ԽՍՀՄ սպորտի վարպետ (1957թ., ազատ ըմբշամարտ),
- ▶ Չամամիութենական կարգի մրցավար (1961թ., ազատ եւ հունահռոմեական ըմբշամարտ),
- ▶ ՉԽՍՀ վաստակավոր մարզիչ (1963թ.),
- ▶ ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ (1972թ.),
- ▶ ՀԱՕԿ-ի պատվավոր անդամ:

Մորուս Չասրաթյանի կինը՝ Սիրանույշ Չասրաթյան

Չանրապետության լուսավորության գործի անխնոջ մշակներից մեկը՝ Սիրանույշ Չովհաննեսի Մարտիրոսյանը ծնվել է 1902թ. Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), սկզբնական կրթություն ստացել է ծննդավայրում, այնուհետեւ ընդունվել Թբիլիսիի Չովհանյան դպրոցը, որն ավարտել է 1921թ.: Երիտասարդ մասնագետը մեկ տարի աշխատել է Կիրովականում, իսկ 1922թ. գործուղվել Երեւան՝ նորաբաց համալսարանում ուսանելու:

Նա սովորելու տարիներին աչքի է ընկնում հասարակական աշխատանքում՝ դառնալով հայոց լեզվի ու գրականության ուսանողական խմբակի ղեկավար: 1926թ. հաջողությամբ ավարտելով համալսարանը, աշխատանքի է անցնում Երեւանի N2 յոթնամյա դպրոցում: Այդ թվականին ամուսնացել է իր համակուրսեցի Մորուս Չասրաթյանի հետ: Չետագայում նա ավարտում է նաեւ Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոքիմիական ֆակուլտետը: Առաջավոր ուսուցչուհին եւ հասարակական ակտիվ գործիչը երկար տարիներ աշխատում է Երեւանի Ն.Կ.Կրուպսկայայի (այժմ՝ Նիկոլ Աղբալյանի) անվան միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի ու գրականության դասատու-ուսմասվար: Նա երկու անգամ ընտրվել է Երեւանի քաղաքային խորհրդի պատգամավոր: 1944թ. ՀՍՍՀ գերագույն խորհրդի հրա-

ԳԵՐՂԱՏԱՆ



Մորուս և Սիրանուշ
Հասարթյանները (1926թ.)

1926թ. հաջողությամբ ավարտելով համալսարանը, աշխատանքի է անցնում Երեւանի N2 յոթնամյա դպրոցում: Այդ թվականին ամուսնացել է իր համակուրսեցի Մորուս Հասարթյանի հետ:

մանագրով նրան շնորհվում է Հայաստանի վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում: Հետագա տարիներին հմուտ մանկավարժը պարգևատրվում է «Աշխատանքային արիության համար» եւ խաչատուր Աբովյանի անվան մեդալներով, ՀԱՍՀ գերագույն խորհրդի պատվոգրով:

Ս. Մարտիրոսյան-Հասարթյանը երկարամյա հանգստի անցնելուց հետո նույնպես չէր կտրվում հարազատ դպրոցի ուսուցչա-

կան կոլեկտիվից, որպես մանկավարժ, վետերանների ակումբի ակտիվ անդամ հաճախ հանդես էր գալիս մեթոդական զեկուցումներով, տարիների իր աշխատանքի ուսանելի փորձը հաղորդում երտասարդ գործընկերներին:

Նրա աշակերտներից են անվանի գիտնականներ, ակադեմիկոսներ Գագիկ Սարգսյանը եւ Գեորգ Ղարիբջանյանը, դոկտորներ, պրոֆեսորներ:



Ս. Հասարթյանի թոռը՝ Արեգ Հասարթյանը



Ծնվել է Երեւանում 1979թ. մայիսի 20-ին: 1996թ. ավարտել է Երեւանի N 114 անգլիական թեքումով դպրոցը: 1996-2002թթ. սովորել եւ ավարտել է Երեւանի ծարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի ծարտարապետության ֆակուլտետը: 2002-2004թթ. սովորել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում: 2004թ. Լեհաստանի Ջամնոսյե քաղաքում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած, հուշարձանների պահպանության հարցերին նվիրված վերապատրաստման դասընթաց է անցել: 2004թ. դիսերտացիա է պաշտպանել եւ ստացել «Ճարտարապետության թեկնածուի» գիտական կոչում: 2004 թվականից մինչեւ օրս աշխատում է Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում՝ դասախոս: 2005-2008թթ. համատեղությամբ աշխատել է մի շարք շինարարական կազմակերպություններում՝ նախագծող ծարտարապետ: 2006թ. գործուղվել է Ֆրանսիա՝ Հայաստան-Ֆրանսիա տարվա ծրագրով Փարիզում կազմակերպվող «Հայաստանի 12 մայրաքաղաքները» ցուցահանդեսի տեղում իրականացման աշխատանքների համար: 2009թ. դարձել է Հայաստանի Հանրապետության ծարտարապետների միության անդամ: 2010թ. մինչեւ օրս համատեղությամբ աշխատում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող: Հեղինակ է հայ ծարտարապետության պատմությանը նվիրված բազմաթիվ հոդվածների: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան 2010թ. տպագրեց նրա «Արուժի վաղըրիստոնեական ծարտարապետական համալիրը» մենագրությունը (Երեւան, 2010, 196 էջ): Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի պետական համալսարանը տպագրեց Արեգ Հասարթյանի «Հեռանկարի կառուցման ուսումնամեթոդական ձեռնարկ» աշխատանքը (Երեւան, 2015, 76 էջ): 2015թ. ստացավ դոցենտի գիտական աստիճան:



ԳԵՐԴԱՍՏԱՆ



ՄՈՒՐԱԴ ՀԱՄԱԹՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1935 Ծնվել է հունիսի 20-ին Երեանում, անվանի պատմաբան-բանասեր Մորուս (Մարգար) Հասրաթյանի եւ ՀՍՍՀ վաստակավոր ուսուցչուհի Սիրանույշ Մարտիրոսյան-Հասրաթյանի ընտանիքում

1952 Ոսկե մեդալով ավարտել է Երեանի Խ.Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը

1958 Ավարտել է Երեանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը գերազանցության դիպլոմով

1958-1964 Աշխատել է «Երեաննախագիծ» ինստիտուտում որպես ավագ ճարտարապետ

1961 Ավարտել է Երեանի մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը

1962 ՍՍՀՄ ճարտարապետների միության անդամ

1964-ից Աշխատում է Հայաստանի

Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտում

1964-1974 Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, ճարտարապետության պատմության սեկցիայի նախագահ

1965-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ

1968 ՍՍԿԿ անդամ

1969 Պաշտպանել է ատենախոսություն «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով եւ ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան

1970 Ստացել է ՀԼԿԵՄ մրցանակի դափնեկրի պատվավոր կոչում՝ երիտասարդական կառույցների նախագծման համար

1971-1976 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար

1973 ՍՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է «Ավագ գիտական աշխատողի» կոչում՝ «Ճարտարապետության տեսություն եւ պատմություն» մասնագիտության գծով

1975 Հայ արվեստին նվիրված միջազգային I սիմպոզիումի (Բերգամո, Իտալիա) Հայաստանի պատվիրակության ղեկավարի տեղակալ

1978 Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիումի (Երեան) աշխատանքային կազմակերպչական կոմիտեի նախագահ

1979 Մասնակցել է Կովկասագիտական միջազգային I սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա)

1979-1985 ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատմության եւ մշակույթի հուշարձանների համահավաքի բաժնի վարիչ

1980-ից Հայաստանի պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության (այսօր՝

գործակալություն) գիտական խորհրդի անդամ

1981 Մասնակցել է հայ արվեստին նվիրված միջազգային III սիմպոզիումին (Վենետիկ, Իտալիա)

1982-ից Պատմական հուշարձանների պահպանման Հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահության անդամ

1985 Հայ արվեստին նվիրված միջազգային IV սիմպոզիումի (Երեան) աշխատանքային կազմակերպչական կոմիտեի նախագահ

1988 Մասնակցել է Սորբոնի համալսարանի (Փարիզ) «Հայ-բյուզանդական առնչություններն արվեստի բնագավառում» կոլոքվիումին

Վ Հայ արվեստին նվիրված միջազգային V սիմպոզիումի (Վենետիկ, Իտալիա) գիտական կազմակերպչական կոմիտեի անդամ

1988-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ

1990 Պարգետարվել է ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի պատվավոր դիպլոմով՝ որպես «Հայաստանի IV-XIX դդ. ճարտարապետությունը» (Հռոմ, 1988) Հանրագիտարանային ուսումնասիրության հեղինակային խմբի անդամ՝ Վ Մասնակցել է Հայկական ճարտարապետական ժառանգության պահպանության միջազգային սիմպոզիումին (Ստրասբուրգ, Ֆրանսիա)

1993 Մասնակցել է «Երկրաշարժերը եւ բնակավայրերը» միջազգային գիտաժողովին (Հռոմ)

Վ Պաշտպանել է ատենախոսություն «Հայաստանի XV-XIX դ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով եւ ստացել Ռուսաստանի Դաշնության ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան

1994-ից Դասավանդում է Երեանի գեղարվեստի պետական ակադեմիայում

1997 Մասնակցել է «Հայերը Իտալիայում» գիտաժողովին (Թուրին, Ճեներվա,

ԳԵՐՂԱՏԱՆ

Լիվորնո)

Սասնակցել է Իրանում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման եւ նորոգման գիտամեթոդական հարցերի քննարկմանը (Թավրիզ, Թեհրան, Իսպահան)
Չայ ճարտարապետությանը նվիրված դասախոսություններ է կարդացել Բեյրութում (Լիբանան)

1998 Չայաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիական խորհրդական

1998-ից Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանին կից գիտական աստիճաններ շնորհող 029 մասնագիտական խորհրդի անդամ

1999 Չրավիրվել է Սիրիա՝ ուսումնասիրելու վաղ-քրիստոնեական հայ-ասորական ճարտարապետական առնչությունները

1999-2009 Դասավանդել է Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում

1999-ից Չայկական հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի անդամ

2000 Չրավիրվել է Սորբոնի համալսարան (Փարիզ)՝ վարելու «Չայկական միջնադարյան ճարտարապետություն» դասընթացը

2001 «Քրիստոնեական Չայաստանի արվեստը» միջազգային գիտաժողովի (Երեւան) կազմակերպչական կոմիտեի նախագահ

2001-ից Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատան գիտական խորհրդի անդամ

Չուշարձանների եւ պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի (ICOMOS) Չայաստանի ազգային հանձնաժողովի անդամ
Չայաստանի ազգային հանձնաժողովի անդամ
Դասավանդում է Երեւանի պետական համալսարանում

2002 «Քրիստոնյա Չայաստան» Չանրագիտարանի գիտախմբագրական

խորհրդի անդամ

2003 Ստացել է պրոֆեսորի գիտական կոչում

Սասնակցել է Կալիֆորնիայի համալսարանի «Պատմական Չայաստանի քաղաքները եւ գավառները» միջազգային գիտաժողովին (Լոս Անջելես, ԱՄՆ)
Պարգետարվել է ՉՉ գիտությունների ազգային ակադեմիայի պատվոգրով՝ «գիտության բնագավառում ունեցած անխոնջ, բազմաբեղուն գործունեության համար»

2003-ից ՉՉ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի անդամ

2004 Սասնակցել է հուշարձանների վերականգնման ժամանակակից տեխնոլոգիաների I կոնգրեսին (Շիրազ, Իրան)

2005 Պարգետարվել է ՉՉ գիտությունների ազգային ակադեմիայի վաստակագրով
Սասնակցել է «Չայկական արվեստ եւ ճարտարապետություն» միջազգային գիտաժողովին (Չայցբուրգ, Ավստրիա)

2006 Ընտրվել է ՉՉ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ

«Չայաստանի 12 մայրաքաղաքները» ցուցահանդեսի (Փարիզ) գիտական կոմիտեի (ղեկավար)

2007 Ստացել է ՉՉ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչում
ՉՉ պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցել է Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու՝ նորոգումից հետո վերաբացման արարողությանը

2009 Ստացել է հեղինակային խմբի կազմում ՉՉ պետական մրցանակ՝ «Չայ արվեստի պատմություն» աշխատության համար (համահեղինակներ՝ Ա.Աղասյան, Չ. Չակոբյան, Վ.Ղազարյան)

Պարգետարվել է ՉՉ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով՝ «Չայ արվեստագիտության բնագավառում գիտաստեղծագործական ակնառու նվաճումների ու ծանրակշիռ ավանդի համար»

2009-ից ՉՉ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի անդամ

2010 Պարգետարվել է Երեւանի պետական համալսարանի Ոսկե մեդալով՝ «գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների, համալսարանական կրթության գործում զգալի ավանդի համար»

Ընտրվել է ճարտարապետության միջազգային ակադեմիայի պրոֆեսոր
Պարգետարվել է ՉՉ կրթության եւ գիտության նախարարության Ոսկե հուշամեդալով՝ «կրթության եւ գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար»

Սասնակցել է «Չայկական գաղթօջախների արվեստը» միջազգային գիտաժողովին (Չամոսոյե, Լեհաստան)
Լինում (Ֆրանսիա) կայացել է Մ. Չարաթյանի «Histoire de l' architecture armeniennes des original a nos jours» գրքի շնորհանդեսը

2010-ից ՉՉ մշակույթի նախարարության փորձագիտական հանձնաժողովի անդամ

2011 Ստացել է ՉՉ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակ՝ «Չայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը» աշխատության համար

2011-ից ՉՉ ԳԱԱ արվեստի ինստիտուտում գործող ՉՉ ԲՈՉ-ի 016 «Արվեստագիտություն» մասնագիտական խորհրդի անդամ

2012 Ընտրվել է ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ

2013 Ընտրվել է հայագիտական հաստատությունների համագործակցությունը կազմակերպող գիտական խորհրդի անդամ

2014-ից «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ

2015 Ստացել է Չայաստանի Չանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ ծննդյան 80-ամյակի առթիվ




ԳԵՐԴԱՍՏԱՆ

Մարդը... Եւ մարդկայինը՝ քաղաքում



ԱՆՆԱ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

Կար ժամանակ, երբ Երեւանում երեւանցիների խոսքին չհավատալն ամոթ էր, ամոթ էր նաեւ չվստահելը: Այս շրջանում էր, որ ապրեց ու գործեց տաղանդավոր պետական գործիչ, հրաշալի շինարար ու կազակերպիչ Եւ, ամենակարեւորը՝ անանձնական ուրախություն ու անանձնական տխրություն ունեցող մեծատառով մարդը՝ Գրիգոր Չասրաթյանը, ով սիրված էր ժամանակի բոլոր մտավորականների կողմից, եւ ով էլ իր անձով ու գործունեությամբ թելադրում էր այդ թանկ վստահությունը, որի պակասը մենք այսօր ունենք:



Գրիգոր Չասրաթյանը ծնվել է 1919թ. նոյեմբերի 24-ին, Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում: Երկու տարեկան էր, երբ Գրիգորը որդեգրվեց իր մորեղբոր՝ մեծանուն գիտնական, «քայլող հանրագիտարան» Մորուս Չասրաթյանի կողմից՝ արժանացավ նրա խնամքին ու հոգատարությանը: Ավարտելով Երեւանի Սյանիկյանի անվան դպրոցը՝ Գրիգոր Չասրաթյանն

ուսումը շարունակել է լեռնամետալուրգիական տեխնիկումում, իսկ 1937թ. ընդունվել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոձանապարհային ֆակուլտետ: Ինստիտուտն ավարտելուց հետո Գրիգոր Չասրաթյանն անցավ մասնագիտական աշխատանքի՝ հաջորդաբար բարձրանալով պետական վարչական գործունեության «սանդուղքով»: Առաջին պաշտոնատեղը եղավ Չա-

Գրիգոր Չասրաթյանը եղել է Չայաստանի ազգագրության թանգարանի եւ Սարդարապատի համալիրի տնօրենը, եղել մի շարք գումարումների ՉԽՍՀ ԳԽ պատգամավոր:

ԳԵՐՂԱՏԱՆ

յաստանի խճուղային ճանապարհներին վարչությունը, որտեղ ճարտարագետ ճանապարհաշինարարի պաշտոնում աշխատեց 1942-1944թթ.: Այնուհետև ԶԽՍՀ ջրային տնտեսության վարչությունն էր, որի համակարգում որպես ճարտարագետ աշխատեց հինգ տարի: Մասնագիտության բովանդակում փորձառու դարձած Գրիգոր Զասրայանը 1948-ին ստանձնեց Երեանի Լենինյան շրջանի շինարարական գրասենյակի պետի պաշտոնը, այնուհետև ընտրվեց նույն շրջանի շրջխորհրդի նախագահի տեղակալ, երկու տարի հետո՝ նախագահ, 1956 թվականին՝ Երեանի քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ, իսկ 1958 թվականին՝ իր իսկ հիմնած «Երեաննախագիծ» ինստիտուտի տնօրեն: 1960թ. Գրիգոր Զասրայանն ընտրվել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) քաղխորհրդի գործկոմի նախագահ, իսկ 1962-ին՝ Երեանի քաղխորհրդի գործկոմի նախագահ (քաղաքապետ) և պաշտոնավարեց մինչև 1975թ. փետրվարը: Այս տարիներին նա աշխատեց լավագույնս. Գրիգոր Զասրայանը որքան քաղաքաշինարար, այնքան էլ հռետոր էր՝ արտիստիկ, հաճելի ծայնով, հարուստ բառապաշարով և հարգանք ներշնչող արտաքինով: Զավաքների ժամանակ սեղանապետն էր ու իր գեղեցիկ և հուզիչ ճառերով իշխում ու զարդարում էր հավաքները: Որտեղ էլ լիներ, նա լիդեր էր: Զասրայանն ուներ ղեկավարման իր ուրույն ոճն ու գործելակերպը, որով կարողանում էր իր շուրջը հավաքել տաղանդաշատ մարդկանց: Ու ահա, իր շուրջ հավաքելով տաղանդավոր ճարտարապետներին, շինարարներին և լավագույն արվեստագետներին՝ օր օրի գեղեցկացնում ու կառուցում էր քաղաքը: Նա Թամանյանի նախագծած քարե քաղաքին շունչ, հոգի ու կենդանություն տվեց: Երեանը կերպարանավորեց: Երեանի՝ որպես մայրաքաղաքի, կառուցապատման ու զարգացման ծրագիրն իրականացնելիս Գրիգոր Զասրայանի համար առաջին և հիմնական խնդիրը եղել է քաղաքակիրթ միջավայր ստեղծելը, որում երեանցին իրեն զգար բարձր քաղաքացի և յուրաքանչյուր բնակչի մեջ սերմաներ պատվի զգացում իր քաղաքի, իր բնակավայրի նկատմամբ:

«Ճարտարապետությունը մարդու դաստիարակության միջոց է, - ասում էր Գրիգոր Զասրայանը և շարու-

«Գրիգոր Զասրայանը նվիրված էր քաղաքին անմնացորդ, սիրում էր Երեանը և ապրում դրանով: Քաղաքի ամեն մի անկյուն, ամեն մի պուրակ, թուփ, քար նա ճանաչում էր»

նակում, - այո, դա այդպես է, մարդն, անշուշտ, առաջին գործոնն է շինարարության մեջ: Ոչ թե ինչ ենք կառուցում, այլ ում համար ենք կառուցում: Նրա հոգեւոր աշխարհը, նրա վաղվա օրը՝ ահա թե ամենից առաջ ինչ պիտի հոգանք մենք»:

Իր գործունեության տարիներին սկսվեց Օղակաձե երեսայգու ստեղծման, Աբովյան փողոցի մի հատվածի բարեկարգման ու բարեգարդման, փողոցներում մրգատու ծառեր, վարդի թփեր ու պե-պե սաղիկներ տնկելու գործընթացը: Նա՝ որպես քաղաքապետ, փորձում էր անդամաձան մնալ Մեծ Թամանյանի կողմից կենտրոնի նախագծման սկզբունքներին՝ փորձելով այն վերածել զբոսայգու, հանգստյան գոտու, դրա անկյունաքարն Օղակաձե զբոսայգու իրականացումն էր: Գրիգոր Զասրայանը սիրում էր ծառ ու ծաղիկը և դրանցով զարդարեց մայրաքաղաք Երեանը:

Շետաքրքիր մի դիպված. մի գիշերում, թաքուն (որովիտես իշխանությունը դեմ էր) նա հրապարակի անկանոն, անհամաչափ ծառերը փոխել և փոխարենը կլոր սաղարթներով ու կոկիկ ծառեր է տնկել, և երբ երկու ծառ պակասել է, իմանալով, որ Էջմիածնում մեկն ունի, բերել ու համալրել է: Այդ գեղեցիկ ծառերն այսօր էլ կան:

«Գրիգոր Զասրայանը նվիրված էր քաղաքին անմնացորդ, սիրում էր Երեանը և ապրում դրանով: Քաղաքի ամեն մի անկյուն, ամեն մի պուրակ, թուփ, քար նա ճանաչում էր», - գրում է Ջիմ Թորոսյանը:

Սակայն իր գործերից առավել գնահատելին 1972թ. սկսված մետրոպոլիտենի ստորգետնյա ուղիների նախագծումն ու շինարարությունն էր (գործարկումը եղավ 1981թ): Նրա գործունեության տարիների մյուս մեծագործությունը Սայաթ-Նովայի անունը կրող մայրուղու բացումն էր: Դա շատ դժվար իրագործելի գործընթաց էր, որովհետև անհրաժեշտ էր քանդել բազմաթիվ հյուղակներ: Թեկուզ կենցաղային վատ պայմաններում, բայց քաղաքի կենտրոնում ապրողներին տեղահանելը թվում

էր անիրագործելի, ուստի հանրապետության ղեկավարները հեշտությամբ չհամաձայնեցին այդ առաջարկին: Սակայն Գրիգոր Զասրայանն այն քաղաքապետն էր, որ կարողանում էր, թեկուզ մեծ դժվարությամբ, հետեղականորեն հասնել իր նպատակին: Նրան ենք պարտական մայրաքաղաքի կենտրոնում բացված խիստ կարեւոր ու գեղեցիկ այդ մայրուղու համար, որն ապահովում է տարանցիկ կապը Մաշտոցի պողոտայից դեպի Խանջյան փողոցը:

«Ես շատ հպարտ եմ, որ Գրիգոր Զասրայանի ժամանակակիցն եմ: Ամենայն պատասխանատվությամբ կարող եմ ասել, որ Երեանը՝ որպես մայրաքաղաք, իր արտաքին տեսքով կայացավ հենց այն տարիներին, երբ քաղգործկոմի նախագահը Գրիգոր Զասրայանն էր» (պատմական գիտ. դոկտոր Լավրենտի Բարսեղյան):

Ռուս նշանավոր արձակագիր Անդրեյ Բիտովը հիացած էր հասրայանական տաղանդով և նրան բնութագրում է այսպես. «Անբասիրությունը նրա միակ թուլությունն էր»:

Անշուշտ, չես կարող չհիշել Գրիգոր Զասրայանին, եթե դու անցնում ես «Անի» հյուրանոցի, Ալ. Սպենդիարյանի թանգարանի կամ Երվանդ Քոչարի թանգարանի մոտով, անցնում ես ժամանակակից արվեստի թանգարանի կամ Կարապի լճի մոտով, զբոսնում ես Օղակաձե այգու կամ երթեւեկում մետրոյով և Սայաթ-Նովա փողոցով կամ ուղղակի քայլում ես Զաքիյան փողոցով, որտեղ նաև ես եմ ապրում, որովհետև այս բոլորը հիմնվել են նրա օրոք և նրա ջանքերով:

Խորհրդային շրջանի իշխանությունը նրա սկզբունքային լինելն ու անհատականությունը չներեց, և 1975թ. քաղաքապետի պաշտոնից տեղափոխվեց ԶԽՍՀ կաթնեղենի-մսեղենի արդյունաբերության նախարարի տեղակալ, իսկ 1979թ. Գրիգոր Զասրայանը նշանակվեց հուշարձանների պահպանության վարչության պետ: Այս վարչությունում իրեն հատուկ եռանդով, կազմակերպչական կարգի նորամուծություններ իրականացրեց: >>> 186

ԳԵՐԴԱՏՎԱՆ

ՇՄԱԲԻՆԱԿԱՆ ԿՈՄՊՆԻՅԱԿ

« 185 Հուշարձանների վերականգնման նախագծային խումբը համալրեց համապատասխան մասնագետներով, օժտեց նախագծային ինստիտուտի կարգավիճակով: Նրա գործունեության տարիներին մասնակի կամ ամբողջապես վերականգնվեց տասից ավելի եկեղեցի: Գրիգոր Հասրաթյանը եղել Հայաստանի ազգագրության թանգարանի և Սարգսյանի համալիրի տնօրենը, եղել մի շարք գումարումների ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր: 1998թ. նրան շնորհվել է «Երեսանի պատվավոր քաղաքացի» կոչումը: Պիտի ավելացնեն ցավալի մի փաստ, որ «Հայկական հանրագիտարանի» խմբագրությունը հարկ չի համարել թեկուզ սեղմ գրել-հիշատակել Գրիգոր Հասրաթյանի անձն ու գործունեությունը, մի հանգամանք, որ ավելի քան տարօրինակ է:

Գրիգոր Հասրաթյանը վախճանվեց 2001 թվականին: Սակայն ովքեր գիտեն Երեան քաղաքի պատմությունը և սիրում են Երեանը, երբեք չեն մոռանա Գրիգոր Հասրաթյան հրաշալի մարդուն: Ես անձամբ խոնարհվում եմ նրա վաստակի ու հիշատակի առաջ եւ բոլորի հետ միասին վայելում նրա տաղանդով ու ձեռքով ստեղծած մեր հրաշալի քաղաքը: Ափսոս, որ մարդ արարածը չի ընդունում եւ ըստ արժանիքի չի գնահատում վառ անհատականություններին, եւ նաեւ, հազար ափսոս, որ մարդու երկրային կյանքն այսքան կարճ է, այլապես Գրիգոր Հասրաթյանի նման հայրենանվեր մարդիկ ինչքան շատ բան կարող էին արարել ու ստեղծել սեփական քաղաքի ու հայրենիքի համար: Չնայած այն, ինչ որ ստեղծված է արդեն նրա տաղանդով ու ջանքերով, ինքնին անմահ հուշարձան է, մեզ եւ մեզանից հետո եկող սերունդների համար:

«





Գրիգոր Հասրաթյանը մոր՝ Նազանի հետ



Գրիգոր Հասրաթյանը որդու՝ Ռուբենի հետ



Գրիգոր Հասարայանը տիկնոջ՝ Մանյայի հետ



Գրիգոր Հասարայանը թոռան՝ Միքայել Մինասյանի հետ



Հասարայանների ընտանիքը. ծախից՝ աջ. դուստրը՝ Արմինեն, կինը՝ Մանյան, մայրը՝ Նազանը, Գրիգոր Հասարայանը, դուստրը՝ Անահիտը

ԳԵՐԴԱՍՏԱՆ

Երեւանի տոնի իրական հիմնադիրը. վերաբացահայտում

Հայաստանի վաստակավոր ճարտարապետն իր տան աշխատասենյակում բացում է խնամքով պահվող գրքերից մեկն ու առաջարկում կարդալ Գրիգոր Հասրաթյանին վերաբերող տողերը. «Մեր ժամանակներում շատերը ձգտում են զբաղեցնել ուրիշի պատվանդանը: Գրիգոր Հասրաթյանը կանգնած է իր պատվանդանի վրա, որին նա հասել է իր ապրած կյանքով, որպես իր երկրի համար արարող ու սրտացավ քաղաքացի...»:

հսկայեն այդպես է, - հարցնում ենք քաղաքապետի հետ աշխատած Գուրգեն Մուշեղյանին:

- Իսկապես, - պատասխանելիս ճարտարապետի ձայնը խեղդվում է: Փորձեց պատասխանել կարծ, որպեսզի զսպի արցունքները: Չստացվեց...

- Հիմա հասկացա՞ք՝ ինչու են չկարդացի այդ տողերը: Չեմ կարող... Ճարտարապետը կարոտել է իր ընկերոջը, ում հետ, չնայած տարիքային տարբերությանը, շփվում էին հավասարը հավասարի պես: Պատմում է, որ գիշերները՝ ազատ ժամերին, զբոսնում էին, տեսնում՝ որտեղ ինչ խնդիր կա, ու առավոտյան առաջարկում լուծումներ:

- Ես տասը քաղաքապետի հետ եմ աշխատել: Համարում եմ, որ առաջին քաղաքապետը Հասրաթյանն է: Իր աշխատած 13 տարում Երեւանը դարձավ մայրաքաղաք: Վերադառնալով



գրքում գրված տողերին՝ ճարտարապետը հիշեց 1968-ը, Էրեբունի-Երեւան 2750-ը: Բչերը գիտեն, որ առաջին տունակատարությունը կապված է Գրիգոր Հասրաթյանի անվան հետ:

- Տոնական միջոցառումների գլխավոր պատասխանատուն Գրիգոր Հասրաթյանն էր, -եղբոր մասին խոսելիս՝ Մուրադ Հասրաթյանը բացահայտում է դրվագներ, որոնց մասին չի խոսվել գրեթե կես դար, եւ որոնց մասին համեստորեն լռում էր «քաղաքի լեգենդ» անունը ստացած քաղաքապետը: Հարցազրույցներից մեկում Գրիգոր Հասրաթյանը նշել էր, որ գաղափարն իր քեռունն էր՝ հայտնի լեզվագետ, պատմագետ Մորուս Հասրաթյանինը: «Նա հուշեց, որ լրանում է 2750-ամյակը: Պետք է նշել»: Մորուս Հասրաթյանը Մուրադ Հասրաթյանի հայրն է: Թամանյանի որդու՝ Գետրոգ Թամանյանի հետ աշխատած ճարտարապետը հիշում է՝ ինչ փուլերով անցան, որ Մոսկվային ապացուցեն՝ Երեւանն իրոք 2750 տարեկան է, հնագույնը՝ Խորհրդային Միությունում: Եվ եթե Մոսկվան նշեց իր 800-ամյակը, Թբիլիսին՝ 1500, ինչո՞ւ մենք չնշենք 2750-ը: Վրացիները նախանձից դիմեցին Մոսկվա, թե՛ հնարած հորեյան է, թե՛ Արգիշտիի արձանագրությունների վրա ոչ մի թվական չկա: Նախանձում էին, որ

Քաղաքապետի եղբայրը ծրագրում էր Երեւանի 2750-ամյակին գիրք նվիրել՝ իր եւ ընկերների համահեղինակությամբ՝ «Երեւան»:




Քաղաքապետ Հասրաթյանը նպատակ էր դրել քաղաքը դարձնել մայրաքաղաք՝ շեշտելով, որ մայրաքաղաք կառուցելն ու ղեկավարելն ակադեմիա է: Եվ նրա կառուցած ու ղեկավարած Երեւանն իր առաջին տոնին ներկայացավ այն մթնոլորտով ու կերպարով, ինչին քաղաքապետը ձգտում էր պաշտոնավարման ընթացքում:



Երեւանը 2750 տարեկան է, մինչդեռ հենց Թիֆլիսի 1500-ամյակն էր օդից վերցված թիվ: 1500 տարի առաջ իրենց մայրաքաղաքը ոչ թե Թիֆլիսն էր, այլ Մցխեթը: Ամեն դեպքում, Մոսկվան, ճշտելու համար, ուղարկեց մասնագետի՝ Ուրարտուի պատմության գիտակ Բորիս Պիտրովսկուն: Նա էլ պատասխանեց, որ գտնված արձանագրություններում տարեթիվ նշված չէ, բայց Վանի արձանագրությունների միջոցով հնարավոր է հաշվարկել սեպագիրը կազմելու տարիքը, ինչից էլ հաստատվում է, որ, այո, Երեւանը 1968-ին 2750 տարեկան էր»: Քաղաքապետ Հասրաթյանը նպատակ էր դրել քաղաքը դարձնել մայրաքաղաք՝ շեշտելով, որ մայրաքաղաք կառուցելն ու ղեկավարելն ակադեմիա է: Եվ նրա կառուցած ու ղեկավարած Երեւանն իր առաջին տոնին ներկայացավ այն մթնոլորտով ու կերպարով, ինչին քաղաքապետը ձգտում էր պաշտոնավարման ընթացքում: Եվ ինչի մասին խոսում էր բաց ձակատով: Հնագույն մայրաքաղաքը ներկայացավ մի քանի տասնյակ նորագույն կառույցներով, վերակառուցված Էրեբունի ամրոցով, լճերով ու ջրվազաններով: Գրիգոր Հասրաթյանի դուստրը՝ Անահիտը, հիշում է այն օրը, երբ Կարապի լիճը ստեղծելուց հետո, հայրը բերեց առաջին կարապետները՝ սեւ

ու սպիտակ: Եվ ինչպես սեփն վիրավորեցին որոշ մարդիկ, եւ հոր պատասխանը. «Ոչինչ, մարդիկ կսովորեն գեղեցիկին, կսովորեն պահպանել դա ու իրենք էլ կմասնակցեն դրա ստեղծմանը: Այդ օրն էլ կգա»: Քաղաքապետը խնդիր էր դրել փոխել մայրաքաղաքի կլիման: Քչերին է հայտնի նաեւ, որ հենց Հասրաթյանի գաղափարն էր շատրվանները դարձնել երգող: Եվ կարողացավ խորհրդային վերնախավին համոզել ու կառուցել 2750 շատրվաններով պուրակը՝ նույնիսկ դիմադրությունների պայմաններում: Ինչպես շատ հարցերում, նաեւ այդ դեպքում կային նախանձողներ, որոնք նամակ գրեցին Պետկոմ, թե շատրվանների ջուրը կներծծվի «Արմենիա» հյուրանոցի նկուղները, փլուզումներ կլինեն», - պատմում է Գուրգեն Մուշեղյանը: Տոնակատարությունից առաջ Գրիգոր Հասրաթյանի աշխատասենյակի դռները բաց էին: Քաղաքապետն անընդհատ նոր գաղափարներ ու մտահղացումներ էր լսում քաղաքացիներից, » 190




ԳԵՐԴԱՏՄԱՆ

« 189 ամբողջ քաղաքն ու նույնիսկ Յայաստանն էր մասնակցում կարեւոր տոնի կազմակերպմանը: Իջեանից գորգագործ երկու կին եկան, բերեցին առաջին «Էրեբունի» գորգն ու փռեցին քաղսովետի իմ աշխատասենյակում: Պետավտոտեսչության ղեկավարությունը պետական մեքենայիս համարները փոխեց ու դարձրեց 27-50: «Երագ» գործարանը միկրոավտոբուս նվիրեց քաղսովետին», - պատմում էր Յասրաթյանը: Քաղաքապետը հուզմունքով էր հիշում, թե ինչպես էին քաղաքացիները զանգում իրեն ու առաջարկում իրենց տանը տեղավորել արտասահմանյան հյուրերին: Երեւանում հյուրանոցները քիչ էին, ստիպված էին հյուրերին տեղավորել նաեւ զնաքցներում: 1968-ի հոկտեմբերի 18-ը վերածվել էր համաժողովրդական տոնի: Համագրային տոնախմբությունը հավերժացվեց վավերագրական ֆիլմերում: Դրանցից մեկն ամբողջությամբ կառուցված է «Էրեբունի-Երեւան» երգի հիման վրա: Մայրաքաղաքի 14 տարվա օրհներգն առաջին անգամ հնչեց այդ օրը՝ 50 տարի առաջ, Հաղթանակի զբոսայգում, 2750-հոգանոց երգչախմբի կատարմամբ: Մուրադ Յասրաթյանը դա համարում է Յայաստանի զարթոնք: «Էրեբունի-Երեւանը տոնեցինք ազգովի: Հյուրերին տպավորել էր նաեւ այն, որ մթերային խանութները մայթերին սեղաններ էին բացել ու հյուրասիրում էին բոլորին: Այդ օրը վերահաստատվեց, որ Գրիգոր Յասրաթյանը, որն ի պաշտոնե քաղաքական դեմք էր, նաեւ լավ կառավարիչ էր»: Քաղաքապետի եղբայրը ծրագրում էր Երեւանի 2750-ամյակին գիրք նվիրել՝ իր եւ ընկերների համահեղինակությամբ՝ «Երեւան»: 18 հազար տպաքանակով, մայրաքաղաքի ճարտարապետության մասին պատմող գիրքը, սակայն, Մոսկվայից Երեւան հասավ երկու ամիս ուշացումով, եւ... ընդամենը մեկ տառի պատճառով. Գրքի ամենածավալուն մասը՝ Է-ն, ես պետք է գրեի: Արդեն ծրագրում էի, թե ինչպես կծախսեմ հոնորարը. Մոսկվայի հոնորարները շատ բարձր էին: Հրեյլյանի օրերին, երբ գիրքը պետք է լիներ Երեւանում, զանգում է խմբագիրը, թե՛ արագ թռի, արի... կատաստրոֆա է: Ինչ տպել ենք՝ պետք է այրենք: Գնացի Մոսկվա: Պարզվեց՝ Լենինի հայրանունն է սխալ գրվել՝ Վ.Լ. Լենին: Եթե այդպես

ՆԱՄԱՐԻ ՖՈՏՈՎԵՐՈՒՄԸ



Արուլ-Ալա-Ալ-Մասարիի գերեզմանի մոտ



Զորավար Անդրանիկի հուշարձանի մոտ



Վարդան Պարսամյանի եւ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի (կենտրոնում) հետ



Էրեբունիում՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարության պատվիրակության հետ


տպելին, հրատարակչությունը կցրեին: Նորից տպելու վրա ծախսված գումարը հանեցին իմ հոնորարից: Ահագին փող էր», - ծիծաղում է Մուրադ Յասրաթյանը: Քաղաքապետ Գրիգոր Յասրաթյանն իր եզակի հարցազրույցներից մեկը տվել էր «Անի» հյուրանոցի տանիքում: Այն պողոտայում, որը նա բացեց ու անվանակոչեց Սայաթ-Նովա: Ու ճիշտ այն տեղում, որտեղ ժամանակին իր տունն էր, որը քանդեց՝ այդպիսի փողոց ունենալու համար: Սայաթ-Նո-

վան կառուցեցին ազգովի, մտավորականների մասնակցությամբ, որոնց համար արվեստանոցներ էր բացում հենց Յասրաթյանը, էլիտայի ներգրավմամբ, որը հենց նա էր ձեռավորել: Սայաթ-Նովա պողոտայում Էրեբունի-Երեւանի մասին խոսելիս Գրիգոր Յասրաթյանն ասում էր. «Այդպիսի մթնոլորտով տունակատարություն այլեւս չի լինի: Գուլագործոցը լինում է մեկ անգամ, «Անլուծելի զանգակատուն» մեկ անգամ է գրվում»: **ՇԱԲԵ ՂԱԶԱՐՅԱՆ**

ԳԵՐԴԱՍՏԱՆ

Հայրենանվեր հայորդի

Դրվագներում՝ Մորուս Հասարթյանի շառավիղներից՝ Գրիգոր Հասարթյանի թոռ Միքայել Մինասյանն է





Գրիգոր Լարեկացին Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետն է, երկրորդը՝ Արենելից:

Վատիկանի այգիներում (2018թ. ապրիլի 5-ին) հանդիսավորությամբ բացվեց Տիեզերական եկեղեցու վարդապետ, Սուրբ Գրիգոր Լարեկացու արձանը, որը նշանավորվեց Հռոմի Ֆրանցիսկո Պապի օժանդակով:



Սուրբ պատարագ Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում (12 ապրիլի 2015թ.): Այդ օրը Հռոմի Ֆրանցիսկո Պապը Սուրբ Գրիգոր Լարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ:



2016թ. հունիսի 24-ին Հայաստանի Հանրապետություն ժամանեց Հռոմի Արքայապետ Գրիգոր Լարեկացու Ֆրանցիսկո Պապը:

Նորին Արքայապետ Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի հետ

ՆԱՄԱԻ ԶՈՏՈՒԹՅՈՒՆ



Լեոնիդնի եւ Լ.Սելիքսեթ-Բեկի հետ



Յովհաննես Շիրազի հետ



Սայաթ-Նովայի թռռան, ծոռների հետ՝ բանաստեղծի գերեզմանի մոտ



Վարդատունի ժամանակ Թբիլիսիում

ՆԱՎԱՅՐԵՐ, ՈՐՏԵՂ ՊԵՂՈՒՄՆԵՐ Է ԿԱՏԱՐԵԼ



Ծիծեռնավանք




Աղիտու, VI դարի
մահարձան




Լորիկ Իշխանի
խաչը Լոր գյուղում



Մորուս Ջասրայանը և Բորիս
Պիտրովսկին Կարմիր բլուրում



Ավանի սբ Աստվածածին եկեղեցի (Կաթողիկե, Ծիրանավոր)



Մորուս Ջասրայանը Պամիրում


ՎԱՅՐԵՆԻ ԵԳԵՐՔ




Ուղտասար



Իծագրեր
(Ուղտասար)



Շաքի ջրվեժ



Որոտնաքերդ



Զորաց քարեր

ՆԱՅՐԵՆԻ ԵԳԵՐՔ

Ամեն ինչից

Այս ձորերում ամեն ինչից
Օրորոցի հույր է գալիս,
Պապենակրան սուրբ օջախի
Ծուխ ու բոցի հույր է գալիս,
Արմասի հույր, բողբոջի հույր
Ու խեժի հույր փոհնաձատի,
Վարդո-ցանոդ հույր ձեռքերի
Ու մոր ծոցի հույր է գալիս:

ՆԱՄՈ ՍԽՅՅԱՆ




Բարգուշատի լեռնաշղթա (առավելագույն բարձրությունը 3392մ, Արանազդ լեռ)



Սյունի վանք (սբ Գրիգոր տաճար, սբ Յովհաննես եկեղեցի)



Իշխանասար



Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցի



Որոտնավանք եւ Որոտանի կիրճ

Ես իմ անուշ Հայաստանի

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բոյրը վառման,
Ու նահրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սեւ,
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ո՛ր էլ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան - յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխարհ անցիր՝ Արարատի նման ճերմակ գազաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Եղիշե Չարենց